



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԱՐԱՄԸ

ՄԱՀՈՒԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ



Ով ծանօթ է հայ ժողովրդի նորագոյն պատմութեանը, չի կարող հոգու խորքում չզուրգուրալ Արամ Մանուկեանի առինքնող ու մոզական կերպարի վրայ:

Արամ Մանուկեան: Մի մարդ, մի հերոսական դէմք, մի տիտանական նկարագիր, որ դարձաւ համակ նուիրում իր ժողովրդի ու հայրենիքի համար: Մի քաջարի գինուոր, մի հմուտ դեկավար ու կազմակերպող, որ իր ողջ կեանքը նուիրարեւեց հայկական ազատամարտին, դաստիարակեց մարտնչող սերունդներ, յեղափոխականօրէն կազմակերպեց Վանը, դեկավարեց Այգեստանի ինքնապաշտպանութիւնը, ոգին հանդիսացաւ արարատեան մարտերի եւ կերտեց Հայաստանի անկախութիւնը՝ իր ներշնչումը ստանալով միշտ ազգի գերագոյն շահերից եւ Հ. Յ. Դաշնակցութեան ազգային ու մարդկային վեհ զաղափարներից:

Նա գործեց շարունակ Հ. Յ. Դաշնակցութեան դրօշի ներքոյ եւ մինչեւ իր վերջին շունչը մնաց հաւատարիմ այն հաւատոյ հանգանակին, որ բիրեղացած էր Դաշնակցութեան հետապնդած նպատակների ու զաղափարաբանութեան մէջ:

Այդ հսկան, սակայն, տասնամեակներ շարունակ բանադրուած մնաց իր իսկ ձեռքով կերտած հայրենի պետութեան սահմաններում: Արգելուեց սերունդներին ծանօթանալ նրա մեծագործութիւններին, նրա ազգանուէր գործին: Պատմութեան գրքերում լուծեան պատ քաշուեց նրա անուան շուրջ, թոյլ չտրուեց, որ հայ ժողովուրդը Հայաստանում իր արժանին հատուցի հայրենիքի այդ մեծանուն գաւակի յիշատակին:

Նրա յիշատակը յաւերժացնող ոչ մի բան չկատարուեց Հայաստանում: Ոչ արձան, ոչ իր անուան փողոց, այլ միայն մի անշուք շիրիմ Երեւանի գերեզմանատան մի անկիւնում եւ վերջ:

Հ. Յ. Դաշնակցութիւնը տարագրութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրի յիշատակը յաւերժացրեց հարիւրաւոր յողաւածներով, գրքերով ու գրքոյկներով, որոնցից ամենակոթողականը հանդիսացաւ նրա մահուան յիսնամեակի առթիւ 1969 թուականին Բէյրութում հրատարակուած «Արամը» հատորը:

Ահա այդ հատորը այսօր առաջին անգամը լինելով լոյս է տեսնում մայր հայրենիքում: Հրատարակում է, որպէսզի հայ ժողովրդի արժանաւոր գաւակին ծանօթացնի սեփական ժողովրդին, որպէսզի ժողովրդի մտքում նրա վաստակը վերածի այնպիսի փորձաքարի, որի վրայ կարելի լինի ստուգել հայոց պետականութեան եւ նրա դեկավարների ազգային քաղաքականութեան յարգադրոշմը:

Արամի ոգին պէտք է ներկայ լինի շարունակ հայոց երկրակամարում:

Խ. Տ. Գ.

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՑԻ ԽՕՍՔԸ

Յիսուն տարիներ առաջ, երկու լուսաշող դէմքեր կը հեռանային Հայոց Պատմութեան թատերաբեմէն:

Տասը օրուան տարբերութեամբ, միեւնոյն համաճարակէն վարակուած (բժաւոր տիֆ), իրարմէ հեռու, կը մահանային Ռոստոմը (Թիֆլիս, 19 Յունուար 1919) եւ Արամը (Երեւան, 29 Յունուար 1919):

Առաջինը՝ Ռոստոմը, միակ վերապրողը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեանէն, իր կուսակցութեան նուիրաբերած ամբողջ կեանք մը՝ լեցուն կազմակերպչական տաղանդով, պայքարի եւ յաղթանակի վնասկամութեամբ, անսահման կորովով եւ աշխատունակութեամբ: Ռոստոմը՝ ամբողջ երեք տասնամեակ ներկայ ամենուրեք, ժընեւէն Թիֆլիս, Կարինէն Պարսկաստան, Պուլկարիայէն Պաֆու, մութին մէջ կազմակերպած կամ ուղղակիօրէն ղեկավարած Դաշնակցութեան ապստամբական եւ զինական ամենայանդուզն ձեռնարկներէն շատերը՝ հանասոր եւ Պարսկական Յեղափոխութիւն, եկեղեցական կալուածներու գրաւման դէմ ծառայում եւ հայ-թաթարական կռիւներ, Հ. Յ. Դ. Զինուորական վարժարան եւ Բագուի հերոսամարտ: Ռոստոմը՝ երէկ եւ այսօր յաւերժակա՛ն ներկայութիւն, մեր Կուսակցութեան կազմակերպչական կառոյցին, ըմբռնումներուն, գաղափարաբանութեան, գործելակերպին եւ աւանդութիւններուն մէջ:

Երկրորդը՝ Արամը: Ղարաբաղի այդ անգուգական գաւակը՝ որ, Բագուի եւ Կարսի յեղափոխական հնոցներուն մէջ թրծուելէ ետք՝ վասպուրականը նուանեց, դարձաւ վանայ շրջանի գլխաւոր ղեկավար՝ Արամ Փաշան, յետագային հանդիսանալու համար կեդրոնական դէմքը վասպուրականի ապրիլեան հերոսամարտին: Արամը՝ որուն վիճակուած էր վասպուրականէն ետք յաղթանակի առաջնորդել նաեւ Արարատեա՛ն աշխարհը, Հայոց Պատմութեան այն ամենահակատագրական օրերուն՝ երբ դարաւոր թշնամին, արեւմտահայութիւնը փնագնելէ ետք,

կանգնած էր էջմիածնի դռներուն եւ կը սպանար ի սպառ բնաջնջել նաեւ հայութեան արեւելեան հատուածը: Արամը՝ որուն կազմակերպչական տաղանդն ու ղեկավարի ոգեշնչող և տիրական ներկայութիւնը Սարդարապա՛տ կերտեցին ու այսօրուան Հայաստանի հիմը դրին: Արամը՝ Հայաստանի անկախութեան գլխաւոր դարբինն ու ոգի՛ն:

Ռոստոմը կը մեռնէր Հայաստանէն դուրս, Արամի եւ Արամներու կեանքի եւ մահուան գուպարէն ծնունդ առած, անոնց ամէնօրեայ անդուլ նիգերովն ու մաշումովը մարմինն եւ շունչ ստացած՝ անկախ Հայաստանը չտեսած: Արամը կը մեռնէր Երեւանի մէջ, իր պաշտած Ռոստոմէն հեռու, բայց Ռոստոմի անունը շրթներուն:

Իրենց այդ երկու անգուգական ընկերներու, հայ ժողովուրդի ազատագրութեան դատին այդ երկու սրբազան նուիրեալներու՝ Ռոստոմի եւ Արամի մահուան յիսնամեակին առթիւ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրօն, բոլոր մարմիններն ու ընկերները երկիւղածութեամբ ու հպարտանքով կը խոնարհին անոնց մաքրամաքուր, յաւերժօրէն անմահ եւ յաւերժօրէ՛ն ներշնչող յիշատակին առջեւ:

Սրբազան աւանդ է անոնց կեանքն ու գործը, պատմութիւն կերտող եւ նկարագիր դարբնող գերբնական դիւցազնավէպ՝ որոս հերոսներուն գաղափարին ու գործունէութեան շաւիղովը փայլեր, ներկայի պայմաններուն մէջ՝ ներկայի՛ պահանջներով՝ միեւնոյ՛ն անսակարկ նուիրումն ու միեւնոյ՛ն ամբողջական նիգը ի գործ դնելը հիմնական առաջադրանքը կը կազմէ այսօրուան դաշնակցական մարդուն:

Հայոց նորագոյն Պատմութեան այդ երկու տիտաններէն մէկուն՝ Արամ Մանուկեանի կեանքին ու գործին նուիրուած այս հատորը թող նկատուի մահուան յիսնամեակի համեստ ծաղկեպսակ, գետեղուած՝ անյայտ դարձած, բայց հայրենիքի եւ արտասահմանի հայութեան հաւասարապէս ու հարազատօրէն հաղորդ՝ անոնց երկուքի գերեզմաններուն: Կ'առաջադրենք, առաջին իսկ առիթով, առանձին հատոր մը նուիրել Ռոստոմին եւս:


Մայիս 1969

«Դժգոհները չեն նախաչում Արամին: Երբ նախաչեն, կը համոզուեն, որ ներկայումս նա ՄԻԱԿ կարող մարդն է այդ պաշտօնի (գինուորական վարիչ) համար: Ես ինչո՞ւ եմ հրաժարում. որովհետեւ մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու: Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու՝ ոչ մի կարելուք քայլ չեմ առնուի. իսկ վարիչի պաշտօնը յանձն անելու պարագային, գրասենեակս տեղափոխելու եմ նրա մօտ: Ո՞՞ ՄԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՎԵՐԱՐԿՈՒ Ո՞՞ ՈՒՅԻ ԶԻ ՏԱՅ ԱՅՆ՝ ԻՆՉ ՈՐ ՈՒՆԻ ԱՐԱՄԸ: Նրանից յարմար վարիչ մեզ համար չէ՛ք գտնի: Ես ինքս անձամբ կը խնդրեմ, որ նա չբողնի այդ պաշտօնը»:

(Զօրավար Սիլիկեանի խօսքերէն)

«Մեր կուսակցութեան մէջ ո՛չ ոք Արամի աստղը չունի: Եւ ինչպէ՛ս հոյակապ փայլում է այդ աստղը: Լա՛ւ լսիր, թէ ինչ եմ ասում քեզ: Հեռուից թէ մօտից ուշադիր հետեւել եմ ու հետեւում եմ իր գործերին: Մեծ մարդկանց յատուկ քայլերով, քոնչկներով է առաջանում: Արդէն Վանի հերոսամարտը կազմակերպելով ու վարելով՝ Արամը դուրս եկաւ մեր կուսակցութեան սահմաններից ու դարձաւ ազգային դէմք՝ Վասպուրականի հերոսը: Իսկ այժմ մեր այս անհնարին ծանր պայմաններում, մեր աչքերի առջեւ՝ տես ինչե՛ր է անում: Քեզ բան եմ ասում, — մարդ չէ, հրա՛ջք է...: Արամն է, որ լուսաւորում է բոլորիս նամբան, եւ քանի նա կայ, կասկած չունեմ, որ յաջողելու ենք եւ յոյս աշխարհ ենք դուրս գալու այս... խոր վիրապից: Լա՛ւ լսիր, Արամն էլ միայն մերը չէ, միայն Դաշնակցութեան չէ, նա բոլորինն է: Մի տես, ինչպէ՛ս է գերել, իր ու գործին հետ կապել ժողովրդականներին, այն ժողովրդականներին՝ որ Դաշնակցութեան համար լաւ խօսք չունէին պահած: Մագերս ներմակել են Դաշնակցութեան մէջ, բայց նման բան լսած ու տեսած չկամ: Արամի աստղին հաւատում եմ ոչ միայն մենք՝ դաշնակցականներս, այլե՛ւ նրանք՝ ժողովրդականները ու բոլորը»:

(Սարգիս Օհանջանեանի խօսքերէն)



«ԱՄԷՆ ՈՒ ԻՐ ՄԱՍԻՆ Է ՄՏԱԾՈՒՄ: ԻՐ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԱՅՆ ԳՈՂՄ ԵՐԷ ՆԱՅՈՂ ԿԱՅ, ՆԱՅՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՅԱՆՈՒՆ ԻՐ ՇԱՀԵՐԻ: ՈՉ ՈՒ ՈՉ ՄԻ ՄԱՐԴ ԶԻ ՈՒՂԱՐԿԻ ՏԱՀԱԿԱՆ ՃԱԿԱՏ՝ ՏՈՒՆ ԳՆԱՅՈՂ ՌՈՒՍՆԵՐԻՆ ՓՈՆԱՐԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԵՐԷ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՃԵՐՈՎ ՀԱԿԱՏ ՊԱՀԵԼՈՒ ԽՕՍՔ ԷԼ Է ԼԻՆՈՒՄ. ԳԱ ԽՕՍՔ Է՝ ԶՈՒՐԿ ԻՐԱԿԱՆ ՀԻՄՔԻՑ ՈՒ ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԻՑ: ՀԱՅԵՐՈՎ Ո՞՞ ՈՒՅԻ ԶԻ ՀԵՏԱՔՐՔՐԻՈՒՄ, ՇՕՇԱՓԵԼԻ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՎՅՆԵԼՈՒ ՄՏՔՈՎ: ԳՐԱ ՀԱԿԱՌԱԿԸ, ԿԱՅ ԳԱՒԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ: ՄԵՆԱԿ ԵՆՔ ԵՒ ՊԷՏՔ Է ԱՊԱՒԻՆԵՆՔ ՄԻԱՅՆ ՄԵՐ ՈՒՃԵՐԻՆ՝ ԹԷ՛ ՀԱԿԱՏԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՒ ԹԷ՛ ԵՐԿՐԻ ՆԵՐՍԸ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵ-

Ա Յ Ս Հ Ա Տ Ո Ր Ը

Արամի մահուան յիսնամեակին առթիւ հրատարակուող այս գիրքը կը բաղկանայ գլխաւոր երեք մասերէ:

Ամէն բանէ առաջ՝ պէտք էր տալ անշուշտ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր եիմնադրի կենսագրութիւնը: Հիմնական այդ բաժնին համար ոչ մէկ դժուարութիւն ունեցանք, քանի «Հայրենիք» ամսագրի 1963ի եւ 1964ի թիւերուն մէջ՝ Արամի ժամանակակից եւ գործակից ընկեր Արշալոյս Աստուածատրեանը տուած էր անոր կեանքի բաւական մանրամասն պատմութիւնը: Առաջին անգամը չէր որ ընկ. Աստուածատրեան կը գրէր Արամի մասին. մեր պարբերական մամուլի էջերուն մէջ, ան զանազան առիթներով գրած էր յուշեր՝ իր մեծ ընկերոջ կեանքէն («Վէմ» — Բ. տարի թիւ 6 եւ Գ. տարի թիւ 1. — «Հայրենիք» ամսագիր — ԻԹ. տարի, 1951, թիւ 2. եւայլն): Սակայն «Հայրենիք»ի 1963 Նոյեմբերի թիւէն մինչեւ 1964 Օգոստոսի համարը երկարող ԱՐԱՄԸ յօդուածաշարքը վաստակահանի եւ Արարատեան Դաշտի հերոսամարտերու ձեկավարի կեանքին, աշխարհահայեացիին, նկարագրային տիպարին եւ գործունէութեան նուիրուած ամենաընդարձակ ուսումնասիրութիւնը կը կազմէ: Այս հատորի առաջին բաժնին մէջ գայն տուած ենք գրեթէ ամբողջութեամբ, յապաւելով միայն կարգ մը մասեր, առաւելաբար՝ արտատպումներ Արամի, Ռուբէնի, Կոմսի և ուրիշներու յուշերէն, գորս վերապահած ենք հատորի երրորդ բաժնին:

Ինչպէս ընթերցողը պիտի տեսնէ, ընկ. Աստուածատրեան տըւած է ոչ միայն իր անձնական յուշերն ու տպաւորութիւնները Արամի մասին, այլ նաեւ անոր կեանքին ու գործին ամբողջ պատմութիւնը:

նը, անոր լուսաշող դիմագծի վերլուծութիւնն ու արդար արժեւորումը: Ան հիմնուած է, մինչեւ 1915ի վաճառ հերոսամարտը երկարող ժամանակաշրջանին համար մասնաւորաբար, Արամի, Ռուբէնի, ընկ. Վ. Փափագեանի (Կոմս), Օն. Մխիթարեանի եւ ուրիշներու յուշերուն եւ վկայութիւններուն վրայ. օգտուած է նաեւ, հաւանաբար, «Հայրենիք» ամսագրի առաջին համարին մէջ հրատարակուած (Նոյեմբեր 1922) «Արամի կենսագրութիւնը» անստորագիր գրութեան՝ որ ամենայն հաւանականութեամբ կը պատկանի Ռուբէնի կամ Սիւսան վրացեանի գրչին, եւ որ կու տայ Արամի կենսի ամփոփ պատմութիւնը՝ մինչեւ անոր առաջին անգամ վան մտնելը: Եւ վերջապէս, 1917-19 բախտորոշ ժամանակաշրջանի կապակցութեամբ, երբ ընկ. Աստուածատրեան անմիջական գործակիցներէն էր Արամի՝ իրքեւ Յատուկ Կոմիտէի ինքնապաշտպանութեան բաժնի վարիչ եւ ապա պետական գործիչ, յօդուածագիրը կը հիմնուի առաւելաբար իր անձնական յուշերուն, նօթերուն եւ տպաւորութեանց վրայ:

Արամի կենսագրութեան ընկ. Աստուածատրեանի գրութեան մէջ քերի կը մնայ միայն Օսմանեան Սահմանադրութեան յաջորդող 1909-1912 շրջանը երբ, Ռոստոմի հետ, վանէն Կարին մեկնեցաւ Արամ, այնտեղէն անցնելու համար Օրտու՝ իրքեւ ուսուցիչ եւ գործիչ: Տարի մը Օրտու մնալէ ետք, Արամ գնաց ժընեւ, իր մտերիմ բնկերոջ՝ Ռուբէնի մօտ, հանգստանալու: Անկէ ետք զինք դարձեալ կը գտնենք Օրտու եւ, 1912ին միայն, վերստին վասպուրական՝ ուր կը մնայ մինչեւ հերոսամարտն ու իր նահանգապետութեան շուրջ եռամսեայ շրջանի վերջաւորութիւնը: 1915ի վերջերէն մինչեւ 1917ի Դեկտեմբեր ամիսը, Արամի կեդրոնը կ'ըլլայ Թիֆլիսը, ուր ան իր գործօն աջակցութիւնը կը բերէ Հ. Յ. Գ. Բիւրոյի եւ Հայոց Ազգային Խորհուրդի աշխատանքներուն, ղեկավար մասնակցութիւն կ'ունենայ Արեւմտահայ եւ Արեւելահայ Համագումարներուն, եւ մերթընդ մերթ կ'այցելէ Ալեքսանդրապոլ, Երեւան, ու ռազմականատի գանձազան կէտերը: Կարն ժամանակով կ'անցնի նաեւ Խրիմ, բուժուելու: 1917 Դեկտեմբերի վերջերը կը փոխադրուի Երեւան՝ իրքեւ լիազօր Հայոց Ազգային Խորհուրդի:

Արամի կենսի գանձազան այս մանրամասնութիւններով ամբողջացնելու համար կենսագրական բաժինը, ընկ Աստուածատրեանի գրութեան անմիջապէս ետք կու տանք նաեւ հակիրճ բայց բաւական ամբողջական կենսագրական ակնարկ մը, Հ. Յ. Գ. Վաքուցանաւեանի հրատարակութեան անուած (Պոսթըն, 1950):

Այս հատորի երկրորդ մասը յատկացուած է ԱՐԱՄԻ ՅՈՒՇԵՆ

Րուն, նոյնութեամբ առնուած Ռուբէնի «Հայ յեղափոխականի մը յիշատակներ»-ու երկրորդ հատորէն: Կատարած ենք ուղղագրական անընդամենը փոփոխութիւններ միայն, յեղուական-էքրականական միութիւնը պահպանելու համար:

Արամ իր յուշերը գրի առած է, Թիֆլիսի ընկերներու պնդումներուն վրայ, 1917ին, Խրիմի իր հանգստի կարմատեւ շրջանին: Պարզ է ուրեմն՝ որ անոնց մէջ տեղ չունին 1918ի գերագոյն գոյամարտն ու անկախութեան կերտումը: Ցաւալի է սակայն նկատել՝ որ Արամի յուշերը չեն ընդգրկեր նաեւ Բագուի եւ Կարսի շրջաններու իր գործունէութիւնը, ինչպէս նաեւ, շատ աւելի կարեւոր՝ Ա. համաշխարհային պատերազմի սկիզբն ու 1915ի վասպուրականի հերոսամարտը: Անոնք կը վերաբերին միայն Արամի վասպուրականեան առաջին շրջանի գործունէութեան մէկ մասին (Արամի վան մտնելէն մինչեւ առաջին անգամ դուրս գալը՝ 1907ի — Վիեննայի — Ընդհ. Ժողովին մասնակցելու համար):

Նախ քան Ռուբէնի երկրորդ հատորին մէջ արտատպուիլը, Արամի յուշերը հրատարակուած են «Հայրենիք» ամսագրի Ա. տարւան քիւրուսն մէջ (1922-1923):

Այս բաժնի վերջաւորութեան գետեղուած է Հմ. Մանուկեանի «Դէպքերը վասպուրականում» յուշագրութեան անուած («ՎԷՄ», 2. տարի, քիւ 2)՝ Արամի մէկ նամակը, ուղղուած Երեւանէն, 1918 Մարտին, վանի ընկերներուն:

Հատորի երրորդ եւ վերջին բաժնին մէջ, վերջապէս, տրուած են Արամի ժամանակակիցներու եւ գործակիցներու յուշերը, վկայութիւնները եւ տպաւորութիւնները՝ ակնաւոր յեղափոխականի կեանքին, գործունէութեան եւ նկարագրին մասին: Ռուբէնի գրչով՝ մեզի կը պատկերացուի ի մասնաւորի Կարսի Արամը՝ իր կազմակերպչական բացառիկ տաղանդով եւ Հայաստանի ու հայութեան մասին իր ունեցած ինքնատիպ ու գրաւիչ մտածումներով. կը պատկերացուի նաեւ վասպուրականի ղեկավար Արամը, մասնաւորաբար սահմանադրական օրերու իր յարաբերական եւ հասարակական եռուն գործունէութեամբ: Ընկ. Վահան Փափագեանը (Կոմս) կու տայ դարձեալ վանի Արամը՝ յեղափոխական եւ սահմանադրական օրերու իր առօրեայ կեանքով եւ անդու աշխատանքով: Օննիկ Մխիթարեանը, Արամի թելադրանքով, գրի առած է վասպուրականի հերոսամարտի (Այգեստանի կռիւնք) պատմութիւնը, օրագրային ձեւով. հեղինակին իսկ վկայութեամբ («Հայրենիք» ամսագիր, Բ. տարի, քիւ 6, Ապրիլ 1924), Արամ վերանայած է այդ գրութիւնը եւ անկէ գեղջիլ

տուած բազմաթիւ մասեր՝ ուր առաւելաբար կը խօսուէր իր դեկավարի արժանիքներուն եւ յաղթանակի ապահովման մէջ ունեցած վնասական դերին մասին: Կան նաեւ յուշեր եւ վկայութիւններ՝ Մալխասէն, Հմայեակ Մանուկեանէն, Սփրեմ Սարգսեանէն, Սիմոն Վրացեանէն, Վահան Նաւասարդեանէն, Արշաիր Շահխաթունիէն, ընկ. Կարօ Սասունիէն եւ ուրիշներէ:

Հատորը կը վերջանայ Օննիկ Մխիթարեանի ԱՐԱՄ յօդուածով, հրատարակուած «Հայրենիք» ամսագրի Ա. տարուան Ցրդ համարին մէջ (Յունիս 1923), Հայաստանի անկախութեան գլխաւոր դարբինի մահուան չարորդ տարելիցին առթիւ: Անոր եզրակացութիւնները ի գորու են նաեւ այսօր, — ինչպէս ի գորու պիտի ըլլան եւ վաղը: Այսօր եւս, Արամի մահէն յիսուն տարիներ ետք՝

«ԱՆՈՐ ՈԳԻՆ ԿԵՆԴԱՆԻ ԿԸ ՄՆԱՅ ՍԱԿԱՅՆ, ԿԸ ԹԵՒԱԾԷ ՀԱՅ ԵՐԿԻՆՔԻՆ ՏԱԿ ՈՒ ՀԱՅ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ, ԿԻՇԽԷ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ, ԵՒ ՆՈՐԷՆ ՈՒ ՆՈՐԷՆ Կ՛ԱՌԱՋՆՈՐԿԷ ՄԵՋ ԴԷՊԻ ԻՐ ԵՒ ՄԵՐ ՄԻԱԿ ՊԱՇՏԵԼԻՆ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ...»:

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

Ա Ր Ա Մ Ը

Այն օրերին, երբ Րաֆֆին զրուժ էր իր «Կայծեր»ը, որ դառնալու էր հաւատոյ հանգամակ հայ ազգային-յեղափոխական մտածողութեան համար, Ղարաբաղի Շուշի քաղաքում աշխարհ եկաւ այն մարդը, որ հոգեկան ա՛յնքան հարազատութիւն ունէր «Կայծեր»ի հոյակապ հերոսների՝ Կարոյի եւ Ասլանի հետ:

Զգիտե՛մ՝ ո՞վ է առաջին անգամ Արամին անուանել Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր: Բայց եթէ առհասարակ հնարարաւոր բան է մի մարդու անուան հետ կապել երկար տարիների ընթացքում սերունդների գուրգուրացած ու նրանց արիւնով շաղախուած հայ քաղաքական-ազգային ձգտումների իրականացման այն ձեւաւորումը, որ նա ստացաւ 1918ին, այդ մարդը, ամենայն իրաւամբ, պիտի լինի Արամը: Այն օրերին, երբ վերջնականապէս կոփուում ու կեանք էր ստանում անկախ հայրենիքի զաղափարը, մեծագոյն ղէմքը ու ղէպերի վրայ մեծապէս ազդողը Արամը եղաւ: Ու եթէ հայ բողեւելիկները իրենց անմիտ քինախնդրութեամբ ոչնչութեան չեն մատնել Երեւանի Ազգային Խորհրդի ու նրա գործադիր մարմինների՝ Յատուկ Կոմիտէի եւ Վարիչների Մարմնի՝ ղիւանի թղթերը, մի օր կը հրատարակուին այդ թղթերն ու արձանագրութիւնները, եւ Արամին վերապահուած պատիւը լիուլի հասկանալի կը դառնայ գալիք սերունդների համար: Սրանց առջեւ Արամը պիտի պատկերանայ իբրեւ ազգային-քաղաքական բացառիկ կարողութիւններով օժտուած մի հոյակապ ղէմք, իր ժողովրդի ճակատագիրն ու բախտը դարձնող մի գորաւոր կամք:

*

**

Արամը (բուն անունով՝ Սարգիս - Սերգէյ - Յովհաննիսեան) ծնունդ է 1879 թուին, Շուշի քաղաքում, չքաւոր արհեստաւորի՝ դինադործի ընտանիքում: Նախնական կրթութիւնը ստացել է նոյն քաղաքի ծխական դպրոցներից մէկում, ուր աչքի է ընկել իր ջանասիրութեամբ ու յաջողութեամբ ուսման մէջ:

Ծնողների ցանկութիւնն էր, որ Արամը ուսումը շարունակէ թեմական դպրոցում: Սակայն, չքաւորութեան հետեւանքով նրանք ի վիճակի չէին ծածկելու ուսման հետ կապուած ծախքերը, ուստի մեծ եղբայրը՝ բաղմանդամ ընտանիքի տէր, նոյնպէս չքաւոր, մի քանի անգամ դիմումներ է անում հոգաբարձութեան՝ խնդրելով, որ Արամին ձրի ընդունեն դպրոց: Հոգաբարձութիւնից մերժում ստանալով Արամին ընդունել բոլորովին ձրի, եղբայրը որոշում է կրճատել իր օրուայ ծախքերը եւ Արամին դպրոց ուղարկել:

Արամը ընդունւում է թեմական դպրոցի երրորդ պատրաստական դասարանը: Այդ ժամանակ նա 11 տարեկան էր:

Արամի թէ՛ ծնողները եւ թէ՛ եղբայրը ա՛յնքան չքաւոր էին, որ հնարաւորութիւն չունէին հոգալու երեխայի դպրոցական տարրական պահանջները, ինչպէս օրինակ, դասագրքերի, տետրակների եւ այլ պիտոյքների հայթայթումը: Սակայն, այդ ամէնը արդեւ չէր, որ Արամը լինէր լաւագոյն աշակերտներից մէկը: Արամի հնարամտութիւնը, որ հասուն չըջանին նրա փայլուն ընդունակութիւններից մէկն էր, աչքի է ընկնում այդ փոքր տարիքում, երբ նա նստած էր թեմական դպրոցի պատրաստականում եւ ընդամէնը 11 տարեկան էր: Գիրք կայ թէ չկայ, պէ՛տք է լաւ սովորել. սա փոքրիկ Արամի ցանկութիւնն էր: Ու եթէ գիրք գնելու դրամ չկայ, պէտք է աշխատել մատչելի կերպով փոխարինել գիրքը: Նա սովորական թղթից կազմում է մի հաստ ընդհանուր տետրակ, որտեղ արտագրում է օրուայ բոլոր դասերը եւ սովորում է այնպիսի յաջողութեամբ, որ ժամանակի ընթացքում իր կարողութիւններով գրաւում է ուսուցիչների ուշադրութիւնը:

Արամի հետաքրքրութեան սահմանները դպրոցում գնալով լայնանում են, եւ նա դեռ դպրոցի երրորդ դասարանում, այսինքն ընդամէնը 14 տարեկան հասակում, ոչ միայն ուսուցիչների եւ ընկերների ուշադրութիւնն ու համակրանքն է դրաւում, այլ ե՛ւ դրսի մարդկանց:

Իննսուական թուականներն էին: Հ. Յ. Դաշնակցութեան ներ-

կայացուցիչները այցելում էին հայաշատ վայրերը եւ քարոզում, տարածում կուսակցութեան գաղափարները: Այդ բանը կատարում էր գաղտնի ժողովներում, ծածուկ ցարական ոստիկանութեան աչքից: Հայ յեղափոխականները գալիս են նաեւ Շուշի, հրաւիրում են ժողովներ եւ անցնում դործի: Այդ ժողովներին մասնակցում են նաեւ թեմական դպրոցի աշակերտները՝ սկսած երրորդ դասարանից մինչեւ վեցերորդ դասարանը:

Արամը, իբրեւ երրորդ դասարանի աշակերտ, մասնակցում է այդ ժողովներին: Եւ ահա ժողովներում է, որ նա իր ելոյթներով ցոյց է տալիս, թէ ի՞նչ խառնուածքի տէր է եւ գրաւում է ընդհանուրի ուշադրութիւնը այն աստիճան, որ երբ Դաշնակցութեան ներկայացուցիչը առաջարկում է նրան ընտրել իբրեւ դաշնակցական կազմակերպչական մարմնի լիազօր, այդ առաջարկը արժանանում է ընդհանուրի հաւանութեան:

Արամի համար սկսում է գործունէութեան մի շրջան, որ տարիների ընթացքում զարգանալով ու ծաւալուելով, հասցնելու էր նրան ազգային ազատագրական շարժման կատարները:

Քանի դեռ Արամը Շուշիի թեմական դպրոցումն էր, մինչեւ հինգերորդ դասարան նրա գործունէութիւնը ընթանում էր երկու ուղղութեամբ: Մի կողմից՝ նա կուսակցութեան տրամադրած նիւթական ու բարոյական միջոցներով օգնութեան է հասնում քաղաքի չքաւոր ընտանիքների երեխաներին, տեղաւորելով նրանց թեմական կամ քաղաքի այլ դպրոցներում ու այս կամ այն չափով հոգալով նաեւ նրանց դպրոցական նիւթական կարիքները, միւս կողմից՝ նա տանում է յեղափոխական-կազմակերպչական աշխատանք թէ՛ թեմական դպրոցում եւ թէ՛ դպրոցից դուրս՝ արհեստաւորների շրջանակում: Ու թէեւ նրա գործունէութեան մեծ մասը կատարում էր գաղտնի, սակայն այդ գործունէութեան արդիւնքները յաճախ մատնում էին հեղինակին, եւ նա երբեմն-երբեմն դէմ առ դէմ էր գալիս քաղաքի աղաների կամ հոգաբարձուների հետ, որոնք անբարեացակամ վերաբերում ունէին նրա հանդէպ:

Յատկապէս թեմական դպրոցում Արամի յեղափոխական գործունէութիւնը աշակերտական շրջանում լարում էր դպրոցի հոգաբարձութիւնն ու տեսուչ Բենիկ վարդապետը նրա դէմ, այն աստիճան, որ մանկավարժական ժողովներում հարց են բարձրացնում «անբարեյոյս» աշակերտներին հեռացնելու դպրոցից: Պայքարը ըմբոստացած, յեղափոխականորէն տրամադրուած աշակերտների եւ դպրոցի վարչութեան (հոգաբարձութեան եւ մանկավարժական կազմի) մի-

ջեւ բացորոշ կերպարանք է առնում այն աստիճան, որ բանը հասնում է տուր ու դմբոցի: Հոգաբարձուներից ոմանք ենթարկւում են ծեծի:

Այդ ամէնը վերջանում է Արամի եւ միւս ըմբոստ աշակերտների հեռացումով դպրոցից, եւ այդ՝ կառավարութեան պահանջմամբ: Պահպանողական-յետադիմական հոգաբարձութիւնը Բենիկ վարդապետի օղնութեամբ հնարաւոր ու նպատակայարմար է համարում հրաւիրել ոստիկանութեան միջամտութիւնը ազգային գործերի մէջ:

Աւելին. Բենիկ վարդապետը, հետեւելով ռուսական օրինակին (*), որոշում է այնպէս անել, որ Արամը եւ իր ընկերները այլեւս ոչ մի դպրոց չընդունուեն, որի հետեւանքով Արամին մերժում են ընդունել Գէորգեան ճեմարանը: Միայն ծնողների միջամտութեամբ յաջողւում է փոխել տալ այդ որոշումը, որից յետոյ միայն արտաքսուածներին ընդունում են Երեւանի թեմական դպրոցը, որը Արամը աւարտում է 1901 թուին:

Այստեղ տեղին եմ համարում բերել մի կտոր իմ յուշերից Արամի մասին:

Առաջին անգամ ես Արամին հանդիպեցի, որքան յիշում եմ, 1901 թուին: Այն ժամանակ Երեւանի միջնակարգ դպրոցների աշակերտութիւնը զրեթէ ամբողջովին կազմակերպուած էր: Կային չորս դպրոցներ (երեքը պետական՝ տղայոց եւ օրիորդաց գիմնազիաները եւ ուսուցչական սեմինարիան եւ հայոց թեմականը): Իւրաքանչիւր դպրոց ունէր իր առանձին կազմակերպութիւնը:

Դպրոցները սերտ կապ էին պահում միմեանց հետ: Այդ կապը պահւում էր «մայր խմբի» միջոցով, որի մէջ մտնում էին երկուական ներկայացուցիչներ ամէն դպրոցից: «Մայր խմբում» ծեծւում էին աշակերտական շարժման վերաբերեալ ընդհանուր հարցերը: Շարժման նպատակը մշակութային էր: Աշակերտութիւնը ձգտում էր ընդլայնել իր մտաւոր հորիզոնը: Ընթերցանութեամբ զբաղուել, ժողովներ, դասախօսութիւններ, գրական-երաժշտական հանդէսներ սարքել, — ահա գլխաւորապէս այն միջոցները, որոնցմով աշակերտութիւնը լրացնում էր իր կրթութեան պակասը դպրոցից դուրս:

Սակայն, նրա հետաքրքրութիւնը չէր սահմանափակւում լոկ

(*) Նման դէպքում ռուսաց պետական դպրոցներից արձակուողներին տալիս էին այսպէս կոչուած «գայլի վկայական», որով Յրամբ գրկւում էին որեւէ դպրոցում ուսումը շարունակելու իրաւամբից:

մշակութային խնդիրներով: Երջապատի կեանքը, բնականաբար, ազդում էր նրա վրայ, իսկ այդ կեանքում տեղի էին ունենում մատուցուող սերնդի հետաքրքրութիւնը բորբոքող երեւոյթներ: Հ. Յ. Դաշնակցութիւնը արմատներ էր ձգել հասարակութեան այլեւայլ խաւերում. շատերն էին զբաղւում ազգային-հասարակական հարցերով: Դաշնակցութեան գործիչները ձգտում էին իրենց ազդեցութեան տակ առնել աչքի ընկնող ուսանողներին ու նրանց միջոցով ազգային ոգի զարթեցնել աշակերտութեան մէջ: Եւ յաջողւում էին:

Աշակերտական խմբերում եւ շրջաններում, իբրեւ հետեւանք դրսի ազդեցութեան, ծայր էր տուել մի այսպիսի հարց. — աշակերտութիւնը պէտք է լինի կուսակցական թէ անկուսակցական, այլ խօսքով՝ պէ՞տք է զբաղուել ազգային-հասարակական հարցերով, թէ՞ պէտք է սահմանափակուել միայն իր ուսումը-կրթութիւնը լրացնելով: Ու թէ եւ մեծամասնութեան գիտակցութիւնը կողմնակից էր վերջինին, բայց հէնց այդ մեծամասնութեան մէջ կային շատեր, որոնք իրենց զգացմունքներով ընդառաջում էին դրսում տիրող արամադրութիւններին եւ ոգեւորւում, ապրում նրանցով:

Ահա այդ ժամանակ մի օր լուր տարածուեց աշակերտներին մէջ, թէ Ղարաբաղի թեմական դպրոցից մի քանի հոգի եկել են՝ Երեւանի թեմականը մտնելու համար: Պատմում էին, որ նրանց դուրս են արել իբրեւ ըմբոստների, անկարգների:

Մի քանի օր անց աշակերտական մի հաւաքոյթում տեսայ այդ զարաբաղցիներին: Մանօթացանք, եւ այնուհետեւ առիթներ էինք ունենում իրար հանդիպելու:

Մեր աշակերտական ժողովներին մասնակցողները երեք հոգի էին: Մէկը պնդակազմ ու խոշոր՝ Սարգիս անունով, միւսը նուրբ դիմազծերով ու մշտաժպիտ՝ Տոչեանը, երրորդը, կարճահասակ, շիկահեր, փոքր սրածայր միրուքով, սրամիտ, որի անունը մոռացել եմ:

Այդ երեքի արտաքինն էլ շատ լաւ պատկերացնում եմ մինչեւ օրս էլ:

Մինչեւ 1918 թուականը ես չգիտէի, որ Ղարաբաղի թեմականից Երեւան տեղափոխուած Սարգիսը եւ Արամը միեւնոյն անձնաւորութիւնն են:

1918ին Արամի հետ կառքով մի տեղ էինք գնում: Նա խօսում էր, ես լսում էի ու միաժամանակ թեք հայեացքով դիտում էի նրան: Երեւի, նմանութեան կապակցութեամբ Արամի դիմազիծը շատ պարզ յիշեցրեց ինձ 17 տարի առաջ նոյն Երեւանում տեսած Սարգիսին:

— Պօսքդ կտրու՞մ եմ, Արամ, դու Երեւանի թեմականում սո-
վորե՞լ ես, հարցրի ես:

— Հա, ի՞նչ կայ որ, — ժպտաց նա:

— Եղբայր, դու Սարգիսն ես, — դարձացայ ես:

Զարժանքս դուարձացրեց նրան: Նկարագրեցի իր այն ժամա-
նակուան արտաքինը, — բաց մոխրագոյն մահուտից բլուզ, սեւ կաշ-
ուից լայն գոտի, սեւ մահուտից տարատ, խիտ, ըմբոստ մազեր,
վատառողջ աչքեր, իր տարիքին շաղոզ լուրջ դէմք:

1901 թուին Սարգիսն պատահեցի մի քանի անգամ եւ միշտ
նոյն տպաւորութիւնն ունեցայ: Լուրջ ու լռակեաց էր, ինքն իր մէջ
ամփոփուած, մինչդեռ իր բնկերները շատ ուրախ բնաւորութեան
տէր էին: Իր ներքին կարողութիւններով աչքի չէր ընկնում: Գոնէ
եւ մեր հաւաքոյթներում նրա մէջ արտակարգ ոչինչ չէի նկատում:

ԱՐԱՄԸ ԲԱԳԻՈՒՄ

Երեւանի թեմական դպրոցն աւարտելուց յետոյ, Արամը դը-
նում է Բագու:

Բագուն շատերին էր դէպի իրեն քաշում՝ դրամ-հարստութիւն
վաստակելու իր հնարաւորութիւններով: Արամը դրանցից չէր: Իր
ամբողջ կեանքում նա չէր մտածել երբեք դրամ շահելու մասին: Բա-
զուն նրան դրաւում էր բոլորովին տարբեր պատճառներով. այնտեղ
եղում էր հասարակական-յեղափոխական կեանքը: Այդ օրերին Բա-
զուի Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան կենտրոնն էր: Բա-
զուի Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Կոմիտէն ղեկավարն էր Կովկասի
բոլոր դաշնակցական մարմիններին: Իսկ Արամը, գիտենք արդէն,
դաշնակցական էր Շուշիի թեմական դպրոցի ստորին դասարաններից:

Ռուս կառավարութեան մերտրեմունքը դէպի հայերը բացար-
ձակապէս թշնամական էր: Հալածում էին հայ լեզուն, հայ դպրոցը
եւ առհասարակ մեր ազգային-մշակութային հաստատութիւնները:
Շուտով այդ հալածանքները փակելու էին նաեւ հայ եկեղեցու դռ-
ները: Գալիցիեան մտայլ օրերն եկան կովկասահայութեան համար:

Առանց չափադանցութեան մէջ ընկնելու՝ կարելի է ասել, որ
հայութեան ծոցում միակ կազմակերպուած ուժը, որ քիչ-չատ այս
կամ այն ձևով ի միճակի էր սրայքարելու ռուս կառավարութեան
հայահայրած քաղաքականութեան դէմ, Հ. Յ. Դաշնակցութիւնն էր:
Թէև յեղափոխական այդ կազմակերպութիւնը հրատարակ էր եկել

այլ նպատակով, այն է՝ արեւմտահայ դատը պաշտպանելու նպա-
տակով, բայց, բնականօրէն, նա չէր կարող անտարբեր մնալ, երբ
իր աչքի առջեւ հայութեան մի ստուար մասը կովկասում ենթարկ-
ւում էր անարդար ու ազգային տեսակէտով կործանարար հայա-
ծանքների:

Սակայն, տարբեր էին պայմաններն այնտեղ, սահմանի այն
կողմը՝ Արեւմտահայաստանում եւ տարբեր այստեղ՝ ռուսական սահ-
մաններում: Պէտք էր մշակել պայքարի նոր ձևեր՝ համապատաս-
խան միջավայրի պայմաններին: Ինչ որ նպատակաւորմար էր հա-
մարում Տաճկաստանում, կորստարեր կարող էր լինել Կովկասահա-
յութեան համար: Այս տեսակէտը մեկնակէտ ունենալով՝ Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը, մի կողմ թողնելով գործօն ձևը, որդեկրեց՝ ընդհան-
րապէս պայքարի կրաւորական ձևը:

Տեղին է դիտել, որ մինչև հայ եկեղեցական կալուածների
դրաւումը, կովկասահայերու մտքով անցած չէր անցնում որեւէ ձև-
ւով պայքարել ռուս կառավարութեան դէմ, այնքա՞ն հօր, այնքա՞ն
փիթխարի էր այդ կառավարութեան ուժը նրա աչքում: Պէտք էր
նախ՝ պատրաստել ժողովրդին այդ պայքարի համար: Բազում այդ
իմաստով առաջին խօսքն ստաց Արամը:

«Կախ ռուսական հօր ու մեծ կառավարութեան դէմ, ինչպէս
ասում էին այն ժամանակները, բացարձակապէս խեղճութիւն» էր
եւ բնական է, որ ոչ ոք չէր յանդիմում առաջին խօսքն ասել այդ
կողմի մասին: Բայց այդ խօսքն ստաց Արամը: Յիշում եմ, թէ ինչ-
պէս սարսափեցին ամենքը, երբ այդ կողմի անհրաժեշտութեան մա-
սին սկսեց խօսել նա:

Մարդիկ դժուարանում էին հասկանալ Արամին: Ի՞նչ կողմի
մասին է խօսում նա, ինչպէ՞ս եւ ի՞նչ միջոցներով կարելի է կողմել
ռուսական ահաւոր ուժի դէմ: Մի շարք նման բնոյթ կրող հարցեր
էին թափում Արամի յլխին:

Առանց խուսափումի եւ վարանման՝ Արամ համոզուած շեշտով
ու խորին պիտակցութեամբ պատասխանում էր տեղատարափ հար-
ցումներին, աւելի մանրամասն ու հանդամանօրէն պարզաբանելով
իր միտքը պայքարի յատուկ ձևի մասին — զանգուածային ցոյցեր,
դրաւոր բողոքներ, ըմբոստական այլ եւ այլ ակտէն շարժումներ:

Պայքարի մասին Արամի տուած այդ բացատրութիւնները ոչ
միայն հանդատացնում են ժողովականներին, այլև՝ արժանանում են
նրանց հաւանութեան:

Պօսքից Արամն անցնում է գործի. ժողովրդի զանազան խաւ-

րից (աշակերտական, արհեստատիրական, բանտիրական, մանր առևտրական) կազմակերպում է խմբեր ու միում նրանց զործի՝ համաձայն իր մշակած ու Կ. Կոմիտէի կողմից հասանութիւն գտած ծրարի:

Այդ ուղղութեամբ Արամի գործունէութիւնը չի սահմանափակում միայն Բագում: Կ. Կոմիտէի հրահանգով շարժումը կազմակերպելու նպատակով՝ նա անցնում է Գանձակ, սպա՝ Թիֆլիս, Ալեքսանդրապոլ (Էնիքիական), Կարս:

Ամէն տեղ կատարուած բոլոր քաղաքական բմբուսութիւններին սղին Արամն էր: Նա կարողանում էր ներշնչել հաստ ու մտահոսութիւն մտցնել զործի մէջ, քաշել իր յետերից տասանուորդներին ու կասկածողներին:

Արամը խորապէս զգում ու գիտակցում էր որու կառավարութեան քաղաքականութեան նենդ իմաստը: Մեր ազգային ծխական զպրոցները փակելուց յետոյ, հիւսիսի արջը իր թաթը մեկնում էր դէպի մեր եկեղեցական կալուածները, որով ծանրապէս հարուածելու էր հայ եկեղեցին՝ տկարացնելով նրա գործունէութիւնն ու ազդեցութիւնը հայապահպանման գործում: Հայերի նկատմամբ որու պետութեան որդեկրած քաղաքականութիւնը տանում էր որուսահայութիւնը դէպի ուսացում:

Ահաւասիկ այդ ահաւոր ազգային վտանգի դէմ էր ծառանում Արամը ու ամէնուրեք կոչ անում՝ կամաւոր կերպով շնթարկուել կառավարութեան չար կամքին ու անել հնարաւորը՝ վիժեցնելու համար կառավարութեան այդ նպատակը:

Բարերախտաբար, հայ ժողովրդական զանդուածները նոյնպէս սկսեցին հասկանալ վտանգի մեծութիւնը, եւ Արամների ցանած սերմերը ամէն տեղ պարարտ հող գտան: Ու ո՛չ մէկ սպառնալիք կարողացաւ թուժք կանդնել ժողովրդական ցասման դէմ: Չարաչար ծեծ, բանտ, աքտոր, անգամ արիւն՝ այդ բոլորը հայ ժողովուրդը իր ճշնշող մեծամասնութեամբ արհամարհեց իր աննկուն կեցուածքով: Ժողովրդի նման վերաբերմունքով միայն պիտի բացատրել այն փառաւոր յաղթանակը, որով վերջին հաշուով պսակուեց Արամների պայքարը հզոր կառավարութեան դէմ, այն է՝ հայ եկեղեցին յետ ստացաւ դրաւուած կալուածները:

ԱՐԱՄԸ ԿԱՐՍՈՒՄ

Կարտը հայ ազատագրական շարժման պատմութեան մէջ Եղապի դեր է կատարել՝ իր ուրույն վերաբերմունքով դէպի յեղափոխական կազմակերպական գործը: Իւրաքանչեւ բացառիկ մտեցում է ունեցել Հ. Յ. Գաշնակցութեան կարսի Կ. Կոմիտէն դէպի կուսակցութեան մէջ մտնել ցանկացողները — թեկնածուները: Այնտեղ, ստեղծուել էր նմանը չունեցող կուսակցական մթնոլորտ, որ տալիս էր թրծուած, բոտ ամենայնի մտահոսութիւն գործիչներ, որոնց համար ոչինչ էր ամէն կարգի «հոյս եւ ջուր»:

Եւ, իրօք, «Կարսի ցահանգը վայր մըն էր, որուն յեղափոխական հնոցին մէջ նորելուկ դաշնակցականները կարող էին եփուել եւ դուրս գալ քրծուած ու յղկուած, կամ՝ չդիմանալով այնտեղի ծայրաստիճան գաղափարական եւ սպարտական կեանքին՝ լքել յեղափոխական ասպարէզը» (Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հատոր Ա., էջ 34):

Կարսի «յեղափոխական հնոցը» դէպի իրեն է քաշում Արամին, ի ծնէ յեղափոխականին:

Արամից յետոյ, 1903ի վերջերին Կարս է գալիս Ռուբէնը, որ նոր էր մտել կուսակցութեան մէջ եւ որին Թիֆլիսի բնկերները ուղարկել էին այդ քաղաքի Կ. Կոմիտէի տրամադրութեան տակ «վարժեցնելու եւ օգտագործելու» համար:

Բախտի բերմամբ՝ Ռուբէն Կարսում «վարժուելու» նպատակով անդամակցում է այն խմբին, որի մէջ էր Արամը: Թէեւ «շատ դժուար էր (խմբի մէջ) մեծն ու պատիկը տարբերել, պէտք էր կռահել քան հասկանալ», այնուամենայնիւ Ռուբէնը կռահում է, որ «խմբի մեծաւորը ցաւոտ աչքերով մարդն էր», որ «շատ խիստ կ'երեւար»: Ոչ ոքի Ռուբէնը չէր ճանաչում եւ չէր համարձակում այդ իմաստով մէկն ու մէկին հարց տալ:

Եթէ Ռուբէնը Արամի գործը տեսնելով էր զնահատում նրան, սպա Արամը, Ռուբէնի հետ փոքր ինչ չփման մէջ լինելուց յետոյ, կռահում է նրա մէջ թաղնուած ուժերը, որոնք չքեղորէն զարգանալու ու իրենց փառաւոր լրումին էին հասնելու Մշոյ աշխարհում, Սասունի յեռնելում եւ Հայաստանի Հանրապետութեան կարճատեւ գոյութեան ընթացքին:

Արամի մարդկանց ճանաչելու այդ շնորհքը Ռուբէնն էլ է մտնանալ իր յուշերում: Այն համոզմանն էր, որ Արամը մարդկանց ճանաչում էր ոչ միայն նրանց կատարած գործերով, այլ ե՛ւ բնազդով, այսինքն՝ ստանց գործնական տուեալներին:

Ռուբէնի վկայութիւնից զիտենք, որ Արամը Կարսում իր գործով ու խօսքով աչքի էր ընկել այն աստիճան, որ վայելում էր ընդհանուրի սէրն ու համակրանքը: Ամենից առաջ այդ բանը նկատում է Կ. Կոմիտէն եւ գնահատելով Արամի այդ շնորհքը, յանձնում է նրան «քարոզչական գործի ղեկավարութիւնը»: Եւ այդ՝ հակառակ Արամի ցանկութեան, որովհետեւ նա եկել էր Կարս՝ նրա «հնոցում» վարժուելու եւ ապա երկիր անցնելու համար, ինչպէս որ այդ արել էին իրենից առաջ Կարս եկողները: Սակայն, Կ. Կոմիտէն այն կարծիքին էր, որ Արամը սահմանի այս կողմը մնալով շատ աւելի կարեւոր գործ արած կը լինի, քան թէ երկիր անցնելով: Եւ պահում են նրան Կարսում՝ իբրեւ անփոխարինելի կուսակցական-հասարակական գործիչ:

Կարսի Կ. Կոմիտէի շրջանում Արամը իր գործունէութեամբ դառնում է կենտրոնական դէմք, ինչպէս նա յետագայում դարձաւ Վանում, իսկ իր կեանքի վերջին շրջանում՝ Երեւանում: Այդպէս էր ի վերուստ նրան վիճակուած: Այդ էր նրա ճակատագիրը: Ուր որ սոք էր դնում, նրան սպասում էր ղեկավարի պատասխանատու դերը մեր անմխիթար իրականութեան մէջ:

Կարսում Արամը մի կողմից զբաղւում է տեղական կուսակցական-կազմակերպչական գործերով, միւս կողմից՝ զինական խմբերի պատրաստութեամբ՝ երկիր ճամբելու համար: Այդ խմբերի մեծ մասը սահմանների վրայ ջարդւում է՝ տաճիկ եւ ռուս զինուորների կողմից:

Այդ անյաջողութիւնները ծանրապէս ազդում են Արամի վրայ: Ընկերների եւ միւսների կորուստը նսեմացնում է նրա աչքում Կարսի շրջանի իր գործունէութիւնը, եւ նա, այլեւս չենթարկուելով տեղական ընկերների (Կ. Կոմիտէի) որոշման, թողնում է Կարսը եւ ճանապարհ ընկնում դէպի երկիր:

ԴԵՊԻ ԵՐԿԻՐ

1904ի աշնան, երկիր մտնելու համար ժամանակը աւելի քան անյարմար էր: Իրար յաջորդող անյաջողութիւնները՝ թէ՛ սահմանադրւելու եւ թէ՛ բուն երկրում, ստեղծել էին յոռետես տրամադրութիւն, որին նպաստում էին երկրի աչքի ընկնող գործիչների՝ Անդրաճիկի, Մուրատի, Սեպուհի եւ միւսների հեռանալը:

Շատ մեծ նեղութիւններով, որոնց մասին Արամը մանրամաս-

նորէն խօսում է իր յուշերում, նա հասնում է Ռոյ: Հետագրքրական տեղեկութիւններ է տալիս Քաւրիզի, Սալմաստի եւ Ռոյի կուսակցական աշխատանքների եւ նրանց բնոյթի մասին:

Այն ժամանակ Ռոյի Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչը Մալխասն էր, որի աջակցութեամբ Արամը Ռոյից անցնում է Քաղէոս Առաքելայի վանքը: Երբ հետուից երեւում են վանքի գմբէթները, Արամի միտքը «սլանում է դէպի հին-հին դարերը եւ մօտիկ ժամանակները: Սա ի՞նչ նակատագրական գուգադիպութիւն է. հին Հայաստանի լուսաւորիչները, նոր կրօնի առաքելները այս նախապարհով են անցել եւ նրանից շատերը այս մեծ նախապարհի վրայ են ընկել»:

Ուշ լինելու եւ յարմար վաղատ չլինելու պատճառով, Արամին չի յաջողում Քաղէի վանքից անմիջապէս ճանապարհուել դէպի Վան եւ նա ստիպուած՝ մի առժամանակ մնում է վանքում: Ժամանակը գուր չի անցնում: Օգտուելով հանգամանքից՝ Արամը սկսում է ծանօթանալ կուսակցական գործերին, ուսումնասիրում է վանքի կատարած դերը, փոխադրութեան ձեւերը, դէպքերն ու դէմքերը: Ու այդ ամէնի մասին հանգամանօրէն խօսում է իր «Յուշերում»:

Քաղէի վանքում Արամը մնում է շորս ամիսից աւելի: Վանահօր (Գէորգ վարդապետ Նալբանդեան, ծածկանունը՝ Ընծայր) խորհրդով նա վանքից գնում է Սալմաստ՝ «այնտեղի գործերին ծանօթանալու համար»: Այդ գործերին Արամը ծանօթանում է Սալմաստի կուսակցական պատասխանատու գործիչ Սամսոնի օգնութեամբ: Այդ ծանօթութիւններն ու տեղեկութիւնները պիտի պէտք գային Արամին՝ նրա ապագայ գործունէութեան համար:

Երախտագիտական զգացումով է Արամը բաժանուում Սամսոնից, «որ ա՛յնքան սրտաբաց հիւրընկալեց ինձ եւ ա՛յնքան քանակազին խորհուրդներ տուաւ ինձ իմ ապագայ գործունէութեան մասին», եւ վերագառնում վանք:

Այստեղ նրան սպասում էին վանքից Վան ընկերներին գրած նամակների պատասխանները: Արամը խնդրել էր, որ «յարմար առաջնորդներ ճամբեն» իրեն Վան տանելու համար:

Վանից Արամի նամակին կուսակցական ղեկով պատասխանողը Կոման էր, որ ընդառաջելով Արամի զիմումին, ուղարկել էր «ամենահամուտ սուրհանդակը»:

Անձնական բնոյթ կրող նամակ էր գրել նաեւ Իշխանը, Արամի մօտ ընկերը եւ որոշ իմաստով նրա կուսակցական աշակերտը: Իշխանը իր նամակում բացատրում էր «երկրում եղած իրերի վիճակը,

իրբև փոխտուական սպրբելու անպատեհութիւնները եւ խուրիւրդ էր սպրբա խորեկ եւ սպա միայն երկիր մտնել»։ Իշխանի նա- մակում արտած տեղեկութիւնները Արամի համար, հարկաւ, նորու- թիւններ չէին։ Իշխանը Արամին տուած իր խորհուրդներով ցոյց էր տալիս, որ նրան յաւ չէր ձանաչում, այլապէս նման խորհուրդ չէր տայ։

Արամը վանքից ձանապարհուած է դէպի Վան 1905ի Յունուա- րի վերջերին եւ հասնում է Փետրուարի 6ին՝ ձանապարհին կրելով հազար ու մի նեղութիւններ։ Այդ նեղութիւնները նեղութիւններ չեն մեր հասկացած սոփոական իմաստով, այլ անասելի տանջանքներ- տասապանքներ են, որոնց մասին մեր նոր սերունդը հետաւոր դա- րափար անգամ չունի, եթէ ծանօթ չէ Արամի, Ռուբէնի, Կոմսի եւ միւսների յաւերի հետ, որ խօսք կայ նաեւ հեղինակների քաջածի մասին թէ՛ երկիր մտնելու եւ թէ՛ այնուհետեւ երկրում ապրած ժա- մանակ։ Մարտիրոս-Նահապետներ են եղել նրանք՝ նուիրուած հայ ժողովրդի ազատագրական գործին։

Իր յաւերում Արամը տեղեկութիւններ է տալիս այն բոլոր վայրերի, գիւղերի եւ գործիչների մասին, որոնց հանդիպում է վան- քից-Վան մեկնող իր ձանապարհին։ Այդ տեղեկութիւնները, երբեմն մանրամասն, բայց միշտ հետաքրքրական ու շահեկան, Արամը հար- կաւ, բոլորը չի սնեցել երկիր մտնելու ժամանակ, այլ յետագայում՝ Վաստատարական իր գործունէութեան ընթացքում է ձեռք բերել։ Այդ տեղեկութիւններն միայն յեղափոխական-ազատագրական շարժման չեն վերաբերում։ Արամին հետաքրքրել է ամէն բան, ինչ որ կապ ունէր մեր ժողովրդի կեանքի հետ։ Իր տեսածների ու լսածների կա- պակցութեամբ երբեմն յայտնում է իր մտածումները, տպաւորու- թիւնները, երբեմն վերլուծելով յուրիչ դէպքեր տխուր անցեալից։

ԱՐԱՄԸ ՎԱՆՈՒՄ

Արամը Վան է հասնում 1905ի Փետրուար 6ին։ Այն ժամանակ կուսակցութեան Գերագոյն Մարմնի ներկայացուցիչը Վանում Կոմսն էր՝ Վ. Փոփապետանը։ Արամը քաղաք է մտնում ծպտեալ ձևով՝ վը- բան ունենալով գիւղական ցնցոտիներ — «խարամխարներաց մէջ» — մի հանգամանք, որ բուսականին անհաճոյ վիճակ է ստեղծում նրա համար, մինչեւ Կոմսի մօտը հասնելը, ուր նա շտապում է հանել վրայի գիւղական ցնցոտիները (տակից հաղած ունէր սիլիլ հա- ցուտներ)։

Արամը գիտում է Կոմսի ուշխատանքները, որ նստած էր գեա- նին, պատուհանի մօտ, առաջը մի փոքրիկ աթոռ, վրան՝ լիքը թրդ- թերով, նամակներով՝ մեծ մասամբ ծանր թղթի վրայ գրուած եւ ծանր ծրարների մէջ, երեսի գիւրաթեամբ տեղաւորելու համար։ Աչքի էր գործում մի ուրիշ բան. բոլորը համարեա գրուած էին կար- միր մեղանով։ Կոմսը արագ-արագ գրում էր, կարդում, նօթ առնում իր փոքրիկ յաշտատարի մէջ եւ մի քանիսին էլ իսկոյն պատասխա- նում։

«Վարը կանգնած 2-3 պաւանիներ կային, 12-14 տարեկան։ Գրում նամակները որոշ հրահանգներով երկուսը տարան, իսկ մէկը սպասում էր նոր հրահանգի»։

«Առաջին տպաւորութիւնս հրաշալի էր. գործը մեքենայի պէս յարում էր»։

Արամը արտակարգ վարդեա էր մարդկանց մօտենալու, նրանց հետ լեզու գտնելու եւ գործի մղելու արուեստի մէջ։ Կարելի է ա- սել, որ այդ բնդունակութիւնը նրա ներքին կարողութիւնների գարուն էր կազմում, հասարակական կեանքի յաջողութիւնների գլխաւոր բանալին։ Արամի բնաւորութեան այդ գիծը, ինչպէս կր տեսնենք իր տեղում, առանց չափազանցութեան փրկարար վեր կատարեց Երե- տանում՝ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան նախօ- րէին։

Արամի Վան հասած օրը Կոմսը նրան յայտնում է, որ նոյն գի- չեր միջկուսակցական ժողով պիտի լինի եւ ցանկութիւն է յայտնում, որ Արամն էլ մասնակցի այդ ժողովին։

Երեկոյեան գէմ կուսակցական բնկերները հաւաքում են Կոմ- սի մօտ՝ ժողովի գնալու համար։ Կոմսը Արամին ներկայացնում է բնկերներին, «Թորգոմ-Թէոս, Ալէս, Արմենակ — մի սուրբ երրոր- դութիւն, որոնց գեո շատ կր հանդիպեմք։ Սրանք այն ժամանակ կ- կամիտէի բնկերներն էին, երեքն էլ փախստական՝ յեղափոխական գործով։ Գրանք Վանի կազմակերպութեան սիւներն էին՝ անդաւա- նան ու հաւատարիմ»։

Գալիս է Է՛ւ Իշխանը՝ Կառկոտցիներից, Մոկացիներից, Ոգ- մրնցիներից, Շատախցիներից կազմուած իր խմբով։

Միջկուսակցական ժողովի օրակարգի հարցերը վերաբերում էին յեղափոխական կուսակցութիւնների ծրարին եւ կուսակցութիւ- ների գործելակերպին։ Կուսակցութիւններից իրաքանչիւրը պար- զում էր իր տեսակէտը հայ ժողովրդի վիճակի եւ իրենց անելիքները մասին։



Արմենականները «շատ երկար եւ, պէտք է ասել, համոզեցուցիչ կերպով պատճառաբանում էին, որ դեռ ժողովուրդը պատրաստ չէ յեղափոխական գաղափարների համար եւ որ նախ՝ պէտք է ժողովուրդը պատրաստել դպրոցներով, խաղաղ միջոցներով եւ ապա միայն մտածել յեղափոխութեան մասին»:

Դաշնակցականները, ընդհանրապէս դէմ չլինելով խաղաղ մըշակութային հասարակական աշխատանքներին՝ հնարաւորութեան սահմաններում, մատնանշում էին, որ այդ սահմանները օսմանեան բռնապետական պետութեան մէջ աւելի քան խեղճուկ են ու ենթակայ կառավարութեան քմահաճոյքին, եւ որ մի երկրում, ուր չկայ կեանքի, զոյքի, պատուի իրական ապահովութիւն, ուր կոտորածը, ալան-թալանը ու ամէն կարգի դժգոհութիւնները սովորական երեւոյթներ են, մշակութային աշխատանք կատարելու հնարաւորութիւն չկայ դրեթէ: Ինչ վերաբերում է յեղափոխութեան, «մերոնք (դաշնակցականները) պնդում էին, որ յեղափոխութիւնը միայն գիտակցութեան բերելով չի լինի: Կառավարութեան հալածանքները եւ ճնշումները յեղափոխական ըմբոստութեան ոգի են ամբարում անբեւոյժ սեռով ժողովրդի հոգու մէջ: Միայն պէտք է նրան կազմակերպել, ուղղութիւն տալ, հրահրել, որ արքմամայ, զինուորի, վարժուի»:

**

Արամի վան հասնելու օրերին տեղի կուսակցական ղեկավար ընկերների փոխ-յարարերութիւնները լարուած էին: Յատկապէս լաւ չէին Կոմսի եւ Տիգրանի(*) յարարերութիւնները, որի հետեւանքով Տիգրանը չէզոքացուած էր եւ չէր մասնակցում ժողովներին:

Կուսակցական ղեկավար ընկերների նման յարարերութիւնը վատ է աղւղում Արամի վրայ, եւ նա շտապում է իմանալ տարածայնութիւնների պատճառը, մանաւանդ, որ ինքն էլ նոյն մթնոլորտում էր ապրելու: «Վանի մասին արդէն լաւ բան քիչ էի լսել. վախի պէս մի բան կար սրտիս մէջ»:

Կողմերը լսելուց յետոյ եւ ի նկատի ունենալով այն «դժոխային» պայմանները, որոնց մէջ ապրում էին դրսից եկած յեղափոխա-

(*) Տիգրանը՝ Կողբեցի Յարութիւնը՝ Ներսէսեան դպրոցը աւարտելուց յետոյ, վանից անցնում է Մշոյ շրջանը եւ վարդաւ ծածկամուտով աշխատում է Իւրեանի հետ: Նահատակուեց Սասունի վերջին կռիւների ժամանակ:

կան ընկերները, — պայմաններ, որոնց մասին դադարաւոր տալու համար հանդամանօրէն տեղն ու տեղը խօսում է Արամը, — նա դալիս է այն եղբակացութեան, որ որեւէ լուրջ, հիմնական, իր խօսքով՝ «նշանաւոր» պատճառ չկայ, այլ բնաւորութեան խնդիր է՝ պայմանաւորուած փախստականի փակ ու ջղային կեանքով:

Գաւառացիք դանդաղում էին, որ դրսից եկող ղէնքը, ռազմամթերքը, դրամը եւ գործիչների մեծ մասը մնում են քաղաքում, որով՝ գաւառը մոռացութեան է տրուում: Մինչդեռ՝ գաւառին աւելի մեծ դեր է վիճակուած, քան քաղաքին: Քաղաքացիք թէեւ ընդունում էին գաւառի նշանակութիւնն ու արժէքը, բայց գտնում էին, որ դործի ղէկն ու կենտրոնը քաղաքն է, — քաղաքով է, որ գաւառն էլ ուժեղ պիտի լինի:

Գաւառացի ընկերների (որոնց ներկայացուցիչը Իշխանն էր) պահանջը բաւարարելու համար Կ. Կոմիտէն որոշում է՝ ինչ որ արտասահմանից ստացուի երկրի համար, կէսն ուղարկուի գաւառ, լինի այդ ռազմամթերք, դրամ թէ մտաւորական ուժեր:

Բացի այդ, Լեոնապարի(*) համար ստեղծուած է առանձին մարմին, որի անդամներն էին՝ Իշխանը, Վարդան Շահապար եւ Մակունցի Մեսրոպը, որով՝ 1905–1906 թուից Վասպուրականը փաստօրէն ունենում է երկու կենտրոնական Կոմիտէներ՝ Շամի (Վանի) եւ Լեոնապարի:

**

Կոմսը Վանից հեռացաւ 1905ի սկզբին: Այնուհետեւ կուսակցական եւ յարակից գործերի ղեկավարութիւնը ծանրացաւ Արամի վրայ:

Արամը, իբր երկիր մտած նոր մարդ, մի առաւելութիւն ունէր, այն է՝ ծանօթ էր կուսակցութեան Բարձրագոյն Մարմնի տրամադրութիւններին ու վերաբերմունքին դէպի Երկրի պատասխանատու ընկերների գործունէութիւնը, դէպի այդ գործունէութեան բնոյթը, որ տարբերում էր մինչ այդ որդեկրուած գործունէութեան բնոյթից:

Այդ մասին նա մի ընդարձակ զեկուցում է տալիս Շամի (Վանի) Կ. Կոմիտէի նիստում՝ Վան հասնելուց անմիջապէս յետոյ: Խօսելով այդ զեկուցման մասին՝ Կոմսը իր յուշերում համառօտակի

(*) Լեոնապար ծածկամուտն էր այն շրջանի, որի մէջ մտնում էին Շատախը, Մոկսը, Սպարկերտը, Կեցամը, Խիզանը, Կարճկանը եւ Գեաւաշը:

տալիս է նրա բովանդակութիւնը.— «Երկրի մէջ մեր կուսակցութիւնը անաղմուկ պիտի ջանար զինել ժողովուրդը, պիտի կազմակերպէր մարտական ուժեր, վարժեցնէր, պատրաստէր ղեկավարութիւն, ամբողջներ, ազգական կայաններ դառնալու յարմարութիւններ ունեցող վայրերը: Միս կողմից՝ ամէն ջանք պիտի գործ դնէր նախ՝ երկրի հակաքուրճ քրիստոնեայ ժողովուրդը կապելու մեզի եւ ապա՝ գուրբնաց քուրճ, քուրճ դժգոհ եւ բանիւնաց տարրերու գործակցութիւնը ապահովելու» («Իմ Յուշերը», Ա. հատոր, էջ 356):

Արամը տեղեկացնում է ընկերներին Եւ այն մասին, թէ իսլամ յեղափոխական տարրերը մտադիր են վեհաժողով գումարել, որին պիտի մասնակցին նաև քիւրտերի ներկայացուցիչները եւ որի նպատակը պիտի լինի՝ միջազգային յեղափոխական կազմակերպութիւն ստեղծել եւ նախապատրաստական աշխատանքներ կատարել՝ ընդհանուր ապստամբութեան համար, թէ թուրքերն արտասահմանում ունին երկու կազմակերպութիւններ յանձինս ապակենտրոնացման կոմիտէից Սապահեատինի եւ կենտրոնացման կողմնակից Ահմէտ Ռիզայի, երկուսն էլ իրենց մամուլով: Այդպիսով, ուրեմն, այն օրերին միջազգային արամադրութիւններ կային՝ միացեալ կազմակերպուած ուժերով ապստամբել եւ տապալել սուլթանի բռնապետութիւնը:

Արամի ղեկուցման բացատրութեան կարգով պէտք է ասել նաև հետեւեալը, մասնաւորապէս երկրի ժողովուրդը ղինելու մասին:

Երկրի ժողովուրդը ղինելու գործը առաջնակարգ, ամենակարեւոր հարցն է եղել, որ զբաղեցրել է հայ յեղափոխական կազմակերպութիւնները, յատկապէս Հ. Յ. Դաշնակցութիւնը: Երկրում ղէնք ձեռք բերելը կապուած էր անյողթելի գիտարութիւնների հետ, — շատ փտանդաւոր էր եւ ապա՝ շատ թանկ: Այդ պատճառով էլ ժողովրդի ղինման գործը կապուած էր արտասահմանի, յատկապէս Ռուսաստանի հետ, ուր ղէնք ձեռք բերելը անհամեմատ աւելի ղիւրին էր եւ աժան:

Գիտարութիւնները կապուած էին ղինամթերքը երկիր ներմուծելու հետ: Սկզբներում ղինուած խմբերի միջոցով էինք ղէնք մուծում երկիր, որովհետեւ սկզբնական շրջանի համար այդ ձեւը ամենանպատակաշարժարն էր համարուել: Սակայն, երբ թուրք կառավարութիւնը այդ բանը հասկացել էր, այնուհետեւ բազմաթիւ փորձերից յետոյ պարզուել էր, որ այդ ձեւը այլևս աննպատակաշարժար էր, որովհետեւ ղինատար խմբերի մեծագոյն մասը անյաջողութեան էր հանղիպում, կուրի բռնուելով սահմանաղլուխներում

անհամեմատ աւելի ուժեղ թշնամու (պետական գորք, քրդեր) հետ եւ ղարգուելով: Տեղական ժողովուրդն էլ որի համակրանքը խմբերի կողմն էր եւ հնար եղածին շափ օգնում էր նրանց, շարաշարքէն պատժում էր:

Բնական է, որ կուսակցութեան ղեկավարութիւնը պիտի հրաժարուէր ղինատար խմբեր երկիր ուղարկելու միջոցից եւ սրղեղէր ղէնք ու աղմամթերք երկիր ուղարկելու աւելի նպատակաշարժար ձեւ՝ հայնդիւրա շարակաւորների միջոցով:

Արամը իր յուշերում հանղամանօրէն նկարաղլում է ղինամթերքի այդ ձեւի փոխաղլութիւնները, Կոմսի սրամիտ սրակումով՝ ձմեւն եղանակը:

Այսպիսով՝ Արամը երկրում գործելու որոշ ձրաղլր ունէր: Նրան մնում էր ձանթանալ տեղական գործիչներին հետ, ուսումնասիրել տեղական սրայմանները՝ թէ՛ սղղային եւ թէ՛ պետական ղծով եւ իր գործունէութիւնը յարմարաղլնել այդ սրայմաններին:

Թէ՛ Կոմսի եւ թէ՛ Արամի յուշերից երեւում է, որ տեղական կուսակցական ղեկավար ընկերների վերարերմունքը ղէպի նորեկ Արամը սկզբնական շրջանում բարեացակամ ղէր: Նրանք ղժղոհ էին Արամից, որ որոշ ղիրք ղէր բռնել ղէպի Իշխանն ու Տիրբանը, ղէր ղատապարտել նրանց վերարերմունքը ղէպի Կոմսը, այլ խաղաղասէր միջնորղի ղեր էր կատարել՝ տարածայնութիւններին վերջ տալու եւ հարցը հաշտութեամբ վերջացնելու մտահղղութեամբ:

Կոմսի մեկնելուց յետոյ, այդ ղժղոհութիւններն արտայայտուած են այնպիսի անմիտ, Արամի համար վիրաւորական ձեւով, որ նա որոշում է կարուկ միջոցների ղիմել եւ մի անղամ ընղ միշտ վերջ տալ ստեղծուած անրնական ու իրեն համար անհանղուրթելի կացութեան: Հարցը իր ամբողջ մերկութեամբ նա ղնում է տեղական ընկերների ժողովում, բացատրում է ղեկավար ընկերների վարմունքի վնասակարութիւնը կուսակցական գործի համար, ղատապարտում է Ալէսի, Արմենակի եւ միւսների իրեն ղնթարկուելը եւ անմիտ ելլաթները, աւելացնելով, որ նման սրայմաններում ինքը աշխատել ղի կարող եւ սղառնում է քաշուել գործից:

Արամի այդ սղառնաղլիքը ուշթի է բերում «ըմբոստներին» եւ նրանց կողմից թէնսը, որ տեղական ղեկավար ընկերների մէջ ամենակարողն ու ամենահղինակաւորն էր, «երղում-ղատառ» է ղինում՝ հաւատացնելով, որ սղատահաղլր «քիւրիմացուրթիւն է, քէ նման ղէպէ էլ ղի կրկնուի եւ որ ինէր իլ ղլիսով պատասխանատու է»... (Արամ, «Վանում», Ռուրէնի «Հայ յեղափոխականի յիշատակները», հատոր Բ., էջ 111):

**

Հակիրճ տողերով ծանոթանանք նաև Հայ յեղափոխական գործիչների, ուրեմն, նաև Արամի, ապրելակերպի հետ վանում: Այդ մասին շատ մանրամասն տեղեկություններ կան թէ՛ Արամի եւ թէ՛ Վ. Փափազեանի յուշերում:

Յեղափոխական գործիչները վանում չտփաղանց ծանր պայմաններում էին ապրում:

«Որքեւ տան մէջ, սովորաբար, խուլ բակի կամ դէպի այգին նայող մէկ սենեակ միայն կը տրամադրէին մեզի, որքան ալ մեծ ըլլար գինուած խոււրը (սովորաբար ըստ պայմանների պահանջիմ, խոււրը ոչ պակաս, քան 5 հոգի եւ ոչ առաւել, քան 10): Զիջեայ հաստ թուղթով պատուհան մը կ'ունենար սենեակը»:

«Ես չեմ յիշեր, քաղաքի մէջ անցուցած տարիներուս մէջ, որ որքեւ ատեն սովորական մարդու պէս անկողին մտնէի, հագուստներս հանած: Կը պառկէիմ ոչ միայն հագուստներով ու կօշիկներով, այլ մեր փամփուշտակայներով, զէնքերս կամ թելներս գրքկած կամ մեր թովիկը: Թէեւ միշտ գիշերային պահակ ունէիմ, բայց մատուցեան եւ պաշարման վտանգն այնքան անակնկալ կընար լինել, որ մութին մէջ ոչ հագուուելու ժամանակ կը մնար եւ ոչ ալ հրնարաւորութիւն»:

«Պայմանների հարկադրանքի տակ ղեկավարները («պարոնները») կամ բոլորովին առանձին էին ապրում կամ մէկ-երկու գինուորի հետ՝ նոյնաման սենեակում: Այդ «առանձնաշնորհը» գինուորների մէջ դժգոհութեան տեղիք չէր տալիս: Նրանք լաւ գիտէին, որ «պարոնները» ոչ մէկ բանով կը տարբերուէին իրենցմէ՝ ոչ ստացած սնունդով, ոչ հագուստով եւ ոչ ալ ունեւոր տուների մէջ հանգստաւէտ կամ շոյալ կեանք վարելով: Գիտէին, որ շատ անգամ իրենցմէ աւելի գէշ պայմաններու մէջ կ'անցկացնէին, սնունդը կը մտաւայինք եւ ամբողջ գիշերները խոււրքերուս և տեսակցութիւններուս տալով՝ ցերեկն ալ միջոց չէինք ունենար վայրկեան մը գլուխսիս բարձին դնելու: Տասնակներով նամակներ, տեսակցութիւններ, ժողովներ կամ «Իրօշակ»ի թղթակցութիւններ պէտք էր պատրաստել, հեռուէն եկողներու հետ հանդիպումներ ունենալ»... (Վ. Փափազեան, «Իմ Յուշերը, Հատոր Ա., էջ 201-202):

Սովորաբար միեւնոյն տանը մնում էին մէկ զիշեր կամ ցերեկ: Տեղափոխութիւնները կատարւում էին, երբ մութն ընկնում էր, մեծ զգուշութիւններով հետեւելով առաջնորդին: «...Այգիներու հողէ

բարձր պարիսպները կը բարձրանայինք եւ կը թռչէինք միւս կողմը՝ յաճախ ծառերու գարնուելով եւ ցեխոտ առուներու մէջ գլորուելով կամ ցածիկի «ջրի դուռները», եթէ բաց էին, մոզէսի պէս կը սողայինք հետեւեալ այգիք», մինչեւ որ հասնէին այդ օրուայ համար նախապէս նշանակուած տունը, — սովորաբար խոնարհ ու չքաւոր, ուր գրկարաց էին ընդունում «կաղաղներին» (այդպէս էին անուանում յեղափոխական փախստականներին վանում), — մի բան, որ չի կարելի ասել ունեւորների մասին, որոնք, սակայն, արտաքնապէս «քաղաքավարի» էին պահում իրենց:

Արամը նոյնպէս իր յուշերում ընդարձակ տեղ է տալիս յեղափոխական խմբերի առօրեայ կեանքին, իր խօսքով՝ «առտնին կենցաղին»:

Ի միջի այլոց, նա պատմում է, որ պատահում էր, խումբը ամիսների եւ տարիների ընթացքում բազմաթիւ անգամ այցելում էր այնպիսի տուն, որի մեծը՝ հայրը կամ մեծ եղբայրը չէին իմանում: Երեւակայեցէք դրութիւնը. դադտնի պիտի մտնէք, փակուէք որեւէ սենեակի մէջ, ձայն ծպտուն չպիտի հանէք: Եւ այսպէս ժամեր: Երթեւեկել, ի հարկէ, անկարելի էր: Դրացիները չպիտի իմանային, ինչպէս եւ շատ յաճախ նոյն բակի մէջ ապրող ուրիշ տնուորները:

Յուշերի հեղինակները շատ աւելի հանդամանօրէն խօսում են այդ պայմանների մասին, որոնք աննկարագրելի ճնշող տպաւորութիւն են թողնում ընթերցողի վրայ: Կամաւոր, ինքնաբերաբար նրման անօրինակ զրկանքների յանուն մեծ դադափարի ընդունակ են իրենց ենթարկելու միայն արտակարգ ներքին աշխարհի տէր անձինք: Բնորոշ են Արամի մտածումներն այդ մասին. —

«Ես չէի կարողանում հասկանալ այն մեծ գաղտնիքը, այն մեծ ուժը, որ սովորական մարդկանց, շատ անգամ կրթութիւն չունեցողներին, գիւղացիներին, ստիպում էր տարիներ շարունակ անտրտունջ հանդուրժել այս տառապանքներին: Մտաւորականների համար ասում էին իտալիս ու գաղափարականութիւնն է, իսկ միւսներին մընում էր ընդունել հայրենասիրութիւնը, որն ունի եւ գաղտնի, անըմբռնելի ուժ՝ այդքան գոհաբերութիւններ վերցնող: Պատմում էին փորձուած ընկերները, որ մտաւորականների, մանաւանդ դրսից եկած ընկերների օրինակը շատ էր ազդում գինուորների հոգեբանութեան վրայ»:

**

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր էութեամբ ժողովուրդի չքաւոր,

խոնարհ ու միջին տարրերի կուսակցութիւն է, — տարրեր, որոնք մեր ազգի ճնշող մեծամասնութիւնն են կազմում: Սակայն, հանդամանքների բերմամբ, այդ կուսակցութիւնը յաճախ հանդէս է եկել հայ ժողովրդի ամբողջական շահերի պաշտպանողի գերում թէ՛ Անգլիկոսական (հայոց եկեղեցական կալուածները գրաւման եւ հայթիւրքական ընդհարումների ժամանակ) եւ թէ՛ Տաճկաստանում՝ իր վարած պաշարով տիրող բռնապետական կարգերի դէմ՝ յանուն տաճկահայութեան մարդկային տարրական իրաւունքների պաշտպանութեան:

Վանում եւս Հ. Յ. Դաշնակցութիւնը իր հետ կապում է առաջին հերթին խոնարհ տարրերը, որոնց շահերը պաշտպանելով՝ յաճախ դէմ առ դէմ էր դալիս ոչ միայն ունեւոր կամ հարուստ դասի, այլեւ ամէն կարգի հարստահարիչների, կեղեքիչների եւ բախտախնդիրների հետ: Սրանք առիթը բաց չէին թողնում ծանրանալու այս կամ այն ձևով խոնարհների, չքաւորների վրին՝ եւս առաւել ծանրացնելով նրանց անտեսական վիճակը:

Պաշարելով գրանց դէմ ու խտուրէն պատուհասելով չենթարկուողներին՝ Դաշնակցութիւնը, բնականաբար, նրանց լարում էր իր դէմ, որոնք, իրենց հերթին, միջոցների մէջ խտուրթիւն չէին դնում՝ վարկարեկելու համար այդ կուսակցութիւնը: Այդ հանդամանքը շարաշարովէն օգտագործում էին Արմենականները — այն օրերի Ռամկափարները — Դաշնակցութեան հեղինակութիւնը նսեմացնելու նպատակով բուն ժողովրդի աչքում:

«Արմենականները չէին խնայում մեզ որակել ամէն կարգի անկաններով — որ իբր քէ դաշնակցականները բախտախնդիրներ են, Ռուսաստանի, Սիբիրի փախստականներ, ուրագործներ, որոնք ոչ մեր կեանքը կը խնայեն, ոչ մեր պատիւը եւ ոչ մեր ինչքը»:

Դաշնակցականների մասին շրջան էին անում եւ այլ կարգի լուրեր, այն է՝ որ նրանք «մեծ մարդկանց որդիներ են, ազնուական ցեղից. մանաւանդ մեծ կարծիքներ ունէին Ղարաբաղցիների մասին (չգիտեմ՝ ինչի՞ վրայ հիմնուած), հարուստների տղաներին. գաղափարական, կտրին, ցրտից, սովից չեն վախեցում, եւայլն»:

Արամը գիտակցում էր, որ այդ լուրը յարերը, վաս թէ լաւ, անտեղեկութեան արդիւնք էին, ինչպէս եւ աննպատակաբար կերպով կազմակերպած քարոզչութեան, որի համար անհրաժեշտ էր ունենալ պարաստուած մարդիկ՝ մտաւորականներ: Դրսից եկած մտաւորականները, մի երկու հոգի, գործի ընդհանուր ղեկավարութիւնն էին տանում եւ հնարաւորութիւն չունէին լայն կերպով քա-

րոզչութեամբ զբաղուել: Այդ գործը կարող էին անել տեղական մտաւորականները՝ հրահանգ ստանալով ղեկավարներից:

*
**

Այսպիսով, իրերի բնական բերումով, կուսակցութեան ղեկավարները, Արամի նախաձեռնութեամբ, խորհում են իրենց կողմը քաշել վստահելի մտաւորականներին եւ նրանց միջոցով տանել քարոզչութեան գործը: Եւ որովհետեւ այդ մտաւորականները կամ արմենականներ էին, զլիաւորապէս ուսուցչութեան նուիրուած եւ կամ նրանց համակիրներ, ուստի բնականօրէն հարց էր ծագում՝ արմենականներին մտենալու, նրանց համակրանքը վաստկելու եւ կուսակցութեան շարքերն առնելու:

Հասկանալի է, որ Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կազմակերպութիւնը մեծապէս շահած կը լինէր, եթէ յաջողէր արմենական մտաւորականներին կապել իր հետ, քանի որ կազմակերպութեան մէջ մտաւորականների սով էր: Այդ ուղղութեամբ աշխատանքներ կատարուել էին նաեւ կոմսի ժամանակ, երբ արմենականների մի ստուար խումբ, բաղկացած արհեստաւորներից, ինքնակամ յարել էր Դաշնակցութեան՝ յայտնելով, որ ցանկանում էր գործօն կերպով օգտակար լինել հայ ժողովուրդի ազատագրական շարժման, — մի բան, որ հնարաւորութիւն չունէր անելու՝ մնալով արմենականների շարքերում: Մինչդեռ՝ այդ հնարաւորութիւնը տալիս էր Դաշնակցութիւնը:

Արամը անհրաժեշտ էր համարում փորձ անել եւ Դաշնակցութեան մէջ առնել նաեւ արմենական մտաւորականներին, որոնց կարելի էր շատ աւելի մեծ չափով էր զգացում:

Ռուբէնի գալով՝ այդ գործը հեշտանում է. կողմերի յարաբերութիւնները աւելի մտերմական են դառնում, անվստահութիւնը աստիճանաբար չքանում է, եւ Ռուբէնի ջանքերը, վերջապէս, պրասակում են յաջողութեամբ. — «Համագասպը եւ ընկերները յարեցին Դաշնակցութեան միայն՝ մի պայման դնելով, որ գէթ երկուսին՝ Համագասպին եւ Մելոյեանին առնենք կ. կամիտէի մէջ»:

Առաջարկը թէեւ ծանր էր, բայց Արամը եւ Իշխանը տեղական ընկերների հետ որոշում են բնդունել այն՝ «որոշ վերապահութեամբ (բայց նրանց չասելու պայմանով), մի առժամանակ նրանց հետ պահել զինական ձեռնարկից, արտասահմանի յարաբերական գործերից, մինչեւ որ մօտիկից անձամբ կը փորձէինք»: Սակայն, կարճ

ժամանակում համոզում են, որ այդ նախազգուշութիւնը միանգամայն աւելորդ էր. «Որովհետեւ Համագասպի հրեշտակային բնուորութիւնը, յեղափոխական խառնուածքը ամբողջ եզրով գործին նրա իրութիւնը, միւսների ջերմ մասնակցութիւնը յնարացիկ աշխատանքներին, բոլոր վերապահութիւնները ջնջեցին, եւ մեկի, բերեւա առաջին անգամ լիճելով, — վանում ունեցան տեղացիների էն առաջադէմ, էն ծաղիկ ու գիտակից ուժերից կազմուած մի կոմիտէ»:

Այնուհետեւ Համագասպի եւ Մեյրիանի օրինակին հետեւելով, գալիս են դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը մի շարք մտաւորականներ՝ Վարդան Բալզոնեան, Արամ Մաֆրասեան, Արմենակ Փոխարեան, Վահրամ Տէր Պօղոսեան, Յարութիւն Հիւսեան եւ ուրիշներ: Կենտրոնական դպրոցի բարձր կարգի տնօրէնների համակրանքը նոյնպէս թերւում է դէպի Դաշնակցութիւն: Սա, սակայն, ժամանակաւոր երեւոյթ էր: Դաշնակցութիւնն էլ սկսում է իր տեսական եւ գործնական պահանջներով գոհացում չտայ երիտասարդութեան:

«Այս այն սերունդն էր, որից կազմուեց այսպայ վանի «նոր սերունդը», գրում էր Արամը: Այդ «նոր սերունդը» իր էլոյթներով բաւական զիջացաւան է պատճառում իր դաշնակցական ուսուցիչներին: Յետոյ նրանց խելքերը գլուխներն եկան, դարձան վանի հասարակական գործիչները «Հիւրիար»ի ժամանակ»:

Արամը հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Արմենականութեան մասին: Թէեւ հոսանքի գործունեայ, առաջադէմ ու յեղափոխական խառնուածք ունեցող տարրերը աստիճանաբար միանում են Դաշնակցութեան, բայց Արմենականութիւնը այնուհետեւ էլ պահում է իր գոյութիւնը՝ պահելով իր շարքերում պահպանողական ու ասանդութիւններով ազրոյ անդամներին, որոնք յաջողում են իրենց հետ կապել աննշան թուով երիտասարդ տարրեր: Եւ զբրանք են, որ կենդանութիւն են տալիս այդ կուսակցութեան:

Արամի կարծիքով՝ արմենականների գոյութիւնը վանում, իր բացասական կողմերի հետ, ունէր նաեւ դրական կողմ՝ մի տեսակ հաստատակցութիւն ստեղծելով հասարակական գործունէութեան մէջ: Այն պայքարը, որ նրանք մղում էին Դաշնակցութեան դէմ, իր թունտ, անարդար ու սխալ քննադատութիւնների հետ միասին ունէր նաեւ որոշ արդար, իրաւացի կողմեր, որոնք Դաշնակցութիւնը, իրրեւ տիրական ազդեցութիւն ունեցող կուսակցութիւն, չէր կարող ի նկատի չառնել:

Միամտամտակ Արամը ցու է յայտնում, որ «այն ժամանակ



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ
Զախն աջ.— Տիգրան, Իշխան, Համագասպ Բաղէշեան,
Արամ, Սարգիս Բարսեղեան, Մալխաս

հնարաւոր չէր հասարակութեան պահպանողական տարրերի կողմից առաջ քաշել մի աւելի ուժեղ, քէեւ չափաւոր պահանջներով հոսանք» :

Ինչպէս տեսանք, Արամն այն կարծիքն էր, թէ արմենականները մշակուած ինքնուրոյն ծրարիր չունէին, որին անշեղ հետեւէին իրենց գործունէութեան մէջ եւ կապկորէն հետեւում էին Դաշնակցութեան. ինչ որ սա անում էր, նոյնն էլ աշխատում էին անել ներանք, թէեւ քննադատում էին դաշնակցականների արածը :

Օրինակ՝ արմենականները, Դաշնակցութեան գործունէութիւնը համարելով հանդերձ ցուցական եւ երկրի շահերի տեսակէտից վնասակար, իրենք էլ նոյնն էին անում : Նրանք դէմ էին դաշնակցական զինուած խումբերին, որոնք պատճառ էին դառնում ընդհարումների, բայց իրենք էլ էին պահում : Դէմ էին ցոյցերին եւ կռիւներին, բայց ստեղծում էին թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը : Դէմ էին, որ Դաշնակցութիւնը դրսից գործիչներ է մտցնում երկիր, բայց նոյնն էլ անում էին իրենք : Մի խօսքով՝ որտեղ որ երեւում էր Դաշնակցութիւնը, այնտեղ երեւում էին եւ արմենականները. ինչ որ անում էր Դաշնակցութիւնը, նոյնն էլ անում էին արմենականները :

Արամը այդ ամէնը հաստատում է օրինակներով, փաստերով :

Սակայն, երբ կեանքը ստեղծում էր պայմաններ, որոնց հարկադրանքի տակ սլատասխանատու գործ պէտք է կատարուէր, արմենականներն ամէն ղեկավարութիւն եւ սրա հետ կապուած ամէն պատասխանատուութիւն թողնում էին Դաշնակցութեան, որի տրամադրութեան տակ էին դնում նաեւ իրենց բոլոր ուժերը : Իսկ երբ Դաշնակցութիւնը սահմանափակում էր կամ ժամանակաւորապէս դադարեցնում էր իր գործունէութիւնը «Արմենականները ի սպառ մեռնում էին» եւ նորից յարութիւն առնում, երբ Դաշնակցութիւնը վերսկսում էր իր գործունէութիւնը :

Այդպիսով «նրանց կեանք տուողը մեր գոյութիւնն ու գործունէութիւնն էր, իսկ մեր բոլորութիւնը՝ նրանց մահը : Ուրեմն, արմենականների շահը պահանջում էր, որ վանում միշտ ուժեղ եւ կազմակերպուած Դաշնակցութիւն լինէր : Իսկ մեր շահը պահանջում էր, որ չափաւոր եւ կասկածելի տարրերը մեզ մօտ չգային եւ կեանքի ու հասարակական գործունէութեան մէջ, որոշ չափով հաւասարակը՝ ռութիւն մտնէր» :

Արմենականների Դաշնակցութեան յարելով՝ կուսակցական-

կազմակերպչական գործը մասնաւորապէս քաղաքում մեծ թափ ու ծաւալ է ստանում :

Արամը իր «Յուշեր»ում մանրամասն տեղեկութիւններ է տալիս այդ գործերի մասին, — գործեր, որոնց նախաձեռնութիւնն ու վերին հսկողութիւնն առաւելապէս վերապահուած էր իրեն՝ Արամին : Այդ տեղեկութիւնները վերաբերում են ոչ միայն քաղաքին (Վանին), այլե՛ւ դատարին՝ դիւզերին : Եւ որովհետեւ «գիւզերում կազմակերպութիւնն ամէն բան էր», ուստի Արամը իր «Յուշեր»ում աւելի մեծ տեղ է յատկացնում նրա նկարագրութեան : «Ամէն բան» ասելով, Արամն ուզում է ասել, որ գիւզի կազմակերպութիւնը միայն կուսակցական մարմին չէր, որ զբաղուէր միայն կազմակերպական-յեղափոխական խնդիրներով, այլ նա «առաւելապէս հասարակական-հասարակական նպատակների ծառայող մի մարմին էր» :

Այդ նպատակներն էին՝ ազատագրել հայ գիւղը այն անօրինակ ծանր, ուղղակի ճորտային փիճակից, որը, զրկելով հայ գիւղացուն ապրելու տարրական հնարաւորութիւններից, հարկադրում էր նրան թողնել իր ծննդավայրը եւ դիմել պանդխտութեան՝ վերջնականապէս չփճանալու համար :

Դաշնակցութեան վերապահուած էր ընկերային յեղաշրջում առաջ բերել Վասպուրականի դաւաճներում :

Նախ եւ առաջ՝ հարկ էր հայ գիւղացուն ազատել այն ստորկական փիճակից, որով նա քուրդ աղայի «կթան կովն» էր : Քուրդերի տիրապետութեան դէմ Դաշնակցութիւնը պայքար է սկսում Վաղղէնի ժամանակ : Այդ պայքարը իր զագաթնակէտին է հասնում 1907-1908ի սկիզբներին, այսինքն՝ Արամի օրօք ու նրա նախաձեռնութեամբ, երբ քուրդերը Շատախի մէջ զինուած ուժով փորձում են պահանջել իրենց «կապալները» եւ հանդիպում զինուած դիմադրութեան հայերի կողմից :

Այդ պայքարը հեշտութեամբ չէր, որ պսակուեց յաջողութեամբ : Նա խլաց գոհեր, աւերուեցին գիւղեր, բանտարկուեցին շատերը : Այդ ամէնը զուր չանցաւ, սակայն, որովհետեւ գիւղացին ազատագրուեց քուրդ աղայի ձեռքից :

Հետաքրքրական է, որ հայ գիւղի օրինակը վարակիչ եղաւ նաեւ այն քուրդերի համար, որոնք կապուած էին հողի հետ : Նրանք եւս սկսեցին բմբուստանալ տղաների սպորինի պահանջների դէմ եւ այդ պայքարի մէջ յաճախ դիմեցին Դաշնակցութեան օգնութեան :

Հայ գիւղը ենթակայ էր ոչ միայն քուրդ աղայի այլեւայլ շատակութիւններին, այլ ե՛ւ «քուրք պաշտօնեաների, հարկահա-

ւաճների, ժամապալի եւ այլ մուք տարրերի կեղեքումներին ու փրահաճոյքներին» : Եթէ ամբողջովին անհնարին էր հայ գիւղացուն ազատել այդ չարիքից, գէթ հասարակ էր այն հասցնել նուազագոյն չափերի : Այդ նպատակով հայ գիւղում ստեղծուած է մի գրութիւն, որը մեծ չափով չեզոքացնում է յիշեալ պաշտօնական եւ ոչ-պաշտօնական տարրերի մնասակար սպրեցութիւնը հայ գիւղի վրայ : Հայ գիւղերում ստեղծուած են ժողովրդական դատարաններ՝ կազմուած շիտակ, բարեխիղճ ու ձեռնհաս մարդկանցից : «Կատական մարմինները, տեղական սովորութիւնների համաձայն, հաշտարար ձեռով փոխադարձ համաձայնութիւն էին գոյացնում երկու կողմերի միջեւ : Երբ այդ անկարելի էր լինում, վնիւ էին կայացնում եւ յանձնում գիւղի կոմիտէին, իսկ երբ սա էլ չէր կարողանում իրագործել, դիմում էին շրջանային կոմիտէին, եւ այսպէս դէպի վեր, մինչեւ գործը կը հասնէր Կ. կոմիտէին» : Արամը վկայում է, որ «շատ քիչ դատական խնդիրներ էականում էին մեզ եւ եղածներն էլ շատ խոշոր էին» :

Այդպիսով գիւղական մէծ, տարածայնութիւն վերցնող բոլոր հարցերը լուծուած էին սեղի վրայ, ձրխարար, ատանց ժամանակ կորսնցնելու : Պատիժներն էին՝ ձեռ, սուղանք, մնասի հատուցում, դատարից կամ նահանգից արտը :

Գիւղի կազմակերպութեան վրայ պարտականութիւն է դրուում՝ գիւղում բանալ գպրոց եւ հոգայ նրա դոյութեան յարատեւութիւնը : «Եթէ չի կարելի ասել «պարտադիր ուսում», բայց անպայման կարելի է պնդել, որ վասպուրականում ե՛ւ Մուշում եղել է «պարտադիր դպրոց ունենալու սովորութիւն եւ կարգադրութիւն», դրում է Արամը՝ աւերացնելով. «Փոստեր կան, որ բռնակալութեան ժամանակ գիւղերում աւելի մեծ թուով դպրոցներ են եղել, քան ազատութեան օրերին» : Ապա բացատրում է երևույթի պատճառը :

Չգտում կար գպրոցներին կից անենալ դադանի դրողարան, ատանայ յրապիրներ : Գիւղական կազմակերպութիւնը պարտականութիւն ունէր հոգայու գիւղի չքուոր, աշխատաւոր ձեռք չունեցող, որբեւայրի բնտանիքի սէպերը : Դրանց համար գուրբարայով ցանք էին անում, հաւաքում, կամ կայոցի հանդանակութիւն անում :

Գիւղի ինքնապաշտպանութիւնը կազմում էր գիւղական կազմակերպութեան գլխաւոր պարտականութիւնը : Թէ՛ ինքնապաշտպանութեան եւ թէ՛ գպրոցի պահանջած ծախքերը ծածկուած էին գլխաւորապէս համայնական միջոցներով : Գիւղի եկեղեցու կամ շրջանի վանքի արտերը համայնօրէն ցանում, հաւաքում էին եւ արդիւնքը

յատկացնում գէնքի կամ դպրոցին: Բոլոր գիւղերում կազմակերպուած էին նման աշխատանքներ:

Գիւղական կազմակերպութիւնների պարտականութեան մէջ էր մտնում նաեւ պայքարիլ գողութեան, «գիանի» (իրար վնասելու սովորութեան), ծեծի, թալֆայական կոխների, վաշխառութեան դէմ: Արգիլուած էին օղիի վաճառքը, թղթախաղը եւ այլ սովորութիւնները:

Դաշնակցութիւնը քաղաքում էլ, բացի զուտ կազմակերպչական յեղափոխական գործերից, զբաղուած էր նաեւ մշակութային եւ հասարակական բնոյթ կրող հարցերով:

Քաղաքում եւս Դաշնակցութիւնը ձգտում էր հնարաւորութեան սահմաններում շեղագացել իշխանութեան միջամտութիւնը հայերի փոխարարներութիւնների մէջ: Պետական դատարանին դիմելը արգիլուած էր: Դատերը կատարուում էին միջնորդ ատեանների միջոցով: Կողմերը վստահելի մարդիկ էին ընտրուում, որոնք կազմակերպութեան հսկողութեան տակ քննում էին գործերը եւ դատաւճիռ հանում՝ կողմերի համար պարտադիր: Կազմակերպութիւնը միջամտում էր, երբ կողմերից մէկը չէր ենթարկուում:

Քաղաքում արգիլուած էր ամէն կարգի վատ սովորութիւն ու շարապործութիւն՝ գողութիւն, թղթախաղ, արբեցողութիւն եւ այլն:

Դաշնակցութեան հեղինակութեան եւ ազդեցութեան մասին զաղափար է տալիս այն յայտարարութիւնը՝ «Հրաման» վերտառութեամբ, որ նա արել է 1906ին հետեւեալ բովանդակութեամբ.—

- 1.— Արգելուում է զիչերով թուրքերի մօտ գալ-գնալը:
- 2.— Ոստիւ արգելուում է խմել եւ թաղերի մէջ օղի ծախել:
- 3.— Արգելուում է թղթախաղը:
- 4.— Ոխտ պատասխանատուութեան պիտի ենթարկուին նրանք, որոնք թուրքերի մօտ հայ կիներ են տանում անբարոյակաճութեան նպատակով:
- 5.— Պատասխանատուութեան պիտի ենթարկուին կեղծ դրամ կտրողները:
- 6.— Արգելուում է վաշխառուական տոկոսներով դրամի շահագործումը:

Արամը պտտում է, որ այդ թռուցիկը ժամանակին շատերին զարմանք էր պատճառել: «Առարկում էին, որ կառավարութեան իրաւունքներ ենք վերցրել մեզ վրայ: Չէին կարող հասկանալ, որ մեր

անլեգալ կազմակերպութիւնը կարող էր տրուած առաջարկները գործադրել»: Նման առարկութիւններ անողներին պատասխանելու կարգով Արամը գրում է.

«Եւ պէտք է խոստովանել, որ առեւտրային նման բոլոր կարգադրութիւնները իրագործուում էին, շնորհիւ մեր ազդեցութեան եւ գործադրած ստիպողական միջոցներին: Մի երկու խիստ պատիժներ օրինակ էին դառնում, որ ուրիշները զսպուին մի առ ժամանակ: Պէտք է ասել, որ այս օրինակներից շատերը, ինչպէս եւ դատական գործառնութիւնները մնացին եւ «Հիւրիաթ»ի ժամանակ, մանաւանդ զաւանդներում: Միաժամանակ առակ էր դարձել եւ ասում էին.

«Կառավարական դատարանները գործ չունին. բոլոր դատերը հայերը իրենք իրենց մէջ են տանում»:

**

Արամը իր յուշերում հանգամանորէն խօսում է աղգային-քաղաքական խռովների եւ նրանց իրագործելու մասին նախ քան իր Երկիր մասնակց եւ իր Երկիր մասնակց յետոյ, երբ զլիսաւոր զերակատարն ինքն էր:

Նկատուում է, որ կուսակցութեան աղգային-քաղաքական խռովները օրը օրին չեն փոխուում եւ իր խօսքը լինելու է «մամեմտի մասին կամ աւելի ուրիշ» որոշ մամեմտում ի՛նչ պլատֆորմ իրագործելու մասին»:

Հ. Յ. Դաշնակցութեան հրապարակ զալուց եւ այնուհետեւ երկար ժամանակ «Հայաստանի անկախութեան» մասին հարց չկար դրուած: Երկրի հայ ժողովրդի վիճակի բարելաւումը կապուում էր բարեմտորոգումների հետ — Մակեդոնիայի ձեւով՝ Եւրոպայի քննիչների հովանաւորութեան տակ, այլ խօսքով՝ Մայիսեան ծրագրի իրագործումը մի քանի սրբազրութիւններով: Ու պէտք է ասել, մեր յեղափոխական պայքարի երկար եւ դժուարին ճանապարհին, մենք առժամեայ, նուազագոյն իրագործելի ուրիշ հարցեր էլ չենք դրել. փոփոխութիւնները միշտ մտցրել ենք միայն տակտիկի մէջ:

Բարենորոգումների ծրագրերը իրագործելու համար՝ սկզբնական շրջանում նպատակայարմար են համարուել հետեւեալ միջոցները՝ զինական ապստամբութիւնը, ցոյցը, ահաբեկումը եւ դիւանագիտական աշխատանքը: 1890ական թուականներից մինչեւ մեր դարակիրը կատարուած ձեռնարկները (90ական թուերի փայլուն դէպքերը, 90ական թուականների ձեռնարկները, Սասունի ապստամբու-

Քիւնը, սուլթանի մահաօրոճը և այլն» 1905-1906 թուականներին աչկես անբարար էին համարում ստաջագրում հարցի յաժման համար:

Այդ ձեռնարկների անյաջողութիւնը բացատրուել է մեծ մասամբ գիտական և գրամական հնարասրութիւնների պակասով, որով անհնարին էր ձեռնարկը տեսական և ազդեցիկ դարձնել: Օրինակ՝ կարծում է, որ «երկ. Սասունի ապստամբութիւնը, փոխանակ մի երկու շարքի, տեւր մի բանի ամիսներ, միջամտութիւնը (մեծ պետութիւններ) անխուսափելի կը լինէր»:

Մասնակի ձեռնարկները ևս աննպատակաշարժար են համարուել: «Մի Սասուն, մի Զէյթուն, մի Պոլիս գառ-գառ պիտի չշարժուէին, այլ բոլոր կարենոր վայրերը պիտի կազմակերպուէին, ուժերը կենտրոնացնէին և ստեղծէին մի հսկայ գանգուածային շարժում երկրի մէկ ծայրից միւսը:

«Հնարասրութեան մասին էիջ էր մտածում: Կարծում էին, որ երկ լինէին միջոցներ և երկիրը մտնելու, ժողովուրդը կազմակերպելու պատրաստ անձնագոհ և փորձում գործիչներ, գործը կը դիւրանար»:

Այդ ամէնը սխալ դուրս եկաւ: Կուսակցութիւնը, վերագնահատելով իր գործունէութիւնը երկրում, սրբազրում է այն այս ձևով:

«1. — Կազմակերպութիւնից կախում բոլոր միջոցներով դիմել անկախ, մասնակի ձեռնարկներն ու ժայթքումները վերջացնելու:

2. — Կարենոր զինուորական ուժերը, որոնց ներկայութիւնը կարող է գրգռել կառավարութիւնը և վիժման պատճառ դառնալ, նախապատրաստական շրջանին երկրից դուրս հանել:

3. — Մեծ քանակութեամբ զինուած փախստական խմբեր չպահել:

4. — Զինուած խմբերը փոխարինել զինուած Յողովրդով, որ ամէն գէնէի շնչունակ կազմակերպում բնկեր գէնէ ունենայ, նստի իր տանը, իր գործին՝ պէտք եղած ժամանակ գործի գլուխ անցնելու համար:

5. — Աշխատել արտասահմանից բերելիք գէնէքը փոխարինել տեղին վրայ գէնէ գնելու գիւրութիւններ ստեղծելով:

6. — Ժողովուրդը զինել իր սեփական միջոցներով, որովհետեւ նրա գէնէք իրենք չէ. մարդ առանձին հոգ չի տանում խնամելու կամ պաշտպանելու համար այն:

7. — Սահմանազրի արշաւանները էիջ են օգտակար ևս նոյնիսկ երբեմն վնաս բերող»:

Այդ միջոցները գործողելով սրտարաստ լինելուց յետոյ, պէտք էր սպասել յարմար առիթի՝ ընդհանուր շարժում սկսելու համար:

Իսկ յարմար առիթներ համարում էին. —

1. — Թուրքիոյ սրեւէ մէկի հետ պատերազմի մտնելը:

2. — Տաղնապը:

3. — Միւս ազգերի շարժումների գույազիպութիւնը, և այլն:

Այդ ծրագիրը տեղական փորձում բնկերները Արամի գլխատորութեամբ մշակում են՝ իրենց ազգայն գործունէութեան համար: Յիշեցնենք, որ Արամը, նախ քան երկիր մտնելը, ընդհանուր դժբով տեղեակ էր կուսակցութեան վերին մարմնի նոյնիմաստ սրուշումներին:

Վերը բերուած ծրագրի մասին իր յուշերում պատմելուց յետոյ, Արամը աւելացնում է.

«Այս ծրագրով էլ ձեռք գարկիմ աշխատանքի վասպուրականի շրջանում»:

Իսկ այդ աշխատանքների յաջողութեան մասին վկայում են այն տիրական հեղինակութիւնն ու ազդեցութիւնը, որոնց Արամը տիրացաւ Վանում ևս որոնց մասին հիացմունքով Պարզայում պատմում էր ինձ տարարախտ Օննիկ Մխիթարեանը, «Վանի հերոսամարտի» հեղինակը:

**

1906ին Վան ևս գալիս Սարգիսը և Մայիսարը: Այդ առթիւ շրջանում Լոյաճ Կ. Կոմիտէի անդամներին (Տիգրանին, Իշխանին, Վարդան Շահապաղին) կանչում են քաղաք՝ յսելու համար նոր եկող ընկերներին:

Սարգիսը (Պողոտ Օղարաշեան), Հ. Յ. Գաշնակցութեան փայլուն ղեկավարից մէկն էր, Արամի բնորոշումով՝ մեր կուսակցութեան շքնաղ ծաղիկներից մէկը, որի մասին Արամը մանրամասն տեղեկութիւններ է տալիս իր յուշերում:

Սարգիսը մի ընդարձակ զեկուցում է տալիս հայ-թրքական

ընդհարումների, ռուսական յեղափոխութեան, Հ. Յ. Դաշնակցութեան Խորհրդի հրատարակած նախազօրի Կովկասեան գործունէութեան համար, Միհրանական եւ անջատական շարժումների մասին, ինչպէս նաեւ կուսակցութեան ղեկավարութեան վերաբերմունքի մասին գէպի այդ շարժումները: Նա յայտնում է, որ այդ բոլոր խընդիրները խորհրդակցութեան նիւթ պիտի լինեն Ընդհանուր ժողովում, որը չուտով հրաւիրուելու է եւ որին պիտի մասնակցին երկրի՝ Վասպուրականի եւ Մուշի՝ կարեւոր ընկերները:

Սարգսի գեկուցումը լսելուց յետոյ, որոշում է, որ Արամը եւ Իշխանը մեկնեն արտասահման Ընդհանուր ժողովին մասնակցելու համար:

Սարգսի առաջարկութեամբ եւ Տիգրանի, Իշխանի եւ միւսների համաձայնութեամբ, որոշում է Վ. Փափազեանին նորից ներս հրաւիրել՝ Արամի բացակայութեան ժամանակ նրան փոխարինելու համար: Սարգիսը յայտնում է, որ ինքը Վ. Փափազեանից խոստում է առել Վան վերադառնալու խմաստով:

Կոմսը ներս հրաւիրելու որոշումը նպատակայարմար էր եւ այն պատճառով, որ Ընդհանուր ժողով գնացողները մեծ մասամբ տեղ չեն հասնում՝ ընկնելով սահմանադիւրի կռիւներում եւ նրանցից քիչերին էր յաջողում երկիր վերադառնալ. իսկ ահադին գործը թողնել նորեկ ընկերների վրայ անկարելի էր:

Իշխանին Լեռնապարում նրա բացակայութեան ժամանակ պիտի փոխարինէր Սարգիսը:

Այս որոշումները տալով՝ տղաները ցրում են իրենց շրջանները: Նրանք նորից իջնում են քաղաք աշնանը (1906)՝ Արամին եւ Իշխանին ճանապարհ պցելու համար: Նախ՝ խորհրդակցում են Ընդհանուր ժողովին տրուելիք հրահանգների մասին. մշակում են րանաձեւեր, պատրաստում են նիւթեր զրաւոր գեկուցման համար, որ պիտի կազմէր Արամը: Որոշում են նաեւ, որ Արամը 2-3 ամիս մնայ թողէի վանքում՝ այնտեղ կուտակուած ռազմամթերքը ներս ճամբելու համար, իսկ Իշխանը անցնի Կովկաս եւ այնտեղի ռազմամթերքը վանք ճամբի:

Այդպիսով, ամէն բան կարգադրելուց յետոյ, պատգամաւորները պատրաստուում են մեկնել:

Վան-թաղէի վանք 22-24 ժամ տեւող ճամբան նրանք այս անգամ, բարերախտարար, անցնում են յաջողութեամբ: Վանք հասնելու միւս օրը Իշխանը շարունակում է ճանապարհը, իսկ Արամը մընում է վանքում՝ այնտեղ կուտակուած ռազմամթերքը երկիր փո-

խաղրելու համար: Այդ գործին համար աշունը ամենայարմար ժամանակն էր, զի ընկերները երկար, լեռները դատարկ, ուրեմն՝ ճամբան սպասով:

Ուշ աշնան վանք է գալիս Կոմսը, որին սպասում էր Արամը: Նրան եւս ներս ճամբելով՝ Դեկտեմբերին (1906) ինքն ուղեւորում է գէպի Կովկաս: Այստեղ վերջանում են Արամի յուշերը:

**

Վիեննայի Ընդհանուր ժողովը, որին, ինչպէս տեսանք, զնացել էր մասնակցելու նաեւ Արամը իրրեւ Վասպուրականի պատգամաւոր, զբաղուելու էր մի շարք կարեւոր ու պատասխանատու հարցերով, «որոնց մէջ առանձնապէս ծանրակշիռ էին յեղափոխական ձեռնարկները երկրում, Սուլթանի անյաջող մահափորձի քննութիւնը, հայ-քաքարական կռիւների հետ կապուած խնդիրները, անջատական շարժումը, Պարսկաստանի յեղափոխութեան մասնակցութիւնը եւ ընկերվարութեան հարցը, որ սպառնում էր պայքեցնել կուսակցութիւնը եւ Ընդհանուր ժողովը (Ս. Վրացեան, «Կիտանքի Ուղիներով», Բ. Հատոր, էջ 89): Այդ պատճառով էլ ժողովի «յուզումնայի աշխատանքները» տեւում են շատ երկար, մօտ չորս ամիս:

Պատասխանելով իմ դիմումին՝ Արամի կատարած դերի մասին այդ ժողովում՝ Ս. Վրացեանը Նոյեմբեր 6, 1962ի իր նամակում գրում է.

«Վիեննայի Ընդհանուր ժողովում Արամը կենտրոնական դեր կատարող ընկերների շրջանում էր, աւելի մտերիւմ մեծերի հետ: Մեզ «ձախեքիս» հետ թունդ սոցիալիստ էր, բայց մեզ կոչում էր «խոխեք» եւ, ի հարկէ, եթէ պէտք լինէր, խաչ կը քաշէր սոցիալիզմի էլ, մեր էլ վրայ: Ռոստոմի, բժ. Ջաւարեանի տիպի դաշնակցական էր: Սոցիալիստ, այո՛, բայց ամէնից առաջ՝ հայ:

«Ժողովներում յանախ էր խօսում. կեանքից եւ իրականութիւնից էր խօսում: Բոլոր պատգամաւորների հետ լաւ էր, բայց, ինչպէս ասացի, մտերիւմ էր երեսում «վերին խաւերի» հետ՝ վարանդեան, Ախարոնեան, Ակնունի եւայլն: Առանձին հոգատարութիւն էր ցոյց տալիս դէպի Սուլթանի մահափորձի հերոս Ռուբինան»:

Ընդհանուր ժողովից Արամը Վան վերադարձաւ. 1907ի դարնան: Վերադարձաւ նաեւ Իշխանը:

«Այս երկու ղեկավարներու ապահով վան հասնելը մեծ շարժում եւ ոգեւորութիւն ստեղծեց շարքերում մէջ», գրում է Վ. Փափազեանը («Իմ Յուշերը», Հատոր Ա., էջ 501):

Արամը և Իշխանը Ընդհանուր ժողովի անցուղարձի մասին ղեկուցում են սալիս, որից տեղական ընկերները ծանօթանում են երկրի վերաբերող որոշումների հետ։

«Որոշում էին ապստամբութեան վայրերը, կազմում էր երկրի Պատասխանատու Մարմին, յատկացում էր պիտու է և Լեռնապարը առանձին կենտրոնական կոմիտեություն վերածում։

Պատգամաւորները պատմում են Փարիզում տեղի ունեցած միջազգային խորհրդածոյովի («Թուրքիոյ դժգոհ տարրերու կոնգրէ») մասին, որին մասնակցել էին «Իրքիհատ վէ Թերաքք», «Ատամը Մերկեգէթ» (ապակենտրոնացում), Հ. Յ. Գաշնակցութիւնը, Բուրդերի, հրէական, արաբական, քրքական և հայկական բերքերի ներկայացուցիչները։ Միջազգային այդ խորհրդածոյովի լուրը տարածուել էր Թուրքիոյ բնակչութեան մէջ և կազմակերպուելու տրամադրութիւն առաջ բերել «Բիշ-շատ ազատամիտ» տրամադրութիւն ունեցող տարրերի մէջ։ Եւ որովհետեւ այդ տարրերի ներկայացուցիչները գիտէին, որ շրջանի միակ յեղափոխական ազդեցիկ կուսակցութիւնը Հ. Յ. Գաշնակցութիւնն է, ուստի նրանք յաճախ դիմումներ էին անում այդ կուսակցութեան ղեկավարներին՝ խորհուրդներ, ցուցումներ, քեյադրութիւններ ստանալու համար։

Ընդդիմադիր տարրերի մօտեցումը և միասնական գործունեութեան ծրագիրը թէ՛ երկրի սահմաններից դուրս և թէ՛ մանաւանդ երկրում աննշմար չէին մնում թուրք կառավարութեան կողմից։ Եւ նա դիմում է գործնական ֆայլերի՝ կտրուկ միջոցներ ձեռք առնելով, «կանխելու համար թուրք, ֆուրտ, հայ մերձեցումը և միատեղ գործող շարժումները»։ Ու կարինից և Տիգրանակերտից մեծ քանակութեամբ դիմուորական ուժեր են տեղափոխուում վան։

Այդ ամէնը ենթադրել էր սալիս Հ. Յ. Գաշնակցութեան ղեկավարներին, որ «կառավարութիւնը պիտի ուզէր մախ վանը հարուածել, ֆանդել «յեղափոխական օմախը», ապա լեռնային կենտրոնները»։

Ուրեմն, պէտք էր պատրաստ լինել վերահաս վտանդի զէմ։ Բնականաբար, կոմիտէն ինքնապաշտպանութեան համար նախապատրաստական միջոցների է ձեռնարկում։ — կազմում է քաղաքի զինուորական յատակադիժը, ճշդում է պահեստների վայրերը, պաշտպանութեան կէտերը, ռազմամթերքի քանակը, հաշուի է առնում տրամադրութեան տակ եղած ուժերը, որոնք պիտի տեղաւորուէին դիրքերում։

Այդպիսով՝ կողմերը պատրաստուում էին, որպէսզի անակնկա-

լի չլային։ Կառավարութիւնը կարծում էր, թէ ընդհանուր սպարտամբութիւն է ծրագրում յեղափոխականների կողմից, մինչդեռ սրանց պատրաստութիւնները նպատակ ունէին ինքնապաշտպանութիւնը։

Այդ բոլոր աշխատանքները կատարում էին Արամը ղեկավար մասնակցութեամբ։

Դժբախտաբար, հէնց այդ օրերին նորից կրկնում են Արամի հիւանդութիւնները — յօղացար և աչքացար։ Առաջին անգամ նա այդ հիւանդութիւններով տառապել էր 1906ի սկզբին։

Կառավարութիւնն, իմանալով Արամի հիւանդութեան մասին, հետապնդումները սաստկացնում է՝ նրան ձեռք ձգելու համար։ Դրա զէմն առնելու նպատակով՝ ընկերները «ամէն օր առաւօտ և երեկոյեան պիտի տեղափոխուէին (նրան) մի տնից միւսը, շատ անգամ մի քաղից միւս հեռուոր քաղը»։ Եւ որովհետեւ Արամը քայլէ անկարող էր, ուստի ընկերները շարակում էին նրան։

Այդ վիճակում՝ «Շատ-շատ ֆնշում էր Արամը՝ կարծելով քէ բեռ է ընկերներուն, բայց մեր գուրգուրանքը և ջերմութիւնը կը մեղմացնէին հարկաւ իր ցաւերը, մանաւանդ կը պահպանէին անոր կարգը և ինքնավստահութիւնը» (Վ. Փափազեան, «Իմ Յուշերը», հատոր Ա., էջ 506)։

Հայերի և իշխանութեան յարաբերութիւններն են լարուում Դաւոյի անօրինակ դատաճանութեան հետեւանքով։ Երկու խօսքով այդ խայտառակ զէպքի պատմութիւնն այս է։ —

Դաւօն, երիտասարդ և վստահելի կուսակցական, տեղեակ զինական պահեստներին, մտերմական կապ է ունենում կուսակցական մի ընկերոջ քրոջ հետ, որը յղիանում է և խոստովանում, որ Դաւոյից է։ Աղջկայ եզրայրը, այդ մասին իմացնելով կուսակցական պատասխանատու ընկերներից մէկին, սպառնում է սպաննել Դաւոյին, և թէ կուսակցական ճանապարհով միջոց չլայնուի այդ արատը վերացնելու իր տնից։

Կուսակցութեան անունից Դաւօն կանչում է պատասխանատուութեան՝ կամ անմիջապէս ամուսնանալ կամ մահուան դատապարտուել։

Մինչ այդ՝ Դաւօն հանդստացրել էր աղջկան, խոստանալով տատմէր դտնել։ Տատմէրը պահանջել էր մեծ գումար։ Դաւօն դիմում է Արամին և խնդրում յիսուն օսմանեան ոսկի՝ իբր թէ բանմում է Արամին և խնդրում յիսուն օսմանեան ոսկի՝ իբր թէ բանմում է Արամին և խնդրում յիսուն օսմանեան ոսկի (հայրը, իրօք, ինչ որ յանցանքի տարկուած հօրը ազատելու համար (հայրը, իրօք, ինչ որ յանցանքի համար բանտարկուած էր)։ Արամը, անտեղեակ Դաւոյի ստոր պատ-

մութեան, մերժում է դրամ տալ, բայց միաժամանակ հանգստացնում է նրան՝ խոստանալով այլ միջոցով ազատել Դաւոյի բանտարկուած հօրը:

Արամի մերժումով Դաւոյի ծրարիրը ջուրն է ընկնում, որով՝ նա ասելու թեամբ է լցուած դէպի Արամը: Իր յանցանքը խարուած աղջկայ դէմ քողարկելու նպատակով, նա բամբասում է նաև ուրիշներին, որոնք, իրր թէ եղել են աղջկայ մօտ, ակնարկելով նաև Արամին, առանց սակայն, անունը տալու: Նոյնը նաև կուսակցական քննութեան ժամանակ: Սակայն երբ վերջնականապէս համոզուած է, որ զրպարտութեամբ օձիքը անկարող է ազատել եւ աղջկայ հետ չամուսնանալու դէպքը իրեն մահ է սպառնում եւ, չկամենալով ամուսնանալ, նա փրկութիւն է փնտռում թուրք կառավարութեան մօտ՝ մատնութեան դնով:

Վ. Փափաղեանի վկայութեամբ, մի երկու օրուան ընթացքում «դաւաճանը յաջողում է ձեռք դնել մօտ 10 կարեւոր պահեստներու վրայ»: Նոյն վկայութեամբ՝ «կարն միջոցէն ոչ միայն մեր տղաները, այլև Այգեստանի կանայք եւ երեխաները քափուած էին դուրս եւ, այգիներու մամբաներով, բեռնաւորուած՝ մեր հին պահեստները կը փոխադրէին դէպի ժամանակաւոր ապահով տեղեր, փրկելու համար կորուստից, ինչ որ հնարաւոր էր: Ժողովուրդի մամն վերաբերմունքի շնորհիւ, 30է աւելի պահեստներ փոխադրուեցան զանազան վայրեր՝ ժողովրդի ձեռքով»:

Ընդհանուր պահանջ էր, որքան կարելի է շուտ, սատկեցնել դաւաճանը: Այդ կապակցութեամբ բերենք մի էջ այդ ցաւալի պատմութիւնից, որը վկայում է, թէ ի՞նչ վճռականութիւն կար՝ ամէն դնով դադարեցնելու պահեստների գրաւումը:

«Հետեւեալ օրը վաշտ մը զինուորներ բազմաթիւ բեռնատար սայլերով կը մօտենային Սահակ Պէյաճեան տունին: Գիտէիմք, որ Դաւոն դէպի այդ շատ կարեւոր պահեստը պիտի առաջնորդէր զօրքը եւ ցոյց տար տեղը: Մենք ամենէն ընտիր խումբը տեղաւորած էինք վերի յարկը. վարը՝ մեծ պահեստն էր: Որոշած էինք հոս սատկեցնել դաւաճանին եւ զօրեղ հարուած մը տալ զօրքին՝ դադարեցնելու համար պահեստներու գրաւումը. առիթէն օգտուելով, երբ դուրս ելլէին տունէն, համազարկ տալ զօրքին մէջ, քանի որ Դաւոն ալ անոնց մէջ պիտի լինէր...»

«Սպասեցիմք, երբ պահեստը բացին: Զկասկածեցանք թէ մենք վերի յարկն էինք: Երբ արդէն սայլերը բեռնաւորուած էին եւ խուզարկողները դուրս ելան շրջապատելու ռազմամթերքը, յանկարծ վե-

րի պատուհանէն ռումբ մը նետուեցաւ անոնց մէջ: Պայթիւնը զօրեղ էր եւ բզկտուած դիակներու կտորներ օդը ելան: Կը կարծէիմք, թէ Դաւոն անոնց մէջ էր: Վերէն ու վարէն սրտացին մեր հրացանները: Խուճապ ինկաւ զօրքին մէջ: Բայց փախուստի մամբան կտրուած էր ետեւէն եւ առջեւէն: Ճիշդ այդ վայրկեանին նոր ու աւելի զարհուրելի պայթիւն մը ցնցեց ամբողջ թաղը: Մեր հրացաններու զրնդակները պայթեցուցած էին 4-5 թիթեղներու մէջ եղած ուժանակը: Օգտուելով առիթէն՝ մերիները անմիջապէս դուրս քուսն, չոքեցին փողոցին մէջ եւ անխնայ գնդակահարեցին փախուստի դիմող զինուորները: Բազմաթիւ բզկտուած դիակներ փռուեցան սայլերուն շուրջ եւ փողոցի երկայնքին... Բայց Դաւոն չկար անոնց մէջ: Առաջին իսկ համազարկին՝ ան ինքզինքն նետած էր դիմացի կողմը եւ, ցատկելով պատէն, այգիներով մոզոպրած էր»: (Վ. Փափաղեան, «Իմ Յուշերը» Ա. հտր., էջ 515-516):

Այդ դէպքից յետոյ, կուսակցութեան ղեկավարութիւնը կարծում էր, թէ թուրք զօրքը հետեւեալ առաւօտը ընդհանուր յարձակման պիտի դիմէր: Նոյն կարծիքէն էին եւ քաղաքի հասարակական դէմքերը՝ անխտիր: Ուստի բոլորը պատրաստուած են դիմադրութեան:

«Դաշնակցական շարքերը, արմենական, հնչակեան եւ չեզոք մարտական տարրերը եղբայրացած էին եւ գրաւած բոլոր դիրքերը»:

Բայց սպասուած յարձակումը տեղի չունեցաւ: Պարզուեց, որ կառավարութիւնը այդ ժամանակ վանում բաւականաչափ զօրք չունէր՝ նման քայլ առնելու համար:

Թուրք բարեկամները տեղեկացնում են, որ վանում սպասում են նոր զօրքի դաշուն: Եւ, իրօք, մի քանի օր յետոյ մեծաքանակ զօրք է հասնում վան, որից յետոյ սկսւում են խուզարկութիւններ, խմբական ձերբակալութիւններ: Քաղաքը պաշարուած է, տանիքների վրայ պահապաններ են դրւում: Իշխանութիւնը յայտարարում է, որ խստութիւնները ուղղուած են դրսից եկած ֆետայիների եւ ոչ թէ քաղաքացիների դէմ: Եւ պահանջում էր դրսից եկածներին հեռացնել:

Ստեղծուած ծանր կացութիւնը թելադրում էր այս կամ այն կերպով ընդառաջել կառավարութեան պահանջին, վասնզի քաղաքը յարձակման ենթարկուելու դէպքում, բաւականաչափ ուժ չկար՝ ժողովուրդը պաշտպանելու համար: Այդ պատճառով կուսակցութեան ղեկավարութիւնը որոշում է քաղաքը պարպել աչքի դարձող ուժերից:

Այդ օրերին էր, որ շատ ծանր էր Արամի վիճակը: Յօդացաւը եւ աչքերի հիւանդութիւնը տանջում էին նրան: Այդ վիճակում ամենօրեայ տեղափոխութիւնները շատ ծանր էին նրա համար, անհրաժեշտ էր ապահով տեղ: Պահուելու պէտք ունէին եւ միւս ընկերները: Եթէ խուզարկութիւնները սկսուած թափով շարունակուէին, բոլորն էլ կարող էին թակարդի մէջ ընկնել:

Ահա այդ ժամանակ է, որ յղացուած է վտանգուած ու աչքի ընկնող ընկերներին ջրհորում տեղաւորելու գաղափարը: Եւ 19 հոգի իջնում են ջրհոր, դրանց թւում՝ Արամը, Բուլղարացի Գրիգորը, Ղ. Մելոյեանը, Թէոսը, Դաւոյի ահարեկիչ Տաճատը եւ այլն:

Գործիչների հոր իջնելը, բնական է, գաղտնի էր: Դրսում մընացողները լուր էին տարածում, թէ յեղափոխականները քաղաքից հեռացել են:

Ըստ երեւոյթին, թէ՛ քաղաքացիները եւ թէ՛ կառավարութիւնը հաւատացել էին այդ լուրին: Սուղարկութիւնները դադարեցրել էին, պահապանները տանիքներէն քաշուել էին, որով մնացած յեղափոխականների շարժումները դիւրացել էին: Սպասուում էր, որ որ քաղաքի պաշարումն էլ վերջ գտնէր, որից յետոյ հնարաւորութիւն կը ստեղծուէր հորում պահուածներին քաղաքից դուրս հանել:

Սակայն, դժբախտ պատահականութեամբ թէ շարակամութեամբ հորը մատնուած է: Բոլորին հանում են ու հեզնանքով, հայհոյանքով ու ծեծով առաջնորդում բանտ: Նորից վերսկսուած են խուզարկութիւններն ու բանտարկութիւններն աւելի մեծ սաստկութեամբ: Քաղաքն ապրում է ահ ու սարսափի օրեր: Սպասուում է զօրքի եւ թուրք ամբոխի յարձակումը քաղաքի վրայ: Դրութիւնը եթէ ոչ փրկելու զոնէ թեթեւացնելու յոյսով, կուսակցութեան ազատ մնացած ղեկավարութիւնը (Սարգիս, Կոմս եւ միւսները) դիմում են յուսահատական միջոցի:—

«Ֆրանսերէն գրաւոր բողոք-սպառնալիք մը ուղղեցինք երեք հիւպատոսներու՝ յիշեցնելով իրենց երաշխիքը մեր ժողովրդի ապահովութեան մասին: Հրաւիրեցինք անոնց միջամտութիւնը՝ նախ՝ ձերբակալուածների վիճակի քեքեւացման եւ երկրորդ՝ դադարեցրնելու վերսկսած հալածանքները: Դիմումը վերջացուցինք սպառնալիքով. «վանի ինքնապաշտպանութեան տեղական մարտական ուժերը պատրաստ են հակահարուած տալու՝ օդը հանելով կառավարական շէնքերը, գորանոցները: Անձնապէս դուք եւս պատասխանատու պիտի համարուիք, եթէ ժամ առաջ վերջ չտրուի այս վայրենի հալածանքին»...»

«Այսպէս կը վերջանար մեր բողոքագիրը. եւ իսկապէս որոշած էինք այդ քայլը ընել, եթէ ընդհանուր վտանգը ակնհայտ դառնար» (Վ. Փափազեան, «Իմ յուշերը» Ա. հատոր, էջ 533):

Այդ սպառնալիքը առանց հետեւանքի չմնաց: Կառավարութեան ներկայացուցիչները խորհրդակցութեան են հրաւիրում առաջնորդի փոխանորդին եւ ազգային երեւելիներին, որոնք նոյնպէս բողոքում են տիրող ահարեկումների, հալածանքների դէմ եւ պահանջում վերջ տալ այդ ամէնին: Կառավարութիւնը համաձայնում է ընդառաջել պայմանով, որ քաղաքից հեռանան յեղափոխական զինուած ուժերը...»

Հին պատմութիւն: Առաջնորդի փոխանորդը եւ միւս հայերը տեսակցութիւն են ունենում կուսակցութեան ներկայացուցչի հետ եւ յայտնում կառավարութեան պայմանի մասին հալածանքները դադարեցնելու համար, իրենց կողմից էլ խնդրելով, որ զրսեցիները հեռանան քաղաքից:

Կուսակցութեան անունից նրան պատասխանուում է այն իմաստով, որ քաղաքից հեռանալու մասին խօսք կը լինի միայն այն դէպքում, երբ բանտարկուած ընկերները հանգիստ ձգուին եւ հիւպատոսների կողմից երաշխաւորութիւն տրուի հալածանքներին վերջ տալու եւ ժողովրդին պատասխանատուութեան չենթարկելու մասին:

**

Բանտարկեալների վիճակը անասելիօրէն ծանր էր: «Ազտատ, խոնար եւ մուք գնդանների մէջ էին՝ միջատներով, մուկերով եւ բրնական ազտատութիւններով յագեցած...»

«Իրիկունները (բանտարկեալները) կը կանչուէին հարցաքննութեան եւ անխնայ կը խոշտանգուէին:

«Արամն ալ հարցաքննուած են եղեր. պատասխանած էր, թէ յեղափոխական է, եկած է օգնելու իր ժողովրդին բռնակալ կառավարութեան դէմ»: (Անդ, էջ 535):

Սուղարկութիւնների, ինչպէս նաեւ հորի մէջ գործիչների ձերբակալութեան ժամանակ կառավարութեան ձեռքն էին անցել բազմաթիւ կարեւոր թղթեր, որոնք մեծ մասամբ գաղտնի թուագրային նշաններով էին գրուած, որոնք բանալին անկարելի էր գտնել: Բանտարկեալներից նրանք, որոնք կառավարութեան կարծիքով ծանօթ պիտի լինէին գաղտնիքին, ենթարկուում են շարաշար տանջանքների — յատկապէս Ղ. Մելոյեանը: Բայց սրանք գաղտնիքը չեն յատնում:

«Արամէն ալ պահանջեցին լուծել այդ հարցը: Արամ հեզմամբ էր, ըսելով, թէ վաճառատը համար եկած չէր»...

Դրսի ընկերները կասկած չեն ունեցել, որ բանտարկուածներէն ոմանք դատապարտուելու են մահուան, մասնաւորապէս Արամը եւ Տաճատը՝ Դաւոյի ահաբեկիչը:

Դուրսը աղատ մնացած ընկերներէ վիճակը եւս նախանձելի չէր: Քաղաքում պահուելը այլեւս գրեթէ անհնարին էր դարձել:

«Ժողովուրդի հոգեկան բեկումը այնտեղ էր հասած, որ գրեթէ բոլոր դուռները գոցուած էին մեր առջեւ. սարսափած էին: «Ամենահաւատարիմ ընտանիքներն անգամ աղաչանքով ու լացով պահատում էին իրենց մօտ չպահուիլ, որովհետեւ խուզարկութեան դէպքում ամբողջ ընտանիքը մատնուելու էր կորուստի: Եւ տղաները, երբեմն, դուրսն են անցկացնում, այգիներում:

Իսկ խուզարկութիւնները գնալով սաստկանում էին: Թէ՛ բազերը եւ թէ՛ քաղաքը պաշարուած էին: Տղաների համար աննկատ շարժուելը գրեթէ անհնար էր դարձել:

«Ծուղակի մէջ էինք ինկած: Շարժուելու տեղ չէր մնացած: Ընդհարումը անխուսափելի էր» (անդ): Մի բան, որից ամէն կերպ խուսափում էին՝ ժողովուրդը ջարդի շմտոնելու մտահոգութեամբ: Մնացել էր մի ելք, այն է՝ քաղաքից հեռանալ՝ ստոյգ մահն աչքի առաջ ունենալով: Գիտենք արդէն, որ քաղաքը պաշարուած էր, ելք ու մուտքը հսկողութեան տակ առնուած:

Սակայն, յեղափոխականների տարիների վտրձը ու հնարամտութիւնը այս պահի էլ օղնութեան են հասնում, ու նրանք աննրկատ անցնում են պաշարման գիծը եւ շունչ առնում Իշխանի... Իշխանութեան սահմաններում: Տարրուսի լեռներում հանդիպում են Իշխանին իր գինուորներով:

Այդ վիճակում էլ, սակայն, յեղափոխականները իրաւունք չունէին յուսահատուելու, մանաւանդ, երբ այնքան դժուար կար աւելու:

Սորհրդակցելով՝ որոշում են գաւառի «ժողովրդական գէնքերը» հաւաքել ապահով վայրերու մէջ, ամէն գնով բարձրացնել ժողովրդի ընկճուած ողին, ահաբեկման ենթարկել մատնիչներին եւ դաւաճաններին, ինչպէս նաեւ պաշտպանել ժողովուրդը քրդերի, բռնութիւնների ու յարձակումների դէմ:

Այդ նպատակով յեղափոխականները բաժանուում են երկու խումբի՝ լեռնային դաւառներում աշխատանք տանելու նպատակով: Միաժամանակ սուրհանդակային կապ են ստեղծում քաղաքի հետ,



Չախէն աջ... Տիգրան, Իշխան, Արամ, Մալխաս, Համազասպ Մամուկեան, Մարգիս (պատկած)

որտեղից եկած տեղեկութիւններն աւելի քան յուսահատական էին : Այնտեղից տեղեկացնում էին, որ մնացած զինուորահասաների մեծ մասը անցել է կառավարութեան ձեռքը, զրաւած էն 600,000ից աւելի փամփուշա, 200 կիլոյից աւելի պայթուցիկ, 175 կիլո ձերմակ վառոյ եւ այլ ռազմական պարագաներ :

Կարելի է երեւակայել այդ կորուստի ձգած տպաւորութիւնը մարդկանց վրայ, որոնք տարիներ շարունակ ծանրագոյն պայմաններում լցրել էին այդ պահեստները . . .

Այնուհետեւ Վանից եկող սուրհանդակը, հետուէն սկսեց պոռալ. «Սահմանադրութիւն ի . . . ազատութիւն . . . Պր. Արամը եւ պիրուն բանտարկեալները ազատուած են . . . » :

Սուրհանդակը յանձնում է Արամի նամակը Կոմսին :

«Նամակը, իրաւ, Արամէն էր : Կր գրէր թէ սահմանադրութիւնը յայտարարուած է, բոլոր քաղաքական բանտարկեալները ազատուած են մեծ շուքով, երաժշտութեամբ եւ զինուորական պատիւներով առաջնորդուած են կուսակալի սերայը : Կր խնդրէր աներկիւղ իջնել վան. այլեւս նպատակ չկար լեռները քափառելու մէջ . . . » (Անդ, էջ 592) :

1908ի Յուլիսին էր :

**

Հետաքրքրական է Լեռնապարի Իշխանի վերաբերմունքը դէպի Արամը եւ նրա զործունէութիւնը Վանում :

Այդ մասին Իշխանը խօսում է Ռուբէնի հետ, երբ վերջինը սահմանադրութեան հռչակումից յետոյ թողնում է Մուշը եւ վերադառնում Կովկաս (փակազծի մէջ նկատենք, որ Ռուբէնի հետ էր Եւ Վեհիբ բէյը, որ Լեռնապարի վրայով անցնում էր Վան) :

Պօսակցութիւնը սկսում է Ռուբէնի նախաձեռնութեամբ եւ շատ զարմանալի ու դատապարտելի ձեւով ոչ միայն Իշխանի, այլ եւ ամէն մի ընթերցողի համար, որոնք մինչ այդ ծանօթ էին Ռուբէնի եւ Արամի փոխյարաբերութիւններին : Հարցը վերաբերում է այն ստոր բամբասանքին, որի հեղինակը դուստան Դաւան էր : Այդ բամբասանքի արձագանգները շարակամ մարդկանց բերնով ճշմարտութեան կերպարանք առած հասել էին Եւ Ռուբէնին :

— Իշխան, քեզի խոստովանաւք անեմ : Գուն ելք ցոյց տուր ինձ : Ամբողջ նստապարհին կր մտածէի, թէ ի՞նչպէս պիտի հանդիպեմ Արամին. բարեւ տա՞մ թէ չտամ. բնկեր ճանաչե՞մ թէ չճանաչեմ :

չեմ: Ա՛յնքան միտքս պղտորած եմ անոր մասին, որ կ'ըսեմ՝ սատկելիք է ան եւ մե՛նք ալ սատկելիք եմք, քանի որ նման հրէշի մտեքիմ եմք:

— Տղայ, ինչե՛ր դուրս կու տաս:

Ձիւն կանգնեցուց իշխանը եւ ինձ յամբիմանական կերպով կը նայէր:

— Ուրեմն, քեզի՞ ալ հասած եմ այդ բամբասանքները, դո՞ւն ալ կրնաս մոլորուիլ, որ ա՛յդքան մտերիմ ես եղած Արամին: Ուրեմն փուչ բան է թէ՛ ընկերութիւն եւ թէ՛ սէր... Ես անոր հետ ամէն օր կուրի մէջ եմ գործի տեսակէտների մասին, բայց ոչ մի անգամ իմ մտքէս չէ անցած մոլորուիլ անոր մասին եղած բամբասանքներէն, որոնց ինչ նպատակով տարածուիլն ալ ես լաւ կը հասկնամ: Մեղա՛յ ըսէ եւ առաջուան նման քո Սերգէի, քո Արամի հանդէպ անվերապահ եղիր ու հաւատա՛:

Արամին այդպէս պաշտպանելով հանդերձ՝ իշխանը բոլոր բամբասանքների պատճառը նրա գործելակերպը, նրա մարդկանց մօտենալու կերպի մէջ է տեսնում: Եւ ահա թէ ինչպէս —

«Ինքը (Արամը) միայնակ աւելի ծանր է, քան ամբողջ վանը եւ անոր մէջէն անցնող դարձող բոլոր ուժերը միասին վերցուցած: Ան կեանքի մէկ թաթն է, միւսները՝ միւս թաթը, ինքը կ'իջնէ ցած, միւսները օդի մէջ կը հանէ, անոնք կը ճօճան բարձունքներում, բայց կը զգան, որ շնորհիւ Արամի ծանրութեան վերեւ եմ ելած: Դրա համար էլ անոնք միաբերան Արամին փաշա կ'ըսեն, բայց իրենց հոգու մէջ կ'ատեն այդ փաշային, միշտ կը վախնան, որ Արամը կրնայ վար ցատկել կշիռքի թաթէն, որով ամէնքն ալ ցած պիտի ընկնեն: Այս դրութեան մէջ յանցանքը Արամին է, որ կը կարծէ, թէ բարձրացրեցնելով անխտիր բոլորին՝ գործ կը դարձնէ եւ շնորհակալութիւն պիտի վաստակէ... Մի յանկերգ ունի՝ «մի ծաղիկով գարուն չի գայ, պէտք է սերմանել», կամ՝ «տուն շինելու համար անհրաժեշտ է օգտագործել բոլոր նիւթերը, որ ձեռքի տակ կան — քար, կիր, աւազ, խէթ, նոյնիսկ յարդ եւ թրիք. այլ կերպ տուն չես կրնար շինել» (Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հատոր Ե., էջ 218-219):

Իշխանը պատկերաւոր ձեւով մատնանշում է Արամի մօտեցումը մարդկանց, որոնց հետ ինքը համաձայն չէ՝ կողմնակից լինելով գործի համար գործիչների խստագոյն ընտրութեան: Իշխանը երկուսից ճիշդ էր մատնանշել, սակայն նրա մեկնարանութիւնը եւ եզրակացութիւնը, թւում է, սխալ էին: Արամը արտակարգ շնորհք ու-

նէր մարդկանց գործի դնելու՝ համաձայն նրանց ընդունակութիւնների: Այդ հանգամանքն արդէն անընդունելի, անգամ անիմաստ էր դարձնում իշխանի պնդումը թէ Արամի ձեռքով գործի լծուած ու այդպիսի հասարակութեան աչքում բարձրացած անձինք «իրենց հոգու մէջ կ'ատէին այդ փաշային», որովհետեւ ունէին այն գիտակցութիւնը, թէ առանց նրան անկարող էին դրսեւորել իրենց հասարակական արժէքը:

Ճիշդը հակառակն է: Արամի շնորհիւ՝ հասարակական աշխատանքի լծուած ու դիրքի տիրացած մարդիկ միայն երախտագիտական զգացում կարող էին ունենալ նրա հանդէպ ու ցաւի զգացում՝ այդ դիրքը կորցնելու դէպքում:

Հիմնովին սխալ է նաեւ իշխանի այն միտքը, թէ Արամը, բարձրացնելով անխտիր բոլորին (հասարակական գործի կապակցութեամբ), «կը կարծէ թէ գործ կը դարձնի եւ շնորհակալութիւն պիտի վաստակի»: Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման նախապատրաստական աշխատանքները Արամը գլուխ հանեց՝ «անխտիր բոլորին»՝ հասարակական-ազգային զգացում, գիտակցութիւն ունեցողներին, գործի դնելով եւ, վստահ եմ, առանց «շնորհակալութիւն վաստակելու» մասին մտածելու:

Բայց իշխանի վերաբերմունքը եւ տուած բացատրութիւնները Արամի մասին տարածուած բամբասանքների կապակցութեամբ՝ բարերար ազդեցութիւն են ունենում Ռուբէնի վրայ, եւ նա, ինչպէս կը տեսնենք, անխառն երջանկութեամբ զրկախառնում է Արամի հետ վանում:

Այդ խօսակցութիւնից յետոյ, Ռուբէնը, միայնակ մնալով, մտածում է իշխանի եւ նրանից լսածների մասին թէ՛ այդ խօսակցութեան ժամանակ եւ թէ՛ ընդհանրապէս: «Սա (իշխանը) մի փայլատակազ սուր է, կտրոզ, անհաշիւ, բայց իր պատեանն ունի, որ Արամն է: Այս սուրը անհանգիստ է, բայց կը սիրէ Արամին, որքան ինքզինք կը սիրէ, բայց դժգոհ է անկէ, որ իրեն պէս աջ ու ահեակ չի կտրեր»:

Այնուհետեւ մի շարք դատողութիւններ անելով այդ երկուսի մասին «իշխանի, որ ոգին էր Լեռնապարի եւ Արամի, որ ոգին էր վանի», եզրակացնում է.

«Ինձի կը բուի, որ իշխանը սահմանադրական միապետութիւն է, իսկ Արամը՝ ռամկավարութիւն, երկուսն ալ նոյնը տարբեր ձեւերով, նոյն նպատակներով եւ ցանկութիւններով, բայց հակառակ մեքստներով»:

Ռուբէնին, Իշխանին եւ Վեհիպ բէյին, այսինքն, Մշոյ աշխարհի ու Լեւոնապարի յեղափոխական այս նշանաւոր հերոսներին եւ Իթթիհատի պաշտօնական ներկայացուցչին Վանի պաշտօնական եւ անպաշտօն հասարակութիւնը փառաւոր ընդունելութիւն է ցոյց տալիս, դեռ Վան չհասած :

Սահմանադրութեան հռչակման առաջին օրերն էին եւ Իթթիհատ-Դաշնակցութեան յարաբերութիւնների «մեղրամսի» սկզբնական շրջանը : Այդ ընդունելութիւնը Ռուբէնը նկարագրում է իր յուշերում : Պօսում է նաեւ իր ապրումների եւ Արամի հանդիպելու մասին :

«Ականջներս լեցումս եմ գծոցով, կը լսեմ, բայց չեմ քափանցեր : Միակ մի բան ինձ պայծառ էր, ետքաբ Արամն ալ այս ժրխորի մէջ է, ո՞ւր է ան, չ'երեւնար... Եւ ահա պսպղուն բազմաթիւ աչքերի միջին, իմ ձիւ սանձը ամուր բռնուեցաւ, երկու ձեռքեր ինձ քաշեցին եւ գլուխը վար կախած մէկը ինձ կը համբուրէր՝ «ա՛յ արջ, ա՛յ արջի տղայ» կանչելով : Ձիւս բռնելով՝ եւ Արամի գիրկն ընկայ : Իմ ուզածս գտած էի» :

Արամը, Ռուբէնը եւ Իշխանը տեղաւորում են մի կառքի մէջ : Սակայն, դեռ Վան չհասած, կարգադրիչ յանձնախումբի որոշումով՝ նրանց իրարից բաժանում են :

«Այս նեղ մահալին Արամն ինձի շնչաց — «Այ տղայ, դու չըսիր թէ հետիդ վեհիպը ի՞նչ մանավար է» : Եւ պատասխանեցի — «ձիւդ Սվազի Արուքը, չուանը կը սուպնէ՝ մեր վիզը անցընելու համար : Հասկցայ, ըսաւ, եւ մեզ իրարմէ բաժնեցին» :

Մուշից մինչեւ Վան Ռուբէնը եւ Վեհիպ բէյը միասին էին կեկել : Նրա հետ ունեցած խօսակցութիւններից, ինչպէս նաեւ նրա վերաբերմունքից դէպի տեղական բէգերն ու աղաները եւ ընդհանուր վարքադէրք Ռուբէնը եկել էր այն եզրակացութեան, որ Իթթիհատի այդ ներկայացուցիչը հայերի թշնամին է եւ ոչ բարեկամը :

Կարգադրիչ Յանձնաժողովի որոշումով՝ առաջին կառքի մէջ նստում են Արամն ու Վեհիպը, երկրորդի մէջ Ռուբէնն ու մի այլ թուրք պաշտօնեայ, ապա Իշխանը՝ նոյնպէս թուրք պաշտօնեայի հետ, եւ այդպէս կառքերի կարաւանի գլուխն անցած մտնում են Վան, ուր նրանց սպասում էին «գիմուորներ, ռատիկաններ եւ հսկայ ամբոխ»՝ անվերջ «եաշա», «եաշա» կանչելով : Երբ սկսում է բուն

հանդէսը, Ռուբէնը, իր պատուաւոր տեղը նստած, շատ անյարմար է զգում իրեն՝ անելիքը շիմանալով :

«Այդպէս չէր զգար Արամը : Ժպտադէմ, ադմուկով մօտեցաւ կուսակալին եւ ինչ որ զինուորականի, ներկայացուց Վեհիպը, կարծես ինքը ըլլար անոր տէրը...»

«Մեքն մմէնքն մախապէս պատրաստուած տեղերնիս գրաւեցինք, մէկ թուրք՝ մէկ հայ կողմ կողքի : Բոլորն ալ հանդիսաւոր դիրք բռնած էին, իբրեւ օրուան գերագոյն խորհուրդը հասկացողներ : Միայն Արամն էր, որ առանց ազդուելու պաշտօնական պատշաճութենէ՝ իր ամենաբարձր բազկաթուէն կը բաժանուէր, ասոր անոր կը մօտեմար եւ բարձր բարձր կը ծիծաղէր, կը խօսէր յօնքերը կը կիտէր կամ կը բանար, ինչպէս որ իր տանը լինէր : Ինձ ալ մօտեցաւ. «Քանի մը խօսք պիտի ասես, այդ կը սպասեն» : Ինձ վախը բռնեց. եւ ըսելիք չունէի» :

Ռուբէնը, տեսնելով, որ հանդէսին մասնակցել իր գործը չէ, մէկի օգնութեամբ «ծլիում» է եւ նոյն առաջնորդի օգնութեամբ շունչ առնում Արամի սենեակում :

Երկու ժամ վերջը դալիս է Իշխանը :

— Լաւ փախար, ծիծաղելով ըսաւ, — քեզ կը փնտռէին՝ բեմ հանելու համար : Արամը քո ճարման քաշեց... Թուրքերէն ճառ խօսեցաւ, բոլորին ալ սեւ երես թողած :

Գալիս է Արամը : Ապա երեք մտերիմ ընկերներ, Ռուբէնի կատակ-որակումով՝ «երկու փաշա (Արամ եւ Ռուբէն) եւ մէկ բոշա (Իշխան)», մոռանալով ամէն բան՝ ե՛ւ դիրք, ե՛ւ գործ ե՛ւ սահմանադրութիւն ու այդ ամէնի հետ կապուած մտահոգութիւնները, երեքսայ դարձած, անձնատուր են լինում անհող խաղերի :

Մի բնորոշ մանրամասնութիւն : Ընդհանրապէս ասած՝ Ռուբէնը, իբրեւ Տարօնի գործիչ, շատ աւելի ծանր պայմաններում էր ապրել, քան իր ընկերները Վասպուրականում : Եւ այնուամենայնիւ, նրա ուշադրութիւնից չէր վրիպեր Արամի «խղճուկ սենեակը» իր աղքատ յարմարութիւններով :

«Ձորս պատեր՝ առանց գարդերու. ո՛չ աթոռ, ո՛չ սեղան, ոչ ալ մահճակալ. տախտակամած յատակը՝ ծածկուած մի կարպետով. պատերի շուրջը՝ մեմդարներ, բարձեր, որոնց վրայ փռուած են գետնի վրայ» : Ապա հեղինակը՝ «դժուար չէ Վասպուրականի տէր ու տնօրէնի (Արամի) սենեակը նկարագրել» :

Իր տեղը կը տեսնենք, որ նոյնանման անշուք սենեակում էր ապրում Արամը նաեւ Երեւանում, երբ Արարատեան դաշտի եւ յա-

րակից դաւառնների դիկտատորն էր, ինչպէս եւ կը տեսնենք, որ սենեակ, հագուստ, ուտելիք ասուած բաները չէին հետաքրքրում նրան ընդհանրապէս եւ այդ մասին յիշեցնողներին՝ նա սրտնեղած՝ պատասխանում էր. «Ռատարկ բաներով մի մտահոգուի՛ք»:

Այդ դժով էլ Արամը Դաշնակցութեան հիմնադիր Երրորդութեան Քրիստափոր – Զաւարեան–Ռոստոմի հարազատ ժառանգն էր:

**

Կար մի հարց, որ տեղի էր տալիս անվերջ տարածայնութիւնների, սուր վէճերի եւ ստեղծում անցանկալի դրութիւն վանի եւ շրջանի ընկերների եւ գործիչների միջեւ:

Արտասահմանից երկրի համար ուղարկուած զինամթերքը, դրամը եւ գործիչները նախ՝ հասնում էին վան եւ ապա՝ այնտեղից բաշխուած շրջանների վրայ: Վանեցիք օգտուելով այդ հանգամանքից, ստացուածի «առիւծի բաժինը» պահում էին քաղաքում եւ մի աննշան մասը բաժին հանում գաւառին եւ միւս շրջաններին:

Այդ հանգամանքն էր, որ վրդովում էր գաւառի գործիչներին:

Իշխանի օրօք այդ հարցը շատ սուր կերպարանք ստացաւ: Նա մեղադրում էր վանի Կ. Կոմիտէն ոչ միայն այն բանում, որ միակողմանի ու անարդար վերաբերմունք էր ցոյց տալիս ընդհանրապէս արտասահմանից երկրի համար ուղարկածը բաշխելիս՝ լինի այդ գէնք, դրամ թէ գործիչ, այլե՛ւ այն բանում, որ առանց գաւառում գործող, բայց քաղաքի ընկերներին իրաւահաւասար, ընկերների գիտութեան՝ նրանց վերաբերող որոշումներ էր առնում: Այդ պատճառով Իշխան, շարունակական պայքարի մէջ էր վանի Կ. Կոմիտէի հետ, որի անդամներից մէկն էլ ինքն էր:

Այդ պայքարը հասել էր իր գագաթնակէտին Արամի վան հասնելու օրերին: Եւ այդ մասին խօսք եղաւ վերը:

Ինչպէս յիշուեց, արտասահմանից վան ուղարկուածը միայն վասպուրականի համար չէր, այլ ընդհանրապէս երկրի կարիքների համար: Այդ տեսակէտից պահանջատէր եւ նաեւ Տարօնը: Եւ երբ Ռուբէնը Տարօնը թողնում է՝ Կովկաս վերադառնալու համար, Տարօնի ընկերները նրա վրայ պարտականութիւն են դնում՝ պահանջել վանի Կ. Կոմիտէից Տարօնին հասնելիք ռազմամթերքը: Ռուբէնը վանում այդ խնդիրը դնում է Արամի եւ Իշխանի առջեւ իրեն յատուկ տարօրինակ ձեւով:

Գիտենք, որ Դաւոյի դաւաճանութեան հետեւանքով՝ վանի

զինական պահեստների խոշոր մասը անցել էր կառավարութեան ձեռքը, եւ եթէ մնացածից էլ բաժին հանուէր Տարօնի համար, տեղումը շատ քիչ բան կը մնար: Այդ գիտակցութիւնն ունէր Ռուբէնը, եւ նրա սրտի, իր խոստովանութեամբ, վասպուրականի շահերը նոյնքան մօտ էին, որքան Տարօնի շահերը, որով՝ ոչ մի դէպքում նա չէր ուզի մէկը զրկել յօգուտ միւսի: Ուստի, անտես առնելով Արամի տրամադրութիւնը՝ խուզարկութիւնից փրկուած ռազմամթերքից մաս հանել Տարօնի համար, Ռուբէնը իւրայատուկ մի առաջարկ է անում Արամին՝ զարմանք պատճառելով թէ՛ նրան եւ թէ՛ Իշխանին: Նա առաջարկում է Արամին՝ կառավարութիւնից յետ պահանջել Դաւոյի դաւաճանութեամբ գրաւուած զինական պահեստները:

Ռուբէնի խօսքի շարունակութիւնից երեւում է, որ սահմանադրութիւնը վերջնականապէս հիասթափեցրել է նրան իր ստեղծած կարգերով: Այդ կարգերը համեմատելով հին ուժեղ կարգերի հետ՝ նա գտնում էր, որ վերջինները աւելի լաւ էին, որովհետեւ պարզ էր նրանց կերպարանքը, — չարիք էին, որոնց զէմ կուում էին հայ յեղափոխականները: Իսկ այժմ «չարիքն ու բարիքն իրար էին խառնուած, — ոչ բարիքն էր յայտնի, ոչ չարիքը. շուքը՝ գաւազանն առած՝ հովիւ էր դառած, հովիւը գաւազանը ձգած՝ շուն էր դառած»:

«Եթէ, կ'ըսէ Ռուբէն, սահմանադրական կառավարութիւնը վստահի եւ զինամթերքը վերադարձնէ, լաւ: Իսկ եթէ չվերադարձնէ, ուրեմն ամվստահելի է, եւ մեմք ալ տարբերութիւն չպիտի դնեմք հին եւ նոր աւժիմներու միջեւ»:

Ռուբէնի իսկ վկայութեամբ իր խօսքերը յանկարծակի են բերում իր ընկերներին՝ Արամին եւ Իշխանին:

Արամը, առանց ծածկելու իր խռովքը, հարց է տալիս.

«Այս մտքերը այստե՞ղ մտածեցիր, թե՞ առաջուց ունէիր: Այդ առաջարկը զինամթերքի ազատման համար է, թէ այլ բանի համար»:

Ռուբէնը անվարան պատասխանում է, որ զինամթերքի հարցը մի առիթ է միայն՝ ստեղծուած դրութիւնը պարզելու համար: Իսկ «առիթը ոչ պատճառ եւ ոչ էլ նպատակ է»: Ինչ վերաբերում է իր եւ Տարօնի ընկերների նպատակին, այդ մասին գրել է վանի ընկերներին դեռ Մուշից՝ Սբ. Կարապետի ժողովից յետոյ, բայց պատասխան չստանալով, «կրկին ձեզի կը հարցնեմ, թէ ի՞նչ է ձեր մտածումը Սբ. Կարապետի մեր եզրակացութեան մասին»:

Նիւթի կապակցութեամբ՝ մի քանի խօսք ասենք Սբ. Կարապետի Երջանային ժողովի մասին, որը սահմանադրութեան շրջանի

անդրանիկ Շրջանային ժողովն էր՝ Դուրան-Բարձրաւանդակի արտակարգ բաղմաթիւ պատգամաւորների մասնակցութեամբ եւ Ռուբէնի նախագահութեամբ:

Ար. Կարապետի ժողովը քննութեան էր առել մի շարք հարցեր, որոնցից կարեւորներն էին.

1.- Ի՞նչ պիտի ըլլայ այսուհետեւ փետայիներու դերը եւ անոնց վիճակը.

2.- Ի՞նչպէս պէտք է կազմակերպուիլ.

3.- Ի՞նչ պէտք է ըլլայ կազմակերպութեան նպատակը.

4.- Մեր վերաբերմունքը դէպի հուրիաթն ու սահմանադրութիւնը (Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հատոր Ե., էջ 52-53):

Ժողովն ընդհանրապէս այն կարծիքն էր, որ սահմանադրութեան հիմը պէտք է կազմէ ապակենտրոնացման սկզբունքը, որը իրօք ազատութիւն կը տար պետութեան բոլոր ժողովուրդներին, ներանց թուում նաեւ հայերին:

Այդ ժողովում շօշափուած հարցերի ու հանուած որոշումների մասին Ռուբէնը ժամանակին գրում է Վանի ընկերներին, բայց պատասխան չի ստանում: Ուստի այժմ նորից հարցնում է Արամին ու Իշխանին՝ ի՞նչ է նրանց «մտածումը Ար. Կարապետի մեր եզրակացութեանց մասին»:

Այդ հարցի պատասխանից ու այնուհետեւ նրանց մէջ տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնից պարզուում է հետեւեալը.—

Ռուբէնը, ինչպէս արդէն տեսանք, վերջնականապէս հիասթափուած էր ու այլեւս որեւէ յոյս չէր կապում սահմանադրութեան ու նրա բերած նոր կարգերի հետ: Եւ որպէսզի այլեւս որեւէ կասկած չլինէր այդ մասին թէ՛ Արամի եւ թէ՛ միւսների կողմից, նա հրապարակ է հանում զինամթերքի վերադարձման հարցը: Եթէ իթթի-հատի կառավարութիւնը համաձայնէր եւ գրաւուած ուղղամթերքը վերադարձնէր, այն ժամանակ կարելի էր վստահիլ նրան եւ շարունակել գործակցութիւնը իթթի-հատի հետ: Հակառակ պարագայում՝ մասնաւորապէս ինքը՝ Ռուբէնը քաջուելու էր գործից ու վերադառնալու Կովկաս՝ տուն:

Իշխանը որոշ վերապահութեամբ համաձայն էր Ռուբէնի յոռետես վերաբերմունքի հետ: Արամը, Ռուբէնի վկայութեամբ, այլ տեսակէտ ունէր: Նա չէր ժխտում Ռուբէնի մատնանշած նոր կարգերի բացասական կողմերը, սակայն համաձայն չէր նրա եզրակացութեան հետ:

Ռուբէնը, ինչպէս գիտենք, մինչեւ Վան գալը որոշել էր երկրից դուրս դնալ: Բայց եթէ Արամը համաձայնէր նրա առաջարկի հետ, նա կը փոխէր իր մտադրութիւնը եւ կը մնար Արամի հետ: Տեսանք, որ Ռուբէնի առաջարկը անընդունելի էր Արամի համար: Այդպիսով՝ Ռուբէնը կտորուած սրտով մտածում էր թողնել Երկիրը: Սակայն, Երկրից հեռանալը այն օրերին Ռուբէնի պէս պատասխանատու գործչի համար այնքան էլ զիւրին չէր. չէ՞ որ շատ բան էր կախուած պատասխանատու ընկերների վերաբերմունքից: Այդ օրերին Վանում էին նաեւ բժ. Տէր Դաւթեանը եւ Վառամեանը: Գրեթէ բոլոր ընկերները ղէմ էին Ռուբէնի հեռանալուն եւ, եթէ չլինէր Արամի միջամտութիւնը, Ռուբէնի Երկրից դուրս գալու միտքը ջուրն էր ընկնելու:

Ընկերները Ռուբէնի երկրից հեռանալու ղէմ էին հետեւեալ պատճառարանութիւններով.

— Այսպիսի ժամանակ, երբ արտը ցանուած է եւ քաղի ժամանակն է եկած, ինչպէ՞ս կարելի է թողնել ամէն ինչ եւ հեռանալ: Այդ՝ ոչ քո եւ ոչ ալ Տարօնի իրաւունքն է:

— Դու, վերջապէս, բարձրագոյն Մարմնի անդամ ես եւ առանց Ընդհ. ժողովի եւ քո ընկերների կամքի՝ չես կրնար հեռանալ: Եթէ յոգնած ես, տունդ կ'ուզես տեսնել, որ իրաւունքդ է, կը հասկրնանք. քանի մը շարաթով գնա՛:

— Հոս մարդու սով է, դուն կ'ըսես՝ դործը լմնցաւ:

Ցոյց են տալիս Ռուբէնին Թաւրիզից Ռոստոմի գրած նամակը, որով՝ «մարդիկ կ'ուզեն, ուժ կ'ուզեն, իսկ դու ելեր՝ կ'ուզես հեռանալ»:

Այս ամէնի ազդեցութեան տակ Ռուբէնը մի տեսակ ընկճուում է եւ մտածում համաձայնել դնալ Թաւրիզ Ռոստոմի մօտ: Բայց «քարեքայտարար, Արամը լուռ կը մնար, անոր խօսքերը ինձ համար արժէքաւոր էին», գրում է Ռուբէնը: Եւ նախ քան նրա Թաւրիզ գրնալու մասին ցանկութիւն յայտնելը, «անսպասելիօրէն» լեզու ելաւ Արամը.—

«Ամէն կողմէ ֆարոգ կը կարդաք տղու գլխին եւ պարտակալութեանց դասեր կու տաք: Նախ՝ Ռոստոմի նամակը մեզի է ուղղուած եւ ոչ թէ անոր. հրամեցէք իրագործել նրա պահանջները: Երկրորդ՝ տարիներ շարունակ Տարօնը նման պահանջներ ունէր մեզմից, մեմք չբարարեցինք. ան եկած է իր առնելիքները գանձելու (ակնարկը գնում է դրսից ստացուած զինամթերքին, դրամին) եւ ոչ թէ այդ խրատները լսելու: Երրորդ՝ եթէ անոր երկիր քոզմելը կայս-

ուած է Ղնդի. ժողովէն, այդ խնդրի մէջ դուք ձայն չունիք: Ես համաձայն եմ, որ նա այլևս ազատ է հեռանալու, իսկ ինքն արդէն պիտի գնա Բիւրոյի մօտ եւ անկէ յետոյ, ինչ որ կ'ուզեն, բո՛ղ այնպէս որոշեն: Ազգասիրական քարոզները ուրիշ տեղի համար պահեցէք»:

Բժ. Տէր Դաւթեանը համամիտ է գտնուում Արամի հետ, եւ Ռուբէնը ազատ չունչ է քաշում:

Այս մէջըրումը մի վկայութիւն է առ այն, թէ ի՛նչ հեղինակութիւն էր Արամը անգամ պատասխանատու ընկերների աչքում:

**

Արամը հեղինակութիւն էր ոչ միայն իւրայինների եւ ընդհանրապէս հայերի մէջ, նրա հեղինակութիւնը ընդունում եւ բարձր գնահատում էին նաեւ հայ ժողովրդի թշնամիները, եւ այդ՝ ոչ միայն սահմանադրութեան օրերին, այլ եւ սահմանադրութիւնից առաջ:

Այս վերջին պարագան հաստատելու համար, ծանօթանա՞նք բաշ կոմիսար Մեհմէտ էֆենտի() եւ Ռուբէնի միջեւ սահմանադրութիւնից յետոյ վանում տեղի ունեցած խօսակցութեան այն մասի հետ, ուր խօսք կայ նաեւ Արամի մասին:*

— «Որպէսզի քեզի պարզ դառնայ պետական ըմբռնողութիւնը, պատմեմ մէկ ժողովի մասին, որմէ կ'ըմբռնես ամէն ինչ, դիմում է Ռուբէնին Մեհմէտ էֆենտին: Երբ ձեր պահեստները բռնուեցին, ամենց քանակը եւ որակը բոլորս շարժուց: Թայիր փաշայի (Կուսակալի) մօտ հաւաքուած էինք բոլոր զինուորական, ոստիկանական զեկավարներս: Կուսակալը կը յայտնէ...

«Շատ շատ վտանգաւոր կացութեան մէջ ենք. մեք մեզ չխա-

(*) Մեհմէտ էֆենտին Տարօնցի հայ էր, Բուլանըզ գիւղից: Երիտասարդ հասակում եղի էր ուսուցիչ եւ մտել հայ յեղափոխութեան շարքերը: Իշխանութեան կողմից ենթարկուել էր հալածամեթոտի, բանտարկուել էր եւ, անկարող լինելով դիմաձայն դաժան շարժարաններին եւ մահուան վտանգից ազատուելու համար, խլամացել էր եւ արժանացել իշխանութեան վստահութեան այն աստիճան, որ պաշտօն էր ստացել ոստիկանութեան մէջ եւ, աստիճանաբար առաջդիմելով, հասել էր այդ բարձր աստիճանին: Սակայն, նա իր հոգու խորքում մնացել էր հայ եւ ձեռքից եկած օգնութիւնը հասցրել էր հայ յեղափոխականներին՝ մասնաւորապէս Տարօնում, ուր կապ էր հաստատել Ռուբէնի հետ: Նրա մասին Ռուբէնը բաւականին տեղեկութիւններ է տալիս իր յուշերում: Կայ նաեւ մի յօդուած նրա մասին «Հայրենիք» ամսագրի 1956ի Յուլիս եւ Օգոստոս թուրում:

բեմի: Անշուշտ նոյնքան, եթէ ոչ անոր տասնապատիկը պահեստներ կը գտնուին լեռներու մէջ, Իշխանի տրամադրութեան տակ, եւ այդ վտանգաւոր Արամը շրջաններն ալ զինած ու ցրած ուժեր ունի եւ մեր գլխուն փորձանք կը պատրաստէ: Ուստի շատ զգոյշ եւ արթուն պէտք է ըլլալ. հետեւեալը ձեզմէ կը պահանջեմ...»: Իր հրամանները եւ կարգադրութիւնները տալուց յետոյ, խօսքը եզրափակում է.

— «Հոս միայն մէկ թշնամի կայ, որ գիտէ թէ ինչ կ'ուզէ. ան արժանի է փաշա կոչուելու, Արամն է: Հոն լեռներու մէջ մէկ բէյ կայ, Իշխանն է: Ատմէք են փեթակներու մայրը եւ այժմ թէ՛ քաղաքի եւ թէ՛ գիւղերու առաջնորդն են...»:

Ապա՝ պատմելով հայ յեղափոխականներին վարկարեկելու եւ ծուղակի մէջ ձգելու ոստիկանութեան կողմից ձեռք առած միջոցների մասին, աւելացնում է.

«Բայց Արամը բոլորին համար կը մնայ յարգանքի եւ պատուի առարկայ»:

Նոյն վերաբերմունքը մնաց նաեւ սահմանադրութիւնից յետոյ: Լսենք նոյն մարդուն...

«Անցեալ օրը (Վեհիբի, Ռուբէնի եւ Իշխանի վան մտնելու օրը), երբ Արամը մտնեց իր քաթար լեզուով, մէկը կողքիս ըսաւ. Հայութիւնը անարժան է այսպիսի մարդ ունենալու, օսմանցիի արժանի է այս մարդը («Հայ յեղափոխականի մը յիշատակները», հատոր Ե., էջ 259-262):

Հարցը նրանում չէ, որ այդ կարծիքը «Թուրքավարի» է, այլ նրանում, որ կարծիք յայտնողը Արամի թշնամին է եղել թէ՛ անցեալում եւ թէ՛ սահմանադրութեան օրերին, — այլապէս հայերի բարեկամը նման կարծիք չէր յայտնի:

Որ սահմանադրութիւնից յետոյ էլ, երբ մինչ այդ դադարի, ստորերկրեայ կեանք վարող յեղափոխական գործիչները «լոյս աշխարհ» էին դուրս եկել եւ գործում էին հրապարակի վրայ ազատօրէն, Արամը մնացել էր նոյն կենտրոնական դէմքը բոլորի համար՝ թէ՛ հայերի եւ թէ՛ ոչ հայերի: Այդ երեւում է եւ Վ. Փափաղեանի յուշերից:

«Մեր մէջ երեւութապէս ամենէն ոգեւորուած եւ գործօն անձը Արամն էր: Կենտրոնական դէմք էր դարձած: Գրադարաններով, դպրոցներով, ազգային իշխանութեան գործերով կը հետաքրքրուէր, — իր բուն եռանդով նետուած էր ասպարէզ: Մեր մէջ Արամն էր, որ անմիջապէս յարմարեցաւ նոր պայմաններին»:

«Իր ատրքեջանական «բէտ-թոփալ» քաթարերէնով չէր քաշ-

ուեր մտնելու նաեւ թուրք պաշտօնական եւ անպաշտօն շրջաններուն մէջ: Իր անկաշկանդ եւ պարզ կեցուածքով սկսել էր ժողովրդակա-
նութիւն ձեռք բերել թուրքերի եւ մեր ժողովրդի մէջ, ընտանի էր
բոլորովին եւ հանոյակատար, երբ իրեն դիմէին» (Վ. Փափազեան,
«Իմ Յուշերը» Բ. հատոր, էջ 19-21):

Սահմանադրութիւնը, ազատութիւն բերելով, հնարաւորու-
թիւն էր տուել հայ ժողովրդին դրսևորելու իր բնածին մշակութա-
յին ու շինարարական-ստեղծագործական ընդունակութիւնները՝ ու-
զեւորութեամբ ու նուիրումով ամէն տեղ: Արամը իր բնական տը-
նայնեւրով ամենայրամար դէմքն էր այդ պայմաններում՝ ազգային-
քաղաքական կեանքը ղեկավարելու: Ինչ որ նա անում էր Կարսում
չատ աննպաստ պայմաններում, նոյնը աւելի բնագործակ չափերով
ու լայն հեռանկարներով զլուխ էր բերում Վանում, ուր սահմանա-
դրութեան շնորհիւ ստեղծուած էին նպաստաւոր պայմաններ: Բայց
այդ ոչ թէ «պայմաններին յարմարուել» էր նշանակում, որովհետեւ
արդէն «յարմարուելու» պէտք չկար, քանի որ պայմանները շատ նը-
պաստաւոր էին (չմոռանանք, որ խօսքը վերաբերում է սահմանա-
դրութեան սկզբնական շրջանին) — այլ այդ նշանակում էր Արամի
համար այդ պայմաններն օգտագործել առաւելագոյն չափերով՝ են-
թարկուելով իր ներքին մղումներին:

Սահմանադրութեան առաջին օրերին, երբ քաղաքական-ազ-
դային հորիզոնը դեռեւս ազատ էր մտայլ ու չարագուշակ ամպերից,
Արամը իր գործունէութեամբ հրապարակ է գալիս ոչ թէ իբրեւ հայ
յեղափոխական, այլ իբրեւ երկրի ընդհանուր շահերով առաջնորդ-
ուող քաղաքական դէմք: Այդ են ապացուցանում թէ՛ Ռուբէնի հետ
վերը յիշած խօսակցութիւնը եւ թէ՛ Վ. Փափազեանի վկայութիւնը,
թէ Արամը «չէր քաշուում մտնել նաեւ թուրք պաշտօնական եւ ան-
պաշտօն շրջաններուն մէջ»: Մտնում էր այդ շրջանների մէջ իր դա-
դափարները տարածելու, միաժամանակ օգտակար լինելու համար:
Եւ այդ ամէնը Արամն անում էր «անկաշկանդ եւ պարզ կերպով»,
որ ասել է՝ բնական ու մատչելի-հասկանալի ձեւով էր մօտենում
մարդկանց, դրաւելով նրանց սրտերը:

Այս հանդամանքով էլ պէտք է բացատրել Արամի այն ժողո-
վրդականութիւնը, որը մատնանշում է Վ. Փափազեանը իր «Յուշե-
րում»: Եւ կրկիննք ու ընդզծենք, ժողովրդականութիւն ոչ միայն
հայի, (որ բնական ու հասկանալի պիտի համարել), այլեւ՝ թուրքե-
րի մէջ, որոնք դեռ մի քանի օր առաջ ծարաւ էին նրա արեան եւ
ընդհանրապէս թշնամական վերաբերմունք ունէին դէպի հայերը: Մի

բան, որ վկայում է Արամի քաղաքական հեռատեսութեան մասին:
Իր այդ անխտիր կեցուածքով Արամը ժողովրդի — հայ թէ թուրք
— աչքում մեծ համբաւ ունէր, միաժամանակ «յարգանք վայելելով
թուրք բարձրաստիճան գիւնուրականների և պաշտօնեաների կողմէ»:

Հ. Յ. Գաշնակցութեան ղեկավար ընկերներից — Սարգիս,
Կոմս, Իշխան — եւ ոչ մէկը ժողովրդին մօտենալու, իր հետ կապե-
լու եւ իր ազդեցութեան տակ առնելու այն ընդունակութիւնները չու-
նէր, որոնցով բնութիւնը շոտայրէն օժտել էր Արամին: Այդ պատ-
ճառով էլ նրանք, զիտակցելով, որ իրենք «այդպէս չեն», հրապա-
րակը թողել էին Արամին՝ «հիանալով նրա խանդավառ նուիրումի
վրայ»:

*
**

Թերեւս անտեղի չէ մեր նիւթի կասկածները մի քանի
խօսքով անդրադառնալ սահմանադրութեան ձգած տպաւորութեան
մասին Վասպուրականի հայ յեղափոխականների վրայ, ապա նրանց
մտածողութեան, վերաբերմունքի ու ակնկալութիւնների մասին՝
սահմանադրութեան բերած կարգերից:

Օսմանեան յեղափոխութիւնը (1908) ու նրա բերած սահմա-
նադրութիւնը կատարեալ անակնկալ էին ընդհանրապէս, եւ մասնա-
ւորապէս հայկական դաւառի դաշնակցական ղեկավար գործիչների
համար, որոնք միանդամայն անպատրաստ էին՝ որոշ վերբերմունք
ունենալու տեսակէտով դէպի քաղաքական այդ երեւոյթը: Այդ պատ-
ճառով էլ միատեսակ վերաբերմունք չկար դէպի սահմանադրութիւ-
նը. ոմանք թերահաւատ էին, չէին վստահում թուրքի անկեղծու-
թեան եւ զուլաջնում էին ծուղակի մէջ ընկնելուց: Կային նաեւ ու-
զեւորուող-խանդավառուողներ, ինչ որ՝ շատ հասկանալի էր. — ազա-
տութիւնը երկնքից իջած մի բարիք էր տասնեակ տարիների ընթաց-
քում անօրինակ դատան բռնութիւնների ենթակայ ժողովրդի համար:
Մանաւանդ, որ սահմանադրութեան բերած բարիքների անհերքելի
ապացոյցներ կային. հալածանքները դադարել էին, բանտերի դռնե-
րը բացուել էին եւ մահուան դատապարտութեան սպասող հայ յե-
ղափոխականները ոչ միայն ազատուած էին, այլեւ՝ մեծարանքի էին
արժանանում կառավարութեան կողմից:

Մարդիկ իրենց աչքերի առջեւ կատարուած նման փոփոխու-
նկատմամբ չէին կարող թերահաւատ լինել: Ազատութիւնը իրակա-
նութիւն էր, եւ նրա բերած բարիքներն անխառն ցնծութեամբ էր ըն-
դունում ժողովուրդը:

Կուսակցութեան ղեկավարութեան առջև զրուած էին բազմաթիւ հարցեր, որոնք պահանջում էին որոշ վերաբերմունք: Այդ հարցերը կրում էին կուսակցական եւ ազգային բնոյթ:

Այսպէս՝ ի՞նչ վերաբերմունք պէտք է ունենալ դէպի օսմանեան սահմանադրութիւնը, դէպի այդ սահմանադրութեան հեղինակները՝ Թուրք յեղափոխականները: Ի՞նչպէս պէտք է կառավարուէր հայ ժողովրդի ներքին կեանքը՝ վարչական, մշակութային, տնտեսական, դատական եւ այլն:

«Այս հարցերը մեր նեղ ու լայն շրջաններուն մէջ քննարկուեցան եւ եզրակացութիւնները հազարդուեցան Պոլսոյ Պատասխանատու Մարմինն, իսկ աւելի ուշ՝ Արեւմտեան Բիւրոյին:

«Եկած էինք այն համոզման, թէ Օսմանեան սահմանադրական շարժումը պէտք էր նկատել իբրեւ դրական երեւոյթ եւ միւս ազատական տարրերու հետ գործակցաբար պաշտպանել գայն: Առ այժմ խուսափել մասնաւորելու որեւէ ֆազաֆական կամ վարչական պահանջ: Ձանալ վերացնել հիմ ռեժիմին ֆաշայերած հոգային բռնագրաւումները: Պահանջ դնել զինաթափելու աւագակային եւ սուպատակ տարրերը կամ զինել խաղաղ ազգաբնակչութիւնը գիւղական միլիտներու կամ պահակախումբերու միջոցով: Ապահովել սահմանադրական օրէնքները՝ Թուրքիոյ բոլոր ազգերու իրաւումներու հաւասարութեան սկզբունքին հիման վրայ: Ապահովել մեր գործօմ մասնակցութիւնը երկրի վարչական եւ օրէնսդրական մարմիններու մէջ մեր թուի համեմատութեամբ» (Վ. Փափազեան, «Իմ Յուշերը», Բ. հատոր, էջ 24):

Այդ ամէնը պահանջում էր տեղական ղեկավար ընկերների հեռատես, շրջահայեաց գործունէութիւնը, որը մեկնակէտ ունենալով օսմանեան քաղաքացիների շահերը ընդհանրապէս, միաժամանակ չէր կարող աչքաթող անել եւ հայ ժողովրդի շահերը, որոնք մինչ սահմանադրութիւն արհամարհուած էին ըստ ամենայնի:

Այդ ամէնը՝ ընդհանրապէս ասած: Իսկ առօրեայ կեանքն իր պահանջներն ունէր, որոնք պէտք է յարմարուէին սահմանադրութեան ոգուն: Մի բան, որ դիւրին չէր մասնաւորապէս գաւառում, ուր պետական պաշտօնեաները, հին ռէժիմի մարդիկ լինելով, հոգեբանօրէն անկարող էին հաշտուել նոր ազատական պահանջների հետ եւ կեղծ վիճակում էին: Դաշնակցական գործիչների համար էլ հաճելի չէր դործ ունենալ պետական այդ պաշտօնեաների հետ, որոնք դեռ մօտ անցեալում ծարաւի էին իրենց արեան եւ որոնց անկեղծութեան, բնականաբար, չէին կարող վստահել այժմ, թէեւ սահ-

մանադրական կարգեր էին հաստատուել: Բայց վիճակը հարկադրում էր. ստեղծուած դրութիւնը պահանջում էր յարմարուել պայմաններին, որոնք անցեալի ժառանգութիւն էին եւ անցողական պիտի լինէին, եթէ... Եթէ Իթթիհատի կենտրոնը անկեղծ վերաբերմունք ունենար դէպի սահմանադրութիւնն ու նրա ստեղծած կարգերը:

Վանի դաշնակցական ղեկավար ընկերների մէջ Արամը թերեւս միակն էր, որ հասկանում էր կացութեան պահանջը եւ ըստ այնմ էլ պահում էր իրեն՝ իր յարաբերութիւնների մէջ Թուրք շրջապատի հետ: Նա կարծես մոռացութեան էր տուել որ ինք այդ շրջապատի ներկայացուցիչների ձեռքով էր դեռ մի քանի օր առաջ նախատինքներով ու շարժարանքներով բանտ առաջնորդուել, որ դրանք մասնաւորապէս հայ գաւառի կատարեալ պատուհաս են եղել եւ սահմանադրութեան հուշակումով մի օրից միւսը չէին կարող փոխուել եւ իրենց էութեամբ մնացել էին նոյնը՝ առ երես գայլի մորթը մի կողմ նետելով եւ գառան մորթ ուսերին առնելով:

Ի՞նչ էր զգում Արամը իր հոգու խորքում դէպի հայ ժողովրդի երէկուայ դահիճները, որոնք այժմ մեծարում էին նրան, իրբեւ ազատութեան հերոսի եւ որոնք չէին այդ ազատութեան շահերի տեսակէտից պէտք է որ զնդակահարուէին, — դժուար չէ հասկանալ: Ինչպէս նաեւ հասկանալի է, որ Արամը ունէր իր վարմունքների գիտակցութիւնը, որը պայմանաւորում էր թէ՛ իր ազգի եւ թէ՛ ընդհանրապէս պետութեան շահերի թելադրանքով:

Ի՞նչ սպասելիքներ ունէր Արամը օսմանեան սահմանադրութիւնից մասնաւորապէս հայ ժողովրդի համար:

Այդ հարցի պատասխանը գտնում ենք այն պահանջների մէջ, որ Արամը եւ իր կուսակցական ընկերները (Սարգիս, Կոմս, Իշխան) դրել էին Վան եկած Իթթիհատի ներկայացուցիչ Նաճիի առջև՝ նախապէս նրա հետ մի շարք տեսակցութիւններ ունենալուց յետոյ:

Ահա այդ պահանջները. —

1. — Արեւելեան նահանգներու ներկայացուցիչների համապումար:

2. — Պետական վարչական գործերու մէջ Իթթիհատի հետ նաեւ մեր վերահսկողութիւնը:

3. — Յատուկ խառն յանձնախումբի մը կազմութիւն՝ հողային հարցի կարգադրութեան համար:

4. — Զինաթափում աւարառու տարրերու, գիւղական պահակախումբերու կազմութիւն:

5.- Պարլամենտի ընտրութեան մէջ մեր քանակի համեմատութեամբ թեկնածուներ վանէն, էրդրումէն եւ Տարօնէն:

Թէ՛ Արամը եւ թէ՛ միւս ղեկավար ընկերներից շատերը սահմանադրութեան առաջին օրերին շատ յաւատու էին եւ մեծ յոյսեր էին կտորում ապագայի հետ: Այդ լատաստութիւնը մեծապէս պայմանաւորում էր Իթթիհատի ղեկավար անդամների վերաբերմունքով ղէպի հայկական հարցը եւ մասնաւորապէս ղէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը: Սակայն, հետագայ ղէպերը ցոյց տուին, որ Իթթիհատը իր վերաբերմունքի մէջ ղէպի հայերը անկեղծ չէր եղել...

Այս առթիւ պէտք է նկատել, որ դաշնակցական գործիչներից շատերը, մասնաւորապէս Փետրոսյանները, խմբակալները եւ բուն ժողովրդի մէջ ապրող գաւառական գործիչները նոյնպէս սկզբից ե՛ւ եթ թերահատատ վերաբերմունք էին ունեցել ղէպի Օսմանեան սահմանադրութիւնը եւ նրա հեղինակները: Մի բան, որ չի կարելի ասել Դաշնակցութեան մասին ընդհանրապէս:

Դժբախտաբար, իրաւացի դուրս եկան յոռետեսները: Որքան էլ վատատես, սակայն նրանց զլխով անգամ չէր անցնի, թէ թուրքերիտասարդ «յեղափոխականները»՝ Օսմանեան սահմանադրութեան հեղինակները լուրջակ էին անօրինակ բարբարոս վարմունքի, այն է՝ մի ամբողջ ժողովրդի ոչնչացման:

Օսմանեան խորհրդարանի երեսփոխանների ընտրութեան ժամանակ վանի կեդր. կոմիտէն առաջարկում է կոմսի՝ Վ. Փափազեանի թեկնածութիւնը, իբրեւ տեղացու, քանի որ օրէնքով խորհրդարանի անդամ կարող էր ընտրուել միայն տեղացին: Բայց կոմսը համաձայն չէր՝ գտնելով, որ իր «խառնուածքը բացարձակապէս անհամապատասխան է» նման պաշտօնի համար, «մանաւանդ, որ լեզուս ալ չգիտէ» եւ գտնում էր, որ այդ պաշտօնի համար իր տուեալներով ամենայնայնապէս մարդը Արամն էր: Սակայն, սա էլ կտրուկ կերպով հրաժարում էր՝ տեղացի չլինելով, ուրեմն՝ նաեւ իրաւունք չունենալով իր թեկնածութիւնը դնելու:

Հետագայում կոմսը, ցուով անդրադառնալով իր երեսփոխան ընտրուելու հարցին, կշտամբանքով վերջիցում է Արամի մերժումը:

«Այդ պարտականութեան (երեսփոխանի) մարդը Արամը կըրնար լինել: Ինչո՞ւ չընդունեց: Զէ՞ որ իր խառնուածքով, անկուսն,

համարձակ ու անկաշկանդ՝ յամառ պայքարող մըն էր, որ իր քերի լեզուով իսկ կրնար խորհրդարանի բեմէն որոտալ բոցավառ խօսքեր՝ ուղղուած պետութեան վարիչներուն, ներկայացուցչական արժանութիւնը վրայ բազմած բուրբ «երեւելիներուն», որոնցմէ շատերու ձեռքերը հաւանաբար մաքուր չէին հայերու արիւնէն ու արցունքէն»:

Երկուց, որ Արամը մերժեց ղնել իր թեկնածութիւնը՝ երեսփոխան ընտրուելու համար: Խորապէս համոզուած եմ, որ մերժման պատճառարանութիւնը (որ տեղացի չէր) ձեւական էր եւ, ինչպէս իրաւացիօրէն նկատում է Վ. Փափազեանը, այն հնարաւոր էր չեղօքացնել: Արամը պարզապէս էր մնալ բուն ժողովուրդի մէջ այն համոզումով, որ այդպէս աւելի օգտակար կը լինէր ժողովուրդին, քան խորհրդարանում նստած եւ «բոցաշունչ» ճառեր ասելով:

Քիչ առաջ անցնելով՝ յիշեցնեմ նոյնանման, բայց հայերիս համար շատ աւելի կարեւոր ղէպը: 1918ի Ապրիլին (7-8ին) Ալեքսանդրապոլում գումարուց, կարելի է ասել, համազային խորհուրդ, որը «1917ի Սեպտեմբերի Ազգային Խորհրդաժողովից յետոյ հայկական ամենապատասխանատու հաւաքոյթն էր, որ պէտք է որոշէր հայերի վարձագիծը պատերազմի եւ խաղաղութեան հարցում» (Ս. Վրացեան: «Հայաստանի Հանրապետութիւն», Ա. տպագրութիւն, էջ 81):

Այդ խորհրդաժողովին մասնակցում էին այն օրերի հայ կեանքի հասարակական պատասխանատու գրեթէ բոլոր գործիչները: Երեւանից հրաւիրուած էին Արամը եւ Երեւանի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչները: Թէեւ Ս. Վրացեանը, յիշատակելով այդ խորհրդաժողովին մասնակցողներին, առաջին տեղը դնում է Արամին, սակայն դա թիւրիմացութիւն է: Արամը այդ ժողովին չէր մասնակցում: Նա այն կարծիքին էր, որ իր ներկայութիւնը Երեւանում այն ճակատագրական օրերին աւելի կարեւոր էր քան Ալեքսանդրապոլի խորհրդաժողովում: Եւ չզնաց՝ հակառակ տեղական գործիչների պնդումներին: Գնացին ուրիշներ, որոնց թւում եւ ես:

Հետագայ ղէպերը արդարացրին Արամի վարմունքը Վանում: Եթէ նա Վանի հերոսական ինքնապաշտպանութեան օրերին Վանում չլինէր, այդ հերոսամարտը, ինչպէս ինձ թւում է, շատ բան կորցըրած կը լինէր:

Այդ հերոսամարտի բուն հեղինակը Իթթիհատի ղեկավարութիւնն էր իր վարած քաղաքականութեամբ հայ ժողովրդի նկատմամբ, — մի քաղաքականութիւն, որի նպատակն էր մեր ժողովրդի բնաջնջումը: Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութիւնը, Պոլսում թէ

հայկական դաւառում, դժբախտարար, շատ ուշ հասկացաւ ԻԹԹԻ-հատի վերաբերմունքի դաւադրական իմաստը դէպի հայ ժողովուրդը: Այդ ղեկավարութիւնը նկատում էր, որ ԻԹԹԻհատը, սահմանադրութեան «մեղրամիսն» անցնելուց յետոյ, աստիճանաբար փոխում էր իր վերաբերմունքը դէպի սահմանադրութիւնն ու նրա ստեղծած կապերը թէ՛ ընդհանրապէս եւ թէ՛ յատկապէս այն բոլոր դէպքերում, երբ հարցը վերաբերում էր հայերին:

ԻԹԹԻհատ-Դաշնակցութիւն յարաբերութիւնների ընթացքում Դաշնակցութեան ղեկավարները բազմաթիւ անգամներ բանաւոր ու գրաւոր բողոքներ էին ներկայացրել այդ առթիւ ԻԹԹԻհատի ղեկավարութեան՝ պահանջելով հաւատարիմ մնալ իր խոստումներին ու սահմանադրութեան կարգերին: Բայց ամէն անգամ էլ ԻԹԹԻհատը իր «պատճառարանուած» պատասխաններով յաջողել էր մերոնց գըլխի տակ փափուկ բարձ դնել: Ատանայի ջարդն էր, որ մի պահ ուշքի բերեց Դաշնակցութեան ղեկավարութիւնը՝ հարկադրելով նրան ԻԹԹԻհատականների հետ խօսել նրանց հասկանալի լեզուով, — խզեց իր յարաբերութիւնները ԻԹԹԻհատի հետ եւ սպառնաց հաւաքական հակաբեկման ենթարկել բոլոր պատասխանատուներին:

Դաշնակցութեան այդ վերաբերմունքը ունեցաւ իր ազդեցութիւնը: Ատանայի ջարդի հերոսները կախաղան հանուեցին, ապա ԻԹԹԻհատի կողմից հաւաստիացումներ եւ խոստումներ եղան, որ այլեւս նման դէպքեր տեղի չպիտի ունենան, որ յանցաւորները յետադիմականներն էին եւ այլն: Ընդառաջեցին Դաշնակցութեան պահանջներին եւ խախտուած յարաբերութիւնները վերականգնուեցին:

Սակայն, այդ ամէնը չուտով մոռացութեան տրուեց: ԻԹԹԻհատը գնալով հայ ժողովրդի վերաբերմամբ որդեգրում էր քաղաքականութեան մի ուղի, որն ակներեւորէն տանում էր դէպի Համիդեան կարգերը: Մի հանգամանք, որ կասկածի տեղիք չէր թողնում հայկական դաւառներում: Այդ այդպէս լինելով հանդերձ՝ ո՛չ ոքի գլխով կ'անցնէր, որ ԻԹԹԻհատի ղեկավարութիւնը ընդունակ էր յղանալու եւ իրագործելու հայ ամբողջ ժողովրդի ոչնչացումը ամենաբարբարոս եղանակով՝ գերազանցելով Կարմիր Սուլթանի չարագործութիւնները...

Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեան ձեռք առած բոլոր հնարաւոր միջոցները ուշքի բերելու ԻԹԹԻհատի ղեկավարութիւնը՝ անցան ապարդիւն: Իսկ երբ սկսուեց Առաջին Համաշխարհային պատերազմը, ԻԹԹԻհատը ժամանակը հասած համարեց իր նպատակի իրագործման՝ հայերի բնաջնջման համար: Հայերի, որոնք թերեւս

ամենախաղաղաւոր ու ամենահաւատարիմ հպատակներն էին Օսմանեան կայսրութեան մէջ եւ որոնց միակ յանցանքն այն էր, որ նախ՝ «Քաղաքակրթութեան գծով շատ աւելի առաջ գացած էին քուրճերի համեմատութեամբ» (Նաճիխ խօսքերն են) եւ ապա՝ պահանջում էին, որ ԻԹԹԻհատը հաւատարիմ մնայ իր յանձն առած պարտականութիւններին ու սահմանադրութեան, որով ստեղծուած կը լինէին մարդավարի ապրելու, աշխատելու, յառաջդիմելու պայմաններ Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակների համար:

**

Երբ Օսմանեան կառավարութիւնը ընդհանուր զորահաւաք յայտարարեց, Վասսուրականի հայութիւնը բարեխղճութեամբ եւ հաւատարմութեամբ կատարեց իր բոլոր պարտականութիւնները պետութեան հանդէպ՝ թէ՛ զինուոր տալով եւ թէ՛ բանակի մատակարարման համար անտրտունջ տալով ինչ որ կառավարութիւնը պահանջում էր՝ առանց կանխիկ վճարումի, յաճախ նոյնիսկ առանց ընկալագիրների: Եւ չնայած այդ հանդամանքին՝ թուրք կառավարութեան վերաբերմունքը դէպի հայ զինուորը ու քաղաքացին սկզբից ե՛լեթ եղաւ խտրական ու թշնամական: Բանակի կարիքները հոգալու պատրուակով բռնագրաւումներն աստիճանաբար այնպիսի չափերի հասան, որ ոչ մի կասկած չէր մնում, որ այդ միջոցով իշխանութիւնը որոշել էր տնտեսապէս սնանկացնել հայ զիւղն ու քաղաքը: Միւս կողմից՝ անտանելի ծանր կացութիւն էր ստեղծուել բանակի հայ զինուորի համար:

«Տարապայման ծառայութիւնը՝ հասցրած միմչեւ եգիպտական հիմ դարերը յիշեցնող ստրկական վիճակը, չարաշուք ծեծը, անդորմ բռնութիւնը եւ ամենափոքր կասկածով իսկ մահուան պատժի գործադրումը հայ զինուորի հանդէպ՝ անխուսափելի եւ բնական երբեւոյժ էր: Սովորական էր նաեւ ամենօրեայ ծագրի ու հայիոյաքի առարկայ դարձնել հայ զինուորի ցեղային պատիւը, լեզուն ու կրօնական հաւատալիքները» («Հայրենիք» ամսագիր, 1924 Ապրիլ, էջ 90, Օննիկ Մխիթարեան, «Վանայ ինքնապաշտպանութիւնը»):

Ռուս բանակի յաջողութիւնները Վասսուրականի արեւելեան սահմանների վրայ ողբերգական անգրադարձումներ ունեցան հայկական անպաշտպան զիւղերի վրայ, որոնք ենթարկուեցին կողոպուտի ու կոտորածի, իսկ սղատուածները տնաքանդ դարձած, մերկ ու անօթի ստիպուեցան ապաստան գտնել Վան քաղաքում:

Թուրք կառավարութեան այդ վարժունքը աստիճանաբար տա-
րածուած էր դէպի հայկական բոլոր դաւառները: Պարզ էր, որ նա-
խապէս կազմուած ծրագիր էր գործադրուած:

Թէ՛ Արամի եւ թէ՛ Վոսմեանի (որ Օսմանեան խորհրդարանի
անդամ էր եւ այդ օրերին գտնուած էր Վանում) համար հասկանալի
էր, թէ ինչի՞ հը ձգտուած կառավարութիւնը: Եւ նրանք անուած էին
հնարաւորը՝ առաջն առնելու համար պալիք ողբերգութեան:

Երբ Արամը տեղեկացաւ Թիֆլիսի հասարակական-կուսակցա-
կան մարմինների կամաւորական խմբեր կազմակերպելու մտադրու-
թեան մասին, սաստիկ ազդուեց: Այն ժամանակ, երբ ինքը, Վոսմե-
անի հետ համախորհուրդ, ամէն կերպ աշխատում էր հաւատ եւ
վստահութիւն ներշնչել Օսմանեան կառավարութեան դէպի հայկա-
կան դաւառների հաւատարմութիւնը, Թիֆլիսում նստած ընկերները
աշխատում էին հակառակ ուղղութեամբ... Արամը «քրքաւայ ժո-
ղովրդի համար կորստաբեր կը համարէր կամաւորական շարժում-
ներու կազմակերպութիւնը եւ մանաւանդ գործօն մասնակցութիւնը՝
ենթարկուելով ռուսական քանակին» (Վ. Փափազեան, «Իմ Յուշե-
րը», Բ. հատոր, էջ 289-295):

Արամի համար պարզ էր, որ կամաւորական շարժումը մի զէնք
էր լինելու Իթթիհատական կառավարութեան ձեռքին՝ արդարացնե-
լու համար իր թշնամական վերաբերմունքը դէպի հայերը: Ունենա-
լով այդ պիտակցութիւնը, Արամը, միշտ Վոսմեանի հետ միասին,
օգտագործում էր բոլոր միջոցները՝ ապացուցանելու համար Թուրք
կառավարութեան, որ Թիֆլիսում (Ռուսաստանում) տեղի ունեցած
հակատաճկական շարժումները ոչ մի կապ չունէին տաճկահայ բուն
ժողովրդի հետ, որը ըստ ամենայնի օրինակելի պարտաճանաչ էր իր
պետութեան հանդէպ՝ կատարելով պատերազմի հետ կապուած ամե-
նածանր պահանջները:

«Անհնարին է տալ Արամի եւ Վոսմեանի լայն ու մանրամասն
գործունէութեան ամբողջ պատկերը: Կարեւոր է ընդգծել միայն ա-
նոնց քաղաքական վարձագիծը թուրք կառավարութեան եւ հայ ժո-
ղովրդի փոխ-յարաբերութեան դժնդակ խնդրին մէջ: Արամ ու
Վոսմեան հարազատօրէն թարգման էին Հ. Յ. Դաշնակցութեան կա-
րիքի ժողովի որոշումներուն, որով հայութիւնը իր քաղաքացիական
մասնակցութիւնն ու աջակցութիւնը պէտք է բերէր Օսմանեան հայ-
րենիքին»:

Ու թէեւ նրանց ջանքերով եւ խորհուրդներով Վասպուրական-
նի հայութիւնը, ինչպէս յիշուեց, աւելի քան պարտաճանաչ գտնուեց

պետութեան հանդէպ, այնուամենայնիւ Թուրք կառավարութիւնը՝
չարունակեց իր հայահալած քաղաքականութիւնը:

«Արամը, որ ներկայացուցիչն էր Հ. Յ. Դաշնակցութեան, լի-
նելով միաժամանակ փաստական եւ անվիճելի առաջնորդը Վասպու-
րականի հայութեան, իր կորովի ջանքերով եւ յամառ ու իրատես
քաղաքականութեամբ փորձեց ամենէն անհնարին միջոցները՝ խան-
գարելու թրքական դաւադրութիւնը» («Հայրենիք», 1924 Ապրիլ,
էջ 97):

Սակայն, ապարդիւն, որովհետեւ ամէն ինչ կատարուած էր
ոչ թէ տեղական իշխանութեան նախաձեռնութեամբ, այլ Իթթիհատ-
տի կեդրոնից եկած հրահանգների համաձայն: Տեղական իշխանու-
թիւնը միայն գործադրում էր կեդրոնում նախապէս պատրաստուած
ծրագիրը՝ մէկ ամբողջ ժողովրդի փճացման ծրագիրը:

Ոչ միայն հայկական դաւառների գործիչները, այլեւ կենտ-
րոնի մեր ազդային պատասխանատու մարմինները, մէջն առնելով
նաև յեղափոխական կուսակցութիւնները, պաղափար չունէին Իթթի-
հատի այդ ծրագրի մասին:

Ինչպէս արդէն յիշուեց, դաւառների մեր ընկերներից շատերը
վստահութիւն չունէին ընդհանրապէս Թուրքի հանդէպ, իսկ ոմանք
նախատեսում էին նոր ջարդի հաւանականութիւն: Սակայն, հայ ժո-
ղովրդի ընդհանուր բնաջնջումը ոչ ոքի զլխով չէր անցնում: Անգամ
պատերազմը յայտարարուելուց եւ Իթթիհատի անբող թշնամական
վերաբերմունքից յետոյ էլ դէպի հայերը, Հ. Յ. Դաշնակցութեան
ղեկավարների շարագուշակ կասկածները այդքան հեռու չէին զը-
նում, թէեւ նրանք, մանաւանդ դաւառում, շատ յոռետես էին:

Առաջն առնելու համար Վասպուրականի մէջ ստեղծուած ծանր
կացութեան ծաւալման՝ Արամն ու Վոսմեանը որոշում են մի յիշա-
տակազիր ուղարկել ներքին գործոց նախարար Թալէաթ փաշային՝
ներկայացնելով ստեղծուած կացութեան պատկերը եւ նրա ծանր հե-
տեւանքները շրջանի համար, որոնք նոյնքան անբաղձալի էին պետու-
թեան շահերի տեսակէտով: Այդ յուշադիրը (ժածկազիր հեռագիր)
կազմում է Վոսմեանը, իբրև Օսմանեան խորհրդարանի անդամ:

«Վերջին անգամ էր, որ հայ տարաբախտ գործիչը յուսահատ
կոչ կ'ուզէր թուրք ջարդարար փաշային եւ անոր միջոցով թուրք
խելագար կառավարութեան ըմբռնել տալու համար վերջապէս հայ
եւ թուրք ժողովուրդներու իրական, ընդհանուր շահերը: Վոսմեան
համարձակօրէն կը ֆնէր շարիքը, ձեռքը կը դնէր թարախակալ վեր-
քի վրայ եւ ասպետօրէն կը մատնանշէր թէ այլեւս ներկայացած է

քերեւս վերջին պատեհուքիւնը դարբնելու վերջապէս հայ եւ քուրճ
ցեղերու եղբայրութիւնը եւ փոխադարձ շահերու գիտակցութիւնը:

«Առաջարկելով քանի մը համեստ պահանջներ՝ վաղուց ի վեր
ընդունուած իքթիհատական կառավարութեան կողմէ, բայց երբեք
չիրագործուած՝ վառմեան վերջին անգամ կը փորձէր շեղել տալ
Թուրքիան իր ծրագրած հայաստանի ոմիքէն» (Օննիկ Մխիթարեան,
«Վանի ինքնապաշտպանութիւնը», «Հայրենիք», 1924 Յունիս):

Այդ յուշագիրը որեւէ ուշադրութեան չարժանացաւ կենտրոն-
նական կառավարութեան կողմից: Ընդհակառակն՝ Վասպուրական-
նում շարագուշակ ղէպքերը սկսեցին զարգանալ աւելի լայն ծաւա-
լով: Կարծես ի հեճուկս Վասպուրականի դաշնակցական գործիչներին
նման վերաբերմունքի, իթթիհատի կենտրոնը Վանի կուսակալ ալ-
պանացի Մահմուտ փաշայի տեղ, որ բնաւորութեամբ մեղմ ու ղէ-
պի հայերը բարի ու լայնամիտ էր, նշանակեց ձեւտեթը, այդ հըռ-
չակաւոր դահիճ-ճիւղը, «որը, համաձայն վերէն ստացած հրա-
հանգի՝ կազմակերպեց իքթիհատի մասնաճիւղեր, «Բլուպներ», ա-
նոնց համար իբր անգամ ընտրելով «գարշեյի, կասկածելի եւ յետա-
դիմական ու մոլեռանդ տարրեր, ու անոնցմէ «երեւելիները» դրաւ
վարչական ղեկավարութեան գլուխ, իբրեւ «սահմանադրական ղեկա-
վարներ...» (Վ. Փափազեան, «Իմ Յուշերը, Բ. Հատոր, էջ 27-28):

Ձեւտեթ փաշան իր հետ Վան է բերում «2000 սուլիի հասնող
կանոնաւոր զօրամաս մը լեռնային եւ դաշտային քնդանօթներով»:
Այդ «դահիճ-ճիւղը», սակայն, արտակարգ սիրալիք վերաբերմունք
է ցոյց տալիս ղէպի իրեն ղիմաւորող Արամն ու Վոսմեանը՝ իր եւ
կառավարութեան անունից շնորհակալութիւն յայտնելով նրանց հաշ-
տարար եւ իմաստուն վարքագծի համար՝ դաւառներում պատահած
ղէպքերի ժամանակ: Ակնարկում է Ոստանի, Գաւաշի եւ Թիմարի ի-
րենց մարդկանց ձեռքով կազմակերպած արիւնալի ղէպքերին...

Սակայն, ձեւտեթը շուտով ցոյց է տալիս իր իսկական ղէմ-
քը, պահանջելով, որ Վասպուրականի հայ երիտասարդութիւնը,
18ից մինչեւ 45 տարեկան, անմիջապէս ներկայանայ՝ մտնելու հա-
մար թուրք բանակի մէջ, իրրեւ ամբաշէն բանուոր (ամալիա): Թէ՛
Արամն ու Վոսմեանը եւ թէ՛ ընդհանրապէս Վանի բոլոր հասարա-
կական գործիչները լաւ հասկանում էին թէ ի՞նչ միտք էր թագնուած
այդ պահանջի տակ: Գիտակցելով հանդերձ ձեւտեթի ոճրագործ մը-
տագրութիւնը՝ Արամը, Վոսմեանը եւ ազգային Առաջնորդարանը
ջանքեր են թափում համոզելու ձեւտեթն ու կենտրոնական կառա-
վարութիւնը, որ Վասպուրականի հայ երիտասարդութիւնը զինուո-

րագրուի իրապէս զինուոր, ինչպէս խլամ հպատակները, բայց ոչ
իրրեւ բանուոր: Բայց այդ գիմումը կտրուկ մերժուած է թէ՛ տե-
ղական եւ թէ՛ կենտրոնական իշխանութեան կողմից, որ պարզ ապա-
ցոյց էր դաւադիր նպասակի: Մերժուած է նաեւ երիտասարդութեան
գոնէ մի մասը փրկանքով (պէտէլ — 43 օսմ. հնչուն ոսկի) ազա-
տելու փորձը:

Ձեւտեթի հետ իրաւախօսութեան պալու մի փորձ եւս եղաւ,
այն է՝ փոխանակ հայ երիտասարդութիւնը ամբողջութեամբ ներկա-
յացնելու, մաս մաս տրամադրել իրրեւ բանուոր: Ձեւտեթը այդ ա-
ռաջարկը ընդունում է, պայմանով, որ շարաթը հինգ հարիւր երի-
տասարդ ներկայանան եւ անմիջապէս մեկնին սահմանամերձ վայ-
րերը: Երկու ամսուայ ընթացքում Վասպուրականի ամբողջ երիտա-
սարդութիւնը այդ ձեւով պիտի ներկայանար իշխանութեան:

**

1915ի Ապրիլի 1ին, Վան քաղաքում տեղի է ունենում մի ժո-
ղով, որին մասնակցում են քաղաքական կուսակցութիւնների (Հ. Յ.
Գաշնակցութիւն, Մահմ. Ռամկալար եւ Ս. Գ. Հնչակեան), Ազգա-
յին Մարմինների եւ Առաջնորդարանի ներկայացուցիչները, որը եւ
որոշում է ընդառաջել կառավարութեան պահանջին՝ տալով մաս մաս
ամալներ օսմանեան բանակին: Նոյն ժողովը ընտրում է մի մասնա-
խումբ, որի վրայ պարտականութիւն է դրուած սկսելու 18-45 տա-
րեկանների ցուցակագրութիւնը:

Ոչ միայն շատ բնորոշ, այլ եւ վերին աստիճանի յուզիչ է
Վանի երիտասարդութեան վերաբերմունքը թէ՛ ղէպի կառավարու-
թեան անօրինակ ու անպատկառ այդ պահանջը եւ թէ՛ ղէպի հայ հա-
սարակական մարմինների վերաբերմունքը կառավարութեան պահան-
ջի նկատմամբ: Այդ երիտասարդութիւնը յանձինս իր ներկայացու-
ցիչների բացարձակապէս ղէմ է արտայայտուած կառավարութեան
պահանջին, ո՛չ միայն վստահութիւն չունենալով նրա հանդէպ եւ խո-
րապէս համոզուած լինելով, որ այդ ձեւով զինուորագրուած երի-
տասարդութիւնը կորուստի է ենթարկուելու, ուստի գերադասում է
մերժել կառավարութեան պահանջը եւ պատրաստուել ինքնապաշտ-
պանութեան համար: Միաժամանակ խստորէն քննադատում է Արա-
մի եւ Վոսմեանի ղզուշաւոր եւ «պահպանողական» քաղաքականու-
թիւնը՝ յիշեցնելով նրանց անցեալ նոյնանման քաղաքականութեան
փորձերը, որոնց հետեւանքով զոհ գացին հարիւրաւոր երիտա-

սարգներ (1896ին) և հսկայական քանակութեամբ ուղղամթերք (1908ին) :

Այդ երիտասարդութեան պահանջով գումարուած սեղմ ժողովում, ուր պատասխանատուութեան էին կանչուած կուսակցութեան ղեկավար ընկերները, Վոսմեանը բացատրութիւն է տալիս իր և իր ընկերների վրայ ծանրացած մեղադրանքների առթիւ :

Այդ ժողովը տեղի է ունենում 1915ի Ապրիլ 2ին :

«Բացատրութեան կոչուած էին Վոսմեանը, Արամը եւ Իշխանը : Արամը լուռ մնաց ամբողջ ժողովի ընթացքին : Իշխանը բաւականացաւ քանի մը յորդորներով միայն, իսկ Վոսմեանը մարգարէական շունչով եւ իրեն յատուկ անխռով ոգիով, ի միջի այլոց, ըսաւ հետեւեալ խօսքերը, որոնք կը յատկանշեն ոչ միայն այն օրերու արտակարգ անձկութիւնը այլեւ իրեն՝ Վոսմեանի՝ գաղափարական ամբողջ վեհութիւնը» :

«Վանի Ինքնապաշտպանութեան» պատմութեան հեղինակը՝ Օննիկ Մխիթարեանը որ ներկայ էր եղել այդ ժողովին, իբրեւ բողոքող երիտասարդներից մէկը, Վոսմեանի այդ բացատրութիւնը զրի էր առել իր յուշատետրում նոյն օրն իսկ :

Իերենք մի կտոր Վոսմեանի խօսքից, որը իր կարապի երզն էր լինելու : Այդ խօսքը վկայում է հոգեկան այն ծանր ապրումների ու պատասխանատուութեան մասին, որ կապարի պէս ծանրացել էր կուսակցական ղեկավար ընկերների ուսերին այդ ահաւոր օրերին :

«Ինչ որ կը խօսիք կառավարութեան դաւադրութեան մասին : Այո՛, ես գիտեմ, որ օր մը իմ դիակը փռուած պիտի մնայ Այգեստանէն-Ֆաղափ տանող նամբուն վրայ : Գիտեմ, որ օր մըն ալ չպիտի վերադառնամ ես ձեր հով : Գիտեմ, որ քաղաքը պաշարուած է արդէն եւ օր մը քնդանօքներով պիտի քանդուեն այս գեղեցիկ շէնքը (նորակառոյց «Աշխատանքի տուն»ը), ուր հաւաքուած էք դուք ժողովի եւ պիտի կոտորեն ձեզ : Գիտեմ, որ այս հինգ հարիւր ամալները, գործունէ խոստացել ենք տալ առաջին առթիւ, դէպի անստոյգ ապագայ մը, քերես ու դէպի մահ կ'առաջնորդենք : Բայց... մենք չպիտի սկըսենք, մենք չպիտի տանք ազգանշանը, որովհետեւ մենք ապստամբներ չենք, եւ ապստամբութիւնը ինքնին բաւական է՝ ամբողջ Հայկական Բարձրաւանդակը գերեզմանի վերածելու : Եւ, վերջապէս, մենք համոզուած ենք ձեզ հետ, որ հակառակ մեր բոլոր գիշումներուն ու խաղաղասիրական ձգտումներուն՝ օր մը ահարկու փոթորիկը պիտի պայթի մեր գլխուն : Այդ օրերը մտնեցա՞մ եմ... Բայց մեր ամբողջ նպատակն է թիչ զոհերով ազատիլ այս վիթխարի հարու-

ծէն... Թո՛ղ Վոսմեան մը չըլլայ, բո՛ղ Իշխան մը սպանուի, բող 500 ամալներ անստոյգ կամ անխուսափելի մահուան ենթարկուին, բո՛ղ ամբողջ գաւառ մը նայնիսկ հուրի ու սրի տակ ոչնչանայ... Բայց բո՛ղ փրկուի մեծամասնութիւնը, բող կարեւոր նպատակով հայութիւնը իբրեւ ազգային հաւաքականութիւն... Միայն վերջին բող պիտի երբ այլեւս ոչ մէկ նամբայ կը մնայ եւ թշնամի սուրը կ'երկարի ամբողջ ազգի սարսնոցին առ հասարակ, այն ատեն ոչ ոք պիտի մեղադրէ ձեզ, եթէ դուք եւս դիմէք ձեր առաջարկած ինքնապաշտպանութեան զենքին եւ պաշտպանէք ինքզինքնիդ եւ ձեր ազգութիւնը...»

Վոսմեանի խօսքը, որ ասուած էր իր և իր ընկերների անունից, ունեցաւ այն ազդեցութիւնը, որ երիտասարդութիւնը շարունակեց լռայալ մնալ և «փարիլ ցեղի հաւաքական գաղափարին՝ անձնագոհութեան անկասկածով» («Հայրենիք», 1924 Յունիս, էջ 92) :

Վոսմեանի մարդարէութիւնը իրականացաւ ամենից առաջ իր և Իշխանի նկատմամբ : Այդ ժողովից ընդամէնը մի օր անց Իշխանը դաւադրօրէն սպանուեց «Իր զինուորների ճանապարհին», իսկ երկու օր անց՝ Վոսմեանը ձերբակալուեց ու անհետ չքացաւ...

**

Վանի քաղաքական-հասարակական-ազգային դործիչները, ձեր օրերի հոգեբանութեամբ, թերեւս այլեւս անմիտ զինուորներ անելով կառավարութեան դատան պահանջներին, հեռուոր յոյս ունէին իրենց անվերապահ հաւատարմութեամբ ազդելու նրա վրայ, որ իր վերաբերմունքը չէր մի որոշ աստիճան մեղմէր : Սակայն, չարաչար վրիպեցին : Ճիշդ դուրս եկաւ երիտասարդութիւնը իր պահանջների մէջ, որոնց իրագործումով թերեւս խնայուած լինէին Վոսմեանի, Իշխանի և շատերի կեանքերը :

Արդէն այդ օրերին Վասպուրականում տեղի ունեցող անցուղարձը կասկած չէր թողնում կառավարութեան դաւադիր նպատակների մասին : Վան քաղաքը սպառազինուած՝ պաշարուած էր : Բազմաճակատից քաղաք էին բերուած 2000 կանոնաւոր զինուորներ : Բացի այդ քաղաքը լեփ լեցուն էր շրջաններից կանչուած քուրդ հեծեալ և հետիոտն հրոսակախմբերով և աշիրէթներով : Տեղական կառավարութիւնը գէնք ու ուղղամթերք բաշխած էր քաղաքի և արուարձանների թուրք ազգաբնակիցներին : Քաղաքի զանազան կէտերում տեղաւորուած թնդանօթների թիւը հասնում էր 12ի :

Տեղական կառավարութիւնը արտակարգ զինուորական պատ-
րաստութիւններ էր տեսնում նաեւ դաւաճաններում: Թէեւ երթեւեկու-
թիւնը խիստ հսկողութեան տակ էր առնուած, այնուամենայնիւ այլ
և այլ խողովակներով կուսակցական մարմիններից ու ընկերներից
վանում ստացուած տեղեկութիւնները շարազուշակ վկայութիւններ
էին մօտահաս անխուսափելի փոթորիկի:

Եւ իսկապէս, Մարտի (1915) վերջերից զանազան շինճու եւ
փուչ պատճառներով սկսում են ձերբակալութիւններ այստեղ եւ
այնտեղ: Չեն խնայում նաեւ դաշնակցական գործիչները:

Արամի եւ Վոսմեանի ձեւտեթ փաշային արած դիմումները
որեւէ հետեւանք չեն տալիս: Կուսակալը նրանց հանգստացնում է
հաւտացնելով, որ ինքը անտեղեակ է պատահած դէպքերին, որ բան-
տարկեալները թերեւ հարցաքննութիւնից յետոյ ազատ պիտի ար-
ձակուին: Սակայն, քաղաքում լուրեր էին հասնում Շատախի ընդ-
հարումների մասին: Այդ լուրերը ճշդում էին պետական աղբիւրից:

Կուսակալը այդ առթիւ Արամին եւ Վոսմեանին իր մօտ է
հրաւիրում եւ խնդրում, որ նրանցից մէկն ու մէկը ոստիկանների
ուղեկցութեամբ մեկնի Շատախ՝ խողովութիւններին վերջ տալու հա-
մար: Կուսակալը խնդրում է, որ Իշխանը մեկնի, քանի որ նա չըր-
ջանում քուրդերի եւ հայերի մէջ մեծ համարում ունի: Մերոնք,
կարճ խորհրդակցութիւնից յետոյ, որոշում են, որ Իշխանը մեկնի
Շատախ: Իշխանը իր հետ առնում է երեք երիտասարդ մարտիկներ,
որոնք «կատաղի հակառակորդներ» էին Արամի եւ Վոսմեանի զի-
ջումների քաղաքականութեան եւ որոնց Իշխանը մեծ դժուարու-
թեամբ է համոզում միանալ իրեն: Դրանցից մէկը՝ Վահան Խոան-
եան ընկերներից բաժանւում է այս խօսքերով.

«Այս անգամ ալ մեզ խաբեցին: Մենք կ'երթանք մեռնելու՝
ի գուր տեղ, բայց դուք այլեւս չխաբուիք...»

Այս տխուր անցուղարձի պատմութիւնն անող Օննիկ Մխիթար-
եանը իր կողմից կցում է.

«Սակայն, Իշխանի մեկնումը այդ օրերին ունէր իր անոգոք
երկաթեայ եւ անհերքելի պատճառաբանութիւնը: Սկսուած գիջում-
ների քաղաքականութիւնը պէտք է տանէր մինչեւ վերջին կէտը: Ա-
ւելի մեծ շահի՝ հանուր ցեղի գոյութիւնն ապահովելու համար՝
պէտք էր գոհարբել Իշխանը ե՛ւ երեք քանկագին մարտիկներ: Ան-
հրաժեշտ էր նորէն ու նորէն գիջել կառավարութեան եւ բարարել
զայն» (Անդ, էջ 97):

Եթէ ի նկատի ունենանք, որ այդ տողերի հեղինակը գիջում-

ների քաղաքականութեան «հակառակորդներից» էր եւ այնուամե-
նայնիւ արդարացնում էր մեծ ընկերների այդ քաղաքականութիւնը,
նշանակում է, որ ստեղծուած կացութեան պահանջն այդ էր, —
միակ միջոցը կառավարութեան վրայ ազդելու եւ դալիք դժբախտու-
թեան առաջն առնելու:

Սակայն, կառավարութիւնը չտեսնել էր ձեւանում ու առ ոչինչ
համարում հայ ժողովրդի այդ վերաբերմունքը եւ նորանոր առիթ-
ներ ստեղծում՝ այդ ժողովուրդը յուսահատութեան մատնելու եւ ի-
րեն՝ թուրք կառավարութեան՝ բացարձակ թշնամի համարելու...

Իշխանի Շատախ մեկնելու հետեւեալ օրը (Ապրիլ 4ին) ձեւ-
տեթը իր մօտ է հրաւիրում Վոսմեանին եւ Արամին: Վոսմեանը,
ըստ սովորականի, ընդունում է կուսակալի հրաւերը, բայց նախ քան
նրա մօտ գնալը, երկու տող է գրում Արամին՝ յայտնելով իր գնա-
լու մասին եւ միաժամանակ զրուշացնելով, որ եթէ Արամն էլ հրա-
ւիրուի, անզրուցութիւն չունենայ գնալու: Նախապէս պայմանաւոր-
ուած էին միասին ձերբակալուելու եւ մէկն ու մէկը ազատ մնալու
համար՝ միասին չներկայանալ կուսակալին:

«Բայց այդ պայմանը յաճախ դժուարութեամբ կը յարգուէր
երկուստեք, մամաւանդ Արամի կողմից, որ ջոպիճ հետաքրքրու-
թեամբ կը հետեւէր բոլոր դէպքերուն եւ առհասարակ անզրոյշ էր
դէպի իր սեփական կեանքը: Արամի բնաւորութեան այդ գիծը նկա-
տելով, ինչպէս նաեւ կանխագայով իր ընդմիշտ հեռանալը, Վոսմե-
անը գրեց այդ երկտողը, որ Արամի կեանքի եւ Վանի ինքնապաշտ-
պանութեան համար անկատարական նշանակութիւն ունեցաւ»
(Անդ, էջ 97):

Այդպիսով, Արամը պատահականօրէն ազատուած է ձերբակա-
լութիւնից: Եթէ չլինէր Վոսմեանի երկտողը, նա եւս ընդունելու էր
կուսակալի հրաւերը եւ ընկնելու էր ծուղակի մէջ:

Վոսմեանին կուսակալը վար է դնում՝ յայտնելով, որ կենտ-
րոնական կառավարութեան կարգադրութեամբ նրան անմիջապէս պի-
տի ուղարկի Պոլիս: Այնուհետեւ մի երկու անգամ փորձեր է անում
Արամին եւս իր մօտ տանելու, բայց Արամը խոյս է տալիս: Արամը
արդէն գիտէր Վոսմեանի ձերբակալութեան մասին եւ լուրեր էին
հասել իրեն, որ Իշխանն իր երեք ընկերներով զոհ է գնացել իշխա-
նութեան դաւադրութեան:

Արամի համար այլեւս պարզ էր, որ հասել է Վոսմեանի մատ-
նանշած այն վերջին բոպէն, երբ այլեւս ոչ մէկ ճամբայ կը մնայ լե-
զու գտնելու կառավարութեան հետ եւ Վանի ժողովուրդը ընդհա-

նուր կոտորածից փրկելու համար մի միջոց է մնացել միայն՝ ինքնապաշտպանութիւն :

Առ երես չխցելով իր կապը կառավարութեան հետ, եթէ ոչ անմիջապէս, զէթ կողմնակի ճանապարհով, Արամը հրահանգում է ժողովրդական և կուսակցական ուժերին պատրաստ լինել «ամէն մէկ դաւադրական ու անակնկալ յարձակման դէմ» : Միւս կողմից՝ ժամանակ վաստակելու համար՝ գիմում է իտալական հիւպատոսին, խնդրելով որ գիմէ կուսակալին՝ «տեղեկանալու համար վճարեմանի ձեռքակալման, իշխանի սպանութեան եւ քաղաքի պաշարողական դրուբեան դրդապատճառների մասին» (Անդ, էջ 99) :

Իտալական հիւպատոսին միանում են հայերի կողմից երկու հասարակական գործիչներ, ապա ամերիկեան միսիոնէր զոկտ. Ըչըրը :

Կուսակալը երկդիմի և խուսափողական պատասխաններ է տալիս և նորից ցանկութիւն է յայտնում տեսնուել Արամի հետ :

Արամն արդէն շատ բան էլ չէր սպասում կուսակալից : Իր հետն ունենալով բուլղարացի Գրիգորին՝ նա այժմ տենդորէն նուիրում է ինքնապաշտպանութեան կազմակերպման աշխատանքներին :

Ապրիլ 5ին Արամի ցանկութեամբ, գումարում է Աղզային Խառն ժողովրդ, որը քննելով ստեղծուած կացութիւնը՝ որոշում է մի վերջին անգամ էլ դիմել կուսակալին՝ միշտ ժամանակ չահելու մըտահողութեամբ :

Կուսակալը այս անգամ պատուիրակութեան հետ խօսում է շատ աւելի որոշ ու կտրուկ կերպով : Նա ոչ միայն մերժում է Վոսմեանին ազատ արձակել, այլ և պահանջում է որ 24 ժամուայ ընթացքում իրենց ղէնքերով յանձնուին Վանի բոլոր հայ երիտասարդները, 18-45 տարեկան : Այլապէս՝ նա սպառնում է քար ու քանդ առնել հայկական Այդեստանը : Անպատկառ լեզուով է խօսում հայ ժողովրդի մասին :

Պատուիրակութիւնը վերադառնում է կատարելապէս յուսահատ : Նրա անգամ զոկտ. Ըչըրը իր ղեկուցումը վերջացնում է այս խօսքերով .—

— Ես կը կարծեմ՝ ձեզի կը մնայ պաշտպանել ձեր կեանքը, վասն զի ամէն յոյս վերջացած է...

Արդէն բոլորի համար պարզ էր, որ իրապէս ամէն յոյս վերջացած էր, և վերջին օրերի յարաբերութիւնները կուսակալի հետ, ինչպէս յիշուեց, մի նպատակ ունէին՝ ժամանակ վաստակելու ինքնապաշտպանութեան գործի համար : Բոլորի համար արդէն պարզ

էր, որ ստեղծուած պայմաններում փրկութեան միակ յոյսը ինքնապաշտպանութիւնն էր :

Վանի հերոսամարտը հայ ազատագրական շարժման փայլուն էջերից մէկն է : Այն դարրնելու պատիւը մեր մօտ անցեալի պատմութիւնը վերապրում է Արամին :

Վանի հերոսամարտի պատմութիւնը, ինչպէս արդէն յիշել եմ, ամենայն մանրամասնութեամբ տուել է Օննիկ Մխիթարեանը իր «Վանի ինքնապաշտպանութիւն» աշխատութեան մէջ, որ ամբողջութեամբ լոյս տեսաւ «Հայրենիք» ամսապարտում, 1924-1925ին : (13 համարներում) : Իր այդ գործին կցած «Երկու խօսք»ի մէջ հեղինակը, ի միջի այլոց, գրում է .

«Ներկայ աշխատութիւնը ունի իր մասնաւոր, բայց շահեկան «պատմութիւն» : 1915ի Վանի Ապրիլեան կոիւնքուն ես ներկայ էի եւ մասնակից՝ իբրեւ Զինուորական խորհրդի քարտուղար : Կռուի նախօրեակին իսկ Արամի փափաքն էր, որ մեր ժողովրդի ապրած գերագոյն անձկութեան եւ վարած ահեղ գոյամարտի սարսափները, իբրեւ աւանդ ու քաջակերպ, հազորդուին յաջորդող սերունդին : Եւ Արամի հրահանգով, կռուի ամբողջ ընթացքին, ես կը կազմէի ամէնօրեայ դէպքերու մանրամասն արձանագրութիւնը՝ կցելով անոնց իմ անձնական յուշերը՝ իմ տպաւորութիւններով ու գնահատականներով : Վասպուրականի մեծ նահանջէն ետք, ինծի յաջողութեամբ հաւաքել Ապրիլեան կոիւնքուն բոլոր ձեռագիրները, կրկին ու կրկին խօսեցնել տալ կոիւնքուն անմիջական մասնակիցներ ու ղեկավարները եւ վաւերական ազդիւրներէն օգտուելով՝ մշակել Վանի հերոսամարտի ամբողջական եւ մանրամասն պատմութիւնը : Եւ, ամենէն աւելի, նորէն Արամն էր, որ օգնութեան հասաւ լնձ, վերջին անգամ ուղղելով այս աշխատութեան քերութիւնները, ընելով շարք մը կարեւոր լրացումներ եւ առաջաւի մը համեստութեամբ հարկադրելով, որ ջնջեմ իր հոյակապ անձին ու ղեկավարութեան յատկացում շքերը...»

Իսկ նոյն «Պօսք»ի մէջ քիչ վերջը գրում է .

«Այս աշխատութեան բացառիկ բախտաւորութիւնն է նաեւ այն, որ Վանի հերոսամարտի անման ղեկավար Արամի վերջնական վերաստուգման ենթարկուած է... Թոյլ եւ անգոր՝ պատկերելու վրսեմ դերն ու մեծութիւնը Արամի, եւ ներշնչուած Ապրիլեան շքեղ օրերու սրբազան յիշատակներով՝ այս համեստ աշխատութիւնս կը նուիրեմ Վանի հերոսամարտի դարբնողի ու ղեկավարի նուիրական անուան» («Հայրենիք», Ապրիլ 1924, էջ 87-88) :

1915 Ապրիլի 5ին Վասպուրականի Կ. Կոմիտէն դաւաոտի գործիչներէից ստացած նամակներէից տեղեկանում է թէ՛ Իշխանի կեանքի դէմ սարքուած դաւադրութեան մասին եւ թէ՛ դաւաոտ սկսուած կոտորածի մասին :

Այլևս հասկնալի էր, որ կոտորածի հերթը հասնելու էր նաեւ քաղաքին : Նոյն օրը հասարակական-կուսակցական մարմինների ներկայացուցիչները, քննութեան առնելով Վանի հայութեան համար ստեղծուած ծանր կացութիւնը եւ վարդապետ դէպքերը, որոնք կասկած չէին թողնում թէ թուրք կառավարութիւնը որոշել էր բնաջնջել Վանի հայութիւնը, որոշում է կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանութիւն՝ ընտրելով Վանի Հայ ինքնապաշտպանութեան Զինուորական Մարմին եւ այլ օժանդակ մարմիններ :

Քաղաքի ազգաբնակչութիւնը, սկզբից հեւ ի հեւ հետեւելով կառավարութեան եւ իր ներկայացուցիչների փոխյարաբերութիւններին, բանակցութիւններին ու կառավարութեան թշնամական վերաբերմունքին դէպի հայերը, նոյնպէս եկել էր այն համոզման, որ փրկութիւնը ինքնապաշտպանութեան մէջ է միայն :

Այդ հաւաքական դիտակցութեան թելադրանքով է, որ քաղաքի ազգաբնակչութիւնը՝ մեծ թէ փոքր, կին թէ տղամարդ, մի մարդու պէս իրենց ունեցած-չունեցածով յօժարակամ թիկունք է կանգնում ինքնապաշտպանութեան մարմիններին, որոնց ընդհանուր ղեկավարը Արամն էր :

«Զինուորական Մարմնի եւ անոր յարակից օրգաններու, ինչպէս նաեւ Վանի հերոսամարտի ամբողջ ծանրութիւնը եւ բարոյական դեկավարութիւնը, սակայն, բնակամօրէն, կ'իյնար Արամին վրայ, որ այն օրերուն, մասնաւորապէս Իշխանի եւ Վաւեանի կորուստէն ետք, կը մնար միակ ապաւէնն ու ընտրեալ առաջնորդը Վասպուրականի պայքարող հայութեան» («Հայրենիք», 1924 Յուլիս, էջ131) :

Այդ պայքարը սկսում է 1915ի Ապրիլի 6ին :

Օննիկ Մխիթարեանը օրինակներ է բերում Վանի օրհասական ինքնապաշտպանութեան պատմութիւնից՝ ցոյց տալու համար Արամի կատարած դերը թէ՛ ընդհանրապէս եւ թէ՛ մասնաւոր դէպքերում :

Այսպէս, երբ Արամը լուր է առնում, որ որեւէ զիրքում մարտիկները յուսահատօրէն ծանր վիճակում են, մոտանալով ղեկավարի հանգամանքը եւ աչքի առաջ ունենալով ստոյգ մահը, հասնում է այդ զիրքը, եւ իր երեւալն իսկ բաւական էր, որ կռուողները, մոտանալով մինչ այդ իրենց յուսահատական վիճակը, ողբերուէին,

նոր ուժ ու եռանդով լցուէին եւ կրկնակի քաջութեամբ շարունակէին դիմադրութիւնը :

Գաւառում տիրող սարսափներից խուսափելու յոյսով, հազարաւոր, աւելի քան 15 հազար, զաղթականութիւն է թափում քաղաք՝ իր հետ բերելով լքում ու յուսահատութիւն, ինչ որ ծանրապէս ազդում էր Այլևստանի պաշարուած հայութեան վրայ՝ վարակելով մինչեւ անդամ դիրքերում կուռող մարտիկներին : Գաղթականութիւնը իր հետ բերում էր նաեւ սովի ուրուականը, որովհետեւ Այդեստանը բաւականաչափ հաց ու սնունդ չունէր ոչ թէ դրսից եկող զաղթականութեան, այլ ներսի իր հարազատների, նոյնիսկ զիրքերում կռուողների համար :

«Եւ Այգեստանի հայութիւնն ու ինքնապաշտպանութեան դեկավարները պարտաւորուեցան այդ նոր, աւելի ահաւոր քշմամուն՝ սովին դիմադրելու... Եւ ինչպէս միշտ, այս գերագոյն պայքարի հոգին Արամն էր : Առանց տատանուելու եւ մէկ վայրկեան իսկ յուսահատուելու, ան իր հօրը ձեռքով կազմակերպեց պայքարը սովի ու անոր հետեւանքով ստեղծուած անխուսափելի լիւմի դէմ», — գրում է Օննիկ Մխիթարեանը, ապա մանրամասն պատմում է ձեռնարկուած միջոցների մասին, միշտ Արամի ղեկավարութեամբ՝ սովի առաջը առնելու համար («Հայրենիք», 1925 Նոյեմբեր, էջ 95-96) :

Այդպէս էր Արամը Վանի պաշարման եւ ինքնապաշտպանութեան տեւողութեան ամբողջ ընթացքին :

Պայքարը տեւեց Ապրիլ 6ից մինչեւ Մայիս 3ը, երբ կուսակալ ձեւտեթը իւրայիններով թողեց քաղաքը եւ բռնեց փախուստի ճամբան՝ ազատելու համար իր գլուխը արդէն Վասպուրականի սահմանները ոտք դրած հայ կամաւորական խմբերի վրէժխնդրութիւնից :

Մայիս 3ից մինչեւ 5ը, երբ Վան է մտնում հայ կամաւորական հեծելադուռը դաշնակցական ինչոյի առաջնորդութեամբ, քաղաքի ժողովուրդը մնացել էր իր կամքին՝ Արամի գլխաւորութեամբ : Այդ երեք օրուայ ընթացքում կրակի (ոչնչացման) է ենթարկում այն ամէնը, ինչ որ պատկանում էր թշնամուն, — թրքական ամբողջութիւնները, զօրանոցները, ոստիկանատները, կառավարչատունը, զիրքերը : Հրդեհում է նաեւ թրքական թաղը, նախապէս գրաւելէ յետոյ այնտեղ եղած ուտելիքի պաշարը, Վանում ապաստան գտած տասնեակ հազարաւոր զաղթականութիւնը կերակրելու համար :

Մայիս 6ին ուսական բանակը զօրավար Նիկողայեւի գլխաւորութեամբ մտնում է Վան, երբ թշնամու հետք իսկ չկար այնտեղ : Հայ ժողովուրդը խանդալառ ցոյցերով եւ ողջոյններով ընդառաջում

է նրան: Զօրավարը հետադրով հետեւեալ զեկուցումն է ուղարկում
նուս գորարանակի հրամանատարին:—

«Շնորհիւ գիտուած հայ ժողովուրդի և ղեկավարութեամբ ուս-
սահպատակ Արամի, վանք մէկ ամիս պաշտպանութեամբ եւ երեք օր
առաջ միայն հայերը գերակշռեցին ու բուրքերը սկսան նահանջել:
Քաղաքը այրուած է: Ազատ են մնացել քանի մը հայաբնակ քաղեր
եւ ուսական հիւպատոսարանը: Հայերը յանձնեցին բերդի բանալի-
ները: Ժողովուրդը եւ վանի պաշտպանները, եպիսկոպոսի եւ հոգե-
ւորականների առաջնորդութեամբ, կազմակերպեցին հանդիսաւոր
ցոյցեր» («Հայրենիք», 1925 Մայիս, էջ 86):

Զօրավար Նիկոլայեւի առաջարկութեան հիման վրայ ուս-
արանակի հրամանատարութիւնը Արամին նշանակեց վանի ժամանա-
կաւոր նահանգապետ:

Մայիս 8ին Արամը, իբրև վանի կառավարիչ, հետեւեալ կո-
չը ուղղեց ժողովրդին.

«Հայ ժողովուրդ,

«Քաղաքացիներ,

«Ռուս յաղթական բանակին առաջխաղացումը նոր դարագլուխ
եւ իրաւակարգ կը բանայ մեր քաղաքի եւ գաւառի իրաւագուրկ ժո-
ղովուրդի համար: Դարերի ստրկութեան եւ քաղաքական ճնշումնե-
րու վախճանն է, որ մենք կ'ապրինք այս օրերին: Հայ ժողովրդի շի-
նարար եւ ստեղծագործ ոգիի ծնունդն է, որ մենք կը տօնենք այժմ:

«Ռուս զօրքերու հրամանատարը, գեներալ Նիկոլայեւ, գնա-
հատելով վասպուրականի հայ ժողովրդի հերոսական ջանքերը՝
բուրք կառավարութիւնը անգոր դարձնելու իր ազգասպան քաղաքա-
կանութեան մէջ եւ հաւանելով հայ ժողովրդի կուլտուրական ճշգ-
տումները, բարեհանցաւ 7 Մայիսի 1915, թիւ 16 մասնաւոր հրա-
մանով ինձ նշանակել քաղաքի եւ շրջանի կառավարիչ եւ կազմակեր-
պել նոր վարչութիւն իր բոլոր նիւղերով:

«Այսօր արդէն կազմակերպութեան ոստիկանական, դատական,
գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքականացեալ եւ այլ
վարչութիւններ:

«Ասով կը յայտարարեմ ամբողջ ժողովրդին, որ նոր կառա-
վարութիւնը կազմակերպուած ըլլալով՝ անհրաժեշտ է բոլոր գոր-
ծերու համար ղիմել նոր կառավարութեան յանձնախումբերուն, քա-
ղաքի եւ շրջանի մէջ բնականոն վիճակ ստեղծելու համար:

«Ներկայ պատմական պատասխանատու օրերու մէջ հայ ժողո-
վուրդը միայն մէկ նշանաբան պէտք է ունենայ՝ համախմբուել ամ-

բողջ եռանդով կառավարութեան շուրջ՝ վերակազմակերպելու հա-
մար կեանքը քաղաքի եւ շրջանի մէջ, արժանի լինելու համար քա-
ղաքը դարձ աւելի մղուած պայքարի մէջ ընկած հերոսներու յոյսե-
րուն ու յիշատակին եւ միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլ-
տուրական պաշտօնի գիտակցութիւնը փոքր Ասիոյ այս ծայրագաւա-
ռի մէջ:

«Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցու-
թեամբ էր, որ հայ ժողովրդի եւ իմ հանդէպ ցոյց տուաւ այդ մեծ
վստահութիւնը:

«Քաղաքացիներ, սեպ կը մնայ մեր այս յաւակնութեանց եւ
յոյսերուն ընդ առաջ գացող յաղթական բանակի եւ գեներալի վըս-
տահութիւնը բացարձակապէս արդարացնել եւ աւելի լաւագոյնին
արժանի եւ պատրաստ գտնուիլ:

«Վանի շրջանի կառավարիչ
ԱՐԱՄ

«1915, Մայիս 8, Վան-Այդևտան»

(«Հայրենիք», 1925 Մայիս, էջ 87-88):

**

Ստանալով վանի շրջանի կառավարիչի պաշտօնը՝ Արամը
վայրկեան անգամ չի կորցնում ևւ անցնում է գործի: Մայիս 7ին նը-
շանակուելով քաղաքի եւ շրջանի կառավարիչ՝ նա յաջորդ օրուանից
սկսում է իր նոր պաշտօնի կատարելութեամբ աշխատանքները: Իր
վերը բերած կոչի մէջ, ինչպէս տեսանք, յայտնում է ի գիտութիւն
քաղաքացիների:

«Այսօր արդէն կազմակերպութեան ոստիկանական, դատական,
գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքականացեալ եւ այլ
վարչութիւններ»:

Արամը վանում առաջին անգամ հանդէս է դալիս իբրև պե-
տական գործիչ ևւ ցոյց է տալիս մեծ շնորհք:

«Ընդամենը մի քանի օրուայ մէջ Արամը կրցաւ ոչնչէն, քառ-
սէն ու աւերածութենէն, բառի իրական ու լայն առումով, ժողովրդ-
դական-վերաշինական կառավարութիւն մը ստեղծել, ստեղծագոր-
ծական աշխատանքի լծել վանեցի, գաւառացի քե կովկասահայ բո-
լոր կենսունակ ուժերը», վկայում է այդ աշխատանքների ականա-
տես ու մասնակից Օննիկ Միխիթարեան (Անդ):

Յիշատակենք կառավարական այն հաստատութիւնները, որ
Արամը կազմեց վանում առաջին իսկ օրերում:

1.— Նահանգային Վարչութիւն, որ Վասպուրականի գլխաւոր դործադիր մարմինն էր եւ որը գլխաւորում էր Արամը՝ օղնական ունենալով Սիրական Տիգրանեանին:

2.— Տնտեսական Մարմին:

3.— Քաղաքական Վարչութիւն:

4.— Կրթական Տեսչութիւն:

5.— Երկրագործական Մարմին:

6.— Առողջապահական Մարմին:

7.— Առևտրական Մարմին:

8.— Ոստիկանական Տեսչութիւն:

9.— Դատական Մարմին:

Արամի ջանքերով կազմակերպուեցան նաեւ հետեւեալ գաւառները, իբրեւ առանձին գաւառապետութիւններ.— Ծատախ, Գաւաչ, Արճէշ, Ալճաւուզ, Հայոց Զոր, Արտամէտ, Ծահպաղի, Ալիւր, Ծանիկ (Թիմար), Արճակ, Մոկս, Նորդուզ:

Ազատագրուած Վասպուրականի Հայութեան Համար սկսուում էր մի նոր կեանք՝ լուսաւոր ապագայի հեռանկարներով: Այդ գիտակցութեամբ ազգաբնակչութեան բոլոր խաւերը իրենց աշխատունակ ուժերը տրամադրեցին նոր ու հարազատ կառավարութեան, որի հետեւանքով երկրի ու ժողովրդի կեանքի բոլոր ասպարէզներում առաջ եկաւ մի աննախընթաց առաջադիմական-ստեղծագործական շարժում:

«Այս բոլոր ստեղծագործական նիւթերու, վերածնութեան նոր շրջանի եւ հայկական առաջին փոքրիկ կառավարութեան ոգին ու յենարանը, ինչպէս միշտ, Հ. Յ. Դաշնակցութիւնն էր՝ իր կենտրոնական եւ գաւառական մարմիններով, իր լայն կազմակերպած գանգուածներով, իր անձնուրաց հարիւրաւոր գործիչներով եւ իր արժանաւոր ղեկավար Արամով» («Հայրենիք», 1925 Մայիս, էջ 93):

Այդ ամէնը, դժբախտաբար, երկար չտևեց, ընդամէնը 70 օր...

Ռուս միապետական կառավարութեան դաւադիր քաղաքականութեան հետեւանքով՝ Վասպուրականի Հայութիւնը հարկադրուեց ձգել իր հայրենիքը եւ գաղթել դէպի ռուսական սահմանները: Ռուս բանակի հրամանատարութիւնը անգթօրէն մերժեց Արամի կառավարութեան եւ Հայ կամաւորական զնդերի հրամանատարութեան դիմումը՝ թոյլ տալ, որ կամաւորները մնան Վան ժողովրդի հետ միասին եւ հարկ եղած պարագային դիմադրեն թշնամուն: Անողորմ հը-

րամանը վերջնական էր, պէտք էր գաղթել...

Յարական կառավարութեան քաղաքականութեան մէջ դէպի հայերս սկսուում էր մի նոր շրջան: Նո՞ր: Ո՞չ, կարճատեւ ընդմիջումից յետոյ, երբ հայերի աջակցութիւնը հարկաւոր էր ռուսական զէնքի յաջողութեան համար, այժմ, այլեւս կառավարութիւնը դառնում էր կրկին դէպի իր հին հակահայ քաղաքականութիւնը, սակայն աւելի լայն չափերով ու նենդ նպատակներով: Այն է, թուլացրնել հայութիւնը իր հայրենիքում ու տեղ պատրաստել ռուսների տեղաւորման համար...

Եւ Վասպուրականի երկու հարիւր հազարի հասնող հայութիւնը պոկուեց իր տեղից ու բռնեց գաղթի ճամբան...

Այսպիսով Վասպուրականի հայութիւնը տեղահան ու հողմահար եղաւ: «Քայց Արամը երբեք չդաւաճանեց նրան, մնաց նրա մէջ ու նրա հետ եւ գերմարդկային նիւթեր քափեց՝ մեղմացնելու համար նրա տառապանքը» (Ս. Վրացեան, «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան» էջ 446-467):

Այնուհետեւ (1916-1917) Արամը հաստատուում է Թիֆլիսում՝ կենդանի մասնակցութիւն բերելով Ազգային Բիւրոյի եւ Հ. Յ. Դաշնակցութեան Բարձրագոյն Մարմնի (Բիւրոյի) աշխատանքներին: Սակայն, նա այստեղ էլ առաւելապէս զբաղւում է Վասպուրականի եւ այլ վայրերի գաղթականների դործերով: Այդ աշխատանքները մի պահ ընդհատուում են ծանր հիւանդութեան հետեւանքով: Ընկերների ստիպմամբ նա զնուում է դարմանուելու Սաքիի (Ղրիմ) հանքային բուժարանում: Այստեղ Արամը, ընդառաջելով ընկերների ցանկութեան եւ ստիպումին, զրի է առնում իր յուշերը, որոնք, սակայն, մնում են անաւարտ եւ որոնք տարիներ յետոյ հրատարակուեցին «Հայրենիք» ամսագրում:

Թիֆլիս վերադառնալով՝ Արամը վերսկսում է ազգային-հասարակական իր դործունէութիւնը աւելի մեծ եռանդով՝ ապագայի նկատմամբ լաւատեսութիւն ներշնչող նոր պայմաններում: Թրքահայ զրաւուած վայրերում այժմ կազմուում էր նոր առանձին նահանգապետութիւն, եւ գաղթականները վերադառնում էին Երկիր: Այդ կարճատեւ շրջանում Արամը Արեւմտահայ եւ Ռուսահայ Ազգային ժողովներում ղեկավար դեր կատարողներից մէկն էր:

Գաղթը ծնունդ էր տուել բազմաթիւ հարցերի, որոնք այս կամ այն ձևով պէտք է լուծուէին: Անհրաժեշտ էր «նշդել փախըտականների քանակը եւ վայրերը, ուր ժամանակաւորապէս տեղաւորուած էին. ցուցակագրել օգտակար ուժերը, նշդել կարիքները ոչ

միայն սնունդի, այլև կրթական, տնտեսական, առողջապահական, անոնց իրաւական կացութիւնը, Կովկասի մէջ ուս կառավարութեան հետ բանակցութիւններ վարել փախստականների տեղաւարման եւ յարակից խնդիրներու համար» (Վ. Փափաղեան, «Իմ Յուշերը, Բ. հատոր, էջ 438) :

Արամը, Կոմսը, Արտակ Դարբինեանը (ուսմկավար) եւ Միրզանը (Տնչակեան) խորհրդակցելով՝ որոշում են հրաւիրել Արեւմտահայ համալուծար եւ նրա քննութեան ենթարկել վերոյիշեալ հարցերը: Համալուծարը հրաւիրում է Երեւանում, որի հանդիսաւոր բացումը 80 պատգամաւորների ներկայութեամբ կատարուեցաւ 1916ի Մայիս 1ին: Համալուծարին նախադասում էին Շանթը եւ Արամը:

«Արամը շատ գեղեցիկ նառով ողջունեց պատգամաւորները եւ վեր հանեց համալուծարի կեանական նշանակութիւնը» (Անդ, էջ 439) :

Համալուծարի աշխատանքները տեւում են տասը օր: Միաձայնութեամբ քուէարկում է մի բանաձեւ, որի կարեւոր կէտերն էին.

Ա.— Թրքահայ ժողովրդի Ֆիզիքական պահպանութիւնը:

Բ.— Հայրենիքի վերաշինութիւնը:

Գ.— Նոր սերնդի կրթական, Ֆիզիքական եւ քաղաքացիական դաստիարակութիւնը:

Այդ նպատակին հասնելու միջոցները.

1.— Տեղական կազմակերպութիւններ ստեղծել Երկրի եւ Ռուսաստանի մէջ, ուր ապաստան են գտել գաղթականները:

2.— Իրականացում արեւմտահայ եւ արեւելահայ զանգուածներու սերտ գործակցութեան:

3.— Օգնութեան գործի եւ նիւթական միջոցների կենտրոնացում մէկ մարմնի մէջ:

Ապա ընտրում են համապատասխան մարմիններ՝ Արեւմտահայ Խորհուրդ, Վերաստուգիչ Յանձնաժողով, Արեւմտահայ Խորհրդի գործադիր մարմին:

Երբ բժ. Զարեւը նշանակուեց Թրքահայաստանի նահանգապետի օգնական, Արամը եղաւ նրա աջ բաղուկը՝ քայքայուած երկրի տնտեսական վիճակը վերականգնելու եւ այն կառավարելու աշխատանքների մէջ՝ թէ՛ իր խորհուրդներով եւ թէ՛ գործօն մասնակցութեամբ:

ԱՐԱՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ (*)

1917ին Արարատեան Դաշար (Երեւանը յարակից գաւառներով) ծանր ու անորոշ վիճակ էր ապրում: Ռուսական զօրամասերը մեծ մասամբ հեռացել էին: Մեծնող ցարական կարգերից ժառանգութիւն մնացած հիմնարկութիւնները գրեթէ ի սպառ կորցրել էին իրենց նշանակութիւնը ժողովրդի աչքում: Եւ այդ՝ նոյնիսկ այն դէպքում, երբ հիմնարկութեան գլուխ կանգնած էր նոր, յեղափոխական մարդ:

Ժողովուրդը, մնալով ինքն իր գլխին, առողջ բնազդով թեքում էր դէպի հարապատ հաստատութիւնները՝ դէպի Ազգային Խորհուրդները եւ յեղափոխական կոմիտէները: Վերջինները աշխատում էին ուժ տալ Ազգային Խորհուրդներին, իրրեւ ժողովրդի հաւաքական կեանքի ու կամքի արտայայտութեան եւ նրանց միջոցով էին գործ կատարում:

Երեւանի Ազգային Խորհուրդը իրեն համարում էր շրջանի գերազանց մարմինը, բայց ստեղծուած պայմաններում իր անելիքների մասին որոշ, յստակ գաղափար չունէր՝ քաղաքական հեռանկարների իմաստով:

Կար այն գիտակցութիւնը, որ ժամանակը բախտորոշ է, հայ ժողովրդի քաղաքական կեանքը ճակատապարսկան շրջան է անցնում, որ ապաղան յղի է ամէն տեսակ անակնկալներով, որ ուսը լքելով ճակատը, զարհուրելի վտանդի դուռ է բաց անում սահմանի այն կողմ նստած հայութեան համար:

Ունենալով հանդերձ այդ գիտակցութիւնը՝ Երեւանի Ազգ. Խորհուրդը համապատասխան գործունէութիւն ցոյց չէր տալիս, որովհետեւ գաղափար չունէր, թէ ի՞նչ ուղղութեամբ պիտի ընթանայ այդ գործունէութիւնը՝ միշտ ապաղայի քաղաքական հեռանկարների տեսակէտով: Կային մարդիկ, կար գործ կատարելու տրամադրութիւն, բայց անորոշութիւնը մարդկանց կաշկանդում էր: Երեւանը նայում էր Թիֆլիսին, իբրեւ կենտրոնի, ու այնտեղից սպասում տեղեկութիւններ եւ ուղղութիւն: Մինչդեռ Երեւանը գրեթէ կտրուած էր աշխարհից եւ չզիտէր թէ ի՞նչ է կատարում դուրսը:

Երեւանը բնականաբար անորոշութեան մէջ ջղայնանում էր: Մա՛նր օրեր էին...

Երբեմն, պատահականօրէն, Թիֆլիսից դալիս էին մարդիկ եւ

(*) Արամի կենսագրութեան այս վերջին մասը կազմում են իմ յուշերը:

ղեկուցում ու տեղեկութիւններ տալիս Ազգային Խորհրդում: Եկաւ նաև Դրօն: Սակայն, նրանց տեղեկութիւնները չափադանց անբաւարար էին եւ չէին կարող դժել Երեւանի Ազգային Խորհուրդի անելիքների ուղին:

Դրոյից իմացանք, որ յատուկ լիազօրութիւններով Թիֆլիսից Երեւան է գալու Արամը: Անհամբեր սպասում էինք նրան:

Արամի հետ եւ ծանօթացել էի ոչ սովորական պայմաններում: Մի քանի խօսք այդ մասին:

1917ին, դարնան ու ամառուան ամիսներին, ռուսական բանակին արհեստական ներարկումներ էին անում՝ նրա ռազմական ուղին բարձրացնելու ու յարձակման ընդունակ դարձնելու համար:

Ա. Կերենսկին անդադար պտոյտներ էր գործում արեւմտեան ճակատում ու ճիշդ թափում խօսքի միջոցով համոզելու զօրքը, որ անհրաժեշտ է շարունակել պատերազմը եւ ապահովել յաղթանակը:

Նրա օրինակին հետեւում էին ե՛ւ Անդրկովկասի բանակում աշխատող քաղաքական գործիչները: Նոյնը կատարւում էր եւ մեզ մօտ՝ Երեւանում, ուր այն ժամանակ կանդնած էր մօտ քսան հազարանոց մի զօրամաս:

Թիֆլիսից Երեւան էր ուղարկուած Երկրային Կոմիտէի անդամ, այժմ հանդուցեալ բժիշկ Յովսէփ Բէզզադեանը, յայտնի սոցիալ դեմոկրատ, որ հաւաքէ Երեւանի շրջանի դասալիքներին, բարձրացնի արդէն իսկ քայքայման շէմքին հասած զօրամասերի ուղին, նրանց կազմակերպի՝ ռազմաճակատ ճամբելու նպատակով:

Այն օրերին Արամն էլ Երեւանումն էր: Բէզզադեանը, կամենալով օգտագործել Արամի անունն ու հեղինակութիւնը իր նպատակի համար, հրաւիրեց նրան ներկայ լինել իր նշանակած միտինգին եւ խրատուանքի խօսք ասել հայ ղինուորներին:

Ինձ, իրրեւ Երեւանի Զինուորական Խորհրդի գործադիր կոմիտէի անդամի, յանձնարարուած էր աջակցել Բէզզադեանին:

Նշանակուած օրը, ճաշից յետոյ, զօրանոցներից մէկի ընդարձակ բակում տեսայ Արամին եւ Բէզզադեանին: Վերջինս ծանօթացրեց ինձ Արամի հետ: Առաջին անգամ էի լսում նրա ճառը: Հռետոր չէր, իր արտասանութիւնը ունէր ինչ որ թերութիւն, որ վնասում էր նրա խօսքի արտաքին տպաւորութեան, մանաւանդ անսովոր ականջի համար: Չունէր նաև յստակ սահուն ոճ, որի ազատ կարկաչիւնը ա՛յնքան անհրաժեշտ է միտինգային հռետորի համար: Այնուհետև լսեցի Արամին բազմաթիւ տեղերում, զանազան առիթներով խօսելիս:

Առաջին տպաւորութիւնս մնաց, հոետոր չէր: Թէև գուրկ էր հռետորական շնորհքից, բայց ունէր զարմանալի բովանդակալից ու հարուստ միտք, եւ երբ ականջդ սովորում էր նրա լեզուին ու խօսքին, մի՛շտ հաճոյքով էիր ունկնդրում նրան: Ըկուն ու հնարամիտ էր նրա միտքը:

Չեմ յիշում մի դէպք, երբ իրար յաջորդող ժողովներում, նիստերում, խորհրդակցութիւններում ստեղծուած լինէր ծանր, անել կացութիւն, եւ Արամը չփրկէր կացութիւնը:

Այնուհետև, նոյն թուի ամառը եւ յաճախ պատահում էի Արամին Ղուրդուղուլի (Սարգարապատի շրջանի հարուստ ու չէն գիւղերից մէկը), ուր գնում էի արձակուրդով ընտանիքիս մօտ: Արամը Ղուրդուղուլի հիւր էր գալիս Մոսկուայի կոմիտէի աւագ բժըշկուհի Օր. Չալեանի մօտ, որի հետ մի երկու ամիս յետոյ ամուսնացաւ:

Ես, թէև հետուից հետու, բայց լաւ գիտէի, թէ ո՞վ էր Արամը, Հ. Յ. Գաշնակցութեան նշանաւոր դէմքերից մէկը եւ Վանի հերոսը: Բայց, եթէ այդ բանը չիմանայի եւ չլինէր շրջապատի ակնածանքով ու յարգանքով լի վերաբերմունքը դէպի նա, բնաւ չէի մտածի, որ Արամը մեր իրականութեան ամենամեծ ու ամենաազդեցիկ քաղաքական կուսակցութեան ղեկավարներից էր ու ժողովրդական հերոս: Արտաքին կեցուածքով ու ձևով սովորականից սովորական մահկանացու էր: Պարզ ու մտերիմ զրուցակից: Եւ մի՛շտ՝ այդ միեւնոյն տպաւորութիւնը առօրեայ կեանքում:

Իմ այդ տպաւորութիւնը մնաց մինչև վերջը: Հանգամանքների բերումով հետագայում Արամի հետ եւ բաւականին մօտեցայ, մտերմացայ: Ամիսներ շարունակ, գրեթէ օրն ի բուն մենք միասին էինք լինում: Այդ այն ժամանակ էր, երբ դէպքերն ու հանգամանքները փոխւում էին գահավէժ, գլխապտոյտ արագութեամբ եւ ճակատադրական արժէք ստանում հայ ժողովրդի համար: Երեւանում պոտուղների միտքն ու զգացումները լարուած էին անչափ: Նրանց ապրումները խորունկ էին, ջգային ու մի՛շտ յուսահատական: Օրերը շատ երկար էին, ամիսներն անվերջ...

Այդ օրերին Արամը քաղաքական ու բարոյական դէմք էր, որ իշխում էր շրջապատի վրայ ու ընթացք եւ ուղղութիւն տալիս նրա կեանքին: Այդ զգում ու գիտակցում էին ամէնքը, առանց դաւանանքի խտրութեան: Եւ այդ քաղաքական ու բարոյական մեծութիւնը նոյն սովորական մարդն էր, որին հանդիպում էի Ղուրդուղուլիում առօրեայ պայմաններում, — մատչելի ամէնքին, գրեթէ ճգնաւորի

իր կեանքի եղանակով, ո՛չ մի քայլ իր դիրքը ընդդեմում, ուշադրութիւն չդարձնելու, իրեն ցուցադրելու: Իր անձը պոյուսթիւն չունէր: Իր անձնական կեանքը զրկանքների անվերջ շարան կը լինէր, եթէ չըըջապատողները հոգ չտանէին նրա մասին:

Արամին մօտից ճանաչելուց յետոյ, մարդ տարակուսում է, թէ ո՞վ է նրան փաշա տիրոջ տուել: Մի կատարեալ թիւրիմացութիւն է գոնէ արեւելահայերի հասկացողութեամբ, որովհետեւ նրա բնաւորութեան մէջ փաշայական ոչինչ չկար: Եւ ինքը ի՛նչպէս էր խորշում այդ տիրոջ սոսից:

Յիշում եմ երկու այսպիսի դէպք:

Մի օր, նրան դիկտատոր ընտրելու (որի մասին խօսք կը լինի քիչ յետոյ) յաջորդ օրը, տուն վերադառնալով, մուտքի երկու կողմը պահակ-զինուորներ է տեսնում, իսկ բնակարանի մուտքին փակցրած՝ «Արամ փաշա» (*): Անմիջապէս զրպանից հանում է գրչահատը ու քերում փաշա բառը, իսկ մի երկու օրից յետոյ վերացան ե՛ւ զինուորները:

Մի այլ դէպք: Մակուի խանութիւնից ներկայացուցիչներ էին եկել Արամի մօտ: Բարեւներ էին բերել խանից ու խնդրանք՝ օգնելու իրենց պարենով: Երբ ներկայացուցիչները վերադառնում էին, Արամի անունից մի նամակ գրուեց խանին: Ո՛չ մի կերպ չէր համաձայնում նամակի տակ ստորագրել Արամ փաշա, այլ ստորագրեց միայն Արամ: Մեծ դժուարութեամբ համաձայնեց, որ այդ ստորագրուած անունին կցի նաեւ «փաշա» բառը:

1917ի ամառը Արամը եկել էր Ղուրղուղուլի հանգստանալու, միաժամանակ կարգադրութիւններ էր անում իր պաշտօնի վերաբերեալ: Նրա միջոցով, ի միջի այլոց, երկրագործական գործիքներ եւ լծկաններ, զլիւսուորապէս գոմէջներ էին ուղարկուում Տաճկահայաստանի զբաւուած վայրերի համար: Իր պաշտօնի վրայ նայում էր կէս հեղանակով եւ իրեն «գոմէջների վերակացու» էր անուանում:

Արամը Ղուրղուղուլիում երկար չմնաց: Նրան կանչեցին Թիֆլիս:

Այնուհետեւ նրան չտեսայ մինչեւ 1917ի Դեկտեմբեր, երբ նա, իրբեւ Արեւելահայ Հայոց Ազգային Պորհրդի եւ Արեւմտահայ Ապահովութեան Պորհրդի լիազօր ներկայացուցիչ, եկաւ Երեւան: Այդպիսով, Արամը թերեւս այն միակ մարդն էր, որ հաւասարապէս որ-

(*) Քաղաքի պարետ Արշ. Շահխաթունեանի կարգադրութեամբ:

պէս հեղինակութիւն էր ճանաչուում այդ երկու հատուածների կողմից:

**

Արամը եկաւ Երեւան 1917ի Դեկտեմբեր 24ին թէ 27ին, լաւ չեմ յիշում: Նոյն օրն իսկ զնացի նրա մօտ: Ես արդէն զինուորական հաղուստս փոխել էի: Արամի առաջին խօսքը զրան էր վերաբերում:

— Ուշացել ես, — ասաց նա՝ ձեռքս սեղմելով եւ ժպիտը դէմքին՝ ցոյց տալով զղեստս, — խնդրեմ վաղուանից նորից հապնես զինուորական հալաֆ:

Ակնարկում էր, որ գործ կար անելու:

Մի երկու ժամ յետոյ, միասին զնացինք Ազգային Պորհրդը, որ այդ օրը հաւաքուել էր Գայանեան դպրոցի շէնքում՝ յատկապէս Արամին լսելու համար:

Արամը տուեց մեզ հետաքրքրող ու գրեթէ բոլոր հարցերը սպասող մի ընդարձակ զեկուցում, — Թուսաստանի վիճակը, քաղաքական կացութիւնը Անդրկովկասում, հայ-վրացական-ատրէշանական յարաբերութիւնները, տաճիկների տրամադրութիւնները եւ այլն եւ, ի վերջոյ, մեր անելիքը: Պօսքը ամփոփեց մօտաւորապէս այսպէս.

«Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տանկական ֆակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ֆակատ պահելու խօսք էլ է լինում, դա խօսք է՝ գուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերումներ: Մեծակ եճք եւ պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ֆակատը պաշտպանելու եւ թէ երկրի ներք կարգ հաստատելու համար»:

Առաջին անգամ էի լսում Արամին զեկուցում տալիս (ճառերը լսել էի): Շատ շնորհալի զեկուցանող էր: Նրա զեկուցումների մէջ չկար ոչինչ աւելորդ: Մեղիքները զնում էր իրենց մերկութեամբ, լուսարանում էր կարճ ու պարզ, երբեմն, կարիք եղած դէպքում, զեկուցումը ամփոփում էր երկու խօսքով եւ ապա տալիս եզրակացութիւններ: Ախտաճանաչութեան զարմանալի ընդունակութիւն ունէր: Դէպքերը արժէքաւորում էր ճշգրտութեամբ եւ այնուհետեւ գալիքը նախատեսում յատուկ կերպով:

Ազգային Խորհուրդը լարուած ուշադրութեամբ լսեց Արամին եւ միաձայնութեամբ (*) հաւանութիւն տուեց նրա առաջարկին՝ Ազգային Խորհուրդի անելիքներէ մասին: Ամէնքը զգում եւ հասկանում էին, որ պէտք էր պատրաստուել օրհասական պայքարի, որ այդ պայքարի ժամը մօտ էր, որ խօսքի ու վէճի ժամանակ չէր, ժամանակ էր գործելու՝ արագ ու վճռական, հէնց վաղուանից:

Ամէնքը ունէին այդ գիտակցութիւնը՝ թէ՛ Դաշնակցականը, թէ՛ Ժողովրդականը, թէ՛ Էս-էրը եւ թէ՛ Բոլշեւիկը:

Բայց տարօրինակ բան: Արամի առաջարկութեամբ պիտի ընտրուէր մի փոքրաթիւ կազմ ունեցող, արագաչարժ մարմին՝ Յատուկ Կոմիտէ, որին Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս պիտի փոխանցէր իր բոլոր իրաւունքները: Եւ ահա, երբ հերթը եկաւ այդ մարմնի կազմութեան, բոլոր կուսակցութիւններէ ներկայացուցիչները հրաժարուեցին նրա մէջ մտնելու: Ամենայն պատրաստակամութեամբ համաձայնում են, անգամ պնդում, որ Յատուկ Կոմիտէն կազմուի միայն դաշնակցականներից, բայց իրենք խուսափում են՝ խոստանալով միայն ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ դրսից: Անհնար եղաւ համոզել, որ այդ մարմինը լինի նոյն Ազգ. Խորհուրդը, միայն փոքր կազմով, այսինքն՝ բոլոր հոսանքների մասնակցութեամբ:

Այդ վերաբերմունքը դուցէ հասկանալի լինէր, եթէ գոյութիւն ունենային սկզբունքային կամ այլ կարգի տարակարծութիւններ: Բայց որեւէ անհամաձայնութիւն չկար: Ամէնքը համաձայն էին Արամի պարզած գործելակերպին, բայց գործնական պատասխանատուութիւն խուսափում էին ստանձնել: Եւ գործը, հակառակ դաշնակցականների կամքին, մնաց նրանց ձեռքը:

Առանց անհամեստ լինելու, միայն փաստը արձանագրած լինելու համար, պէտք է ասեմ, որ Դաշնակցութիւնն էր, որ գիտակից վայրկեանի լրջութեան՝ շտատանուեց պատասխանատուութեան տակ մտնելուց եւ իր բովանդակ ուժերով նետուեց ասպարէզ:

Եւ Յատուկ Կոմիտէն կազմուեց զրեթէ բացառաբար դաշնակցականներից: Ասում եմ «զրեթէ», որովհետեւ կազմի մէջ մտաւ նաեւ մի չկողք անձնաւորութիւն, որը իր աշխարհայեցողութեամբ

(*) Յայտնի է, թէ ինչ սկզբումներով էին կազմուած Ազգային Խորհուրդները. բոլոր կուսակցութիւնները ներկայացուցիչներ ունէին այնտեղ: Երեւանի Ազգային Խորհրդում կար նաեւ մի բոլշեւիկ՝ Պօղոս Մակիմցեանը:

այնքան մօտ էր մեզ, որ հետագայում պաշտօնապէս մտաւ Դաշնակցութեան մէջ:

Յատուկ Կոմիտէի կորիզը կազմում էին Երեք հայի, — Արամը, իրրեւ Թիֆլիսի Հայոց Խորհուրդի անդամ-լիազոր, Երեւանի Ազգային Խորհուրդի կազմից քաղաքում մեծ յարգանք ու համակրանք վայելող՝ շատ գործունեայ հասարակական գործիչ Մ. Մուսիսեանը եւ այս տողերը զրոյրը:

Բացի այդ, Ազգային Խորհուրդի ցանկութեամբ Յատուկ Կոմիտէի աշխատանքներին ձայնի իրաւունքով պիտի մասնակցէին նահանգական կոմիտարը (այն ժամանակ մեր ընկեր Սահակ Թորոսեանը) եւ Հայ Զինուորական Միութեան նախագահը (որ բժ. Յ. Մելիքեանն էր, նոյնպէս դաշնակցական):

Քարտուղարի պաշտօնով հրաւիրուեց Ս. Օհանջանեանը:

**

Յատուկ Կոմիտէն դարձաւ երկրի՝ Արարատեան Դաշտի ու յարակից գաւառների՝ փաստական իշխանութիւնը եւ գործի անցաւ Արամի Երեւան գալու հետեւեալ օրը:

Չկար այլեւս անորոշութիւն, տարտամութիւն եւ սպասողական վիճակ: Պարզ էր, թէ ի՞նչ պիտի արուէր, — օգնութիւն ռազմաճակատին նոր զօրակոչի միջոցով, Երեւանի շրջանի, այսինքն՝ թիկունքի ինքնապաշտպանութեան կազմակերպում տեղական թուրքերի թշնամական շարժումների դէմ, կարգ ու օրինականութեան վերականգնում դաւառներում, ուր անիշխանութիւնը գնալով ծաւալում էր, եւ դրանցից բխող պարենաւորման, դրամական, հաղորդակցական եւ այլ խնդիրներ, որոնք բոլորն էլ պահանջում էին լարուած աշխատանք: Ամէն ինչ պիտի կատարուէր արագ. ժամանակը քիչ էր, անելիք՝ շատ:

Յունուարին Թիֆլիսից Երեւան եկաւ զօրավար Սիլիկեանը իր սպայակոյտով: Նա նշանակուած էր Երեւանի շրջանի զինական ուժերի հրամանատար (դիվիզիայի պետ), իսկ Դրօն զինուորական կոմիտար:

Յատուկ Կոմիտէի առաջին ու զլխաւոր մտահոգութիւնն էր ռազմաճակատի ամրացումը եւ սրա կապակցութեամբ՝ թիկունքի ապահովութիւնը: Այդ նպատակով Յատուկ Կոմիտէի առաջին քայլը եղաւ զինակոչ յայտարարել: Այդ յայտարարութեան համաձայն՝ զէնքի տակ էին կանչուում մինչեւ 28 տարեկանները:

Յատուկ կոմիտեան այդ ասիան մի կոչով զինեց ժողովուրդին, որով բացատրում էր կայսրության լրջութիւնը, զինակոչի անհրաժեշտութիւնը եւ, յանուն Ազգային Խորհրդի, հրաւեր ուղղում զինպարտներին՝ երեք օրուայ պաշարով ներկայանալու տեղական զինուորական կենտրոնները:

Երեւանի շրջանի հայութիւնը արտակարգ վստահութեամբ արձագանգ տուեց իրեն ուղղուած կոչին եւ, հակառակ Մենդեան տոներին, ամէնքը շտապեցին ներկայանալ պատշաճ իշխանութեան:

1918ի Յունուար 5ին, ճաշից յետոյ, Արամի հետ Երեւանից ինքնաշարժով դուրս եկանք զէպի Ղուրդուղուլի՝ Մենդեան երեկոն աշտեղ անցկացնելու համար: Ճանապարհին պատահում էին խումբ-խումբ երիտասարդներ, որոնք երեք օրուայ պաշարը մէջքերին՝ շտապում էին զէպի Վաղարշապատ՝ արձանագրուելու զինուորական շրջանի կենտրոնում:

Յատուկ կոմիտեի կոչը նոր էր հասել տեղ եւ ահա մարդիկ շտապում էին իրենց պարտքը կատարելու՝ Մենդեան օրն իսկ բաժանուելով հարազատներից: Արամը ազդուեց:

— Այսպիսի պայմաններում, — ասաց նա, — մեր ժողովուրդը հրաշքներ կարող է գործել: Շատ անգամ առիթներ եմ ունեցել նկատելու, որ մեր գիւղացու պարտաճանաչութեան զգացումը հարազատ է: Գիտակցութեան նշան է այդ: Ազգային հորհրդի մը կոչը բաւական է, որ նա իր համար այս ազիզ օրին թողնի տուն ու տեղ եւ շտապի գեմֆի տակ, երբ ստիպողական, հարկադրական ու չինչ չկայ: Մինչդեռ ռուս կառավարութեան գորակոչը գլուխ էր գալիս ահ ու սարսափի ազդեցութեան տակ: Այսօր Օշականից ինձ մի այսպիսի դէպք պատմեցին: Երբ Ազգային հորհրդի կոչը հասնում է գիւղ, զինակոչի եմքակայ երիտասարդները պատրաստութիւններ եմ տեսնում Վաղարշապատ գալու՝ արձանագրուելու համար: Գիւղի ունեւորներից մէկը, որ ամբողջ պատերազմի ընթացքում իր որդուն զանազան ապօրինի միջոցներով ազատել էր զինակոչից, Ազգային հորհրդի կոչը կարդալով, կանչում է որդուն եւ ասում. — «Բալա, էլ Աստուած իսկ դաբուլ չի անի, որ պահուես: Պատրաստուիր եւ Աստուած հետդ, բարի ճանապարհ, ո՛չ ոքից յետ չմնաս»:

— «Ես մի բանից եմ վախեցնում, — շարունակեց Արամը, — վախեցնում եմ՝ մե՞նք սեւերես դուրս գանք մեր ժողովրդի առջեւ, չկարողանանք կազմակերպել գործը եւ կորցնենք նրա հաւատն ու վստահութիւնը...»:

Արամը, հարկաւ, զիտէր, որ բացառիկ ծանր պայմաններում

էր ապրում հայ ժողովուրդը, որ թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին պայմանները արտակարգօրէն աննպաստ էին: Իր խօսքի մէջ նա յիշեց Վաղարշանց օրերը, համեմատեց հետուր անցեալը ներկայի հետ եւ դատու, որ մեր սրայմանները անհամեմատօրէն աւելի ծախսող էին՝ թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին տեսակէտով:

**

Յիշեցի արդէն, որ Արարատեան Դաշտի հայութիւնը հոգեկան տաղնապալի վիճակ էր ապրում: Նրա աչքերի առջեւ քայքայում էր Անդրկովկասեան ռուսական ռազմաճակատը:

Այդ ճակատի առաջին գիծը սկսում էր Սեւ ծովից ու շարունակուում մինչեւ Պարսկաստանի ներսը՝ իր թիկունքում տեղ-տեղ բաւականին խոր, թողնելով Տրապիզոնը, Երզնկան, Մուշը, Բիթլիսը ու Պարսկական Ուրմիան:

Այդ հսկայական տարածութեան վրայ 1917ի վերջերին կանգնած էր աւելի քան երկու հարիւր հազարանոց ռուսական բանակ՝ իր բոլոր մասերով: Ռուսական յեղափոխութիւնը ընդհանրապէս եւ յատկապէս բոլշեւիկեան յեղաշրջումը ցնցեց եւ ալեկոծեց այդ հարիւրաւոր հազարնոց բանակը՝ հիմնովին քայքայելով, բարոյալքելով ու խորտակելով այլեւս թշնամուն զիմադրելու նրա կամքը: Եւ բանակը վերածուեց հօտի, որի համար բոլոր հարցերը չքացել էին, բացի մէկից՝ ձգել ամէն ինչ ու վերադառնալ տուն:

Տարերային ուժի, հեղեղի պէս տեղի ունեցաւ այդ տեղատրուութիւնը՝ ճակատից զէպի Ռուսաստան: Ռազմաճակատում ու նրա անմիջական թիկունքում ամբարուած անհաշիւ ռազմամթերքն ու պահեստորման պաշարը մնացին անտէր եւ յետապային թուրքին բաժին ընկան՝ նպաստելով նրա զինական յաջողութիւններին:

Դէպի տուն շտապող ռուսական զօրամասերը իրենց ճամբին խորտակում էին ամէն ինչ: Խորթ չէր նրանց հոգուն նաեւ թալանն ու կրակը: Երեւանում խանութները կողոպտելու նպատակով հրեհ առաջ բերին խանութների շրջանում, որպէս զի քաղաքացիներին չբոթի մատնեն ու լուապէս հասնին իրենց սեւ նպատակին:

Հայ ժողովուրդը, յատկապէս Արարատեան Դաշտի ու նրան կից տաճկական սահմանի երկայնքին ընկած շրջանների հայութիւնը ակնատես էր ճակատի այդ փլուզումին ու զիտակից, որ նրա հետեւանքը՝ յղի սարսափներով՝ իր համար կարող է ողբերգական լինել: Մերկանում էր ամբողջ ռազմաճակատը հայ ժողովրդի արեան ծարաւի թուրքի առջեւ:

Ո՞վ պիտի փոխարինէր առն շտապող ուսուցիչը ու պաշտպանէր մեր հողը, մեր ժողովուրդը: Ո՞չ սք, բայց եթէ հայկական փոքրաթիւ, վախ պորամասերը:

Ինչպէս արդէն յիշուեց, այդ տոաջին եւ ամենակարեւոր հարցն էր, որ դրուած էր Յատուկ կոմիտէի առջեւ, եւ զբանով յատկապէս մասնապատճ էր Արամը: Նրա գլխաւորութեամբ գինուորական իշխանութիւնները զօր: Սիլիկեանի գեկաւարութեամբ եւ Դրոյի աջակցութեամբ կարգապահութեան ու կարգաւորեցին հայկական զօրամասերը, որոնք պիտի սրաշտպանէին հայրենի հողը ուսաների ետեւից շարունակութեամբ առաջ խորացող թշնամուց: Այդ թշնամու ձեռքերը չա՛տ երկար էին: Նա իր անհոշիւ գործակալների միջոցով ուղղակի տակն ու վրայ էր անում Անդրկովկասի կեանքը՝ յենարան ունենալով կովկասի մասնատակաւորներին ու որպէս ղէնք ծառայեցընելով նրանց իր նուաճողական քաղաքականութեան համար:

Թուրք գործակալները յատուկ եռանդ էին ցուցահանում Երեւանի նահանգում, յատկապէս Արարատեան Դաշտում: Նրանք զբրդում ու ոտքի էին հանում տեղական մասնատակաւորներին իշխանութեան ղէմ, ամէն տեղ խռովութիւններ էին առաջ բերում, փճացնում էին հաղորդակցութեան միջոցները, կտրում էին ռազմադիտական դժերը ու ամէն կերպ գծուարացնում-խանդարում զօրամասերի շարժումները:

Թուրք բանակի հմուտ գեկաւարները նման միջոցներով ձրգտում էին շփոթ վիճակ ստեղծել նոր կարգակերպուող հայոց իշխանութեան համար ու այդպիսով դիւրացնել իրենց յաղթանակը: Ու նրանք իրենց սեւ գործերում մեծապէս յաջողում էին, որովհետեւ տեղական մասնատակաւորներին համակրանքը ամբողջովին նրանց կողմն էր, իսկ մասնագեկաւորները Երեւանի նահանգում պատկառելի թիւ էին կազմում: Այն ժամանակ Երեւանի նահանգի 1·120·242 բնակիչներից 660·871 հայեր էին, իսկ 373·582 թուրքեր, մնացածը՝ քրդեր, ելիզիններ, ուսաներ:

Այդպիսով Երեւանի նահանգը, գլխաւորապէս Արարատեան Դաշտը, մատնուել էր անիշխանութեան, քառասային վիճակի:

Պէ՛տք էր պայքարել այդ ամէնի ղէմ, յաղթահարել ու կարգ հաստատել երկրում: Այդ ամէնի համար անհրաժեշտ էր կազմակերպուող մեծ շնորհք, մտտականութիւն, կամք եւ քաղաքական հեռատեսութիւն: Բնութիւնը յատուտ ձեւորով այդ բոլոր յատկութիւններով օժտել էր Արամին: Այսպէս անհնարին է բացատրել Յատուկ կոմիտէի ու նրան յաջողող վարիչների Մարմնի յաջող գործունէու-

թիւնը, այն օրերի ծայր աստիճան ծանր պայմաններում: Այդ գործունէութիւն իր բովանդակ ծաւալով ընթացաւ Արամի տիրական գեկաւարութեան տակ:

Բացի իր անմիջական պարտականութիւններից, Արամը հասնում էր ամէն տեղ: Եւ ամէնքը ենթարկւում էին նրան՝ առանց դրժգոհութեան, քրթմնջալու ու բողոքի: Ենթարկւում էին կատարելապէս յօժար կամքով ու մնալով ազատ: Ո՞չ մի գործիչ ճնշման ամենահեռուոր զգացումը չունէր Արամի թեւերի տակ:

Չարմանալի ու բացառիկ էր Արամի բնաւորութիւնը նաեւ ա՛յդ տեսակէտից: Նրա խորհրդին դիմելը, նրան լսելը, ենթարկուելը՝ բնական էր համարւում ճիշդ այնպէս, ինչպէս բնական է համարւում երբ մարդ շարժւում է համաձայն իր բանականութեան ու զգացումների թելադրութեան: Հարկադրանքի հեռուոր ակնարկ իսկ չկար:

Անշուշտ, ժամանակն էլ իր դերն ունէր: Ահաւոր օրեր էին լինել-չլինելու հարց էր դրուած ամէնքի առջեւ մերկ, առանց քողի: Այդպիսի ժամանակ կիրքերը մարում են, մոլութիւնները թուլանում: Այսուհանդերձ, Արամի անձնաւորութիւնը փրկարար դեր էր կատարում: Եւ այս սակով՝ եւ ի նկատի չունեմ Արամի հասարակական-քաղաքական արժէքն ու դերը, որ չա՛տ բարձր էին, այլ նրա բնաւորութեան այն գծերը, որոնք ընդհանրապէս կապ չունին բարձր շնորհքի, տաղանդի հետ, բայց կազմում են դարդը ամէն մի տաղանդի եւ արտակարգ դեր ու հմայք տալիս մանաւանդ հասարակական ջիղ ունեցողին՝ գերազանցապէս համակրելի ու սիրելի դարձընելով նրան:

Ոսքս վերաբերում է Արամի վարուեցողութեան: Արամը գիտէր մարդկանց մօտենալ, նրանց դամարը բռնել ու համապատասխան գործի մղել: Մի պաղտնիք, որ ամէն մի հասարակական գործչի յաջողութեան առաջին եւ ամենամեծ պատականն է կազմում: Այդ գաղտնիքին իր բոլոր ձեւերով ու արտայայտութիւններով տիրակալում էր Արամը: Նրան յարգանքով ու սիրով լսում ու ենթարկւում էր ե՛ւ զաշնակցականը, ե՛ւ էսէրը, ե՛ւ ժողովրդականը ե՛ւ իր, Արամի ձեռքով անվտանգ դարձած եւ գործի լծուած բոլշևիկը:

Բացառութիւններ, հարկաւ, միշտ եւ ամէն տեղ լինում են: Բայց Երեւանում այն օրերին բացառութիւններն էլ բացառութիւն

էին եւ շէին խանդարում ընդհանուր գործին: Հասկանալի է, որ խօսքս փերաբերում է արցախին-հասարակական ցաւերով ապրողներին:

Այդպիսով, Արամը, Երեւանի գայով, անհատատալի կարճ ժամանակում քաղաքում ստեղծեց մի մթնոլորտ, որը, եթէ կարելի է այսպէս ասել, յաղեցած էր աշխատանքով:

Արամը արտակարգ շնորհք ունէր մարդկանց դնելու այնպիսի վիճակի մէջ, որ նրանք զրտեսրէին իրենց հասարակական արժէքի առաւելագոյնը: Թէեւ Յատուկ Կոմիտէի կազմը ղաշնակցական էր, բայց նրա աշխատանքներին ամենաեռանդուն կերպով մասնակցում էին ամէնքը: Եթէ մի կողմ թողնենք Արամին, պէտք է ասել ու խոստովանել, որ ղաշնակցականներին հաւասար, յաճախ աւելի եւ ոչ պակաս, գործ էին կատարում ժողովրդականները: Մասնաւորապէս պարենաւորման եւ երեւոտական խնդիրները մեծ մասամբ ծանրացած էին վերջինների վրայ ու մարդիկ աշխատում էին մեծ եռանդով մինչեւ վերջին հնարաւորութիւն:

Յատուկ Կոմիտէի շուրջ ստեղծուել էր մի մթնոլորտ, ուր տնդոտ գործ էր կատարում օրն ի րուն: Աշխատում էին սիրով, համերաշխութեամբ՝ առանց նիւթական վարձատրութեան (խօսքս սովորական պաշտօնեաների մասին չէ): Եւ առանց վերապահութեան պէտք է ասեմ, որ այդ մթնոլորտը ստեղծել էր Արամի ներկայութիւնը: Բոլոր աշխատողները, պատասխանատու թէ երկրորդական, մի տարօրինակ՝ շտեմուած վերաբերմունք ունէին նրա հանդէպ: Մտեղծուել էր մեծ ընտանիքի պէս մի բան, որի անդամները ժրջան մեղուի պէս աշխատում էին օրն ի րուն: Այդ ընտանիքի մեծ հայրը Արամն էր, որը ամէն տեղ էր՝ իր խորհուրդներով, ցուցմունքներով, հրահանգներով ու հրամանով:

**

Մի քանի խօսք էլ Արամի ապրուստի մասին: Յիշեցի արդէն, որ նրա անձնական կեանքը շատ ողորմելի կը լինէր, եթէ նրա մասին հող տանող չլինէր: Եւ, իրօք, այդ մարդը իր մասին մտածել չգիտէր: Որտե՞ղ ապրել, ի՞նչ ուտել, ի՞նչ հագնել, — հարցեր էին, որոնք քիչ էին զրաղեցնում նրան: «Մի կերպ կ'ապրեմք, շեմք մեռնի», — այս էր նրա սովորական խօսքը:

Յատուկ Կոմիտէի անդամներս միաժամանակ պաշտօնով կապուած էինք որեւէ հիմնարկութեան հետ: Այնպէս որ, թէեւ Յատուկ



Չախէն աջ, ոտքի.— Ս. վրացեան, Արմէն Գարօ, վարդան, Մալխաս, Կոստի Համբարձումեան
Չախէն աջ, նստած.— Գեորգիալիմ Բալայեան, Տէր Մկրտչեան, Քեռի, Իշխան, վարանդեան
Չախէն աջ, դետին երկարած.— Խմբապետ Համազասպ, Արամ, Միշա Արզումանեան

Կոմիտէից ոռճիկ չէինք ստանում, բայց ստանում էինք այլ տեղից, որով եւ պահում էինք մեր գոյութիւնը: Արամը որեւէ տեղից ոռճիկ չէր ստանում եւ ապրում էր զրկանքներով: Այդ մասին խօսեցի հետը:

«Թիֆլիսում, կարծեմ, մի բան նշանակել էն, կ'ուզարկեմ. դատարկ բաներով մի մտահոգուիր», Էղաւ պատասխանը:

Պօսեցի Յատուկ Կոմիտէի նախագահ Մ. Մուսիւնեանի հետ, որը վերին աստիճան գործունեայ, հոանդուն, բնդունակ ու շխտակ բնաւորութեան տէր մարդ էր՝ յարգուած ու սիրուած Երևանի հասարակութիւնից: Նա իր ամբողջ ժամանակը նուիրել էր Աղղային Պորհրդին: Անկուսակցական էր, բայց շատ էր յարգում ու գնահատում Արամին, սակայն նրա ներքին կեանքին, նիստ ու կացին տեղեակ չէր: Խիստ գործացաւ:

Թիֆլիսի հետ մեր յարաբերութիւնները հաղորդակցութեան տեսակէտից այնպէս էին, որ այնտեղից «ամսական» ստանձնու մասին մտածելը միամտութիւն էր: Ես առաջարկեցի, որ Յատուկ Կոմիտէն մի որոշ գումար տրամադրէ Արամին՝ նրա ապրուստի համար: Մուսիւնեանը այդ առաջարկին պատասխանեց, որ Յատուկ Կոմիտէի զրամարկըը բաց պէտք է համարել Արամի առջև: Նա կարող է առնել, որքան որ հարկաւոր է:

Այդ միտքը կարգասէր ու խիստ հաշուադահ, զրամական խընդիրներում այնքա՛ն բծախնդիր Մուսիւնեանի բերնում ինձ տարօրինակ չթուաց: Արամը նրա աչքին սոփորական աշխատող չէր:

Սակայն, մեր ցանկութիւնները լոկ ցանկութիւններ էլ մնացին: Արամը կարուկ կերպով հրաժարուեց որեւէ ձեւով որեւէ դրամ առնելուց: Մինչև է իր ընտանիքի Երևան տեղափոխուելը՝ նա ապրում էր Արմօկան եւ Դոկտորակայա փողոցների անկիւնում մի հասարակ տան մէջ: Սենեակը իր երկու լուսամուկներով նայում էր Դոկտորակայա փողոցի վրայ: Յարմարութիւնների տեսակէտից սենեակը ողորմելի էր: Մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան եւ մի երեք-չորս նոյնպէս հասարակ աթոռ, — ասա սենեակի կահաւորութիւնը: Մի անկիւնում հին արկղի վրայ յարմարեցուած էր թիթեղեայ վառարան, որը վառարան լինելուց աւելի մի պատիժ էր Արամի համար: Վառելիս՝ խողովակները յաճախ դուրս էին ընկնում իրար միջից, եւ սենեակը լցում էր անտանելի ծխով: Եւ որովհետեւ Արամի աչքերը վատառողջ էին, ծուխը նրա համար կրկնակի տանջանք էր: Լուսամուկներն ու դուրս բաց էր անում ու նստում ցըրտում:

Նայն Դոկտորակայա փողոցում ապրում էի ե՛ս եւս: Շատ յա-

ճախ Արամի հետ աշխատանքից միասին էինք վերադառնում տուն։
Եւ գրեթէ ամէն անգամ նա ինձ հրաւիրում էր ճաշի։—

«Գիտեմ եթիմ ես (ընտանիքս Երեւանում չէր), գնամք միասին Գաշեմ»։

Երբեմն պնդում էի, ո՛չ ճաշի համար, այլ պարզապէս միասին լինելու։ Նրա ճաշը հօ ճաշ չէր։

Նոյն տան մէջ ապրում էր մի վանեցի ընտանիք, որ ե՛ւ պատրաստում էր կերակուր։ Ժամանակին չեմ հետաքրքրուել, բայց կարծում եմ, որ Արամի վանեցի բարեկամներն էին հողում նրա ապրուստը։ Եւ որովհետեւ իրենք էլ՝ գաղթական ու տնաւեր՝ զրկանքներով էին ապրում, Արամին էլ լաւ պահել չէին կարող։ Պատահեցին դէպքեր, երբ եկանք ճաշի եւ տանը հաց չգտանք, այլ միայն ապուր։ Ուղարկում էինք դէս ու դէն հացի։

Երբ վանեցի քոյրիկը ճնշուելով ու ամաչելով յայտնում էր, որ տանը հաց չկայ, Արամը, բարի ժպիտը դէմքին, հանդարտեցնում էր։

«Արշալոյսը օտար չէ, վնաս չունի»։

Միայն ընտանիքը Երեւան տեղափոխուելուց յետոյ, Արամը սկսեց քիչ-չատ մարդավայել ապրել։ Ունէր լաւ բնակարան եւ բաւարար սնունդ։ Այդ բարեփոխութեան համար նա պարտական էր իր բժշկուհի կնոջ։

Եւ այդ մարդը, որ ա՛յնքան անուշադիր էր դէպի ինքը, որքա՛ն ուշադիր էր ուրիշների հանդէպ։ Արամը հաստատութեան դրամարկղը չէր խնայում՝ աշխատողներին վարձատրելու եւ օգնելու համար։ Քանիսներին էլ օգնում այս կամ այն ձեւով մէկի կամ միւսի միջոցով եւ յաճախ այնպէս, որ օգտուողը չէր իմանում թէ Արամի ուշադրութեանն էր պարտական։

Երբ Ազգային Խորհուրդի գործունէութիւնը վերջացաւ, ընտրուեց հաշուեյարդար մարմին, որ պիտի քննէր, կարգի բերէր ու փակէր Ազգ. Խորհուրդի եւ նրա գործադիր մարմինների (Յատուկ Կոմիտէի եւ Վարիչների Մարմնի) բոլոր հաշիւները։ Այդ Մարմինը իր տրամադրութեան տակ ունէր խոշոր գումար։ Անդամներն էին՝ Յ. Մելիքեան, Մ. Մուսինեան եւ Ա. Աստուածատրեան։ Յաճախ Արամից գրութիւններ էինք ստանում, որոնցից իմանում էինք, թէ այս կամ այն անձը ստանալիք ունի։ Այդ մի ձեւ էր, որով Արամը օգնութեան էր հասնում նիւթական զրկանքներից տառապող ու տանջուող մարդկանց, որոնք ամէն ինչ կորցնելով՝ պահել էին իրենց պատուարժանութեան զգացմունքները հանդէպ հայրենիքի։ Մենք

հասկանում էինք Արամին ու հողով նրա հետ էինք՝ պիտակցելով հանդերձ, որ նրա արածը մեր կարողութիւններից վեր էր։ Երբ նա անհրաժեշտ էր համարում, արհամարհում էր սովորական կարգն ու ձեւը եւ անում, ինչ որ նպատակադարձ էր համարում։

«Տարեբային ուժ էր, որ ոտնահարում էր ամէն մի օրէնք՝ միշտ աչքի առաջ ունենալով մարդկային շահերը, — ինչ որ նրա մասին հետազայում Գ. Պետրոսեանը կ'ասէր, երբ արդարութեան նախարար էր Քաջազնունու դահլիճում։

**

Յատուկ Կոմիտէն Արամի զլխաւորութեամբ զերբնական ջանքեր էր թափում՝ Երեւանի շրջանը խաղաղեցնելու եւ ռազմաճակատի օգնութիւն հասցնելու համար։

Սակայն, շրջանում բոյն դրած դաւադիր ուժերը ամէն կերպ աշխատում էին ի դերեւ հանել այդ ջանքերը։ Թուրք հակապետական շարժումները զնալով սաստկանում էին ու այլևս ո՛չ մի միջոցի դէմ կանգ չէին առնում՝ ջլատելու համար հանրային կեանքը։

Հայերի գլուխը թուրքերը խառնում էին ոչ միայն այնտեղ, որտեղ աչքի ընկնող թիւ էին կազմում, այլե՛ւ այնտեղ, որտեղ թըւով համեմատաբար ոչինչ բան էին, ինչպէս օրինակ՝ Նոր Բայազիտի գաւառում։ Նրանց յանդուսութիւնը անցնում էր ամէն չափ ու սահման։

Արամի եւ Յատուկ Կոմիտէի դժբախտութիւնը նրանում էր, որ անկախ ու ազատ չէին իրենց շարժումների մէջ։ Արամը զլխաւորում էր Յատուկ Կոմիտէն իբրեւ Թիֆլիսի ներկայացուցիչ։ Նա պետական մարդ էր եւ իր գործերի մէջ պատասխանատու կենտրոնական իշխանութեան առջեւ՝ Հայոց Ազգային Խորհուրդի խողովակով, — մի հանգամանք, որ նրան կաշկանդում էր եւ հարկադրում լինել վերին աստիճանի շրջահայեաց, փափկանկատ անգամ այնտեղ, որտեղ մի հարուստով կարող էր լուծել կնճիւղը, ինչպէս, օրինակ, Նոր Բայազիտի գաւառում եւ Երեւանում։

Բերենք մի քանի օրինակներ՝ ցոյց տալու համար, որ սկսած 1918ի Յունուարի սկզբներից՝ Արարատեան Դաշտը դարձել էր թուրք եւ քիւրդ հակապետական շարժումների թատերաբեմ։

«Յունուար 14ին Իզգիլիից հեռագրում եմ, որ քրդերը յարձակուել են ռազմաճակատ գնացող պետական պարեմաւորման խմբի վերայ՝ Կարա — Օրգով Գանապարհին, տարել են մեծ քանակութեամբ

հացի պաշար՝ բարձր ուղտերով: Սպանուել եւ շատ գինուորներ: Բայագէտ-Մուսուն-Էջմիածին նամակարները փակուած են, ամէն օր տեղի եւ ունենում յարձակումներ, սպանութիւն, կոզոպուտ: Ալի-Ղրղըլ (հայկական) գիւղը տեղափոխուում է Ղամարլու՝ ազատուելու համար քրքական եւ քրդական հրոսակախմբերից»:

Յունիսի 20ին Զուլֆայից հեռագրում են Անդրկովկասի կոմիսարիատին .-

«Դուրքիւնը Զուլֆայում սպառնական է: Աւերի ու արիւնի են ենթակայ ամէնքը: Երկաթուղային ծառայողները խնդրում են փրկել իրենց ընտանիքներին կեանքը: Ամէն օր հրացանաձգութիւն է տեղի ունենում: Կան սպանուածներ ու վիրաւորներ: Ազգային քշմամուքիւնը սուր բնոյթ է ստացել: Ամէնքը ենթակայ են վտանգի: Ռուս գինուոր համարեայ չկայ: Բոլորը գնացել են: Շուտափոյթ կարգադրութիւն պէտք է անել փոստը Ալեքսանդրապոլ կամ Թիֆլիս տեղափոխելու համար, հակառակ դէպքում բոլոր ծառայողները կը փախչեն»:

Փետրուարի 15ին Ալեքսանդրապոլի մօտ Մոլլա - Մուսա (Թուրք) գիւղի բնակիչները յարձակուեցին իրենց մօտ եկող պատգամաւորութեան վրայ, սպանեցին ղինուորական խորհրդի ներկայացուցիչ՝ համակրելի հասարակական գործիչ Ասրիբէկեանին (սոց. դեմոկրատ) եւ ուրիշ վեց հոգու ու վիրաւորեցին վեց հոգու:

Այս դէպքը ահապին յուզում առաջ բերեց: Մոլլա-Մուսա գիւղը ենթարկուեց թնդանթաձգութեան: Կայարանում գտնուող վաթսուն թուրքերը տարուեցին քաղաքից դուրս ու կոտորուեցին: Թըրքական թաղը (քաղաքում) պաշարուեց գրգռուած ամբոխի կողմից եւ փրկուեց միայն դաշնակցականների ջանքերով:

Փետրուարի 19ին Երեւանի նահանգական կոմիսար Ս. Թորոսեանը ուղղի հեռախօսաթելով տեղեկացնում էր Թիլիս .

«Փետրուար 16ին քրդերը Սուրմալուի գաւառի ջալալցիների եւ տեղական թուրքերի հետ յարձակուեցին Ղամարլուի վրայ, որտեղ կանգնած են հայկական զորամասեր: Փետրուար 17ին այստեղ տեղի ունեցաւ ընդհարում: Ազդեցիկ թուրքերից կազմակերպեցի հաշտարար պատուիրակութիւն: Նրանք մեկնեցին Ղամարլու: Բայց 17ի գիշերը գաւառամասի կոմիսարը զեկուցեց, որ թուրքերի եւ հայ գինուորների միջեւ տեղի է ունենում հրացանաձգութիւն: Երկու կողմից էլ շատ զոհեր կան: Նոյն գիշեր Դաւալուից ստացուեցին հեռագիրներ, որոնք յայտնում են, որ Ռեւադու գիւղը շրջապատուած է թուրքերով: Պատգամաւորները տեղ չհասան, որովհետեւ Աղիամ-

գալուի մօտ զինուած թուրքերը կտրել են նամակարի եւ բոյլ չեն տուել առաջ գնալ: Աղիամգալուի մօտ կանգ էին առել նաեւ զորամասերը, որոնք առաջ են շարժում շտաբի կրամանով: Երէկ Երեւանից Ղամարլուի ուղարկեալ մեկնեցին զորամասեր: Աղիամգալուի մօտ նրանց կանգնեցրել էին խնդուց քիչ հեռու խրամատներ մտած թուրքերը: Այստեղ զորամասերը բռնուեցին կռուի: Թուրքերը Ուլուխանլուից օգնութիւն ստացան: Զօրամասը շարժուեց առաջ եւ փախցրեց նրանց ու ստիպուած եղաւ իր գործողութիւնները ուղղել Ուլուխանլուի դէմ»:

Այս օրինակների թիւր կարելի է երկարել: Բազմաթիւ էին նըման դէպքերը:

«Թուրք հակապետական ու հակահայկական շարժումները ըստացել էին տարեբային բնոյթ: Ամէն տեղ կռիւ կար: Յարձակում էին թուրքերն ու քրդերը, պաշտպանում՝ հայ զորամասերն ու ինքնապաշտպանութեան խմբերը»:

Այս վերջինները կազմակերպուել էին Դրոյի նախաձեռնութեամբ՝ յատկապէս Ժողովրդի ինքնապաշտպանութեան համար՝ հընարաւորութեան սահմաններում շեղութեան չկատարուող զօրքի միջամտութիւնը, զօրքի, որի միակ նպատակը ռազմաճակատ մեկնելն էր:

Թուրք խռովարարների սանձարձակութիւնները դնալով ընդարձակ չափեր էին առնում եւ դաւառից աստիճանաբար մօտենում էին քաղաքին՝ Երեւանին: Ըմբոստութեան դրօշակ էր սլարդում Զանդիրասարը, որը գտնուում էր Երեւանի քթի տակ, մի քանի կիլոմետր քաղաքից: Ուլուխանլու երկաթուղու կայարանը գերեզմանատուն էր դարձել հայերի համար. վազաններից հանում եւ անխնայ կոտորում էին: Բանը հասաւ այնտեղ, որ թուրքերը ղլուխ բարձրացրին անգամ Երեւանում:

Արամի համար ոչ մի դժուարութիւն չէր ներկայացնում այդ շարժումը խեղդել ընդ մէջ՝ չարաշարօրէն պատժելով Երեւանի թուրքերին: Բայց վերոյիշեալ պատճառարանութեամբ նրա գլխով անգամ չանցաւ այդ բանը: Արամը տարուած էր միայն մի կամքով՝ ամէն զնով վերահաստատել քաղաքում խաղաղութիւնը, վերականգնել կարգը: Ու այդ նպատակով միւսների հետ միասին ինքն էլ իջաւ փողոց, մտաւ կրակի մէջ եւ, կեանքը ստոյգ մահի ենթարկելով՝ իր կամքը պարտադրեց շրջապատին ու փրկեց քաղաքը վտանգից:

Այստեղ տեղին է յիշատակել մի պարագայ, որը անհերքելի վկայութիւն է այն մասին, որ մահմետականների հակահայկական

չարժուժները վարում էին թուրք բանակի զործակալները :

Քաղաքում կարգը վերականգնելուց անմիջապես յետոյ, դու-մարուեց հայերի եւ թուրքերի ներկայացուցիչներին մի ժողով, որը զբաղուեց նահանգում ստեղծուած ծանր կացութեան հարցով ու հա-նեց մի շարք որոշումներ, — քաղաքը յայտարարել պատերազմական դրութեան մէջ, կողմէլ ուղղա-յեղափոխական դատարան, բանալ ճանապարհները՝ ապահովելու համար զօրամասերի մեկնումը ռազ-մաճակատ եւայլն : Արամը մի բովանդակալի խօսքով դիմեց ներկա-յացուցիչներին, յատկապէս մահմետականներին՝ կոչ անելով նրանց չինսայել իրենցից կախուածը, վերջ տալու համար նահանգում տիրող անիշխանութեան ու սարսափներին :

Ահա այդ ժողովում Մահմետական Ազգային Խորհուրդի ներ-կայացուցիչները յայտարարեցին, որ իրենք անկարող են զսպել թուրքերին եւ խնդրում են հայ զինուորական մարմնի աջակցութիւ-նը : Այդպիսով, թուրք բնակչութիւնը չէր ենթարկուած իր Ազգային Խորհրդին : Իսկ ո՞ւմ էր նա ենթարկուած, որի՞ համար հակապետա-կան ու հակահայկական շարժումներ առաջ բերում եւ ո՞վ էր ղեկա-վարում այդ շարժումները, որոնք ձեռնտու էին միայն տաճիկ հրա-մանատարութեան նպատակներին : Պատասխանը պարզ է :

Այդպիսով, Երեւանի նահանգում ստեղծուել էր մի անբնա-կան, անհանդուրժելի դրութիւն : Երջանի թուրքերը ո՛չ ոքի չէին ու-ղում ենթարկուել՝ ոչ տեղական իշխանութեան, ոչ իրենց ազգային իշխանութեան, եւ սանձարձակօրէն ջլատում էին երկրի կեանքը :

Եւ դնալով թուրքերն աւելի ու աւելի յանդուգն էին դառնում՝ առ ոչինչ համարելով ոչ միայն տեղական իշխանութեան յորդոր-ներն ու սպառնալիքները, ոչ միայն թուրք Ազգային Խորհրդի իրենց ուղղած իտաղապարհական կոչերը, այլեւ Թիֆլիսից ուղարկած Ան-դրրկովկասեան Կոմիտարիատի յատուկ պատուիրակութեան պահանջ-ները՝ վերջ տալու շահարկութիւններին ու հնազանդուելու իշխա-նութեան :

Այժմ բոլորի համար պարզ էր, որ ստեղծուած վիճակը անտա-նելի էր : Եթէ նրան վերջ չտրուէր, ոչ ռազմաճակատին կարելի էր օգնութեան հասնել, ոչ էլ թիկունքում կարգ հաստատել, — մի բան, որին ձգտում էր թշնամին :

Եւ որովհետեւ բոլոր միջոցները սպառուած էին, ուստի Ա-րամը, խորհրդակցելով զօրավար Սիւրիկեանի եւ Դրոյի հետ, ապա խօսելով սրանց տրամադրութիւնների մասին Յատուկ Կոմիտէում, որոշեց դիմել կտրուկ միջոցների : (Այդ ժամանակ Արամն արդէն

զիկտատուր էր ընտրուած . այդ մասին խօսք կը լինի վարը) : Նախ՝ նա որոշեց պատժել Ուլուխանլու թրքական մեծ գիւղը, եւ պատժել այնպէս, որ այդ դասը նաեւ խրատ լինի բոլոր թուրքերի համար :

1918 Փետրուարի վերջերին Դրոն իր ուժերով պաշարեց Ուլու-խանլուն : Նախքան զինուորական զործողութիւնների սկսելը, Արամի թելադրանքով առաջարկուեց թուրքերին վար զնել զէնքերն ու են-թարկուել իշխանութեան : Ի դուր : Այն ժամանակ Դրոն անցաւ զոր-ծի, խորտակեց թուրքերի զիմադրութիւնը եւ զիւղը մատնեց կրակի :

Ուլուխանլուցիներին համար դա անսպասելի էր : Զարաչարօ-րէն պատժուելով՝ նրանք խելքի եկան, յայտնեցին հնազանդութիւն ու այնուհետեւ մինչեւ վերջ մնացին հաւատարիմ իշխանութեան : Այդպիսով բացուեց երկաթուղային հաղորդակցութիւնը Ալեքսան-դրապոլի հետ . բացուեց եւ Ղամարլուի ճանապարհը :

Այնուհետեւ պատժուեցին եւ զսպուեցին Կողրի, Սուրմալուի, Շամարլուի եւ Նոր Բայաղիտի թուրքերը : Սակայն, Վեդիի, Շա-րուրի, Նախիջևանի թուրքերը շարունակեցին իրենց թշնամութիւն-ները՝ նպաստելով թրքական ռազմական ծրագիրներին :

**

Միանգամայն բնական էր, որ Երեւանի նահանգում կատար-ուող զէպքերի մասին պաշտօնական մարմինների (զինուորական եւ ոչ զինուորական) կողմից ամէն անգամ էլ տեղեկացուած էր կենտ-րոն՝ Թիֆլիս, մանրամասն զեկուցումներով, խնդրելով միաժամա-նակ նրա միջամտութիւնը՝ անկարգութիւններին վերջ տալու հա-մար :

Այդ տեղեկութիւնները Թիֆլիսում առաջ էին բերում ահագին իրարանցում թուրքերի եւ հայերի միջեւ փոխադարձ մեղադրանք-ներով : Հայ-թրքական ընդհարումների պատճառները քննելու եւ պարզելու նպատակով, Անդրկովկասի Կոմիտարիատը մի պատուի-րակութիւն ուղարկեց Երեւան : Պատուիրակութիւնը Թիֆլիս վերա-դառնալով իր անդամների՝ Կարճիկեանի եւ Զաֆարովի բերնով, ընդհանրապէս խոստովանած էր իր անկարողութիւնը՝ Երեւանի նա-հանգում կարգ հաստատելու համար :

Դրանց զեկուցումների հիման վրայ, «Իսիմետական պատգա-մաւորները (Սէյմի) մեղադրում էին հայերին, թէ նրանք մաքրում են Երեւանի նահանգը թուրք բնակչութիւնից՝ հայկական հոգ պատ-րաստելու նպատակով : Հայերը, ընդհակառակը, ընդհարումների

պատճառ էին ցոյց տալիս քուրքերին, որոնք արգելի էին յարուցանում ռազմաճակատ մեկնող զորամասերի առջեւ» (Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Բ. տպ., էջ 130):

Դէպքերի կապակցութեամբ Խ. Կարճիկեանը Սէյմում արտասանում է մի ուշադրաւ եւ բնորոշ ճառ, որի մասին զաղափար տալու համար բերենք մի երկու մէջբերումներ:

Ուլուխանլուում պատուիրակութեան առջեւ պատկերանում է Հետեւեալը.—

«Ուլուխանլուում ներկայացնում է պատերազմական վիճակ: Նախ՝ պատուիրակութեան դիմադրեց այդ կայարանի գիւնուած պահակախումբը՝ մի քանի հարիւր գիւնուած գիւղացիներ, մի քանի հարիւր ճիւղեր, ամէնքը գիւնուած: Այս հանգոյցային կայարանը քոլորովին այրուած է, այնպէս որ հեռագրաթելը վերականգնելու նպատակով էջմիածնի կայարանից մեզ հետ առած ծառայողներին տեղ չկար տեղադրելու: Մենք իմացանք, որ մի քանի օր առաջ այնտեղից հեռացել էին բոլոր ծառայողները, որովհետեւ կայարանի վրայ յարձակուել էին քրդերը, այրել, քար ու քանդ արել եւ կողոպտել ամէն ինչ՝ կրակի մատնելով կայարանի բոլոր շէնքերը:

«Քուրքերի ներկայացուցիչները յայտնեցին, որ նրանք թոյլ չեն տայ, որ պատերազմից մնացած պետական ստացուածքը բաժին հասնի բացառապէս հայերին կամ վրացիներին: Նրանք պահանջում էին, որ այդ ստացուածքը հաւասարապէս բաժնուի Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջեւ: Մասնաւորապէս պահանջում էին, որ մահմետականներին տրուի այն քանակութեամբ զէնք, ինչ քանակութեամբ որ համապատասխան է իրենց բնակչութեան թուին: Յետոյ քուրքերը յայտնեցին, որ իրենք թոյլ չեն տայ երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը, մինչեւ որ իրենց հիմնական պահանջը չգոհացուի: Եթէ հայերը կամենում են խաղաղութեամբ կարգադրել այս բախումը, նրանք պարտաւոր են անյապազ լուծել իրենց զորամասերը եւ զէնքերը յանձնել քուրքերին, այլապէս իրենք թոյլ չեն տայ կարգի վերականգնումը»:

Քուրքերի պահանջը գէնքի եւ ընդհանրապէս ռազմամթերքի նկատմամբ շատ բնորոշ էր: Պէտք է իմանալ, որ պատերազմի ամբողջ ընթացքում նրանք ոչ մի զինուոր չէին տուել եւ ընդհանրապէս որեւէ մասնակցութիւն չէին ունեցել: Իսկ այժմ պահանջում էին, որ նախ՝ ուսանելի թողած ռազմամթերքից համապատասխան բաժին հանուի իրենց եւ սպա՝ հայերը լուծեն իրենց զորամասերը ու զէնքերը յանձնեն Քուրքերին: Հարց է ծագում, ինչո՞ւ էին Քուր-

քերը նման պահանջներ անում: Իրե՞նց պաշտպանելու: Բայց ո՞վ էր նրանց վրայ յարձակում: Ամբողջ ժամանակ եւ ամէն տեղ, որտեղ նրանք նոյնիսկ չնշին ուժ էին կազմում, յարձակողը, թալանողը, այրողն ու սպանող-մորթողը իրենք էին. հայերը միայն պաշտպանում էին:

Քուրքերը իրենց պահանջով ցանկանում էին զրկել հայերին ինքնապաշտպանութեան հնարաւորութիւնից, որպէսզի անարգել կոտորէին, թալանէին եւ այրէին: Յետոյ ռուսական ուժերի քաշուելուց յետոյ, Անդրկովկասի ճակատը մերկանում էր տաճիկ բանակի առաջ եւ միակ ուժը, որ սլիտի կանդնեցնէր առաջխաղացող թշնամուն, հայկական զորամասերն էին: Մահմետականները, այդ զորամասերի զինաթափումը պահանջելով, պարզապէս անարգել ճանապարհ էին ուզում հարթել տաճիկ բանակի առաջխաղացման:

Պարզ չէ՞, որ նման առաջարկի բուն հեղինակները թրքական բանակի ծայտեալ գործակալներն էին:

Երեւանում Անդրկովկասեան Կոմիսարիատի պատուիրակութիւնը լսում է հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին, որոնք յայտնում են հետեւեալը.—

«Ամէն բան, որ կատարուում է այժմ Անդրկովկասում, յանգում է մի որոշ մտքի: Նախ՝ բոլոր այն երկաթուղագծերի վրայ, ուր ապրում են քուրքերը, համարեա միաժամանակ տեսնում ենք որոշ բնոյթ կրող յուզումներ, որոնք վերջանում են երկաթուղային հաղորդակցութեան խանգարումով:

«Մատնանշում են Սանդար-Սադախլու երկաթուղագիծը, Ուլուխանլուի գիծը: Յետոյ յայտնում են որ խոտովութիւնները տեղի են ունենում երկաթուղու մօտ երկաթուղային հաղորդակցութեան շուրջ: Վերջապէս յայտնում են, որ այս ամէնը պատահական բան չէ, որ կան ինչ որ մութ տարրեր, որոնք առաջ են բերում այդ ամէնը եւ գործում որոշ նպատակով, որպէսզի խանգարեն հաղորդակցութեան միջոցները, արգելի հանդիսանան ռազմաճակատի պաշտպանութեան եւ որ այս բանում թէ՛ մահմետական ու հայ եւ թէ՛ ամբողջ Անդրկովկասի ազգաբնակչութիւնը այդ մութ ուժերի խաղերի գոհն է: Երեւանի նահանգի արեւելեան մասը, ուր ազգաբնակչութիւնը խառն է, արդէն համարեա մի անձանօթ երկիր է. յայտնի չէ, թէ ի՞նչ է կատարում այնտեղ, ոչ ոք մի լուր չի ստանում եւ այնտեղ մուտք գործելը բոլորովին անհնարին է:

«Միւս կողմից՝ հայ հասարակութեան վիճակը ծանր է այնտեղ: Նախ, ինչպէս ձեզ յայտնի է, այնտեղ կազմակերպուում են

հայկական գործառնություն, որոնք պետք է ուղարկուէին ռազմաճակատ: Այդ գործառնությունը մի ամբողջ շարք սպասեցին ռազմական օրին: Որոշ մասեր առաջ շարժուեցին՝ երկարաւղագծի վրայ գիծն ու պահեստները պահպանելու համար: Եւ ահա ստեղծուեց այնպիսի դրու-
թիւն, որ անհնար էր ոչ ռազմաճակատ ուղարկել, ոչ էլ Շահքայս-
տում, Գաւալուում եւ Նախիջեւանում կանգնած գործառնությունն օգ-
նութեան հասնել: Նրանք կտրուեցին իրարից եւ ոչ մի հնար չկար
նրանց միջեւ կապ հաստատելու: Հայ գործառնությունը չէին կարող հան-
դուրծել, որ շարքներով մնան նստած ու չկարողանան մեկնել ռազ-
մաճակատ»:

Այդպիսով, «մութ ուժերը» Արարատեան Դաշտում ստեղծե-
ցին մի դրութիւն, որով թուրքերը որեւէ իշխանութիւն չէին ճա-
նաչում, ոչ տեղական ոչ էլ կենտրոնական: Այդ «մութ ուժերի» ձեռ-
քին կոյր գործիչ էին ոչ միայն գաւառի թուրք ժողովրդի առաջ-
նորդները, այլեւ կենտրոնում՝ Թիֆլիսում՝ կոմիսարիատում եւ
Սէյմում նստած այդ ժողովրդի ներկայացուցիչները, որոնք իրենց
աղմկարար ելոյթներով մեղադրում էին հայերին՝ աչք գոցելով
թուրք տարրերի ազդակող հակապետական ու աւազակային ելոյթ-
ների վրայ:

Չմոռանանք, որ Երեւանի Մահմետական Ազգային Խորհուրդը,
որ շատ աւելի լաւ տեղեակ էր գաւառի անցուղարձին եւ որի մէջ
նստած էին աւելի արդարամիտ մարդիկ, խոստովանում էր իր ան-
գորութիւնը՝ իր ցեղակիցների հակապետական ու աւազակային շար-
ժումները զսպելու մէջ:

«Եւ մտնում եմ հայ եւ մահմետական տեղական գործիչների
դրութեան մէջ: Այնտեղ հրդեհն արդէն սկսուած է, իսկ մենք չեմք
տալիս ոչ մի օգնութիւն եւ ոչ մի միջոց՝ հանգցնելու համար այդ
հրդեհը: Բայց, պատգամաւորներ Անդրկովկասի Սէյմի, մի՛ խանգա-
րէ՛ք նրանց, թոյլ տուէ՛ք, որ նրանք իրենց հանգցնեն հրդեհը. մենք
նրանց օգնել չեմք կարող այժմ: Մենք չպետք է կորցնենք մեր պա-
գարիւնութիւնը: Քաղաքական դեկավար մարմինը այսպիսի ահաւոր
վայրկեանում, երբ ամէնքս կանգնած եմք անդունդի եզերքին, իրա-
ւունք չունի կորցնելու հաւասարակշռութիւնը, իրաւունք չունի
գրադուելու միմիանց դէմ ամբաստանագրքեր պատրաստելով: Մեզ-
նից ամէն մէկը պատասխանատու է ո՛չ միայն իր համար, այլեւ հա-
յերի, մահմետականների ու վրացիների: Մենք պատասխանատու եմք
ամբողջ ազգաբնակչութեան համար: Մենք չպետք է դուրս գանք իր-
քեւ միմիանց մեղադրողներ: Մենք հանդէս պետք է գանք, որպէս

գաղափարական քաղաքական մի մարմին, որը այս յուզումնալից
վայրկեանին կոչուած է փրկելու երկիրը: Եւ կոչ եմ անում պաղա-
րիւնութեան եւ սեփական պարտականութեան գիտակցութեան»:

**

Սէյմը, ըստ երեւոյթին, անբաւարար համարելով Անդրկով-
կասի կոմիսարիատի պատուիրակութեան կատարած քննութիւնը Ա-
րարատեան Դաշտում, իր կողմից մի նոր պատուիրակութիւն է ու-
ղարկում դէպքերի վայրը: Պատուիրակութեան նախագահն էր վրա-
ցի Գէորգաձէն, անդամները՝ հայերի կողմից Ս. Տէր Պաշտարեանը
(դաշնակցական), իսկ թուրքերի կողմից Սաֆի-Քուրտսկին (էս-էր):
Դրանց Երեւանում միանում են հայերի եւ թուրքերի ներկայացու-
ցիչները, եւ բոլորը միասին անցնում են շրջանը՝ տեղն ու տեղը ծա-
նօթանալու, քննելու համար հայ-թուրքական յարաբերութիւնների
լարման պատճառը:

Պատգամաւորութիւնը հասնում է մինչեւ Գայլի-Դրունք (Շա-
րուրի նախադուրը), որից յետոյ թուրքերի կողմից դիժը փճացուած
լինելու պատճառով, նրանք չեն կարողանում շարունակել ճանապար-
հը եւ վերադառնում են:

Երբ այդ պատուիրակութիւնը վերադառնում է Թիֆլիս, նրա
նախագահը Սէյմի Մարտի 7ի (1918) նիստում ներկայացնում է ման-
րամասն զեկուցում:

Ի վերջոյ, Սէյմը ընդունեց մի բանաձեւ, որի հիմնական միտ-
քը այն էր, թէ անմիջապէս պետք է ձեռք առնել վճռական միջոց-
ներ, որպէս զի զօրամասերը կարողանան առանց արգելքի անցնել
դէպի սահմանազուլիս: Սակայն Անդրկովկասի իշխանութիւնը զուրկ
էր ամենատարրական գործադիր միջոցներից: Ուրիշ անդամների պէս
այս բանաձեւն էլ մնաց մեռած տառ:

Այս նշանակում էր, որ Արարատեան Դաշտի իշխանութիւնը
ինքը պետք է տնօրինէր իր ճակատագիրը. կենտրոնի կողմից նա
փաստօրէն ձգուած էր իր բախտին:

Արդարանում էր Արամի նախատեսութիւնը, որ նա արտայայ-
տեց Երեւան գալու առաջին օրը Ազգային Խորհրդում տուած իր զե-
կուցման մէջ:

Երեւանում թէ՛ Յատուկ կոմիտէն Արամի ղլխաւորութեամբ
եւ թէ՛ գինուորական իշխանութիւնը զօրավար Սիլիկեանի եւ Դրոյի
աջակցութեամբ ամէն ջանք թափում էին՝ խուսափելու մահմետա-

կաննների հետ ընդհարում ունենալուց: Երեւանից մի շարք խառն (թուրք-հայ) հաշտարար պատուիրակութիւններ ուղարկուեցին հակասեռական շարժումներ առաջ բերող թրքական շրջանները. այդ շրջաններում հաշտարար պատուիրակութեանը ընդունում էին լիտի յանդգնութեամբ եւ թշնամարար:

Բերենք այդ կարգի մի երկու օրինակ:

Պէտք է խոստովանել, որ Երեւանի թուրք Ազգային Խորհուրդը նոյնպէս ցանկալի էր համարում գաւառի իր ցեղակիցների ու կրօնակիցների աւազակարարոյ ելոյթները եւ միշտ էլ ընդառաջում էր Հայոց Ազգային Խորհրդի առաջարկներին՝ խառն պատուիրակութիւն ուղարկել մահմետական ապստամբ շրջանները՝ խոտվարարներին խաղաղեցնելու, ի կարգ հրաւիրելու նպատակով: Այդպիսի մի խառն պատուիրակութիւն ուղարկուեց Վեդի Բասարի շրջանը, որքան յիշում եմ, Ուլուխանլուի ղէպքից առաջ: Այդ շրջանը ամենաանհանդիստ շրջաններից մէկն էր, թերեւս ամենաանհանգիստը: Հայոց Ազգային Խորհրդից պատուիրակութեան անդամներ ընտրուեցին Յովհաննէս Մելիքեանը, որ Ազգային Խորհրդի ազդեցիկ անդամներից էր, եւ Սահակ Թորոսեանը, որ նահանգական կոմիսար էր, իսկ թուրքերի կողմից՝ ճարտարապետ Պալիլ բէյը եւ իրաւարան Աղա Բարէն: Առաջինը Երեւանի թուրքերի մէջ աչքի ընկնող հասարակական ղէպք էր, խօսքի վարպետ եւ ղէպքերին արդարութեան զգացումով մօտեցող:

Երբ պատգամաւորութիւնը՝ սպիտակ դրօշակ պարզած՝ մօտենում է ապստամբ թրքական գիւղերին, թուրքերը, հասկանալով թէ բանն ինչումն է, շրջապատում են եկողներին եւ տանում իրենց հրամանատարի մօտ:

Երբ պատգամաւորութիւնը վերադարձաւ Երեւան, մանրամասնօրէն զեկուցում տուեց Ազգային Խորհրդում, իսկ Սահակ Թորոսեանը նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէում: Այս վերջինը զարմանքով պնդում էր այն «ընդունելութեան» մասին, որ թուրքերի հրամանատարը ցոյց էր տուել ղէպի յատկապէս թուրք պատգամաւորները, մասնաւորապէս անողորմ էր եղել Պալիլ բէյի նկատմամբ:

Այս վերջինը, թուրքերին համարելով իր մարդիկը, ինչպէս նաեւ իրեն նրանց մարդը, մտերմական խօսքերով դիմում է նրանց, բացատրելով յեղափոխութեան նշանակութիւնը, նրա բերած բարիքները եւ բոլորի պարտականութիւնը ղէպի երկրի նոր իշխանութիւնը եւ յեղափոխութեան ստեղծած կարգերը եւայլն: Թուրքերը նրա

ճառը լսում են անտարբեր, մինչեւ իսկ արհամարհական ձևով: Պալիլ բէյը վերջոյցնում է իր խօսքը. առաջ է դալիս թուրք հրամանատարը եւ պատասխանում նրան: Այդ խօսքը, ուղղուած յատկապէս Պալիլ բէյին, սկսւում է նախատինջով ու նախատինջով էլ վերջանում: Պալիլ բէյին մեղադրում է, որ նա ուրացել է իր հաւատը, ծախուած-կաշառուած մարդ է, դաւաճան է եւ նրա խօսքը ոչ մի արժէք չունի, որ իրենք նրա հասարակական հանգամանքը ոչ մի բանի տեղ չեն դնում, նրան ոչ մի արժէք չեն տալիս: Պօսքը վերջանում է «նալլաթ»ով ու թուքով:

«Հրամանատար»ի խօսքից յետոյ, թուրք «զինուորները», հետեւելով իրենց «հրամանատար»ի օրինակին՝ թքում ու «նալլաթ» են ասում...

Հայ պատգամաւորների հանդէպ «հրամանատարը» իրեն մարդավարի է պահում եւ նրանց պահանջին՝ բաց անել ճանապարհները, վերջ տալ թշնամական գործողութիւններին եւ ազատ արձակել զերուած հայ զինուորներին ու վերադարձնել նրանց ղէպքերը, — խոստանում է երեք օրից յետոյ պատասխանել: Այդ պատասխանը, սակայն, երբեք էլ չստացուեց, իսկ դերիներն էլ սպանուեցին:

Նոյն նպատակով մի խառն հաշտարար պատուիրակութիւն էլ ուղարկուեց Եւրոսի թուրքերի մօտ, որը ողբերգական վախճան ունեցաւ պատուիրակութեան հայ անդամ իրաւարան Լեւոն Մուշեղեանի համար: Տարաբախտ հասարակական գործիչը անձնասպան է լինում՝ թշնամարար տրամադրուած-զազանացած, հաւանօրէն նախապատրաստուած, ամբոխի խոշտանգումներից ազատուելու մտահոգութեամբ: Հետագայում նրա դիակը բերուեց Երեւան ու յանձնուեց ծնողներին:

Բաւական համարենք այդ վկայութիւնները, որոնք ցոյց են տալիս, թէ որպիսի՞ պայմաններում էր ապրում Արարատեան Դաշտի հայութիւնը այն օրերին:

Այդ ամէնքին միանում էր ե՛ւ պարենաւորման տագնապը, որ սաստիկ անհանգստացնում, ջղայնացնում էր Երեւանի բնակիչներին: Սկսուել էր ծայր տալ մի անսովոր երեւոյթ. փոռերի, խանութների առջեւ կազմւում էին «պոչեր», հերթի սպասողներ: Հացի, մսի, շաքարի, նաթի եւ այլ մթերքների պակասը գնալով նեղում էր մարդկանց ու յուսահատութեան մատնում, որովհետեւ ա-

պագայի հեռանկարներն էլ ոչինչ չէին խոստանում առօրեայ հոգե-
րով ապրող քաղաքացուն:

Ահա այդ օրերին էր, որ Արամին Երեւանում ընտրեցին դիկ-
տատոր:

Այդ ընտրութեան պատմութիւնը ուշադրաւ է նրանով, որ բո-
լորովին նման չէր դիկտատորների ընտրութեան պատմութեան: Ա-
րամը ընտրուեց դիկտատոր ոչ միայն իր կամքից ու ցանկութիւնից
անկախ, այլ նա հեռաւոր տեղեկութիւն իսկ չունէր այդ ընտրութեան
մասին: Աւելին. տեղեկութիւն չունէին ոչ միայն ինքը՝ Արամը, այլ-
եւ նրա կուսակցական մօտ ընկերները, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշ-
նակցութեան մարմինները:

Այդ ընտրութիւնը պէտք է բացատրել նրանով, որ նախապատ-
րաստական որեւէ աշխատանք ունէ կողմից տեղի չէր ունեցել, ունէ
դաւադրութիւն Ազգային Խորհրդի կամ Յատուկ Կոմիտէի դէմ եղած
չէր: Ընտրութիւնը կատարուել էր յանկարծակի, անսպասելի ան-
դամ ընտրողների համար:

Մի բազմամարդ հասարակական ժողովում, ուր ներկայ են
լինում մարդիկ հասարակութեան բոլոր խաւերից եւ որը քննութեան
է առնում Երեւանի եւ ընդհանրապէս Արարատեան Դաշտի ու յարա-
կից գաւառների համար ստեղծուած արտակարգօրէն ծանր կացու-
թիւնը, արտասանում են ճառեր գինուորականների ու ոչ գինուոր-
ականների կողմից, եւ մարդկանց մտքերն ու զգացմունքները լար-
ւում են ծայր աստիճան: Դրութիւնը թւում է այնքա՛ն յուսահատա-
կան, որ ներկաների համար փրկութեան մի ելք է մնում, այն է՝
ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել մի մարդու ձեռքը՝ տալով
նրան արտակարգ լիազօրութիւններ եւ ամբողջովին ենթարկուել
նրան:

Այդ մարդը Երեւանում, ի հարկէ, Արամն էր:

Առանձնապէս աչքի ընկնող դեր է կատարում քաղաքի պարետ
Ա. Շահաթունեանը (գինուորական):

Արամին դիկտատոր հռչակելու որոշումը հանելով՝ ժողովա-
կանները Շահաթունեանի եւ միւսների առաջնորդութեամբ շարժ-
ւում են դէպի Արամի բնակարանը՝ յայտնելու համար նրան ժողո-
վրդի կամքը: Երբ այդ բազմութիւնը մօտենում է Յարսկայա փո-
ղոցին(*), ուր ապրում էր Արամը, վերջինը իր բնակարանից դուրս

(*) Արամի մահից յետոյ, այդ փողոցը՝ Քաղաքային Խորհրդի որոշումով՝
անուանուեց Արամի փողոց:

գալով, գնում է Ազգային Խորհուրդ: Հեռուից նկատելով ամբողջ
եւ նրա բորբոքուած տրամադրութիւնը՝ Արամը, իր պատմելով, վատ
ենթադրութիւն է անում: Մի քանի օր առաջ նրա կարգադրութեամբ
խփուել էր Չոլախ Գէորգը, սաստիկ հալածուած էին նրա աւագա-
կային հակումներ ունեցող տղաները եւ ուրիշները, ինչպէս նաեւ
այն բոլոր տարրերը, որոնք տրամադիր չէին ենթարկուելու Ազգա-
յին Խորհրդի անունից եկած կարգադրութիւններին: Արամը բնագո-
րէն ստուգում է՝ թէ տե՞ղն է արդեօք իր ատրճանակը: Բայց կաս-
կածը ցրում է, երբ տեսնում է Շահաթունեանին եւ միւսներին:
Սակայն, շարունակում է տարակուսել, թէ ի՞նչ են ուզում այդ մար-
դիկ, ի՞նչ է պատահել քաղաքում, որ իրեն յայտնի չէր:

Բազմութիւնը երբ մօտենում է, նրա ներկայացուցիչները
յայտնում են Արամին իրենց որոշումը եւ, «կեցցէ»ներով բարձրա-
ցնելով նրան ձեռքերի վրայ, տանում են Ազգային Խորհուրդ:

Ճաշից յետոյ, սովորական ժամին, գնացի Ազգային Խորհուրդ:
Այն ժամանակ Ազգային Խորհուրդը եւ Յատուկ Կոմիտէն աշխատում
էին Արովեան փողոցի վրայ, Նաղարեան եւ Բէյնութեան փողոցների
միջեւ գտնուող միակ մեծ երկյարկանի տանը: Դեռ հեռուից զար-
մանքով նկատեցի Ազգային Խորհրդի շէնքի առջեւ խոնուած բազ-
մութիւնը:

Մօտեցայ: Լսեցի, որ Արամը դիկտատոր է յայտարարուած եւ
որ հէնց նոր են նրան ցոյցերով ներս տարել:

Ներս մտայ: Շրջապատուած մի խումբ մօտիկ եւ ոչ մօտիկ
մարդկանցով՝ Արամը դուրս էր գալիս պատշգամբ, որտեղից խօսք
ուղղեց փողոցում խոնուած հասարակութեան:

Նոյն օրը երեկոյեան հրաւիրուեց Ազգային Խորհրդի արտա-
կարգ նիստ: Արամը մի քանի խօսքով պատմեց օրուայ անցուղարձի
մասին: Յիշում եմ, որ նրա խօսքը ցաւի ու վշտի շեշտ ունէր: Օր-
ուայ դէպքը նա բացատրում էր իրրեւ յուսալքուած, վհատուած հո-
գիների ապրումների տխուր արտայայտութիւն: Վատ նշան էր հա-
մարում, երբ մարդիկ այդ ձեւով իրենց անճարութիւնն են խոստո-
վանում եւ իրենց իրաւունքները յանձնում են մէկին՝ կապելով նրա
հետ երկրի փրկութեան գործը: Ազգային Խորհուրդը պէտք չէ գնայ
այդ ճանապարհով եւ ինքը, թէեւ զրսի աչքում «դիկտատոր», բայց
ոչ մի փոփոխութիւն չի մտցնելու գործող հաստատութիւնների մէջ,
ամէն ինչ գնալու է նոյն ճամբով, երկրի տէրը մնալու է Ազգային
Խորհուրդը:

Հետեւեալ օրը, երեկոյեան, Հ. Յ. Դաշնակցութեան Երեւանի

Կ. Կոմիտէի նիստում էլ խօսք եղաւ նոյն խնդրի մասին: Արամը այստեղ եւս արտայայտուեց նոյն իմաստով:

«Առանց Կ. Կոմիտէի խորհրդի ու տրամադրութեան, առանց Ազգային խորհրդի գիտութեան ու հաւանութեան՝ ոչինչ չի կատարուի», — ասաց նա:

Բնածին դեմոկրատ էր:

**


Յատուկ Կոմիտէի գործին անցնելու հէնց առաջին օրից Արամը հասարակական կարգերը ստնահարողների նկատմամբ շատ որոշ դիրք բռնեց:

1918ի սկիզբներն էին: Ռուսական մեծ յեղափոխութեան մեղրամիսն արդէն անցել էր. հին օրէնքներն ու իշխանութիւնը վերջացել էին, իսկ նորերը դեռ սահմանուած ու կազմակերպուած չէին: Այդ անցողական ու որոնումների, միաժամանակ լքումների ու յուսահատութեան շրջանում շատ շատերի համար այլեւս հեղինակութիւն չէր մնացել: Թուլացել էին բարոյական զսպանակները, եւ մոլի կիրքերն ու ստոր բնազդներն էին արտայայտուած՝ յենարան ունենալով բիրտ ուժը ու լկտի յանդգնութիւնը:

Արարատեան Գաշտի քաղաքական այս անստույգ, խառնաշփոթ վիճակը նպաստաւոր պարագայ էր չարագործների ու սրիկաների համար: Արամը անխնայ ու անողորմ էր հասարակական նման տականքների հանդէպ: Չուլիս Գէորդի պարագան ցոյց տուեց, որ Արամը չպիտի խնայէր անդամ դաշնակցական երբեմն աչքի ընկած մարտիկներին, եթէ սրանք ի շարն գործ դնէին իրենց դիրքը:

Չուլիս Գէորդ: Իր յանդգնութիւնը չափ ու սահման չունէր: Նրա անունը սարսափ էր ազդում շատերին: Անգամ իր նախկին խրմբակտը՝ յայտնի մարտիկ Դալի Ղազարը քաշուած էր նրանից: Միակ մարդը, որի հեղինակութիւնը ան անվերապահօրէն ընդունում էր՝ Արամն էր: Գայի մազ ունեցող Գէորդը գառ էր դառնում, երբ մօտենում էր Արամին եւ հետը խօսում: Ո՛վ գիտէ, գուցէ բնազդով զգում էր, որ Արամը միակ մարդն էր, որի ձեռքը կարող էր պատուհասել իրեն:

Նրա այան-թայանի ու սրիկայութիւնների մասին Արամը, ի հարկէ, գիտէր: Ոչ թէ երես չէր տալիս, այլ սաստ ու չոր լեզու ունէր նրա հանդէպ: Յիշում եմ, թէ ինչպէ՛ս էր Գէորդը խնդրում ինձ տեսակցութիւն յաջողցնել Արամի հետ՝ իրեն արդարացնելու համար:



1.— Զօր. Նիկոլայեւ, 2.— Գրօ, 3.— Արամ, 4.— Վարդան, 5.— Տ. Բաղդասարեան, 6.— Խէչօ, 7.— Կոստի Համբարձումեան:

Միայն մի անգամ համաձայնեց Արամը ընդունել նրան իր բընակարանում: Գէորգը խնդրում էր չհաւատալ իր մասին տարածուած չարամիտ լուրերին եւ, երեսը պարզ անելու համար, տալ իրեն որեւէ ծանր ու պատասխանատու դործ (օրինակ՝ Ծարապխանէ գնալ եւ ռազմամթերք բերել այնտեղ մնացած ռուսական հարուստ զինապահեստներից): Արամը մերժեց՝ ասելով թէ գոհ կը լինի, եթէ հասարակութիւնից այլեւս զանպատ չլսի նրա մասին:

Այնուամենայնիւ, յետագայում Արամը մի յանձնարարութիւն տուեց Գէորգին: Եւ ահա թէ ինչպէս:

Այն օրերին ոտքի էին կանգնել նաեւ Ղարաբաղի եւ Զանգեզուրի թուրքերը, որոնց հետ շարունակական պայքարի մէջ էին տեղական հայերը: Այնտեղից պատգամաւորութիւն էր եկել Երեւան: Այդ պատգամաւորութեան՝ Ազդ. Խորհուրդում տուած զեկուցումից պարզուեց, որ տեղական թուրքերը Ատրբէջանի եւ Թուրքիայի գործակալների զրդումով յարձակում են հայ գիւղերի վրայ եւ ահաբեկում շրջանը: Երջանի անցուղարձի մասին տեղեկութիւն տալով՝ պատգամաւորները խնդրում էին նաեւ օգնութիւն ռազմամթերքով:

Որոշուեց առաջին հերթին Զանգեզուր ուղարկել երեք հարիւր հրացան եւ կէս միլիոն փամփուշտ: Եւ որովհետեւ օգնութիւնը շտապողական էր, ուստի այդ ռազմամթերքն ուղարկուեց ոչ թէ աւելի ապահով, բայց երկար ճանապարհով՝ Նոր Բայազիտ—Վայոց Ձոր (Գարաբաղեաց) գծով, այլ աւելի կարճ երկաթուղով, որն անցնում էր Ծարուրով՝ Թրքարնակ վտանգաւոր շրջանով:

Ահա այստեղ էր, որ Արամը յանձնարարեց Չուլխի Գէորգին՝ իր խմբով ուղեկցել Զանգեզուրի համար Նախիջևեանի գծով ռազմամթերք տանող զնացքին: Գէորգը յանձն առաւ, բայց ինքը անձամբ չզնաց խմբի հետ՝ ծածկելով այդ բանը Արամից:

Ռազմամթերք տանող զնացքը Ծարուրում ենթարկուեց խորտակման ու կողոպտուեց թուրքերի ձեռքով:

Լուրը հասաւ Երեւան, եւ բացուեց Գէորգի խաբեքայութիւնը:

Այդ դժբախտ լուրը երեւան հանելու յաջորդ օրը, վաղ առաւօտեան, երբ ըստ սովորականի մտնում էի Ազգային Խորհրդի ընդհանուր գրասենեակը, լսեցի Արամի ջղայնոտ, բարձր ձայնը հարեւան Յատուկ Կոմիտէի նախազահութեան սենեակից: Գրասենեակի պաշտօնեաններից դեռ ոչ ոք չէր եկել: Արամի ձայնի վրայ, արագութեամբ ներս մտայ ու զարմացած կանդ առի: Առաջին անգամն էի տեսնում Արամին այդ աստիճան վրդովուած, զայրացած վիճակում: Զղայնացած անց ու դարձ էր անում փոքրիկ սենեակում ան-

կիւնից անկիւն եւ ձեռքը թափահարելով յանդիմանում ու նախատում էր կահափայտի վրայ յենուած ու բոլորովին գունատուած Չոլախ Գէորգին:

Սենեակում, պատի մօտ, գլխակոր, լուռ կանգնած էին երկուերեք այլ խմբապետներ: Արամի վրդովմունքը անզուսպ էր: Նա ուղղակի թոյն էր թափում Գէորգի դիւին նրա «աննամուս» վարժունքին համար: Սենեակի մթնոլորտը ծանր եկաւ ինձ: Դուրս եկայ ու նրստեցի հարեան սենեակում: Պարզ յիշում եմ Արամի վերջին խօսքերը:

«Ես կ'անիծեմ այն ժողովրդի հէրը, որ շան սատակ չի անի քեզ պէս դաւաճաններին»:

Եւ դուրս եկաւ՝ աղմուկով ծածկելով դուռը մնացածների երեսին:

Քիչ յետոյ ներս մտայ: Այդ սենեակում աշխատում էինք ես եւ Մուսիկեանը: Սենեակում մնացածները կանգնած էին նոյն սառած վիճակում: Լուսիներ խղեց Եսպոնը:

«Չոլախ, շան որդի, բալորը քո... է. էս քուէր տանել կը լինի...»:

Դրանից յետոյ Չոլախ Գէորգը չուղղուեց: Նա շարունակում էր իր աւազակութիւններն ու շահատակութիւնները Երեւանի շրջանում: Իր վերջը եղաւ ողբերգական. նա գնդակահարուեց Արամի հրամանով: Այդ մասին Արամը յայտնեց իրեն դիկտատոր ընտրողներին ուղղած ճառում, երբ հասարակութեան միջից բողոքի ձեւով Գէորգի տղաներից մէկը հարց տուեց թէ՛ կարելի՞ բան է օրը ցերեկով քաղաքի փողոցում մարդ խփել: Արամը պատասխանեց այն մտքով թէ՛ ով որ ներկայ բացառիկ ծանր պայմաններում չի ենթարկուի երկրի իշխանութեան ու կը հետեւի Գէորգի օրինակին, նոյնպէս կը գնդակահարուի:

Գէորգի օրինակը, ինչպէս յիշեցի, ցոյց տուեց, որ Արամը չէր խնայում ու չպիտի խնայէր անդամ դաշնակցական անուանի գինուորներին ու խմբապետներին, երբ նրանք մոռանում էին իրենց պարտականութիւնները հասարակութեան հանդէպ ու չարիք էին դառնում նրա գլխին: Ու հասարակութիւնը ջերմօրէն ողջունում էր Արամի նման քայլերը:

Արամի դիկտատոր ընտրուելու առիթով կայացած Ազգ. Խորհրդի արտակարգ նիստում, երբ խօսք բացուեց նաեւ Գէորգի գընդակահարութեան մասին, Խորհրդի նախագահը (Գ. Տէր Սաչատըրեան), որ ժողովրդական կուսակցութեան անդամ էր, Ազգ. Խորհրդի

անունից հաւանութիւն յայտնեց Արամի նման վարժունքին այն բոլոր տարրերի հանդէպ, որոնք իրենց հակաօրինական վարք ու բարքով այս ծանր օրերին դժուարացնում են իշխանութեան գործը եւ այդպիսով նպաստում թշնամու դաւերին:

Արամը պատժում էր ոչ միայն անհատները, երբ նրանք լրբանում էին ու շահատակութիւններ անում: Ոչ պակաս վճռականութեամբ նա պատժում էր եւ ամբողջ գիւղեր, երբ նրանք հրաժարւում էին իրենց պարտականութիւնը կատարել Հայրենիքի հանդէպ այն օրերին, երբ Հայրենիքն ահաւոր վտանգի առջեւ էր կանգնած:

Չօրքի պարենաւորումը դժուարին հարցերից մէկն էր: Հացը պակաս էր ու դժուարութեամբ էր ճարւում: Հայ գիւղը անտրտունջ ու գիտակցաբար տալիս էր, ինչ որ նրանից պահանջուում էր: Բայց Եղուարդ գիւղը, որ շրջանի հնձառատ գիւղն էր համարւում, մերժեց տալ իր բաժին հացը բանակի համար:

Արամը հրամայեց Ազգ. Խորհրդի դուարտիայի պետ Աբարանցի Մաթէոսին պաշարել այդ գիւղը եւ ոմբակոծել: Երբ թնդանօթները գոռացին, Եղուարդը խելքի եկաւ ու տուեց՝ ինչ որ իր պարտքն էր եւ ինչ որ պահանջուում էր զօրքի համար:

**

Ես լսել էի, որ Արամը առաջ դիւրաբորոք ու ջղային մարդ էր եղել: Բայց Երեւանում, թէեւ մթնոլորտը չափազանց ջղայնացնող էր եւ ժողովուրդը արտակարգօրէն լարուած վիճակ էր ապրում, այնուամենայնիւ Արամը իր առօրեայ հասարակական աշխատանքների մէջ միշտ հանդիստ էր եւ զուսպ: Նա զբաղուած էր առաւօտունից մինչեւ երեկոյ, սաստիկ յոգնում էր. բայց ոչ ոք նրա բարկացկոտ ձայնը չէր լսում, ոչ ոք չէր վանդատում նրա վերաբերմունքից, ոչ ոք չէր տեսել նրա կոպտութիւնը ընդհանրապէս:

Երեւանի Ազգ. Խորհրդի իշխանութեան շրջանում ես յիշում եմ երեք դէպք, երբ Արամը իր սովորական պաղարիւնը կորցրեց: Մէկի՝ Չոլախ Գէորգի դէպքի մասին պատմեցի:

Երկրորդի պատմութիւնը այս է: Երեւանում կային բաւականաչափ գինուորներ, որոնք այս կամ այն պատճառով հեռացել էին ճակատի զօրամասերից: Յատուկ կոմիտէի կարգադրութեամբ դրանք բոլորը հաւաքուում եւ տեղաւորուում էին կազմակերպւող զօրամասերում, որոնք աստիճանաբար նորից ճակատ պիտի ուղարկուէին: Զինուորներից ոմանք դո՛հ չէին այդ բանից, տրամադիր

չէին նորից ճակատ դառնալու եւ իրենց այդ տրամադրութեամբ դիտաւորեալ կերպով վարակում էին միւսներին: Կատարում էր ինչ որ բոլշեւիկեան խմորում:

Արամի կարգադրութեամբ այդ շարժումը խեղդուեց, պատասխանատուները պատժուեցին: Ոստութիւնները այդ դասալիքների մէջ դժգոհութիւն առաջ բերին: Նրանց միացան քաղաքի մութ տարրերը: Եւ ահա մի երեկոյ այդ դժգոհ տարրերը ահազին աղմուկով հաւաքուեցին Ալլային Պորհրդի շէնքի (հետադայում պարլամենտի) դիմաց այն ժամանակ, երբ Ալլ. Պորհուրդը նիստ ունէր, եւ, «պահանջներ» արին՝ սպառնալիքներ կարդալով:

Արամը, կռահելով թէ բանն ինչումն էր, սաստիկ դայրացաւ, թուաւ տեղից ու դուրս գնաց սենեակից դէպի ցած՝ բարձրաձայն պարսաւելով խռովարարներին: Մեծ դժուարութեամբ յաջողուեց նրան ուժով յետ բերել եւ թոյլ չտալ ցած իջնել: Իսկ ցուցարարներին ցրեց Ալլ. Պորհրդի պահակախումբը: Իր տեսակի մէջ այդ դէպքը առաջինն ու վերջինն էր:

Երրորդ դէպքը շատ աւելի լուրջ էր եւ Երեւանի համար ծանր հետեւանքներ կարող էր ունենալ, եթէ Արամը Արամ չլինէր: Տանք նաեւ այդ դէպքի պատմութիւնը:

Յատուկ Կոմիտէի նախագահութեան սենեակում նստած աշխատում էի, երբ սաստիկ յուզուած ներս ընկաւ Պաշիկը (Ստեփանեան Պաշիկ, Յ. Կոմիտէի գնահատելի աշխատողներից): Նրա տեսքն ինձ անհանգստացրեց: Մտածեցի, որ ինչ որ անախորժ դէպք էր պատահել:

— Ի՞նչ է պատահել, Պաշիկ, — հարցրի զարմացած:

— Շատ վատ բան, — ասաց Պաշիկը, անկարող զսպել յուզումը ու շարունակել խօսքը:

— Նստի՛ր, հանգստացի՛ր, — առաջարկեցի մեղմ ու հանգիստ ձայնով, թէեւ կասկած չունէի, որ իրօք անախորժ բան էր պատահել, այլապէս Պաշիկն այդ աստիճան չէր յուզուի:

Երբ նա քիչ հանգստացաւ, ասաց.

— Պօք տուր, որ ինչ որ ինձանից լսես, կը մնայ մեր մէջ: Փաշան (Արամը) պատուիրեց, որ պատահածի մասին ոչ ոքի չպատմեմ, բայց կը պայթիմ, եթէ գոնէ քեզ չպատմեմ: Շատ անհանգիստ եմ:

Բնական է, որ խօսք տուի:

«Այսօր Դրօն եկաւ գարած եւ ինքնաշարժ պահանջեց մի գործի համար, որը կապ չունէր Յատուկ Կոմիտէի հետ: Պատասխանեցի,

որ առանց Յատուկ Կոմիտէի գրասենեակի կարգադրութեան՝ մասնաւոր պետքերի համար իրաւունք չունեմ ինքնաշարժ տալու:

— Գիտես, որ Յատուկ Կոմիտէն ինձ չի մերժի, — ջգայնացաւ նա:

«Պատասխանեցի, որ դա Յ. Կոմիտէի գործն է, իսկ ես պարտաւոր եմ ենթարկուելու իմ ստացած հրահանգներին: Զայրացաւ, ապա խօսք խօսքի հասաւ, սաստիկ անպատուեց ինձ ու մի երկու քաթալոշ (ապտակ) հասցրեց: Հագիւ զսպելով ինձ՝ ձգեցի գարածը ու շտապեցի Փաշայի (Արամի) մօտ ու վրդսված՝ բողբոջով պատմեցի ամէն բան: Նոր էի վերջացրել խօսքս, երբ ներս մտաւ Դրօն եւ Փաշայի ներկայութեամբ սկսեց լափ քափել գլխիս, որ չեմ կատարել իր պահանջը եւ մերժել եմ ինքնաշարժ տալ: Եւ դա նա արեց այն համոզմամբ, որ Փաշան կը համաձայնի իր հետ եւ կը յանդիմանի ինձ: Բայց դուրս եկաւ հակառակը: Փաշան նրան ընդհատեց եւ հանդարտ ձեւով սկսեց արդարացնել ինձ, իմ վարմունքը, բացատրելով որ նա՝ Դրօն պետք է դիմէր Յ. Կոմիտէին, որը հնարաւորութեամբ դէպքում, ի հարկէ, չէր մերժի, որ նա՝ Դրօն որեւէ պաշտօնեայի անպատուելու, առաւել եւս քակելու իրաւունք չունի՝ իր պահանջը չկատարելու համար, էլ ուր մնաց, երբ այդ պահանջը իրաւացի չէ եւ պաշտօնեան՝ հաշիկը ոչ մի մեղք չունի:

«Այստեղ Դրօն ընդհատեց փաշային ու գլուխը կորցրածի պէս անպատշաճ լեզուով յարձակուեց նրա վրայ... Ես ամօքից գետիմն էի մտնում... Փաշան՝ խոժոռած դէմքով՝ լուռ լուռ էր: Բայց երբ Դրօն սկսեց հեգնել նրա կատարած գործերը, ժողովուրդը կառավարելը եւ նման բաներ, Փաշան ջգայնուող շարժումով վեր կացաւ տեղից ու ընդհատելով նրան՝ ասաց.

— «Ահա՛ թէ ինչ... Շատ բարի, ես կը գնամ, դու մնա՛ ու կառավարի՛ր այս ժողովուրդը...»

«Եւ դուրս գնաց: Դառնութեամբ նայեցի Դրոյին եւ դուրս շտապեցի Փաշայի ետեւից: Աստիճանների վրայ հասայ նրան: Ինձ նկատելով, մի պահ կանգ առաւ, նայեց ինձ ու ասաց.

— «Գնա՛, գնա՛ պաշտօնիդ, պատահածի մասին ոչ ոքի չասես:

«Նա գնաց, ես եկայ քեզ մօտ», — վերջացրեց խօսքը Պաշիկը կոտորուած սրտով:

Կոտորուեց նաեւ իմ սիրտը: Անզամ սովորական, բնականոն պայմաններում նման դէպքերը խիստ անախորժ են: Բայց այն ժամանակ (1918ի սկիզբը) առաւել եւս, երբ մենք բառի մերկ իմաստով

ճակատադրական օրեր էինք ապրում ժողովրդի բոլոր խաւերի բացարձակ համերաշխութիւնը անհրաժեշտ պայման էր, Սարգիս Օհանջանեանին խօսքը կրկնած՝ «խորվիրապից» դուրս գալու համար: Եւ այդ համերաշխութիւնը Արամը ստեղծել էր՝ ժողովրդի պատասխանատու եւ աշխատունակ տարրերը կապելով ընդհանուր գործին՝ ժողովրդի փրկութեան գործին: Եւ ահա Դրոյի այդ վարձուները, որ շատ ծանր հետեւանքներ կարող էր ունենալ:

Ամէն բան կախուած էր Արամից: Իմ միտքը հրաժարուում էր Արամի գործից քաշուելու հանգամանքի հետ հաշտուել, որովհետեւ այն օրերին ոչ ոք կարող էր փոխարինել նրան...

Վրաս բռնեցի Պաշիկի մտահոգ հայեացքը:

— Ինձ մնում է կրկնել Արամի ասածը: Ինձ ասացիր, բայց ոչ ոքի այլեւս չասես:

Պաշիկը զնաց իր գործին: Անդիմադրելի ցանկութիւն ունեցայ տեսնել Սարգիս Օհանջանեանին, որը Յատուկ Կոմիտէի գործաւարն էր ու մեր հին ու հաւատաւոր ընկերներից: Ընդհանուր գրասենեակում չէր: Անցայ Արամի առանձնասենեակը, ուր քիչ առաջ տեղի էր ունեցել Պաշիկի պատմածը: Նստեցի ու սկեցի նորից մտածել քիչ առաջ այդ սենեակում անցած դարձածի մասին: Ու նորից ինձ անհարին թուաց, որ Արամը պիտի իրագործէր իր սպառնալիքը եւ ձգէր Երեւանը: Բոլորիս հետ միասին Արամը չէր կարող չուրեւնալ այն զխտակութիւնը, որ իրեն Երեւանում փոխարինող չկար, եւ որ Երեւանը թողնելով՝ նա ոչ թէ Դրոյին պատժած կը լինէր, այլ դաւաճանած կը լինէր աղգային գործին: Ո՛չ, Արամն անընդունակ էր նման բանի: Բայց, այնուամենայնիւ պատահածը եւ սրա կապակցութեամբ զալիքը շարձարում էին միտքս...

**

Կէսօրից յետոյ, ըստ սովորականի, զնացի Աղգ. Պորհուրդ: Յատուկ Կոմիտէի պատասխանատու պաշտօնեաները աշխատում էին նաեւ կէսօրից յետոյ: Գրասենեակում կային երկու-երեք հոգի: Բարեւեցի եւ անցայ նախագահութեան առանձնասենեակը: Իմ ետեւից ներս մտաւ գրասենեակի աշխատողներից մէկը եւ շատ խորհրդաւոր կերպով յայտնեց, որ լուր է տարածուել թէ Արամը թողնելու է քաղաքը եւ հեռանալու է:

— Դատարկ բան է, — պատասխանեցի հանգիստ ձեւով ու զսպեցի մտահոգութեանս ճնշումը:

— Այսօր գրեթէ ամբողջ օրը չի երեւացել Աղգ. Պորհուրդի շէնքում եւ պատմում են, որ տանը ոչ ոքի չի ընդունում:

— Շատ հաւանական է, թերեւս վատ է զրուս իրեն: Յամենայն դէպս, քաղաքը ձգելու լուրը հիմք չունի, — հանգստացրի պաշտօնեային:

Ինձ դարձացրեց այն հանդամանքը, թէ որտեղի՞ց էր ծագել այդ լուրը: Միակ մարդը, որ դէպքի մասին գիտէր, Պաշիկն էր, որն ինձ խնդրել էր ոչ ոքի չասել: Ուրեմն, ո՞վ կարող էր լինել այդ չարաբաստիկ լուրի հեղինակը: Շատ ուշ, միայն արտասահմանում իմացայ, որ այդ լուրը տարածողը եղել էր հէնց ինքը՝ Պաշիկը:

Պաշտօնեան հեռացաւ: Ներս մտաւ Յատուկ Կոմիտէի նախագահ Մ. Մուսիսեանը: Նոյն լուրի մասին նա եւս խօսեց, բայց շատ հանգիստ եղանակով՝ համարելով այն անպորժ մարդկանց երեւակայութեան արդիւնք:

Եւ ո՞վ կարող էր հաւատալ այդ լուրին, այսինքն՝ Արամի քաղաքը թողնելու հաւանականութեան: Ո՛չ ոք, ով ծանօթ էր Արատեան Դաշտի հայութեան մղձաւանջային վիճակին այդ ծանր օրերին եւ գիտէր թէ ի՞նչ էր Արամը այդ հայութեան համար:

Ձեռ կարող այստեղ շիջել այն դէպքը, որը ցոյց էր տալիս, թէ ի՞նչ յոյսեր էր կապում ժողովուրդը Արամի հետ: Այդ՝ Արամին դիկատտոր ընտրելու պարագան է. նա միակ մարդն էր, որի հետ ժողովուրդը կապում էր իր փրկութեան յոյսը: Ինչպէ՞ս, ուրեմն, նա կարող էր ձգել այդ ժողովուրդը եւ հեռանալ:

Մտածեցի հեռախօսով կապուել Արամի հետ եւ իմանալ Աղգ. Պորհուրդում, գրասենեակում նրա շերեւալու պատճառը: Երբ զանգահարեցի, պատասխանեց Արամի կինը: Իմ հարցին, թէ ինչո՞ւ Արամը չի երեւում, վշտացած պատասխանեց թէ ինքն էլ չի իմանում, թէ ի՞նչ է պատահել, ոչ ոքի չի ուզում տեսնել: Մանրապէս ազդուեցի:

Մտածում էի հեռախօսելուց յետոյ, զնալ Արամի մօտ: Բայց տիկնոջ հետ խօսելուց յետոյ, հրաժարուեցի այդ մտքից:

Յաջորդ օրը եւս Արամը չերեւաց Աղգ. Պորհուրդի շէնքում: Արդէն շատերի համար պարզ էր, որ մի բան էր պատահել: Բնորոշ է, որ մարդկանց հետաքրքրում էր ոչ այնքան այն, թէ ի՞նչ էլ պատահել, որքան այն միւս հարցը, թէ ի՞նչ էր լինելու քաղաքի եւ շրջանի վիճակը Արամը հեռանալու դէպքում: Այդ էր մտահոգում, անհանգստացնում մարդկանց: Բայց քանի Արամը քաղաքում էր, դեռ չէր հեռացել, կասկածամիտները յոյսերը չէին կորցնում:

Այդ երեկոյեան Երեւանի Կ. Կոմիտէի նիստում կենտրոնական հարցը՝ Արամի հարցն էր: Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ Արամը չէր երեւում հրապարակում եւ փակուել էր իր բնակարանում ու որտեղի՞ց էր սնունդ առել Արամի քաղաքը թողնելու լուրը: Ժողովին ներկայ էր ե՛ւ Դրօն, որը թէեւ Կ. Կոմիտէի անդամ չէր, բայց զրեթէ միշտ ներկայ էր լինում Կ. Կոմիտէի նիստերին: Ոչ ոք կարողացաւ պատասխանել այդ հարցին, ոչ ոք ոչինչ չգիտէր կամ այդպէս էին ձեւանում, ինչպէս Դրօն եւ ես:

Կ. Կոմիտէի ցանկութիւնն էր իմանալ այդ հարցերի պատասխանը՝ վերաբերմունք ցոյց տալու եւ անհրաժեշտ քայլեր առնելու համար:

Սակայն, քանի որ տրուած հարցերին պատասխանը չեղաւ, մնում էր նրանց պատասխանը լսել Արամից: Արամն էլ, սովորաբար, մասնակցում էր Կ. Կոմիտէի նիստերին, եթէ այդ ժամերին ազատ էր: Բոլորս էլ զիտէինք, որ նա այժմ տանից դուրս չէր գալիս: Որոշուեց Կ. Կոմիտէի կողմից մարդ ուղարկել նրա մօտ, եւ լսել նրան:

Ես առաջարկեցի, որ Կ. Կոմիտէի կողմից գնացողը լինի Դրօն, որի կեցուածքը ժողովում՝ Արամի հարցի կապակցութեամբ՝ մտահոյիչ էր: Իմ առաջարկի նպատակն էր՝ պարզել Դրոյի դիրքը: Եթէ համաձայն էր եւ գնար, լաւ. հակառակ պարագայում՝ պէտք է բացատրէր չզնայու պատճառը: Ի մեծ զարմանս նաեւ ուրախութիւնս, Դրօն անվարան յանձն առաւ այդ պարտականութիւնը եւ անմիջապէս գնաց:

Կ. Կոմիտէն, մինչեւ Դրոյի վերադարձը, անցաւ օրակարգի միւս հարցերին: Իսկ ես մտածում էի Դրոյի վարմունքի մասին եւ մեծ յոյսեր էի կապում նրա առաքելութեան հետ: «Փանի որ մա այդպիսի պատրաստակամութեամբ յանձն առաւ զնայ Արամի մօտ, կը նշանակի թէ գիտակցում է իր մեղքը եւ դրա հետեւանքով ստեղծուած կացութիւնը, այդ իմաստով էլ խօսելու է Արամի հետ, — խնդիրը հարթելու միակ նախապահը», լաւատեսութեամբ մտածում էի ես:

Կարճ ժամանակից յետոյ, վերադարձաւ Դրօն եւ, առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, յայտնեց, որ իր առաքելութիւնը անյաջող էր անցել: Մի հանդամանք, որ բոլորիս էլ զարմացրեց ու մտահոյեց: Կը նշանակի թէ խնդիրը շատ աւելի լուրջ էր, քան ենթադրուած էր: Օրակարգի բոլոր հարցերը մոռացուեցին, մնաց միայն

Արամի հարցը, որը թէեւ շուտուեց, ամբողջ ժամանակ իր մասին խօսեցնել տուեց:

Ես չէի մասնակցում, քանի որ ինձ համար հարցը անձանօթ չէր: Ասացի, որ լուում էի, որովհետեւ խօսք էի տուել այդ մասին ոչ ոքի չասել: Գիտէի, որ այդ Արամի ցանկութիւնն էլ էր: Այնուամենայնիւ, մինչեւ Դրոյի Արամի մօտ գնալը, անյարմար էի զգում ինձ, պայքարի մէջ էի խղճիս հետ: Բայց Դրոյի անյաջողութիւնից յետոյ, ինձ համար պարզ էր, որ պիտոցածս յայտնելու դէպքում էլ խնդիրը չէր լուծուի, միայն աւելի եւս խճճուելու եւ վատանալու էին Դրոյի ու միւս ընկերների յարաբերութիւնները, ինչ որ այն պայմաններում անբաղձալի էր կատարելապէս: Բացի այդ, տեսնում էի, որ Դրօն էլ մտահոյուած է ստեղծուած կացութեամբ եւ անկեղծօրէն ցանկանում էր Արամի վերադարձը, որ ասել է հոգու խորքում զրդջում էր եւ ցաւ էր զգում իր արածի համար: Եւ յետոյ, մտածում էի միւս օրը գնալ Արամի մօտ:

Ժողովը ցրուեց՝ առանց որոշ եզրակացութեան դալու:

**

Արամի տանը փակուելու եւ հրապարակում չերեւալու երրորդ օրը նրա քաղաքից հեռանալու լուրը շատերի սեփականութիւնն էր դարձել եւ ընդհանուր իրարանցում առաջ բերել: Հասկանալի է, որ ս մենից շատ մտահոյուած էին պատասխանատու մարմինները՝ Ազգ. Խորհուրդը, Յատուկ Կոմիտէն եւ քաղաքական կուսակցութիւնները: Բանը հասաւ այնտեղ, որ Ժողովրդական կուսակցութեան Կ. Կոմիտէում խօսք էր եղել յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Արամի մօտ՝ խնդրելով, որ նա քաղաքը թողնի եւ շարունակի իր գործը:

Սակայն, Արամը, մինչ այդ, «փէշի քարը թափելով», վերադարձաւ գործի: Եւ երբ նա երկու-երեք օր բացակայութիւնից յետոյ, երեւաց Ազգային Խորհրդի շէնքում, ինձ այնպէս թուաց, որ Արամի ներս մտնելով մի տեսակ արեւ ծաղեց ու չքացան բոլոր ստուերները, որոնք շատ մութ էին: Կասկած չունիմ, որ Երեւանի բոլոր գործիչներն էլ այս կամ այն չափով նոյն տպաւորութիւնն ու մտածումն ունեցան. բոլորն էլ աղատ շունչ քաշեցին:

Տարօրինակ բան. այնուհետեւ մինչեւ վերջ այդ դէպքի մասին՝ ոչ մի խօսք եղաւ. ոչ ոքի կողմից: Կարծես թէ այդ դէպքը, որ կոչմարի ծանրութեամբ ճնշում էր մեզ, տեղի չէր ունեցել: Գրը-

խաւորն այն էր, որ Արամը մեկ հետ էր, մնացածի մասին հարկ չըկար մտածելու: Հանաւորէն դեր էր կատարում Արամի կեցուածքը, որ թելադրում էր չըջալատին չխօսել այդ դէպքի մասին:

Արամի այդ կեցուածքով էլ պայմանաւորում էր նրա վերաբերմունքը այնուհետեւ դէպի Դրօն: Այդպէս էր, ըստ երեւոյթին նրանց համար, որոնք տեղեակ չէին նրանց միջեւ պատահած տխուր դէպքի պատմութեան:

Ինձ համար պարզ էր, որ նրանց յարաբերութիւնները այլեւս այն չէին, ինչպէս որ էին մինչեւ այդ:

Դրօն, որ մինչ այդ յաճախ երեւում էր Ազգային Խորհրդի շէնքում, ոտքը դրեթէ կտրեց. դալիս էր միայն Ազգային Խորհրդի նիստերին մասնակցելու, որոնք տեղի էին ունենում, սովորաբար, երեկոներ եւ ոչ յաճախ: Արամը թոյլ տուեց մի բան էլ, որ անտեղեակ ընկերներին զարմանք պատճառեց: Երբ ստեղծուեց Վարիչների Մարմինը, որ ուժեղացրած կազմով փոխարինելու էր Յատուկ Կոմիտէին եւ որի նախագահը եւ գինուորական վարիչը Արամն էր, նա ինքնապաշտպանութեան վարիչի պաշտօնը յանձնեց ոչ թէ Դրոյին, որ ամենայարմար թեկնածուն էր, այլ մի ուրիշի՝ ինձ:

Ես յանձն առայ այդ ինձ համար խորթ պաշտօնը, որովհետեւ դա Արամի ցանկութիւնն էր («մի՛ մտաւորաւոր, օգնող կ'ունենաս») հանդուստանում, համոզում էր նա ինձ՝ եւ ապա՝ եւ գիտէի Արամի այդ քայլի պատճառը եւ իմ հոգու խորքում արդարացնում էի նրան: Եթէ Դրօն այդ մարմնի (որ օրուայ կառավարութիւնն էր) անդամ լինէր, ի՞նչ երաշխաւորութիւն կար որ նրա նիստերից մէկն ու մէկում որեւէ պատճառաւ կրկին չէր կորցնի զլուխը եւ նորից չէր ստեղծի ծանր կացութիւն: Դրոյի ծանօթ վարմունքից յետոյ, Արամի վերաբերմունքը այս դէպքում պայմանաւորում էր այդ մտահոգութեան թելադրանքով:

**

Ոչ-դաշնակցական Երեւանը Արամին չէր ճանաչում: Նրա մասին, ի հարկէ, լսել էր, բայց միայն այդքան. անձնական փորձով նրա հետ զործ չէր ունեցել: Եւ ահա՝ նրա Երեւան դալուց ու գործի անցնելուց յետոյ, անհաւատալիօրէն կարճ ժամանակի միջոցում նա ուղղակի նուաճեց ազգային-հասարակական կեանքին լծուած բոլոր հողիները: Նրա հեղինակութիւնը, ազդեցութիւնը աճում էր օրից օր: Նրա հմայքի առջեւ խոնարհուում էին ամէնքը:

Բնական է, որ դաշնակցականները դադարակից տաղանդաւոր զործիչի մասին հիացմունքով խօսէին: Բայց Արամի մեծութիւնը, ի միջի այլոց, վկայում է եւ այն հանդամանքը, որ նրա հետ աշխատող ոչ-դաշնակցականներն էլ անպայման ենթարկուում էին նրան ու, պատեհ առթիւ, միայն դովասանքի ու հիացմունքի խօսք անում նրա մասին:

Միայն մի երկու օրինակ:

Արամը մեռաւ 1919ի Յունուար 29ին: Մահուան տարեդարձին Երեւանում հրատարակուող «Յառաջ»ի խմբագրութիւնը թերթի մի յատուկ համար պիտի նուիրէր նրա յիշատակին: Ինձ եւս առաջարկուեց մի բան գրել: Ես այն ժամանակ անկարող էի Արամի մասին մի տող անդամ գրի առնել: Բայց, նախապէս խօսելով խմբագրի հետ, խնդրեցի Գ. Պետրոսեանին «Յառաջ»ի այդ համարի համար գրել մի յօդուած:

Գ. Պետրոսեանը Երեւանում աշխատում էր ժողովրդականների հետ: Յեղափոխութեան սկզբնական շրջանում, ռուս տիրապետութեան ժամանակ նահանգական զործադիր կոմիտէի աչքի ընկնող անդամներից էր: Նոյն ժամանակները ժողովրդական կուսակցութիւնը Երեւանում հրատարակում էր ռուսերէն մի թերթ, որի փաստական խմբագիրն էր: Հետագային, Հայաստանի անկախութեան օրօք, նա մտաւ Քաջազնունու դահլիճին մէջ, իրրեւ արդարադատութեան նախարար:

Իմ դիմումը նա յարգեց եւ մի երկու օր յետոյ բերեց ռուսերէն լեզուով դրած (հայերէնին լաւ չէր տիրապետում) մի ընդարձակ յօդուած, որ կատարեալ ներբող էր հանգուցեալի յիշատակին:

Ինձ համար այդ անսպասելի էր: Պետրոսեանը ճանաչուած էր իրրեւ շատ շիտակ ու անաչառ մարդ: Ես գիտէի, որ անցեալում, դեռ Ազգային Խորհրդի իշխանութեան օրով, նա առիթ էր ունեցել բողոքելու Արամի դէմ եւ կամովին հեռանալու մի ժողովից, ուր ներկայ էր գտնուել Արամի հետ եւ խիստ դժգոհ մնացել վերջինիս մի վարմունքից այդ ժողովում: Ես կարծում էի, որ Պետրոսեանը, իրրեւ անկեղծ մարդ, զնահատելով հանդերձ Արամի արժանիքները, պիտի խօսէր նրա մասին զուսպ ու պազարիւն ձեւով, ցոյց տալով նաեւ նրա զործունէութեան վրիպումները, պակասաւոր կողմերը: Եւ Պետրոսեանից ես չծածկեցի այդ ամէնը եւ ստացայ մօտաւորապէս այս պատասխանը. —

«Ես բնաւ չեմ առաջնորդուել այն մտքով, թէ մման դէպքերում միա՛յն լաւը պէտք է գրել: Ոչ: Գրել եմ այն, ինչ որ թելադրել եմ

ինձ Արամի մասին ունեցած տպաւորութիւններս: Դուք ակնարկում էք Ազգային Խորհրդում տեղի ունեցած դէպքին, երբ ես բողոքեցի Արամի վարմունքի դէմ եւ զայրացած հեռացայ ժողովից: Այո՛, այն ժամանակ Արամի վարմունքը Զուրեանի (Երեւանում աշխատող յայտնի էս-էր) նկատմամբ կոպիտ եւ վիրաւորական թուաց ինձ: Բայց ես Արամի այդ վարմունքը հասկցայ, երբ սկսեցի աշխատել նրա հետ միասին: Ես այժմ ոչ մի կասկած չունեմ, որ ինչ որ Արամն անում էր՝ անում էր հասարակական շահերի թելադրանքով: Անձնական միտումներից զուրկ էին նրա վարմունքներն ու վերաբերմունքները եւ այդ պատճառով նեղանալ, վիրաւորուել նրանից անվայել էր հասարակական գործչի համար: Ես Արամին պատկերացրեցի եւս իբրեւ մի ոչ սովորական տարերային ուժ, որ հաստատուն էր այնպէս, որ անհաշիւ օրով նա յաճախ իր գարմանալի առողջ բնագոյով արհամարհում էր մեր օրէնքներն ու կարգերը՝ յանուն մեր ժողովրդի շահերին: Սովորական մարդը այդպիսի բան չի կարող անել: Արամի այդ ուժը ես ամբողջ ժամանակ զգում էի, երբ նրա հետ աշխատում էի Քաջագնունու կառավարութեան մէջ: Քանի՛ անգամ կառավարութեան նիստերում դիտելով ու լսելով Արամին՝ հիստացած մտածում էի. «Այս մարդը թեմական գաղտնի է աւարտել ու Տաճկաստանի խորքերում անցկացրել իր կեանքը»: Կառավարութեան անդամները բոլորն էլ կրթութեամբ Արամից բարձր էին, սակայն, նիստերում յաճախ իշխում էին նրա մտքերը: Արամը իր բնական լսելով մեր բոլորիցն էլ շատ շատ բարձր էր: Քաջագնունու կառավարութեան մէջ աչքի էր ընկնում եւ կարնիկեանը, բայց ոչ Արամի հետ համեմատած: Կարնիկեանի անունը յիշեցի, որովհետեւ Արամին ամենից լաւ նա էր հասկանում եւ յաճախ Արամի մտքերը նրա բանաձեւով էին անցնում»:

Գ. Պետրոսեանի յօդուածը յանձնեցի «Յտուաջ»ի խմբագրին: Զգիտեմ ինչո՛ւ, «Յտուաջ»ի խմբագրութիւնը իր մտադրութիւնը չիրագործեց, եւ Արամի յիշատակին խոստացած համարը լոյս չտեսաւ:

**

Մինչեւ Քաջագնունու Թիֆլիսում կազմած կառավարութեան Երեւան գալը, Երեւանում գործում էր Արամի նախագահութեամբ ու գլխաւորութեամբ կազմուած կառավարութիւնը՝ Վարիչների Մարմինը, որ ուժեղացրած կազմով փոխարինել էր Յատուկ Կոմի-

տէին: Նախագահը եւ զինուորական վարիչը Արամն էր: Նախ քան վերջին պաշտօնը յանձն առնելը, նա ցանկութիւն յայտնեց, որ այդ պաշտօնը տրուի մի հեղինակաւոր զինուորականի: Այդ ցանկութիւնը Արամը յայտնում էր նախ՝ որովհետեւ շատ էր ծանրաբեռնուած ու Ֆիդիքապէս հնարաւոր չէր ամէն տեղ հասնել, եւ ապա՝ նախատեսում էր, որ զինուորական շրջանում (յատկապէս՝ սպայութեան վերին խաւերի մէջ) խօսք ու զրոյց էր լինելու եւ ոչ ցանկալի տրամադրութիւններ էին ստեղծուելու:

Արամին ընտրողները շարքեցին նրա այդ առաջարկը՝ քաջ գիտակցելով, որ այն պայմաններում ոչ ոք կարող էր փոխարինել նրան ու կատարել նրա գործը:

Սակայն, Արամի նախատեսութիւնը արդարացաւ: Կարճ ժամանակ անցած, սպայական շրջաններից սկսեցին դժգոհութեան ձայներ լսուել թէ՛ որքան էլ յարգելիս ու զնահատելիս լինէին Արամին, այնուամենայնիւ, զինուորական վարիչը զինուորական մասնագէտ պէտք է լինէր:

Արամը Հ. Յ. Գ. Երեւանի Կ. Կոմիտէում նորից բարձրացրեց զինուորական վարիչի պաշտօնը զինուորականի յանձնելու հարցը եւ այս անգամ կտրուկ եւ անառարկելի ձեւով:

Կ. Կոմիտէի հէնց նոյն նիստում որոշուեց դիմել զօրավար Սիլիկեանին՝ նրա տրամադրութիւնը իմանալու համար եւ՝ համաձայնութեան դէպքում՝ Ազգային Խորհուրդի անունից նրան առաջարկելու զինուորական վարիչի պաշտօնը:

Կ. Կոմիտէի յանձնարարութեամբ ես այդ առթիւ եղայ զօրավար Սիլիկեանի մօտ: Ահա մեր խօսակցութիւնը էական դժերով. —

— Ինչո՞ւ է Արամը հրաժարում, — հետաքրքրուեց զօր. Սիլիկեանը, նախապէս հրաժարուելով իրեն առաջարկած պաշտօնից:

Երբ պատճառն իմացաւ, ասաց, որ լսել էր այդ դժգոհութիւնները, բայց ոչ մի արժէք չէր տուել նրանց:

— Դա ժամանակաւոր բան է: Դժգոհները չեն ճանաչում Արամին: Երբ ճանաչեն, կր համոզուեն, որ ներկայումս նա միակ կարող մարդն է այդ պաշտօնի համար: Ես ինչո՞ւ եմ հրաժարում. որովհետեւ մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու: Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու՝ ոչ մի կարեւոր բայլ չեմ առնում, իսկ վարիչի պաշտօնը յանձն առնելու պարագային, գրասենեակս տեղափոխելու եմ նրա մօտ: Ո՛չ մի զինուորական վերարկու ոչ ոքի չի տայ այն, ինչ որ ունի Արամը: Նրանից յարմար վարիչ մեզ համար չէ՛ք գտնի: Ես ինքս անձամբ կը խնդրեմ, որ նա չըողնի այդ պաշտօնը:

Եւ Արամը մնաց իր պաշտօնում: Նրան փոխարինող չգտնուեց:
Շատ բնորոշ է նաեւ Յովհաննէս Մելիքեանի վերաբերմունքը
ղէպի Արամը:

Յ. Մելիքեանը ժողովրդական կուսակցութեան ականաւոր
ղեմքերից էր: Աղլային Խորհրդի օրով սկզբից մինչեւ վերջ ամենա-
դործունեայ աշխատողներից էր՝ վարելով միշտ պատասխանատու ու
ծանր պաշտօններ: Պարենաւորման ու ելեւմտական հարցերում Մ.
Մուսինեանի հետ անփոխարինելի դործիչներ էին: Առիթներ եմ ու-
նեցնել լսելու նրա կարծիքը այս կամ այն պարագայում՝ Արամի
մասին: Բնաւ չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ ժողովրդա-
կան կուսակցութեան այդ ներկայացուցիչը՝ Յ. Մելիքեանը ավելի
չատ էր գնահատում Արամին, քան մենք՝ դաշնակցականներս: Ան-
սահման հաւատ ու վստահութիւն ունէր զէպի Արամի կարողու-
թիւնները եւ տեղը եկած դէպքում՝ անխառն հիացմունքով էր խօ-
սում նրա մասին:

Բերենք նաեւ Դաշնակցութեան հին՝ առաջին սերնդին պատ-
կանող կուսակցական ընկերներից Սարգիս Օհանջանեանի կարծիքը
Արամի մասին:

Օհանջանեանը դարձանալիօրէն կապուած էր Արամի հետ եւ
միշտ էլ առանձին սիրով, երբեմն ոպեւորութեամբ էր խօսում նրա
մասին: Մի որոշ շափով Արամին իր աշակերտն էր համարում: Բազ-
ում եղած ժամանակ, տակաւին բոլորովին երիտասարդ, Արամը
կարճ ժամանակով կուսակցական գործերով աշխատել էր Օհանջան-
եանի ձեռքի տակ:

— Մեր կուսակցութեան մէջ ո՛չ ոք Արամի աստղը չունի: Եւ
ինչպէ՛ս հռչակապ փայլում է այդ աստղը: Լա՛ւ լսիր, թէ ինչ եմ ա-
սում քեզ: Հետուից թէ մօտից ուշադիր հետեւել եմ ու հետեւում եմ
իր գործերին: Մեծ մարդկանց յատուկ քայլերով, թոնիչֆներով է ա-
ռաջանում: Արդէն վանի հերոսամարտը կազմակերպելով ու վարե-
լով՝ Արամը դուրս եկաւ մեր կուսակցութեան սահմաններից ու դար-
ձաւ ազգային դէմք՝ վասպուրականի հերոսը: Իսկ այժմ մեր այս
անհնարին ծանր պայմաններում, մեր աչքերի առջեւ տես ինչե՛ր է
անում: Քեզ բան եմ ասում, մարդ չէ, հրա՛շք է: Ի՞նչ Ազգային Խոր-
հուրդ, ի՞նչ կենտրոնական ու Յատուկ կոմիտէ: Այդ ամէնը կամ,
որովհետեւ կա՛յ Արամը: Կարո՞ղ ես երեւակայել այդ մարմինների
գոյութիւնը՝ առանց Արամի: Խաւա՛ր: Լաւ հասկցիր, բան եմ ա-
սում.— Արամն է, որ լուսաւորում է բոլորիս նամբան, եւ քանի նա
կայ, կասկած չունեմ, որ յաջողելու եմք եւ լոյս աշխարհի եմք դուրս

գալու այս... խոր վիրապից: Լա՛ւ լսիր, Արամն էլ միայն մերը չէ,
միայն Դաշնակցութեան չէ, նա բոլորինն է: Մի տես, թէ ի՞նչպէս
գերել, իր ու գործին հետ կապել ժողովրդականներին, այն ժողո-
վրդականներին, որ Դաշնակցութեան համար լաւ խօսք չունէին պա-
հած: Մագերս ներմակել եմ Դաշնակցութեան մէջ, բայց նման բան
լսած ու տեսած չկամ: Արամի աստղին հաւատում եմք ոչ միայն
մեմք՝ դաշնակցականներս, այլե՛ւ նրանք՝ ժողովրդականները ու բո-
լորը: Լսի՛ր, լաւ խմոր ունես, բայց ջահել ես ու անփորձ: Բախտա-
ւոր էք դուք եւ քեզպէսները, որ Արամը ձեր կողմին է: Պինդ բռնի
նրա փէշը ու նրա շուաքիցը դուրս չգաս...»:

Գրեթէ ամէն անգամ, երբ Սարգիսը խօսում էր Արամի մասին,
խօսում էր այդ նոյն ոպիով: Երբեմն զգացում էր այն աստիճան,
որ, անկարող լինելով ծածկել յուզումը, թաշկինակը հանում էր ու
տանում աչքերին՝ այդ կոշտ ու կոպիտ, կոճղի տպաւորութիւն ձգող
մարդը:

**

Յատուկ կոմիտէն որոշ իմաստով հայոց առաջին ազգային կա-
ռավարութիւնն էր, որ ծնունդ առաւ Երեւանի Հայոց Ազգային Խոր-
հրդից, որ Արարատեան Դաշտի եւ յարակից դաւառների գերագոյն
մարմինն էր, մի տեսակ պարլամենտ:

Յատուկ կոմիտէի աշխատանքները տեւեցին երեք-չորս ամիս:
Վերը տեսանք, թէ ի՞նչ պայմաններում եւ ի՞նչ նպատակով ստեղծը-
ւեց այդ կոմիտէն: Երեք-չորս ամսուայ ընթացքում Յ. կոմիտէն կա-
տարեց իր վրայ դրուած պարտականութիւնները, որքան որ թոյլ էին
տալիս ժամանակի պայմանները: Նրա միջոցով՝ Արամի գլխաւորու-
թեամբ՝ դրուեց մեր ազգային պետական կեանքի առաջին հիմնա-
քարը:

Յատուկ կոմիտէն փոքրակազմ մարմին էր, որ նոյնպէս ժա-
մանակի պահանջ էր: Նրա կորիզը, ինչպէս յիշուեց, կազմում էին
երեք հոգի: Հայ Զինուորական Մարմնի ներկայացուցիչը եւ նա-
հանգական կոմիտարը, որոնք իրենց պաշտօնի բերումով, Ազգային
Խորհրդի որոշումով, նոյնպէս Յատուկ կոմիտէի անդամներ էին, Յա-
տուկ կոմիտէի նիստերին, որ տեղի էին ունենում գրեթէ ամէն երե-
կոյ, կանոնաւոր կերպով մասնակցում էին սկզբնական շրջանում:
Կարճ ժամանակից յետոյ նրանք ամբողջովին զբաղուած լինելով ի-
րենց հաստատութիւնների գործերով՝ զազարեցին մասնակցել Յա-

տուեկ կոմիտէին նիստերին, իսկ նրա առօրեայ աշխատանքներին երբեք չէին մասնակցում: Մնացած երեք հոգին այլևս Փիզիքական հնարաւորութիւն չունէին ընդառաջելու ոչ սովորական արագութեամբ զարգացող երկրի պահանջներին:

Կենսական պահանջ էր Յատուկ կոմիտէի վերակազմութիւնը: Այդ հարցը Արամը դրեց նախ Յատուկ կոմիտէի եւ ապա Ազգային Խորհրդի առջև: Որոշուեց Յատուկ կոմիտէի տեղ կեանքի կոչել ժամանակի ու երկրի պահանջներին համապատասխանող մի նոր մարմին: Այդ պործը, բնականօրէն, յանձնուեց Արամին, որ եւ Ազգային Խորհրդի հաւանութեամբ՝ կազմեց այդ նոր մարմնի անդամների ցանկը: Այդ մարմինը կոչուեց Վարիչների Մարմին:

Անդամներն էին՝ նախագահ եւ զինուորական գործերի վարիչը՝ Արամ, ներքին գործերի վարիչը՝ Սահակ Թորոսեան, պարենաւորման վարիչը՝ Մկրտիչ Մուսինեան, ելեւտական վարիչը՝ Յովհաննէս Մելիքեան, ինքնապաշտպանութեան վարիչը՝ Արշալոյս Աստուածատրեան. ապա քիչ յետոյ Մարմնի կազմի մէջ մտան Բժ. Յ. Տէր Միքայէլեան (Օվի) եւ Ալեքսանդրապոլի (այժմ՝ Լենինական) նախկին քաղաքապետի Կամսարականը:

Վարիչների Մարմինը, փոխարինելով Յատուկ կոմիտէին, մընաց իշխանութեան գլուխ մինչեւ Թիֆլիսում կազմուած Հայաստանի Ազգային Խորհրդի եւ կառավարութեան Երեւան դալը:

**

Այն օրերին, երբ Վրաստանի և Ասորէյլանի քաղաքական գործիչները պատրաստուած էին իրենց երկիրը անկախ հռչակել՝ այլևս աննպատակաբար համարելով իրենց համար Անդրկովկասի Միութիւնը (Սէյմը), այն օրերին, երբ Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդը, լքուած հարեւաններից, շուար ու յուսահատ վիճակ էր ապրում, ալեւոր Մասիսի աչքի առջև, Արարատեան Դաշտում, Սարդարապատի տակ ու նրա շուրջը զարմանալի անցքեր էին տեղի ունենում:

Երեւանի ու նրա շուրջը խմբուած հայութիւնը մահու ու կենաց պայքարի էր ելել իր դարաւոր ու նամարդ թշնամու դէմ, որը եկել ու բախում էր Վաղարշապատի դռները:

Ժողովուրդների կեանքում լինում են վայրկեաններ, որոնք խորքից ալօսում են նրանց հոգին ու անջնջելի կերպով ստպաւորում հետագայ սերունդների յիշողութեան մէջ: Վայրկեաններ, երբ ժո-

ղովուրդը հանդէս է բերում բարոյական հոյակապ կորով, երկաթէ կամք, բազուկի անյաղթելի ոյժ:

Ամէն ժողովուրդ իր պատմութեան ընթացքում ունեցել է հերոսական դրուպներ, բայց կան հերոսութիւններ, որոնք հաւասար են հրաշքի:

Ըստ ամենայնի՝ բնական պէտք է համարուէր: Եթէ Երեւանի, Արարատեան Դաշտի հայութիւնը պարտուէր Սարդարապատի տակ. եւ ոչ մէկ լեզու հնարաւոր պիտի համարէր դատապարտութեան խօսք ասելու նրա մասին, որովհետեւ բոլոր պայմանները դասաւորուել էին յօգուտ տաճիկների եւ ի վնաս հայերի: Անգամ այսօր, տասնեակ տարիներ յետոյ, մարդ առանց ներքին դողի անկարող է յիշել նոյն օրերի յուսահատական պայմանները: Աշխարհից կտրուած, չըջապատուած անտուն ու անտեղ հարազատներով — զաղթականներով, պարենաւորման անմխիթար կացութիւն, հաղորդակցութեան ողբալի միջոցներ, ո՛չ մի տեղից ոչ մի մխիթարական, յուսատու ձայն, եւ դրա փոխարէն՝ զրկանքներ, հառաչանքներ, արտասուենքներ, անվերջ վիշտ...

Հնարաւոր էր մտածել յաղթութեան մասին: Երեւանում ոչ ոք այդ մասին չէր մտածում: Անգամ լաւատեսների յոյսը ինքնապաշտպանութեան սահմաններից այն կողմ չէր անցնում: Շատերը այն օրերին պատրաստ էին մինչեւ մահ ճակատել թուրքի հետ ոչ այն յոյսով, որ արեան դնով հայրենիքը փրկուելու է այլ այն գիտակցութեամբ, որ լաւ է մեռնել պայքարի մէջ յանուն ազատութեան, քան թէ ապրել թուրքի կրունկների տակ: Իսկ ընդհանուր մտահոգութիւնը ինքնապաշտպանութիւնն էր՝ թոյլ չտալ, որ տաճիկը ալեւի առաջանայ, մտնի Երեւան ու ազատ մնացած հայկական շրջանները:

Չարմանալի էր Արամը այդ օրերին: Համատարած յուսալքում մի այդ շրջանում նա մնաց միշտ յուսադրող, ոգեւորող, հաւատ ու եռանդ ներշնչող: Ահաւոր տագնապի նախօրեակին Արարատեան Դաշտի ու յարակից գաւառների հայութիւնը չունէր իր մէջ թաղնուած ուժերի պիտակցութիւնը: Սակայն, հերոսութեան հուժկու ալիքը համակեց նրան, երբ սկսուեց ճակատագրական բախումը թշնամու հետ: Արամի մէջ այդ ուժը ճառագայթում էր սկզբից եւեթ: Նա շարունակ ոտքի վրայ էր: Հանգիստն ինչ է՝ մոռացել էր: Ռազմաճակատը նրա մտահոգութեան միակ առարկան էր:

Թէեւ ռազմաճակատի եւ թիկունքի միջեւ առանձին տարբերութիւն էլ չկար, բայց Արամի միտքը կլանուած էր առաջին գիծը

ամուր ու անասան պահելու հոգսով: Անընդհատ յարաբերութեան մէջ էր գլխաւոր շտաբի հետ, որ նստած էր Վաղարշապատում: Արամը իր շնչով վարակում էր ամէնքին: Ո՛չ ոք չէր խնայում հնարաւորը:

«Մէկ նշանաբան կ'իշխէր ամէնուրեք.— դէպի Սարդարապատ, ամէն ինչ ֆակատի համար:

«Ոգեւորիչ գեկոյցներ սկսան հասնիլ շրջաններից, էջմիածինն իր գիւղերով, Աշտարակ—Օշականն իր շրջաններով կը խուժէին դէպի Սարդարապատ...

«Ժողովուրդը, քոզած գարնան աշխատանքը, օժանդակ խումբերով կը դիմէր դէպի ֆակատ. պարէն, մ'քերֆ, փամփուշտ գիւղացիութեան կողմէն, շալակաւորներով, բեռնասայլերով ու անասուններով կ'ուղարկէին իրենց վաշտերուն:

«Ո՞վ կարող է մտնանալ Կոտայքէն իջնող հայ գիւղացիներու կամաւոր խումբը՝ առաջնորդութեամբ Թագա գիւղցի Զաֆար ֆահանայի: Տրեխաւոր գիւղացիները, զինուած իրենց սեփական զէնքերով, տաս օրուայ պաշար սայլերին բարձած, մտան Երեւան եւ անցան Սարդարապատ:

«Ի՞նչ ջերմ եւ սրտագին ֆառեր եւ ոգոյններ տեղի ունեցան Ազգային հորերդի շէնքի առջեւ հայ գեղջուկ զինուորութեան այդ շարժումին առթիւ» (Հայկակ Կոստյեան):

Երեւան քաղաքը գաւառից յետ չէր մնում: Նա եւս իր ունեցածը տրամադրել էր Սարդարապատի անապատներում թշնամուն կուրծք տուող իր հերոսներին: Տներից կապոցներով ու ամաններով պաշար էր ուղարկում, բեռներով թարմ ջուր, որպէսզի հայ զինուորը որեւէ պակասի հոգս չունենայ ու վստահ լինի, որ թիկունքը ամբողջովին իր հետ է:

Այդպիսով, թիկունք ու ճակատ հոգով ու մարմնով միացել էին իրար: Ստեղծուել էր հոգեբանական մի մթնոլորտ, ուր ամէն ինչ յիշեցնում էր պարտաճանաչութեան ու պատասխանատուութեան մասին:

Այդ մթնոլորտը գնալով թանձրանում էր: Մարդիկ բարոյապէս աճում, կերպարանափոխուում էին, ուղղակի անձանաչելի դառնում: Հայ զինուորը Մայիսի սկզբներին եւ այդ նոյն զինուորը Մայիսի վերջերին իրար հետ չհամեմատուող մեծութիւններ էին:

Ահա հոգեբանական այդ պայմաններն էին, որ ծնունդ տուին Սարդարապատի հրաշքին: Յուսահատութիւնը չքացաւ, մարտիկները հոգիները թեւաւորեցին, միջակները մեծացան, մեծերը հերոսա-

ցան: Թիկունք ու ճակատ մի մարմին եւ մի կամք դարձած՝ դրսեւորեցին իրենց հոգու բովանդակ կարողութիւնը: Ծառացան իրենց արեան ծարաւի դարաւոր թշնամու դէմ հեքիաթային հերոսութեամբ եւ անհնարինը հնարաւոր դարձրին: Փոքրաթիւ հայ քաջերը Մայիսի 20ից 26 ոչ թէ միայն կանգնեցրին թուով վերադանց տաճիկ բանակի յաղթական առաջխաղացումը, այլե՛ւ այդ թշնամուն անսպասելի քաջութեամբ շջմեցրին, ջարդեցին ու փախուստի մատնեցին:

Սարդարապատի տակ հայ զինուորը մինչեւ վերջ էլ մնաց յաղթողի դերում:

Զօրավար Սիլիկեանը, որ կռիւներից առաջ Ազգային Խորհրդին տուած զեկուցումներով միշտ յուսահատուում էր, մի բան, որ Արամին վշտացնում — ցաւ էր պատճառում, ճակատամարտի օրերին ու այնուհետեւ կարսի մասին էր մտածում:

Հայ ժողովուրդը Սարդարապատի տակ ապրեց հերոսական վայրկեաններ եւ կերտեց հայոց պատմութեան փառաւոր էջերից մէկը:

Ասացի, որ Արամը մշտական կապ էր պահում ճակատի հրամանատար զօրավար Սիլիկեանի հետ, որը զտնւում էր Վաղարշապատում: Թէեւ Երեւանը շտաբի հետ կապուած էր հեռախօսով եւ հեռագրով, բայց ե՛ւ այնպէս Արամը վերադասում էր կենդանի կապը — կամ ինքն էր գնում Վաղարշապատ կամ նրա յանձնարարութեամբ Վարիչների Մարմնի անդամներից մէկն ու մէկը:

Եիշում եմ, Սարդարապատի օրերին Արամի ցանկութեամբ բժ. Յ. Միքայէլեանը (Օվի) եւ ես զնացինք Վաղարշապատ:

Երեւանից Վաղարշապատ թէեւ ընդամէնը 18 վերստ է, բայց մեր ինքնաշարժը այդ կարճ տարածութիւնը հազիւ երեք ժամում կտրեց: Ամբողջ ճանապարհը բռնուած էր գաղթականներով:

Ընդամէնը մի երկու օր առաջ էի եղել շտաբում (որը տեղաւորուած էր ճեմարանի շէնքում): Զօրավար Սիլիկեանի արտաքինի մէջ ոչ մի փոփոխութիւն: Խաղաղ ու հաւասարակչուած մարդ էր, բնաւորութեամբ զուսպ: Ծանր վայրկեաններին տխրութեան մի թեթեւ քօղ էր գալիս խաղաղ դէմքին, իսկ յաղթութիւնների մասին խօսելիս՝ փոքրիկ ժպիտ էր խաղում երեսին:

Զօր. Սիլիկեանի հակառակ զնդապետ Վեքիլեանը, սպայակոյտի պետը, երեք-չորս օրուայ մէջ նկատելիօրէն փոխուել էր, նիհարել ու զուսատուել. զիշեր ցերեկ աշխատանքի սեղանից ու քարտէզից չէր հեռանում:

Սիլիկեանը մանրամասն պատմեց զինուորական գործողու-

թիւնների մասին : Զինուորների ցոյց տուած տոկունութիւնն ու քա-
ջութիւնը գերազանցել էին իր բոլոր ակնկալութիւնները : Գիտենք
արդէն, որ ընդհարումների նախօրեակին նա յոռետես էր : Իսկ այժմ
թշնամին հայ զինուորների հարուածների տակ փախչում էր եւ ինքը
դժուարութեամբ էր զսպում այդ զինուորներին :

«Բոլորը մտածում են Ալեքսանդրապոլի մասին», վերջացրեց
խօսքը զօրավարը :

Այդտեղ զնդապետ Վեքիլովը միջամտեց, ասելով, որ ինքը
կասկած չունի, որ մի երկու օրից յետոյ քաղաքը (Ալեքսանդրապո-
լը) պիտի վերադրաւենք, եւ այն ժամանակ տաճիկները հարկադրու-
ուած յետ պիտի քաշուին Բաշ-Աբարանից եւ Ղարաքիլիսայից :

Երբ բաժանուած էինք, զօր. Սիլիկեանը ինձ մի կողմ տարաւ
ու խնդրեց յայտնել Արամին, որ գործողութիւնների յաջող շարու-
նակուելու դէպքում, — մի բան, որի մասին նա այժմ կասկած չու-
նէ, — ինքը տրամադիր էր շարժուելու Կարսի վրայ՝ մի կողմ թող-
նելով Ալեքսանդրապոլը :

Յաղթական բանակը իր բարձր տրամադրութեամբ ու յաղթե-
լու կամքով վարակել էր ծերունի հրամանատարին այն աստիճան,
որ նա մտածում էր մի հարուածով կոտրել թշնամու մէջքը իր տրա-
մադրութեան տակ գտնուող փոքրաթիւ բանակով : Հայկական զօր-
քերի ընդհանուր թիւը հասնում էր տասը հազարի :

Բայց... զօրավար Սիլիկեանին վիճակուած չէր ստորագրելու
այդ հրամանը : Ո՞վ գիտէ, ի՞նչ անակնկալներ էր բերելու հայ ժողո-
վրդին նրա քաջարի բանակը, եթէ զօր. Նազարբէգեանի հրամանը
զինադադարը կնքելու մասին մի քանի ժամ աւելի ուշ հասնէր զօ-
րավար Սիլիկեանին...

Հոգեբանական այդ վերելքի օրերին էր, որ եկան զինադադարի
եւ հաշտութեան պայմանները : Որքա՛ն դաժան, որքա՛ն սարսափելի
էին այդ պայմանները : Որպիսի՞ գայրոյթ ու ցասում առաջ բերին
ամէն կողմից : Ճակատից հեռախօսագրերով խնդրում էին Ազգային
Խորհրդին չհամաձայնել ու չընդունել թուրքերի պայմանները :

Սիլիկեանը, Նազարբէգեանի հրամանը ստանալուց յետոյ, բը-
նականաբար ինքնագլուխ չէր կարող նոր յարձակման հրաման տալ :
Խնդրի լուծումը նա ձգեց Երեւանի Ազգային Խորհրդին : Սիլիկեանը
պատրաստ էր կատարելու Ազգային Խորհրդի կամքը, եթէ վերջինը
հրահանգէր նրան՝ չենթարկուել Նազարբէգեանին հրամանին եւ շա-
րունակել պատերազմը : Ազգային Խորհուրդը, սակայն, այդ կամքը
չունեցաւ : Նա շարունակ նիստեր էր գումարում, բայց — առաջին

անգամ իր դոյութեան ընթացքում — մեծամասնութեամբ որեւէ ո-
րոշման վրայ չէր կարողանում կանգ առնել :

Նազարբէգեանի հեռադիրը կաշկանդել էր Արամին : Նա ող-
բերյալութիւն էր ապրում : Այստեղ եւս նրան խանդարում էր նրա պաշ-
տօնական հանդամանքը : Նա ինքնագլուխ չէր, այլ ենթարկում էր
Թիֆլիսին, այսինքն՝ նրա համար էլ պարտադիր էր Նազարբէգեանի
հրամանը զինադադար կնքելու մասին, — մի հրաման, որի բուն հե-
ղինակը Անդրկովկասի կառավարութիւնն էր :

Ի՞նչ զրութիւն կը ստեղծուէր Թիֆլիսում Հայոց Ազգային
Խորհրդի եւ Անդրկովկասի կառավարութեան հայ անդամների հա-
մար, եթէ Երեւանը չենթարկուէր այդ կառավարութեան, ըմբոստա-
նար եւ ինքնագլուխ քայլեր անէր :

Արամը շատ լաւ ծանօթ էր այն փոխյարաբերութիւններին, որ
գոյութիւն ունէին Թիֆլիսում վրացիների, ատրբէյջանցիների եւ
հայերի միջեւ : Գիտէր, որ հայերի համար իր հարեւանների վեճա-
բերմունքը, մեղմ արտայայտուած, բարեկամական չէր, եւ եթէ իր
ընկերները Թիֆլիսում համաձայնել էին զինադադար կնքել թուրքե-
րի հետ, կը նշանակէ՝ պատճառներ ունեցել էին :

Բացի այդ, կար մի հանգամանք, որ չէր կարող չազդել Սրա-
մի վրայ : Ինչպէս տեսանք, Սարգարապատի ճակատում յաղթութիւ-
նը ըստ ամենայնի հայերի կողմն էր : Սակայն, միւս ճակատներում
մերոնց դրութիւնը այնքան էլ փայլուն չէր. յատկապէս ծանր օրեր
էր ապրում Ղարաքիլիսայի ճակատը : Այդ բանը գիտէր Արամը, եւ
ահա թէ ի՞նչպէս :

Սարգարապատի երանելի օրերին հեռագրատնից հաղորդեցին,
որ Դիլիջանից Արամին խնդրում են հեռագրաթելի մօտ : Խնդրողը
Սարգիս Մանասեանն էր, որ Ղարաքիլիսայի շրջանի զօրամասի կո-
միսարն էր :

— Երեւի տեղեկութիւններ է ուզում : Նեղութիւն քաշիր, Ար-
շալոյս, գնա, խօսիր ու հաղորդիր ինչ որ գիտես, — դիմեց ինձ
Արամը :

Իմ եւ Ս. Մանասեանի միջեւ տեղի ունեցաւ այսպիսի մի խօ-
սակցութիւն .—

- Ս. Մ.— Ո՞վ է խօսողը :
- Ա. Ա.ն :
- Ս. Մ.— Ես խնդրել էի Արամին : Նորից խնդրում եմ, ասա-
ցե՛ք, որ կարեւոր խօսակցութիւն ունեմ :
- Արամի յանձնարարութեամբ ի վիճակի եմ պատասխանելու

ձեռք հարցերին: Նա այժմ անկարող է կտրուել աշխատանքից եւ գալ հեռագրատուն:

— Ս. Մ.— Ի՞նչ տեղեկութիւններ կան մականից:

— Դրութիւնը աւելի քան միսիքարական է: Ամբողջ գծի վրայ մերոնց յարակուսումը պակասել է մեծ յաջողութեամբ, թշնամի մասնաւորեալ նահանջում է, մերոնց ոգեւորումն է:

— Ս. Մ.— Եղբայր, ես խնդրում եմ միշտ տեղեկութիւններ տալ: Երեխայ չեմ եւ ոգեւորուելու կարիք չունեմ:

— Զարմանում եմ, որ չէ՛ք վստահում ասածներին: Ասեմք, մի քանի օր առաջ այս յաջողութիւնների մասին այստեղ էլ ոչ ոք չէր երազում: Բայց այժմ ես ձեզ տեղեկութիւն եմ տալիս կատարուած փաստի մասին: Այդ տեղեկութիւնները քաղուած են գործարար Սիլիկ-եանի հեռախօսագրից: Հայ զինուորների տրամադրութիւնը անգերազանցելի է: Հրամանատարութիւնը մտածում է օգտագործել այդ տրամադրութիւնը եւ անընդհատ առաջ խաղալ: Փողովուրդի տրամադրութիւնն էլ շատ բարձր է, եւ մա ամենայն պատրաստակամութեամբ ընդառաջ է գնում իրենց արած պահանջներին:

Այնուհետեւ իմ հարց ու փորձին Մանասեանը ճշուած տրամադրութեամբ ու մտայլ գոյներով նկարագրեց կացութիւնը Ղարաբեղի խառնի եւ Դիլիջանի շրջանում: Տաճիկները, մեծ թուով օգնական ու ստանալով, վերադարձել էին երեք-չորս օրուայ կատաղի կռիւներում իրենց կորցրած զիրքերը եւ թարմ ուժերով սպանում էին անօգնական ու յոգնած հայ ուժերին:

Ծանր տպաւորութեամբ վերադարձայ Ազգային Խորհուրդ եւ պատմեցի Արամին Մանասեանի հետ ունեցած խօսակցութիւնը:

Այդ ամէնի հետ Արամը չէր կարող հաշուի չնստել: Լուռ ու մտայլ, անտեղեակ դրսի աշխարհի անցուղարձին, նա անհամբեր սպասում էր զօր. Նազարբէգեանին ու գրեթէ չէր մասնակցում (առաջին անգամ լինելով) Ազգային Խորհուրդի նիստերին: Իսկ Ազգային Խորհուրդը ալեկոծուած էր, բայց մի ընդհանուր լեզու չէր կարողանում գտնել:

Դաշնակցութեան ներկայացուցիչները Ազգային Խորհուրդում պահանջում էին չեղեալ համարել զօր. Նազարբէգեանի հրամանը, ընդհանուր հրամանատար նշանակել զօր. Սիլիկեանին եւ պատերազմը շարունակել: Այդ առաջարկը յենում էր ժողովուրդի տրամադրութեան վրայ: Հաշտութեան պայմանների դէմ էին թէ՛ զէնքի տակ դռնուղները ու թշնամի հարուածող զինուորները, եւ թէ՛ թիկունքի բնակչութիւնը:

Ղամարլուի շրջանը, Արարատեան Դաշտի սիրտը, բազմաթիւ ներկայացուցիչներ էր ուղարկել Երեւան Ազգային Խորհուրդին յայտնելու, որ նրա տրամադրութեան տակ է գնում իր շրջանի զէնքի ընդունակ թուրք մարդկանց եւ շրջանի հարստութիւնը ու խնդրում՝ չընդունել զինադադարի պայմանները ու շարունակել պատերազմը: Նոյն պահանջները թակուած էին Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէի դուռը:

Իրրեւ բողոք հաշտութեան պայմանների դէմ, Ղամարլուի շրջանը Երեւան էր ուղարկել նաեւ բազմաթիւ կանանց, որոնք սուլամարդկանց հետ միասին կանոնաւոր շարքերով անցնում էին Ազգային Խորհուրդի շէնքի առջեւից ու յուզումի մատնում դիտողներին՝ իրենց կեցուածքով զինադադարի պայմանների դէմ ու պատերազմը շարունակելու անսասան կամքով: Անհնարին էր անտարբեր մնալ...

Սակայն, Ազգային Խորհուրդը չընդառաջեց իր դաշնակցական անդամների առաջարկին, եւ զօր. Սիլիկեանը հարկադրաբար ենթարկուեց զօր. Նազարբէգեանին ու կատարեց հրամանը:

Երբ բանը վերջացաւ նրանով, որ տաճիկները հաստատուեցին վեց-եօթ կիլոմետրի վրայ Երեւանից, քաղաքացիների համար սկսուեցին մղձաւանջային օրեր: Ո՞վ է կարծում այսօր, որ եթէ Գերմանիա չպարտուէր, կամ մի քիչ աւելի երկար դիմանար, տաճիկները չէին մտնելու Երեւան: Սարդարապատից յետոյ, նրանց խանգարեց Բագուն իր հերոսամարտով, իսկ Բագունից յետոյ՝ Գերմանիայի պարտութիւնը: Բայց Երեւանը ոչինչ դիտէր, ո՛չ Բագունի, ոչ Գերմանիայի մասին եւ չէր կասկածում, որ թուրքերը մտնելու էին Երեւան: Անել, դժոխային կացութիւն էր ստեղծուել, եւ զարմանալի էր, որ թուրքի ջղերն էլ ծայրայեղօրէն լարուած էին...

Ազգային Խորհուրդի անդամներից մի քանիսի մէջ միտք էր ծագել հեռացնել Արամին քաղաքից՝ անակնկալի դէպքում փրկած լինելու համար նրա կեանքը: Նրանք մտածում էին, որ Երեւանից յետոյ ազատուող ժողովուրդը, եթէ զլուխ ունենար, կը կազմակերպէր իր ինքնապաշտպանութիւնը եւ երկար կը դիմանար, հակառակ պարսկական հաշտութեամբ կը կորչէր, կը փչանար: Իսկ քաղաքի համար, քանի նա կանգուն էր, Արամը կարող էր աշխատել դրսից:

Այդ խօսակցութիւնը տեղի էր ունենում Արամի առանձնասենեակում, յետագայում պարլամենտի նախագահութեան սենեակը: Արամը նստած էր՝ զլուխը յենած ձեռքերին:

Ես այն տպաւորութիւնն ունէի, որ տրուած առաջարկութիւնը եւ այդ առթիւ եղած խօսակցութիւնը նրան բնաւ չէին դրողեց-

նում: Մէկ էլ վեր կացաւ տեղից եւ, կարծես ընդհատելով իր միտքը, հանգիստ ու տխուր ձայնով ասաց, թէ իրեն համար անհնարին, անըմբռնելի բաներ ենք մտածում, թէ իրեն համար պերադասելի է տաճիկների ձեռքով կախողան բարձրանալ Ազգային Խորհրդի շէնքի առջև (մատով ցոյց տուեց շէնքի դիմաց), քան հեռանալ քաղաքից: Ապա աւելացրեց, որ քաղաքից հեռանալու մասին չէ, որ պէտք է մըտածել, այլ քաղաքը փրկելու մասին:

Սակայն, քաղաքը եւ երկիրը փրկեցին յետագայ բարեյաջող քաղաքական դէպքերը՝ Հայաստանի սահմաններից դուրս, որուն մասին խօսելը դուրս է մեր նիւթի սահմաններից:

Մինչեւ Թիֆլիսում կազմուած Քաջագնունի կառավարութեան Երեւան տեղափոխուելը (1918, Յուլիս 19), «Երեւանի կառավարութեան» (իմա՝ նախ Յատուկ կոմիտէ, ապա՝ Վարիչների Մարմին, Ա. Ա.) ի վերջոյ յաջողուեց մաքրել ռազմական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, խռովութիւնների բոյն ծառայող թրքաբնակ վայրերը (երկաթուղապծի եւ ընդհանրապէս հաղորդակցութեան շրջաններու, Ա. Ա.) եւ որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ շրջաններում: Նա միջոցներ ձեռք առաւ դասալըքութեան և աւազակութիւնների դէմ: Նրա տրամադրութեան տակ կային 10-12.000 բաւականին մարդուած զինուորներ: Նիւթական դրութիւնը կարգաւորելու համար, պարտադիր տուրք դրեց ժողովրդի վրայ, որը տալիս էր անտրտունջ, անգամ սիրով «երկար պոչերով» քաղաքացիները հերթաշար էին կազմում Ազգային Խորհրդի շէնքի մուտքի առաջ՝ իրենց վրայ դրած տուրքը վճարելու համար: «Երբեք, գուցէ, հայ կեանքում իշխանութիւնը եւ հասարակութիւնը այնքան համերաշխ միութիւն չէին կազմել, քան 1918 թուի գարնան ու ամառուան պատմական ամիսներին Արարատեան Դաշտում, Մասիսի հովանու տակ» (Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Բ. տպագրութիւն, էջ 137):

Այդ իրօք բացառիկ համերաշխութիւնը ստեղծել էր Արամի ներկայութիւնը, որով հնարաւոր եղաւ ընդամէնը վեց ամսուայ ընթացքում այնքա՛ն ծանր պայմաններում գլուխ հանել այն ամէնը, որի մասին խօսք եղաւ վերը:

**

Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ կառավարութեան մէջ Արամը ստանձնեց ներքին գործոց նախարարութիւնը, որի մէջ մտնում էին լուսաւորութեան եւ պարենաւորման բաժանմունքները:

Ընդհանրապէս ներքին գործոց նախարարի պաշտօնը պատասխանատու պաշտօն է համարում: Սակայն, այդ պաշտօնի պատասխանատուութիւնը բազմապատիկ մեծանում է, եթէ աչքի առջև ունենանք ընդ հուր եւ ընդ սուր անցած նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան ներքին վիճակը:

«Այո՛, արցունքի ու տառապանքի ծովից ծնուեց Հայաստանի անկախութիւնը: Ոմանք չէին հաւատում նրան: Անկախութիւն եւ հանրապետութիւն բառերը դնում էին չակերտների մէջ: Եւ այդպէս վարուելու հիմքերը շատ էին գորաւոր: Իբրք որ, զարհուրելի էին պայմանները, եւ անկախութիւնը այդ պայմաններում թոււմ էր հեզանքով:

«Փաստօրէն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիւ 12 հազար քառ. կիլոմետր ազատ ու կիսակործան մի երկիր՝ կծկուած ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանրաբեռնուած գաղթականներով ու որբերով, շրջապատուած ատամ կրճատացնող քշնամիներով, անհաց, անտեղ, անօգնական: Սով ու հիւանդութիւն, աւար ու աւեր, լաց ու քշուատութիւն, կոտորածի սարսափ» (Անդ, էջ 117): Իսկ անողորմ թշնամու բանակի առաջամասերը կանգնած էին Հայաստանի մայրաքաղաքից ընդամէնը մի քանի կիլոմետր հեռու:

Ահա այդ պայմաններում Արամը յանձն առաւ ներքին գործոց նախարարի պաշտօնը: Ս. Վրացեանը աւելի քան իրաւունք ունի երբ գրում է, որ Արամը «միակ մարդն էր, որ այդ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել երկրում եւ պետական շինարարութեան սկսել» («Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, էջ 467):

Սակայն, ի մեծ դժբախտութիւն բոլորիս, Արամին այլեւ վիճակուած չէր այս անգամ եւս արդարացնելու իր հետ կապուած յոյսերը. նրա օրերը համրուած էին...

Հայաստանի Հանրապետութիւնը, ինչպէս տեսանք, ծնունդ առաւ արտակարգօրէն ծանր պայմաններում: Հանրապետութեան գոյութիւնն ու զարգացումը ապահովելու համար անհրաժեշտ էին նոյնպէս արտակարգ, ոչ սովորական միջոցներ: Արամի միտքը, որքան եւ հասկանում էի նրան, աշխատում էր այդ ուղղութեամբ: Սակայն, նրա կեանքի թելը կտրուեց շատ շուտ, եւ նա հնարաւորութիւն չունեցաւ իրականացնելու իր մտածումները — մտադրութիւնները:

Իր այդ մտածումները Արամը որոշ չափով արտայայտեց մի դէպքի կապակցութեամբ, որի պատմութիւնը անտեղի չեմ համա-

րում բերել այստեղ: Մանուսանդ, որ դա կապ ունի Ռուբէնի մի վարմունքի հետ անկախութեան գրեթէ առաջին օրերին, — Ռուբէնի, որը հողով-սրտով Արամի հետ էր լինելու նրա ծրագրերների իրազորման մէջ, ինչպէս որ Արամ Ռուբէնի հետ էր վերջինի ձեռնարկած ու գլուխ հանած ալլախին-պետական անմահ գործի՝ Հանրապետութիւնը թշնամի տարրերից մաքրապործելուն մէջ:

Այդ պատմութիւնը, որ որոշ կրճատումներով անելու եմ վարը, ես բերել եմ իմ անձնական յուշերում Ռուբէնի մասին «Հայրենիք» ամսագրում, 1954 Յուլիս:

1918-1919ին, այսինքն՝ Հանրապետութեան ստեղծման և կազմակերպման առաջին տարին, Երկիրը ինչպէս կը յիշուի, անօրինակ ծանր վիճակ էր ապրում: Փոքրիկ Հայաստանը լեփ լեցուն էր գաղթական բազմութիւններով, իսկ Եղած միջոցները բաւական չէին՝ տեղացիների կենսական պահանջներին բաւարարութիւն տալու համար: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ համատարած սով էր իշխում այդ ժամանակ մեր նորաստեղծ պետութեան մէջ, պարզելով զարհուրելի տեսարաններ:

Առնենք նրա մայրաքաղաք Երեւանը: Փողոցներում, շուկայում, այգիներում մարդիկ դալարում էին քաղցից, օրն ի բուն լըսում էին հառաչանքներ, տնքոց-նրւոցներ: Աղբանոցներում կմախքացած երեխաներ ուտելու բան էին փնտրում՝ թաթիկներով կեղտերը փորելով: Անցնում էիր փողոցով, գործի գնալու ժամանակ, եւ տեսնում էիր, որ մայթի վրայ պատի տակ կուչ եկած, ցնցոտիներով ծածկուած կին ու երեխայ՝ ցրտից սրսրթում էին ու նուրբ ձեռք չէին պարզում, ոչինչ չէին ուզում, աչքերիդ առաջ մաս-մաս մեռնում էին սովից, այլևս անտարբեր դէպի իրենց ճակատադրը...

Այժմ իսկ, տասնեակ տարիներ յետոյ, առանց յուզում ու արտասուների անհնար է վերյիշել այն սարսափները, իսկ այն օրերին այլևս արտասուք չէր մնացել մեր աչքերում... Ասում են՝ մարդ ամէն բանի վարժուում է: Վարժուել էինք ե՛ւ մենք... Կան բաներ, որոնց հետ անհնար է հաշտուել: Սակայն, ուժեղ էր այն գիտակցութիւնը, որ ճակատագրի բերմամբ հնարաւորութիւն ունեցողները պէտք է ապրէին ու աշխատէին, որպէսզի վերջ ունենային մայրաքաղաքի փողոցներում եւ ամբողջ Երկրում իշխող սարսափները: «Մեռնողը կը մեռնէր, իսկ ապրողը մեռելի կողքին ապրելու ձեւեր ու պայմանները կը մշակէր» (Ռուբէն)՝ Երկրի եւ ժողովուրդի վիճակը բարեփոխելու մտահոյութեամբ:

Երեւանի քաղաքային ինքնավարութիւնը այդ օրերին ամէն կերպ աշխատում էր նաև գաղթականներին և որբերին օյնութեան հասնել, որքան որ թոյլ էին տալիս իր միջոցներն ու հնարաւորութիւնները, որոնք շատ սահմանափակ էին կարիքի համեմատութեամբ: Մի օր մօտս եկաւ քաղաքային դպրոցներից մէկի տնօրէնը և վրդովուած ձևով յայտնեց, որ դպրոցի չէնքը ապօրինի կերպով գրաւել են և աշակերտներին դուրս արել և, երբ ինքը կամեցել էր միջամտել քանի որ չէնքը գրաւողները որևէ պաշտօնական հանգամանք չունէին, դուհիօրէն անպատուել էին՝ յայտնելով, որ իրենք կատարում են Ռուբէն փաշայի կարգադրութիւնը և որ չէնքը պիտի յատկացուի որբանոցի համար:

Առաջին անգամ չէր, որ Ռուբէնը կարգ ու կանոնի դէմ անթոյլատրելի ելոյթ էր ունենում:

Ես հանգստացրի դպրոցի տնօրէնին՝ բացատրելով, որ մեր պայմաններում Ռուբէնի նման վարմունքը պատճառներ ունի: Սակայն, ինքս դժգոհ մնացի նրա այդ վարմունքից և որոշեցի այդ հարցը անհետեւանք շօտղնել:

Ռուբէնը իր դիրքով և կոչումով պատասխանատու դէմք էր: Նա Երկրի օրէնսդրական մարմնի անդամ էր պետական գծով եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ՝ կուսակցական գծով: Այդպիսով, կրկնակի իրաւունք ունէի ակնկալելու նրանից, որ յարգէր օրէնքն ու հեղինականութիւնը: Սակայն, Ռուբէնի հետ ունեցածս անձնական բացառութիւնից դժգոհ մնալով և հարցը պետական կամ կուսակցական գծով հրապարակ հանելը անյարմար համարելով՝ ես որոշեցի այդ մասին խօսել Արամի հետ՝ Ռուբէնի ներկայութեան:

Երբ առիթը ներկայացաւ, մենք նորից պարզեցինք մեր տեսակէտները Ռուբէնի վարմունքի մասին Արամի ներկայութեան: Ռուբէնը նկարագրեց քաղաքի փողոցներում և անկիւններում թափուած որբերի վիճակը և այդ որբերին տեղաւորելու, պատասպարելու անհրաժեշտութիւնը ամէն գնով՝ նրանց կեանքը փրկելու համար: Մի բան, որի հետ, ի հարկէ, ես համաձայն էի:

«Եթէ դու համաձայն ես ինձ հետ, ինչպէս առաջին օրն ասացի, իրաւացի եւ արդարացի պիտի համարես իմ վարմունքը: Երբ խնդիրը վերաբերում է մեր երեխաների կեանքի, ի՞նչ արժէք ունին դպրոցները: Ոգջ եւ ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարեւոր չէ, քան փողոցներում քափուածների ու ֆաղցի ճիրաններում գալարուողների կեանքը»:

Պատասխանեցի, որ ըստ էութեան նրա ասածների դէմ անհը-

նար է առարկել: Բայց անթոյլատրելի է ու դատապարտելի է նրա վարմունքը ըստ ձեռի, որովհետեւ նա պատասխանատու գործիչ է եւ պէտք է հասկանայ, որ իր վարմունքով ոտքի տակ է առնում օրէնքն ու իրաւունքը ու վատ օրինակ ծառայում ուրիշների համար. եւ որ նա կարող էր գալ ինքնավարութիւն, խորհրդակցէր այդ հարցի մասին Մ. Մուսիւնեանի (քաղաքագլխի) կամ ինձ հետ (փոխ-քաղաքագլխի), ու իր ցանկացածը գլուխ բերել օրինական եւ ոչ ապօրէն ճանապարհով:

Պատասխանեց, որ այդ ամէնը հասկանում է, բայց լաւ գիտէ, որ իմ ցոյց տուած ճանապարհով խնդրի լուծումը պիտի տեւէր շաբաթներ, դուցէ՛ հ' ամիսներ, և այդ ժամանակում չգիտէ, թէ քանի՞ երեխաներ պիտի մահանային: «Իսկ իմ վարմունքով ես արագացրի գործը: Ինքնավարութիւնը թող անմիջապէս շարունակի իմ սկսածը: Նման դէպքերում ձեւականութիւններն ու ըսի-ըսաւները չեն, որ պիտի գրադեցնեն ինձ: Բաւական է, որ ես իմ արածի անհրաժեշտութիւնը գիտակցում եմ, եւ դու էլ ինձ հետ համաձայն ես, ինչպէս որ պիտի համաձայնի ամէն մի հայ մարդ»:

Արամը, ուշադրութեամբ լսելով Ռուբէնին եւ իմ դժգոհութիւնը նրա վարմունքի առթիւ, ասաց բաներ, որոնք, ինչպէս վերը յիշեցի, իրաւունք էին տալիս մտածելու, որ նա խորհում էր արտակարգ ծանր պայմանների ստեղծած կացութեան դէմ:

«Կան դէպքեր, — ասաց Արամը, — երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ ու չարագործներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի բացառիկ ծանր ու անբնական ժամանակներում, երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»: Յիշեց Յատուկ կոմիտէի շրջանը եւ այնուհետեւ մինչեւ Թիֆլիսից կառավարութեան Երեւան դալը եւ Հայաստանի խորհրդարանի կազմուելը: «Ինչպէ՞ս էինք անում: Նախ՝ օրէնք էինք հրատարակում եւ ապա՞ գործ անում, գործ կատարում համաձայն այդ օրէնքի: Գիտես, որ ոչ: Գիտես, որ կեանքը մեզ հարկադրում էր նախ՝ գործ անել եւ ապա՝ երեկոները մեր նիստերում վաւերացնել, օրինակամացնել մեր այդ արածը: Եւ ես այժմ, գործերի յաջողութեան տեսակէտից՝ երանի եմ տալիս այն օրերին: Շատ յանախ հորհրդարանը իր ձգձգումներով, թէ օրինական պատճառաբանութիւններով, կաշկանդում ու խանգարում է մեզ, որ նախարարներ եմք, եւ դրանից գործն է տուժում: Եւ վա՛յն էր եկել մեզ տարել, եթէ մենք բոլոր պարագաներում առաջնորդուէինք օրէնքով, սպասէինք օրէնքակալ մարմնի

խօսքին: Պատահում են դէպքեր, երբ ես հարցերը չեմ տանում քննութեան անգամ կառավարութեան նիստերին, այլ լուծում եմ տեղն ու տեղը իմ պատասխանատուութեամբ, թէեւ այդ իրաւունքը չունեմ: Բայց այդ է պահանջում գործի շահը, գործի յաջողութիւնը: Ռուբէնը իրաւացի է իր վարմունքի մէջ», վերջացրեց Արամը իր խօսքը:

Թերեւս տեղն է այստեղ նորից վերյիշել Գ. Պետրոսեանի կարծիքը Արամի մասին: Այդ շնորհալի իրաւաբանը, որ իրբեւ արդարադատութեան նախարար, ինչպէս վերը յիշուեց, աշխատում էր Քաջազնունու դահլիճում եւ որ իր քաղաքական-ընկերային հայեացքներով ազատական էր, շատ բարձր կարծիք ունէր Արամի մասին նաեւ այն պատճառով, որ նա՝ Արամը՝ արհամարհում ու ոտքի տակ էր առնում օրէնքները, երբ այդ պահանջում էր ժողովրդի շահը:

«Սովորական մարդիկ, — ասում էր Պետրոսեանը, — կարող են հասկանալ, որ երբեմն օրէնքն ու ժողովրդի շահը հակասում են իրար, բայց համարձակութիւն չեն ունենում գնալու օրէնքի դէմ: Այդ կարող են անել միայն մեծ մարդիկ, որոնց ժողովուրդն էլ բարձր է համարում օրէնքից: Այդպիսիներէից էր Արամը»:

Ինձ թւում է, որ Արամին վերջ ի վերջոյ յաջողուելու էր ստեղծել նպաստաւոր պայմաններ Հանրապետութեան կեանքում՝ անարգել ու անկաշկանդ գործունէութեան համար: Նրա անձնական հմայքը, մարդկանց մօտենալու, ընդհանուր լեզու գտնելու, իր եւ գործի հետ կապելու շնորհքը, գործ կազմակերպելու տաղանդն ու այն գլուխ հանելու ուժեղ, յամառ, բայց ոչ փշոտ կամքը, միացած ազգի ու հայրենիքի անվարան նուիրումին, գրաւականներ էին, որ նա հասնելու էր իր նպատակին, եթէ Հանրապետութիւնը եւ ինքը երկար կեանք ունենային:

**

1918ի վերջերին եւ 1919ի սկզբներին բժաւոր տիֆը Երեւանում առատ հունձք էր անում: Նրան զոհ գնաց ե՛ւ Արամը:

Թէ՛ իր պաշտօնի բերումով եւ թէ՛ մանաւանդ իր հասարակական կենտրոնական դէմք, նա շարունակ յարաբերութեան ու շրջման մէջ էր բազմաթիւ մարդկանց հետ՝ ազգաբնակչութեան բոլոր խաւերից: Եւ որովհետեւ իր մասին մտածելու սովորութիւն չունէր, զարմանալի չէ բնաւ, որ նա էլ վարակուէր տիֆով. բայց հիւան-

դուրսն սկզբի օրերը մնաց ոտքի վրայ. առողջ կազմուածքի տէր էր:

1918ի Դեկտեմբերին վախճանուեց (նոյնպէս բժաւոր տիֆից) Սարգիս Օհանջանեանը, Դաշնակցութեան հին գործիչներէից, որ այդ օրերին ներքին գործոց նախարարութեան գործավարն էր: Արամը ուղեկցեց ընկերոջ դապաղին, բայց մինչեւ գերեզմանատուն գնալ չկարողացաւ: Հիւանդութիւնը զգալ տուեց: Կէս ճամբից նա վերադարձաւ տուն ու պառկեց՝ առանց իմանալու հիւանդութեան բնոյթը: Երբ պարզուեց որ հիւանդութիւնը տիֆ է, նա չափազանց անտարբեր վերաբերմունք ցոյց տուեց: Վիշտը, կասկածը, երկիւղը մինչեւ վերջ խորթ մնացին նրան: Ընդհակառակը, տրամադրութիւնը լաւ էր ու իր տրամադրութեամբ վարակում էր մտերիմներին ու այցելուներին:

Բժաւոր տիֆը այդ տարի Հայաստանում յատուկ դժգոհութեամբ էր արտայայտուում եւ աջ ու ձախ կոտորած անում: Բաւական է ասել, որ Երեւանի պէս փոքր քաղաքում չորս բժիշկ (Անդրէասեան, Զաքարեան, Շահպապեան, Նալբանդեան) զոհ գնացին այդ հիւանդութեան: Բնական էր, որ մարդիկ զգուշանում էին, իսկ հիւանդները՝ ահ ու սարսափով անցկացնում իրենց օրը:

Երբ Արամի հիւանդութիւնը պարզուեց, Երեւանի բժիշկներից շատերը ինքնաբերաբար ոտքի կանգնեցին: Դրանց մէջ էր եւ բժիշկ Ս. Կամսարականը: Սա միաժամանակ բժշկում էր եւ պետական վերահսկիչ Մինաս Բերբերեանին, որը նոյնպէս հիւանդ էր բժաւոր տիֆով: Այդ նոյն օրերին կինն էլ հիւանդ էր, նոյնպէս տիֆով: Նրան եւս բժշկում էր Կամսարականը, որը, լաւ բժիշկի համբաւ ունենալուց դատ, մի շատ համակրելի ու սիրելի անձնաւորութիւն էր: Որեւէ կուսակցութեան չէր պատկանում: Բժիշկը նախ այցելում էր Բերբերեանին, յետոյ Արամին, ապա գալիս էր մեզ մօտ:

Բնականաբար, ես ամէն անգամ հետաքրքրուում էի Բերբերեանի եւ Արամի առողջութեամբ, թէ եւ վերջինիս մօտ լինում էի օր ու մէջ: Բժիշկ Ս. Կամսարականը, ամէն անգամ էլ առանձին զոհուակութեամբ էր խօսում Արամի մասին:

— Զարմանալի մարդ է: Ի՞նչ հիւանդ. ես նրա մօտ հանգրտանում եմ, մանաւանդ Բերբերեանից յետոյ: Սա ամբողջ ժամանակ դժգոհում է, գանգատում, սարսափում իր վիճակից, յիշում է իր լաւ անցեալը եւ ողորում ներկան: Սիրտս մնչում է նրա մօտ: Իսկ Արամի մօտ ամբողջ ժամանակ տրամադրութիւնս լաւ է լինում: Ո՛չ մի գանգատ, ոչ մի սրտնեղութիւն: Հիւանդ տեղով մեզ՝ բժիշկներ-

րիս ձեռք է առնում, ծագրում է, որ բծերը(*) լաւ չպահեցինք ու նրանք էլ խոռվեցինք ու փախան եւ որ լաւ «հեֆիմ» չեմք»: Խօսում է այլեւայլ նիւթերի մասին: Իր հիւանդութիւնով, կարծես, չի հետաքրքրում: Այո՛, գարմանալի մարդ է Արամը:

Այդ օրերին պառկած էին, ի միջի այլոց, եւ Սահակ Թորոսեանը, ինձ. Թորոսը Նիկողոսեանը, քաղաքային վարչութեան անգամ Յակոբ Յարութիւնեանը (վերջին երկուսը վախճանուեցին), որոնց այցելում էի յաճախ: Երբ գալիս էի Արամի մօտ, միշտ հետաքրքրուում էի իր մասին, միշտ էլ պատասխանում էր՝ «լաւ եմ»: Եւ այդ ասում էր ոչ թէ նրա համար, որ լաւ էր, այլ որպէսզի մենք չանհանգստանայինք: Իսկ իրապէս լաւ չէր: Իր վիճակը գնալով բարդացաւ ու վերին աստիճան սաստկացաւ: Հիւանդութեան 18րդ օրը կորցրեց գիտակցութիւնը եւ գրեթէ մինչեւ վերջ մնաց այդ վիճակում՝ օրհասական պայքար մղելով հիւանդութեան դէմ: Եւ մահը յաղթեց: Յունուար 29ին Արամը այլեւս չկար:

Գիտակցութիւնը կորցնելուց յետոյ, մի երկու անգամ, շատ կարճ ժամանակով, ուշքի եկաւ: Սկզբներում Արամի վիճակը բժիշկներին մտահոգութիւն չէր պատճառում. վստահ էին, որ նրա առողջ կազմուածքը վերջ ի վերջոյ պիտի յաղթանակէր: Բայց երբ ուշագնացութիւնը տեսեց շատ երկար, նրանց սիրտը կասկած մտաւ: Եւ այդ կասկածը նրանք բարձրաձայն յայտնեցին հիւանդի մօտ, վրստահ, որ նա չի կարող լսել: Սակայն, որքա՛ն մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ հիւանդից լսեցին.

— Ի՞նչ էք ասում, ոտքս գետնով տամ՝ սարերը կը դռդամ:

Եւ այնուհետեւ բժիշկները որքան աշխատեցին, այլեւս ոչինչ չլսեցին նրանից:

Թէ եւ քաղաքն այն օրերին լի էր հիւանդներով, գրեթէ ամէն օր յուղարկաւորութիւններ էին տեղի ունենում, եւ մարդկանց սիրտը քարացել էր, բայց Արամի վիճակով հետաքրքրուում էին ամէնքը եւ ուշադրութեամբ հետեւում նրա հիւանդութեան, որի բարդանալուց յետոյ, մարդիկ սկսեցին մեծ անհանգստութիւն արտայայտել: Երբ Արամը գիտակցութիւնը կորցրեց՝ քաղաքում ծայր տուին չարագուշակ լուրեր:

(*) Բժաւոր տիֆով հիւանդների մարմինը, սովորաբար, ծածկուում է մանր բծերով, որոնք յետոյ անցնում են: Արամի վրայ երեւցին միայն մի քանի հատ եւ շուտով չփայտան:

Անձամբ երկու-երեք անգամ, փողոցով անցնելիս, լսել եմ Արամի մահուան մասին այն ժամանակ, երբ բժիշկները դեռ իրենց յոյսը չէին կորցրել: Այդ լուրերը, չգիտեմ ի՞նչ ճանապարհով, հասնում էին ե՛լ Արամի ահանջին:

Մի անգամ, մի քանի վայրկեան ուշքի գալով, նա կանչում է իր մօտ կնոջը եւ հարցնում.

— Լսեցի՞ր, Կատիւշա:

— Ի՞նչ, Արամ:

— Փողովուրդն ասում է՝ Արամը մեռաւ:

Եւ նորից ընկղմւում է մոռացութեան մէջ:

Դրանից առաջ էլ, երբ նորից ուշքի է գալիս, հարցնում է Ռոստոմի մասին (այդ ժամանակ Ռոստոմը չկար, վախճանուել էր, բայց Արամը չգիտէր): Տիկինը նրան ուրախացնելու նպատակով պատասխանում է.

— Ռոստոմը շուտով պիտի գայ Երեւան:

— Դէ՛, հալաւս պատրաստի՛ր: Ռոստոմը որ գայ, վեր եմ կե՛նայու, — ասում է Արամը:

Եւ դարձեալ ուշքը գնում է:

Վ. Մինախորեանը պատմում էր, որ Արամի մահուանից մի քանի օր առաջ, հիւանդի մօտ եղած ժամանակ նկատում է, որ նա ուշքի գալու փոքրիկ նշաններ է ցոյց տալիս: Փորձում է հետը խօսել:

— Արա՛մ, Արա՛մ, ինչպէ՞ս ես, — կրկնում է մի քանի անգամ:

— Լաւ եմ, լաւ, — վերջապէս հազիւ լսելի ձայնով պատասխանում է հիւանդը:

Արամի վերջին խօսքն էր այդ:

Նա մեռաւ Յունուար 29ին, ցերեկուայ ժամը 3ին: Բօթը ինձ հաղորդեցին հեռախօսով:

Երբ մի երկու րոպէ յետոյ, մօտենում էի Արամի բնակարանին, այնտեղից դուրս էին գալիս Յ. Քաջազնունին եւ Ա. Սահակեանը: Ներսը, ընդարձակ սրահի մի անկիւնում, լուսամուտի մօտ, տխուր, մտազբաղ կանգնած էր բժիշկ Բարալեանը: Արամի ննջարանը տանող դուռը բաց էր: Ինքը անշնչացած պառկած էր մահճակալի վրայ: Հարեւան սենեակից լուում էին հեծկլտանքներ: Մօտեցայ մահճակալին եւ ծունկի եկայ...

Ինքնամոռացութիւնից ինձ հանեցին աղիողորմ, սրտամորմոք հառաչանքները: Գլուխս բարձրացրի: Վանեցի քոյրիկն էր, որը

խնամում էր Արամին մինչեւ նրա տիկնոջ Երեւան փոխադրուելը:

Արահր լցուեց այցելուներով:

Արամի յուզարկասրտութիւնը համաժողովրդական մեծ սուգ էր: Հազարաւոր մարդիկ եկել էին վերջին յարգանք մատուցանելու այն մարդուն, որին փոտահել էին իրենց բախտը կեանքի ամենածանր օրերին: Ես գիտէի, թէ ի՞նչ էր եղել Արամը այդ ժողովրդի համար, բայց եւ այնպէս, երբ դազազր դուրս բերինք բնակարանից, այն, ինչ որ տեսայ դուրսը՝ մի վայրկեան սթափեցրեց մեծ կորուստի ազդեցութիւնը ու դարմանք պատճառեց: Աչքդ որ կողմ ուղղում էիր՝ ծով բաղմութիւն: Փողոց, տանիք, պատշգամբ, լուսամուտ՝ ամէն տեղ բռնուած էր մեծ տարածութեան վրայ: Ամբողջ քաղաքը, մեծ ու փոքր, դուրս էին եկել փողոց: Պօղոս-Պետրոս եկեղեցուց սկսած մինչեւ հանդստարան դիակառքը մնաց դատարի: Դազազր տանում էին ձեռքերի վրայ:

Դաշնակցութեան Տան առջեւ դամբանականներ խօսուեցին: Հոյակապ էր ու անմոռանալի մանաւանդ Նիկոյ Աղբալեանի խօսքը: Հանգստարանում խօսեցին Յ. Քաջազնունին, Ա. Գիւլիսանդանեանը եւ ուրիշներ:

Այդ օրը Հայաստանի մայրաքաղաքը համակուած էր ընդհանուր սուգով...

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Բուն անունը Սարգիս էր կամ Սերգէյ Յովհաննիսեան, Վանում դարձաւ Արամ Մանուկեան: Ծնուել էր Ղափանի Ձէյվա գիւղում, արհեստաւորի մի համեստ ընտանիքում, 1879ին: Ծնողների չքաւորութեան պատճառով դառն մանկութիւն ունեցաւ: Շուշիում դերձակութիւն անող մեծ եղբոր օգնութեամբ աւարտեց Ազուլեայ ծխական ուսումնարանը եւ 1890ին մտաւ Շուշի Թեմական դպրոցը:

Աշխատասէր, ուշիմ եւ ընդունակ տղայ էր Արամը: Սիրուած էր ուսուցիչներից եւ ընկերներից: Աչքի էր ընկնում մտաւոր զարգացումով եւ եռանդով մասնակցում էր աշակերտական խմբակների աշխատանքներին: Շուշի Թեմական դպրոցը, այդ տարիներին, յեղափոխական խմբումների կենտրոններից էր: Դաշնակցութեան ազդեցութիւնը տիրական էր աշակերտութեան մէջ, հակառակ որ տեսչութիւնը գտնուում էր պահպանողականների ձեռքին: Արամի դպրոցական ընկերներն էին ապագայ Իշխանը, Մենակը, Իսաջանը եւ ուրիշ ըմբոստ գաղափարական երիտասարդներ: Բախումը աշակերտութեան եւ տեսչութեան միջեւ անխուսափելի էր: Ի վերջոյ, մի խումբ աշակերտներ, որոնց թւում եւ Արամը, խռովայոյզ ցոյցերից յետոյ, ոստիկանական ուժով վտարուեցին դպրոցից:

Արամ, Իշխանը եւ մի քանի ուրիշներ ընդունուեցին Երեւանի Թեմական դպրոցը, ուր իրենց հետ բերին դաշնակցական գաղափարներն ու ոգեւորութիւնը: 1901ին, աւարտելով Երեւանի Թեմական դպրոցը, Արամը անցաւ Բագու՝ աշխատելու համար բանուորութեան մէջ, ուր շուտով աչքի ընկաւ, իրրեւ եռանդուն դաշնակցական գործիչ: 1903ին, եկեղեցական կալուածների գրաւման օրերին, Արամը Բագուի Կենտր. Կոմիտէի կողմից ուղարկուեց Գանձակ՝ ինքնա-

պաշտպանութեան գործով, ապա անցաւ Կարսի շրջանը, որ դաշնակցական գործունէութեան ետուն վայր էր այն օրերին: Այնտեղից դէնք ու ռազմամթերք էր փոխադրուում Երկիր, խմբեր էին կազմակերպուում՝ Երկիր մտցնելու համար: Այնտեղ էին Սերաստացի Մուրատը, Թորոյումը, Իշխանը, Իսաջանը, Մենակը եւ ուրիշ գործիչներ ու հայդուկներ: Աննկարադրելի ետուցեալ եւ ոգեւորութիւն էր տիրում շրջանում:

Արամը ամբողջ թափով փարեց յեղափոխական խմբերի պատրաստութեան: Ինքն էլ մտադիր էր մտնել Երկիր, բայց տկար առողջութիւնը արգելք եղաւ: Իրար յետեւից խմբերը անցան սահմանը՝ փութալով Սասունի օյնութեան եւ ճանապարհին շատերը բնաջրնուեցին ուսների եւ թուրքերի ձեռքով: Սպանուեցին եւ Արամի մտերիմները՝ Թորոյումը, Իսաջանը, Մենակը: Կարսի շրջանը այլեւս դարձաւ անտանելի նրա համար: «Խիղճս ինձ տանջում էր, գրում է նա իր յուշերում, որ ամէնքը գնացին եւ նահատակուեցին, իսկ ես կարծես մի խորամակնութեամբ յետ մնացի»:

Արամը հեռանում է Կարսից Սասուն անցնելու մտադրութեամբ, բայց Թիֆլիսում իմանում է, որ Սասունը ընկել է, եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի առաջարկութեամբ, 1904ի աշնանը, մեկնում է Վան, ուր գտնուում էին արդէն Իշխանը եւ Վահան Փափազեանը (Բժիշկ): Այսպիսով սկսուեց նրա գործունէութիւնը Վասպուրականում, որից դուրս եկաւ Վանի Արամը:

Արամի կեանքն ու գործունէութիւնը Վանում, մինչեւ 1906ին, երբ նա, Իշխանի հետ, մեկնեց արտասահման Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովին մասնակցելու համար, պատմուած է իր յուշերում*):

Արտասահմանում Արամ մնաց մօտ կէս տարի: Ընդհանուր Ժողովից յետոյ, նորից վերադարձաւ Վան, ուր հետզհետէ կենտրոնական դիրք գրաւեց: Այդ շրջանի դէպքերը մանրամասնօրէն նկարագրուած են Վ. Փափազեանի վերջերս լոյս տեսած «Իմ Յուշեր»ի Ա. հատորում:

Սահմանադրութիւնից յետոյ, Արամը մի տարի ուսուցչութիւն արաւ Օրդուում: 1911 թուականը անցկացրեց Ժընեւում: Եւ դարձեալ մի տարի Օրդուում ուսուցչութիւն անելուց յետոյ, վերադարձաւ Վան: Ու այնուհետեւ, Արամը եղաւ Վասպուրականի Դաշնակցութեան ղեկավար ու մղիչ ոյժը՝ Իշխանի, ապա Ա. Վոսմեանի հետ: Ինչպէս Ռոստոմը բովանդակ Դաշնակցութեան մէջ, Արամը ա-

*) «Հայրենիք» ամսագիր, 1922ի թիւ 2ից սկսած:

մէն ինչ էր Վասպուրականում. զպրոց, աղպային հաստատութիւններ, մամուլ, ժողով ու հանդէս, երիտասարդական շրջաններ, դատաւար, Աղթամար, յարաբերութիւններ կառավարութեան հետ — ամէն բանի վրայ տիրական էր Արամի միտքն ու հոգին:

Վրայ հասաւ համաշխարհային պատերազմը: Վառմեանն ու Իշխանը գոհ զնային նենդ դատադրութեան: Արամը մնաց մենակ զեկամար գիրքերում՝ անօրինակ աղէտի առջեւ: Եւ հերոսամարտը, որով փրկուեցաւ Վանը, կազմակերպուեց ու վարուեց Արամի ուժեղ բազուկներով: Եւ երբ 1915ին Վասպուրականը աղատուեց մահացու վտանգից, բնական կերպով Արամը կոչուեց նահանգապետութեան: Նա միակ մարդն էր, որի հեղինակութիւնը այդ օրերին ճանաչում էին ամէնքը — ե՛ւ նրանք, որ այսօր երկիրդաժութեամբ ու պաշտամունքով արտասանում են նրա անունը, ե՛ւ նրանք, որ կրօնից կուրացած՝ սեւացնում են նրա յիշատակը:

Արամի նահանգապետութիւնը կարճ տեւեց — ընդամէնը չորս ամիս: Այնուհետեւ յաջորդեցին աղէտաւոր նահանջները ուս բանակի, եւ Վասպուրականի հայութիւնը տեղահան ու հողմավար եղաւ: Բայց Արամը երբեք չդաւաճանեց նրան, մնաց նրա մէջ ու նրա հետ, եւ գերմարդկային ճիգ թափեց մեղմացնելու համար նրա տառապանքը:

1916-17 թուականները Արամը անցկացրեց Թիֆլիսում: Մասնակցում էր Ազգ. Բիւրոյի եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի աշխատանքներին, բայց առաւելագէս զբաղուած էր Վասպուրականի եւ այլ վայրերի գաղթականների գործերով: Մի պահ ծանր յողացաւ անկողին ձգեց նրան, եւ ընկերների ստիպման տակ անցաւ Խրիմ՝ դարմանուելու համար Սաքիի հանքային բուժարանում, ուր, դարձեալ ընկերների ստիպումով, գրի առաւ իր յուշերը: Ապաքինած վերադարձաւ Թիֆլիս ցարական վարչաձեւի անկման նախօրեակին եւ ամբողջ էութեամբ նետուեց յեղափոխական թոհուրոհի մէջ: Թրքահայ զրաւուած վայրերի առանձին նահանգապետութեան վերածուելը եւ գաղթականների վերադարձը նոր թափ ու ողբերգութիւն ներշնչեցին նրան: Մասնակցեց Արեւմտահայ եւ Ռուսահայ Աղգային Ժողովներին, որոնց մէջ ղեկավար դեր կատարեց: Աջ բազուկը եղաւ Թրքահայաստանի նահանգապետի օգնական Բժ. Չաւրեանի: 1917ին Ազգ. Խորհրդի կողմից, իբրեւ լիազօր ներկայացուցիչ, ուղարկուեց Երևանի նահանգը, ուր նրան միջնակուց պատմական դեր, Դրոյի հետ միասին, հայութեան պաշտպանութեան եւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծման գործում: Այս շրջանում էր, որ առանձնապէս երեւան

եկաւ նրա արտակարգ կարողութիւնը, յեղափոխական, կազմակերպական եւ պետական տաղանդը: Ի դուր չէ, որ հանրային կարծիքը նրան է համարում Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրը:

Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ կառավարութեան մէջ Արամը ստանձնեց ներքին գործոց եւ պարենաւորման նախարարի պաշտօնը: Միակ մարդն էր, որ այդ խտանակ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել Երկրում եւ պետական շինարարութեան սկսել: Աւա՛ղ, սակայն, կարճատեւ եղաւ նրա պաշտօնավարութիւնը: 1918ի Դեկտեմբերին, երբ բժաւոր Թիֆլիսէր էր գործուած Երևանում, Արամն էլ վարակուեց եւ անկողին ընկաւ: Տանձում երևանում, Արամն էլ վարակուեց եւ անկողին ընկաւ: Տանձուցից հիւանդութիւնը տեւեց մինչեւ 1919ի Յունուար 29ը, երբ նա փչեց վերջին շունչը: Վերջին օրերի գառանցանքների մէջ նա, յաճախ, յիշում էր Ռոստոմի անունը, որ արդէն հեռացել էր այս աշխարհից...

Հայ ժողովուրդը Արամին արաւ մի յուղարկաւորութիւն, որպիսին չէր տեսել Երևանը. ամբողջ քաղաքը լալիս էր եւ երկիրդաժութեամբ հետեւում նրա դադաղին: Արամի մարմինը թաղուեց Երևանի հասարակաց գերեզմանատանը, Հ. Յ. Դաշնակցութեան Պանթէոնի բաժնում, յաւերժական Մասիսի առջեւ: Այդպիսի սրտաշարժ յուղարկաւորութեան արժանացել էին միայն Ս. Չաւրեանը Պոլսում եւ յետագային՝ Ա. Ահարոնեանը Մարսէլում ու Փարիզում:

Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890 - 1950 Պոսքըն

ԱՐԱՄԻ ՅՈՒՇԵՐԸ

ԴԵՊԻ ԵՐԿԻՐ

Առաջին անգամ դէպի Վան իմ քանապարհորդութիւնը կատարուեցաւ շատ բացառիկ պայմանների տակ: 1904ի աշնան էր, նիշդ չեմ յիշում, ո՞ր ամսին:

Սասունի անժամանակ ժայթփումը, բազմաթիւ գիւնատար խմբերի անյաջող փորձերը եւ սահմանագլխի վերայ ջարդուիլը, իմ մերձաւոր ընկերների նահատակութիւնը ինձ դրել էին յուսահատ կացութեան մէջ: Խիղճս ինձ տանջում էր, որ ամէնքը գնացին եւ նահատակուեցան, իսկ ես, կարծես մի խորամանկութեամբ յետ մնացի:

Սոսկալի հակազդեցութիւն կար հասարակութեան և մեր ընկերների մէջ: Անդրանիկը, Մուրատը, Սեպուհը եւ ընկերները Երկրից հեռացել էին: Եւ ամէնքը պնդում էին, թէ Երկրում գործունէութիւնն առայժմ անհնարին և անմիտ է: Երեք տարուան իմ գործունէութիւնը սահմանագլխի վրայ, Կարսի շրջանում, որոշ փորձառութիւն էր տուել ինձ: Ես եկել էի Բագուից Կարս, մի քիչ փորձուելուց վերջ Սասուն անցնելու նպատակով. թունդ *սասունեան* էի: 1903ին Կարս եկող բազմաթիւ երիտասարդներին համոզում էի, որ Սասուն գնանք: Ինձ երեւի այնտեղ քաջազոր դպրոցական ընկերներս էին՝ Թումանն ու Եգորը: Եւ, ընդհակառակը, թունդ *վանեան* էր Կարս եկող մի նոր երիտասարդ, ապագայ Մուշ-Սասունի Ռուբէնը, որ ձեմարանում ընկերական կապերով կապուած էր վանեցիների հետ: Ինձ հետ երկար վիճում էր Վանի առաւելութիւնների մասին եւ համոզում, որ միասին Վան գնանք: Դէպքերը այն-

պէս դասաւորուեցին, որ թունդ «վանեան» Ռուբէնը գնաց Մուշ, իսկ ես՝ թուն «սասունեանս» մեկնեցի վան...

Կարսի սահմանազրկի դէպքերը փնացրել էին մեր յարաբերութեան բոլոր գիծերը: Համարեա ամբողջ գծի վրայ եղած կազմակերպութիւնները քայքայուել էին գործիչների նահատակութեան կամ ձեռքակալման պատճառով: Սասունի գործը վիժած էր. Մշոյ դաշտում գործ վերսկսելը իմ ուժերից վեր էր: Ես նոր մարդ էի երկրի համար, պիտի գնայի այնպիսի շրջան, ուր որոշ կազմակերպութիւն կար, փորձառու ղեկավար ընկերներ կային՝ ներանց ձեռքի տակ կամ նրանց հետ գործել կարողանալու համար: Թէ՛ այս եւ թէ՛ մանաւանդ Պարսկաստանից վան անցնելու դիրութիւններն ինձ էջեցին դէպի Պարսկաստան:

Վերջին անգամ անցնում եմ Թիֆլիս՝ տեսնուելու ընկերների հետ, վերջին հրահանգներ առնելու, վերջին խնդրանքներ անելու: Փորձառու ընկերները մասնաւորապէս խրատել էին ինձ, որ երկիր մտնելիս՝ անպայման աշխատեմ իմ տրամադրութեան տակ որոշ գումար ունենալ, որպէսզի տեղ հասած ժամանակ կարողանամ թէ՛ իմ ինֆուրմացիանս եւ թէ՛ ազդեցութիւնս պահել:

Զեմ յիշում, թէ այն ժամանակ ովքե՞ր կային Թիֆլիսում: Բայց լաւ կը յիշեմ որ ինձ հետ միշտ սիրալիք բժիշկ Յ. Տ. Դաւթեանն ինձ տուեց 100 ոսկի, որ իմ անունով եւ վան փոխադրեցի (ի հարկէ, պայմանական անունով — այդ ես արի Երեւանի վանեցի Տ. Արիստակէսեանի միջոցով) եւ բացի այդ՝ 20-25 ոսկի՝ քանապարհի ծախսերի համար:

Այնքան դրապոլ ինձ խնդրեցին հետս վերցնել *Գանձակցի Նիկոլին* (որ փախստական էր զինուորութիւնից. սա վերջը նահատակուեց Պարսկաստանի ազատագրական կռիւների ժամանակ Թաւրիզի շրջանում) եւ Մշեցի (*Վարդոյից*) *Յարութիւնին*, որը դարձաւ ապագայում վանի շրջանի լաւագոյն ժողովրդական գործիչը: Սրա մասին ես գրած եմ կենսագրական՝ «Դրօշակ»ի 1912 թուի մէջ:

Կարսի շրջանից արդէն հետս վերցրել էի իմ շատ սիրելի զինուորներից *Մանազկերտցի Մոսոն*, որ շատ հաւատարմութեամբ երկար ժամանակ զինուորութիւն ըրաւ

վան, յետոյ անցաւ Կովկաս եւ այժմ Թիֆլիս է ընտանիֆով:

Այդ երեք ընկերներով անցանք Երեւան: Տեղական ընկերներից այն ժամանակ այնտեղ էին *Թորոսը՝ Գալուստ Ալոյեանը*, եւ Բագուից ինձ մօտիկ Սարգիս Օհանջանեանը, որ երկու տարի առաջ փորձել էր վան երթալ, քանապարհին բռնուել էր եւ յետ դարձել: Ահա այս երկու փորձ ընկերները իրենց վրայ վերցրին մեզ քանապարհ ղնելու ծրագրի կազմումը եւ իրագործումը: Առաջին եւ սուկալի տանջանքներից ու վտանգներից մէկը ինձ համար եղաւ սրանց ծրագրով քանապարհ գնալը:

Բանը այն է, որ Ս. Օհանջանեանը գտնում էր, թէ Պարսկաստանում մեծ անհրաժեշտութիւն է ունենալ ուսական արտասահմանեան անցագիր, որը ձեռք բերելու համար անհրաժեշտ դիմումներն արդէն կատարուած էին: Բայց ըստ սովորութեան գործը ձգձգուում էր:

Գալուստը, որ ինֆնիբան անելի փորձառու էր համարում, եւ իրաւունք ունէր, քանի որ երկար տարիներ նա՛ էր վարել այդ գծի փոխադրութիւնները ընկերների եւ ապրանքների, պնդում էր, թէ լաւագոյնն է առանց անցագրի, մեր թուրք սուրհանդակ ապրանք փոխադրողի հետ միասին, իբրեւ փախստական անցնել սահմանը, Արախւր. իսկ այն կողմը, Պարսկաստան, մեզ ոչինչ պէտք չէ:

Ես համակերպում եմ Գալուստի առաջարկին, որովհետեւ ժամանակը արդէն ուշ էր (Սեպտեմբեր պիտի լինէր): Ես շտապում էի օգտուել աշնան երկար գիշերներից, մանաւանդ, որ ճիշդ այդ ժամանակները զօգանաւորները արդէն սարերից քաշուած պիտի լինէին դէպի իրենց գիւղերը, եւ քանապարհները շատ յարմար էին:

Հրաժեշտ տալով ընկերներին, չորս հոգով կառք նրստեցինք: Գնացինք Դաւալու, ուր պիտի մնայինք, մինչեւ որ մեր առաջնորդ թուրքը պատրաստութիւններ տեսնէր եւ գար մեզ տանելու:

Դաւալուում այդ ժամանակ գործերի ընդհանուր ղեկավարը Ամի անունով մի բարի ծերունի էր, որ սիրով մեզ հիւրընկալեց, պատմելով եւ հառաչելով, որ մեզ պէս շատերին է նամբել, բայց ֆչերն էին դարձել...

Որովհետեւ Ամին կասկածի տակ էր, այդ պատճառ-

նով իրիկունը ինձ տեղափոխեց գիւղի վարժապետին տունը, իսկ երեք բնակիչները՝ մի այլ տուն: Ուսուցիչը իմ հին ծանօթն էր, անունը մոռացել եմ. արարտել էր Երեւանի Պետական Ուսուցչանոցը, գաղափարական տղայ էր եւ լաւ գիւղական ուսուցիչ: Ընտանիքով էր ապրում այդ գիւղում:

Առաջին յեղափոխական անփորձութիւնս փորձեցի այս խեղճ գիւղական ուսուցչի եւ նրա ընտանիքի գլխին:

Մեզ հետ վերցրել էինք մէկ մէկ ատրեանակ ու հրացանի մասեր եւ, որովհետեւ հետս եկող ընկերներից Յարութիւն Միրաֆեանը մասնագէտ էր պայթուցիկների, վերցրել էինք նաեւ մեծ ֆանակութեամբ դիմամիտ, մանաւանդ կապսիւլներ, որոնք նախապէս պատրաստուած լինելով գործածութեան համար՝ լեցուած էին մինչեւ բերանը շուտ բռնկուող *անտիմոնիի* եւ *բերտոլետեան* ազի խառնուրդով: Ես իբր թէ մի ֆիչ հասկանում էի պայթուցիկներից, — ի հարկէ, աւելի տեսականը, քան փորձականը. որովհետեւ հագիւ մի երկու անգամ ներկայ էի եղել հասարակ փորձերի՝ այն էլ ուրիշների ձեռքով կատարուած:

Յարութիւնը պնդում էր, որ կապսիւլները այդպէս տանիլը վտանգաւոր է, կարող են հասարակ շփումից պայթել եւ բոլորիս վնասել — ձիու կամ կառֆի վրայ: Վարժապետի մօտ, իբրեւ աւելի վստահելի մարդու, բոլոր իրերը հետս էի վերցրել:

Զգիտեմ՝ վարժապետը հետաքրքրուեց իմ գամբիւզով, թէ ե՞ս ինքնաբերաբար բացի եւ սկսեցի գատել կապսիւլները: Սեղանի վրայ դարսելով լեցուածները, տանտիկնոջից ասեղ ուզեցի եւ սկսայ փորել կապսիւլներն ու լեցուած աղերը, նիւթերը դուրս տալ: Ուսուցիչն էլ հաւասի եկաւ. ինքն էլ փորձեց դատարկել: Բաւական դատարկել էինք. սեղանի վրայ էին դիզուած դատարկուած փոշին (անտիմոնի եւ բերտոլետեան աղ) եւ դատարկ ու լիք կապսիւլները: Ի հարկէ, այս անում էինք նրագի լոյսով: Զգիտեմ՝ ուսուցիչը ծխեց, թէ հէնց ասեղի շփումից պատահեց, ի՞նչ թէ նրա ձեռքում, այդ էլ լաւ չեմ յիշում, յանկարծ պայթեց մի կապսիւլ, երբ խեղճ տանտիկինը՝ երեխան գրկին՝ կանգնած էր մեր դիմաց, սեղանի մօտ:

Ձեռքի կապսիւլի կայծը բռնկեցրեց սեղանի վրայ

դիզուած նիւթերը. նա էլ իր կարգին լիք-դատարկ կապսիւլները: Սոսկալի պայթումից վախեցած՝ ինքնաբերաբար ես ինձ նետեցի ցած, սեղանի տակ: Վարժապետը եւ խեղճ կինը աւելի անփորձ, քան ես, մնացին կանգնած եւ ենթարկուեցին սոսկալի պայթիւնի հարուածներին: Վարժապետի ձեռքերի մի քանի մատները գնացին եւ երեսը վառուեց: Աւելի վնասուել էր խեղճ կինը, մանաւանդ իր դժբախտ երեխան: Իմ երկու ձեռներս էլ առաջին փոքրիկ կապսիւլի պայթումից բազմաթիւ տեղերից վիրաւորուել էին, իսկ ձախ ձեռքիս նկոյթի մտերը խիստ զգգուել... Բայց ես անհամեմատ աժան պրծայ: Ի հարկէ, պայթումից նրագը մարել էր: Երբ խուճապը անցաւ, նրագ վառեցինք, եւ նոր տեսանք սոսկալի աւերումները:

Զայնը, բարեբախտաբար, դուրս չէր գնացել: Խուկոյն վագեցի տղաների մօտ, որոնք մեզնից շատ հեռու չէին: Իմ արիւնտած դէմքս, մանաւանդ ձեռքս տեսնելով, յանկարծակիի եկան: Պատմեցի եղելութիւնը: Մէկին ուղարկեցի Ամիի մօտ. հարկաւոր էր շուտով փախչել այս գիւղից, ո՛վ գիտէ, վան գնալու տեղ, ո՞ւր կը տանին մեզ...

Գիշերով մեր բան-մանը շալակած՝ հեռացանք Դաւալուից եւ Ամիի հրահանգով գնացինք դաշտը, մեծ քանապարհի վրայ գտնուող մի հիւղակ, որը մի դազախեցի հայի էր պատկանում, իսկ ինքն էլ այդ շրջանի մի կալուածատէրի կառավարիչն էր:

Մեզ իսկոյն հիւրընկալեց, տաքացրեց թէյով, տրդաներին՝ օղիով: Իմ ձեռքերիս վերքերը կապեցին: Այդպիսով «հաշակեցինք եւ անցուցինք» Հայաստան գնալու առաջին վտանգը, որ առաջ եկաւ իմ անփորձութիւնից կամ նամբողների անփութութիւնից:

Բայց այս դեռ բոլորը չէր: Դեռ նոր վտանգներ եւ սոսկումներ սպասում էին մեզ, այն էլ այնտեղ, ուր մենք կարող էինք անցնել շատ հանգիստ եթէ գնայինք օրինական ձեռով ու հանապարհով...

Կարծեմ մի երկու օր մնացինք և դաշտի հիւղակում, վայելեցինք այդ լաւ մարդու հիւրընկալութիւնը: Սեւաբեցի Սաֆոյի հայրենակիցն ու նրա պաշտողներից էր:

Վերջապէս, թուրքը եկաւ մեզ առաջնորդելու: Գի-

շերով մեզ տարաւ իրենց գիւղը, կարծեմ, ինձ ձիով, մնացածներին ոտով: Մոռացել եմ այդ թուրք գիւղի անունը. գտնուում էր Շահթախթից ուղիղ վեր, միշտ Արաքսի ափին:

1904 թուին սոսկալի ֆոլերա կար, մանաւանդ այդ շրջանի թուրքերի մէջ: Մեր առաջնորդի տանը անկողին ընկած չորս հիւանդներ կային: Ի հարկէ, մենք էլ նոյն յարկի տակն էինք: Նոյն բաժակներով թէյ խմեցինք եւ նոյն ամաններով կերանք: Բայց պատահականութիւնը թէ մի այլ բան, թէ՛ այդտեղ, թէ՛ ամբողջ ֆանապարհի վերայ, մեզ վարակելուց փրկեց...

Կարծեմ մի երկու օր էլ մնացինք այդ թուրքի տանը: Պէտք է «ֆալաֆ»(*) պատրաստէին եւ ուս սահմանապահին տեսնէին իբր թէ: Վերջը լուր բերին, թէ քալաքի պէտք չկայ. գետը կարելի է անցնիլ եւ առանց քալաքի, որովհետեւ ջրերը շատ նուազել են:

Նոյեմբեր ամիսն էր: Գետի ափերին արդէն ջուրը պաղել էր, բայց մենք՝ երեխայի յափշտակութեամբ եւ հետաքրքրութեամբ շուտ տեղ հասնելով մտահոգուած՝ իսկոյն համակերպուեցինք:

Արաքսը այդտեղ 300-400 մետր լայնութեամբ մի յարմար հուն ունէր: Ճիշդ մէջտեղը կային մի քանի կրդ-գիներ, իսկ գիւղի ուղիղ տակը գիւնուորական սահմանապահ պահակն էր:

Գետի ափը չհասած՝ մի աւերակ տան մէջ մերկացանք, հագուստներնիս կապեցինք մեր գլխի վրայ եւ վազէ վազ մտանք պաղ ջրի մէջ, սկիզբը ծիծաղով ու կատակով, բայց քանի առաջացանք, սկսանք դողալ ու փոշմանել, բայց ուշ էր... Մեծ դժուարութեամբ հասանք առջին կղզին. մեր Մոսոյին եւ մի թուրքի ձգեցինք գետը իմանալու համար միւս կողմի խորունկութիւնը: Մոսոն լաւ լողուոր էր, խորասուզուեց եւ ձեռքերը բարձրացրեց դէպի վեր, բայց ձեռքերն անգամ չհասան ջրի երեսը: Կատարեալ խայտառակութիւն, ո՛չ կարող ենք առաջանալ եւ ո՛չ էլ ետ դառնալ: Գետը մտնելու համար մենք ընտրել էինք

(*) «Քալաք»ը օդով լցուած տիկեր են, որոնք ջով ջովի են կապուած, վերան տախտակներ հաստատուած, գետի վերի հոսանքից ձգուած եւ չեղակի միւս ափը հանում:

այնպիսի բույտ, երբ խուզարկու գիւնուորական խմբերը իրարից բաժանուած հակառակ կողմերն էին գնում: Թէեւ մութ էր, արդէն երեկոյեան ժամը Տից անց, բայց ո՛չ մի յոյս չկար, որ կարող ենք դառնալ: Յետոյ, ո՛ւր դառնալ, չորս մարդ ֆոլերայով բռնուած թուրքի տո՛ւնը...

Թուրք առաջնորդը որոշում է, որ մենք կղզին սպասեմք, իսկ ինքը գնայ միւս ափից քալաքը բերէ: Համակերպուում ենք: Նա գնում է: Յետոյ ենք յիշում, որ մենք ո՛չ հաց ունինք, եւ ո՛չ էլ տղաքը ծխախոտ: Միւս թուրքը առաջարկում է, որ ինքն էլ գնայ գիւղ՝ հաց եւ այլն բերէ: Յիմարաբար համաձայնուում ենք եւ՛ նրա առաջարկին. նա էլ է մեկնում:

Բույտները ժամեր են կտրում: Մենք սպասում ենք այս եւ այն ափից օգնութեան կամ այցելութեան, բայց ո՛չ ոք չկայ: Սոսկալի յոգնած, պաղած, թրջուած, անօթի եւ յուսահատ նստել եւ խորհում ենք: Տղաները, երեսում է որ, աւելի անհամբեր են, բայց լուում են, տեսնելով թէ ես ձայն չեմ հանում: Վերջապէս, Յարութիւնն առաջարկում է, որ կրակ անենք, հաւատացնելով, որ կրակը՝ ջրի մէջտեղ արուած՝ մէկ ափից կ'երեսայ իբրեւ հակառակ ափին վառուած օջաղ: Համակերպուում ենք, որովհետեւ ուրիշ նար չունինք:

Կղզին ծածկուած էր մի տեսակ սեւ փայտի թուփերով, որոնցից շատերը չորացել էին: Իսկոյն հաւաքում ենք փայտեր, չոր եղէգ, եւ մի հսկայական խարոյկ պատրաստում ու շարում նրա շուրջը:

Տափութիւնը նինջ է բերում մեր վրայ: Պառկում ենք հանգստանալու: Կրակին դէմ արած մեր մէկ կողքը վառուում է տափութիւնից, իսկ միւս կողքը՝ պաղում գետի հոսանքից:

Ի գուր տեղը այս եւ այն կողմն ենք դառնում մեր մարմինը տափացնելու համար, բայց նար չկայ... Տանջանքներով դիմաւորում ենք արշալոյսը, որը իր գեղեցկութեամբ ոչինչ չի խօսում անգամ մեր սրտին: Ուրեմն, թուրքերը խաբեցին ու չեկան: Ի՞նչ յիմարն ենք եղել: Այժմը ենք անդրադառնում որ, երկուսին էլ չափտի թողնէինք, որ գնային եւ մենք միմակ մնայինք: Բայց անցածը անցել է: Մեր բախտից օրը տափ էր, եւ անձրեւ չեկար:

Մութն ընկնելուն պէս այս եւ այն ասին ենք վագում, մեր աչքերը չոռում՝ տեսնելու համար մեզ այցի եկողներին, բայց չկան ու չկան...

Անսահման յուսահատութեամբ՝ բայց առանց իրար մատնելու մեր լիման զգացմունքները՝ դարձեալ ձեռնարկում ենք խարոյկի: Այս գիշեր քնել չի լինում: Մի կողմից՝ անօթութիւնը, միւս կողմից՝ սպասողական վիճակը մեզ ջղայնացրել են: Տղաները ծխախոտի հար արին, ծառի տերեւը հասարակ թղթով փաթաթելով ու ծխելով: Ժամը մի քանի անգամ այս եւ այն ասին ենք վագում ձայն կամ մարդ նկատելու, — չկան...

Առաւօտեան դէմ Մոսոն վագէ վագ գալիս է աւետելու, որ *քալաքը* գալիս է... Վերջապէս, հասան... Զայրոյթից չեմ կարող լսուել: Պրպոզելով տեղաւորում ենք *քալաքի* վրայ եւ կրկին բաց թողնում լողալու...

Վերջապէս, պարսկական ասին ենք. ազատ կարող ենք շունչ փաշել: Անպիտանները մեր սիրտը շահելու համար չէին մոռացել հաց եւ այլ ուտելիքներ բերել: Հաց ուտելուց յետոյ, դիմում են բացատրութիւններին: Բանից դուրս է գալիս, որ տիկեր չեն գտել *քալաքի* համար, այդ պատճառով էլ ուշացել են:

Վերջապէս, մենք փրկուած ենք, սեւ մտքերը վանում ենք դէպի հեռուն...:

Այնուհետեւ ինձ վիճակուեց թէ՛ երկրում եւ թէ՛ Պարսկաստանում փաշակել կրկին դառնութեան բաժակներ: Բայց դրանցից եւ ո՛չ մէկը այնքան չի տանջել եւ, մանաւանդ, այնքան մանրամասնութեամբ չի տպաւորուել գլխիս մէջ, որքան այս երկու գիշերները: Այժմ, 13 տարուց յետոյ, դարձեալ յիշում եմ այդ երկու գիշերուայ բոլոր սարսափելի բոպէները եւ այն մտորումները, որ ես ունեցել եմ այդ ժամանակ...:

Պարսկական սահմանի թուրք գիւղից վարձում ենք մի կառք եւ գիշերով մեկնում դէպի *Խոյ*: Ճանապարհի ամբողջ երկարութեամբ իջեւանում ենք քոյերայով վարակուած գիւղերի մէջ:

Յանկարծ, երբ վերջանում է Մակուի խանութեան սահմանը, մեր առաջ տնկում են *Թիւլանկէի* սարքագներ: Սրանք ազդարարում են, որ իրենք նշանակուած են Մա-

կուի Սարդարի կողմից հսկելու եւ արգիլելու, որ երթեւեկութեան երեսից միւս գաւառներից քոյերան չմտնի Մակուի խանութեան սահմանները:

Ո՛չ այն է՝ գայրանանք. ո՛չ այն է՝ խնդանք: Ինչպէ՞ս թէ քոյերայի բացի չմտնի. չէ՞ որ ամբողջ ֆանապարհի վրայ մեռած բազմաթիւ մարդիկ տեսանք ճոր թաղելիս, շատերը անտէր եւ անթաղ ինկած ֆանապարհների եզրին եւ բազմաթիւ հիւանդներ՝ գիւղերի մէջ:

Ես շատ էի լսել Պարսկաստանի «*Թուրքոյ Բաստի*»ի, «*Զայ Փարասի*»ի եւայլնի մասին: Կառապանին յայտնեցի, որ սակարկութեան մտնէ եւ ֆամբու դնէ: Մէկ ժամ տեւող «*Ման օլամը*», «*Ման օլասանը*», «*Սարգարըն բաչը Իւչիւն*»-ը վերջացաւ նրանով, որ երկու թուման դրամ առին եւ մեզ ֆամբայ տուին մեր ուղին շարունակելու:

Վերջապէս, կուտրուած ու ջարդուած հասնում ենք Խոյ, իջեւանում՝ շուկայի մօտ մի մեծ խանի մէջ: Քոյերան այդտեղ էլ սկսել էր իր հունձքը... Պէտք էր շուտով հասնիլ եւ գտնել մերոնց:

**

Այդ ժամանակ Խոյ, Սալմաստ եւ Թադէի վանքը ունէինք սահմանագլխի կոմիտէներ, որոնք զբաղում էին երկիր գէնք, ռազմամթերք եւ ընկերներ — խմբեր ֆամբելով, երկրի եւ արտասահմանի միջեւ յարաբերութիւններ պահպանելով:

Այդ կոմիտէները, գլխաւորութեամբ Թաւրիզի Կ. Կոմիտէի, եղել են. ուրիշ է, մեծապէս երկրի համար աշխատող եւ անգնահատելի օրգաններ, բայց նրանք մեծ դեր են կատարել եւ Ատրպատականի հայոց կրթական, իրաւական, ինքնապաշտպանութեան և այլ գործերի մէջ: Մակուի, Խոյի. Սալմաստի. Ուրմիի, Թաւրիզի եւ ուրիշ վայրերի բոլոր դպրոցների հիմնադիրներն եղել են երկիր գրեւորող, կամ երկրից եկող ու ժամանակաւորապէս այդ շրջաններն սպաստանող յեղափոխական գործիչները. ո՛չ միայն մեր կուսակցութեան, այլեւ միւս կուսակցութիւնների սպառնալու:

Ամէն մի կոմիտէ ունէր իր ներկայացուցիչները, որոնց այն ժամանակ մենք կատակով անուանում էինք «Դաշնակցական համեր», — միշտ դրսեցի՝ ե՛ւ ոռուսահայ, ե՛ւ թուրքահայ, ե՛ւ ամերիկահայ:

Ներկայացուցիչն ունէր իր տրամադրութեան տակ մի քանի սենեակնոց բնակարան, մի քանի զինուորներ, ձիեր եւ այլն: Սրանք, այսպէս կոչուած, Դաշնակցութեան կայաններն էին եւ ներկայացուցիչները՝ կայանի պետեր:

Նրանք էին հոգում երկրից եկող եւ գնացող, արտասահման անցնող ընկերների պէտքերը, — ապրուստը՝ քանի որ այնտեղ են, ֆանապարհածախս, անցագիր, ֆանապարհի դիրութիւններ եւ այլն: Նրանք էին տեղաւորում եւ պաշտպանում դրսից եկած զէնքերը, ռազմամթերք եւ այլ ապրանքներ՝ երկրի համար:

Նրանք էին այդ ապրանքները, մաս առ մաս, երկրից եկած եւ իրենց գտած սուրհանդակներով երկիր փոխադրում:

Նրանք էին երկրի հետ նամակային յարաբերութիւն պահողը, դարձեալ սուրհանդակներով՝ թերթ, ընթերցանութեան այլ նիւթեր ուղարկողը եւ այլն: Մի խօսքով, նրանք ե՛ւ մեր հազորակցութեանց միջոցն էին, ե՛ւ մեր դրսի հետ յարաբերելու խոզովակը, ե՛ւ ամէն բան:

Պէտք է ասել, որ այդ սահմանագլխի գործունէութիւնը նոյնքան դժուար ու գոհողութիւն պահանջող էր, որքան ե՛ւ երկրի: Բայց առհասարակ ամէնքը, մանաւանդ իրենք՝ ներկայացուցիչներն իրենց դերի մասին շատ քիչ կարծիք ունէին, իրք թէ ո՛վ երկիր չի մտել, նա յեղափոխական ցեղ չունի, այսպէս կոչուած *Թիկունքի հերոս է*. միայն վախկոտներն են սահմանի վրայ նստում եւ այլ նրման անարժէք առարկութիւններ: Ամէնքը մոռանում էին, սակայն, որ առանց դրանց երկրի գործունէութիւնը անհնարին էր եւ որ նրանք այդ գործունէութեան մի մասնակն էին:

Պարսից կառավարութիւնը, ի հարկէ, այս բոլորը տեսնում էր, տեսնում էր եւ լուում: Թէ ինչո՞ւ, այդ մասին պէտք է կարգալ սահմանագլխի ընկերների յիշողութիւնները: Պէտք է ասել, որ մենք, ի հարկէ, որոշ չափով արտաքին երեւոյթը պահում էինք. մէկը վարժապետ էր,

միւսը՝ տեսուչ, երրորդը՝ առաջնորդի փոխանորդ, մի ուրիշը առամնարոյժ կամ լուսանկարիչ եւ այլն:

Այս կոմիտէների բիւջէն մեծ մասով ապահովուած էր կուսակցութեան կեդրոնական սնտուկից: Ի հարկէ, երբ դրամ կար այդ սնտուկի մէջ: Իսկ շատ յաճախ այդ ներկայացուցիչները անձնական որեւէ պաշտօն կամ սեփական գործ ունէին եւ դրանով էին ապրում: Ջուտ տեղական եկամուտները ամենալաւ կազմակերպուած ժամանակներն անգամ չնչին բաներ էին, որովհետեւ տեղական դրամական գոհողութիւնները մեծ մասամբ վերապահում էին տեղական մշակութային կարիքներին:

Այդ ժամանակուայ հոյի ներկայացուցիչն էր Ամերիկայից եկած մի երիտասարդ ընկեր — *Մալխասը՝ Ա. Յովսէփեանը*, որը Ամերիկայից հետը բերել էր ամերիկացիներին յատուկ բոլոր տարօրինակութիւնները, որոնք յաճախ գաւեշտականութեան էին հասնում... Բայց պատմեմ իմ գլխուն եկածը:

Տղաներին թողնելով շուկայի խանի մէջ, ինքս անձամբ գնացի հայոց թաղը՝ մեր պարոններին տեսնելու եւ կարգադրութիւն խնդրելու մեր վիճակի մասին, թէև մարդ էի նամբել եւ երկար սպասել անպատասխան:

Հարցուփորձով, վերջապէս, գտնում եմ «մեր տունը», որ այն ժամանակ Հայոց թաղը չգիտեմ ո՞ր փողոցն էր, գերմանական առաքելութեան հիշող դէմը: Դուրը ծեծում եմ. գալիս է ծառան կամ գուցէ զինուորներից մէկը: Հարցնում եմ.

— Պր. Արտաչէս Յովսէփեանը տա՞նն է:

— Այո՛:

— Խնդրում եմ դուրս կանչել, կարեւոր գործ ունիմ...

— Խնդրեմ, սպասեցէք այստեղ (դրան անցում, բայց ներսից) ե՛ս նրան կանչեմ...

Մի քանի րոպէ անց տեսնեմ գալիս է երկար մազերով, բանաստեղծի շարժումներով, միջառասակ մի պարոն եւ հարցնում է ինձ.

— Դուք ինձ կը հարցնէիք կոր:

— Այո՛, ես Թիֆլիսից եմ գալիս, նամակ ունիմ ձեզ եւ խնդրանք:

— *Խնդրեմ՝*

Նամակը տալիս եմ. ԲԺ. Տ. Դաւթեանն էր գրել, մի քանի խօսք. — «Նամակաբերը մեր լաւ ընկերներէց է, գալիս է Վան անցնելու, խնդրում ենք ամէն ղիւրութիւն ցոյց տալ...»:

— Ախպար, մենք հոս իշու գլուխ ենք, ի՞նչ է տարիներով հոս կը սատկինք, կը նստինք, որ Երկիր երթանք. անդին Թիֆլիսէն այսօր կու գան հոս, վաղը մեկնիլ կ'ուզեն...

Զգիտէի, թէ ի՞նչ ասեմ: Ճիշդն ասած՝ մի քիչ վախեցայ. ասեցի՝ չլինի՞ թէ ինձ խանգարէ: Մէկ էլ դարձաւ ինձ, նայեց ոտքերիս եւ դեւտուեց, — նկատելով, որ ես երկարավիզ կօշիկներով եմ...

— Ախպար, աս ի՞նչ խայտառակութիւն է. չէ՞ք պիտեք, որ հոս մենք ամէն զգուշութիւն կ'ընենք, որ կառավարութիւնը չնկատէ Ֆիդայիներու անցուղարձը: Վերջերս խիստ հսկողութիւն կայ, կ'ուզեն մեզ ձերբակալել, դուք ալ կու գաք ու շուկայի մէջ ասանկ ճրգմաներով կը պտտիք կոր... Բէ՛, ախպար, աս ի՞նչ բէլա է...

Զգիտէի, թէ ի՞նչ ասեմ. կ'ուզէի ներողութիւն խընդրել: Բայց այնպիսի մի վիրաւորանքի զգացում, այնպիսի մի ապշութիւն եկաւ վրաս, որ խօսել չկարողացայ եւ ապուշի պէս յենուեցի պատին՝ վիրաւոր ու կապուած ձեռքերս կուրծքիս բռնած...

Վերջապէս, հանեցաւ ներս հրաւիրել: Բայց, փոխանակ իր սենեակը տանելու, առաջարկեց բովի սենեակը զինուորների մօտ նստիլ: Գլխիկոր, յանցաւոր ներս եմ մտնում սենեակը, ուր մի քանի զինուոր կար. ոմանք հաց էին ուտում, ուրիշներ թէյ խմում, իսկ մի երկուսն էլ գետնի վրայ փամփուշտներ էին ջոկում: Նստելու տեղ կամ աթոռ չկայ. ո՛չ ոք, ի հարկէ, իր տեղը ինձ չի տայ: Նրստում եմ ցածիկ լայն պատուհանի առջեւ եւ նոր եմ նկատում, որ Մալխասն էլ յետեւիցս է ներս մտել:

— *Կօշիկներնիդ իսկոյն հանեցէք եւ տակէն հագէք, ասանկ խայտառակութիւն չըլլար...*

Վիրաւոր ու կապուած ձեռքերով, շատ մեծ դժուարութեամբ քաշում եմ կօշիկները ոտներիցս, որ ութը օրից աւելի չեն հանուել, եւ փորձում եմ մեծ դժուարութեամբ

հագնել: Զինուորներից ո՛չ ոք չի՛ փորձում ինձ օգնելու:

Մալխասը անցնում է առանձնասենեակը: Այնտեղ նրան սպասում էր մի վարդապետ: Նստած, սպասում եմ իրերի ընթացքին: Յանկարծ, ներս է մտնում մի վաղեմի ծանօթ, Փայլակը — Ռուբէն Դերձակեանը, որի հետ ես ծանօթացել եմ Բագու: Մի ուրիշ ընկերոջ հետ Սիրիից դառնալով, նա Գրիստափորի մօտ էր եկել տեսնուելու եւ գործ խնդրելու: Գրիստափորը իմ միջոցով նրան նանապարհածախս տուեց եւ խնդրեց որ ես համբու դնեմ: Այն ժամանակից ծանօթացել էիմք իրար հետ: Ինձ տեսնելով, ուրախացաւ եւ գրկախառնուեց: Իսկոյն զինաթափ եղայ իմ գայրոյթից եւ յուսահատութիւնից, փառք տուի պատահականութեան, որ, վերջապէս, մի ծանօթ գտայ...

— *Ապա ինչո՞ւ ես հոս նստեք. ինչո՞ւ ներս չես գացեր. ո՞ւր է ան Մալխասը...*

Տղաները յայտնեցին, որ առանձնասենեակն է և տեսակցութիւն ունի Նախավկայի վանքի վանահօր հետ: Իսկոյն գոռգոռալով ներս գնաց եւ եկաւ ինձ տանելու: Վարդապետն արդէն մեկնած էր, Փայլակը ինձ ներկայացրելու է:

— *Ծանօթացա՞ր... մեր լաւ տղաներից է:*

— Այո՛, տեսնուեցի: Կը հասկնա՞ս, Փայլակ. սա շունչանորդի Թիֆլիսեցիներուն նայէ, ամբողջ տարի մըն է, կը պոռամ, կ'աղաչեմ, որ ինձի արտօնեն, մէկը ճամբեն իմ տեղս, որ ես Երկիր երթամ. նորէն հոնկէ կ'ուղարկեն Երկիր, իսկ մենք պիտի դառնապարտուինք դարձեալ հոս նստելու, աս աջէմներուն մէջ...

— *Թո՛ղ, ախպէ՛ր, քո հեքիաթները. նայինք՝ մարդը ի՞նչ նորութիւններ է բերեր Կովկասէն:*

Նախ՝ խնդրում եմ, որ կարգադրութիւն անեն ընկերներիս համար, որոնք խանը ինձ են սպասում: Ապա անցնում եմ գործի: Իսկոյն կարգադրում է, որ զինուորներն երթան՝ տղաներին բերեն:

Պատմում եմ գիտցածս նորութիւնները: Երեւում է, որ խօսքերս տպաւորութիւն են թողնում Մալխասի վրայ: Ըմբռնում է, որ ես լաւատեղեակ եմ եւ, «Բիրտ» յին մօտ մարդ: Իսկոյն պաշտօնական եղանակը փոխում է մտերմականի.

— Ախպա՛ր, ձգէ սա «դուք»ը, «պարոն»ը, — եւ մարդու պէս խօսէ հետս:

Այնուհետեւ Մալխաք շտապ-շտապ, ասես տուեից վագոդ կար, պատմում է իր շրջանի, մանաւանդ, ինձ վերաբերող լուրերը:

Բանից երեսում է, որ մի երկու շաբաթ առաջ վան-
քի գծով մեկնել է մի խումբ, Տիգրանի գլխաւորութեամբ: Յետոյ անցել է Հնչակեանների մի գործիչ, ոմն Աշոտ, վանցի Հաջի Յակոբի ուղեկցութեամբ: Տեղեկանում եմ, որ Սալմաստի գծերը փչացել են Դումանի կողմի եւ, մանա-
ւանդ, Փոխիկի խմբի ջարդուելուց յետոյ:

Անդրանիկը նոր էր դուրս եկել վանից. դեռ շարու-
նակում էր նրա զինուորների եւ մշեցի փախստականների
ֆարաւանի շարանը: Եւ, որ գլխաւորն է, որովհետեւ Սա-
սունի գործը վիժել էր, եւ զինուորական ուժերի հոծ մի
բազմութիւն ապաւինել էր վասպուրական, կառավարու-
թեան ուշադրութիւնը դարձել էր վանի վրայ:

Արդէն Անդրանիկի ներկայութեամբ երկու կռիւներ
եղել են. մէկը՝ Աղթամարի կողմի, միւսը՝ Այգեստանի
մէջ, այսպէս կոչուած Մուրոյի դէպքը: Անդրանիկից յե-
տոյ էլ երկու կռիւ ունենում է Իշխանը, Նարեկ գիւղի մէջ
եւ մի քանի մանր ընդհարումներ այս եւ այն գաւառում:

Բայց այս բոլորը լայն արձագանգներ չեն գտնում,
— մի կողմից՝ վախկոտ ու խաղաղասէր Թահիր փաշայի
շնորհիւ, միւս կողմից՝ վանի յեղափոխական գործիչների
ջանքերի հետեւանումով. նրանք իսկոյն արտասահման են
նամբում աւելորդ զինուորական ուժերը. պահում են կազ-
մակերպական-զինուորական հրահանգչութեան ընդունակ
սակաւաթիւ տարբեր՝ երկար ժամանակ լռիկ մնչիկ աշ-
խատելու եւ արտաֆուտ չերեւալու համար:

Այս լուրերն ինձ համար, ինչպէս ասացի, անախորժ
էին. որովհետեւ նախ իմ գնալս, եթէ ո՛չ անկարելի, գէթ
հարցական էր դառնում — աշնան եղանակին: Իսկ տղա-
ների — Յարութիւնի, Նիկոլի եւ Մոսոյի — ինձ հետ գա-
լը՝ անկարելի:

Պէտք է գիտնալ, որ ամենայարմար եղանակը, փա-
խըստական խմբով կամ նոյն իսկ մի երկու հոգւով գնալու
համար, աշնան եղանակն է — Սեպտեմբերից Հոկտեմբեր,

երբ քրդերը ֆաշուում են սարերից եւ գիշերուայ երկարու-
թեան պատճառով կարելի է որոշ համապարհ կտրել: Միւս
բարեպատեհ շրջանը վաղ գարնան է — Մարտից-Մայիս,
մանաւանդ գարնան սկիզբը, երբ ձիւնը «փրշա» (եղուրն)
է բռնում, այսինքն՝ ամբանում է եւ կարելի է վրայից
ֆայլել: Միւս կողմից էլ, ի հարկէ, քրդերը ցրտերի պատ-
ճառով *զօղան* բարձրացած չեն լինում:

Իսկ ձմեռը բուքի ենթարկուելու վտանգը կայ, մինչ
ամառը անխուսափելի է քրդերի հանդիպումը, որոնք որ-
սորդական շների պէս հոտ առնել գիտեն եւ, եթէ մի ան-
գամ տեղդ գիտցան, ազատում չկայ, եթէ, ի հարկէ,
պարսկական սահմանի մօտ չես: Այդպիսի դէպքում խըմ-
բերը մինչեւ երեկոյ կուում են եւ յետ փախչում. այլա-
պէս ամէն կողմից ստուար բազմութեամբ քրդերը բազմա-
թիւ օգակներ են կազմում եւ ջարդում: Այս բոլորը կա-
տարում է մեծ մասամբ ո՛չ թէ այն պատճառով, որ քր-
դերը թուրք պետութեան հաւատարիմ են, ուզում են պե-
տական պարտականութիւն կատարել, — ամենեւին ո՛չ, —
այլ գուտ թալանի նպատակով: Ամէնքը գիտեն, որ Ֆի-
դային լաւ գտնէ, լաւ ձի, լաւ հագուստ, դրամ, ժամա-
ցոյց, դիտակ եւ այլն ունի. ամէն ոք շտապում է մի բան
փրցնելու դիտաւորութեամբ:

Յամենայն դէպս, Մալխաքն խնդրում եմ, որ գէթ
ինձ մինակ շտապով նամբէ վան, գուցէ որեւէ պատեհու-
թեամբ ես էլ այս ուշացած եղանակին ներս կարողանամ
անցնիլ:

Բարեբախտաբար, վանքի զինուորները հէնց նոր
էին եկել ռազմամթերք տանելու: Մալխաք խոստանում
է հէնց վաղն եւեթ ինձ նրանց հետ նամբել, հետս դնելով
եւ իմ լաւ ծանօթ Փայլակին, որ ինձ աջակցի շուտ մեկ-
նելու:

Թաղէոս Առաքեալի վանքը գտնում է Մակու,
պարսկա-թուրք սահմանագլխի վրայ, Արաղային սահմա-
նակից, թուրքական կարէնի մեծ գիւղից մէկուկէս ժամ
հեռու, իսկ թուրքական սահմանից ձիով վեց ժամ հեռա-
ւորութեան վրայ:

Խոյից մինչեւ վանք 14 ժամուայ նամբայ է ձիով,
այն էլ լաւ ֆշելու պայմանով: Ո՛չ մի հայ գիւղ չկայ նա-

նապարհին: Այնպէս որ հոյից վանք պէտք է երթայ մի շնչով, մի գիշերուայ մէջ: Գիշեր եւ ասում, որովհետեւ գնացողները զինատար կամ ռազմամթերք տանող խմբեր են լինում, որոնք չեն ուզում բնորոշումներ ունենալ Գործի ձորի եւ Գեաղուկի (կիրն) մէջ ապրող շատ ռազմիկ քրդերի եւ քուրճերի հետ:

Թաղէի վանքը, ինչպէս յետոյ կը տեսնենք, երկիր ռազմամթերք եւ մարդ փոխադրող ամենախոշոր խոյու-վակն էր: Խոյից վանք ռազմամթերքը միշտ փոխադրել ենք մեր միջոցներով, այսինքն՝ մեր զինատար խմբերով, կամ վանքի քարաւաններով՝ վանքի սպարանքներ անուան տակ: Մի քանի փորձեր են եղել Շահթախից կամ Ղամարուից ուղղակի վանք ապրանք տեղափոխելու, քրդերի կամ քուրճերի միջոցով. բայց յետոյ այնքան է աղմուկ դուրս եկել, այնքան ուռուցիկ կերպով այդ լուրերը տարածուել են շրջանի քուրճերի եւ քրդերի մէջ, որ վանքի գոյութիւնը շատ անգամ մագից է կախուած եղել: Այդ պատճառով սահմանագիծի գործիչները ստիպուած են եղել մեր միջոցով կատարել այդ տեղափոխութիւնը, որ անաղմուկ լինի: Տեղափոխութիւնը կատարուում էր շատ հասարակ ձեւով: Տեղափոխում էին կամ վանքի գիւղացիք, որ լաւ ռազմիկներ եւ կտրին մարդիկ էին, կամ Սարգարի սարքագները, որ գալիս էին հոյ ապրանք փոխադրելու եւ կամ հոյի ու Սալմաստի զինուորները՝ 10-15 ձիւոր՝ իրենք էին տանում ապրանքները վանք ու վերադառնում իրենց տեղերը: Իսկ եթէ զինուած խմբեր էին երկիր գնում, ուղղակի իրենք իրենց պատրաստութեամբ Սալմաստից կամ հոյից մեկնում էին վանք եւ ապա՝ երկիր:

Յարութիւնի, Նիկոյի եւ Մոսոյի սրտերը, ի հարկէ, սեւացան, երբ իմացան, որ իրենք հետո չեն կարող գալ, բայց խորհրդակցեցինք, որ վանքից անպայման նրանց կանչեմ եւ միասին երթանք:

Միւս օրը երեկոյեան դեռ մութը չկոխած՝ հոյից մեկնեցինք դէպի վանք: Վեց ժամ անդադար պէտք է հոյի դաշտը կամաց կամաց բարձրանալ մինչեւ Մակուի սարահարթը: Սարերի լանջերին արդէն ձիւնը ընկել էր, իսկ գագաթները վաղուց էին ներմակել: Տասնէչորս ժամ Մակուի լեռնային ցրտի մէջ, ձիւնով, բայց մեծ մասամբ ոտով,

տաքանալու համար, հանապարհ կտրելով, վերջապէս, հեռուից տեսնում ենք վանքի գմբէթները:

«Թաղէի վանքի ձայնիկը ինձ դիպաւ...»:

Միտքս սլանում է դէպի հին-հին դարեր եւ մօտակայ ժամանակներ: Սա ի՞նչ հակատագրական գուգադիպութիւն է. Հին Հայաստանի Լուսաւորիչները, նոր կրօնի առաքեալները այս հանապարհով են անցել եւ նրանցից շատերը այս մեծ հանապարհի վրայ են ընկել:

Այստեղով են անցել եւ երիտասարդ Հայաստանի առաքեալները՝ Սերոբ Փաշան, Անդրանիկը, Աղբէրը, Սասունի Վահանը, Դաշտի Հրայրը, Վարդգէսը, Պետօն, Իշխանը, Կոմսը, Ռուբէնը, Շաւրոն, Սարգիսը, արմենական Աւետիսը, հնչակեան Փարամազը, եւ դեռ շատ ուրիշներ, — անուանի հին եւ նոր, փորձուած երիտասարդներ:

Նրանցից շատերն էլ ընկել են այս մեծ հանապարհի վրայ... Բայց հին առաքեալներն արեւի երջանիկ էին. ահաւասիկ նոցա յիշատակի բարձրաբերձ կոթողը:

— Հրէ՛ն Թաղէի վանքի գմբէթները, — ձայնում է Փայլակը:

Խեղճ Փայլակ, չէիր մտածում, որ դու էլ Թաղէի վանքի հանապարհով մի անգամ Վան պիտի երթաս՝ այլեւս ետ չդառնալու համար:

Թաղէի վանքը Վանի յեղափոխական, ազգային-հասարակական-կրթական գործունէութեան գլխաւոր նահանգիստն էր: Վանը՝ բռնակալութեան ժամանակին՝ առաջդիմութեան, յեղափոխական գործունէութեան եւ գործիչների բազմութեան մեծագոյն մասը պարտական է այս վանքին, որ հակատագրի մի բարեբախտ դիպուածով ընկել եւ մնացել է այս հոժ քրդութեան եւ քրքութեան մէջ, իբրեւ մի փրկութեան ովասիս:

Վերջապէս. հասնում ենք վանքի գիւղը: Շների հաջորդ իրար է խառնում: Ահա՛ եւ վանքի դուռը: Բաւական դժուարութեամբ արթնացնում ենք ծառաներին: Դուռը բացում են եւ մեզ առաջնորդում դէպի վանքում նստող ներկայացուցչի դուռը: Վանքում այն ժամանակ շատ սեռեակներ չկային: Մնացել էին միայն քարուկիր երկու խուցեր. մէկի մէջ նստում էր վանահայր Գեորգ Վարդապետ Նալբանդեան — մեզ մօտ յայտնի էր Ընծայր կեղծանու-

նով —, իսկ միտում՝ կուսակցութեան ներկայացուցիչը, որը այն ժամանակ Թաւրիզից եկած մի պարոն էր՝ Արսուր կեղծանունով:

Արտուրի դուռը ջղայնօրէն ծեծում է Փայլակը: Բայց նա մրափի մէջ չգիտէ թէ մենք ի՞նչ վիճակի մէջ ենք դուրսը: Վերջապէս, արթնացաւ եւ, երբ իմացաւ, որ նորեկներ ենք, այն էլ հոյից եկած, մերժեց դուռը բանալ, ի նկատի առնելով որ մեզ հետ կը լինին անպայման բոլեւրայի բացիւններ:

Փայլակի սպանալիքներն ու հայհոյանքները մի բան չարժեցին:

Գլխիկոր դառնում ենք դէպի վանահօր խուցը: Դուռը, ի հարկէ, անմիջապէս բացուում է: Ներս ենք մտնում եւ խնդրում վառարանը վառել եւ ինքնաեռ դնել մեզ համար: Իսկ մինչեւ այդ՝ Փայլակն ու Վարդապետը մէկ-մէկ կոնծում են Փայլակի խուրջինը եղած օդիից իմ կենացը: Շուտով հասնում է եւ թէյը: Մի քիչ տաքանալուց եւ թէյ խմելուց յետոյ՝ անկողին ենք մտնում ջարդուած եւ փետացած մեր մարմնին հանգստութիւն տալու:

Անուշ քնից ինձ արթնացնում է Փայլակի եւ Արտուրի հայհոյանքներով համեմուած վէճը: Ճար չկայ, պէտք է ելնել: Աչքերս բանալս եւ տեղիցս ցատկելս մէկ եղաւորով հետս վէճը տաքանում էր: Հագնուեցի. ծանօթացանք Արտուրի հետ. վէճին միջամտեցի եւ հաշտութեան եզր գտանք, որը, յամենայն դէպս, իմ միջամտութեան շնորհք էր չէր, այլ Փայլակի բերած մի քանի շիշ կոնետակի եւ օդու, որ գնուած էր իմ դրամով՝ նանապարհին գործածելու համար:

Վանքին, շրջապատին, գիւղին ծանօթանալուց յետոյ՝ դիմում եմ Վարդապետին հարցնելու իմ առաջելութեան մասին, իմանալու, թէ հնարաւորութիւն կա՞յ արդեօք այս օրերին անցնելու համար:

Վարդապետը նոյնպէս կրկնում է, որ ուշ է. սարերն արդէն ձիւնով բռնուած են, բուք է ու բորան: Բայց եւ այնպէս շատ թախանձանքիս հետեւանքով՝ յոյս է տալիս, որ մի փորձ կ'անենք. «Եթէ Արաղայի գիւղերէն հայեր եկան, մեր սուրհանդակ-փոխադրողները՝ լաւ: Եթէ ոչ,

կ'աշխատինք մեր տեղական քիւրդ սուրհանդակների հետ ճամբել քեզ»:

Իսկոյն մարդ ենք նամբում քրդի տունը, որ վանք գայ՝ խօսելիք ունինք: Քիւրդը մի երկու օրից գալիս է. վերջապէս: Վարդապետը լաւ քրդախօս էր եւ, առհասարակ, մեծ հեղինակութիւն ունէր շրջանի թուրք եւ քիւրդ տարրի մէջ: Նա է առանձնանում եւ երկար-բարակ խօսում ու հարցափննում, թէ ի՞նչ պարագաների տակ տանի ինձ:

Վերջապէս, փոխադարձ համաձայնութեամբ գրտնում են, որ մեկնելը հնարաւոր է: Խօսք է տալիս, որ տուն կ'երթայ նամբու պատրաստութիւններ կը տեսնէ և մի քանի օրից տղային կը նամբէ վանք, ինձ իրենց գիւղը տանելու: Իսկ այն կողմը պիտի առաջնորդէ ինքը, մինչեւ վանք:

Մինչ այս, մինչ այն, վանք է գալիս եւ Յարութիւնը: Շատ ուրախ եմ, որ ծանօթ եւ վստահելի մի բնակեր հետս կը լինի, մանաւանդ, որ նա երկրացի է, երկրի սովորոյթները եւ կարգերը գիտէ. եւ լաւ քրդախօս է:

Մենք էլ մեզ համար ենք սկսում պատրաստութիւն տեսնել: Պիտի գնայինք ցերեկը, ի հարկէ, ծպտուած տեղական տարագով եւ արտաքինով:

Անհրաժեշտ էր, որ հագուստ գտնէին երկու քիւրդներ: Այդ մեծ դժուարութիւն չունէր. որովհետեւ պիտի հագնէինք հին հագուստներ, որ աչքի չընկնէինք: Հագուստըրը գնեցինք հէնց վանքի գիւղացիներից:

Մեծ դժուարութիւնը մի այլ գործի մէջ էր: Այն ժամանակ ես հագիւ 22-23 տարեկան էի, դեռ երես ածիլելը ինչ է չգիտէի: Ի հարկէ, բեղ-մօրուս ունէի և անհրաժեշտ էր, որ ածիլուեմ:

Բայց ո՞րտեղից գտնել այս սարի գլխին կանոնաւոր սափրիչ, գէթ ածելի. ո՞չ այս կայ, եւ ո՞չ այն: Դէս ու դէն ենք ընկնում: Վերջապէս, յայտնում են, որ գիւղի ու վանքի ամենալաւ «թրաշչին» վանքի ծառայ Սահակն է, որն ունէր մի լաւ սուր դանակ, որով, ե՛ւ ոչխար էր մորթում, ե՛ւ փայտ կտրում եւ մարդու երես ածիլում... Ճար չկար. ոնց որ եզր կը տանեն սպանդանոց, ինչ էլ նստացրին Սահակի առջեւ: Տնափանդը սապոնով «թրաշ» անելու սովորութիւն էլ չունէր. այդ բանը նրա գլուխը ձգեց

Յարութիւնը: Վերջապէս, երկար-բարակ նախապատրաստութիւններից վերջը՝ դանակը սրեց եւ գործի սկսաւ:

Կրթութեան զորքը: անտէր երեսու շատ սարյ է. խեղճի դանակը չի կտրում. սուկալի ցաւ է պատճառում արդէն այստեղից այնտեղից մի քանի անգամ անելը: Իսկ, երբ մի երեսու վերջացրեց եւ սկսեց վիզը, ուղղակի ահոելի էր: Գիմանալ չկարողացայ: Արդէն մի քանի տեղից կտրել էր, տղայի պէս խոնկեցի եւ ըմբոստացայ: Վարդապետը, Փայլակը, Արտուրը եւ Յարութիւնը կանգնած կը խնդային ու կը հեզնէին: Միայն վերջինն էր, որ փորձեր էր անում օգնել: Ծառան վախեցած փախաւ: Գործը շարունակեց Յարութիւնը: Մնացածը երեսակայելու է: Վերջանալուց յետոյ ամբողջ երեսու արիւնտուել էր:

Քիւրդը, բարեբախտաբար, մի քանի օր ուշացաւ: Երեսու ամբողջովին վէրք էր: Այս հալով եւ այսպիսի բուք բորանին նամբայ ելնելու ժամանակը չէր:

Քիւրդը եկաւ, վերջապէս: Մենք հազնուած պատրաստ ենք. տակից կապած մէկ-մէկ տասնոց եւ Սմիտ ատրքանակներ. ամէն մէկի ջէրը՝ մի քանի մէջից դրամ (շատ դրամ վերցնելու զգուշանում էինք, որ հէնց տանողը մեզ չսպաննէ դրամի համար). մէկ մէկ շալակ մեր հացը, մէկ մէկ աւելորդ չարուխ եւ գուլպայ կրծքերնիս կախած՝ նանապարհին փոխելու համար. ամէն մէկի ձեռքը՝ մի դագանակ ձիւնի մէջ շխրուելու համար:

Անջատման արարողութեան վրայ, երբ վերջին անգամ Վարդապետը քրդին դառնալով ասաց.

— Գիտցէ՛ք, որ դու, քո հայրը եւ ձեր ամբողջ ընտանիքը «Կոմիտայի» առաջ պատասխանատու էք, եթէ այս մարդկանց քիթը արիւնի... .

Քիւրդը իսկոյն այլայլուեց, վախեցաւ եւ հրաժարուեց մեզ տանել: Մենք, ի հարկէ, շատ տխրեցինք. ինչպէս որ երեխաներին հագցնեն՝ հարսնիք տանելու համար եւ յանկարծ յայտնեն, թէ չէք երթայ... .

Ուրեմն, մնացինք սահմանագլխին, կամ վանեցոց ասածի պէս.— Մէջ Արարք, մէջ Վարագ, Արարքի եւ Վարագի միջեւ:

Սկսում եմ ծանօթանալ մեր կուսակցական գործերին, ուսումնասիրում եմ վանքի կատարած դերը, փոխա-

դրութեան ձեւերը, դէպքերն ու դէմքերը:

Նախ սկսեմ Վարդապետից: Ինչպէս ասացի, այն ժամանակ վանահայր էր Գէորգ Վարդապետ Նալբանդեանը: Սա բնիկ Ուրփայից էր, Աղթամարի միաբան: Մեծ դէպքին (1896ին) իբրեւ յեղափոխական՝ ախտուած էր Պոլիս, այնտեղից անցել էր Բուլգարիա և մերոնց գործակցել: Այնտեղից ծանօթ էր Վարդգէսի, Վահան Մանուէլեանի եւ շատ ուրիշների հետ:

Իմ վրայ նա մի լաւ աշխատող, շինարար եւ հայրենասէր մարդու տպաւորութիւն է թողել, թէեւ ընկերներից շատերը նրան չէին սիրում: Ճիշդ է, նա մի քիչ մամոնասէր էր, ինչպէս բոլոր վարդապետները: Բայց եւ այնպէս մեր վերածնունդի համար մեծապէս տառապող հայ վարդապետներից մէկն էր:

Նրա օրով վանքը շէնացել էր. մի նոր ջրաղաց էր շինել, նոր առու հանելով. հին եւ նոր ջրաղացի համար քարեր էր բերել տուել հին Նախիջեւանից Զուլփայի վրայով մինչեւ վանք:

Վանքի մէջ մի քանի սենեակներ էր շինել տուել: Ի հարկէ, այս բոլորն անում էր մասամբ կուսակցութեան միջոցներով եւ մասամբ էլ հանգանակութիւններով հոյ, Սալմաստ, Թարիք եւայլն, ո՛ր կրկին մերոնք էին կատարում այդ հանգանակութիւնները: Բայց եւ այնպէս նրանից առաջ էլ այդ բոլորը եղել է. եւ ոչ ոք, բացի իր անձնական գործից, ոչնչով չէր հարստացրել վանքը: Նրանից յետոյ վանքը նորից քանդուեց:

Գէորգ Վարդապետը «Հուրիաթ»ին Առաջնորդ էր Սղեբդի. այնտեղից էլ անցել էր Խարբերդ Զարսաննագ, ուր քրդական տիրապետութիւն էր դարձել և հողային մեծ վէճեր կային: Այնտեղ միւս առաջնորդների նման իր հօտի հետ միասին հերոսաբար նահատակուել էր:

Արտուրը, ինչպէս ասացի, կուսակցութեան պաշտօնական ներկայացուցիչն էր: Իսկական անունը չեմ յիշում: Մի շատ կոպիտ ու կոշտ մարդ էր: Թարիքի կոմիտէն էր ուղարկել նրան Ընձայրի գլխուն վերեւ վերահսկիչ եւ լիազօր: Բայց, բացի խմելուց եւ սրան նրան հայտնելուց, նա ոչինչ չէր անում:

Սա մի շատ տարօրինակ վարմունք ունեցաւ եւ իմ

դէմ: Իբրեւ կուսակցութեան վստահելիքն եւ իբրեւ կուսակցութեան տեղի դրամի գանձապահը՝ նրան յանձնեցի ե՛ւ իմ մօտ եղած դրամը, որը կարծեմ 50-60 թումանից աւելի չպիտի լինէր, բայց ինձ համար շատ անհրաժեշտ գումար էր, թէ՛ տեղի վրայ եղած մանր-մունր ծախսերի եւ թէ՛, մանաւանդ, նանապարհի վրայ լինելիք ծախսերի համար:

Կարծեմ Դեկտեմբերին էր թէ Նոյեմբերին, Թաւրիզում Ռայոնական ժողով կար, որին պիտի մասնակցէին նաեւ վանքի, Խոյի եւ Սալմաստի ներկայացուցիչները:

Արտուրը, առանց ինձ լուր տալու անգամ թէ ժողովի է գնում, (այդպէս արել էին եւ միւս ներկայացուցիչները) շտապ շտապ պատրաստուեց եւ մեկնեց:

Ես, ի հարկէ, չէի կարող խորհիլ, որ նա իմ դրամներն էլ հետը կը տանի: Գնալու բռայէին սնտուկի բանալիները ինձ յանձնեց, ասելով, որ «*բո՛ւ դրամները մէջն են, պէտք որ ունենաս՝ վերցրու՛:*»:

Մի երկու օրից, երբ ուզում էի դրամ վերցնել, նրկատեցի, որ Պ. Արտուրը դրամ չի ձգել սնտուկը, այլ եղած-չեղածը հաւաքել տարել է: Այլեւս չկարողացայ ինձ գտալ. վերցրի մի խիստ նամակ գրեցի Թաւրիզ, բողոքելով, թէ ի՞նչ կասկածելի մարդիկ էք նամբում այսպիսի կարեւոր վայրեր եւ յայտնելով, թէ Արտուրը դրամներս առել փախել է:

Երբ այնտեղ բացատրութիւն են պահանջում, իբր թէ ամօթից ինքնասպանութեան փորձ է անում, բայց, ի հարկէ անյաջող: Այնուհետ, կարծեմ, ի սպառ հեռացել էր յեղափոխական գործերից եւ շատ լաւ էր արել:

Փայլակ: Սա պոլսեցի էր՝ Ռուբէն Դերձակեան, արհեստով դեղագործ. Պարսկաստան արդէն դո՛ւտորի անուն ունէր: Հին մաքուր յեղափոխական էր եւ շիտակ մարդ: Եղել էր Կուկունեանցի արշաւանֆին, աքտրուել էր Սիբիր, այնտեղից փախել էր կրկին Կովկաս, ապա Պարսկաստան: Սկիզբը Սալմաստ, Խոյ, վանք եւ ապա Զուլֆայում գրադուել էր գէնքի փոխադրութեան գործով: Միշտ անձնական աշխատանքով ո՛չ միայն ինքն էր ապրել, այլ ապրեցրել էր շատ բնկերներ: Պարսկական յեղափոխութեան ժամանակ շատ մեծ դեր էր կատարել: Երբ

մերոնք ստիպուած հեռացել էին Թաւրիզից, Ուրմիայից, Սալմաստից եւ Խոյից եւ ֆաշուել վան, Փայլակը՝ Դուման-Նիկոլի, Սամսոնի, Աշուտի-Թորոսի հետ ապրում էին վանում: Յետոյ ինքը եւ Թորոսը Արմէշ սեփական գործ սկսեցին, այդտեղ շարունակելով յեղափոխական աշխատանքը: Այս անգամ էլ օժանդակում էին Կովկասից վան եղած փոխադրական գործին, եւ Արմէշի մէջ էլ օգնում էին ազգային, դպրոցական, պետական եւ այլ գործերին:

Այսպէս 24 տարի անդադար գործել էր եւ վերջ ի վերջոյ ենթարկուել ընդհանուր ֆակատագրին: Արմէշի կոտորածի ժամանակ, առաջին խմբի մէջ, Եղիշէ ֆահանայի, սրա մեծ որդու, ֆաղափի մնացած ազդեցիկ աղաների հետ կապուած գնդակահարուել է, վերջին բռայէին էլ պահելով իր անվեհերութիւնը եւ ֆաշութիւնը: Պատահմունքով ազատուած արմէշցի Յակոբը պատմեց, որ մինչեւ վերջը հայտնեց գայմագամին եւ կառավարութեան՝ այս տմարդի վարմունքի համար: Խեղճ Փայլակ, Պոլսոյ մէջ թուրք ռէժիմը ֆո ֆակատին գրել էր մահ, այդ ֆակատագիրը ֆեզ հետեւեց Պոլսից Կադզուան, Կարսից Սիբիր, ապա Պարսկաստան եւ վերջը ֆեզ գարկեց վանայ գեղածիծաղ ակերին:

Մոկացի Յովհաննէս. վանքի այն ժամանակուայ միակ դուրսեցի գինուորն էր. նոր էր վերադարձել Երկրից, ուղեկցել էր Տիգրանի խմբին, որ աշնան մտել էր Երկիր, տարել էր ապահով մինչեւ վան եւ յետ դարձել:

Արտաֆինով համեստ, բայց հոգիով ֆաջ տղայ էր: վանքի փոխադրութեան ամբողջ ծանրութիւնը սրա ուսերի վրայ էր համարեա: Նա պէտք է խմբով երթար Խոյից գէնքեր բերելու. պէտք էր Երկիր գնացող խմբերին եւ սուրհանդակներին ուղեկցէր ամենաֆիշը մինչեւ Աբազա:

Պարսկական յեղափոխութեան ժամանակ եղել էր Խոյի մէջ, Զուլումաթի եւ Մոկացի Գրիգորի հետ. կուրել էր Մակուի Սարդարի ամբողջ բանակի դէմ: Երբ Զուլումաթը սպանում է, Գրիգորը մի կերպ ֆողոպրում է. ինքն իբրեւ սպանուած ընկնում է գետին, ֆրդերը գալիս հանում են հագուստները, մերկացնում են եւ անցնում գրնում են: Այսպէս մերկ, փորի վրայ սողալով, մի ֆանի ժամ անձրեւի տակ, կարողանում է փախչել եւ հասնիլ Հայոց-Թաղը:

Պարսկական Ռեակցիոնի օրերը վանճում կոռւելով. իր աներոջ հետ փախչում է Աբաղա եւ վերաբնակւում Մուստաֆա բէյի գիւղը՝ Նագարաւա: Այդտեղ խաղաղ գիւղացի էր դարձել, զբաղուած էր երկրագործութեամբ: 1914ի պատերազմը դեռ չսկսած, բայց զօրահաւաք եղած, մի քանի ուրիշ հայերի հետ բռնուում է, իբրեւ ռուսներին լրտեսութիւն անող. այն ինչ ոչ մի բանից խաբար չի ունեցել:

Վանում մի քանի ամիս բանտ նստելուց յետոյ, մեր միջամտութիւնների հետեւանճով զինուորական ատեանը անպարտ արձակեց: Մի երկու օր միայն կարողացաւ մնալ Այգեստան, Ապրիլ 5ին, գնաց քաղաք՝ գիւղ մեկնելու: Այդ օրը, երբ իմացաւ Իշխանի սպանութիւնը եւ Վաւաւանի բանտարկութիւնը, մնաց քաղաքի մէջ:

Եւ Ապրիլեան կոիւներին, քաղաքամիջի լաւագոյն ռազմիկն եղաւ, ամէն տեղ հասնելով. նա էր որ շատախցի Աւոյի հետ քրդական երգերով օդն էր թնդացնում եւ թըշնամին սարսափեցնում:

Վաւաւորների գալուց յետոյ, ինքը շատախցի Աւոյի, նրա որդու վանքեցի Մելիոնի (որը կամաւորների հետ էր), Պատիկ-գեղցի Ղուկասի հետ դարձան Աբաղա: Բայց հաշանի մօտ, հանդիպելով անհամեմատ շատ քրդերի, մինչեւ երեկոյ կոռի են բռնուել եւ ամէնքը սպանուել... Մայիս 20ին, 1915ին:

Բուն վանքեցի երեք լաւ եւ հայրենասէր զինուորներ ունէինք, որոնց մասին արժէ յիշատակել:

Տէրտէրի Մկոն մի երկարահասակ գեղեցիկ երիտասարդ մարդ էր, լաւ որսորդ, նշան զարկող, Սարգարի լաւ զինուորներից, մասնակցել էր Խոյից մինչեւ սահման անցնող խմբերին ուղեկցելու գործին եւ պարսկական յեղափոխական կոիւներին: Սպանուեց 1909ին Աբաղայի մէջ, ուր գնացել էր գումշ գնելու, իր որդու հետ միասին:

Մելքոն լաւ եւ կտրիկ զինուոր էր. սպանուել է, ինչպէս վերն ասացի, Աբաղայի դաշտը՝ Մոկացի Յովհաննէսի հետ:

Ասատուրը, որ նոյնպէս մասնակցում էր բոլոր փոխադրութիւններին, վանքի հաւատարիմներից էր. չգիտեմ, ուր մնաց եւ ի՞նչ եղաւ:

Չեմ կարող յուրեմամբ անցնիլ նաեւ վանքի ծառայ *Թումասի* վրայից: Հայոց Չորի Աթանան գիւղացի էր. 1896 բուրն կատարածից յետոյ վանք էր եկել եւ հաստատուել: Սա մի ի բնէ ազնիւ մարդ էր, հայ ժողովրդի հազուագիւտ բիրեւելներից մէկը: Գիշեր ցերեկ վանքի գործերով դէս ու դէն էր վազում, — մի անգամ ջրաղաց, միւս անգամ՝ արտ, երրորդ անգամ՝ սենեակները պարոններին թէյ կամ սեղան պատրաստելու համար:

Հաւատարմութեան ու մաքրութեան տիպար էր: Վանքի ամբողջ ամբարը, կուսակցութեան ամբողջ հարստութիւնը նրա ձեռքին էր. բայց ամէնքը գիտէին, որ Թումասը սուրբ մարդ է եւ չի գողանայ վանքից եւ, մանաւանդ, կուսակցութեան շահերը կը պաշտպանէ: Պէտք է տեսնել, թէ ամէն անգամ երբ մէկ մարդ էր նամբում երկիր, ինչպէ՞ս էր հեկեկում եւ ինչպէ՞ս համբուրում:

— «*Ախպրտանք, Ասատուած ձեր խեւ, բարով էր-թէք, խէրով գէք...*»:

Չիմացայ, թէ մեր սիրելի Թումասը ի՞նչ եղաւ: Վանի գրաւումից յետոյ մի անգամ վան պատահեցի, ուղարկեցի. որ գնայ Աղթամար: Վերջինը այն ժամանակ թաւանուած եւ կողոպտուած էր. չէր կարողացել մնալ և այսօր քան տարի սահմանի վրայ մնալուց վերջ, այսօր տարի Հայաստանին գէնք ուղարկելուց եւ նրա մասին երագելուց յետոյ, խեղճը Հայաստանը աւերակ գտաւ:

Չգիտեմ՝ նա ի՞նչ տպաւորութեամբ գնաց. չգիտեմ կենդանի՞ է նա, թէ մեռած, միայն գիտեմ, որ նա լաւ մարդ էր: Ա՛խ, ինչպէ՞ս կ'ուզէի, որ մերոնք ամէնքը այդօր քան լաւ լինէին:

**

Վանում չորս ամսից աւելի մնալով, կարգին ծանօթացայ մասնաւորապէս փոխադրութեան գործի մանրամասնութիւններին՝ ձեւերի, փոխադրող անձերի եւ յարակից բոլոր խնդիրների վերաբերեալ: Որպէսզի հասկանալի լինի վանքի բացառիկ դիրքը եւ նրա կատարած մեծ դերը, պէտք է բացատրել մի գուտ տեղական հանգամանք:

Վանքը, ինչպէս ասացի, գտնուում է Մակուի խա-

նութեան մէջ, Կարանի մեծ եւ կեդրոնական գիւղից մի երկու ժամի հեռաւորութեան վրայ: Կարանին քաղաքային հաղորդակցութեան մեծ քանակութիւն վրայ — Տրապիզոն, Կարին, Ալաշկերտ, Բայազիտ, Աւառուզ, — մի կարեւոր առեւտրական կեդրոն է: Այստեղով էր Ատրպատականը հաղորդակցում Թուրքիոյ եւ Եւրոպայի հետ՝ հին ժամանակներից սկսած, մինչեւ որ շինուեց Բաթում-Ջուլֆա գիծը, երբ այս քանակութիւնը կորցրեց իր մեծ նշանակութիւնը:

Կարանին նշանաւոր էր եւ նրանով, որ Աբաղայի, Արնէշի եւ Նոշարի շրջանի քրդերի առեւտրական շուկան էր: Այդ բոլոր շրջանների քրդերը — իրենց մանուփակտուրան, շաքարը, նաւթը եւ այլ մանր-մունր բաները գրնում էին Կարանիի շուկայից, իբրեւ մօտիկ եւ ածան:

Ամբողջ պարսկաթուրք սահմանագլխի վրայ յատուկ սահմանապահ գնդեր չկան: Այդ պաշտօնը կամ պարտականութիւնը թողնուած է սահմանագլխի Համիտիէ ֆիրդ գնդերին, որոնք այդ գործը տանում էին շատ իւրայատուկ ձեւով, — թալանելով, կողոպտելով եւ աւերելով պարսկական սահմանակից բոլոր ֆիրդ եւ թուրք գիւղերը: Եւ այս էր պատճառը, որ Մակուի ամբողջ սահմանը՝ Կարադէրից մինչեւ Սավալի, որ 200 ֆիւմներից շատ աւելի կը լինի, ամբողջ երկարութեան վրայ, (30 ֆւ. պարսից եւ 30 ֆւ. թուրքաց կողմից, ուրեմն 60 ֆւ. լայնութեամբ) համարեա ո՛չ մի գիւղ ու բնակութիւն չկայ տեւական: Միայն ամառներն է, որ այս եւ այն կողմի ֆիրդերը սար են բարձրանում մի քանի ամսով: Հաւասարակշռութիւնը պահուում էր նրանով միայն, որ Մակուի քրդերը, որ երկու գլխաւոր ցեղերից են՝ Արուսանցի եւ Հայտարանցի, բարեկամ եւ ցեղակից էին թուրքաց սահմանի քրդերին:

Արուսանցիք, որ սար էին ելնում Սարայի գծի վերայ, Նոշարից-Կոտուր, ցեղակից էին Մլանցի աշիրաթին, որի հիւղերը Սարայի շրջանն են:

Իսկ Հայտարանցիք, որ թուով աւելի քան էին Մակուի մէջ, քան Արուսանցիք, բնակուում էին Կարանիի դաշտը եւ սար էին ելնում Ալագեանի լեռնաշղթայի վրայ՝ սահմանակից Աբաղային:

Աբաղայի հայտարանցի նշանաւոր քէյերն ու աղա-

ները միշտ տիրել են Կարանիին եւ իր շրջանին, առարկելով, որ այդ իրենց պապենական հողերն են:

Աբաղայի հայտարանցի Հիւսէին փաշան, իր տղայ Մահմէ աղան, Նազարավայի Մուստաֆա բէյը, հաշանի կոպ Մահմադ Սրդրք բէյը. նոյն իսկ Արնէշի շրջանի հայտարանցիներից Ալի բէյը փոխն ի փոխ երկար տարիներով ամբողջ աշիրաթով ֆոշել են Կարանի եւ տիրել այդ շրջանին:

Քրդերի այս մակընթացութիւնն ու տեղատուութիւնը կախուած էր թուրք կառավարութեան կամ, աւելի միշտ, վանի ու Էրզրումի վալիների քաղաքականութիւնից եւ Մակուի Սարդարի վերաբերմունքից: Երբ թուրքերից էին դժգոհ, անցնում էին Մակու, փոխն ի փոխ. որովհետեւ թուրք կառավարութիւնը երբ հովանաւորում է նոյն ցեղի ուրե՛ւ աղայի, միւս աղաները դժգոհ էին մնում, ենթարկուում էին հալածանքի թուրքերի կողմից եւ անցնում Մակու:

Իսկ երբ Մակուի սարդարի հետ էին կուում, արուսանցիք անցնում էին Աբաղայի շրջանի թուրքական հողերը, իսկ հայտարանցիք Կարանից Աբաղայի շրջանը, իրենց ցեղակիցների մօտ: Շատ քիչ անգամ էր պատահում, որ Մակու անցնող աշիրաթն իր ամբողջ ցեղով անցնի, միշտ պահեստի համար մնում էր Մակու ապաւինող աղայի տղան կամ եղբայրը, իբրեւ դժգոհ հօրից կամ եղբորից: Թուրքերը այդպիսի դէպքերում առանձին վերաբերմունք ցոյց չէին տալիս, որովհետեւ թէ՛ կաշառքը եւ թէ՛ մանաւանդ, անգիտութիւնը, անձանօթութիւնը թոյլ չէին տալիս խնդրի էութիւնն ըմբռնելու:

Եւ այս է պատճառը, որ Կարանի նստած ֆիրդերը — բացի աչքի բնկնող աղաներից — ազատօրէն օրը ցերեկով երթեւեկում էին Աբաղա, ինչպէս եւ Աբաղայի քրդերն ու հայերը անվախօրէն գալիս էին Մակու, իրենց գործերով, առեւտուրով:

Պատկերը լրիւ դարձնելու համար մի քանի խօսք էլ ասենք Աբաղայի հայերի մասին:

Աբաղայի հայերը բնիկ չեն, այլ եկուոր. վերջին 40-50 տարուայ ընթացքում գաղթած՝ մեծ մասամբ Նոր-դուզի եւ քիչ էլ Սարայի շրջանից:

Նորդուզից հայերը փախել են Աբաղա երկու պատմանով.— Նախ՝ որ գրացի ֆիրդերը հարաւից եկել եւ նրանց հալածել են. երկրորդ՝ հայերն, իբրեւ երկրագործ ժողովուրդ, չէին կարող լեռնային Նորդուզում հողագործութեամբ ապրիլ, իսկ ոչխարապահութիւնը նրանց համար ձեռնտու չէր, որովհետեւ դա նախ ֆրդերի ձեռքն էր եւ, երկրորդ, որ ամենագլխաւորն է, հեշտութեամբ թաւանի եւ կողոպուտի ենթակայ էր. իսկ հայերը, զինուած չլինելով՝ անկարող էին պաշտպանել իրենց տաւարը:

Ահա՛ այս կրկնակի պատմաններով Նորդուզի հայերը հետզհետէ գաղթեցին դէպի հարուստ Աբաղան: 1895ին Նորդուզ կար 16 հայ զիւղ 380 տնով. 1897ի կէսերին այս թիւն իջաւ 277, 1899ին՝ 168 տունի: Աբաղայում նրանց դիրութիւն էր տրուում մեծապէս զբաղուելու երկրագործութեամբ, մասամբ էլ անասնապահութեամբ: Աբաղայում հայերը մրիբաներ էին ֆիրդ աղաների մօտ: Մրիբայութեան պայմաններն էին.— աղան տալիս էր իր հողը եւ սերմացուն. իսկ հայ գիւղացին՝ իր տաւարով, մարդով, գութանով եւ «դագգահով» վարում էր, ցանում, հնձում ու կալսում, եւ արդիւնքը կիսում աղայի հետ:

Պէտք է ասել, որ երկու կողմերն էլ գոհ էին: Հովիւ ֆիրդին եւ աշիրաթ-ապետ աղային համար, որոնք ունէին հողի անհուն տարածութիւն եւ չգիտէին երկրագործութիւն, հայ աշխատասէր երկրագործը հարստութեան անըսպառ աղբիւր էր: Քիրդը որս էր անում կամ կռիւ. իսկ հայը նրա համար հաց էր վաստակում, տան ծառայութիւն էր անում ձրիաբար, աղայի տան ամէն պէտքերը հոգում անվարձ, աղայի համար գնում էր վան կամ կարանի՝ գրնումներ անելու, նրա համար սուրհանդակութիւն էր անում, տօն օրերին աղային նուէրներ էր տանում եւն. եւն.:

Հայն էլ գոհ էր, որովհետեւ աղայի հովանու տակ նա պաշտպանուած էր ֆիրդ աւագակներից, ազատ էր թուրք կառավարութեան տուրքերից եւ ոստիկանների շահատակութիւններից: Այդ շրջանի հայերը համարեա կիսազատ էին ֆրդերի չափ, «բէդէլ սսքէրիյէ» (զինուորական տուրք) չէին տալիս. աշար չկար, որովհետեւ գիւղը միշտ աղան էր գնում. աղնամը (ոչխարի տուրք) շատ քիչ էր լինում, որովհետեւ աղայի վախից պաշտօնեաները չէին

համարձակում զիւղի ոչխարներն անձամբ հաշուել, միայն գոհանում էին ցոյց տրուած թուի վրայ տուրք գրելով եւ առնելով:

Ահաւասիկ այս ազատ պայմանների հետեւանքով էր, որ հայերն էլ ազատ երթելու էին կարանի եւ այնտեղից էլ Թադէի վանքը:

Զպէտք է մոռնալ եւ այն, որ վանք նստող գործիչներն ու վանահայրերը, որոնք մեծ մասամբ եղել են թուրքահայեր, լաւ կապեր էին պահում կարանի նստող ֆիրդ աղաների հետ: Այդ տեսակէտից ամենափայլուն շրջանը եղել է մոկացի Ախպօր շրջանը, որի ժամանակ թէ ինքը Ախպէրը եւ թէ, մանաւանդ, Սլաքը՝ Արմենակ Օխիկեանը, շատ մտերիմ ու բարեկամական կապեր են ունեցել կոպ Մահմեդի եւ Մուստաֆա բէյի հետ, եւ այն աստիճան, որ, երբ Արմենակը Միրզաջան բռնուեց իբրեւ յեղափոխական եւ վանի բանտն էր ու դատի տակ, Մուստաֆա բէյը եկաւ վկայութիւն տուաւ, թէ նա պարսկաստանցի է եւ բժիշկ, այն ինչ նա լա՛ւ գիտէր, որ Սլաքը բիթլիսցի է:

Պէտք է ասել, որ այս երկու հայտարանցի բէյերը համարեա մինչեւ վերջ լաւ յարաբերութեան մէջ էին մեզ հետ եւ ամէն դիրութիւն տուին մեր երթելուութեան եւ փոխադրութեան համար: Այսպիսով Աբաղայի հայերն իրենց աղաների կողմից *բարդ պլանչ* ունէին կարանի գալու եւ օժանդակելու մեր գործին:

Ի հարկէ, այս բոլորը կատարուում էր խիստ գաղտնի, ինչպէս կը տեսնենք իր ժամանակին, եւ այն աստիճան գատնի, որ իրենք աղաներն էլ չէին իմանում, թէ ե՞րբ, ի՞նչ կամ ո՞վքե՞ր են անցնում:

Երկրի մեր յեղափոխական գործունէութեան զլխաւոր մասը գէնքի եւ ռազմամթերքի հայթայթումն էր՝ ժողովրդին զինելու եւ ապագայ ձեռնարկների համար գէնք ունենալու:

Զէնքը երկրի մէջ, մանաւանդ առաջին շրջանում, անհնարին էր հայթայթել, իսկ վերջերը կապուած էր շատ դժուարութիւնների, — վտանգի եւ թանկութեան հետ: Ուստի, հէնց յեղափոխական գործունէութեան արշալոյսին, երկիրը զինելու միակ կամ գրեթէ միակ միջոցը համարուել է արտասահմանից գէնք ներմուծելու սխտեմբ:

Մինչեւ 1900 թիւը, Երկիրը գէնք մուծելու ամենահնարաւոր ձեւը համարուել է գինատար խմբերի դրութիւնը: Այսինքն՝ մի փորձ խմբապետի հրամանատարութեան տակ(*) մի քանի մարդիկ. — ամենաբազմաթիւը, կարծեմ, եղել է Նեվրուզի խումբը՝ 90 հոգի, ապա հաստուրի խումբը՝ 60 հոգի. ամենափիչը 5 հոգի, — ինչքան կարող են, վերցնում են գէնք ու ռազմաձեռքեր, մեծ մասամբ մի-մի հրացան, շատ յաճախ երկուական, բայց միշտ փամփուշտներ, — առաւելագոյնը՝ 1000 եւ նուազագոյնը՝ 200 հատ, — ի հարկէ, միշտ ոտով, լաւ առաջնորդ սուրհանդակներով, աննկատելի դառնալու համար: Ի հարկէ մի քանի օրուայ պաշար ամէն զինուոր վերցնում էր իր հետ. եւ այսպէս գիշերներով գաղտնի նանապարհ ընկնում, պարսկական կամ ռուսական սահմանագլխից. գիշերները քայլում էին, իսկ ցերեկը պահուում սարերի ծերպերում եւ ձորերի անդունդներում՝ աննկատելի դառնալու համար:

Այս խումբերը մեծ մասամբ կռուի էին հանդիպում սահմանագլուխներում, թէեւ առհասարակ ջարդում էին եւ գէնքերի մեծ մասը ոչնչացում էր, ընկնելով քրդերի ձեռքը կամ կոտորատուելով մերոնց կողմից: Այս ձեւով տեղ հասած ամէն մի գէնք միջին հաշուով մէշտ մէկից անելի մարդու կեանքի գնով էր պայմանաւորուած:

Ժամանակի ընթացքում պարզուեց, որ գինատար խմբերով Երկրի ժողովուրդը զէնք անկարելի է, եւ որ դա նախ՝ քիչ արդիւնք է տալիս եւ յետոյ՝ մեծ աղմուկ է ձգում կառավարութեան եւ քիւրտ ազաների մէջ:

Բայց երբ, հէնց մեծ մասամբ շնորհիւ աշգ գինատար խմբերի փայլուն կռիւներին, կազմակերպութիւնը մի քիչ ուժեղացում է ու քրդերի հետ որոշ կապ է ստեղծում, սկսում է գէնքերի փոխադրութիւնը նաեւ քրդերի միջոցով:

Քրդերը մեզ համար գէնքի տեղափոխութեան, խըմ-

(*) Օրինակ, Սերոբ Փաշան, Նիկոլը, Վարդանը, Սաֆոն, Ախպերը, Վազգէնը, Խանը, Կայծակ-Վաղարշակը, Գայլ Վահանը, Աշոտ Երկաթը, Թոխմախեանը, Տուրքալը, Մուրատը, Սեպուհը, Եւայլն, Եւայլն, սկիզբները յայտնի են դարձել գինատար խմբերով:

քերի առաջնորդութեան, նամակային սուրհանդակութեան, փոխստական փոխադրելու եւ ուրիշ նման ծառայութիւններ արել են մեծ մասամբ (յարգելի բացառութեամբ) բացառապէս շահադիտական նկատումներով:

Խօսքը, ի հարկէ, ազաների մասին չէ. նրանք անձամբ փոխադրութիւն չեն արել մեզ համար. երկրորդ, եթէ հանդուրժել են իրենց քիւրդ ծառաների մեզ համար արած օժանդակութիւնները, դա եղել է մեծ մասամբ գանազան ակնկալութիւնների համար, նուէր ստանալու՝ լաւ գէնք (որ մենք շատ քիչ էինք տալիս), հագուստ, զարդեղէն եւ այլն, կամ կառավարութեան առջեւ գիրենք պաշտպանելու համար՝ բռնակալութեան ժամանակ հայ ազաների միջոցով, իսկ «հուրիէթ»ի օրով անձամբ: Յետոյ, մեր բարեկամութիւնը նրանց համար մի տեսակ վահան էր եւ սպանուելի միջոց՝ իրենց թշնամի ցեղերի դէմ — թէ այսինչ ազայի հետ են հայ փիղայիները... Այդպիսի մի գործնական աջակցութիւն եւ յիշում եմ մեր (Վասպուրականի Կ. Կոմիտէի) կողմից, արեւելցի Ալի բէյին, Ալջաւազի Քէտոն Հիւսէյին փաշայի դէմ եղած կռիւների ժամանակ:

Ալի բէյ, 1907ին, զգալով, որ Հիւսէյին փաշան իր դէմ պիտի յարձակուի, հարկաւ այդ բանն առանց մեզ անելու, խնդրել էր, որ մենք մի խումբ ուղարկենք իրեն, իր շրջանի հայերը կազմակերպելու, Կազգուանի վրայով Կարսի հետ սուրհանդակային գիծ հաստատելու՝ փոխադրութեան եւ յարաբերութեան համար Կարսի մեր Կոմիտէի հետ եւ այլ նպատակներով:

Այդ գործի համար նրա մօտ ուղարկեցինք Ախլաթի Շամիրամ գիւղացի մեր լաւ խմբապետներից Սողոյին, որը մի քանի հայ տղաներով մասնակցել էր Հիւսէյին փաշայի դէմ եղած կռուին, մեծ անուն էր հանել եւ Ալի բէյը յաղթող էր դուրս եկել: Քիւրդերն այս յաղթութիւնը վերագրում էին հայերի մասնակցութեանը, թէեւ, ինչպէս սասցի, Սողոն եղել է միայն մի քանի ընկերներով:

Քիւրդերի միջոցով գէնքի կամ մարդու փոխադրութիւն էին անում հետեւեալ նախագգուշութիւնները ձեռք առնելուց յետոյ.

ա) Ռեւէ քիւրդ, երբ անձանօթ է եւ ուզում է խոշոր

գործ անել եւ լաւ վարձատրութիւն ստանալ, պէտք է իր ընտանիքը, — կին. երեխաներ — բերէ մեր ցոյց տուած հայ գիւղը եւ բնակեցնէ իբրեւ գրաւական:

բ) Դրամական երաշխատրութիւն տայ, որ շատ քիչ էր պատահում:

գ) Վարկ ունեցող ու վստահութիւն ներշնչող թուրք, հայ եւ ֆիւրդ երաշխատր տայ, եւայլն:

Այս քրդերից մեծ մասը լինում էին մեզ բարեկամ աղաների ղոլամները: Սրանց մեծ մասը հաւատարմութեամբ է ծառայել ի՛ր շահից դրդուած և մեզ հետ էլ կապուած լինելու համար, բայց դաւաճանողներ էլ շատ են եղել:

**

Ինչպէս վերը յիշուած է, Աբաղայի հայերը մեծապէս օժանդակել են մեր փոխադրութեան. երթեւեկութեան, նամակային յարաբերութեան եւայլն: Առանց այդ հայերի ներկայութեան՝ մենք համարեա՛ թէ չէինք կարող երթեւեկել Աբաղայի պէս խիստ բնակեցրած Քրդստանով:

Հայ գիւղերը Աբաղայում, մի-մի սփանչելի ովասիսներ էին մեզ համար մեծ անապատի մէջ: Դրանցից մասնաւորապէս յիշատակելի են Մուստաֆա բէյի Նագարաւան, Մահմադ Սըդրբի Սաչանը եւ ուրիշները, որոնք լաւ յենարաններ էին, ուր իջեւանում էին սուրհանդակները եւ ծպտեալ փամբորդները:

Դրանք ժամանակաւոր պահեստներ էին մեր ապրանքների, որ սահմանից մեծ քանակութեամբ թափուում էին այդ կէտերը եւ կամաց կամաց ներս փաշուում:

Արդէն ասել ենք, որ Աբաղայի հայերը ազատ երթեւեկում էին Կարանի շուկան առետուրի համար: Կարանի թուրք վաճառականները հայերին ամէն դիւրութիւն ցոյց էին տալիս եւ պաշտպանում. որովհետեւ նրանց միջոցով ահագին ապրանք էր սպառուում, արտահանուում դէպի Աբաղա, Բերկրի, Արնէշ, Նոշար, եւ նոյնիսկ Սարայի շրջանը:

Հայերը ապրանք էին տանում ոչ միայն իրենց անձնակա՞: գործածութեան համար, այլեւ վաճառելու նպա-

տակով: Այնպէս որ այդ ուղղութեամբ ահագին վաճառականական փարաւաններ էին երթեւեկում Ալագանի լեռնաշրջափայով դէպի Կարանի:

Ամառը այդ փարաւանը երթեւեկում էր շատ սակաւ. որովհետեւ նախ՝ հայերը զբաղուած են լինում իրենց երկրագործական աշխատանքներով եւ երկրորդ՝ քրդական յարձակումներից էին վախեւում. արդէն ամառը Ալագանը բռնուած էր լինում *ղօզան* ելած քրդերով:

Ինչպէս ասացի, այդ փարաւանը մեծ մասամբ երթեւեկում էր աշնան, ձմրան եւ գարնան, եւ, ի հարկէ, ծանրութիւնները տանում էին մէջքով շալակած:

Պէտք է նկատել, որ մեր լեռնային գիւղացիք՝ Նորդուզ, Շատախ, Մոզս, Կարկառ, Կարնկան եւայլն, շատ լաւ «շալակաւոր»ներ են. որովհետեւ նրանց երկիրը լեռնոտ լինելով եւ նոյնիսկ կենդանիների համար քանապարհ չլինելով — միակ կենդանիներն էլն ու ջորին են — եւ ձրմեռն էլ ձիւնի պատճառով կենդանիների երթեւեկն անգամ անկարելի լինելով՝ մարդիկ ստիպուած են շալակով տանիլ իրենց ապրանքները:

Հնձած արտը շալակով են գիւղի կալը բերում. նոյնը եւ խոտը. ցորենը շալակով են ջրաղաց տանում: Շատախում եւ Մոկսում այս աշխատանքները կատարում են կիները, եւ այնքան շատ են շալակում, որ իրենք կորչում են քեռան տակ: Հեռուից տեսնողը կարծում է, թէ ցորենի կամ խոտի խուրճերի *բարդ*երը իրենք իրենց են շարժում: Քաղաք շալակով են ապրանք տանում ծախելու եւ շալակով են բերում ապրանքը ֆաղափից...

Այնպէս որ ամբողջ ժողովուրդը վարժ է շալակի եւ դրա համար էլ նոյնիսկ «շալակաւորների» դաս կայ, որոնք վաճառականների եւ կուսակցութեան ապրանքները, շատ անգամ հազարաւոր փութերով, գիւղերից ֆաղաք եւ ֆաղաքից գիւղեր էին փոխադրում: Նոյն սովորութիւնը կար եւ լեռնաբնակ ֆիւրդերի մէջ: Կային շալակաւորներ, որ ձմրան բուք ու բորանին, երկու մեթր խորութեամբ ձիւնի ժամանակ, 10-12 լիտր (5-6 փութ) շալակած Շատախից 60-70 ֆիւտներ երկու օրից հեշտութեամբ հասնում էին ֆաղաք: Իսկ ամառը 14-16 ժամից...

Պատերազմի ժամանակ թուրք կառավարութիւնը

Մշոյ շրջանում կազմակերպել էր 7,000 շալակաւորների մի բանակ ձմեռնային տեղափոխութեան համար: Դրանցից շատերը կոտորուեցին բուք ու բորանից, շատերը հիւանդութիւնից: Շալակաւորները Մուշից՝ 6-8 լիտր ծանրութեամբ բեռ շալակած՝ գնում էին մինչեւ Հասան-Կալէ, այսինքն 150-180 ֆիլմեթր տարածութիւն:

**

Ահաւասիկ այս շալակի վարժ, հրաշալի ճամբայ կորոզ, քարաւաններն էին, որ, Կարանիի շուկան գալու պատրուակով, գալիս էին եւ Թաղէի վանքը, շալակում 600-1000 փամփուշտ, գնում Կարանի, մի բան էլ այնտեղ դնում շալակում ու գնում դէպի Ալագան...

Ապրանքների այս կերպ փոխադրութեան՝ մեր ընկերներից մէկը, կարծեմ Կոմսը — սրամտօրէն տուել է «ծրծման եղանակ» անունը: Եւ, իբրօք, այդ ապրանքները կամաց կամաց ծծուում էին դէպի Երկրի ներս — վան եւ, մինչեւ անգամ, Մուշ: Աբաղայի հայերը ապրանքները փոխադրում էին մինչև Բերկրիի փոսը, Պստիկ գիւղ, Անձաւ եւ Գործոթ: Այնտեղից էլ գիւղից գիւղ Թիմարով կամ Արնակով դէպի վան:

Աբաղայի գիւղացիք իրենց փոխադրական աշխատանքի համար ստանում էին չնչին վարձ — ոչ աւելի, քան մի մէճիւս, ամէն մէկի համար: Իսկ միւս գիւղերում, իբրեւ կազմակերպուած վայրեր, փոխադրութիւնը կատարուում էր ձրիաբար:

Պէտք է ասել, որ ապրանքների ամենածանր եւ ֆանակով ամենաշատ մասը փոխադրուել է այս գծով եւ այս ձեւով: Կարելի է ասել, որ 1903-1907ին մէկ միլիոնից աւելի փամփուշտ է փոխադրուել միմիայն այդ գծով:

**

Աբաղայի հայերից, իբրեւ մեծապէս օգնող փոխադրութեան գործին, կարելի է յիշել հետեւեալներին:

Նազարուանցի Գարօ, շատ հարուստ ընտանիքից, բայց սոսկալի ալմկարար եւ ցոյցեր սիրող մի մարդ էր. արածների մասին սիրում էր յանախ խօսել Մուստաֆա բէյին, մանաւանդ նրա որդի Իսուֆ բէյին: Մոկացի Յով-

հաննէսի հետ վան դատի ենթարկուեց: Ապրիլեան կոնկերին սպաննուեց բանտի մէջ:

Նազարուանցի Գիւրոն մեր հին զինուորներից էր, աշխատել է Ախպօր ժամանակից. երախտաւոր գործիչ էր, ազնիւ եւ անվախ: Կարծեմ՝ սպաննուեց Ապրիլեան կոնկերի ժամանակ:

Նազարուանցի Ասատուրը շատ կտրիւն, յանդուգն և գործունեայ մարդ էր. բայց վերջը փնացաւ եւ մատնութիւններ արաւ, կարծեմ, քրդերին. սպաննուած պիտի լինի մերոնց կողմից:

Խաչանցի Բրախուլամը, նրա որդին *Մանուկը* եւ մանաւանդ միւս որդին *Կնեազը*: Այս ընտանիքը մեծ ծառայութիւն է արել յեղափոխական գործին: Նրանց մասին առիթ կ'ունենանք դեռ խօսելու:

Խաչանցի Ռէս Խաչոն: Սա իսկ եւ իսկ Բաֆֆու «հենք»ի տանուտէր խաչոն էր. հարուստ, շէն եւ հիւրընկալ օջախ: Միայն այս ընտանիքն էր այս գիւղին մէջ, որ անշահախնդիր եւ մեծ հայրենասիրութեամբ օժանդակում էր գործին:

Կորտկան գիւղացի *Ռէս Սախոն* եւ իր եղբօր որդին *Սերօրը*:

Այս գիւղը Աբաղայի դաշտի մէջտեղն էր. երկրորդ կէտն էր փոխադրութեան: Ռէս Սախոն հարուստ եւ պատուաւոր մարդ էր, գիւղի տէրն ու տիրականը: Մեր ամբողջ փոխադրութիւնը կատարուում էր նրա միջոցով ու նրա գիտութեամբ:

Ռէս Սախոյի տունը օրհնուած եւ հիւրընկալ օջախ էր: Ով անցել է Աբաղայով անպայման հիւրընկալուել է Ռէս Սախոյի «օղա»յի մէջ:

Վերջին պատերազմի ժամանակ Ռէս Սախոն իբրեւ փէդայիների հիւրընկալող սպաննուեցաւ եւ նրա ամբողջ հարստութիւնը թալանուեցաւ:

**

Ամբողջ Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր ամիսները վանքում ընկած՝ չգիտէի, թէ դուրսը ի՞նչ է կատարուում: Վարդապետը խորհուրդ տուեց հանգամանքից

օգտուել, Սալմաստ գնալ՝ այնտեղի գործերին ծանօթանալու համար: Շատ դժուարութեամբ համաձայնուեցի Սալմաստ գնալ. նախ՝ նկատի ունէի ձմեռնային ֆանապարհների անպատեհութիւնները. ապա, որ գլխաւորն էր, վախենում էի, որ Սալմաստի ընդունելութիւնն էլ հոյի պէս լինի: Բայց, վերջապէս, համբայ ընկայ:

Հասնում ենք Խոյ: Մալխասը այնտեղ չէր, դեռ չէր վերադարձել Թարիզից: Լսում ենք, որ Սամսոնը արդէն դարձել է Սալմաստ:

Խոյից Սալմաստ վեց ժամուայ համբայ հագիւ կայ. բայց գեաղուկը (կիրն) աւագակային յարձակումների է միշտ ենթակայ. ուստի հետս վերցնում եմ մի քանի զինուած տղաներ:

Այդ տարին, Սալմաստի գեաղուկում, Սամսոնը մի յայտնի կռիւ էր ունեցել քրդերի դէմ: Իր հետ է եղել դաւասարցի Սարգիսը, մեր լաւ զինուորներից մէկը, յայտնի կռուող եւ լաւ նշան զարկող: Միւս կողմից օգնութեան է հասել մշեցի յայտնի Մնջոն, որը այդ ժամանակ նստում էր Սանամերիկ: Քրդերին լաւ ջարդ էին տուել եւ մի նշանաւոր քիւրդ էր զարկուել: Այդ կռուի առթիւ քրդերը հիւսել էին «Հէ'դի բաժօ» յայտնի երգը, որ Սամսոնի եւ փէգայիների գովքն էր անում:

Այս պատմութիւնը ինձ ֆանապարհին անում էր եւ «Հէ'դի բաժօ»ն երգում մոկացի Յակոբը, որը ուղեկցում էր ինձ իրրեւ փորձ զինուոր: Յակոբը մասնակցել է մի քանի կռիւների, բայց սոսկալի կերպով վիրաւորուել է Գոռուլի կռուին:

Մալխասին ուղեկցելու ժամանակ, Գոռուլի ձորում քրդերը յարձակում են սրանց վրայ: Յակոբը մի լաւ դիրք է բռնում եւ կարգադրում, որ Մալխասը ձիւն էր անցնի, ինքն էլ կը գայ կը հասնի:

Մալխասը ձիւն էր անցնում, անելով մի սրամիտ եւ ինքնատիպ փորձ, — ֆանապարհին տեղ տեղ ձգում է դրամներ: Նրան հետապնդող քիւրդերը զբաղւում են դրամ ժողովելով, կամ իրար ձեռքից դրամ խլելով եւ ժամանակ են տալիս Մալխասին փախչելու:

Խեղճ Յակոբը վիրաւորում է ծանրապէս: Քիւրդերը կարծում են, թէ մեռած է, եւ ձիւն, հրացանը, եւայլն

տանում են: Յակոբը ուշքի է գալիս եւ հագար ու մի տանջանքներով, մեծ մասամբ փոքի վրայ սողալով, 14 ժամից հասնում է վանքի սահմանը. պատահական մարդիկ տեսնում եւ փոխադրում են վանք կիսամեռ վիճակի մէջ...

Յակոբը այս պատմութիւնն անում էր ինձ այնպիսի անտարբերութեամբ, որ կարծես այդ բոլորը իրեն հետ չի պատահել. այն ինչ դեռ վերքերը չէին սպիացել իր վրայ:

Գիշերում ենք Սանամերիկում: Մշեցի Մնջոն մեզ բոյլ չի տալիս շարունակելու մեր համբան:

Սանամերիկում գիշերը համարեա չենք քնում: Մնջոն պատմում է Սասունի եւ Մշոյ կռիւներից հետաքրքիր դրուագներ, բայց երբեք ակնարկ չի՝ անում իր արած կրօնիւնների մասին: Առանձին հպարտութեամբ էր խօսում մանաւանդ Գէորգ Զաւուշի եւ Կորիւնի կռիւների մասին: Իսկ դէպի Հրայրն ու Վահանը ունէր պաշտամունքի և խորին յարգանքի խօսքեր...

Յետոյ իմանում եմ, որ Մնջոն ինքը եղել է շատ յայտնի կռուող զինուոր Մուշ եւ Սասունի կռիւներին. եւ Սալմաստի քրդերի մէջ էլ մեծ անուն է հանել իր կտրիճութեամբ: Իսկ հայերն ամէնքը սիրում էին նրան իբրև պարկեշտ եւ լաւ զինուորի:

Մնջոյի հետ յետոյ էլ առիթ ունեցայ տեսնուելու՝ «Հուրիաթ»ից յետոյ վան եւ ապա՝ Մուշ: «Հուրիաթ»ի խաղաղ տարիները նա համեստ արհեստաւոր էր եւ ընտանիքն ի՛ր քրտինքով պահող՝ միշտ մնալով կազմակերպութեան փայլուն գործիչներից մէկը:

Զաւարեանի Մշոյ գործունէութեան ամենալաւ յեմարանն է եղել և նրա սակաւաթիւ պաշտպաններից գլխաւորը...

Սասունի վերջին կռիւներին ամբողջ մի շրջանի հըրամանատար է եղել, կռուել է հերոսաբար եւ ընկել հերոսի արժանի մահով...

**

Վերջապէս հասնում ենք Ղալասար, ուր ապրում էր Սամսոնը:

Վանքից գրածս նամակը Թարիզ՝ Արտուրի արար-

ֆի մասին, իր ազդեցութիւնն արել էր: Սամսոնը ըշտապում է բացատրել, որ այդ բոլորը թիրիմացութիւն է: Տղաները «խամուխիւն» են արել. «Ինչո՞ւ դու քեզ կանոնաւոր չես ներկայացրել»...

Այդ բոլորը ինձ համար հետաքրքիր չէր: Լաւը այն էր, որ Սամսոնից ստացած առաջին տպաւորութիւնս շատ լաւ էր...

Սամսոնի մասին ես լսել էի դեռ Բագուից. գիտէի, որ նա Քրիստափորի քրոջ որդին է եւ մեր շատ սիրելի Պապաշա (հայրիկ) Լեւոնի եղբայրը: Շատ բան էի լսել եւ Պարսկաստան եղած երկու-երեք ամսուայ ընթացքում՝ ե՛ւ լաւ ե՛ւ վատ... Ուրիշ կերպ էլ չէր կարելի: Պատասխանատու գործի գլուխ կանգնած մարդը չի կարող գոհացնել ամէնքին:

Բայց ինչքան անձնական նանաչողութեամբ եւ մանաւանդ ինչքան որ մտոյց ծանօթացայ Սամսոնի կատարած դերին, եկայ այն խորունկ եզրակացութեան, որ այդ կիսամտաւորական-արհեստաւոր մարդը մեր կուսակցութեան համեստ, բայց հաստատուն սիւներից մէկն է:

1896 թուից ի վեր Սամսոնը վերաբնակուած է Սալմաստ: Արտաֆուստ, ի պաշտօնէ մա եղել է կամ առաջնորդի փոխանորդ, կամ Սալմաստի դպրոցների տեսուչ եւ կամ ուսուցիչ: Սալմաստը իր այն ժամանակուայ դպրոցական կրթական գործի մեծ մասը պարտական է Սամսոնի ջանքերին, եւ մանաւանդ, կազմակերպչական տաղանդին:

Սալմաստի գիւղացիների ապահովութիւնը, պաշտպանութիւնը թուրք եւ ֆիւրդ աւազակների դէմ, հայ համայնքի խաղաղ, ազգային տեսակէտով հպարտ եւ հանգիստ կեանքը նոյնպէս Սամսոնի գործն էր...

Նա օժտուած էր զարմանալիօրէն կազմակերպելու, միացնելու, դեկավարելու, մարդկանց իրար հետ համերաշխեցնելու գերագանց ձիրքերով: Նա տաղանդաւոր վարչագէտ էր, իսկ, եթէ նա կրթութիւն ստացած լինէր, նահանգ պիտի կառավարէր հրաշալիօրէն:

Ահա՛ այսպիսի լաւ յատկութիւններով եւ զգացմունքներով օժտուած մի մարդու ձեռքն էր վանի սահմանագլխի յեղափոխական գործի դեկավարութիւնը: Նրա

վերին հսկողութեան տակ էին և՛ խոյր, և՛ Թադէի վանքը, իսկ Սալմաստը գործը նա վարում էր անձամբ. յանախ լինում էր ե՛ւ խոյում ե՛ւ վանքում գործերին ընթացք տալու կամ թիրիմացութիւնները հարթելու համար:

Իմ Սալմաստ գնալը շատ ուրախացրեց Սամսոնին, որովհետեւ ապագայում իրար հետ վանից յանախ գործ պիտի ունենայինք: Իսկ անձնական նանաչողութիւնը, վստահութիւնն ու կապը, ինչպէս նա էր ասում, մեծ նշանակութիւն ունի մեր գործի համար...

Ես Սալմաստ էի գնացել, մանաւանդ, մի անձնական գործի համար: Զգիտեմ ո՛րտեղից որտեղ վանքում սկսել էին ատամներս ցաւիլ: Լսեցի, որ Սալմաստում մեր տղաներից մէկը — Քիպրիթչեան — ատամնաբոյժ է եւ լաւ էլ վարպետ: Ի հարկէ, իսկոյն դիմեցի նրան, որ սկսէ ատամներս մաքրել, լեցնել եւայլն: Զգիտեմ, ե՞ս շատ էի շտապեցրել, թէ իր խելքը չէր կտրել, առանց ջիղը լաւ քթացրնելու՝ ատամս լեցրեց: Բայց՝ մի քանի ժամ չանցած՝ այնպիսի մի ցաւ բռնեց, որ քիչ մնաց գլուխս տրափուէր:

Սամսոնը ձիւար է ուղարկում Քիպրիթչեանին բերելու: Նա էլ, դժբախտաբար, Թարիզ է մեկնած լինում երկար ժամանակով, իսկ ատամիս ցաւը մի գիշեր էլ համբերելու հնարաւորութիւն չի տալիս: Ազաչում եմ Սամսոնին, որ մի ուրիշ ատամ հանող գտնի:

Այս ամբողջ պատմութիւնն անում եմ հէնց ներկայացնելու համար այս հռչակաւոր «օպերատոր», սափրիչ ատամ հանողին, որը աւելի սուկալիօրէն տանջեց ինձ, քան վանքի երես անհիշող ծառան:

Ամբողջ Սալմաստում մի հատ հայ հռչակաւոր սափրիչ ատամ հանող է եղել, որը այդ օրը իմ բախտից տնից գացել էր: Մեր խեղճ զինուորները մի քանի ժամուայ փրկուորուոյցից յետոյ նրան գտել են Փայաջուկ մի հարսնետան, ի հարկէ, հարբած վիճակում, ուժով ձիւ վրայ են դրել եւ քաշ տալով բերել:

Սամսոնը անհրաժեշտ հրահանգները տուեց, որ զգոյշ լինի, լաւ նայի, որ հիւանդ ատամի տեղ սաղը չհանի...

Սամսոնին խնդրում եմ, որ ինքը նայի, թէ «Քալփաթան»ը ո՞ր ատամն է բռնելու:

Օպերատոր սափրիչս իսկոյն պահանջեց մի չուան, երկու բարձ, օդի, մի մեծ *լազան* (տաշտ), մի ձեռքի թաս եւայլն:

Ես սոսկումով նայում եմ այս բոլոր պատրաստութիւններին ե՛ւ դողում եմ վախից: Ատամիս ցարը արդէն կտրուել է, բայց զիտեմ, որ այս ներշնչումների ազդեցութեան տակ է: Որոշում եմ ֆաշի տալ եւ ազատուիլ. որոշում եմ, մանաւանդ, տղամարդու պէս դիմանալ... Զէ՞ որ երկիր եմ գնում, ամօ՛թ է, ի՞նչ կ'ասեն ընկերները, որ մի ատամ ֆաշիու չեմ դիմանում...

«Դոկտորը» իսկոյն գործի սկսեց, բարձերը դարսեց իրար վրայ, ձեռքերս տարաւ դէպի մէջքս եւ սկսեց իր խնդրած չուանով կապել: Լուռ ու մունջ համակերպում եմ, ինչպէս նախելու համար գետինն ձգուած եւ ոտքերը բարձրացուած ու կապուած եզները... Հրամայում է, որ Սամսոնը գլուխս բռնէ, մի զինուոր ոտներիս վրայ նստի, մէկը մէկ ձեռքիս կողմը, միւսը՝ միւս... Երբ այս բոլորը պատրաստ էր, եւ մէկի ձեռն էլ թասն ու տաշտը, «դոկտորը» գրպանից հանեց կեղտոտ թաշկինակի մէջ փաթաթուած ու ժանգոտած *ֆալիաթանը*, լաւ նայեց վրան, հրամայեց, որ բերանս լայն պահեմ, ու գործիքը խրեց բերանս:

— *Առջի տղոց, լաւ նայի՛ր*, — պոռում է Սամսոնը: *Քալիաթինով* բռնեց ատամս եւ, որքան ուժ ունէր, ձեռքի մէջ սեղմեց եւ ապա ֆաշեց...

Շարժուելիք չկայ. իսկ ես կարծեցի, թէ ամբողջ ծնօտս պիտի պոկուի... բայց լուռ եմ...

Անյաջող է անցնում եւ երկրորդ փորձը: Երրորդին *ֆալիաթինը* մի քիչ աւելի խորն է տալիս եւ ուժգին ֆաշում. ատամս պոկուում է եւ հետը ամբողջ մի կողմի լինդերը... Ուշքս գնում է մի ֆանի քայլ: Սամսոնը պոռում է, նչում, բայց նար չկայ: «Դոկտորը» ուժով օդի է լեցրնում բերանս, մի կողմից՝ ուշքի բերելու եւ միւս կողմից՝ վէրքը ախտահանելու համար...

Վերջապէս, խելիս գլուխս է գալիս. շարունակում եմ բերանս ողողել օդով, դեռ ձայն չեմ հանում...

— *Մեր տղա՛յ, լաւ պրծար*, — կատակաբանում է

Սամսոնը՝ խնդալով.— *Տէ՛չ ախ էլ չարի՛ր: Էսպէս վարպետ կ'ասեմ, հա՛...:*

Իսկապէս որ լաւ պրծայ, որովհետեւ ես վախեցնում էի, որ ամբողջ ծնօտս պոկէր, միայն լինդերս է եղել...

Իսկ վարպետի ֆէֆին ֆէֆ չկար. նա շարունակում էր ինձ համար բերուած օդին կոնծել...

Սամսոնը մի թուման է տալիս եւ նամբու դնում մեր «*օպերատոր*» բժշկին...

Մի ֆանի օր, ի հարկէ, շան հալ եմ ֆաշում. բայց մինչեւ հիմա ալ չեմ մոռանում այդ նշանաւոր «*օպերատոր*»ին, որ այդքան աժան պրծացրեց ինձ:

Երբ խելիս գլուխս եկաւ, Սամսոնին հասկացնում եմ, որ Պարսկաստանի ամէն մի վայրը ինձ համար մի *սիւրպրիդ* ունի վերապահած. Մալխասը կօշիկներս հանել տուեց, Արտուրը՝ դրամներս... իսկ ինքն էլ՝ ատամներս... Զգիտեմ, թէ նրանցից ո՞րն էր աւելի շատ սիրում ինձ...

**

Սամսոնը ինձ ծանօթացնում է առհասարակ Ատրպատականի մեր կազմակերպութեան կատարած դերին՝ Երկրի համար: Առաջարկում է, եւ շատ իրաւացիօրէն, որ գէթ սահմանագլխի երեք կէտերը՝ Սալմաստ, Խոյ եւ Թաղէի Վանք, որոնք այն ժամանակ յայտնի էին *Մինարէթ*, Աւարայր և Մեմաւոր կեղծ անուններով, հաշուուին Վասպուրականի Կ. Կոմիտէի հետ անմիջապէս կապուած վայրեր՝ պատրաստ առաջնորդուելու նրա հրահանգներով Երկրի վերաբերեալ հարցերում: Այն պայմանով, որ այս վայրերի ծախսերն էլ մտնեն Վասպուրականի յատկացուած ընդհանուր պիւտոնէի մէջ:

Ես ապագայում գտայ, որ այդ մեծ անհրաժեշտութիւն էր, որովհետեւ սահմանագլուխ նստած ընկերներ, ինչքան որ փորձուած եւ բարեխիղճ մարդիկ լինէին, չէին կարող օրը օրին հետեւիլ Երկրի մէջ ստեղծուող արդիական կարիքներին եւ ընդ այնմ շարժուել:

Ի հարկէ, այս բանը վերջ ի վերջոյ եղաւ, բայց շատ ուշ, երբ Վանը ունեցաւ ձեռնհաս գործիչների մի ստուար

խումբ, որ կարող էր ուղղութիւն տալ թէ երկրի եւ թէ դրսի գործերին:

Սամսոնն էլ երկիր երազողներինցն էր, որ տասը տարուց աւելի է ահա մնում էր նստած իր տեղում: 'Նախ' նրան փոխարինող չկար (եւ իրօք տեղական պայմանները այդքան գիտցող ոչ ոք կար) եւ երկրորդ՝ իր մարմնական կազմն էր խանգարում, ինքը ծանրաշարժ էր, չէր կարող ոտով պտտել, պատերի վրայով թռչել, ջրի ծակերից սողոսկիլ եւայլն...

Այս բոլոր փորձութիւնները մենք դեռ կը տեսնենք իր ժամանակին, երբ խօսք կը լինի վանի յեղափոխականների կեանքի մասին:

Բայց Սամսոնը անմասն չմնաց անձամբ երկիր գալուն: Ազատութեան տարիներին, Դումանի հետ, երբ մերոնք բշտեցին Պարսկաստանից, նա եկաւ ժամանակաւոր կերպով վան: Երկրորդ անգամ նա վան եկաւ Անդրանիկի կամաւորական խմբի հետ, վանի գրաւումից մի քանի օր յետոյ: Այդ ժամանակ նա Անդրանիկի օգնականի դեր ունէր եւ շատ ձեռնհասօրէն տանում էր գործը, եւ միակ մարդն էր, որ երկարատեւ կերպով կարողացաւ վարուել Անդրանիկի հետ:

Արդէն Յունուար էր. պէտք էր շտապել: Հրածեշտի համբոյր եմ տալիս Սամսոնին, որ այնքա՛ն սրտանց հիւրընկալեց ինձ եւ այնքա՛ն թանկագին խորհուրդներ տուաւ ինձ իմ ապագայ գործունէութեան մասին եւ նապարհուում եմ կրկին խոյի վրայով վանք...

**

Վանքից Սալմաստ մեկնելէս առաջ նամակ էի գրել վանի ընկերներին՝ յայտնելով, որ վանքն եմ եւ սպասում եմ սուրհանդակների: Խնդրել էի, որ յարմար առաջնորդներ նամբեն՝ ինձ տանելու համար: Թիֆլիսից էլ ուղղակի *փոստով* էին գրել իմ վան ուղեւորուելու մասին:

Վանքում ստացայ նամակ՝ գրուած Կոմսից եւ մի անձնական նամակ Իշխանից: Վերջին նամակով Իշխանն ինձ բացատրում էր երկրում եղած իրերի վիճակը, իբր փախստական սպրեյու անպատեհութիւնները եւ խորհուրդ էր տալիս լաւ խորհիլ եւ սպա միայն երկիր մտնել...

Խորհելու ժամանակ չկար. սուրհանդակները եկել էին, այն էլ ամենահմուտները, ինչպէս վկայում էր Ընծայրը եւ ինչպէս յետոյ ես էլ անձամբ համոզուեցի:

Վանից, ինձ համար, յատկապէս եկել էր, մեր սուրհանդակ գինուոր *Ջաֆարը* — սեւանցի Սահակը...

Սա 1896ի կոտորածին ֆրդացել էր եւ ապրում էր ֆրդերի մէջ, մինչեւ 1902: Այդ ժամանակուանից եկել էր մերոնց մօտ եւ գրուել գինուոր: Հմուտ ֆրդախօս էր, շատ նարպիկ, թէեւ շատ էլ վախկոտ: Թէ՛ արտաքինով եւ թէ՛, մանաւանդ, ներքինով ֆրդից չէր տարբերում: Սիրում էր հագնիլ հայաստանցի ֆրդի տարագ, արխալուխ-օյման, գլխին՝ համիտեայ կալփակալ, մի քանի «փուշի» փաթաթած չորս կողմը. երկար շղթայով կրծքից կախած ունէր ժամացոյց. հագած էր համիտեայ կարմիր ժապաւէնով տաբատ, երկարավիզ կօշիկներ եւայլն:

Երգում էր ֆրդական երգեր, գիտէր բոլոր նանապարհները դէպի Սալմաստ, մանաւանդ դէպի խոյ եւ վանք:

Գիտէր ֆրդական բոլոր սովորոյթները, աղօթքները: Ծանօթ էր համարեա վանի շրջանի աշիրաթների տան անդամներին, նրանց փոխադարձ թշնամական կամ բարեկամական յարաբերութիւններին: Կարն՝ մի կատարեալ ֆրդագէտ, ըստ ամենայնի պատրաստուած իր միսիայի համար, որ էր սուրհանդակութիւն եւ փոխադրութիւն Պարսկաստանից...

Ջաֆարը բազմաթիւ անգամ եկել էր Պարսկաստան, առաջնորդել էր բազմաթիւ խմբեր, փոխադրել էր մշեցիներ եւ վասպուրականցիներ. մի խօսքով՝ խոշոր դեր էր կատարում: Բայց ինչպէս ասի, ֆրդերի մէջ ապրելով եւ կրօնափոխ լինելով, իրացրել էր մի քանի բացասական յատկութիւններ. չափազանց ստախօս եւ մեծախօս էր. մեծերի առաջ կեղծաւոր եւ ենթարկուող, բայց երբ ինքը միևնակ էր լինում կամ մեծաւոր, Աստուած հեռու տանի: Գիւղերով անցնելու ժամանակ հայ գիւղերում աւելի մեծ *բաշխրօզուկութիւններ* էր անում, քան բուն ֆրդերը...

Սկզբներում հանդուրժում էինք այս բոլոր պակասութիւններին, իր կատարած օգտակար դերը նկատի ունենալով, մանաւանդ որ մի ուրիշը չունէինք փոխարինող.

բայց վերջը տեսանք, որ նա մեր վստահուրիւնը սկսել է շահագործել, գրադուրով քալանով, կաշառք վերցնելով եւայլն:

Ապագայում նրան նորից կը հանդիպինք, երբ նա արդէն վոնտուած է կազմակերպութիւնից եւ բանտարկուած վանի բանտում: Ազատութեան տարին նա էլ ընդհանուրի հետ ներման արժանացաւ. «Հուրիաթ»ին իրեն համար ապրում էր:

Չափարի հետ վանք էին եկել խաչանցի Բրախոյամը, նրա որդին՝ Կնեազը եւ ուրիշ ապաղացի եւ բերկրեցի հայ գիւղացիներ:

Խաչանցի Բրախոյամի մասին խօսուած է Ապաղայի գործիչների շարքում: Սա շատ լաւ սուրհանդակ էր եւ փոխադրող. միշտ քարան-քաշի էր: Արհեստով ներկարար էր. արդէն 60ից աւելի կը լինէր, բայց կտրին էր եւ ինձանից թեթեւ էր քայլում:

Շնորհիւ իր արհեստին, մեծ կապեր ունէր քրդերի տների հետ. բայց, մանաւանդ շնորհիւ իր խելին եւ լաւ բնաւորութեան, բոլորի սիրելին էր: Այդ էր պատճառը, որ անունը դրել էր *Բրախոյամ*, որ քրդական խօսք է եւ նշանակում է «եղբորս ծառան»: Սա ընդունուած խօսակցութեան ձեւ է. «բրախոյամ». «ազ խլամէ տամէ» այսինքն՝ եղբորս ծառայ. ես քո ծառան եմ:

Իսկական անունը չգիտէի եւ, կարծեմ, ոչ ոք էլ չգիտէր նրա իսկական անունը, բացի Բրախոյամից:

Բրախոյամը գրադուր էր ե՛ւ առեւտուրով. ապրանքներ էր առնում Կարանիից եւ ծախում Ապաղայի քրդերին: Քաղաքից էլ — վանից — ապրանքներ էր գնում — ներկ, լուցկի, կոնեակ եւայլն եւ տանում Պարսկաստան — այնպիսի ապրանքներ, որ այնտեղ չեն գտնուում...

Բրախոյամը մի մեծ պակասութիւն ունէր. շատ էր սիրում խմել եւ, երբ խմեց, Աստուած հեռու տանի, — ոչ մեծ էր նանաչում եւ ոչ փոքր, մանաւանդ ոչ փրփր էր ոչ թուրք...

Լաւ յիշում եմ, որ մեր Գեորգի վան էր այդ ժամանակ եւ պիտի դառնար Պարսկաստան: Կանչեցինք Բրախոյամին: Երբ երեկոյեան եկաւ ձիաւորուած՝ նանապարհուելու, տեսանք, որ սուկալի հարբած է: Կոմսը սկսեց

յանդիմանել նրան: Նա բարկութեամբ պատասխանեց.

— Պ. Բժիշկ, (Կոմսը վանում յասնի էր Բժիշկ կեղծ անունով) զինուել եմ, ինչ կայ որ. դուք սխլախով կը զինուէք, իսկ ես ըստիով...

Իսկ երբ Կոմսը սկսեց հայեցել, ասաց.

— Պ. Բժիշկ, դու իմ խէ՞րն ես, իմ մէ՞րն ես, որ զիկ քուֆուր կու տաս...

Ահա այսպիսի բազմապիսի ընկերներով է, որ ես նանապարհ եմ ընկնում դէպի վան:

Լաւ չեմ յիշում, թէ ե՞րբ ելայ վանքից. բայց գիտեմ, որ 1905ի Փետրուար 6ին հասայ վան: Ուրեմն՝ նանապարհուած պիտի լինեմ Յունուարի վերջերին, որովհետեւ վանքից վան, որ 130-150 ֆիլովերք տարածութիւն է, գնացել եմ 8-10 օրից, եթէ ոչ աւելի...

Չիւնը դեռ նոր էր «քրչա» (եղիբն) բռնել: Ցերեկները չէր կարելի դեռ նանապարհից դուրս քայլել. մեր նանապարհի լայնութիւնը երկու ոտնաչափից աւելի չէր, որը պնդացել էր եկող գնացող նամբորդների ոտքի տակ:

Ահաւասիկ այդ նանապարհով էր, որ պիտի անցնէինք ե՛ւ մեմք, ե՛ւ քրդերը, ե՛ւ կառավարական զինուորները, ե՛ւ ամէն վստահելի ու անվստահելի նամբորդներ:

Տղաներին խնդրում եմ, որ այս անգամ փամփուշտների բեռ ֆիչ վերցնեն՝ խոստանալով որ դրա փոխարէն ես նրանց լաւ կը վարձատրեմ:

Ցարութիւնին հետս չեմ վերցնում, նրան թողնում եմ Մոսոյի հետ երկրորդ խմբին հետ գալու:

Վանքից կէսօրից վերջ ելանք եւ մթով հասանք Կարանի: Այնտեղ պիտի գիշերէինք եւ առաւօտեան վաղ, մութլուսուն նամբայ ելնէինք դէպի Ալազան...

Կարանիի մէջ հիւրընկալուած եմք ամէնքս միասին, 8-10 հոգի, Խոյեցի Աւետի պատիկ խանութին մէջ:

Աւետը արհեստով զինագործ էր, խանութ ունէր Կարանի հագար ու մի նեղութիւն քաշելով եւ անարգանքի ենթարկուելով մի կտոր հաց վաստկելու համար:

Արտաֆինով խեղճ էր. պարսիկների արտաֆին երեւոյթն ունէր, — հագուստ, գլխարկ, ածիլուելու ձեւ, վերջապէս, ըստ ամենայնի մթնոլորտի պայմաններին յատուկ կերպարանք էր ստացել:

Բայց այս արտափինով խեղճ մարդը մեծ դեր էր կատարում մեր գործերի համար կարանիում: Շնորհիւ այն բանի, որ նա զինագործ էր, Աբաղայի, Արնէշի եւ այլ վայրերի ֆրոնտը գալիս էին նրա մօտ հրացաններ նորոգել տալու: Եւ այդ պատճառով իմանում էր շատ նորութիւններ՝ սահմանագլխի դուրսեան, թուրք գորգերի շարժման, աղաների փոխադարձ յարաբերութեան, հայ խրմբերի կոնիւնների մասին եւ այլն: Մի խօսքով Դաշնակցութեան գաղտնի ուստիկանութեան գլխաւոր գործակալն էր:

Եւ այս բոլորը նա անում էր ամենայն ուրախութեամբ եւ լուրերը հասցնում էր Վանի իր թուրք աշակերտի միջոցով գրաւոր եւ, եթէ շատ կարելու էր, ինքն անձամբ գալիս էր Վան: Ու խեղճի միակ վարձատրութիւնը վարդապետի օրհնանքն էր եւ մեր *աֆէրիճը*, բայց նա այնքան գոհ էր լինում...

Աւետը մեզ հիւրասիրեց թէյով եւ ինչով որ կարող էր: Վրաս գլխիս նայելով — շատ ազատ գիւղացիի հագուստ էի հագել չնկատուելու համար — ախ ու վախ էր անում եւ ասում էր.

— *Պարոն, հապա ե՞րբ պիտի ազատուենք այս անօրէններից:*

Աֆաղաղները դեռ չխօսած՝ մնաս բարեւ եմք անում Աւետին եւ մեկնում:

Կարանիից մինչեւ Ալազանի ստորոտը ձմեռը 2-3 ժամուայ նանապարհ է, մանաւանդ գիշերուայ գնացողի համար, երբ ստիպուած են ֆայլել անդադար ընկնելով եւ կանգնելով:

Լուսաբացին, արդէն մենք հասել էինք Ալազանի լանջերը: Գիշերը խիստ ցուրտ էր, իսկ լուսուն սկսեց եղանակը խառնուել եւ ֆամի փչել: Ինչքան մենք բարձրանում էինք, ֆամին այնքան անելի ուժեղանում էր եւ փոթորիկի ու բորանի փոխում:

Լուռ ելնում ենք լեռն ի վեր: Բրախոյամբ հրամայում է, որ իրար պոչ բռնած գնանք՝ վար չընկնելու համար: Բուքի հետ սկսուեց ե՛ւ մառախուղ:

Տղաներն յուսահատութեան նշաններ են ցոյց տալիս:

— *Աս տո՛ր կը տանի սա ցնդուկ խէն. չգիտե՞ր, որ Ալազանի բորանը գէլ-խեղղուկ է...*

Ջափաբը վեր ու վար է անում՝ շան պէս երկնփից հոտ առնելով, պոռալով.

— *Վալլահ, լիլլահ, թալլահ, բորան պիտի ընէ եւ մեզ խեղղի:*

Փոթորիկը անելի ուժեղանում է: Արդէն տեսնում ենք, որ սարի գագաթէն սիւնաձեւ ձիւնով շաղախուած բորան է գալիս... մէկ, երկու, երեք. էլ չենք կարող բարձրանալ. ֆամին մեզ ուժասպառ է արել: Կէսօրը անցել է, եւ մենք դեռ անապարհը չենք կիսել, այնինչ այդ օրը պիտի հասնինք Խաչան...

Մէկ էլ տեսանք, գայլերի վոհմակի պէս վերելից, մի խումբ ֆրոնտը դէպի մեզ են փախչում եւ պոռում.

— *Ջան փրցուցէք, բորանը կը գայ...*

Ասին եւ դէպի ներքեւ փախան:

Նկատեցինք, որ նրանք իրենց բեռները թափել են նանապարհի ուղիղ մէջտեղը: Մէկ էլ մի մեծ ձիւնասիւն եկաւ եւ բոլորիս գետին գլորեց: Մի ֆանի բուպէ մնացինք այսպէս, ով որտեղ ընկել էր: Յետոյ կամաց-կամաց հաւաքուեցինք մի խոշոր ֆարի ետեւ. ոչ մտածել էր լինում եւ ոչ խօսել:

Քրտինքի մէջ կարած, իսկ այժմ ձիւնի մէջ թաղուած՝ շուտով ոտներս ու ձեռներս փայտացան:

Վերջապէս, որոշեցինք մեր բեռները ձգել մի նշանակուած ֆարի տակ եւ մենք էլ շտապ-շտապ իջանք դէպի դաշտը: Չգիտէինք, ո՞ւր գնալ. Վանքը հեռու է, Կարանի մտնել չենք կարող, ուրիշ գիւղ էլ չգիտէինք:

Վերջապէս, վագէվագ հասնում ենք դաշտը, որոշում ենք մտնել առաջին պատահած անամի գիւղը: Ձիւնով անձրեւով թրջուած ենք. ոչ մի թուրք, թաթար չի համաձայնում մեզ ներս առնել:

«Սայտամ» կը լինեն, հակառակ նրան, որ դրամ էինք առաջարկում գիշերելու համար:

Երկար թափառումներից յետոյ, մի ֆիրդ համաձայնում է մեզ ներս առնել իր տունը եւ թոնիր վառել մեր շորերը չորացնելու համար, պայմանով, որ մի գիշերուայ համար իրեն երկու թուման տանք: Ճար չկայ, համաձայնում ենք...

Ներս ենք մտնում մի ցածրիկ խրճիթ. վառում են թոնիրը. ծխով լցում է խրճիթը. բայց այդ բոլորը մեզ համար ոչինչ է, որովհետեւ ուղղակի փայտացել էինք: Մեր արիւնը կարծես կանգ էր առել:

Վերջապէս, տեղաւորում ենք թոնիրի չորս կողմը: Մարմինս տախանում է, ոտներս հանում եմ ուրիշ գուլպայ հագնելու եւ ընկնում եմ հողէ գետնի վրայ. մի անուշ բուն է գալիս վրաս. քնում եմ խորունկ, հարբեցած, մի անյայտ երջանկութեան զգացմունքով...

Բայց հայ գիւղացին, կամ առհասարակ արեւելցին, ոչ յոգնել գիտէ, ոչ հանգստանալ եւ, մանաւանդ, ոչ էլ ուրիշների հանգստեան արժէքը գիտէ:

Զափարը, որտեղից ո՞ւր, գիւղից նաղարաջին, գունանաջին գտել է եւ բերել մեր խրճիթը: Հաւաքուել են գիւղի աղջիկները եւ հարսները, երգում են, պարում ու ֆէֆ անում...

Քնել անհնարին է այլեւս. ստիպուած եմ նստել: Իմ կացութիւնը ծանր էր. նախ որ քրդերէն չգիտէի, ուստի համրի դերի մէջ էի. երկրորդ՝ պատուիրած էի, որ ամբողջ ֆանապարհին, մանաւանդ օտարների ներկայութեան, ինձ որեւէ ծառայութիւն չանեն, — արդէն դիտմամբ աղֆատի հագուստ էի հագել աչքի չընկնելու համար: Ի դէպ, պէտք է ասել, որ Զափարը իմ այս հանգամանքից օգտուելով՝ թէ՛ այս գիշեր եւ թէ՛ ապագային ինքն իրեն խմբի աղա էր հռչակել եւ աջ ու ձախ հրամաններ էր արձակում:

Քրդերը նկատել էին իմ տարօրինակ դիրքը, որ չեմ երգում, խաղերին չեմ միջամտում եւ այլն: Զափարը փութաց երեւոյթները փրկել՝ յայտարարելով, որ ես վանեցի եմ, Մահմատ Սատրգի-հաչան գիւղի վարժապետը եւ բէյի «բեաթիպը» (գրագիրը), հիւանդ եմ, ֆէֆ չունիմ:

Վերջապէս, ամէնքը ցրում են, եւ մենք տան տէր ֆիւրդ ընտանիքի հետ մինակ ենք մնում խրճիթի մէջ, որը այնքան նեղ էր, որ ամէնքիս պառկելու տեղ չէր տալիս: Մի ֆանիսը մնում են նստած եւ այնպէս ննջում:

Առաւօտեան լուսաբացին, քրդին վնասելով իրեն խոստացուած երկու թումանը եւ հացի գինը՝ ֆանապարհը ու մենք գնումք դէպի Ալազան: Թէեւ խիստ ցուրտ է,

բայց օդը արդէն պարգուել է, եւ շուտով արեւ կ'ունենանք:

Մենք շտապում էինք, որովհետեւ վախենում էինք, թէ քրդերը մեզնից վաղ կարող են ելնել լեռը եւ մեր պահած բեռները գտնել: Բայց համարեա թէ միաժամանակ ենք հասնում, վերցնում ենք բեռները եւ բարձրանում Ալազանի գլուխը: Մեր առջեւ կամաց-կամաց բացում է Արաղայի սիրուն դաշտը:

— «Հրէ՛ն սահմանի նշանը»... ձայնում է Զափարը, ցոյց տալով մի կլոր եւ ծակ ֆար:

Չիգ եմ անում ինձ ներշնչելու, թէ այսուհետեւ օդը պիտի փոխուի, տեսարանները՝ նոյնպէս:

Բայց շուտով պիտի տեսնենք սուկայի տեսարաններ... Չէ՞ որ «արցունքի հովիտն» ենք իջնում: Սակայն իմ նիգերս ի գուր են անցնում. օդը, բնութիւնը, լեռները, նոյնիսկ մարդիկ նոյնն են, ինչ որ Պարսկաստանի կողմը տեսանք:

Շուտով իջնում ենք դէպի Արաղայ: Իջնելը աւելի դժուար է ձիւնային ֆանապարհով. յաճախ ընկնում եւ խրում ենք ձիւնի մէջ: Չանապարհը, ոչ աւելի ֆան երկու ոտաչափ լայնութեամբ, նեղ ժապարէնի պէս պտոյտներ է անում սարի լանջերին: Պէտք է լարուած ուշադրութեամբ գնալ, մանաւանդ ինձ պէս անփորձ մարդկանց համար, ապա թէ ոչ մի անզգոյշ ֆայլ, եւ կ'ընկնես անդունդ. իսկ լաւագոյն դէպքում՝ կը խրուես մարդահասակ ձիւնի մէջ, որից ելնելու համար չորս մարդու օգնութիւն է հարկաւոր:

Դեռ դաշտը չհասած՝ նիշդ Զպուխու գիւղի վերեւ, մեր ուղեկիցներից անձաւցի մի տղայ, որ շատ ծանր բեռ ունէր, յանկարծ սայթափուեց ու գլորուեց: Մէկ էլ տեսանք՝ ձիւնի մէջ ոտքով-գլխով եւ բեռով կորաւ: Ընկել էր մի ձորի մէջ, ուր հողմերը ահագին ֆանակութեամբ փափուկ ձիւն էին դիզել: Ահագին նեղութեամբ եւ տանջանքով հագիւ կարողացանք խեղճին ձիւնի տակից հանել կիսամեռ վիճակի մէջ:

Վերջապէս երեկոյեան դէմ հասնում ենք Զպուխու: Գիւղից մի քիչ դուրս նստում ենք. գիւղ մտնել վրտանգաւոր էր: Մեծ գիւղ էր սակաւաթիւ հայ տներով:

Ծանօթ մարդ ենք համարում հաց բերելու․ ամբողջ օրը բան չենք դրել բերաններնհս: Բոլոր ֆրդերը տանիքների վրայ զբաղուած են ոչխարներով․ Խոտ են ձգել ձիւնի վրայ, «խեծոց» են արել եւ արածեցնում են ոչխարներին: Չմեռը այսպէս են կերակրում ոչխարներին՝ առաւօտ եւ երեկոյ դուրս տանելով եւ ձիւնի վրայ խոտ ցանելով․ թէ՛ խոտը կը փափկանայ, թէ փոշին կը մաքրուի եւ թէ ոչխարը, թաց խոտ ուտելով, ջրի պէտք չի ունենայ:

Հաց ուտելուց յետոյ, երբ մութը արդէն կոխել էր, ուղեւորում ենք դէպի հաչան: Այսօր այնտեղ պիտի գիշերենք:

Հասնում ենք հաչան: Հագար ու մի զգուշութիւններ ձեռք առնելով մեզ ներս են տանում:

հաչանը ֆրդական մեծ գիւղ է․ այնտեղ է նստում հայտարանցի յայտնի բէյերէն Մահմատ Սատրգ բէյը: Հայերը, թէեւ թուով աւելի քան քան ֆրդերը, բայց Աբաղայի հայ գիւղերից ամենաուժեղը եւ ամենահարուստը հաչանի հայերն էին:

Ինձ տանում են Ռէս Ռաշոյի «օտա»ն: Գիւղական «օտա»ն ձմեռուայ համար ամենախորժելի վայրն է գիւղի մէջ, ուր բնակարանի ոչ մի յարմարութիւն չկայ, ուր գաղափար անգամ չկայ լուսամուտներով սենեակի մասին, ուր հայ եւ ֆիւրդ տները այնպէս են, ինչպէս նկարագրում է Քսենոֆոնը․— ձմեռը մուտը կտուրիցն է, լայն եւ երկար ձգուած սանդուխներով դէպի ներս․ կենդանիները, բացի ոչխարներից եւ այծերից, ձմեռը փակուած են մնում մինչեւ գարուն՝ ախոռի մէջ կերակրուելով, մանաւանդ ջրուելով մարդու մէջքով կրուած ջրով:

«Օտա»ն կենդանիների ախոռի մէջ, մեծ մասամբ վերի գլուխը, յանախ նիշդ մէջտեղը, բարձր սաֆուի նման մի տեղ է, ուր օջախ կայ եւ բարձր — չորս կողմից — նըստելու տեղ: «Օտա»ն հանելի էր իր տափութեամբ ոչ թէ ողորմելի օջախի, այլ անասունների արտաշնչութեան շրնորհիւ:

«Օտա»յի մեծութիւնը մեծ մասամբ կախուած է տան տիրոջ հարստութիւնից: Երբ շատ հարուստ է, այսինքն՝ ունի բազմաթիւ եզներ, տաւար եւ գովէշ, գովն էլ կը լինի ընդարձակ եւ մեծ:

հաչանցի Ռէս Ռաշոյի տունը ինձ յիշեցրեց Բաֆֆիի «խեք»ի տանուտէր հաչոյի տունը: Ինչպէս Ջափարն էր ասում, նա ունէր 250–300 կապ գովէշ, եզներ, կովեր եւ այլն․ ունէր ե՛ւ 1000ից աւելի ոչխար: Այս հարստութիւնը ինձ շատ զարմացրեց, որովհետեւ մենք միշտ լսել ու կարդացել էինք միայն կողոպտուած, թալանուած եւ աղֆատ Հայաստանի մասին, իսկ տանուտէր հաչոյի տունը անցած գնացած էր համարում:

Ռէս Ռաշոյի տունը հարուստ էր ե՛ւ հիւրասիրութեամբ, մանաւանդ հայրենասիրութեամբ: Շրջանի քիչ հայ տներիցն առաջինն էր, որ մեծ գործին օգնում էր ազգասիրաբար:

Աբաղայով անցնող, գաղտնի եւ յայտնի յեղափոխական խմբերի, սուրհանդակների, ինչպէս եւ սահման անցնող կամ դարձող բազմաթիւ գաղթականների հացն ու կերակուրը հաչանի սահմանում հոգացում էր Ռէս Ռաշոյի տնից:

Ռէս Ռաշոյի օտայում մեզ հիւրասիրեցին բուլղուր փլաւով, հաւով, մածնով, կարագով, պանիրով եւ լաւներմակ հացով․․․

Սեղանը նոր էին հաւաքել, երբ յանկարծ լուր եկաւ, թէ ֆրդերը գալիս են մեր «օտա»ն: Իսկոյն ինձ տեղափոխեցին «Բրախոլամ»ի տունը, որ մի աղֆատ խրճիթ էր եւ շատ էլ ցուրտ:

Մոռացել եմ յիշել Բրախոլամի եւ մի այլ «շնորհի» մասին: Նա իր այդ հասակով երկրորդ կին էր առել, երբ առաջինը դեռ կենդանի էր: Երկրորդ կնոջից ունէր երեք մանչ, որոնց մասին հպարտութեամբ ասում էր․ «Ազ բարէ Սերոր, Քերոր, Մերոպ․— Ես Սերորի, Քերորի եւ Մերոպի հայրն եմ․․․»: Աւելի զարմանալին այն էր, որ երկու կիներն էլ ապրում էին միեւնոյն յարկի տակ:

Զգիտեմ, այս կրկնակի ամուսնութեան, թէ այլ պատճառով «Բրախոլամ»ը բաժանուած էր մեծ որդիներից՝ Գրիգորից եւ Կնեագից, որոնք ամուսնացած էին եւ որոնց հետ էր ապրում նաեւ իրանց մայրը: Տան պակասութիւնն էր, թէ մի այլ բան, այս երկու բաժանուած եւ հակընդդէմ ընտանիքները ապրում էին միեւնոյն բնակարանում:

Իսկոյն «անկողին» են շինում մեզ համար: Անկողին եմ ասում չակերտելով, որովհետեւ դա բաղկացած էր ներքնակի տեղ մի թաղիքից, վերմակի տեղ՝ նոյնպէս թաղիքից, իսկ բարձի տեղ՝ մի խոտով լեցուած գունդից...

Առհասարակ վասպուրականի գիւղացիք այլ տեսակի անկողնի մասին գաղափար չունէին: Այս չի էլ կարելի բացատրել աղփատութեամբ միայն, որովհետեւ ուրիշ անգամ հէնց Աբաղայում եղել եմ հարուստ տների մէջ, որոնք նոյն կերպ են եղել համարեա: Համարեա եմ ասում, որովհետեւ վերմակ թաղիքի տեղ այդպէս հարուստ տներում լինում է երկար թելերով *փրջոտ*, ինչպէս իրենք են ասում, ջուլ (կապերտ) վերմակներ: Այսպէս են եւ քրդերի տները: Բացառութիւն են կազմում միայն ազաների տները, ուր քաղաքի անկողինը մտած է արդէն:

Միւս առաւօտ շատ վաղ քանապարհում եմք դէպի Բերկրի: «Բրախոյամբ» այլեւս չի գալիս մեզ հետ. հիւանդ է. խոստանում է քանի մը օրից յետոյ ապրանքներով գալ ուղղակի քաղաք:

Առաջնորդում են Ջաֆարը, Կնեազը, Բերկրիի փոսի տղաները եւ մեզ Աբաղայից միացած նոր հայերը, որոնք եկել էին այնտեղ զանազան գործերով: Մի երկուսը «Բրախոյամբ» տանն էին, թել էին բերել ներկել տալու համար. մէկը անցեալ տարի հաչան վարժապետ էր եղել, եկել էր իր վարձքը ստանալու. փոխարէնը իւր էին տուել տանելու:

Այսպէս բազմաթիւ անձերի հետ մենք կամաց-կամաց պտոյտներ անելով՝ առաջանում ենք դէպի Բերկրի. քանապարհը շարունակ օձապտոյտ զիկզակներ է անում ձեան պատճառով, մեծ մասամբ անցնում է փրդ գիւղերի միջով, որովհետեւ գիւղէ գիւղ եկողները քանապարհ էին շինել. իսկ դրսից քայլել անկարելի էր: Մենք էլ ստիպուած էինք բազմաթիւ գիւղեր մտնել, որ շատ վտանգաւոր էր եւ շատ էլ ժամանակ էր խլում: Առաւօտները եւ երեկոները գիւղերի մէջ՝ դուրսը շատ մարդ չէինք տեսնում ցրտի եւ բուքի երեսից, իսկ կէսօրներին, երբ արեւը սկսում էր օդը տաքացնել, գիւղացիք դուրս էին թափում եւ դիտում անցորդներին: Շատ անգամ կանգնեցնում էին ժամերով, հարց ու փորձ անում նորութիւնների մասին:

Քիւրդերի լրագիրները այս անցորդներն էին, որոնք անդադար անցնելով զանազան վայրերից՝ նորութիւններ էին պատմում:

Մեր Ջաֆարին էլ Աստուած տուել էր. թէ՛ շատախօս էր, թէ՛ շատ լուր գիտէր եւ թէ՛ մանաւանդ, շատ էր սիրում դատարկախօսութիւն անել: Երբ որեւէ գիւղ էինք հասնում, սկսում էր զգայացունց լուրեր պատմել եւ հրամայել, որ մենք անցնենք, որպէսզի ես փորձանքի չենք արկուեմ՝ քրդերէն չգիտնալուս համար: Բայց այդ վարպետութիւնը շատ անգամ ժամանակի ի գուր վատնումի պատճառ էր դառնում: Կնեազը բողոքում էր, որ լեզուից (ամէն աշիրէթ խօսակցութեան յատուկ եղանակ ունի) կարող են քանաչել, թէ նա կասկածելի է, «ղաչազ», փախըստական:

Որպէսզի քանապարհին աննկատ մնամ, շալակս տըւել էին նոր ներկուած թելի մի մեծ խուրճ, իսկ երբ Բերկրիին սկսեցինք մօտենալ, վարժապետի իւրի տիկը շալակըս տուին...

Արդէն սկսել էի ուժասպառ լինել: Կեանքիս մէջ առաջին անգամն էր, որ ձմեռն օրերին այսպէս բացառիկ պայմաններով՝ ոտով քանապարհ էի գնում:

Դրութիւնը անելի ծանր էր այն պատճառով, որ տակից ֆանէլաներ էի հագել եւ հագուստս էլ, բացի ժակտիցս, վրաս էր չմտելու համար: Եւ այդ եղաւ ինձ պատիժ. ամբողջ մարմինս հարուեց ու ուռեց: Իսկ ոտներիս հալը Աստուած հեռու տանի: Չարուիսի անսովոր էի. մանաւանդ չգիտէի նրա անտէր թելերը կապելու ձեւը. միշտ կապում էին ուրիշները, իսկ նրանք էլ, ամէն անգամ նորութիւն չփաշելու համար, այնքան խիստ էին հուպ տալիս, որ թելը մտել էր մսիս մէջ եւ կապոյտ փոս արել: Բերկրի մտնելու ժամանակ կատարեալ բնական կաղ էի, այն անտէր իւրի տիկն էլ կաթում էր եւ կամաց-կամաց ծծում մէջքս ի վար...

Բերկրիի մէջ պէտք է անցնէինք ուղիղ կառավարութեան տան առջեւից: Թէեւ այն ժամանակ Բերկրին *մուտուրլըղ* էր, բայց բաւականաչափ զօրք կար այնտեղ նստած, իբրեւ սահմանին մօտ տեղ:

Արեւ օր էր: Ասկարները՝ կառավարութեան եւ ի-

րենց գորանոցի բնակարանի դրան մօտ պատի տակ պար-
զած՝ գրոյց էին անում:

Երբ մեզ տեսան, սկսեցին կատակ անել: Մէկը, նը-
կատելով իմ մեծ բեռը, նրա վրայ դարսուած ներկուած
թելերը եւ, մանաւանդ, կաղ ոտս, խնդաց եւ ցոյց տուաւ
ընկերոջը, ասելով.— «*Նու թօփալ չարիֆա բակընըզ,
կեօր նա կատար իւք կայարըմըչ*»... (Այս կաղ մարդուն
նայեցէք, որքան բեռ է վերցրել):

Սիրտս կտրաւ փոքս ընկաւ: Ասացի՝ ահա պիտի մօ-
տենան ինձ: Բայց Ջափարը սկսեց իր կատակները, եւ ես
վերջին հիգն արի ու անցայ:

Համարեա շնչասպառ հասայ բերկրեցի մեր հին
սուրհանդակներից Սբգոյի տունը:

Սրգոն ինձ հանգստացնում էր, որ վտանգը անցաւ,
ոտնամաններս էր հանում եւ աղաջրով լուանում:

Նոր նկատեցի, որ ոտներիս տակը ի սպառ սեւացել
է եւ առհասարակ խիստ ուռել:

Սրգոն հիւրասիրում է մեզ թէյով: Պէտք է նկատել,
որ Պարսկաստան եւ Տանկաստան շաքարը խիստ աժան էր,
աւելի աժան, քան Կովկաս: Ուստի ամէն գիւղում միշտ
կարելի էր թէյ գտնել, մանաւանդ Բերկրիի նման կարե-
ւոր գիւղում:

Երեկոյեան դէմ ուղեւորում ենք դէպի մօտիկ գիւ-
ղը, որ կէս ժամ հազիւ հեռու է Բերկրիից: Այնտեղ, իր-
բեւ գուտ հայաբնակ գիւղ, աւելի ապահով է, քան հազիւ
մի քանի հայ տուն ունեցող եւ պաշտօնեաներով, ժան-
դարմներով եւ զինուորներով լեցուն քրդական Բերկրին:

Պատիկ գիւղի մէջ մեզ հիւրասիրում է գիւղի *խմբա-
պետ Սարգիսը* իր տան մէջ: Այս գիւղից սկսած արդէն
կազմակերպութիւններ կային գիւղերի մէջ:

Պատիկ գիւղի տղաներից այն գիշեր ես ծանօթացայ
համեմատաբար աչքի ընկնող բոլոր տղաների հետ, որոնք
մինչեւ վերջը մնացին գործի գլուխ եւ մեծ ծառայութիւն
մատուցին:

Սարգիսը, ինչպէս ասացի, այս գիւղի կազմակեր-
պութեան ներկայացուցիչն էր կամ, ինչպէս իրենք էին ա-
սում «*Գործաղիւրը*»: Կիսագրագէտ մի հասարակ գիւղացի
էր: Դեռ որեւէ անցեալ չունէր. զբաղւում էր փոխադրու-

թեան գործի ղեկավարութեամբ: Արդէն վերն ասացի, որ
Աբաղայի հայերը ապրանքները փոխադրում էին մինչեւ
Բերկրիի փոսը, մեծ մասամբ Պատիկ գիւղը: Այս գիւղը,
շնորհիւ իր գուտ հայ բնակչութեան եւ լեքան անմիջական
ստորուոր լինելուն, ունէր լաւ, փորձուած եւ հայրենասէր
երիտասարդութիւն, որ ապրանքները ամենայն ապահո-
վութեամբ պահում էր գիւղից դուրս շինուած շատ ապա-
հով եւ չոր պահարանների մէջ եւ մաս մաս փոխադրում
մինչեւ Թիմար... Սարգսի գործն էր հսկել փոխադրու-
թեան վրայ:

Արտաֆուտ, ինչպէս յետոյ տեսայ, եւ ներֆուտ
Սարգիսը համակրելի մէկը չէր: Կարծես աւելի շահասի-
րութեան եւ դիրքի համար էր (իսկ այդ դիրքը, շնորհիւ
կազմակերպութեան մեծ հեղինակութեան, աւելի մեծ էր.
քան ուէսի դերը) մօտեցել կազմակերպութեան: Սարգիսը
նոյն տարին էլ բանտարկուեց եւ երեք տարի Վանի բանտը
նստեց: Յետոյ, Ազատութեան տարիներին արդէն ուէս էր
դարձել: Շատ էին գանգատում, որ կառավարութեան
կողմն անցած՝ գիւղացիներին կողոպտում է, մանաւանդ
պատերազմի տարիներին:

Թուս-թրքական պատերազմին եկաւ քաղաք՝ Վան և
իր ծառայութիւնը առաջարկեց, ասելով, թէ ինքը լաւ
քրդեր ունի, կարող է նախկին նամբել Սուրէնին (Դրոյին):
Մի նամակ գրեցի, տուի մի քանի ոսկի էլ սկզբնական
ծախսերի համար: Այն գնալն էր, որ գնաց: Զգիտեմ նա-
մակս նամբեց թէ ոչ, բայց ինքը սպաննուեց կոտորածնե-
րի ժամանակ:

Ղուկաս կամ *Կակոս*.— Սա Պատիկ գիւղի ամենա-
շատ կրթութիւն ունեցող երիտասարդ գիւղացին էր, կար-
ծեմ հարուստի որդի էր, գիւղի «*քեաթիպ*»ն էր, ինչպէս
եւ մեր գործաղի մարմնի գրագիրը: Վատ մարդ չէր, սի-
րում էր կարգալ, մանաւանդ վիճել: Աշխատել է 1903-14
թուին: Պատերազմի ամիսները, իբրեւ փախստական, Վան
էր: Մասնակցել է ապրիլեան կռիւներին: Կռիւներից վերջ
Մոկացի Օհանէսի, Շատախցի Աւոյի եւ ընկերների հետ
մեկնեց իրենց գաւառը եւ սպաննուեց ընկերների հետ խա-
չանի մօտ անհաւասար կռուում:

Յարութիւնը Պատիկ գիւղի մեր հին եւ լաւ գիւնուոր

սուրհանդակներից մէկն էր, որ շատ անգամ Վանից մինչեւ Վանքն էր գնում եւ Վանքից՝ Վան: Բոլոր կարեւոր խմբերը եւ ընկերները, ինչպէս եւ մեծ կապոցներով ապրանքները պահող եւ փոխադրողը ինքն էր Գէորգի հետ: Սրան եւ Գէորգին դեռ կը հանդիպինք մեր պատմութեան ընթացքում:

Գէորգը մեր հին զինուորներից մէկն էր, մասնակցած էր հանասորի արշաւանքին եւ Վանքից անցնող շատ զինատար խմբերին, իբրեւ զինուոր-սուրհանդակ: Պատիկ գիւղի մեր կազմակերպութեան ոգին էր, ամենամեծն էր աշխատողը: Աղֆատ մարդ էր. իր ընտանիքը պահում էր ջրաղացպանութեամբ. սրա մօտ մի կազմակերպական մօսին հրացան կար հանասորի գէնքերից:

Պատիկ գիւղում ամբողջ գիշերը չֆնեցինք: Երիտասարդները հաւաքուած՝ խօսում, վիհում, նորութիւններ էին հարցնում, մանաւանդ իրենք էին պատմում հին դէպքերի, դէմքերի եւ կռիւների մասին: Կարդում էին, ի մեծ զարմանս իմ, Նարեկացի: Կարծեմ, մեծ պասն էր: Իմ հարցին, թէ նոր գրքեր չունէ՞ք, գնացին բերին «Դրօշակ»ի եւ «Հայրենիք»ի ամբողջ հրատարակութիւնները, հին եւ նոր «Դրօշակ»ներ եւ զանազան արտասահմանեան թերթեր: Իբրեւ սուրհանդակային վայրի գիւղ, ամէն անգամ իրենց բաժին գիրքն ու թերթը վերցնում էին եւ ապա փախում Վան: Նոր գիրքերը ամբողջապէս կարդացել էին, այժմ նորից դարձել էին Նարեկին, որը չգիտեմ հասկանում էին, թէ ոչ, բայց շատ աշխոյժով կարդում էր Ղուկասը, եւ միւսները մեծ ուշադրութեամբ լսում էին:

Միւս օրը առաւօտեան մեկնեցինք Պատիկ գիւղից, Կնեազը այնտեղ թողնելով: Ինձ ուղեկցելու եմ գալիս Պրստիկ գիւղացի Յարութիւնը, Գէորգը եւ Անճաւրի Մելոն:

Մելոն Բերկրիի շրջանի մեր ամենահին, նուիրուած եւ երախտաւոր գործիչն էր: 1894էն սկսած, կատարել է սուրհանդակութիւն, զինուորութիւն, փոխադրութիւն եւ ամէն բան: Եղել է Վազգէնի այն խմբին մէջ, որ հանասորի կռուից առաջ Սալմաստից մեկնել էր Վան, ուր եղել է եւ Անդրանիկը: Մի քանի անգամ փախստական է եղել, անցել է Պարսկաստան, միաժամանակ ապրել է Բերկրի: Նրա տան մէջ բռնուել է 1902ին Սարգիս Օհանջանեանը:

այդ առթիւ էլ փախստական է դարձել, բայց նորից կարողացել է վերադառնալ եւ գործը շարունակել:

Մելոյի տունը Դաշնակցութեան խանն է եղել: Դաշնակցական բոլոր հայ, ֆիւրդ, եզիտի եւ այլ սուրհանդակներն այդ գծով անցնելիս՝ կազմակերպական թէ անձնական գործով՝ պիտի հիւրընկալուէին Մելոյի տանը: Եւ այդ էր պատահաւոր, որ չնայած նրա եւ եղբայրների չափազանց աշխատասիրութեան, երբեք չկարողացան փոքրի շատէ տանելի կեանք ունենալ, նոյն իսկ «Հիւրիաթ»ի ժամանակ:

Վերջին անգամ «Պարապ»ը (այսպէս էր Մելոյի կեղծ անունը), ռուս-թրքական պատերազմի ժամանակ նամակ տանելով Դրոյի բանակը, Վանի ողբերգական վիճակի մասին, մնացել էր այնտեղ եւ կամաւորների հետ առաջին անգամ Վան էր մտել: Մելոյի տարիների բեռան տակ մնշուած և կորացած մէջքն ու նահատակի բարի դէմքը պարզուել էր: Նա հպարտ էր. — «Պարոն, ես իմ պարտքը կատարեցի, մնացածը ձեր մարիֆաթին կը թողում», — ասաց եւ կրկին նանապարհուեց իր աւերակ տունը շինելու համար: Այնուհետեւ չիմացայ, թէ ինչ եղաւ մեր սիրելի Մելոն:

**

Բերկրիի դաշտին մէջ, մեր ժապարհնածու նանապարհը անդադար գիկզակներ էր անում բազմաթիւ ֆիւրդ գիւղերի միջեւ: Օրը մեր բախտից շատ ցուրտ էր, եւ ֆիչ մարդու էինք հանդիպում: Բայց քանի առաջանում էինք, մարդիկ այնքան շատանում էին: Ջափարը յետոյ բացատրեց, որ Բանդի-Մահուի կամուրջով Արմէշի ֆարանային նանապարհը միանում է Բերկրիի նանապարհի հետ դէպի Վան գնալու համար: Այստեղով էր անցնում ե՛ւ ձիաւոր փոստը:

Իբօք, շուտով մենք տեսանք ձիաւորների հետքեր:

Ձիերի երթելակը նանապարհի նեղ ժապարհէն վրայ խորունկ փոս էր շինել, շատ անգամ կէս արշինից խորունկ, իսկ այդ ծակերի կողմը սառել ֆարի պէս կարծրացել էր: Ձիերը իրար յետեւից զգուշութեամբ ֆայլում էին,

նախորոշուած ծակերի մէջ դնելով եւ հանելով իրենց ոտ-
ֆերը:

Իմ ուշադրութիւնը գրաւեց մի այլ հանգամանք:
Մեր ժապաւիհնաձեւ ֆանապարհի վրայ տեղ-տեղ, 50-60
արշին երկարութեամբ, տնկուած էին երկար եղէզներ,
կարծես չարաննի երեխաների խաղ լինէր: Բայց, երբ շատ
կրկնուեց, Ջափարի ամենագիտութեան դիմեցի բացատ-
րութիւն ստանալու համար: Շատ պարզ բան է եղել: Քա-
մին եւ բուբը միշտ լեցնում են ֆանապարհը, ժապաւէնի
հետքը կորչում է եւ ֆանապարհորդները խրոււմ են խո-
րունկ ձիւների մէջ: Մարդիկ հնարագիտութիւն են արել,
ֆանապարհների երկարութեամբ եղէզ են տնկել հետքը
չկորցնելու համար:

Բայց հեռուից ահա, Շուաֆարի կողմից, մի մեծ
խումբ ֆրդեր են գալիս՝ ոտից ցգուլիս զինուած: Եւ աւելի
տարօրինակն այն է, որ ամէնքը ինչ որ մի բանի մէջ նըս-
տած են կարծես:

Յարութիւնը եւ Գէորգը ինձ նախագգուշացնում են,
որ, երբ խումբը մօտենայ, իրենք պիտի ելնեն ֆանապար-
հից և խոնարհ գլուխ տան անցորդներին: Ես էլ պէտք է
հետեւիմ նրանց օրինակին: Չար չկայ, հրամանը պիտի
կատարուի: Քրդերը մօտենում են մեզ: Երեւի այսպիսի
շֆախմբեր յաճախ են անցել եւ մեզ պէս «րայեաթ»ները
ֆանապարհից ելել եւ խոնարհութիւն են արել, որովհետեւ
ֆանապարհի եզրերին ես յետոյ նկատեցի, որ լայն ու խո-
րունկ փոսեր էին գոյացել, ուր ապաւինեցինք խոնարհու-
թիւն անելու եւ շֆախմբին ֆամբայ տալու համար:

Երբ խումբը անցաւ, ես նոր գլխի ընկայ, որ մար-
դիկ նստած էին նեղ ու երկար սահնակների մէջ, որոնց
նմանը իմ պատանեկութեան ժամանակ ես էլ ունէի: Տա-
նում էինք մեր ֆաղաֆի գլխիվայր փողոցներով սահեցնե-
լու եւ գուարնանալու:

Բայց կարծեմ Տանկաստանի ֆրդական սահնակները
գուարնալիքներ չէին: Ջափարը բացատրում է, որ ֆիւրդ
աղաները ձմեռ ժամանակ, երբ ձիու ոտը չի կարող գե-
տին կոխել, ֆանապարհորդում են «խգալ»ներով (սահ-
նակ), որոնք նեղ են, ինչպէս ֆանապարհը, եւ երկար, որ-
քան կարող է մարդ մէջը նստել եւ ոտները մեկնել: Քիւրդ

բէյերն ու աղաները փառաւորապէս նստում են, անկող-
նում փաթաթուած, այդ սահնակների մէջ, իսկ բազմա-
թիւ մարդիկ, նայած ֆանապարհի թեֆուքեան եւ հար-
թութեան, լծում են ու ֆաշում: Այդ լծկանները մեծ մա-
սամբ լինում են մրիբայ հայերը կամ ֆիւրդերը:

Կեանքիս մէջ առաջին անգամն էի համարեա հան-
դիպում ֆիւրդ աղաների եւ, պէտք է ասել, նրանց ար-
տաֆինը, հագուստը, զէնքերը, սահնակները արտայայ-
տում էին այն բոլորը, ինչ որ ես նրանց մասին կարդացել
էի կամ լսել:

Յարութիւնը բացատրում է, որ այդ ժամանակները
մեռել է Շաւրցոց Ջափար աղային կինը: Ըստ Շարիաթի
օրէնքի, մեռած եղբօր կինը հասնում է միւս եղբօրը, որը
նրա հետ ամուսնանալով՝ տէր է դառնում եւ եղբօր ունե-
ցածին: Ջափար աղան այդպիսով դարձել է Շաւրցի աշի-
րաթի պետ: Քիւրդ աղաները եկել են գլուխ ողջի եւ միեւ-
նոյն ժամանակ շնորհաւորութեան:

Մենք շուտով պիտի հասնենք ձանիկ, բայց դեռ լոյս
է, իսկ լոյսով ձանիկ մտնել անհնարին է: Այնտեղ էլ միւ-
տըրլըզ է՝ կառավարութեան կեդրոն:

Յարութիւնը խորհուրդ է տալիս մտնել Տիրամէր-
Աստուածածին գիւղը: Տիրամէրը ուխտատեղի է՝ «Կայ-
ծերի» հերոսների շրջագայած վայրերից մէկը. ուզում եմ
տեսնել:

ձանապարհից շեղում ենք դէպի Տիրամէր: Արդէն
երեկոյեան դէմ է: Արեւը թեֆուել է դէպի վանայ ծովա-
կը: Սֆանչելի վերջալոյս է: Մեր դիմացը կանգնած է սի-
գապանձ Սիփանը ներմակ շղարշով: Բայց այնքան յոգ-
նած եմ, որ ոչ գեղեցկութիւն կարող եմ տեսնել եւ ոչ էլ
զգալ...

Շուտով հասնում ենք գիւղ: Յարութիւնը մեզ տա-
նում է իր ծանօթ բարեկամի տունը: Առաջին անգամ այդ-
տեղ արդէն տեսնում եւ զգում եմ համիտեան րէժիմի ա-
ւերմունքները: Ներս ենք մտնում տունը, ուր թոնիր կայ
եւ ուր ընտանիքի անդամները նստած են թոնրի շուրջ, ոտ-
ֆերը կախած թոնրի մէջ եւ վրան ձգուած ինչ որ ջուլ...

Տանտիկիւնը մի այրի պառաւ է իր երկու հարսնե-
րով: Յարութիւնը պատմում է, որ պառաւի երեք որդիներ

րը սպաննուել են 1896ի կոտրածների ատեն: Հարսները բազմաթիւ մանր տղաներով, մնացել են այրի եւ պառաւի հետ քարշ են տալիս իրենց թշուառ գոյութիւնը: Տունը բաւական մաքուր էր. բայց ի սպառ գուրկ գիւղին յատուկ կահ-կարասիներէց:

Ինձ ներկայացնում են իբրեւ ապաղեցի հայ: Չայն չեմ հանում, որ լեզուիցս բան չհասկնան: Բայց մի քանի տարօրինակութիւններս ինձ մատնում են: Չեմ կարող, աւելի միշտ, չեմ ուզում ուռած եւ խոնաւ ոտներս թոնրի մէջ կախել, թէեւ ամէնքը կախել էին արդէն: Շուտով կերակուր բերին, որը «վրոտ» էր՝ ցորենը եփուած ջրի մէջ, աղով, ուրիշ ոչինչ: Սոսկալի սեւ գոյնով մի սարսափելի բան: Մի երկու դգալ փորձեցի, բայց չկարողացայ: Հացն էլ գցեցի, որ գարիի եւ տարիկանի խառնուրդ էր. ուտել չէր լինում: Կամաց յետ քաշուեցի եւ ինձ համար առանձնացած՝ մտածում էի Յարութիւնի պատմածների մասին և ոտներիս ցաւից ու տխուր խոհերից մէկ-մէկ հառաչում: Պառաւը իսկոյն կռահեց, որ ես գիւղական չեմ:

— Վալլահ, սա խէն գիւղական չէ, կաչաղ է...

Կաչաղ ասում են վանի հայերը փախստական յեղափոխականներին: Յարութիւնը, մանաւանդ Ջափարը, որ տեղի եւ անտեղի, կոտորուած դգալի պէս, միջամտում էր խօսքերին, պառաւին հանգստացրին: Բայց նա պնդեց իր ասածի վրայ եւ սկսեց ինձ պատմել իր դարդերը, նկարագրել իրենց գիւղի կոտորածը, որը կատարուել էր Շաւրցի աշիրաթի ձեռքով եւ շատ անգթօրէն...

Զարմանալի են մականագրի խոսքերը: Այս անգամ էլ, 1914ի ռուս-թրքական պատերազմին, Տիրամէրը եղաւ առաջին գոհը: Ջէվտէթը ահա ինչ է գրում իր իտալական հիւպատոսին ուղղուած նամակում. «Թիմարէն յառաջացող մեր ջոկատները ոչնչացնելէ ետքը Տիրամէրի մէջ հաւաքուած ապստամբները՝ Ալիւր գիւղ հասան»: Շաւրցի ֆիւրդերը եւ կառավարութեան ոստիկանները յարձակուել են գիւղի վրայ, որը քիչ պաշտպանուելուց յետոյ անձնատուր է եղել. սկսել են ջարդել եւ չեն խնայել ոչ երեխայ եւ ոչ ծեր, ոչ կին եւ ոչ երիտասարդ: Քահանային նահատակել են անասելի տանջանքներով:

Բայց չեմ կարող այստեղ սրտի առանձին յուզմունք-

նով չյիշել այստեղի ֆահանայի եւ շատ ուրիշ վանահայրերի մի բարձր հոգեւոր ազգային մտահոգութիւնը: Տիրամէրի ֆահանան, գիտակցելով, որ կոտորածը անխուսափելի է, հասկանալով, որ ոչինչ չեն խնայելու, մանաւանդ զգալով, որ բարբարոսները պէտք է ոչնչացնեն ոչ միայն իրենց նիւթական կեանքը, այլեւ մշակութային՝ վառելով եկեղեցիները ու եկեղեցական սրբութիւնները, կոզոպտելով եւ հրոյ մարակ դարձնելով մագաղաթեայ թանկագին ձեռագիրները, պահարանի մէջ պահում է եկեղեցական սպասները եւ ձեռագրերը: Այդ դեռ բոլորը չէ: Պատերի վրայ, թղթի կտորների վրայ, մի քանի տեղով գրուած ձգում է ձեռագրերի տեղը, «որ դրսից Աստուծոյ օգնութեամբ այց եկողները գտնեն եկեղեցւոյ սրբութիւնները, զորս պահած է անհաւատներու ձեռքէն»...

Հայի ֆաղափարութիւնը այստեղ է: Մեռնելու ժամանակ էլ, երբ գիտէ, որ ամբողջ աշխարհը տակնուվերայ պիտի լինի, նա փրկում է իր ձեռագիրները, որ ապագայ սերունդը չզրկուի հին ֆաղափարութեան արդիւններից...

Մութը արդէն կոխելու վրայ է: Պէտք է շտապել: Շնորհակալութիւն եմ յայտնում պառաւին իր հիւրասիրութեան համար, եւ մեկնում եմ դէպի ձանիկ:

Ձանիկում այն ժամանակ կանոնաւոր կազմակերպութիւն եւ գործադիր մարմին կար: Շատ զգուշութեամբ մեզ ներս տարան, իսկոյն հիւրասիրեցին տաք թէյով եւ կաթով: Շուտով գիւղի ամբողջ երիտասարդութիւնը թափուեց մեր գլխին: Ձանիկ կառավարութեան կեդրոնատեղ լինելով, յեղափոխական գործիչները կամ խմբերն այդ ժամանակները ներս չէին մտնում: Իմ մուտքը բացառութիւն էր. ամէնքը ուրախացել էին եւ եկել դաչաղ տեսնելու:

Ձանիկ մնալ վտանգաւոր էր: Պէտք է անցնէինք ծովափը գտնուող Նորշէն գիւղը: Այլ ելք չկար: Պէտք էր ձանիկով անցնէինք, որովհետեւ ձմեռնային նանապարհը այդ էր: Գիշերով հագար ու մի նեղութեամբ, ընկնելով ու վեր կենալով, հագիւ հասանք գիւղ: Մեզ նախ առաջնորդեցին մի ախոռ, ապա լուր եկաւ, որ գիւղի մէջ խումբ կար. պէտք էր գնալ նոցա մօտ: Հագիւ էինք չարութիւններ-

նիս հանել, մէկ էլ հազար նեղութեամբ պիտի հազնուէինք եւ խումբի մօտ գնայինք:

Խումբը Կարնկանի Սորփ գիւղացի Գուրգէնի խումբն էր. զինուորները մեծ մասամբ մշեցի եւ ախլաքցի էին:

Սասունի ապստամբութեան անյաջողութեամբ Մշի շրջանի զինուորները եւ ամբողջ փախստականութիւնը անցել էին վասպուրական: Մի քանի հարիւր հոգի արդէն անցել էին Պարսկաստան, բայց մեծ թուով զինուորներ մնացել էին վանի շրջանում, տեղական խմբերի մէջ մտնելով:

Ջափարը, ի հարկէ, ծանօթ էր թէ՛ խմբին եւ թէ՛ խմբապետին: Իսկոյն թուա վերին նակատը խմբապետի մօտ, մտաւ տաք թոնրի վրայ ձգուած վերմակի տակ եւ սկսեց իրական ու մտացածին նորութիւններ պատմել Պարսկաստանից եւ առհասարակ արտասահմանից:

Մեր դրած պայմանը իմ ինքնութիւնս ծածկելու մասին, ի հարկէ, շարունակուում էր նոյնիսկ հայկական գաւառում, Թիմարում, մեր թռուցիկ խումբի մօտ եւս: Այդ Ջափարի հրամանն էր, պիտի ենթարկուէի: Եւ ես լուռ ու մունջ նստած, վարը, դրան տակ, չոր գետնի վըրայ, չէի էլ մտածում շարուխներս հանելու մասին. իսկ Ջափարը սուսիկ-փուսիկ նաշում էր խումբի հետ, թոնրի վերի գլուխը:

Վերջապէս, չգիտեմ, ով հասկացրեց խմբապետին, որ ես էլ «պարոն» եմ, Գուրգէնը մօտեցաւ ինձ եւ հազար ներողութեամբ ինձ էլ վեր հրաւիրեց:

Գուրգէնէն խնդրում եմ, որ ինձ շուտ ուղարկի քաղաք: Ճանապարհներին այնքան էի տառապել, էլ ոյժ չէր մնացել Թիմարի գիւղերում դեգերելու: Եւ, պէտք է խոստովանել, Նոր Շէնից սկսած տպաւորութիւններս վատ էին: Կարծես ուժով էր տարւում յեղափոխական աշխատանքը այս շրջանում: Մի տեսակ զսպուած դժգոհութիւն կար գիւղացւոց դէմքերի վրայ, իսկ աւելի շատ անտարբեր վերաբերմունք: Որեւէ հետաքրքրութիւն, որեւէ հարցասիրութիւն եւ չտեսայ Նոր Շէնի եւ նրա կից մի քանի գիւղերում, որոնց անունները մոռացել եմ արդէն:

Միւս օրը գիշերով նանապարհում ենք դէպի Ալիւր: Գուրգէնն ինձ պատիւ է անում խումբով նամբելու: Թէեւ իմ ծպտուած վիճակով եւ ձմեռուայ դժուարութիւն-

ներին աւելի յարմար էր ցերեկուայ նանապարհորդութիւնը, բայց ասում են, որ գիւղերը վխտում են հարկահանները, և կարող եմ պատահականութեան զոհ երթալ: Միշտ ենթարկուում եմ, ինչպէս «տեղական պայմաններին անծանօթ» նորեկները:

Բայց իմ կոյր բախտից այդ գիշեր բուք ու բորան եկաւ, եւ մենք հանդերձ խմբով Թիմարի դաշտային գաւառում մեր նանապարհը կորցրինք: Երկար ու բարակ նոյն կէտի շուրջ պտոյտներ անելով, լուսաբացին հասանք դարձեալ նոյն գիւղը (կարծեմ Ատէն), որտեղից գիշերը հանգստանալուց վերջը մեկնել էինք:

Միւս երեկոյեան, վերջապէս, հասնում ենք Ալիւր, որ Թիմարի կեդրոնական ամենամեծ գիւղն է, աւելի քան 400 տուն գուտ հայ ազգաբնակչութեամբ: Այնտեղ էր Թիմարի մեր կազմակերպութեան կեդրոնը: Թիմարը այն ժամանակ ենթակումիտէ էր իր բոլոր գիւղերով: Ենթակումիտէի բոլոր անդամները, եթէ չեմ սխալուում, ալիւրցի էին, — Պ. Սարգիս, Պ. Վարդան, (այսպէս էին նրանց ասում, անուան հետ Պարոն) երկու երիտասարդ ընկերներ՝ Արիստոյում, Տիգրան եւ ուրիշներ:

Ալիւրը կրթուած գիւղ է եղել միշտ. ունէր հարուստ ընդարձակ հողեր եւ այգիներ, ուրախ, անհոգ ու քեֆչի ժողովուրդ եւ առատ գինի: Վանեցիք ալիւրցու մասին առակի նման ասում են. — «Ալիւրցիք, քաղաք գալուց, իրենց կանանց հետ միասին մէյիսանէ (գինետուն) կ'երթան խմելու»:

Ունին լաւ դպրոցներ, միշտ յարատեւող, որոնք կը պահուին գիւղի միջոցներով: Բայց Ալիւրը կրթող եւ նրան շէնցնողը եղել է պանդխտութիւնը: Ալիւրցիք արհեստով յայտնի խոհարարներ են. ինչպէս իրենք են ասում, «աչ-չի»:

Կ. Պոլսոյ մէջ Սուլթանի պալատից սկսած, նախարարների, դեսպանատների, զանազան բէյերի եւ փաշաների, ինչպէս եւ հայ մեծատունների խոհարարները ալիւրցիք են: Այդ է պատճառը, որ ալիւրցիք հազնուում են կոկ, եւ նաշակով, մանաւանդ խօսում են Պոլսոյ կիրթ թուրքերէն եւ հայերէն լեզուով:

Մեծ դիւանագէտներ են: Խաղաղ ժամանակը իրենց

նկուն խելոյ ու լեզուով, մանաւանդ առատ գինիով, կարողանում են վանի կուսակալների ու պաշտօնէութեան բարի ուշադրութիւնը և հովանաւորութիւնը գրաւել: Բայց ամէն անգամ «պասպին կարկանդակ չի ուտում»: Ալիւրցիք 1915ին, վանի ինֆնապաշտպանութեան ժամանակ, զոհ գնացին իրենց այդ դիւանագիտութեան:

Բայց դառնանք մեր ճանապարհորդութեան: Մենք պէտք է մտնէինք Ալիւր՝ անպայման, որովհետեւ Թիմարի շրջանի շրջիկ լիագործ, ինչպէս անուանում էին այդ ժամանակ պրոպականտիստ կազմակերպիչներին, Հաջի Կարապետը այնտեղ էր: Առանց Հաջիի կարգադրութեան թոչուն իսկ չէր թոչի Թիմարի վրայով: Ամէնքը պիտի հանդիպէին նրան, նա պէտք էր ամէնքին ճամբու դնէր:

Հաջու մասին Ջաֆարը ինձ առասպելներ էր պատմել արդէն: Նկարագրել էր խիստ եւ բռնակալ հակումներով մէկը: Պատմել էր, որ ձեռքը մի ձեռնափայտ կայ, որի վրայ գրուած է. — «Գաւազան Արդարութեան», եւ որ Հաջիի Թիմար գալուց ի վեր գողութիւն, աւազակութիւն, անարդարութիւն եւ զուլում չեն կարողացել անել գիւղերի մէջ հայ տղուկները, նոյնիսկ թուրք պաշտօնեաները:

Իմ Թիմար հասած օրերը Հաջիի փառքը իր գագաթնակէտին էր հասել: Այդ օրերը պատահել էր մի զինուած ընդհարում վանեցի արմենականների հետ:

Բանը նրանումն է, որ Ալիւրի մէջ եղել են եւ արմենականներ (կարծեմ առաջ ամբողջ գիւղը արմենական է եղել): Վանի արմենական կոմիտէն զինուած խումբ է ուղարկում նրանց կազմակերպելու: Հաջին, հակառակ լինելով մի գիւղում երկու կուսակցութեան գոյութեան, հրամայել է չմտնել գիւղ: Արմենականները, ի հարկէ, կարելուորութիւն չեն տուել եւ փորձել են գիւղը մտնել: Հաջին հրամայել է իր զինուորներին, որոնց մէջ կային եւ մշեցիներ, (որոնք չէին հանդուրժի, որ իրենց խմբապետի հրամանը չլսուի), զինու ուժով արգիլել արմենականների մուտքը: Փոխադարձ հրացանաձգութիւն է լինում:

Սպաննում է արմենականներից մի կամ երկու հոգի: Վերջինները տեղի են տալիս, եւ դրանով հարցը փակուում է:

Հարցը փակուում է, ի հարկէ, յօգուտ Հաջիի, որի

հոշակը առանց այդ էլ շատ էր տարածուել շրջանի գիւղերում, ուր ոչ միայն յեղափոխական կազմակերպական, այլեւ առումին՝ դատական, նոյնիսկ ամուսնական անհամաձայնութեան, հասի չհասի հարցերի լուծումը իր վրայ էր վերցրել Հաջին: Արմենականների դէմ եղած յաղթանակը աւելի անյադարելի էր դարձրել Հաջիին:

Պէտք է խոստովանիմ, որ այս բոլոր պատմութիւնները ազդել էին եւ իմ վրայ: Սարսափի պէս մի բան էր ընկել սիրտս: Վախեցնում էի, որ մի անգոյշ խօսք կամ կամ բան ասէի եւ ես էլ արժանանայի «գաւազանի արդարութեան» շնորհիֆին: Այնպէս որ առանձին ճիգ էի անում ինձ գոյշ պահելու:

Ալիւր մտանք կէս գիշերին: Խումբը մնաց մօտակայ գիւղը: Երկու գիւղացի ինձ եւ Ջաֆարին առաջնորդեցին մի մեծ ցած տուն: Կարծում էին, թէ Հաջիի կեցած տունը պիտի լինի: Սխալուեցին սակայն. ուրիշ պատահական տուն էր:

Մեզ իսկոյն շրջապատեցին գիւղի երիտասարդները, որոնք այդ գիշեր Հաջիի հետ ֆէֆի մէջ էին եւ չէին ֆնել դեռ: Նստած անուշ գրոյց էին անում, երբ յանկարծ փսփսուկ ընկաւ, թէ «Պ. Հաջին կու գայ»: Ամէնքը տեղերից վեր թռան, նրանց շարքին եւ Ջաֆարը:

Նոր նկատեցի, որ այդքան խրոխտացող Ջաֆարը խիստ վախեցնում էր Հաջիից: Ես էլ թռայ տեղիցս:

Դռնից ներս մտաւ մի ֆանի մարդկանցով շրջապատուած կարճահասակ, ջղոտ ու եռանդուն շարժումներով մի մարդ, 50-55 տարեկանի երեւոյթով: Դա էր, — Եղեսիա — Ուրֆացի Հաջի Կարապետը: Ես յետոյ մօտից ծանօթացայ այս մարդու հետ. նա մոլեռանդ հաւատացեալ էր յեղափոխութեան — Դաշնակցութեան: Նոյնքան էլ մոլեռանդ հայ էր: Եթէ կայ աշխարհիս մէջ «իսկական հայ մարդ» մէկը մեր Հաջին էր:

Նա իր բոլոր խոշոր ու մանր առաւելութիւնների ու թերութիւնների մէջ ունէր մի մեծ գիծ, անկեղծ ու անշահաւէր էր գործի հանդէպ:

Հաջիին, ի հարկէ, ասել էին իմ գալու մասին: Մօտեցաւ եւ հարցրեց.

— Ո՞վ էք, ախպար...

— Կովկասից կու գամ, Վան պիտի երթամ...

— Յանձնարարական-վկայական կամ նամակ ունի՞ք...

Ամբողջ մանապարհին, շնորհիւ Զափարի անսահման հեղինակութեան, մանաւանդ փշոցներին, ոչ ոք չէր վկայական չէր ուզել: Կարծեմ Վանքից նամակ էին տուել, ցոյց տուի...

— Իսկոյն պիտի մեկնիք: Հոստեղ վտանգաւոր է եւ աչքի վարձուած, շնորհիւ արմենականների ըրած խայտառակութեանց:

Թէեւ ամբողջ գիշեր քայլել էինք, խիստ յոգնած, մանաւանդ անհուն, բայց պէտք է համակերպէինք: Մեզ տուին սուրհանդակներ եւ ուղարկեցին դէպի Մարմիտ գիւղ, քաղաքից (Վանից) մէկ կամ մէկուկէս ժամ հեռաւորութեան վրայ:

Դեռ լոյսը չբացուած հասնում ենք Մարմիտ: Տափանալու համար մեզ առաջնորդում են մի գոմ: Ուտելու համար հաց ու պանիր են տալիս, իսկ մինչ այդ պատրաստութիւն են տեսնում մեզ համբու դնելու: Ինձ հետ Զափարը եւ Պատիկ գիւղացի Գէորգը, Խանասորի գինուոր: Ալիւրից գրել էին, որ եկողը «պարոն» է, պէտք է զգուշութեամբ համբու դնել:

Մարմիտցիք հռանդ էին ցոյց տալիս ըստ ամենայնի Հաջիի կարգադրութիւնները կատարելու:

Դեռ չգիտէին, որ մեզանից որն է «պարոնը», կասկածը Պատիկ գիւղացի Գէորգի վրայ էր, որովհետեւ անլի լաւ էր հագնուած, քան ես եւ Զափարը: Ուստի նրան առաջարկում էին, որ հագուստները փոխէ, հները հագնի, աչքի չգարնուելու համար: Խեղճը համոզում էր, որ ինքը Պատիկ գիւղացի էր, բայց ոչ ոք չէր հաւատում...

Հարկ եղաւ համբ լեզուս բանալ, որ հաւատան լեզուիցս: Նոր կոտակներ, որ «պարոնը» ես եմ: Երեւի վրայի հագուստս, այդքան օրերի տառապանքը, ձիւնի վառերը այնպէս էին արել ինձ, որ վրաս ուշադրութիւն հրաւիրելու շնորհիւ չէր մնացել: Սրտիս մէջ ուրախ էի, որովհետեւ Վանքում երեսներս ու ձեռներս եփած թէյի ջրով շփելուց մեռել էի. միշտ վախենում էին, թէ պիտի նկատուեմ:

Այստեղ մեզ իբրեւ փորձ առաջնորդ տուին մարմիտ-

ցի մեր հին երիտասարդ գործիչ Յունանին, — Մնջիկ կեղծ անունով:

Մարմիտցի Յունանը — Մնջիկը մի խեղճ գիւղացի էր, կարծեմ սակաւահող եւ քիչ երկրագործութեամբ պարպող: Զգիտեմ նա արհեստով բրուտ-կաւագործ էր թէ ոչ. բայց գիտեմ, որ Վանի շուկայում եւ թաղերում իր խղճուկ իշով բեռքած կիրաշէնի (մի գիւղ Թիմարում, ուր ամանեղէն են պատրաստում կաւից) ամաններ էր ծախում: Այդ արհեստը մեծապէս օգնում էր նրա յեղափոխական գործունէութեան: Յունանը Ապաղայ-Բերկրի-Թիմար սուրհանդակային փոխադրութեան վերջին փոստն էր:

Յեղափոխական նամակներով ու գրականութեամբ ծանրաբեռնուած, իր ամանների հետ, Յունանի էջը կանգ էր առնում Այգեստանի հեռաւոր ու խուլ դռների առաջ «Աման առէք» կոչերով: Պայմանաւորուած դուրը բացում էր Յունանի առաջ, որը կաւէ ամանի փոխարէն մեզ էր բերում ժընեւի «Դրոշակ»ը, Թիֆլիսի «Յառաջ»ը, Բոստոնի «Հայրենիք»ը, Փարիզի «Pro Armenia» եւ այլն յեղափոխական թերթեր, ինչպէս նաեւ Փարիզի Սապահ Էդդինի եւ Ահմէտ Ռիզայի թուրքերէն յեղափոխական հրատարակութիւնները:

Ով որ Յունանի խեղճ ու ցնցոտիներով պատած արտաքինը տեսնէր, չէր կարող հաւատալ, թէ դրանց տակ մի զգայուն, անվախ, մանաւանդ հայրենասէր սիրտ կար:

Երբ առաջին անգամ Յունանը ընկաւ մեր առջեւ, բարի ու ծիծաղկոտ դէմքով դարձաւ ինձ եւ ասաց.

— Բարի երթանք:

Այս նախադասութիւնն այնքան անկեղծ եւ ջերմ էր արտասանուած, թէեւ մէջը ըստ երեւոյթին մի մեծ միտք չկար, բայց համակեց ամբողջ էութիւնս, եւ ես սկսեցի խորհիլ: — Եւ, իրօք, հարկաւոր էր «բարի երթ» ցանկանալ:

Մենք շուտով կը լինէինք Վանի պատմական բերդի տակ, ուր որսորդական շան նման շարուած էին թուրք ոստիկանները, մանաւանդ Հանրային Պարտուց Վարչութեան ծխախոտի խուզարկիչները, որոնք բոլոր կասկածելի անցորդներին խուզարկում են ու ապա նամբայ դնում:

Յունանը հանապարհին պատմել էր բոլոր զգուշու-
րիւնները եւ ձեւերը՝ միշտ սրտապնդելով, որ վախենա-
լու բան չկայ. «Քեզ պէս հազար յեղափոխական ընկեր եմ
անցկացրել, պարոն. մարտի (հող) չանես»:

Ինչքան էլ Յունանի վերաբերմունքը ջերմ լինէր,
բայց իմ դրութեան բացառիկութիւնը բաւական անհան-
գրատացնում էր ինձ օտար եւ անծանօթ ֆաղափի մէջ, ուր
առաջին անգամն էի ընկնում, կարծես երկնփից, եւ ուր
չգիտէի ոչ մի ուղղութիւն եւ ոչ մի նամբայ:

Սառնարին մնալ անհնարին էր:

Յունանը երկար խօսել չէր կարող: Բանուկ նամբայ
էր, — երթեւեկութիւնը՝ շատ կասկածելի, աչքերը՝ ա-
ռատ: Մանաւանդ, որ ինքը մի ֆանի ֆայլ առաջ էր, իսկ
ես կոյրի պէս, կամ, ինչպէս ինքն էր ասում, հարսի պէս
հետեւում էի նրան:

— Պարոն, հրէն վարագայ լեռը... մեր տղաներաց
ապաստանարանը: Պարոն, տե՛ս, վանայ բերդը: Ա՛խ,
ե՞րբ պիտի հայու սուրբ դրօշը ծածանուի էն գլխուն...
Խեղճ Յունան, հայու դրօշը ֆանի մը օր ծածան-
ուեց էն գլխուն, բայց անիրար նակատագիրը ֆեզ չարժա-
նացրեց այդ օրուան...

Ի հարկէ, ես ոչ վարագայ լեռան մասին էի մտա-
ծում եւ ոչ էլ հայի դրօշակի, այլ շտապում էի, որքան
կարելի է արագ, անցնել այդ խառնիմաղանն ամբոյսի մի-
ջից:

— Պարոն Գէօ, Թաւրիզի դարդեախը:

Նայում եմ. բերդի տակ մի մեծ դուռ է. երեւի Թաւ-
րիզի ֆարաւանը այդ դռնից է ներս մտնում:

— Պարոն, այս Հայկավանքն է:

Ոչինչ չեմ հասկանում: Տներն այրուած են, միայն
մնացորդ ֆանդուած մասն է մնում: Յետոյ իմանում եմ,
որ Հայկավանք կոչուածը ֆաղափի թաղամասն է, որ 1896
թուին թուրքերը կոտորել եւ վառել են, եւ այնպէս էլ մը-
նացել է կիսաւեր:

Հայկավանքի անկիւնում ինչ որ զինուորական շէնք
կար, որի առաջ խոնուած էին զինուորներ: Առաջին ան-
գամն էի տեսնում այդքան մեծ ֆանակութեամբ թուրք
զինուորներ, բաւական վայելուչ հագնուած ու զինուած:

Ինձ վրայ մեծ տպաւորութիւն թողին: Կրծքերից դեղին
պղնձէ բաներ էին կախուած, թիկնապահի զարդերով, եր-
կարահասակ (այն ժամանակ գէթ երկարահասակ եւ վա-
յելուչ էին երեւում): Մտփա մէջ ասացի, սրանք կը լինին
յեղափոխականներին հետապնդողները: Յետոյ հասկա-
ցայ, որ նրանք «կանոն չաւուչի» են կոչում, հասարակ
զինուորներ են եւ պաշտօն ունին հսկելու, որ զինուորնե-
րը, նոյնիսկ սպաները անկարգութիւններ — խմել, կոբի,
սկանտալ, թղթախաղ, սրհարան նստիլ եւայլն — չ'անեն:

Յունանը Այգեստանի նեղ ու ճիւղով լիքը խուլ ու
մութ տեղերով, հազար պտոյտներ անելով Այգեստանի
բոլորովին ծայրը, արեւելեան կողմը, վարագայ դիմաց,
մի դրան առջեւ կանգ առաւ...

— Պարոն, հասանք «դրախտ» մայրիկի տունը: Տը-
ղաները տան կ'ըլնեն: Բարով աւելի մեծ յաջողութիւններ
եւ զործունէութիւն ունենաս:

Այս բառերը արտասանում էր այնպէս յուզուած,
այնպէս անկեղծ, որ մարդ համակում էր նրա սիրով:
Թէեւ սուկալի յոգնած էի, մանաւանդ ուռած ոտներս այլ-
եւս հրաժարում էին յենարան լինել, բայց եւ այնպէս
սրտիս խորքում մխիթարուած էի Յունանի խրախուսում-
ների ազնիւ ոգով:

Դուռը կամացուկ ձեծում ենք: Երկար սպասումից
յետոյ այս եւ այն կողմից ստուգում են, թէ ձեծողներն
ովքե՞ր են: Դուռը բանում է մի երիտասարդ բաւական հա-
մակրելի աղջիկ:

— Յունան, դո՞ւ ես:

— Հա, ես եմ, Երան, նոր միսափիր եմ բերել:

Օրիորդը, առանց մեզ սպասելու, ներս վագեց:
Մենք ներս մտանք եւ դուռը փակեցինք: Յունանը ծակ ու
ծուկերի ծանօթ էր: Առանց սպասելու ներս տարաւ: Գնա-
ցինք ներքին յարկը: Վերելի յարկն ինչ որ անհանգիստ
շարժումներ կային: Չարուխներինս հանեցինք եւ նստե-
ցինք թոնրան գլխուն, վերջապէս, հանգստանալու յոյսով:
Բայց, յանկարծ, ներս մտաւ օրիորդը բղաւելով:

— Էս խարամ (կեղտոտ) գիւղականներն ի՞նչ են
նստել վերին գլուխը, էլէք դուրս, մայրիկս լեղկնայ պի-
տի:

Սուս ու փուս փօշ-փօշման ելնում ենք ես եւ Յունանը: Հագար գօռով նորից հագնում եմ չարութենքս դուրս գալու համար:

Լաւ է, վանը եթէ ամէն բանով աղփատ էր, բայց ձմեռը առատ լոյս եւ ջերմ արեւ ունի: Ելանք ներսի կողմը, այգին եւ, մէջքերս տալով պատին, նստեցինք պատի տակ տափանալու եւ բարի լոյսի սպասելու:

Երկար սպասեցինք, բայց բան դուրս չեկաւ: Երեւի Յունանի «Նոր միսաֆիր եմ բերել» խօսքը չլսեցին կամ չհասկացան:

Անդադար մարդիկ էին գալիս գնում, անշուշտ ամէնքը յեղափոխական կազմակերպական գործերով: Յետոյ իմացայ, որ այս տունը մեր գլխաւոր կայարանն է եղել — «Դրախտ» կեդժ անունով:

«Դրախտ»ին դեռ կը դառնանք: Անցնինք մեր անել կացութեան: Համբերութիւնն էլ սահման ունի: Կանչում եմ տղաներից մէկին, խնդրում եմ մատիտ եւ թուղթ տալ Կոմսին նամակ գրելու եւ յայտնելու գալուս մասին:

Նոր են գլխի ընկնում, որ եկողը գիւղացի եւ պատահական մարդ չէ, մանաւանդ երբ նամակը կարդում են: Բաց նամակ էի գրել. «Սիրելի Կոմս, եկել եմ. մարդ ուղարկիր, տար մօտդ, կամ կարգադրութիւն արա, որ տեղաւորեն...»:

Նրանք գարմացել էին, որ ես ուղղակի սիրելի էի գրել եւ ոչ պարոն: Կը նշանակէ այս էլ նրան հաւասար մարդ է: Սկսեցին իրար խառնուիլ եւ մեզ ներս առնել, իսկ մինչ այդ՝ Կոմսից մարդ եկաւ մեզ տանելու:

Կոմսը հեռու չէր գտնուում այդ օրը: Մենք Փաշի Փողանի մէջ էինք, իսկ նա Չաղլի Փողան Ալամկալամեան Ջոջ Աղայենց տանը: Մեզ ուղարկեցին Կոմսի մօտ:

**

Հրածեշտ եմ տալիս Յունանին եւ ուղղում դէպի Կոմսը: Տեղը հեռու չէ, բարեբախտաբար. շուտով հասնում ենք: Ներս ենք մտնում փողոցի դռնով, որը բացում է իմ առաջնորդը իր գրպանից հանուած բանալիով: Յետոյ իմացայ, որ մեր տղաների գրպանները լիքն են բա-

նալիներով, այս կամ այն դուռը հեշտութեամբ բանալու համար ցերեկուայ, մանաւանդ գիշերուայ անակնկալների պարագային:

Ալամկալամեան ջոջ աղայի տունը Փաղլի փողոցի գլուխ մի համեստ տուն է: Ջոջ(*) աղան մեր երիտասարդ, լաւ ու կտրին ընկերներիցն էր, բանտ նստած, արհեստով ոսկերիչ:

Կոմսը վերին յարկն էր: Երբ պիտի բարձրանայինք վեր, ջոջ աղայի ծերունի մայրը սլուաց. «Սա խարամ գիւղականները պէտք է մունտուն թարանջաները (կեղտոտն սանդուխները)»:

Պէտք է խոստովանիլ, որ իրօք շատ մաքուր էին սանդուխները: Ես յետոյ՝ նկատեցի: Վանեցիք իրենց ոտնամանները հանում են սանդուխների տակ ու մինակ գուլպաներով են ելումուտ անում: Հարուստները ներսի համար սովորական սանդալներ էին հագնում:

Այս սովորութիւնը, երեւի, թուրքական է, որպէսզի նամազ անելիք տեղը չկեղտոտուի դրսի կեղտերով: Նոյն սովորութիւնը կայ նոյնիսկ կառավարական հիմնարկութիւնների մէջ:

Երեւի այս մաքրասիրութեան համար էր, որ այն ժամանակ վանում գործածում էր «կալօշ-փօթին» — կօշիկ — կրկնակօշիկով, որ հագնում էին եւ ամառը, անխրտիր թէ կանայք եւ թէ տղամարդիկ: Տուն մտնելու ժամանակ, սանդուխների տակ հանում են կրկնակօշիկները եւ կօշիկներով ներս մտնում:

Կոմսի հետ սովորական նոր հանդիպումի արարողութիւններ ու խօսակցութիւններ կատարելուց յետոյ, շտապում եմ հանել վրայիս գիւղական ցնցոտիները: Տակից հագած ունէի իմ սիվիլ հագուստներս, բացի ժակէտից եւ կօշիկներից, որ ինձ ուղեկցողները կրում էին իրենց տոպրակների մէջ: Իսկոյն հագնուելուց եւ լուացուելուց յետոյ նոր անցնում ենք իսկական նորութիւններին: Այդ ժամանակ ներս է գալիս պառաւը՝ փնթփնթալով եւ հարցնում է Կոմսին.

(*) Վանեցիք պապի անունը երբ տալիս են թոռին, նրան ջոջ աղա (մեծ հայր) են կոչում: Վերջերս գործածական էր պապիկ բառը:

— Պ. Բժիշկ, ո՞ր մնաց ան խարամ գիւղականը, խարամեց թարանջաները...

— Մայրիկ, գէօ գեղականը այս թաղա պարոնն է: Խնդրեմ ծանօթանաս...

— Քեա՛, քօտանամ, դուք ալ ինչիս կ'այլակերպուէք ան խարամ խաւներաց մէջ. ո՞վ կ'ըսէր, թէ այս սըրսուփ մարդը այն խարամ գիւղականն էր, մեղա՛յ քեզ, Աստուած...

— Մայրիկ, այդ բոլորը թո՛ղ. պարոնը անօթի է. բան մը ունի՞ս. բե՛ր թող ուտի, շուտով թէ՛յ էլ կ'ունենանք...

Թէեւ անօթի էի, բայց այս բոլոր նորութիւնները եւ այսֆան էժան վան ընկնելս մի տեսակ յագեցում էին տուել ինձ: Ուտելու ժամանակ չէր: Նորութիւններ էի պատմում եւ նորութիւններ լսում: Հարցրի Իշխանի եւ միւս ընկերների մասին: Նրանք էլ ուրիշ տուն են եղել: Երեկոյեան պիտի պատահէինք իրար, որովհետեւ միջկուսակցական ժողով կար:

— Միասին պիտի գնանք ժողով. այս լաւ է, քեզ էլ հետներս կը տանինք, — ասաց Վահանը (Կոմսը):

Կոմսը մենակ էր: Բայց սենեակի մի անկիւնում դրուած էին 5-6 հրացաններ. երեւի զինուորները վարը կամ միւս սենեակումն էին: Սենեակը շատ անպահոյն էր. յատակը հող. գետնի վրայ, այն էլ միայն սենեակի վերին կէտը փռուած էր խսիր, վրայից՝ կապերտ. պատերի տակ շարուած էին բազմոցներ, վրան նստելու և բարձրին յենուելու համար:

Կոմսը նստած էր գետին, պատուհանի մօտիկ, առաջը մի փոքր աթոռ, վրան լիքը թղթերով, նամակներով, մեծ մասամբ մանր թղթերի վրայ գրուած եւ մանր ծրարների մէջ — երեւի դիրութեամբ տեղաւորելու համար: Աչքի էր զարնում եւ մի ուրիշ բան. բոլորը համարեա գրուած էր կարմիր մելանով: Կոմսը արագ-արագ գրում էր, կարդում, նօթ առնում իր փոքրիկ յուշատետրի մէջ եւ մի քանիսին էլ իսկոյն պատասխանում:

Վարը կանգնած 2-3 պատանիներ կային 12-14 տարեկան. ինձ բերողն էլ նրանց մէջն էր. ես նրան յետոյ նանչեցի: Մի շատ մաքուր գաղափարական տղայ էր, ա-

նունը Պօղոս՝ Գոթոթ կեղծ անունով, յետոյ դարձաւ Գոթոթ-Պօղոս. կեղծ եւ իսկական անուններն իրար խառնուել էին: Գրուած նամակները որոշ հրահանգներով երկուսը տարան. իսկ մէկը սպասում էր նոր հրահանգի:

Առաջին տպաւորութիւնս հրաշալի էր. գործը՝ մեքենայի պէս լարուած: Այդ պատանիների դերը գործակատարութիւն էր. ցրուիչի դեր էին կատարում, գրքուած նամակները հասցնում էին ըստ պատկանելոյն եւ, գաւառներից, ֆաղափից, խմբերից եւ այլ տեղերից եկած նամակները հաւաքելով, բերում էին կոմիտէի ներկայացուցչին, ներկայ դէպքում՝ Կոմսին: Յետոյ ծանօթացայ, որ այդ յարաբերութեան գործը մի բարդ մեքենայ էր եղել, որ ունեցել է իր յատուկ կեդրոնները, փոխադրողները, ժամադրավայրը, յատուկ նշանները եւայլն...

Ինչպէս ասացի, Կոմսը յայտնեց, որ գիշերը միջկուսակցական ժողով կայ: Ես լսել էի, որ Վանը կուսակցութիւններով, մանաւանդ կուսակցական կոիւնքով հարուստ երկիր է: Ինձ մինչեւ անգամ զգուշացրել էին արտասահման, մանաւանդ Ատրպատական, որովհետեւ կուսակցական պայքարը շատ անգամ հասնում էր մատնութեան:

Ճիշդ է, Վանում հանդիպեցի կուսակցութիւնների, բայց ոչ այնքան ուժեղ, որքան լսել էի: Հանդիպեցի, միշդ է, եւ կրճատ կոիւնքի, որոնցից շատերը արիւնով վերջացան: Բայց, պէտք է խոստովանիլ, որ ես կուսակցական մատնութիւնների չհանդիպեցի, բարեբախտաբար:

Վանում կար երեք կուսակցութիւն, Հ. Յ. Դաշնակցութիւն, որը լայն կազմակերպութիւն ունէր ամէն կողմ եւ ուժեղ էր մանաւանդ գաւառում: Արմենականներ՝ աւանդութիւններով ապրող մի հոսանք, անցեալ ունեցող, առանց ներկայ իրական հիմքերի, առանց զեկավար սկզբունքների եւ միջոցների: Եւ Հնչակեաններ, որ մի քանի անհատներից կազմուած մի մասնաւոր խմբակ էր: Եւ զարմանալին այն էր, որ մեր միջոցներով ու մեր ընկերների բարեհաւ համաձայնութեամբ եւ տրուած դիրութիւններով էր ներս եկել նրանց մի նոր ներկայացուցիչը, ինձանից միայն մի երկու ամիս առաջ, Աշոտ անունով մի պարոն, չգիտեմ Պոլսեցի՞ թէ Տրապիզոնցի:

Երեկոյեան դէմ տղաները հաւաքուեցին: Կոմսը ինձ
ներկայացնում է ընկերներին — Թորգոմ-Թէոս, Ալէս,
Արմենակ — մի սուրբ երրորդութիւն, որոնց դեռ շատ կը
հանդիպինք: Սրանք այն ժամանակուայ կեդրոնական Կո-
միտէի ընկերներն էին, երբեք էլ փախստական՝ յեղափո-
խական գործով: Դրանք վանի կազմակերպութեան սի-
ներն էին՝ անդաւառան եւ հաւատարիմ:

Շուտով եկաւ եւ իշխանը կառկաոցիներից, մոկա-
ցիներից, ոզմցիներից եւ շատախցիներից կազմուած իր
խմբով: Համբոյր, կատակ, փոքրիկ վերջիշումներ մօտիկ
անցեալից, մի քանի դարաբաղցիական հանաքներ... Իշ-
խանի հետ ես դպրոցական ծանօթ էի. նա ինձանից 3-4
տարով ցածր էր. ես եմ նրան առաջին անգամ յեղափոխա-
կան խմբի մէջ մտցրել: Նրանց խմբի հետ ես էի պարա-
պում: Մենք նոյն յեղափոխական դպրոցն ենք անցել, իսկ
մեր հայրենակցութիւնն ու նախկին ծանօթութիւնը մեծ
բան էր այս հեռաւոր եւ օտար հորիզոնի տակ: Միակ հին
ծանօթս նա էր. երեւի նրա համար էլ ես էի. ուստի շատ
մտերմացանք եւ շուտով բացուեցին մեր սրտի դռները ի-
րար առջեւ...

Այդ ժամանակ վան էր եւ Տիգրանը, Կողբեցի Յա-
րութիւնը, որ յետոյ վարդան կեդծ անունով Մշոյ շրջանն
անցաւ Ռուբէնի հետ եւ նահատակուեց Սասունի վերջին
կոնիների ժամանակ: Այդ գիշեր նրան տեսայ: Յետոյ ի-
մացայ, որ ընկերական փոքրիկ կոնիներ եւ թիրիմացու-
թիւններ էին եղել. նա չեզոքացուածի պէս էր: Վան էր եւ
մեր Քեռին. նրան էլ տեսայ միւս օրը Տիգրանի մօտ:

Վերջապէս, բաւական մի ստուար խմբակ, երեւի,
բոլոր աչքի ընկնող զինուորներով շրջապատուած՝ գնում
ենք ժողովի: Հաւանաբար, այս էլ կուսակցական տեսա-
կէտով ազդեցութիւն ունենալու մի ձեւ էր:

Իմ ժողովի գնալս, մանաւանդ, ընկերների առա-
ջարկելուց յետոյ թուաց շատ անհետատես եւ թեթեւ քայլ:
Մի կողմ թողած այն, որ երկու շաբաթուայ նանապար-
հորդութիւնը ջարդել էր ինձ, ոտներս ուռած, տկար, աչ-
քերս ձիւնահար, յոգնած վիճակով ի՞նչ ժողով պիտի գնա-
յի: Կամ ընկերները եւ ես մոռացել էինք գլխաւորը, որ
այդպիսի մի լայն եւ զանազան խաւերի ներկայացուցիչ-

ներից կազմուած ժողովին իմ ներկայութիւնը, մասնակ-
ցութիւնը, խօսիլը, առիթ պիտի տար, որ իմ վան մտնե-
լը յայտնի դառնար, կառավարութեան ականջն ընկնէր եւ
աւելորդ հետապնդումների պատճառ դառնար: Այդպէս էլ
եղաւ:

Ժողովը գումարուած էր հանիկեանենց փողոցը,
Տիգրան Միրախորեանենց տանը: Ներկայ էին Գրիգոր Ա-
նէմեան, Կուլօղիեան, Համագասպ Բաղէշցեան, Ղեւոնդ
Մելօեան, — բոլորն էլ կեդրոնական Հայկազեանց դպրո-
ցի ուսուցիչներ եւ Կախաւեան Յարութիւն: Սրանք բոլոր
արմենականներ էին. հնչակեաններից կար Հաջի Յակոբը
եւ վերոյիշեալ Աշոտը:

Ժողովը փոխադարձ համաձայնութեան գալու, հա-
մերաշխ գործերու համար էր: Իսկ այս քայլի պատճառը,
ի միասին գալով համերաշխութեան մասին խօսիլը՝ կապ-
ուած էր մի ուրիշ խնդրի հետ:

Հէնց նոյն ժողովի մէջ պարզուեց ինձ համար, որ
վանի մէջ երեւի եւ գաւառի կեդրոնական վայրերում դըպ-
րոցական գործի ամբողջ ղեկավարութիւնը գտնուում էր
արմենականների ձեռքում: 1903-1904ի ուսումնական տար-
ուայ սկզբում վանում եղել է 8 հատ արական եւ 5 հատ
իգական ազգային վարժարան, ուր սովորում էին 1150 ա-
շակերտ եւ 710 աշակերտուհիներ:

Բողոքական եւ կաթոլիկ միսիոնարներն ունէին եր-
կու սեռի 5 վարժարան, ուր սովորում էին 430 մանչ եւ
380 աղջիկ: Ազգային որբանոցներում կային 240 երկսեռ
որբեր, իսկ օտար որբանոցներում 440 երկսեռ որբեր:
Ազգ. եւ օտար վարժարաններն ունէին ընդամէնը 92 ու-
սուցիչ-ուսուցչուհի եւ 3310 երկսեռ աշակերտութիւն:

Ինչպէս վերն ասացի, արմենականները ոչ այն ժա-
մանակ եւ ոչ էլ յետոյ մշակուած ծրագիր ու գործունէու-
թիւն չունէին: Բայց պէտք է խոստովանիլ, որ մտաւորա-
կանութիւնը նրանց կողմն էր. ուսուցչութիւնը, մանա-
ւանդ պատրաստուած ու ղեկավար տարրը նրանցիցն էին:

Արմենականութիւնը կրօնական ազանդի պէս մի
բան էր վանում այն ժամանակները՝ տոգորուած խիստ ու
մոլեռանդ հայրենասիրութեամբ՝ այդ հայրենիքը առաւե-
լապէս վանը հասկնալու պայմանով:

Եւ գարմանալին այն էր, որ արմենականները կարողանում էին վանից իրենց ազդեցութիւնը տարածել եւ արտասահման եղած միմիայն վանեցի հայրենակիցների վերայ: Օրինակ, նրանք փոքրիկ շրջանակներ ունէին Սալմաստ, Երեւի աւելի լայն՝ Ամերիկա:

Ամենագարմանալին այն էր, որ Գէորգեան ճեմարանի վանեցի աշակերտների մեծամասնութիւնը արմենական էր: Այնտեղ էլ կար ուժեղ խմբակ 1900ական թուականներին: Այդ խմբակի անդամների մեծ մասը մտաւ Երկիր, եւ լաւագոյն տարրերը յարեցան Հ. Յ. Դաշնակցութեան, — Համագասպ Բաղէշցեան, Ղեւոնդ Մելոյեան, Միհրան Թերլէմէզեան, Տանատ Վարդապետ, Արամ Շալչեան, Հայկակ Կոսոյեան. Արսէն Հացագործեան եւայլն:

Այդ ժամանակ հիմնել էին, բոլոր թաղականների և դպրոցական գործի ղեկավարների փոխադարձ համաձայնութեամբ, մի կեդրոնական դպրոց՝ Հայկազեան կոչուած, որը պիտի բռնէր Փորթուգալեանի «Վարժապետանոց»ի տեղը: Ահա հէնց այս դպրոցն է եղել, իրար մօտ գալու գլխաւոր առիթը: Դպրոցը մի հիմնական դրամագլուխով ապահովելու մտադրութեամբ վանեցի հարուստները յաջողել էին ժամանակի թոյլ եւ բարի կուսակալ՝ Թահիր փաշայի համաձայնութեամբ եւ իրենց ֆիւրտ բարեկամների աջակցութեամբ Կովկաս ուղարկել Պ. Պ. Գրիգոր Աջէմեանին, Արմենակ վուվունիկեանին եւ Աբրահամ Ազնաւուրեանին, որոնք Հայրիկին ներկայանալով՝ նրա կողմից էլ թուղթ էին վերցրել Բագու եւ Թիֆլիս հայկական շրջաններին դիմելու համար:

Կովկասում այն ժամանակ եկեղեցական դէպքերի օրեր էին, 1903-1904ին: Դաշնակցութեան ուժեղ ժամանակն էր, երբ Բագու հարկ էր լինում դիմել մերոնց աջակցութեան: Մերոնք մի պայմանով են համաձայնում աջակցել, եթէ վանի մեր ընկերները վկայեն, թէ իրօք դրամը դպրոցական գործի համար է եւ եկողները վստահելի մարդիկ են:

Արմենականները Կովկասում, ուրեմն, հասկացել էին Դաշնակցութեան ոյժը եւ ստիպուած էին հաշուի առնել ե՛ւ նրա հեղինակութիւնը վանի հասարակական-մշակութային գործերի մէջ...

Այս գիշերուայ ժողովի մէջ դպրոցական խնդիրներ չկային. քննուում էին յեղափոխական կուսակցութիւնների ծրագրին և գործելակերպին վերաբերեալ ընդհանուր հարցեր: Հնչակեանները նաուում էին իրեն սոց. դեմոկրատական ծրագրի առաւելութեանց մասին: Արմենականները շատ երկար եւ, պէտք է ասել, համոզիչ կերպով պատճառաբանում էին, որ դեռ ժողովուրդը պատրաստ չէ յեղափոխական գաղափարների համար եւ որ նախ պէտք է ժողովուրդը պատրաստել դպրոցով, խաղաղ միջոցներով եւ ապա միայն մտածել յեղափոխութեան մասին:

Մերոնք պնդում էին, որ խաղաղ-մշակութային գարգացում հնարաւոր է միայն այն երկրներում, ուր որ կայ կեանքի, գոյքի ապահովութիւն, իսկ Թուրքիոյ պէս պետութեան մէջ, ուր տեղի է ունենում կոտորած, ալանթալան, պատուոյ բռնաբարում, սեփականութեան յափշտակում, երթեկութեան արգելք եւ ամէն կարգի սահմանափակումներ, նորմալ կեանքի, ինչպէս եւ կուլտուրական աշխատանքի հնարաւորութիւն չկայ: Գալով յեղափոխութեան՝ մերոնք պնդում էին, որ յեղափոխութիւնը միայն գիտակցութեան բերելով չի լինի: Կեանքը ինքնին, կառավարութեան հալածանքները եւ ցնշումները յեղափոխական ըմբոստութեան ոգին են ամբարում, անբերելոյթ ձեռքով, ժողովրդի հոգու մէջ: Միայն պէտք է նրան կազմակերպել, ուղղութիւն տալ, հրահրել, որ արթնանայ, զինուի, վարժուի: Մերոնք չէին ժխտում սակայն նաեւ խաղաղ մշակութային-հասարակական աշխատանքի արժէքը, հէնց իրրեւ կարեւոր օժանդակութիւն, յեղափոխական, մարտական և ֆաղափական գործունէութեան համար:

Վիճում էին անընդհատ: Երեկոյեան սկսեցին մինչեւ առաւօտ, սակայն չվերջացաւ: Լուսաբացի մօտ ֆաղափացիները շտապեցին արագ-արագ հեռանալ, մեզ՝ փախըստականներին թողնելով մենակ: Ես չեմ յիշում, թէ ի՞նչ միջամտութիւն կամ խօսակցութիւն ունեցայ: Երեւում է, որ բաւական տաք էի խօսել: Բնական էր, որովհետեւ Կովկասի յեղափոխական ալիքների ազդեցութիւնը վրաս էր դեռ:

Միւս օրն իմացել էին արդէն, որ նոր պարոն է եկել

դաշնակցականների մօտ... Հետաքրքիրը այդ չէ. ժողովը վերջանալուց առաջ, ես ֆնել էի հէնց այն նստարանի վըրայ, ուր նստած էի, յոգնած՝ հանապարհների նեղութիւններից: Երեւի, վաղուց էի ֆնել, որովհետեւ, երբ առաւօտուն տան տէրը արթնացրեց եւ թէյի հրաւիրեց, զգացի, որ բաւական ֆնել եմ: Այս թէյն էլ տարօրինակ է. դեռ մութ՝ թէյ եմ պատրաստել. հետն էլ ուտելիք, պիտի խմեմք, ուտեմք ու մեկնինք: Այսֆան մարդ երբ իմացել եմ մեր տեղը, մնալը, ի հարկէ, անկարելի էր:

Առաւօտ վաղ դուրս եմ գալիս փողոց՝ կամաց-կամաց, ամենայն զգուշութեամբ, նոյնիսկ շունչ առնելու համար զգուշաւոր:

Հեռուից լսում է «կոչնակ»ի(*) ձայնը: Ժամկոչ է... Ես այդ գիտէի. Թուրքիայում ֆրիստոնեայ հաւատացեալներին եկեղեցի հրաւիրելու համար զանգակ գործածելու իրաւունք չկար, այլ «կոչնակ» էին զարնում, որի ձայնը թոյլ է եւ մնում է նոյն փողոցի մէջ: Այս ոչինչ տարօրինակն այն էր, որ կոչնակ զարնողը ամուր գարկում էր ե՛ւ բոլոր դռները ժողովրդին արթնացնելու եւ ժամ հրաւիրելու համար:

Ինձ համար աւելի տարօրինակ էր ժամհարի երգը «կոչնակ»ի հետ: Եւ ի՞նչ անուշ երգում էր ինչ որ եկեղեցական մեղեդի, այս գիշերային լուսութեան մէջ, Այգեստանի ծառախիտ ու մութ փողոցներում, որոնց լուսութիւնը խանգարում եմ միմիայն առունների վագոդ ֆրֆօցոց ջրերը... Մարդու վրայ կրօնական ջերմեռանդութիւն է իջնում: Երգը երկար վայելելու համար մեր ֆայլերը դանդաղեցնում եմք: Խեղճ ժամհարը մեզ չի տեսնում եւ մեր ֆայլերի ձայնը անկարող է լսել. այնքա՛ն զգոյշ եմք ֆայլում:

Բայց, վերջապէս, իրար դէմ եմք դուրս գալիս: Զինուած անծանօթ եւ վտանգաւոր մարդկանց յանկարծակի հանդիպումը ժամհարին շփոթեցնում է, եւ մեղեդին մնում է կիսատ կոկորդի մէջ: Սրտապնդում եմք եւ հրահանգում, որ շարունակէ, որպէսզի ուշադրութեան չար-

(*) *Կոչնակը Եռանկիւնի ձեւով տարածակ է. թոկով կապուած, ժամհարը մէկ ձեռքով բռնում է, միւսով զարնում:*

ժանանայ նրա յանկարծակի լուսութիւնը, իսկ մեմք շտապով ֆայլում եմք: Այդ օրը իշխանի հետ գնում եմք այն խմբի մօտ, ուր Տիգրանն է ու Քեռին:

Տիգրանը կողքեցի է, Ներսէսեան դպրոցաւար. Երկիր էր մտել ինձնից 2-3 ամիս առաջ Վարդան-Շահպագի խմբի հետ: Առաջ աշխատում էր Թարիգի կազմակերպութեան մէջ, կարծեմ այնտեղ ուսուցչութիւն թէ մի այլ պաշտօն ունէր: Լաւ հաշուապահ էր:

Տիգրանը երեկոյեան ժողովում չկար: Նրա բացակայութիւնը ինձ զարմացրեց, որովհետեւ եթէ ես եկած օրս կարող էի ժողովի գնալ, առաւել եւս նա: Իշխանին հարցրի պատճառը: Պատասխանեց, որ ընկերական ներքին կռիւններ կան. Կոմսի եւ Տիգրանի յարաբերութիւնները լարուած են, իրար հետ չեն խօսում. որ Տիգրանին խննել եմ «*ի մէջ գիճուորաց*», իսկ դա Վանի փախստական լեզուով կը նշանակէ պատուաւոր աֆսոք: Յետոյ իմացայ, որ կայ աւելի վատ պատիժ, երբ իրական յանցաւորներն ֆրշում են անապատները՝ Լիմ կամ Կտուց, «*վասն ի քաւուր թիւն մեղաց*» նգնելու համար:

Տիգրանին, ինչպէս եւ Քեռուն, պատահում էի առաջին անգամ:

Տիգրանը միջահասակ, շէկ, ոռուական միբուֆով, դալուկ ու ջղային դէմֆով մի երիտասարդ էր, երեւի հազիւ 24-25 տարեկան: Առաջին տպաւորութիւնը խիստ է. կասկածոտ ու ֆննական հայեացքով մօտենում է մարդու:

Քեռին, ընդհակառակը, կարծես հին ծանօթներ եմք:

«*Օղլում, արի տեսնենք, ի՞նչ կայ, ինչ չկայ: Կ'ըսեն՝ դուն ալ Ղարսէն կը գաս, ճի՞շդ է: Ի՞նչ կ'ընեն տղաքը, աղէ՞կ են: Մերոնց, Անդրանիկ, Մուրատ, Սեպուհ ո՞ւր տեսար*»...

Ամէն բան պատմում եմ.— *Այո՛, Կովկաս են, մտադիր են գարնան դառնալ: Ինձ պատուիրեցին, որ Վանք ու Սալմաստ խօսիմ, որ իրենց հրացանները պահեն, ուրիշների չտան:*

— *Եթէ գալու են, ինչո՞ւ գնացին: Գալու պէտք չկայ. գարնան ես ալ կ'երթամ: Հիմա մեզի յարմար գործ չկայ: Երիտասարդ եւ կրթուած մարդիկ են հարկաւոր ժողովրդին կազմակերպելու եւ պատրաստելու համար: Մեր ներկայութիւնը միայն աղմուկ կը ձգէ:*

Խօսակցութիւնը բաւական երկար տեւեց: Բայց եւ շտապում էի իմանալ Տիգրանի պատմութիւնը: Այդ հետաքրքիր էր ինձ համար. ես էլ պիտի այդ մթնոլորտում ապրէի: Վանի մասին արդէն լաւ բաներ քիչ էի լսել, վախի պէս մի բան կար սրտիս մէջ: Տիգրանի չեզոքացումը աւելի վախեցրեց ինձ:

Տիգրանը եւ Իշխանը պատմում են իրենց եւ Կոմսի փոխ-յարաբերութեան մասին: Գլխաւոր մեղադրանքն այն է, որ Կոմսը ինքնագլուխ է գործում, շատ է ենթակայ վանեցի տեղացի տղաներին, որոնք այնքան էլ ձեռնհաս չեն յեղափոխական կազմակերպական գործերի մէջ. որ, թերեւս, վերջինները միայն յենարան էին Կոմսի համար ինքնագլուխ գործելու, որովհետեւ Կեդրոնական Կոմիտէի մէջ նրանք մեծամասնութիւն էին եւ ամէն բան անցնում էր Կոմսի ցանկացած ձեռով:

Իշխանը պատմում է, որ Կոմսը իր ինքնագլուխ եւ անտակտ շարժումով քիչ էր մնացել, որ իրեն եւ իր շրջանի ժողովրդին փորձանքի մէջ ձգէր: Նամակով յայտնել է, որ Կ. Կոմիտէն որոշել է յարձակում գործել Ռստանի վրայ, ուստի կարգադրել է, որ Իշխանը այն կողմից իր գինուած ոյժերով յարձակուի, իսկ ինքը՝ այս: Նոյնիսկ Այսէն վարդապետի տեղորը, որի յանցաւորութեան մասին ինքն էլ չի կասկածում, արել են առանց իր մասնակցութեան եւ հրամայել են, որ ի կատար ածի Իշխանը:

Ինչպէս յայտնի է, Իշխանը խումբով մտել է Ազ-թամար եւ սպաննել Արսէն վարդապետին, իսկ առաջին հրամանը չի կատարել, համարելով անգործնական եւ չափազանց վնասակար: Էլի շատ բան պատմեցին. բայց լաւ յիշում եմ, որ նշանաւոր ոչինչ չկար:

Իմ տպաւորութիւններս այն էին, որ բնաւորութեան հարց էր, մանաւանդ փախստականի փակ ու ջղային կեանքը, ամէն օր իրար մօտ լինելը, իրար երես տեսնելը, ամենալաւ ընկերներն անգամ կարող էր իրարից պաղեցնել:

Ի միջի այլոց, յետոյ ես նկատեցի, որ երկար իրար հետ ապրելով, վերջերը մեքենայաբար, ցերեկները աշխատելու ժամանակ, իրար հակառակ, մէջքի կողմով էինք նստում գատ-գատ եւ աշխատում:

Վերջը, երբ ես Տիգրանին մօտից ծանօթացայ, ին-

քոս գգացի, որ նա այդ կեանքին յարմար մարդ չէր: Նա մի մարդ էր, որ անչափ մաքուր, մանկական միամտութիւն եւ չտեսնուած գաղափարականութիւն ունէր: Հաշիւների մէջ մի քանի կոպէկի, 10-20 փարայի տարբերութիւնը՝ ժամերի խօսակցութեան առարկայ էր լինում: Մեր գանձապահը, ծախսարարը, հաշուապահը ինքն էր. շատ անգամ տեսել եմ, որ ամբողջ օրը տանջուել է թիւեր գրելով եւ ջնջելով՝ մի քանի դրուշի սխալ գտնելու համար:

Ամէն բան իր սրտին մօտիկ էր համարում, ամէն բան նկատողութեան արժանի, իսկ այդ արդէն անհանդուրժելի էր այդ պայմաններում: Մեզ մօտ այն ժամանակ հասկացողութիւնների եւ սովորոյթների բացարձակ Բարեւոն էր: Տանկական ռէժիմը իր բացասական գիծերով որոշ կնիք էր դրել տեղացիների բնաւորութեան վրայ: Մենք՝ դրսեցիներս, բերել էինք ուրիշ բարքեր: Մեր մէջ կային մարդիկ Ամերիկայից, Բալկաններից, Պոլսից, Կովկասից, Պարսկաստանից, նոյնիսկ Հնդկաստանից, — գիւղացի, քաղաքացի, արհեստաւոր, կրթութիւն ստացած ու չստացած, ինչպէս նաեւ հայեր, ֆրսեր, թուրքեր ու ասորիներ: Կարճ՝ ամէն լեզու եւ ամէն ազգ իր ներկայացուցիչն ունէր մեր մէջ: Եւ դրանց համար ընդհանուր լեզու ստեղծելը շատ դժուար էր:

Բայց նախ քան այդ՝ պէտք է ծանօթանալ, թէ յեղափոխական գործիչներն ի՞նչպէս էին ապրում վանում: Երկու տիպի յեղափոխական գործիչներ կային վանում, նոյնը եւ երկրի միւս մասերում:

Մէկը լեզու, որ ապրում էր տանը, գնում էր իր աշխատանքին եւ միեւնոյն ժամանակ գաղտնի կառավարութիւնից, ժողովուրդից, շատ անգամ իրենց տնից, պատկանում էր մի որեւէ կուսակցութեան: Դրանք ցերեկը խաղաղ հպատակներ էին Սուլթանի, իսկ գիշերը գինուած կամ անգէն ֆէտայիներ: Զինուած խմբեր էին փախստում, ինչպէս եւ գէնքի, պրոպականտի եւ կազմակերպական ժողովների էին գնում, բազմաթիւ կուսակցական պարտականութիւններ էին կատարում: Իրենց գիշերային աշխատանքները կատարելուց վերջ, յետոյ առաւօտեան շատ վաղ մեկնում էին շուկայ իրենց գործի գլուխ: Ի հարկէ, կուսակցական անդամների ննշող մեծամասնութիւնն այս տիպի մարդիկ էին:

Երկրորդ տիպը այսպէս կոչուած փախստականներն էին, կամ, ինչպէս վանեցիք էին ասում, «կաշաղներ»։ Սրանք նոյնպէս երկու տեսակի էին բաժանուում — տեղացի փախստականներ, որոնք յեղափոխական որեւէ գործի մասնակցելով՝ աչքի էին ընկնում — տեոօր, զինուած կրօնի, զէնքի եւ յեղափոխական գրականութեան փոխադրութիւն եւայլն եւ կառավարութեան հետապնդումներից խուսափելու համար, այլեւս հրապարակ չէին ելնում։ Փախստականների այս դասը, թուով ամենաստուարը, տեղացիներն էին, որոնց շարքերը օրէցօր խտանում էին ընթացիկ գործունէութեան ընդարձակման հետ գուզընթաց։

Յեղափոխական-փախստականների երկրորդ տիպը, այսպէս կոչուած, անլեզալ գրսեցիներէից էր կազմուած։ Եւ գրսեցի ասելով պէտք է հասկանալ միայն արտասահմանից եկածներին, այլեւ, առհասարակ, ոչ վանի բնակիչներին. օրինակ՝ Մշեցիին, Կարնեցիին, Պոլսեցիին առանց պետական որեւէ յանցանք գործելու վանում փախստական է, լեզալ ապրիլ չէ կարող այն պարզ պատճառով, որ երթելուութեան ազատութիւն չկար. խստիւ արգելուած էր նոյնիսկ անցագրով հայերի երթելուութիւնը։ Հասկընալի է, որ նոր մարդը իսկոյն աչքի կ'ընկնէր եւ բանտ կը նետուէր առանց այլեւայլութեան։ Որովհետեւ յայտնի էր, որ յեղափոխականներն էին միայն, որ համարձակ երթելուում էին, արգելման դէմ ըմբոստանալով եւ ամէն կողմ մտնելով ու ելնելով։

Խօսք չի կարող լինել, ի հարկէ, արտասահմանից եկողների մասին, որոնք իրենց արտաքինով, լեզուով եւ տեղական պայմաններին անձանօթ լինելով՝ դատապարտուած էին փախստականի ծանր նակատագրին ենթարկուելու։ «Դրսեցիք» վան կամ մի այլ շրջան մտնում էին գաղտուկ, գիշերները նամբորդելով, զինուած խմբով եւ շատ քիչ անգամ ծպտուած, ինչպէս արել էի ես։

Փախստականները, ըստ իրենց ընդունակութիւնների կամ ըստ կարգի, դասաւորուած էին զանազան կերպով. դրանց մեծ մասը գաւառներն էին, իսկ փոքրամասնութիւնը՝ քաղաք։

Քաղաքում փախստականների կենցաղն այս էր։ Նրանք ըստ գործի բաժանուած էին զանազան խմբերի. ոչ պակաս, քան 5 հոգի եւ ոչ առաւել՝ քան 10։ Շատ անգամ աւելանում էին կամ պակասում, ըստ ժամանակի եւ կարիքի, բայց նորմալ չափը այդ էր։ 10ից աւելի չէր կարելի ունենալ մի խումբի մէջ. որովհետեւ տներում տեղաւորել 10ից աւելի անկարելի էր։ Մեզ հիւրընկալում էին մեծամասամբ համեստ դասի ընտանիքները, որոնք երկու սենեակից աւելի չէին ունենում։ Շատ անգամ էլ միեւնոյն յարկի տակ էին մնում ընտանիքի անդամներն ու խումբը։ Իսկ 5ից էլ պակաս չէր կարելի, որովհետեւ անակնկալի դէպքում պէտք էր կոռուով պաշտպանուել եւ պատուով դուրս գալ, մանաւանդ որ գիշերային պահպանութեան պարտականութիւն կար. պէտք էր հերքով պահպանութիւն անէին։

Խմբերն, ի հարկէ, բոլորը զինուած էին. ամէն նորրճայ փախստական կատարեալ զինուորութեան վստահելիութեան հասնելու համար որոշ աստիճաններով պիտի անցնէր. օրինակ՝ խամ եւ պատահական փախստականին դեռ երկար ամիսներ պահում էին խմբի մէջ, լոկ իբրեւ շալակաւոր. խմբի աւելորդ բեռը փոխադրութեան կամ տեղափոխութեան ժամանակ պիտի շալակէր... Յետոյ յետոյ էին մի փոքր ատրեանակ, հասարակ մի Սմիտ, լաւագոյն դէպքում մի «քրաունիկ»։ յետոյ տալիս էին Սուրմալի, Ղափաղլի եւ նման տիպի հրացաններ։ Մարդիկ կային, որ տարիներով քալել են այդ ծանր բեռի տակ, մինչեւ որեւէ կոռուի մէջ աչքի են ընկել եւ արժանացել հրացանի կամ իսկական զինուորի մկրտութեան։

Խմբերի մէջ մեծամասնութիւնը զինուորներն էին կազմում, այսինքն՝ կոռուի փորձուած տղաները... Ամէն խումբ որոշ նպատակ ունէր. օրինակ, քաղաք ապրող մէն մի դեկավար ընկերոջ մօտ իբրեւ թիկնապահ կար զինուած ընկերների մի խումբ, որ քաղաքի ծակուծուկերին, նանապարհներին, այգիներին, դիրքերին պիտի լաւ ծանօթ լինէր, լաւ պաշտպանուելու համար, մանաւանդ ժողովրդին եւ ընկերներին ու տեղական գործերին ծանօթ, որ օգնէր դեկավար ընկերոջ։

Մեծ մասամբ դեկավար ընկերների շուրջը հաւաք-

ում էին Կ. Կոմիտէի, կամ տեղական կոմիտէի անդամները: Կ. Կոմիտէն *Նշանակովի* էր, դրսից եկած, ուղարկուած կուսակցութեան Բիրոյին, Խորհրդի կամ Ընդհ. Ժողովի կողմից: Ընկերն իր շուրջը հաւաքում էր յեղափոխական անցեալ եւ որոշ գործունէութիւն ունեցող ընկերներ: Երբ դրանք այս կամ այն պատճառով հեռանում էին կամ սպաննում, ըստ կարգի կանչում էին նորերը կամ ուրիշները:

Կային *յատուկ* խմբեր մի ձեռնհաս խմբապետի ձեռքի տակ այս և այն գաւառի կազմակերպութեան կամ գործերի ղեկավարման համար:

Կային *զինատար*, կամ զէնք, ռազմաւթերք փոխադրող խմբեր:

Կային *թուղիկ* խմբեր այս եւ այն գաւառում բըրտական կամ քրքական յարձակման դէմ ելնելու համար՝ իպահանջել հարկին զինակոչելով ե՛ւ տեղական զինուորական խմբեր:

Կային *Վարդիչ* խմբեր, որոնք քաղաքի կամ գիւղերի զինուորական-մարտական խմբերը տանում էին լեռները զինավարժութեան, նշանառութեան, ռումբերի, տիւնամիթի եւ այլ բաների գործածութեան համար:

Վերջապէս, կային *ահարեկչական* եւ *զանազան* ձեռնարկների համար պատրաստուած *զինուորական-մարտական* խմբեր: Եւ բոլորը լեցուած էին, ինչպէս ասացի, բացառապէս փախստական ընկերներով եւ շատ քիչ բացառութեամբ ոչ փախստականներով: Կային եւ կիսափախստական ընկերներ, մեծ մասամբ պատանիներ:

Կառավարութեան լրտեսները, «փոլիսները», հոտ էին առել. բայց դեռ հաստատ չգիտէին դրանց ո՞վ լինելը, ուստի դրանք խմբերի հետ չէին փակուում տներում, այլ ցերեկները հայկական թաղերի մէջ երթեւեկում էին գանազան յանձնարարութիւններ կատարելու համար:

Աւելի բնորոշ էր խմբերի ապրելակերպը: Արտափնով նրանք շատ քիչ էին տարբերում. գիւղացիներից եւ քաղաքի բնակիչներից: Շատ էջերն էին խմբապետներից իրենց խմբին հազցնում յատուկ տարագ, որ մեծ մասամբ գորշ գոյն էր, որպէսզի լեռների մէջ հողին համակերպուին եւ հեռուից չերեւան:

Ամէն զինուոր ուներ մի հրացան մօտ 200 փամփուշտով, որ ամբողջ ժամանակը վրան պիտի պտտցներ: Եւ գիշերն էլ, առանց հանուելու եւ փամփուշտները արձակելու, պէտք է պառկէր գնելու: Առհասարակ, հագուստները հանում էին այն ժամանակ, երբ հարկ կար ներմակեղէնները փոխելու կամ դիրութիւն՝ լողալու:

Ամէն զինուոր ուներ մէջքի պայուսակ — չանթայ, որի մէջ պահած էր մի աւելորդ ձեռք ներմակեղէն, գուլպաներ, ձեռնոցներ, երեսուրբիչ, թաշկինակ, հրացան սրբելու շոր, եթէ ձմեռ է՝ կարկատաններ, թութուն, շաֆար, գիր գրելու թուղթ եւ այլ իրեր:

Այս չանթան էլ ամէնօրեայ անբաժան ընկերն էր զինուորի համար, նրա հետ երթեւեկում էր եւ գիշերը բարձի տեղ ծառայում:

Ինչպէս ասացի, խմբի 5-10 անդամները — մի խմբապետի ղեկավարութեամբ ապրում էին միասին: Իսկ այդ նշանակում էր գիշեր ցերեկ բանտարկեալի պէս փակուած նստել մի սենեակի մէջ, քաղաքում կամ գիւղում. իսկ, եթէ ամառ է եւ դուրսն են, բարեբախտութիւն ունին լեռ ելնել, արեգակի երես տեսնել եւ ազատ շունչ առնել:

Քաղաքում կեանքն այսպէս էր դասաւորուած. ձեռքի տակի կիսափախստական գործակատարները, թաքնուողներ էին գտնում ամէն խմբի համար՝ ամէն օր նոր տեղ լինելու պայմանով: Մի տեղ երկու օր մնալը վտանգաւոր էր, արգիւում, եւ տան տէրերը, առ հասարակ, չէին ընդունում՝ մի կողմից վախենալով, միւս կողմից դիրութիւններ չլինելու պատճառով:

Երեկոյեան մութը կոխելուն պէս, երբ երթեւեկութիւնը դադարում էր (իսկ Տանկաստանում բռնակալութեան ժամանակ ոչ սովորութիւն կար քաղաքացիների երթեւեկութեան և ոչ էլ հնարաւորութիւն), իսկոյն խումբը իր հին տեղից տեղափոխում էր նոր տեղ:

Այս տեղափոխութիւնն էլ իր երկար եւ բարակ արարողութիւնն ուներ. նախ՝ ուսումնասիրում էին, որ տնից դուրս գալու, մանաւանդ նոր տուն մտնելու ժամանակ ոչ ոք չնկատուի:

Պէտք է ասել, որ վանը բնական շատ մեծ դիրութիւն

թիւններ ունէր փախստականներին իր մէջ պահելու: Եւ այս է պատճառը, որ շատ անգամ, հարիւրների հասնող փախստականները Վանում ապրել են երկար ժամանակ աննկատ եւ անվտանգ:

Յեղափոխութեան, մանաւանդ փախստականների կեդրոնատեղին Այգեստանն էր, իսկ այդ թաղամասում հայկական եւ թրքական թաղերը գատ-գատ են. վերին մասը՝ արեւելեան կողմը, դէպի Շուշանից դաշտը եւ Վարագայ լեռը համարեա Հայոց թաղն է, յարմար եւ դիրքին դաշտից մտնելու եւ ելնելու համար:

Դեռ աւելին կայ. Վանում ամէն տուն իրեն կից ունի ընդարձակ այգի, և տներն ու այգիները դասաւորուած էին երթեւեկութեան համար շատ յարմար: Փողոցի կողմը համարեա կողք-կողքի իրար կից տներ էին. իսկ ներսը՝ այգիներ: Այսպիսով կազմուած են քաղաքի թաղամասեր, մէջտեղը ընդարձակ այգիներով: Երկար սովորութիւններից վերջը քաղաքացիները հաշտուել էին այդ դրութեան հետ, թէեւ շատ անգամ նկատուած էին փախստականների քարաւանի անցուդարձը իրենց այգիներից:

Երբ անհրաժեշտ էր լինում մի պատից փողոցի դիմացի պատի այգիներն անցնիլ, դրա համար երկու ձեւ կար: Եթէ անցնելու տեղը վստահելի մարդու տուն էր, խմբի առաջնորդը (մեծ մասամբ՝ տեղացի կիսալեզու ընկերներ) նախապէս անցնում էր դիմացի պատը եւ իր մօտ եղած բանալիներով բանում դուռը: Իսկ եթէ բանալի չկար, դուռը ծեծում էին, շուտ անցնում, եւ մանաւանդ, փողոցի կողմի պատուհանին հող ցանում. դուռը իսկոյն բացուած էր եւ խումբը մաս մաս դիմացի տանից նոր բացուող տուն էր մտնում, անցնում այգին եւ ապա շարունակում քանապարհը:

Եթէ տունը վստահելի չէր, մնում էր ուրիշ բան անել: Վանի այգիները թէ ներսից եւ թէ փողոցի կողմերից շրջապատուած էին հողէ պատերով, ամենաբարձր՝ 5-6 արշին, ամենաքարձրը՝ 8-10 արշին բարձրութեամբ: Խմբի առաջնորդը փողոցի վեր ու վարը մի լաւ ուսումնասիրելուց յետոյ հրաւիրում էր անցնիլ փողոցից՝ թռչելով կամ շրջուելով ուղղակի պատի վրայից դիմացի այգին: Այս էլ

մեծ դժուարութիւնների հետ էր կապուած. ծանրամարմին եւ կարճահասակ ընկերները չէին կարողանում շուտով թռչել պատի գլուխը եւ շարժուել: Այդ դէպքում առաջնորդը ծռում էր. նրա մէջքի վրայ ելնելով թռչում էին պատի վրայ եւ միւս այգու կողմից, որ աւելի խորունկ էր լինում, նետում էին գետին, շատ անգամ գլուխը կամ թեւը կտրելու վտանգով:

Այս արարողութիւնները շատ դժուար էին մարտում, մանաւանդ նորեկները, ստանձնապէս մշեցիք, որոնք ազատ լեռներին սովոր՝ իրենց ցանցերի մէջ էին երեւակայում: Տեղացի փորձուած զինուորները թռչում էին արագ, նարակօրէն անցնելու, հեզում էին, խնդում եւ ցուցմունքներ տալիս դիրութեամբ թռչելու մասին:

Այսպիսի փորձութիւն մի գիշերուայ մէջ պատահում էր բազմաթիւ անգամ, այնպէս որ տուն էին հասնում ջարդուած, քրտինքի մէջ կորած, շատ ժամանակ փոշիի մէջ ռոզուած, իսկ անձրեւին՝ վրայ-գլուխը լաւ ցեխոտուած:

Պատից թռչելուց բացի կար եւ մի ուրիշ անպատեհութիւն. այգիները ջրում էին առուակներով, եւ անվերջ նրանց վրայով պէտք էր թռչել: Տղաները շատ անգամ ընկնում էին մէջը եւ բաղնիք էին ընդունում:

Կար աւելի մեծ պատիժ. շատ տեղ մի այգուց միւսը հասնելու համար, անցնում էինք, այսպէս կոչուած, ջրի դռնից, որ պատերի մէջ, ջրի առուի վրայ մի այգուց միւսը տանող փոքրիկ դուռն է, ամենամեծը մի արշին բարձրութեամբ եւ արշինից պակաս լայնութեամբ: Այս դռները շինուած էին նրա համար, որ զինուորները՝ առուները շտկելիս՝ ջուրը բերելու համար երթեւեկէին: Հաստամարմինների, փամփուշտներով, տոպրակներով եւ գանազան իրերով ծանրաբեռնուած զինուորների համար ահագին տանջանք էր երեսի վրայ սողալով, փոշոտուելով եւ ցեխոտուելով անցնել այդ դռնից: Շատ անգամ հարկ էր լինում ձեռքերից եւ ոտներից քաշելով՝ ուժով դուրս հանել:

Յանախակի երթեւեկութիւնը քաղաքի մէջ ապրողների համար դիրութիւն էր տուել այգիների բոլոր ծակուծուկը ուսումնասիրելու, յարմար եւ անյարմար տե-

դերն իմանալու, նոյնիսկ նանաչելու, ո՞ր այգին, ո՞ւմն է, կամ մեր նանապարհի վրայ ի՞նչ ծառեր կան, որ լաւ միրգ ունին, անուշ խաղողը ո՞ր թփի վրայ է, եւ այլն: Այգիներով անցնելիս տան տէրերը իրենք էին հրամանում կամ ծանօթ այգիների մէջ հէնց մենք էինք պտուղներ եւ ծաղիկներ փառելով անցնում:

Տարիների ընթացքում այգիների մէջ եղած երթեւեկութիւնը ստեղծել էր յատուկ ներքին նանապարհ, որից սկսել էին օգտուել եւ փառագիտները: Այս եւ այն կողմի ժամանակ, երթեւեկութիւնը դիւրացնելու համար, պատերը ֆանդել էին, եւ նեղիկ նանապարհներ շինել: Քաղաքացիք իրենք էլ գաղտուկ նանապարհների պէտք ունէին, որովհետեւ այս ու այն տուրքից խուսափելու համար դէս ու դէն էին փախչում: Մանաւանդ վանում շատ զարգացած էր ծխախոտի մաքսանենգութիւնը. մաքսանենգներն էլ իրենց համար էին երթեւեկութիւն անում, ի հարկէ, օգտուելով մեր ստեղծած դիւրութիւններից եւ միջոցներից:

Ինչպէս ասացի, խմբերն ամէն օր ստիպուած էին իրենց տեղերը փոխելու, հետքերնին կորցնելու և աւելորդ ընդհարումների տեղի չտալու համար: Պէտք է խոստովանիլ, որ շատ քիչ են պատահել վանի յեղափոխական պատմութեան մէջ այսպիսի մասնակի դէպքեր, որոնցից մի ֆանիսը պատահական բնոյթ են ունեցել. եկել են ծխախոտ խուզարկելու կամ տուրք առնելու եւ զինուած խմբի ու դիմադրութեան են հանդիպել:

Այս բոլորը վերագրելու է նախ՝ նրան, որ ժողովրդի համակրութիւնը տղաների կողմն էր, երկրորդը՝ մատնիչներն իսկոյն իմացում էին եւ ահաբեկում, եւ երրորդ, որ ամենանշանաւորն է, Այգեստանի հայկական թաղը ոչ միայն հեռու էր թուրքականից, այլեւ շուկայից, որ փառամէջն է, որտեղ եւ կեդրոնացած էին կառավարական հիմնարկութիւնները: Այգեստանի հայկական մասում համարեալ ուստիկաններ չկային, երթեւեկութիւնից եւ աչքից հեռու էր. հետքերը կարելի էր լաւ թաքցնել:

Կառավարութեան որոգայթներից ազատուելու համար կազմակերպուած էր հակախուզարկութիւն: Սա խը-

նամֆով ստեղծուած մի մեծ ցանց էր փառաքի, ինչպէս եւ ցաւառի մէջ:

Կառավարութեան բոլոր ֆայլերին հետեւելու համար մենք էլ ունէինք մեր լրտեսները եւ միջոցները: Նախ՝ դրամական վարձատրութեամբ եւ ուրիշ միջոցներով մեր կողմն էինք գրաւել որոշ ուստիկաններ: Ուստիկանները իսլամ էին: Ուստիկան կամ համակիր թուրք, մանաւանդ ֆիրդ անոք բերելու համար մեծ դեր էին կատարում բանտի ընկերները, որ ազատ կարող էին խօսել, իրենց ինֆուրմութիւնը ծածկելու պէտք չունէին: Նախ՝ ուստիկաններին համոզում էին իրենց եւ դրսի հետ կապ հաստատելու, ապա՝ երբ վստահելի էին դուրս գալիս, գործ էին ածում եւ ուրիշ գործերի համար:

Ուստիկանները որեւէ լուր առնելիս խուզարկութեան, յարակման, ցաւառներ մեկնելու, պաշտօնեաների փոփոխման, այս կամ այն անձի ձեռքակալութեան մասին՝ իսկոյն լուր էին տալիս որոշեալ մարդկանց:

Ամէն մի ուստիկանի ցոյց էր տրուած շուկայի կամ Այգեստանի մէջ մեր վստահելի մի ընկերոջ խանութ, որը գալիս նրան հաղորդում էր, իսկ նա էլ իր հերթին՝ Կումիտէին: Բացի դրանից զանազան ընկերների եւ զանազան յարմարաւոր կէտերի վրայ պաշտօն էր յանձնուած հետեւելու ուստիկանութեան, զօրքի, կառավարութեան պաշտօնեաների շարժումներին եւ ժամ առ ժամ հաղորդել նորութիւնները: Ունէինք դաշնակցական սրճարանապետներ, որոնք հետեւում էին իրենց սրճարաններում եղած ուստիկանների խօսակցութեան եւ հաղորդում մեզ:

Կային եւ թուրք պաշտօնեաների տներում ծառայող հայեր, — խոհարար, ծառայ, ձիապան եւ այլն —. նրանք էլ էին կազմակերպուած և օրը օրին լուր էին տալիս իրենց պարոնների տան մէջ եղած խօսակցութիւնների մասին: Պէտք է նկատել, որ սրանց տուած լուրերն ամենաթանկագիններն էին լինում, որովհետեւ օգիւի եւ գինիի ազդեցութեան տակ ազատ խօսում էին, եւ ծառաները դրան ծակից լսում էին շատ բաներ:

Կային եւ հատ ու կտոր հայ պաշտօնեաներ, որոնք նոյնպէս լուրեր էին հաղորդում:

Ինչպէս ասացի, այս գործը կազմակերպուած էր

շատ լաւ. ամէն կայարան լուրերը հաւաքում էր: Երբ խիստ ստիպողական էր, ինք անձամբ կամ նամակով վրստահելի մէկի միջոցով լուր էր հասցնում, եթէ ոչ՝ սպասում էր, որ գործակատարը գնայ եւ նամակներն ու լուրերը հաւաքէ բերէ:

Լուրերը կեդրոնանում էին Կ. Կոմիտէի ներկայացուցչի մօտ, որն իր կարգին կարելոք լուրերը հաղորդում էր խմբերին եւ գաւառի ընկերներին:

Այս բոլորը կատարում էին գրաւոր, եւ այդ էր պատճառը, որ օրական ամենափչը մի քանի տասնեակ, շատ անգամ հարիւրներով նամակներ եւ երկտողներ էին քափում ներկայացուցչի եւ խմբերի մօտ: Դրան օգնում էր այն, որ գրագիտութիւնը միշտ տարածուած էր, մանաւանդ քաղաքում, ամէնքը կարդալ գիտէին եւ իրենց մտքերը գրաւոր արտայայտելու մէջ շատ հմուտ էին: Ամէն նամակ գրում էր կեղծ ստորագրութեամբ. մէկ մարդ շատ անգամ ունէր մի քանի կեղծ անուն՝ այս եւ այն գործին յատուկ: Հասցէն նոյնպէս գրում էր կեղծ անունով: Ստեղծուել էր մի տեսակ պայմանական «եզոպոսեան» լեզու, այս եւ այն պաշտօնեայի, այս եւ այն գործողութեան, այս եւ այն վայրի. կարն՝ կեղծիքների եւ գաղտնիքների մի ամբողջ շարան, որ միայն գրողը եւ առնողը կարող էին հասկանալ:

Խմբերի առունին կենցաղն էլ պակաս հետաքրքրական չէր: Ինչպէս տեսանք, մութը կոխած, յանախ էլ առաւօտեան դեռ լուսաբաց չեղած՝ խումբը տեղափոխում էր իր նոր ապաստանարանը: Նայած թէ ի՞նչ տուն է ընկնում խումբը յարմարութեան կամ անյարմարութեան տեսակէտով, ըստ այնմ էլ դժուարութիւնները նուազ էին լինում կամ առատ: Բայց, որովհետեւ մեծամասնաբար գնում էին համեստ դասի տներ, դժուարութիւններն ու անպատեհութիւնները միշտ առատ էին:

Լինում էր ժամանակ, որ այցելում էինք որեւէ տուն ամիսների եւ տարիների ընթացքում, բազմաթիւ անգամ. տան մեծը՝ հայրը կամ մեծ եղբայրը յանախ չէին իմանում: Երեսակայեցէք ձեր դրութիւնը. — գաղտնի պիտի մտնէք, փակուէք որեւէ սենեակի մէջ, ձայն ծպտուն չպիտի հանէք: Եւ այսպէս ժամեր: Երթեւեկել, ի հարկէ,

անկարելի է: Դրացիները չպիտի իմանային, ինչպէս եւ, շատ յանախ, նոյն բակի մէջ ապրող ուրիշ տնուորներ:

Սոսկալի բան է մանաւանդ դուրս գնալու բնական կարիքը հոգալու հարցը: Վանեցուց արտաֆնոցներն այգիներում են. ուրեմն, ցերեկը երթեւեկելու համար անյարմար է: Եթէ տանը լինում էր գոմ, փրկութիւն էր, ապա թէ ոչ սոսկալի տանջանք եւ պատիժ էր, ներսը փակուածների համար: Նրանք ստիպուած էին 8-10 ժամ մէջօրեայ վրայ պառկել, ձայն ծպտուն չհանել, չշարժուել, բնական պահանջներին գոհացում չտալ եւ բանտարկեալի պէս ընկնել անտրտունջ:

Այդ պատճառով փորձ խմբապետներն առաւօտեան վաղ զինուորներին արթնացնում էին, որ դուրս գնան, լուացուեն ու պատրաստուեն՝ ցերեկը նեղութիւն չփաշտու համար:

Սենեակից դուրս չկարենալ գալը, ազատ օդից, մանաւանդ արեգակի լոյսից եւ ջերմութիւնից զուրկ լինելը ամէնօրեայ սովորական տանջանքներ էին: Վանի փախըստականների համար օրը բացում էր, երբ գիշերը վրայ էր գալիս. նոր սկսում էր ազատ երթեւեկութիւն, ներս ու դուրս, ազատ երկնքի տակ ազատ շունչ փաշել...

Իսկ երբ պատահում էր, որ քաղաքից դուրս էին գնում լեռը մի կամ երկու օրով, հարսանիքի եւ տօնական տրամադրութիւն էր համակում ամէնքին: Վարագ գնալը Վանի փախստական զինուորների համար ազատ դրախտ գնալ էր նշանակում:

Այս բոլոր սահմանափակումներն, ի հարկէ, ազդում էին զինուորների եւ գործիչների բնաւորութեան եւ ֆիզիքականի վրայ. ամէնքը դալուկ էին, մեղամաղձոտ, խոհուն, վշտոտ հայեացքով, երագող եւ միշտ ձգտող դէպի մի անյայտ աշխարհ: Եւ շատ անգամ լսել եմ այդպիսի վիճակի մէջ գրոյցներ եւ իղձեր, որ սովորական մարդկանց համար ոչ մտածելու եւ ոչ ձգտելու իղձ կարող են լինել:

— Ա՛խ, մարդ կարողանայ ամբողջ կրծքով մի լաւ խնդալ...

Այսպէս էր երագում մեր խեղճ Սարգիսը: Ինքը հրաշալի ծիծաղում էր, ամբողջ կրծքով եւ թոքերով,

մանկան անկեղծութեամբ: Բայց մէկ էլ տեսար, տանտիկիներ՝ պառաւ մայրիկը պոռաց.

— Պ. Սարգիս, ջե մեռնիմ, մի՛ խնդա, կը լսեն...

— Ա՛խ, մարդ մի սենեակ ունենայ միշտ մէջը պառկելու՝ ազատ, առանց տեղափոխուելու հոգսերի, առանց վտանգուելու մտահոգութեան... Ա՛խ, մարդ կարողանայ լողանալ, հազուստները հանել եւ մաքուր անկողնում ազատ ու անվախ քնել...

Ծիծաղելու հնարաւորութիւն, մի սենեակ ունենալու դիրութիւն, մի անգամ հանուած մաքուր անկողնում քնելու պատեհութիւն, — եւ այս փոքրիկ բաներն էին կրթուած, շատ անգամ համալսարանական մարդկանց իտէալը: Կարո՞ղ էք երեւակայել, թէ ի՞նչ պիտի լինէին միւսներունը:

Մեծ վարդանը պատմում էր, որ իրենց դրութիւնը աւելի սուկալի է եղել 1894 – 95 եւ 96 թուականներին: Ի միջի այլոց նա պատմում է փախստական կեանքի տանջանքներից մի կուրիոզ. 3 տարի չեն կարողացել սովորեցրնել վանեցի ընկերներին մի երգ, որ նոր էր դուրս եկել կովկասում. դրսեցիները գիտէին, բայց չէին կարող բարձր երգել, որ տեղացիք սովորեն:

Ես չէի կարողանում հասկանալ այն մեծ գաղտնիքը, այն մեծ ոյժը, որ սովորական մարդկանց, շատ անգամ կրթութիւն չունեցողներին, գիւղացիներին, ստիպում էր տարիներ շարունակ անտրտունջ հանդուրժել այս տառապանքներին: Մտաւորականների համար ասում են իտէալն ու գաղափարականութիւնն է, իսկ միւսներին մընում է ընդունել հայրենասիրութիւնը, որն ունի եւ գաղտնի անըմբռնելի ոյժ՝ այդքան գոհաբերութիւններ վերցրնելու: Պատմում էին փորձուած ընկերները, որ մտաւորականների, մանաւանդ դրսից եկած ընկերների օրինակը շատ էր ազդում զինուորների հոգեբանութեան վրայ:

Մի քանի խօսք էլ սնունդի մասին: Խումբերն ապրում էին առհասարակ կազմակերպութեան հաշուին: Արդէն տեսանք, որ մենք հիւրընկալուած էինք ազատ ընտանիքների մօտ: Խեղներն իրենք ուտելու բան չունէին, ո՞ւր մնաց, թէ մեզ տային: Խօսքս, ի հարկէ, վանի մասին է. գաւառում՝ գիւղերում խումբը ապրում էր գիւ-

ղացու, ժողովրդի հաշուով եւ բաւականաճում նրանով, ինչ որ տալիս էին գիւղացիները, բաժանելով նրանց հետ մի կտոր սեւ հացը եւ տաք թանապուրը:

Գիւղում դրութիւնը այլ էր, քաղաքում՝ այլ: Գիւղում խումբը ապրում էր համայնքի հաշուին: Այդ նշանակում էր, որ ամբողջ գիւղն էր հիւրասիրում խմբին եւ ոչ այն տունը, ուր տղաքը հիւր են: Իսկ քաղաքում, ինչպէս տեսանք, բոլորը մի տան մէջ էին եւ միայն այդ տընեցիք գիտէին:

Կազմակերպութիւնն ունէր յատուկ ծախսարարներ՝ խմբի պետները հոգալու համար: Կեանքը աժան էր, մանաւանդ երբ 8-10 հոգի միասին պիտի մաշէին: Առաւօտեան՝ թէյ, պանիր, հաց էր. կէսօրին՝ մէկ կամ երկու տեսակ կերակուր: Ամէն ընկերոջ վրայ օրական 60 փարա ծախք էր նշանակուած. կամ խմբի գործակատար — առաջնորդն էր ծախսերը անում. իսկ, երբ նրա ելքն ու մուտքը անկարելի էր, ծախս անողները տանտէրներն էին:

Շահագործման դէպքեր, ի հարկէ, լինում էին, մանաւանդ որ սարսափելի անգործութիւն կար եւ եկամուտների չորացում: Մեր ժամանակ չորս-հինգ հոգուց բաղկացած ընտանիքի համար ամսական մի ոսկի եկամուտը համարում էր բաւարար եւ տանելի. կային եւ կէս ոսկով ապրող ընտանիքներ:

Այսպէս, ընտանիքների տեսական սնունդն էր, — առաւօտ-երեկոյ թանապուր, ձուկ, ժածիկ (թանից են պատրաստում) եւ քիչ անգամ իւղեղէն: Միսը, կարծեմ, տարին մի քանի անգամ հագիւ էին տեսնում խեղները: Դրա փոխարէն շատ բուսակեր էին. ամէնքը ձմեռուայ համար բռնուած բուսեղէն ունէին՝ մանդակ, երնջակ, լըխանա (կաղամբ), ճակընդեղ (բագուկ), շոգամ եւն.: Գարուն, ամառ եւ աշուն սնում էին զանազան բոյսերով, որ խաշում էին սովորական ջրով ու աղով: Այս է թերեւս մասամբ, պատճառը, որ վանեցիների մարմինը բաւական տգեղ է, մանաւանդ կիներունը, որոնց տգեղութիւնը կարելի է վերագրել մեծ մասամբ եւ տնտեսական աշխատանքների ձեւին, — այն բանին, որ միշտ թոնրի վրայ էին կերակուր եփում, հազար անգամ օրական կախումբարձրանում, իսկ ամբողջ ձմեռն էլ նստում էին թոնրի վրայ, քուրսիի տակ:

Բուսական կերակուրը մեծացնում է փոքրը: Գիւղե-
րում եւ քաղաքներում ուռած փոքրով երեխաներն ընդհա-
նուր երեւոյթ են:

Այն տանը, ուր մեծք էին լինում, ընտանիքի ան-
դամներն էլ մեզ հետ եւ մեր հաշուին էին կերակրում.
գուցէ մեզ տուն տուողների մեծ մասը շահագրգռուած էր
հէնց դրանով:

Պէտք է խոստովանիլ ե՛ւ այն, որ կային բազմաթիւ
ընտանիքներ էլ, որոնք միշտ, քանի անգամ էլ ամսական
կամ տարեկան հանդիպէին, պահում էին իրենց հաշուին,
այն էլ շատ լաւ, տօնական կերակուրներով, խմորեղէննե-
րով եւ այլն:

Խմբի գինուորները ժամանակի մեծ մասը անցրելու
էին կարգալով, նոր գրել կարգալ սովորելով, թուղթ խա-
ղալով: Ժամերով խաղում էին, մանաւանդ գիշերները,
երբ ստիպուած էին պահապան լինել:

Գառնանք սակայն մեր պատմութեան: Հարկաւոր
էր հարթել Տիգրանի եւ Կոմսի միջեւ եղած թիրիմացու-
թիւնները՝ ընկերական ներդաշնակ կեանք ստեղծելու եւ
գործ կատարելու համար:

Միւս օրը կրկին գնում եմ Կոմսին եւ նրան եմ հար-
ցրելու թիրիմացութիւնների պատճառները:

— *Տիգրանը լաւ, մաքուր եւ զաղափարական տղայ
է, բայց նրա հետ աշխատիլ անկարելի է: Գէթ ես չեմ կա-
րող. խենթութեան է հասցնում ամէն բան: Ամենալիրա-
ւորականը այն է, որ դիմացինի մէջ միշտ ուզում է տես-
նել կասկածելի, ոչ մաքուր մարդ. այդ արդէն անտանելի
է այսպիսի պայմաններում:*

Բացատրում եմ, որ մտաւորական մարդկանց սով է,
որ ամէն եկող տեղ չի հասնում: Ինքը լաւ գիտէ, որ անց-
եալ աշնան՝ 1904ին Նարմանից մինչեւ Կոտոլ հարիւրնե-
րով գոհեր տուինք, ամենալաւ, պատրաստուած գաղա-
փարական ընկերներ — Թումանը, Թորգոմը, Ալեքսան-
դրապոլցի Վաղոն, Որսորդ Գէորգը, Կայծակ Վաղարշա-
կը, Ռուս Գէորգը, Նեվրուզը, Խանը, մեր Մեմակը, Հմայ-
եակը, Աշոտ Երկաթը, Քոչեցի Պողոսը, Գայլ Վահանը,
Թոխմախը եւ ուրիշներ:

Կոմսը այդ բոլորը ինձանից լաւ էր հասկանում.

բայց նորից առարկում է, որ իր կարծիքով բոլոր միջոց-
ներն սպառուած են:

— *Ցաւում եմ, որ, այս դէպքից յետոյ մի գործնա-
կան որոշում տուինք, — այն է, որ ամէն մի նոր եկող եւ
անգործ ընկեր իսկույն Կ. Կոմիտէի մէջ չառնենք եւ ղե-
կավար դեր չտանք: Թո՛ղ մի վեց ամիս կամ մի տարի մը-
նայ: Եթէ ընկերները գտնեն, որ արժանիք ունի, թո՛ղ նոր
ընդունին:*

Որոշումը ցանկալի եւ նոյնիսկ ընդունելի էր եւ ինձ
համար, թէեւ Բիւրօն ինձ յանձնարարել էր իբրեւ հաւա-
սար ընկեր, բայց ես գգում էի, որ անհրաժեշտ էր նախ
տեղական գործերին ծանօթանալ եւ ապա միջամտել:

Որոշում եմ Կ. Կոմիտէի ժողով հրաւիրել, հարցը
այնտեղ քննութեան դնել եւ մի վերջնական որոշում տալ:

Ժողովը գումարում է շուտով, ինձ բացառաբար
թոյլ են տալիս ժողովին մասնակցելու: Այն ժամանակ
մարմնի անդամներն էին Կոմսը, Իշխանը, Վարդան-Շահ-
պազը, Տիգրանը, Թ. Հասը, Ալեքս ու Արմենակը:

Երկար ու բարակ, սուր ու ջղային վէճերից յետոյ
գտնում եմ միայն մի ելք, — այն է, որ կազմակերպա-
կան գործերը քաղաքում եւ բոլոր գաւառներում բաժան-
ուեն ընկերների միջեւ, ըստ ընդունակութիւնների:

Տիգրանին տալիս եմ Հայոց-Ձորի եւ Թիմարի շրջ-
ջանի կազմակերպական, զինական ամբողջ գործերը. նա
պիտի շրջէր եւ մեծ մասամբ քաղաքից բացակայէր:

Իմ մասին որոշում են, որ ես մնամ քաղաք Կոմսի
մօտ՝ գրադուելու համար քաղաքի խմբերի պրոպագանդի
եւ կազմակերպութեան խնդիրներով:

Կոմսը մնում է քաղաքում ընդհանուր ղեկավար
ներկայացուցչի դերում:

Իշխանը նորից պիտի դառնայ գաւառ, Վարդան-
Շահպազի հետ: Նրա շրջանն էր Շատախը, Մոկսը, Կառ-
կառը, Կարնկանը եւ Գեաւաշը, որ այն ժամանակ ընդհա-
նուր կեղծ անունով կոչւում էր Լեռնապար:

Իշխանի հետ պիտի լինէր ե՛ւ Մակուեցի Մեսրոպը,
որը մեր հին եւ փորձուած ընկերներից էր՝ զինուորական
ընդունակութիւնների տէր, կրթուած եւ լաւ բնաւորու-
թեամբ մի մարդ:

ինչպէս առաջ ասացի, իշխանի եւ Կոմսի յարաբերութիւններն էլ լաւ չէին: Իշխանի դժգոհութիւններն յիշատակել եմ արդէն, եւ ժողովումն էլ պարզուեցին նոր խնդիրներ:

Վանում, ինչպէս եւ բոլոր կեդրոնական ֆազաֆներն եւ յարակից գաւառների միջեւ, անվերջ եւ յարատեւ կռիւ կար, գաւառի եւ ֆազաֆի կռիւ: Այդ կռիւը փոխադրուել էր ե՛ւ մեր կազմակերպութեան մէջ:

Գաւառացիք գանգատում էին, որ արտասահմանից եկած բոլոր զէնքերը, ռազմամթերքն ու դրամները մնում են ֆազաֆում. գործիչների մեծ մասն էլ ֆազաֆում են գործում եւայլն... Գաւառը մոռացութեան է տրուած, այն ինչ՝ իսկական, վստահելի յեղափոխական եւ կռուի ընդունակ տարրերը գաւառի մէջ էին: Այս յաւակնութիւններն ունէին մանաւանդ շատախցիք:

Քաղաքացիք, ընդունելով հանդերձ գաւառի նշանակութիւնը եւ արժէքը, պնդում էին, որ գործի ղեկն ու կեդրոնը ֆազաֆն է. եթէ ֆազաֆում ուժեղ չլինենք, գաւառն էլ կը լքուի:

Գաւառացիք մնում էին իրենց կարծիքի մէջ՝ միշտ արհամարհոտ ու կասկածոտ ֆազաֆացիների մասին:

— Այս քաղաքի ջոջ սղանները ձեր գլուխը պիտի ուտեն եւ մեր տունը պիտի արեն:

Այս էր ամէն անգամ գաւառից ֆազաֆ եկող գաւառացի ընկերոջ վերջին խօսքը:

Դէպքերը յետոյ ցոյց տուին, որ գաւառացիք էլ իրարուց ունէին ամբողջապէս վանեցիներին չվստահելու, ինչպէս եւ վանեցիք՝ գաւառացիներին:

Իշխանի եւ գաւառացի ընկերների պահանջներին գոհացում տալու համար որոշում ենք, որ արտասահմանից եկող եւ Երկրի ներսը գտնուող զէնքի-ռազմամթերքի կէսն ուղարկենք գաւառ, ինչպէս եւ դրամի եւ եկող ղեկավար ոյժերի:

Լեռնապարի համար էլ ստեղծում ենք գատ մարմին, — իշխան, Վարդան-Շահպազ եւ Մեսրոպ: Այսպիսով Վասպուրականում ունենում ենք 1905-1906ին երկու կեդր. Կոմիտէներ, Շամիրի. — Վան, որի մէջ մտնում էին Վան, Հայոց-Ձորեր, Խոշապ, Նորդուզ, Բաշկալէ, Ար-

նակ, Ալջաւազ եւ արուարձանները, եւ Լեռնապարի կեդր. Կոմիտէն, որի մէջ մտնում էին Վասպուրականի միւս լեռնային գաւառները: Արտասահմանի եւ միւս ֆազաֆների հետ յարաբերութիւն եւ կապ պահելու էր, ի հարկէ, ֆազաֆը:

Գործն այսպէս փակուած էինք համարում, երբ մի ֆանի օրից յետոյ, Կոմսը, տեղական ընկերների հետ առանձին խորհրդակցութիւն ունենալով, յայտնեց, թէ այլեւս չի կարող մնալ, — յոգնել է, ինքը մի տարով էր եկել, երկրորդ տարուան մէջն է եւ աշխատել, մանաւանդ այդ պայմաններում, անկարող է:

Յիմար կացութիւն էր ստեղծուած. աչքը շինելու տեղ՝ յօնքն էլ արեցինք. իմ գալը, փոխանակ օգտակար լինելու, վնասակար եղաւ:

Կոմսը ղեկավար ընկեր էր, գործերին ծանօթ, մարդկանց, գործիչներին կապել էր իր հետ. յանկարծ, թողնել ու հեռանալ... Մեզ թոււմ էր, թէ գործը կը ֆայֆայուի. մանաւանդ Վանի ժողովուրդը մեծ վստահութիւն ունէր նրա վրայ, որ երկու բանով կարելի էր բացատրել:

Նախ՝ որ կարն ժամանակում նա գործը դրել էր լաւ հիմքերի վրայ եւ որ, գլխաւորն է, հետեւել էր խոհեմ ու շրջահայեաց գործելակերպի: Վանեցիք այն համոզմանն էին, ու թերեւս մասամբ իրարուց ունէին, որ եթէ Կոմսի ներկայութիւնը չլինէր, երբ Անդրանիկը Վան էր եկել 1904ի ամառը մեծ խմբով, անպատճառ խոշոր ընդհարում պիտի լինէր եւ կոտորածը անխուսափելի դառնար:

Անդրանիկի Վան եղած միջոցին կարծեմ մի փոքրիկ ընդհարում է միայն տեղի ունեցել Մեծ Քանտրչի փողոցի մէջ, որը Վանում յայտնի է «Մարոյի դէպք» անունով:

Գիշերային մի տեղափոխութեան ժամանակ, Սեպուհի, Մուրատի, եւ միւսների խմբերը երբ փողոց են իջնում եւ դիմացի տունից ներս մտնում, յետնապահ տեղացի ընկերը՝ կարծելով, թէ ամէնքը անցել են արդէն, ինքն էլ ներս է մտնում եւ դուռը փակում: Զինուորներից մէկը, կարծեմ Ծուռ Դաւիթը, (տեղացի մի շատ կտրին գինուոր) դուրս է մնացել: Յանկարծ, դիմացից գալիս են «դարիահները», գիշերը պտտող պահակները, որոնք հեռ-

ուից *Թասլիմ* են բղաւում: Դաւիթը կրակում է եւ իր վը-
րայ յարձակուող առաջին ասկեարին սպանում: Միւսնե-
րը յետ են փախչում եւ, ծառերի մէջ դիրք բռնելով, սկը-
տում են կրակել: Մերոնք էլ յետ են դառնում եւ պատերից
կրակում: «Դաւրիաները», ի հարկէ, փախչում են. մե-
րոնք էլ քաշուում են իրենց տեղերը:

Միւս առաւօտ Այգեստանը շրջապատուում է գորֆե-
րով՝ խուզարկութիւն անելու պատրուակով: Ընկած գին-
ուորի դիակը տեսնելով թուրքերը գրգռուում են եւ սկսում
աջ ու ձախ կրակել անզէն մարդկանց վրայ: Այդ ժամա-
նակ սպաննում է մի խենթ կին, «Մարօ» անունով, եւ
դէպքը կոչում է «Մարոյի դէպք»:

Հայ հարուստների, միսիոնարների եւ եւրոպական
հիւպատոսների միջամտութեամբ սպանութիւնները դա-
դարում են: Ժամանակի վախկոտ եւ խաղաղասէր կուսա-
կալ Թահիր փաշան հիւպատոսների հետ համաձայնում է,
որ խուզարկութիւններ պիտի չկատարուին, եթէ Անդրա-
նիկն իր խմբով վանի շրջանից հեռանայ կամ դէպի Պարս-
կաստան եւ կամ դէպի Մուշ:

Բնորոշ է, որ Սասունի դէպքերի առթիւ Բիթլիսի
կուսակալը մեղադրում է Թահիր փաշային, որ նրա թու-
լութեան երեսից յեղափոխականներն արտասահմանից
անցնում են վան եւ այնտեղից՝ Մուշ:

Ինչ եւ է. հիւպատոսներն ու քաղաքացիները դի-
մում են Կոմսին եւ Անդրանիկին, որոնք, երկար եւ բա-
րակ խորհրդակցութիւնից յետոյ, համաձայնում են ե-
ղած առաջարկին:

Ուրիշ ելք չկար. արդէն կոնի անելու ոչ տրամա-
դրութիւն եւ ոչ էլ ոյժ կար: Մեր ամբողջ ռազմական ոյ-
ժը, նոյնիսկ վանի շրջանի, սպառուած էր Սասնոյ եւ ա-
պա՝ Մշոյ դաշտի դէպքերի ժամանակ: Նոր դէպքեր առա-
ջացնելու ժամանակը չէր. հարկաւոր էր տեղի տալ: Այդ-
պէս էլ լինում է. Անդրանիկն իր գլխաւոր ընկերներով
մեկնում է վանից: Զինուորներն էլ կամաց-կամաց անց-
նում են Պարսկաստան: Այդպիսով խնդիրը վերջանում է:

Այս անցքերը մեծ տպաւորութիւն էին թողել վա-
նի հասարակութեան վրայ: Ամբողջ պատիւը վերագրում

էին Կոմսին, եւ նրան պաշտելու չափ սիրում էին իբր փըր-
կարար:

Կար եւ երկրորդ հանգամանքը: Կոմսը տեղացի էր,
որը նոյնպէս մեծ տեղ է տուել վստահութեան: Դրսեցի-
ների մասին կարծիք կար, թէ նրանք ի՞նչ պիտի ցաւին ի-
րենց վրայ. ո՛չ կապեր ունին եւ ոչ սէր. ուրիշ բան է վա-
նեցին, որ վանի աւերման պատճառ չի դառնայ:

Կոմսի որոշումը անդարձ էր: Զէր ուզում լսել որեւէ
առարկութիւն: Պահանջում էր, որ գործերը շուտով յան-
ձրն առնենք, հաշիւները փակենք, որ ինքը շուտ մեկնի,
քանի «քրշա» կայ, քանի ֆիւրտերը դեռես գիւղերից դէ-
պի սար չեն բշուել:

Ցաւալին այն է, որ տեղացի ընկերներն էլ — Ալէս,
Արմենակ եւ Թէոս — նոյնպէս հրաժարում էին եւ յայտ-
նում, որ իրենք էլ ուզում են մեկնիլ արտասահման: Յի-
մար կացութիւն էր. իշխանը չէր կարող գաւառը թողնել,
մար կացութիւն էր գործ էր ստեղծել. մեր յոյ-
սը այն ժամանակ իսկապէս գաւառի վրայ էր: Տիգրանը
չէր կարող գործի դեկավարութիւնը իր վրայ վերցնել:
Նոյնը եւ վարդան-Շահպազը: Իսկ ես դեռ նոր էի եկել.
Ինչպէ՞ս կարող էի *բիսկ* անել: Բայց «անճարը կերել է
բանջարը». ստիպուած էինք տեղի տալ: Իշխանը խոր-
հուրդ տուաւ ինձ չվախճալ գործից, այլ վերցնել. ինքը
նամակներով ինձ կ'օգնէ, իսկ մինչ այդ՝ ինձ մօտ կը թող-
նէ վարդան-Շահպազին, որ լաւ ծանօթ է տեղական պայ-
մաններին, մանաւանդ որ Տիգրանն էլ կու գայ հոն:

Ստիպուած եմ համակերպիլ: Շուտով ծանօթանում
եմ բոլոր գործերին: Կազմում ենք զինական հաշիւները,
պատրաստում ենք դրամական հաշիւները: Բայց առաջ է
գալիս մի բարդութիւն. դրամական հաշիւների մէջ 42.000
դրուշի բաց է նկատուում: Կոմսը ինքն անձամբ չէր վարել
հաշիւները եւ լաւ էլ չէր հասկանում. մի երկու շաբաթ
էլ դրա վրայ եմ չարչարում: Այն ժամանակ դրամ չկար.
էլ դրա վրայ եմ չարչարում: Այն ժամանակ դրամ չկար.
էլ այդ բոլորը պարտ էինք շուկային. վախենում էինք, թէ
Կոմսի մեկնելուց վերջը կազմակերպութեան ունեցած դը-
րամական վարկը, որը միշտ բարձր է եղել, յանկարծ կո-
տրուի: Հարկաւոր էր գործը շարունակել, բայց ո՞րտե-
ղից նարել 42,000 դրուշի բացը եւ ի՞նչպէս ապրել: Մի

գումար, որ այն ժամանակուայ հաշուով 4,000 ռ. (2,000 տոլար) էր:

Ստիպուած ենք բաւականանալ նրանով, որ արձանագրութիւններ ենք կազմում, ամէնքը ստորագրում եւ ուղարկում Արեւելեան Բիրոյին ի գիտութիւն: Այն ժամանակ *բացի* հանգամանքը պարզ էր. ծախսեր էին արուել առանց գրելու թէ ինչի վրայ. սա կամ նա դրամ էր ուզել: Գիտէին, որ ծախս էին արել, բայց ի՞նչ, ե՞րբ, որի՞ համար, արդարացուցիչ թղթեր չկային: Եւ պէտք է ասել, որ այդ պայմաններում թղթեր էլ չէինք պահում դիտմամբ, այլ գրում էինք միմիայն մանրամասնաբար ելքի եւ մուտքի հաշիւները. անունները՝ կեղծ եւ համառօտուած, շատ շատ ծախսարարների կեղծ ստորագրութեամբ հաստատուած արդարացուցիչ թղթերով:

Վերջապէս, Կոմսը մեկնեց 1905ի գարնան, իսկ մենք ձեռնարկեցինք գործի: Բայց, ինչպէս ասացի, դժգոհութիւն կար այս առթիւ տեղացի ընկերների մէջ. ոչ-փախըստական ընկերները խաբար չունէին, իսկ ժողովուրդը ուշ իմացաւ Կոմսի մեկնումը:

Եղած դժգոհութեան արտայայտութիւններից կ'ուզեմայի երկու բնորոշ դէպք մէջբերել. մէկը՝ ներքին, տեղացի ընկերների կեանքից, միւսը՝ ժողովրդի:

Մեր զինուորներից Գրիգորը, որ եղել է Սասուն օգնութեան գնացող Թումանի խմբի մէջ եւ կարծեմ մասնակցել է այնտեղի կռիւներին եւ անցել է Վան, բաւական խօսիլ գիտէր եւ ձեռքից էլ գործ կու գար. յայտնի ամբոխավար էր եւ խիստ ծեծի կողմնակից: Կարծեմ՝ ինքնագրլուխ մի սպանութեան եւ կամ մի այլ յանցանքի համար ինձնից առաջ նրան ախտրել էին Լիւ անապատ «*վասն բաւուրթեան մեղաց*»ը, բայց իրան այնտեղ էլ հանգիստ չէր պահել. դուրս էր եկել մօտի գիւղերը, դատեր կտրել, նզնաւորների, վարդապետների գլխին օյիմներ սարքել, անապատի մէջ իր խելով բարեփոխութիւններ մտցրել: Եւ այդ բարեփոխութիւնների վկան էլ այն էր, որ վերջըրել էր բոլոր հին մեծ հնագիտական, գեղարուեստական արժէք ունեցող պատկերներն ու վարագոյրները լուանալ էր տուել՝ կեղտերը մաքրելու համար, բայց, ի հարկէ, ամէն բան փնացրել էր: Կարծեմ ախտրը դեռ չլրացած՝

Կոմսի ժամանակ վերադարձել էր քաղաք: Իմ ժամանակ գիտէի, որ կազմակերպութեան հաշուին ապրում էր. ունէր տուն եւ կարծեմ երկու բոյր թէ երկու եղբօր աղջիկներ, որոնք ապրում էին Միրզոյեան Կարոյի տունը:

Դրամական տագնապի պատճառով, ծախսերը կըրֆատել եւ որոշ սահման էինք դրել: Մի օր Գրիգորը գըրֆրուած մտաւ ինձ մօտ գոռում գոչումով. յայտնեց որ ինքը չի կարող ապրել որոշուած գումարով, որ ես բռնութիւն եմ անում, հին գործիչներին էլ եմ ուզում, եւն.: Պահանջեցի, որ սենեակը թողի: Աւելի կատաղեց: Ուրիշ էլ չկար, վար գտնուող տեղացի ընկերներին կարգադրեցի, որ էշեն: Նրանք էլ, փոխանակ հեռացնելու, ուզեցին հանգստացնել եւ հարցնել, թէ՛ — թողէ՛ք, տեսնեմք ի՞նչ է պատահել, Գրիգորը ի՞նչ է ուզում եւայլն: Այս բանը ինձ վրայ աւելի ազդեց:

Այդ օրը մենք Փաշի Փողան «Դրախտն» էինք. մեր տան դէմը գտնուում էր ինձ հետ պտտող զինուորական խումբը, Յարութիւնը, (ինձ հետ Պարսկաստան եկած եւ այնտեղից Մոսկի հետ հասել էր Վան), Մոսոն, Մուռ Դաւիթը: Ստիպուած եղայ վազել նրանց մօտ եւ կանչել: Նըրանք եկան, ի հարկէ Գրիգորին հեռացրին, բաւական անհամ միջադէպերից յետոյ:

Այս ի հարկէ, ցոյցի պէս մի բան էր, ինձ փորձել էին ուզում, կամ, աւելի ճիշդ, վախեցնել:

Նոյն գիշերը տեղական ընկերներով ժողով ունեցանք վարդան-Շահապահի հրաւերով: Գանգատուեցի, որ Ալէսը, Արմենակը եւ միւսները չէին ենթարկում ինձ, որ իմ դէմ դաւ կայ, որ այս պայմաններում աշխատել չեմ կարող, ինչպէս և ամէն մարդու քահանային տեղի տալ: Թէնսն երդում, պատառ եկաւ, թէ եղածը թիրիմացութիւն է, թէ նման դէպք էլ չի կրկնուի եւ թէ ինքն իր գըրլուով պատասխանատու է...

Դէպքը սրանով էլ փակուեց, եւ իրօք ուրիշ «ցոյց» իմ դէմ էլ տեղի չունեցաւ:

Ժողովրդական հոգեբանութեան տեսակէտից շատ բնորոշ է եւ հետեւեալը:

Բանտում մենք ունէինք բազմաթիւ քաղաքական «յանցաւոր»ներ, — ոմանք վնիւ կերած, ինչպէս վարդ-

գէսը, Մուշեղը եւայլն, ոմանք էլ դեռ դատի տակ: Վերջինների համար գանազան միջոցների էինք դիմում՝ ազատելու կամ թեթեւ պատիժ վնոել տալու:

Պէտք էր լինում բռնել թուրք փաստաբան, հայ դատաւորներին տեսնել եւ խնդրել կամ, աւելի ուշադ ասել, որ խայտառակութիւն չանին: Շատ անգամ թուրք դատաւորներին հարկ էր լինում կաշտել կարեւոր ընկերներ ազատելու համար:

Այսպիսի աշխատանքները մեզ համար կատարում էր Նշան էֆ. Գալեան՝ մի ինքնուս փաստաբան, բայց ընդունակ եւ հարպիկ մարդ: Եւ պէտք է խոստովանիլ, որ բաւական ժամանակ նա շատ մեծ ծառայութիւն է արել մեզ համար: Ազատութեան ժամանակ դաշնակցական դարձաւ եւ կուլտուրական ու պետական գործերի մէջ կուսակցութեան կողմից լաւ աշխատում էր: Վերջը ինքնագլուխ կերպով իր թեկնածութիւնը դրեց պարլամենտական ընտրութիւնների ժամանակ ու կուսակցութիւնից հեռացուեց: Մեռաւ Կարին, պատերազմի ատեն, 1915ին:

Այդ օրերին բանտումն էր մեր ընկերներից Բիթլիսցի Արմենակ Յօխիկեանը, Սյաք կեղծ անունով: Նա բռնուել էր Ալաշկերտի Միրզազան գիւղում, մեր ֆիւրտ բարեկամ Մահմուտ բէյի տանը, կարծեմ Մոսուն եւ Զառանի արշաւանքի հետեւանքով: Նա ներկայացել է, որպէս Պարսկաստանցի բժիշկ, իբր թէ Միրզազան է գնացել Մահմուտ բէյի կնոջ բժշկութեան համար: Այս բանի համար վկայութեան էր կանչել Աբաղայի Մուսթաֆա բէյին՝ Հայտարանցի աշիրաթի բէյերից մէկին, որը եկել եւ վկայում էր, թէ իբօք, Սլաֆր Կարանի բժշկութիւն էր անում, եւ ինքը գիտէ, որ նա Պարսկաստանցի է... Արմենակն իբօք, Կարանի «բժշկութիւն» էր անում, ի հարկէ, մեր փոխադրական գործերը տեսնելու համար:

Հարկ կար Նշան էֆ. տեսնել Արմենակի դատական գործի կազմակերպման համար: Բանտի գործը վարում էր մեծ հմտութեամբ Թէոսը, ինչպէս եւ նամակային կապը նա էր պահում: Նշան էֆ. Թէոսի ազգական էր եւ անձնական բարեկամը: Ամէն անգամ՝ նրան տեսնելու համար՝ պէտք էր լինում Նշան էֆ. ֆաղաֆամիջից Այգեստան հրաւիրել:

Տեսակցութիւններն, ի հարկէ, գիշերներն էին լինում: Կամ Նշան էֆ. էր գալիս Թէոսեց տունը, որ շատ կասկածելի էր, որովհետեւ Թէոսը յայտնի փախստական գործիչ էր եւ նրա տան վրայ միշտ հսկողութիւն կար: Կամ մենք էինք գնում իր անբանց տունը՝ Արարուց կողմը Բազար Գիւրիկեցից ջոջ աղեց տունը:

Երեկոյեան դէմ ես եւ Թէոսը մի քանի զինուոր ընկերներով գնում ենք Նշան էֆ. մօտ, որոշուած տունը: Նոր են ընթրիքը վերջացրել (վանում օրական երկու անգամ են նաշում, — առաւօտեան վաղ, երբ շուկայ են գրնում, եւ մէկ էլ երեկոյեան՝ շուկայից վերադարձին): Նստում ենք, երկար ու բարակ «բարի եկաք» «բարի տեսանք», «վըր մեր աչաց», «վըր մեր գլխուն» եւայլն:

Նշան էֆ.նուն անաջին անգամ եմ տեսնում. հանելի դէմքով մի երիտասարդ է: Երեւում է, որ մեր ներկայութիւնը ջղայնացնում է նրան, մանաւանդ վախեցրնում է, թէ եւ տանկական նուրբ ֆաղաֆամարութեամբ աշխատում է սօղել: Ինքը գիտէր, թէ ով եմ ես, իսկ տրնեցիք՝ ոչ...

Խօսակցութիւնը, քանի որ ընդհանուր է, կատարում ենք տնեցուց ներկայութեամբ: Մէկ էլ տան պատար, որ Թէոսին բարեկամ էր գալիս, հարցրեց Թէոսին.

— Թէոս աղա, ջե մեռնիմ, ճի՞շդ է, որ Պ. Բժիշկը (Կոմս) գնացել է. խա՞... .

— Հա, մայրիկ, գնացել է, ամա շուտով կը դայ:

— Աբար, մեր տունը աւրեց. ափսոս չէր մեր բըժիշկ: Սա նոր եկածը, կ'ըսեն, ծուռ է, վեր վար չի ճանչնայ, պիղծ է (խիստ իմաստով), մեր անուշ վանը աւրել պիտի տայ...

Ամէնքս ծիծաղից մեռնում ենք: Խեղճ պառար չգիտէ, որ «պիղծը» եւ «ծուռը» դէմը նստած է... Ուշ գլխու ընկաւ...

— Աբար... ջէօնամ ես... Ինչ ըրի. մեղայ ջեզ, Աստուած: Աս էլ աղէկ կ'երեւայ: Աստուած բարի յաջողութիւն տայ:

Բայց կարծեմ առ ի ֆաղաֆամարութիւն էին ասուած այս խօսքերը: Ժամանակ չկորցնելու համար անցնում ենք միւս սենեակը մեր գործին:

Նախ քան գործերի ընդհանուր ընթացքը պատմելը, կ'ուզեի տալ այն փախստական եւ ոչ-փախստական գործիչների համառօտ կենսագրականները, որոնք վան մտած ժամանակ գործօն մասնակցութիւն ունէին կազմակերպական աշխատանքների մէջ:

Այսինքն փախստական ընկերներից:

Իշխան, Նիկոլ Միքայէլեան. — Իշխանը Շուշեցի էր. կրթութիւնը ստացել էր Շուշուայ քեմական դպրոցում, շարունակել էր Երեւանի քեմականում, վերջին աստիճանական ֆնուրիւնը տալով դուրս էր եկել:

Պապանեկան հասակից մտել էր յեղափոխական ասպարէզ. եղել էր գործիչ Ալեքսանտրապոլի եւ Կարսի շրջաններում: 1903ին մտել էր Երկիր՝ Բասեն, Մեմակի հետ: Անցել էր սահմանը՝ առաջնորդելու Նեվրուզի խումբը: 1904ին մասնակցել էր Ուզունվերանի և Բասենի դաշտի կրօնիներին, Նեվրուզի խմբի հետ: Խումբի մնացորդների հետ վերադարձել էր Կովկաս եւ նոյն թուին (1904), Կովսի հետ խմբով անցել էր վան:

Իշխանին, ինչպէս իր տեղում ասել եմ, ես ճանաչել եմ դպրոցական օրերից: Նրան առաջին անգամ աշակերտական *զարգացողական* (որ յետոյ դարձաւ *յեղափոխական*) խմբի մէջ մտցնողը ես եմ եղել: Նրանց խմբի հետ պարապել եմ 2-3 տարի: Փոքր ժամանակից ըմբոստ բնւորութիւն ունէր. բայց շնորհիւ ընկերական ոգիին եւ ընդունակութիւններին, բոլորի համակրութեան էր արժանացել, թէեւ իր հասակակից ընկերները նրանից ոչ միայն անցել, թէեւ իր հասակակից ընկերները նրանից ոչ միայն անցել, այլեւ վախենում: Իե՛ն աշակերտական սեղանի վրայ հայրենասէր էր եւ փորձել էր փախչել Հայաստան:

Նրան ես հանդիպել էի ե՛ւ Կարս: Սովորական միջակ եւ քարայիկ մի երիտասարդի տպաւորութիւն էր թողել վրաս, մի քիչ յարակնութիւններ էր ստացած:

Ուրիշ բան չէր վանի տպաւորութիւնը: Այդ մի տարի տարի ու կէսը կարծես բոլորովին փոխել էր նրան: Աւելի լուրջ էր եւ հասունացած, թէեւ 22-23 տարեկան լինէր:

Արդէն իրեն համար ստեղծել էր հասարակական դիրք յեղափոխական ասպարէզում. կարողացել էր կարճ

ժամանակում ամբողջ Լեռնապարի շրջանի գիւղերը կազմակերպել. ժողովուրդը բաւականին զինել. ստեղծել էր հրաշալի զինուորական խմբեր. իսկ իր թուրքիկ խումբը, վասպուրականի ամենաընտիր եւ ամենակտորին խումբն էր: Բազմաթիւ կռիւների էր մասնակցած: Ջարմանալի ղեկավարելու, թելադրելու, կազմակերպելու շնորհիւ ունէր: Նոյն շրջանում կային 10-15 տարուայ անցեալ ունեցող գործիչներ (ինչպէս Շատախցի Յովսէփը, Նորգեցի Հաջին եւայլն), որոնք բոլորը ենթարկուում էին նրան եւ մտել էին, իբրեւ հասարակ զինուորներ, նրա խմբի մէջ: Քրդերի մէջ արդէն անուն հանել էր իր կռիւներով եւ գործունէութեամբ. իսկ կառավարութիւնը վասպուրականի յեղափոխական գործիչների մէջ ամենաշատը Իշխանից էր վախենում եւ նրան հետեւում: Նարեկի երկու կռիւների առթիւ, արդէն դատի տակ էր եւ «ղիպի» (ի բացակայութեան) «հիւբըմ» (վնիւ) կայացրին մահուան կամ 101 տարուայ բանտարկութեան, իբրեւ «էչկեա» (արագակ): Այսպէս էին կանչում թուրքերը հայ յեղափոխականներին անարգելու համար:

Նրանից պատկառում էին ե՛ւ վանի մեր ընկերներն ու զինուորները, իսկ ժողովուրդը ոչ միայն պատկառում էր, այլեւ սիրում: Արդէն սկսել էին երգել նրա քաջագործութիւնները՝ «*Իշխան եկաւ ձեռք մալիզէր*»...

Կարճ. իմ վան մտած ժամանակ Իշխանը, կարելի է ասել, ամենահեղինակաւոր զինուորական յեղափոխականն էր (*):

Վարդան-Շահպաղ. — Սա Սվազի վիլայէթի Տիվրիկ գաւառիցն էր, արդէն հասակաւոր, ներմակ մարդ էր, մեր մէջ ամենահասակաւորը: Դրա համար էր որ «*Բիճա Վարդան*» էինք ասում. արհեստով լաւ առաջագործ է եղել: 90ական թուականներից Պոլսում մտել է Հ. Յ. Դաշնակցութեան մէջ. Բանք Օթոման մտնողներից մէկն էր, ասլա աֆտորուել էր Ամերիկա:

Ամերիկայից անցել էր Պարսկաստան կազմակերպական գործով: Շնորհիւ էր հմուտ արհեստաւոր լինելով՝

(*) *Իշխանի մասին կենսագրական գիծեր եւ յիշողութիւններ տես «Հորհրդան», 1916, թիւ 78, Ապրիլ 7:*

մտել էր Թաւրիզի մեր զինագործական արհեստանոցը եւ մի երկու տարում սովորել էր զինագործութիւն:

Զգիտեմ, ո՞ր թուականին էր մտել վան, իբրեւ արհեստաւոր գործիչ: Աշխատակցել էր վարդգէսին, իսկ նրա բռնուելուց յետոյ, մի առժամանակ կատարել էր կուսակցութեան ներկայացուցիչի դեր: Վարդգէսի ձեռքակալուելուց վերջը, սոսկալի հակազդեցութիւն է եղել վանում. ոչ ոք չի ուզել տուն տալ, դրամ չեն ստացել արտասահմանից, յարաբերութիւնները և կապերը խզուել են: Վարդգէսի բանտարկուելուն պատճառով հասցէները բռնուել եւ փնտրուել էին: Երկար ժամանակ սոսկալի նեղութիւն են փաշել ինքը՝ Թէոսը, Ալէսը, Արմենակը, Կառկաոցի Եղիշը եւ ուրիշները. շաբաթներով ընկած մնացել են մի խոնար և կուրում, առանց տաֆ կերակուրի, ոչիլների եւ կեղտերի մէջ կորած: Այդ էլ բաւական չէ. ստիպուած են եղել ձմեռով փաղափից ելնել եւ ապաւինիլ վարագայ լեռը. շաբաթներով պատսպարուել են այրերի մէջ, անօթի, մերկ:

1903ին իբր պատգամաւոր գնացել էր Բուլգարիա տեղի ունեցած Դաշնակցութեան Ընդհ. ժողովին, վերադարձել էր Երկիր 1904ին, ինչպէս իր տեղը ասացի, Տիգրանի, Մակուեցի Մեսրոպի եւ ուրիշ ընկերների հետ:

Վան մտած ժամանակս վարդանը փաղափում էր: Նրանից ստացած առաջին տպաւորութիւնս հրաշալի էր: Խաղաղ դէմքով, ներմկած մազերով, միջահասակ մի մարդ էր, շատ ուժեղ եւ պինդ ջիգերով, երկաթի պէս դիմացկուն: Զմեռը գլխաբաց եւ շապիկով էր պտտում:

Օրերով մարդերու հետ չէր խօսում. որեւէ գործիք էր փանդում, դիտում, փորձում կամ արհեստանոցում աշխատում: Առհասարակ ձմեռը մնում էր գաւառ — Խնձորուտ. սոսկալի նեղութեան եւ կարիքների մէջ: Կերածը եղել է կորեկ եւ վայրի խնձոր. շատ անգամ հասարակ թէյ անգամ չի եղել:

Վարդանը իմ աչքում միշտ եղել է մեր ժողովրդի տիպարը, — համեստ, աշխատասէր, շինարար եւ լուսկեաց:

Վարդանը մնաց վան մինչեւ Թրքական Սահմանադրութեան հրատարակութիւնը, որից յետոյ մեկնեց դէպի

իր հայրենի տունը, ուր կին ունէր, որ 20 տարի էր չէր տեսել, եւ որդի ունէր, որին չէր ֆանաչում:

Ազատութեան օրերին նա մի կողմից իր պարէնն էր հոգում, միւս կողմից շարունակում էր կազմակերպական յեղափոխական գործը: Նա մեծ ֆանակութեամբ գէնֆ է մտցրել Սվազի եւ Տիվրիկի շրջանը:

1915ի Մեծ Եղեռնի օրերին՝ վարդանին, ինչպէս եւ միւս յեղափոխական գործիչներին, կառավարութիւնը ուզեցել է թակարդ գցել, բայց նրանք, իբրեւ փորձ եւ հին յեղափոխականներ, կռահել են եւ խումբով լեռը փաշուել:

Տարի ու կէս թէ որքան նա ապրել էր իրենց գաւառի լեռները: Լեռների գագաթը շինել էր մի գաղտնի տուն եւ իր ֆակատագրին վայել ամէն սոսկումներով ապրել էր ու սոկունութեամբ սպասել, մինչեւ որ ռուսները մտել էին Երզնկա:

Վարդանին տեսայ 1917ի գարնան. նոյն դիմացկուն, սառն եւ հանդարտ մարդն էր... Մի ֆանի շաբաթ ընկերներին եւ գործերին ծանօթանալով, նա նորից վերադարձաւ Երզնկա. փորձեց մի ֆանի անգամ Տէրսիմից անցնել Տիվրիկ, այնտեղ եղած մնացորդները փրկել բերելու համար, բայց չյաջողուեց:

Այսօր էլ դեռ նա պատնէշի վրայ է, թուրքերի մէջ մնացած հայերի փրկութեան գործով է զբաղում:

Ճիշդ հայ ժողովրդի նման, գլխուն հարուածում են, իսկ նա շարունակում է ապրիլ, մանաւանդ՝ շինել...

Տիգրան — Յարութիւն. — Տիգրանի մասին արդէն վերը մի ֆանի խօսք ասացի. շատ գաղափարական եւ մաքուր մարդ էր, բայց բաւական անգործնական եւ ջգային. ժողովրդի հետ վարուել չգիտէր, հակառակ իր թափած բոլոր ջանքերին: Պէտք է խոստովանիլ, որ թէեւ անլի էր գոհողութիւն անում եւ ջանքեր թափում, ֆան մեզանից որեւիցէ մէկը, բայց մեծ արդիւնք չէր դուրս գալիս:

Բաւական կանոնաւորութիւն էր մտցրել թէ՛ կեդրոնական կոմիտէի եւ թէ՛ գաւառական ու գիւղական հաշուետուութեան մէջ: Կոյր աղիքի հիւանդութիւն ունէր. երբ ցաւը բռնում էր, դժոխային տանջանքներ էր ունենում. լաւ չէր փայլում, այնպէս որ գործերն էլ դանդաղ էր տանում:

Մէկ անգամ Թիմար՝ Ալիւրի մէջ քիչ մնաց, որ դէպքի հանդիպի: Թէեւ ինքը ուսական բանակում ծառայած էր եւ լաւ նշանաձիգ էր, բայց հետը շատ փորձառու զինուորներ չկային: Երբ, յանկարծ, լուր ստացանք, որ Ալիւրը պաշարուած է, ֆաղափից գէնք եւ թնդանօթ էին տարել, կարգադրութիւններ արինք, որ մօտի գիւղերից օգնութեան գնան, իսկ ֆաղափից՝ գիշերը: Մինչ այդ, նարպիկ Ալիւրցիք ունենում են մի ամբողջ պահարան սենեակ, որի մէջ տեղաւորում են Տիգրանին եւ խմբին: Գիւղը թափուած զինուորներին լաւ խմցնում եւ հիւրասիրում են: Խուզարկութիւնը արդիւնք չի տալիս:

Երեկոյեան լուր ենք առնում, որ տղաները ազատուել են: Տիգրանը պատմում է, թէ ինքն ու ընկերները վեց ժամ շան հալ են ֆաշել թագստարանի մէջ: Շատ յուզիչ է եղել մի պառաւ կնոջ արածը: Երգիքի մօտ տանիքը նըստած՝ ինքն իրեն միշտ խօսել է. տղաներին հաղորդելով գիւղի մէջ գօրքի շարժումների մասին՝ միշտ յուսադրել է, թէ բան չկայ. կամ հրահանգել է, որ պատրաստ լինին, դէպի իրենց են գալիս:

Հակառակ իր հիւանդութեան եւ ֆաշած անտանելի ցաւերին, Տիգրանը երկու տարի տոկաց Երկրի անտանելի դժուարութիւններին: 1906ի վերջը, ընկերների ստիպման տակ, դուրս եկաւ եւ գնաց Եւրոպա վիրահատութեան: Ընտանեկան պատճառներով Տիգրանը մի առժամանակ ֆաշուեց յեղափոխական ասպարէզից՝ միշտ ընկերների հետ նամակային կապ պահելով եւ միշտ երագելով Երկիրը եւ ցաւելով, որ հետո է անմիջական ակտիւ գործից: 1913ին, երբ Ռուսերը պիտի երթար Մուշ, իր հետ էր վերցրնում նաեւ Տիգրանին, որ այնտեղ յայտնի էր Վարդան անունով:

1913 թուականին, դպրոցական, հասարակական եւ յեղափոխական գործունէութեան մէջ, աջակից եւ փոխարինող է եղել Ռուբէնին:

1914 թուականին, երբ պատերազմը պայթեց, Կոմսը (Վահան Փափագեանը), իբրեւ *մէրուս*, կուսակցական ընկերների որոշումով համբել էին Մուշ՝ ընկերներին օգնելու: Հակատագրի բերմունքով այն մարդիկ, որոնք երբեմն իբրեւ թշնամի են բաժանուել, ազգային մեծ նգնա-

ժամին միասին են ընկնում, միատեղ աշխատելու հարկին տակ դրում:

Սասունի կոիւներից առաջ Տիգրանը (Վարդանը) միւս ընկերների հետ ֆաշում է սար, իբրեւ փախստական: Մասնակցել է Սասունի կոիւներին, եղել է ռազմամթերքի եւ պահեստի ընդհանուր կառավարիչ եւ մեծ հմտութեամբ է ղեկավարել գործը:

Երբ եկել է նգնաժամային րոպէն, երբ ռազմամթերքը սպառուել է ու կռուի ղեկավարները ժողովրդական մեծ ժողովում յայտներ են, որ ընդհանուր դիմադրութիւնն այլեւս անհնարին է, երբ իրար տուել են վերջին համբոյրներ, որոշելով միմեանցից բաժանուել եւ իրենց նակատագիրը յանձնել կոյր պատահականութեանց, Տիգրանը սաստիկ ազդում է ժողովրդի այդ յուզումնալից դրութիւնից եւ բացազանչում է. «*Հապա ի՞նչպէս թողնենք ժողովրդին մենակ ու անպաշտպան*»...

Անփոյթ դէպի սեփական կեանքը, անյոյս դէպի մօտիկ ապագայի արշալոյսը՝ նա առիթներ է փնտռում սպանուելու: Եւ այդ առիթը չի ուշանում... Տիգրանը նահատակում է Սասունի ապստամբութիւնը ննջուելուց մի ֆանի օր վերջ, մի պատահական կռուի մէջ:

Մակուեցի Մեսրոպ. — Այն ժամանակ նա յայտնի էր *Մաշտոց* կեղծ անունով:

Մեսրոպ բնիկ Մակուեցի էր. իր կրթութիւնը ստացած էր իրենց գիւղի տարրական դպրոցում. զարգացած եւ առաջ է գնացած կուսակցական կեանքի մէջ: 90ական թուականներէն սկսած՝ եղել է կազմակերպութեան մէջ. մասնակցել է առանձնապէս Թադէի վանքի շրջանի փոխադրութեան: Մոկացի Աղբերի եւ Սլափի հետ երկար ժամանակ վանքում աշխատել է փոխադրական գործի մէջ, — Կովկասից դէպի վանք եւ վանքից դէպի Երկիր: Կտրին եւ լաւ նշան զարկող տղայ էր, Պարսկաստանի ընկերների մէջ աչքի էր ընկնում եւ յարգուած: 1904ի աշնանը Վարդանի եւ Տիգրանի հետ խմբով անցել է Վան: Այնուհետեւ եղել է իշխանի հետ Լեռնապարի շրջանի մէջ, մասնաւորապէս Մոկս, Կառկառ եւ Գաւաշ: Կազմակերպական զինման եւ զինուորական կազմակերպութեան մէջ մեծ դեր է կատարել:

Սա Տիգրանի պէս դժբախտութիւն ունէր հիւանդ լինելու. փայծաղի հիւանդութիւն ունէր, որը աւելի սուկալի ցաւեր ունէր, եւ թոյլ էր ֆիզիքապէս:

Հիւանդութիւնը յեղափոխական կեանքի մէջ աւելի վատ է, քան մահը:

Փախստական կեանքի սարսափը, ամէն օր փոխադրուելու անհրաժեշտութիւնը, յարաշարժ կեանքը ոչ թէ քրոնիք սուր հիւանդութիւն ունեցող, այլեւ մի քիչ ֆիզիքապէս սկզբնական ընկերների համար անտանելի էր. իսկ սուր հիւանդութիւն ունեցողների համար՝ դժոխք:

Դրութիւնը բարդանում է մանաւանդ հիւանդի դիրքի աստիճանով: Եթէ հիւանդը աչքի ընկած, կառավարութեան հետապնդած կեդրոնական գործիչ է, նրա բանը պրծաւ, որովհետեւ ոչ մի տեղ ոչ հանգիստ կարող է առնել եւ ոչ պառկիլ: Այդպիսի հիւանդներին՝ տիֆ, սուր յոգացաւ, ծաղիկ եւայլն, որ հանգիստ պառկիլ է պահանջում, ընդհակառակը, շալակած, կատուի ձագի նման ամէն օր տեղափոխութիւն պէտք է անել տնից տուն: Երբ կառավարութիւնը լսում է, որ այս ինչ գործիչը հիւանդ է, հետապնդումները եւ խուզարկութիւնները խստացնում է:

Բժշկական օգնութիւնը տալիս են ընկերները մեծ մասամբ իրենք: Ամէն երկիր մտնող գործիչ սովորում էր բժշկական առաջին օգնութիւն հասցնելու չափ գիտութիւն: Շարժական դեղարանը միշտ մեզ հետ կար, նոյնպէս եւ «ընտանեկան բժշկարանը», որ կարդում էին եւ բժշկում իրար եւ ժողովուրդը:

Այդ ասպարէզի վրայ մեծ յաջողութիւն ունէր Կումսը: Վանում նրան անուանում էին «Բժիշկ»: Նա յայտնի էր նաեւ «Բժիշկ» կեղծ անունով եւ կարգին բժշկութիւն էր անում: Ամէն տուն մտնելիս, ով փոքրի ցաւ, աչքի ցաւ կամ 20 տարուայ ոսկրացաւ ունենար, գալիս էր Վահանից *Իւաջ* (դեղ) ուզելու: Վահանն էլ կամ մեր ունեցածներից էր տալիս, կամ «ընտանեկան բժշկարանից» դեղատոմս գրելով՝ Ամերիկեան դեղարան էր նամբում:

Մի ժամանակ տեսանք, որ Վահանի բժշկութիւնը մեր վրայ թէ թանկ է նստում եւ թէ պիտի վտանգի, որովհետեւ իբրև բժիշկ իմաց էին տալիս դրացի բարեկամ-

ներին, եւ գալիս էին գտնում: Մի օր Իշխանի հետ գաղտուկ որոշեցինք բժշկի «ընտանեկան բժշկարանը», այսինքն գիտութեան ամբողջ դրամագլուխը գողանալ: Նա գիրքը պահում էր իր պայուսակի մէջ: Մի օր յարմար առիթ գտանք, գիրքը թոցրինք եւ ուղղակի նամբեցինք Ազքամար, որ այլեւս ձեռք չընկնի: Սրանով էլ վերջացաւ Վահանի բժշկութիւնը:

Մեր հիւանդ ընկերներից համեմատաբար երջանիկ էին նրանք, որոնց անունը չէր տարածուած: Այդպիսի դէպքում հիւանդին համար գտնում էինք մի վստահելի տուն, եւ ամէն դիրքութիւն ստեղծում էինք, որ բժշկուի:

Բժշկական օգնութեան գործում մեզ մեծ ծառայութիւն են մատուցել ամերիկեան բժիշկները, մանաւանդ Տոքթ. Աշըրը, որն անվախ միշտ յանախում էր մեր հիւանդներին, ճիշտաբար բժշկում էր ոչ մի անգամ, ոչ ցերեկ եւ ոչ գիշեր չէր մերժում գալ: Նա կատարել է նաեւ վիրաւոր ընկերների վիրաբուժական գործողութիւն եւն.: Բացի իր անձնական օգնութիւններից՝ նա թոյլատրել էր իրենց հիւանդանոցի ֆելդշերներին եւ հիւանդապահներին, որ յանախեն մեր հիւանդներին եւ բժշկեն: Դեղերն էլ, ի հարկէ, նրանց դեղատնիցն էին գնում: Ամերիկեան հիւանդանոցի եւ շրջանի տղաներից այդ տեսակէտից մեծ դեր են կատարել Վաղարշակ Տէր Յարութիւնեանը, դեղագործ Ստեփանը, հիւանդապահ Արմենակը, իսկ վերջերը նաեւ հիւանդապահ Կարապետը:

Աւելին կար. ամերիկացի միսիոնար բժիշկներն այնքան բարի էին, որ թոյլ էին տալիս մեր փախստական յեղափոխական գործիչներին, — ի հարկէ, ոչ աչքի ընկնողներից, եւ զինուորներին տեղաւորուելու իրենց հիւանդանոցում: Ամերիկեան հիւրընկալ հիւանդանոցի յարկի տակ ամիսներ հանգիստ պառկել եւ բժշկուել են մեր Տիգրանն ու Մեսրոպը եւ ուրիշ շատ զինուորներ: Մենք էլ մէկ մէկ, զինուած խմբով, գիշերը գնում էինք նրանց այցելութեան:

Մեսրոպը կարծեմ մի կէս տարուց աւելի չկարողացաւ մնալ երկրի մէջ հիւանդութեան պատճառով: Նա էլ անցաւ Պարսկաստան եւ այնտեղ շարունակեց յեղափոխական գործունէութիւնը: Կամաւորական շարժման ժամա-

նակ նա Դրոյի գնդում վաշտապետ էր: Դրոյի հետ առաջինն էր, որ մտաւ Շատալս: Նա էր, որ գնաց իր ծանօթ շրջանները, Սպարկերտի եւ Մամրտանֆի ժողովուրդը փրկեց բերաւ Մոկս, որ եւ պաշտպանեց մինչեւ նահանջի օրը. ամենավերջինը եղաւ, որ վաշտով Վանից դէպի Բերկրի նահանջեց:

Յարութիւն Միրաքեան.— Սա Ամերիկայից եկած ընկերներիցն էր: Սասուն գնալու համար Ալեքսանդրապոլից միացաւ ինձ: Պարսկաստանում բաժանուեցինք: Յետոյ Մոսոյի եւ Նիկոյի հետ եկաւ Վան: Սրան ինձ ընկեր էին տուել Ալեքսանդրապոլում, իբրեւ պայթուցիկ նիւթերի վարպետ: Սկզբնական շրջանում ինձ հետ էր Վանում. յետոյ, կամաց-կամաց ծանօթանալով շրջանի գիւղերին, մեծ ընդունելութիւն ցոյց տուեց ժողովրդական կազմակերպութեան եւ զինական-գինուորական ասպարէզում:

Շուտով նրան տուինք մի ամբողջ ու մեծ շրջան, Արնակի գաւառը, որ 35-40 գիւղ ունէր, ինչպէս նաեւ Բողագ-Քեասանի շրջանը:

Յարութիւնը դարձաւ Վանի շրջանում ամենաժողովրդական անհատը: Կարող եմ ասել, որ մեր ժամանակում, մեր ընկերներից ոչ ոքի հետ ժողովուրդն այնքան սերտ կերպով չէր կապուած, որքան՝ Յարութիւնի հետ: Նա ունէր ժողովրդական գործիչի բոլոր բարեմասնութիւնները. դիմացկուն էր, խաղաղ բնաւորութիւն, մեծ գաղափարաբանութիւն եւ գոհողութեան ոգի, ինչպէս եւ ժողովրդի հետ խօսելու փայլուն լեզու, համբերատարութիւն, կազմակերպելու եւ ղեկավարելու ընդունակութիւն ունէր:

Յարութիւնը Վանում մնաց երկու տարի: 1907ին հիւանդութեան պատճառով դուրս գնաց մի քանի ամսով, 1908ի Սահմանադրութեան՝ դարձաւ Երկիր, երբ արդէն հիւանդութիւնը յաղթել էր նրան: Լաւ բժիշկների բացակայութեան պատճառով մեռաւ 1909ի ձմեռը: Նրա յուղարկւորութեան հանդէսը Վանի մէջ ոչ մի ժողովրդական գործիչ չէ ունեցել: Ամբողջ գաւառը թափուել էր ֆաղաֆ իր վերջին յարգանքն ասելու իր սիրեցեալ գործչին:

Յարութիւնի մասին կենսագրական յօդուած կայ «Դրօշակ»ի 1912 բուերի մէջ:

Թէոս Տեղաբիկեան.— Սա տեղացի ամենահին ընկերներից է: Կազմակերպութեան մէջ եղել եւ գործել է 90ական թուականներից: Առաջին անգամ պատանի հասակում, դեռ 16-17 տարեկան, Մեծ Վարդանի եւ Վազգէնի հրահանգով, տեղորի է ենթարկում մի դաւաճան հայի: Բայց առաջին փորձն անյաջող է անցնում. հետուից մի քանի անգամ կրակում է գոհի վրայ, թեթեւ վիրաւորում ու փախչում է:

Այնուհետեւ փախստական է դառնում: 1896ին Վարդանի խմբի հետ հազար ու մի նեղութիւններով, ինչպէս այդ նկարագրուած է Վարդանի յիշողութեանց մէջ, անցնում է Պարսկաստան, այնտեղից էլ Կովկաս: Այստեղ էլ աշխատում է կուսակցութեան շարքերում, բայց, երբ ընդհանուր ներման լուրը լսում է, վերադառնում է կրկին Վան:

Այդ ժամանակ Վազգէնը նահատակուել էր: Վանում սոսկալի հակադեցութիւն կար. դեռ Վարդգէսը նոր էր մտել Վան. ոչ ոք կար գործիչներին օգնող եւ հիւրընկալող: Այն աստիճան էր հալածանքը, որ մի ոռուսահայ, Լեոն Գիւլումեան անունով, եկել էր Վան, հասել էր Աւանց, ուր այնքան էին վախեցրել նրան, որ յետ էր փախել, առանց Վան իսկ մտնելու:

Վարդգէսը շնորհիւ Ալէսի, Արմենակի եւ վերջը Թէոսի աջակցութեան կամաց-կամաց շրջանակ եւ կազմակերպութիւն է ստեղծում Վանում եւ շրջաններում: Կարճ ժամանակում կազմակերպութիւնը ոտքի է կանգնում եւ այն աստիճան, որ դառնում է կամուրջ Մուշ փոխադրուող գործիչների եւ ուզումսերքի համար: Այդ ժամանակները Մուշ է անցնում Սասունի Վահանը, Հրայրի հետ, որ Վան էր ֆաշուել Վարդգէսի մօտ, Մշոյ հալածանքներից շունչ առնելու: Վան էր հասել Ամերիկայից ե՛ւ Աշոտ Երկաթը, որը նոյնպէս գնաց Մուշ-Սասուն եւ ապա տեղաւորուեց Ախլաթ:

Վարդգէսի օրով սկսում է փոխադրական գործը, որի ժամանակ մեծ դեր է կատարում Թէոսը: Վերջինը այդ ժամանակ լեզալ էր: Վանի մէջ ապահով եւ լաւ վաճառա-

կանի որդի, ինքն էլ խանութ էր բացել, որը յետոյ դարձել էր Դաշնակցութեան գրասենեակ, ինչպէս ասում էին տղաները: Այնուհետեւ լինում է վարդգէսի թեւ ու թիկունքը, բաժանում է նրա հետ բոլոր դառնութիւնները, նրա հետ բանտարկում է եւ կաշառֆի ոյժով ազատում՝ նորից մտնելու համար յեղափոխական ասպարէզը:

Վարդան Շահպագի մասին խօսելիս, ասացի, թէ ի՞նչ նեղութիւններ են քաշած վանում: Վարդգէսի դաւանանքն Սէմէրջեան հաշիկի տեղորը «Ծուռ» Դաւիթի ձեռքով կազմակերպողն եւ ղեկավարը եղել է ինքը թէոսը:

Երբ կոմսը վան է մտնում, թէոսը կոմսի ամենալայն օժանդակողը եւ լաւ աշխատող ընկերներից մէկն է դառնում: Այնուհետեւ վանում ոչ մի դաւադրութիւն, ոչ մի յեղափոխական եւ տեղորական գործ չի կատարում առանց թէոսի անմիջական ղեկավարութեան, հսկողութեան կամ մասնակցութեան:

Շատ խոշոր ձեռնարկ է եղել 1904ին Վարդգէսին բանտից փախցնելու փորձը: Բանտից 100-150 մեքք երկարութեամբ ական էին փորել Վարդգէսի բանտարկուած մասնաբաժնի տակ. հասցրել էին մինչեւ պատի մօտ. մընացել էր մի գիշերուայ աշխատանք, որ հասնեն սենեակի յատակին: Այդ օրը սակայն անձրեւ է գալիս, ջուրը ծծում է եւ կասկածանքի տեղիք է տալիս, որով եւ բացում է դաւադրութիւնը:

Թէոսը դրա վրայ ամիսներ է չարչարուել: Ամէն գիշեր, ինքն անձամբ գնացել է ականի մէջ ֆանֆանների սիրտ տալու, օժանդակելու եւ պաշտպանելու: Եւ այդ բոլորը Այգեստանից հեռու բերդի տակ՝ նիշդ պահապանի ֆթին տակ: Ինչպէս ինքն էր ասում շատ անգամ, երբ թուրք պահապանը բանտի տանիքից միգում էր, ջուրը թափում էր ուղիղ իրենց գլուխի վրայ: Այդ ձեռնարկը վանի այն ժամանակուայ ամենափայլուն գործերից մէկն էր, որի մեծ պատիւը առաւելապէս պատկանում է թէոսին:

Այնուհետեւ թէոսը կազմակերպել է եւ կատարել անձամբ մի ֆանի նշանաւոր տեղորներ, ինչպէս օրինակ, փոլիս Միսիթարի, Ռատանի գայմագամ Արմենակ էֆ. ևն.: Թէոսն էլ իմ ժամանակուայ գլխաւոր դերակատարներից

մէկն էր, միակն էր, որ ֆաղաֆում մեծ կապեր ուներ, ամէնքին լաւ նանաչում էր, խիստ վարպետ էր եւ խելք ու մանաւանդ լեզու ուներ մարդկանց համոզելու համար:

Թէոսը ուժեղ տիպ է, բայց նրա մէջ ապրել է միշտ կողք կողքի երկու մարդ, — ֆանդոզ ու աւերոզ եւ շինարար: Քանդոզը շատ անգամ նրան տանում էր անկման, մօտեցնում ռեքագործի, ըմբոստացնում էր ամէն մի հեղինակութեան եւ սրբութեան դէմ. միայն ատրճանակով էր, որ պիտի խօսուէր այդ ժամանակ նրա հետ... Այս ներքին անգուսպ հրէշի մէջ սակայն նստած էր եւ մի շինարար, աշխատասէր, հայրենասէր, դէպի Դաշնակցութիւնը անհուն գոհողութեամբ լեցուած մի հոգի:

Թէոսը մինակ սոսկալի էր. նրան հաւասարակշռութեան մէջ պահել են նրա ընկերներից մանաւանդ Ալէսը: Երբ նրա վրայ եղել է մի ուժեղ եւ լաւ ձեռք, նա միշտ դէպի լաւն է աշխատել: Վասպուրականի յեղափոխութեան պատմութիւն գրողը, երբ հասնի 1896 թուէն 1915 թուականների շրջաններին, անկարող է կանգ չառնել թէոսի հարուստ գործունէութեան վրայ:

Ալէս Պարսամեան. — Սա թէոս-Ալէս-Արմենակ երրորդութեան երկրորդ անձն է, բնիկ վանեցի: Ժամանակին եղել է արհեստով դերձակ, իսկ ապա՝ «յեղափոխական», ինչպէս ինքն էր ասում իր մասին: Դեռ պատանի, 1898-1900 թուերին, կազմակերպութեան մէջ գործել է մանաւանդ Վարդգէսի նոր եկած ժամանակը:

«Կ'երթայինք ցերեկը օրական 2-3 շրուշով կ'աշխատէինք Արմենակի հետ: Երեկոյեան հացի ու պանիրի կուտայինք, կը բերէինք կ'ուտէինք Վարդգէսի հետ, որը՝ ամբողջ օրը անօթի նստած՝ ակնդէտ մեր գալուսն կը սպասէր... Գիշերը գէնքեր կը կապէինք, Պ. Վարդգէսի հետ խումբերուն կ'երթայինք: Առանձին զայն տեղաւորելով՝ մենք կրկին գործի կը շտապէինք մի քանի շուրուշ հացի դրամ վաստկելու»...:

Ալէսին վիճակուել էր, իր բնաւորութեան բերմունքով, վանի յեղափոխական կեանքի մէջ խլորդի գործունէութիւն: Ալէսը գէնքի, ռազմամթերքի մասնագէտ եւ պահեստապահ էր Արմենակի հետ: Վասպուրական մտած հազարաւոր գէնքերն ու միլիոնաւոր փամփուշտները մէ-

կիկ մէկիկ անցել են Ալէսի ձեռքով, մաքրուելու, դասաւորուելու եւ խնամքով պահուելու համար: Բոլոր պահարանների տեղը գիտէր, եւ բալորը համարեա ինքն էր շինել իր ձեռքով:

Առաւօտեան վաղ, երբ խումբը հասնէր որեւէ տեղ, թէյ խմած կամ առանց թէյի՝ Արմենակի հետ պիտի շտապէին իրենց բոյնը (*Դրախտը*) առձեռն պահարանից գէնֆեր հանելու, մաքրելու, նորոգելու եւ դասաւորելու համար: Խուլ մի տան մէջ, ներսով ներս, արեւից եւ լոյսից զուրկ այդ խումբային կեանքը խորապէս ազդեց նրա փիզիքականի վրայ: Այժմ նա տառապում է լեղիի ֆրոնիկական հիւանդութիւնից: Բնականից սակաւախօս եւ լռակեաց՝ սովորական մարդու տպաւորութիւն է թողնում առաջին պատահողի վրայ, իսկ շատերի էլ ուշադրութեան չէ արժանանում. միշտ հայեացքը դէպի վար, եւ միշտ կարծես ինչ որ դաւեր է որոնում: Չափազանց պաղարիւն, սուկալի գգոյշ է եւ շրջահայեաց:

Երբ առաջարկում էի խումբ կառավարել, հեզմանֆով ու հազիւ խնդալ բարեհանելով կ'ասէր. «*Ես մէկապետ եմ՝ հազիւ ինձ կառավարեմ. Աստուած պակաս չանի՝ խմբապետներ շատ ունինք...*»:

Մեղքս չթագցնեմ, ոչ ես եւ ոչ էլ մեզնից որեւէ մէկը չէր սպասում, որ Ալէսը վերջը կը դառնայ մեծ ուղիւնական շրջանի հմուտ գինուորական ղեկավար...

Բայց անկարելին եղաւ: 1915ի Ապրիլեան հերոսամարտին Ալէսը Դարդանէլի շրջանապետն էր, եօթանասունից աւելի փորձ ու անցեալ ունեցող գինուորների կառավարիչ:

Կարծես դիտմամբ իր վրայ էր վերցրել պաշտպանութիւնը վանի ամենախեղճ թաղի, որ վանի ամբողջ յեղափոխական պատմութեան մէջ եղել է մեր միջնաբերդը:

Դա մեր չարդաղն էր, որին պիտի անդրադառնամ առանձին:

Դարդանէլի արեւելեան կողմը Այգեստանի դաշտի ամենավտանգաւոր դիրքն էր, չորս կողմը բաց, Հաջի Բէֆրի գորանոցը իր դիմաց, թրքական թնդանօթները միշտ ուղղուած իր դէմը. բայց ոչ մի հաւար, ոչ մի խուճապ, օգնութեան ո՛չ մի ջղային նիչ, միշտ պաղարիւն, միշտ

խնայող եւ մինչեւ վերջը անխոցելի: Դարդանէլում թշնամին չկարողացաւ բազմաթիւ յարձակումներից յետոյ մի թիզ իսկ առաջանալ: Ալէսի շրջանն էր այդ...:

Բայց նա դարձեալ լուռ էր, սակաւախօս: Եւ կարծեմ, վան մտնողներից ոչ ոք իմացաւ որ Դարդանէլի պաշտպանողը Ալէսն էր:

Արմենակ Շալջեան. — Արեւստով ոսկերիչ է եղել: Ընտանեկան արհեստ է. հայրը լաւ վարպետ էր. չորս եղբայրներն էլ իրենց հօր մօտ ոսկերչութիւն էին սովորում: Ինչ որ ասացի Ալէսի մասին սկզբում, պիտի կրկնեմ եւ Արմենակի մասին: Երկուսը մի խնձոր են՝ երկու կէսի բաժանուած. միայն կարմրաթուշ կողմը Արմենակն է, ներմակ կամ դալուկ կողմը՝ Ալէսը:

Միշտ ժպտաղէմ, երեխայի պէս մաքուր, հարսի պէս ամչկոտ ու կարմրող, միշտ սիրող ընկերական փայփայանք, միշտ պատրաստակամ եւ միշտ լռակեաց...:

— *Թո՛ղ Թէոս աղէն փչի, բաւական է, մեր երկուսի ներկայացուցիչը նա է: Մեզ գործ տուէք՝ անենք... Եւ պէտք է խոստովանել, որ Թէոսը երկուսի փոխարէն էլ խօսում, արսըղութիւն եւ քէֆ էր անում:*

Արմենակը Սահմանադրութիւնից յետոյ գնաց Պոլիս եւ մնաց հոն: 1910–12 թուերին Պոլիս հանդիպեցի մեր սիրելի Արմենակին. ծառայում էր լիմոնադի գործարանում: Խօշ բէշից յետոյ, երբ քէֆը հարցրի, պատասխանեց.

— *Բօշ է, Պր. Արամ, օրը այն օրն էր, երբ փախըստական էինք վանում: Այժմ ամէն բան փոխուել է: Եւ ընկեր եւ գաղափար՝ ամէն բան. երէկուան ամենամօտ ընկերդ այժմ քու երեսին չի նայում...*

Բացատրում եմ, որ պայմանները փոխուել են: Այն ժամանակ ուրիշ էր: Մենք բացի իրարից ոչ ոք ունէինք: Գործը՝ մէկ, ձգտումը՝ մէկ, նպատակը՝ մէկ: Բոլորս հաւասար էինք: Բոլորս անդրամ եւ մի ամանից կ'ուտէինք: Այժմ դիրքերը եւ տէրերը փոխուել են:

— *Քեզ կ'ասեմ, բօշ է: Գրեւ էմ, որ Ալէսը դո՛ւ, միասին գործ գտնենք, ապրինք...*

— *Չէ, Արմենակ, ինչալլա՜ն Երկիր կ'երթանք, նորէն գործ կը լինի:*

— Այդ ուրիշ բան է. եթէ յեղատիտական գործ եղաւ, գլուխս նրա օղուրին է...

Խեղճ Արմենակ, գործ եղաւ. մէկ էլ, թերեւս վերջին անգամ, ծառացանք թուրք բռնակալութեան դէմ քնսիրած վանում, բայց դու չկայիր...

Ախալցխացի Հաջի Լեւոնը.— Հաջի Լեւոնը երկիր է մտել 1904ին Ֆլէի ջոջ Աղայի հետ: Վերջինը Բուլգարիայի Ընդհանուր ժողովին գնացող երկրորդ պատգամաւորն էր: Վերադարձել են ճիւղաւոր խմբով, մեր յայտնի ֆիւրդ-վալատ Մստոյի առաջնորդութեամբ: Լիմ գիւղի մօտ եղած կուում Ջոջ-Աղան սպանւում է, եւ Լեւոնը միմակ տղաների հետ կուում է: Մեծ ֆանակութեամբ բռններով գէնք է եղել. ազատելով հասնում է ֆաղաֆ:

Հաջի Լեւոնը արհեստով զինագործ էր: Քաղաքի արհեստանոցի մէջ գլխաւոր վարպետը նա էր: Նրա հետ աշխատում էին Ալէսն ու Արմենակը, միւս Ջոջ-Աղան եւ Վարդան-Շահպազը:

Շատ հետաքրքիր է այդ արհեստանոցը, որ, ի հարկէ, շարժական էր եւ գտնւում էր «Լարադադում»՝ մեր յայտնի «Դրախտում»: Դա ներքնայարկի մը փոքրիկ, նեղ ու երկար մտան է եղել, մի դուռն ուղղակի դէպի դուրսը, որը չէր բացւում աշխատանքների ժամանակ, եւ մի դուռն էլ դէպի ներսը, ուր կատարւում էր երթ-եկուսութիւնը: Դրսի տան կից կար մի փոքրիկ պատուհան, որի վերելի մասը շարժական պահարան ունէր՝ գործիքներն ու կիսատ մնացած զէնքերը տեղաւորելու:

Արհեստանոցում առհասարակ գիշերում էր Հաջի-Լեւոնը: Մտանքի ներսի կիսում, վերելի առաստաղի մօտ, շինել էր մի վերնայարկ եւ այնտեղ պառկում էր:

Շրջանի գիւղական, ինչպէս եւ կազմակերպական զէնքերը գալիս էին հոնտեղ նորոգուելու եւ յետ դառնալու:

Հաջի Լեւոնը կարողացաւ երկաթի կազմուածքով այդտեղ սուկալ միայն մէկուկէս տարի, երբ հիւանդացաւ «դեղնացաւով», ինչպէս եւ Ալէսը: Ստիպուած եղանք արհեստանոցը փակել: Լեւոնը երկար պառկեց Ամերիկեան հիւանդանոցում. ոչինչ չօգնեց, ստիպուեցանք ուղարկել կովկաս:

Հաջի Լեւոնին երկրորդ անգամ եւ հանդիպեցի կրկին վանում, 1915ին, երբ կամաւորները վան մտան: Առաջին մտնողներից մէկն էլ Հաջի Լեւոնն էր: Քեռու ճիւղաւոր խմբի ղեկավարն էր: Այնուհետեւ նրա խմբի գրոհների առջեւ տեղի տուեց թշնամին դէպի Ռուսան, Սարէ եւ Ջէյվա, ուր եղաւ հոչակաւոր նակատամարտը:

Շամիրամցի Սողոն.— Ախլաթը հայ յեղափոխութեան տուել է ամենափայլուն դէմքերը՝ Սերոբ-Փաշան, Ախլաթցի Կարապետը, Շամիրամցի Ապտոն, Ջուլումաթը եւ ուրիշները:

Այս փառահեղ շարքին է պատկանում եւ մեր Սողոն՝ չինարի բոյով, շէկ աչքերով ու մազերով, սիրուն դէմքով ու վնասական հայեացքով մի տղամարդ:

Նա եղել է Ախլաթ Աշոտ-Երկաթի թեւ ու թիկունքը, կարծեմ, մասնակցել է Սասունի վերջին (1904ի) կրոնիւներին, կամ այդ ժամանակ խմբով եղել է Մշոյ դաշտում. Անդրանիկի խմբի հետ եկել է վան այն յոյսով, որ խմբով պիտի վերադառնայ «Երկիր»՝ Ախլաթ... եւ մեր խեղճ Սողոն շատ սպասեց...

Սողոն ինձ մօտ էր վան: Թիկնապահի պաշտօն էին յանձնել խեղճ Սողոյին, որ երբեք ֆաղաֆ չէր եղել եւ ֆաղաֆի ձեւերը չգիտէր: Իշխանն էր նշանակել ասելով. «Վստահելի եւ կտրիճ ընկեր է, մօտդ պահէ...»: Եւ իրօք անդաւանանօրէն վստահելի ու հաւատարիմ էր: Ամենակրիտիկ բոյներին իսկ պաղարիւն. միայն նրա ներկայութիւնը բաւական էր որ ամենավտանգաւոր դէպքում միմակ մնանք ամբողջ օրը:

Երբ սկսեցինք ձանձրանալ անգործութիւնից, սկսեցի կարդալ-գրել սովորեցնել: Երկու-երեք ամսու՛ն այնքա՛ն սովորեց կարդալ, որ ոչ միայն լրագիրներ էր կարդում, այլեւ *Բաֆֆի* եւ «Յառաջ» գրադարանի գրքերը:

— Պարոն, թո երախտիքէն ի՞մալ պիտի լինիմ, որ դուն այս շնորհքն ուսուցիր ինձ:

— Սողո՛, տղայիդ (ամուսնացած էր գիւղում) պիտի ուղարկեմ ձեմարան, որ երախտիքիցս էլնիս բխորթութուն:

— Պարո՛ն, եանի մեր Ախլաթէն ալ կրթուած մարդ պիտի լինի...

Այնուհետև Սողոմ ինձնից անբաժան էր, եւ ես վրստահ էի, որ կը մնամ անվտանգ եւ անխոցելի:

1908ին Գաւիթի դաւանանութեան օրերը մեծ խըմբով գնացել էին գաւառ, — Գաւաշ. հեռու էր նաև Սողոմ: 1907ին, երբ ես արտասահման էի անցել, Արմէշի Ալի բէյը խնդրել էր մերոնցից մի խումբ ուղարկել իր մօտ: Ինչպէս իր տեղում տեսանք, Սողոմ էր իր երկու ընկերով գրնացել: Ալի բէյի եւ Քեօն Հիւսէին փաշայի միջեւ եղած կռուին Սողոմ հրաշալի կերպով կռուել էր. քրդերն իրենց երգերի մէջ նրա հերոսական գործերի գովքն էին արել: Քաղաքից ինձ շուտով կանչեցին: Որոշեցի մինակ գնալ եւ իսկոյն դառնալ: Սողոմ աղաչեց, որ նրան էլ վերցնեմ: Պէտք չտեսայ: Խեղճի նախագագացումը նշդուեց: Մի քանի օրից յետոյ ես դաւանանութեամբ ձերբակալուեցի քաղաքի մէջ: Սողոմ մնաց Իշխանի խմբի հետ:

Խուզարկութեան բոլոր սարսափները քաղցեց Սողոմ, գաւառների զէնքերը լքուած ժողովրդից խլելով՝ տղաները իրանց մէջքով շալակած սարերը տարան եւ պահեցին: Այնուհետև, երբ եկան վրէժի օրերը, երբ Իշխանը՝ մի բուռ կտրիմների գլուխն անցած՝ հակահարուած էր տալիս դաւանաններին, Սողոմ Իշխանի աջ թեւն էր:

Իշխանը սարսափով պատմում էր հետեւեալ դէպքը, որ տեղի էր ունեցել Հայոց Զորի Քերձ գիւղում.

— Այդ շրջանի ոչնչները ժողով էին արել եւ որոշել զէնքերը տալ կառավարութեան: Անգղի ոչնչը արդէն տարել տուել էր: Ես նստել եմ Քերձի սարը: Սողոյին մի քանի տղայով քշեցի Անգղ՝ այդ սրիկային սատկեցնելու: Սողոն գնաց եւ երկու ժամում գործը լմնցնելով՝ եկաւ: Մըտաւ Քերձ հանգստանալու եւ նոր ծրագիր կազմելու: Գիւղացիք հացի պատրաստութիւն էին տեսնում: Սողոն՝ կողքից կախած քրտական կաման՝ մաքրում էր, որ թութուն բրդի զրանով: 45-50 տարեկան մի գիւղացի ծերունի, որ մօտը նստած նայում էր, ասաց.

— Ի՞նչ ես անում, Պր. Սողո՛:

— Դանակս կը սրեմ, դաւաճանների գլուխը կտրելու համար, Ձեր երկիրը հու հու (երբեք) ոչնչ չախտի թողնեմ:

Գիւղացին այլայլուեց եւ վեր կացաւ, կամացուկ

քաղցեց: Երկու ժամից յետոյ լուր բերին, որ այդ գիւղացին դաշտ գնալու ժամանակ սայլի մէջ յանկարծամահ է եղել Սողոյի սարսափից:

Այսպէս մնաց մինչեւ թրքական Սահմանադրութիւնը: Այդ տարիները նա անխոնջ աշխատում էր իր շրջանի գիւղերում դպրոցներ բանալու: Որդին դեռ փոքր էր, բայց եղբոր որդուն՝ Մուշեղին, եղբօրը՝ Տիգրան-Շահպագին եւ Սերոբի երկու որդիներին վան բերինք ու դպրոց դրինք: Այնուհետև Ռոստոմը տարել էր նրանց կարին. մեծացել, լաւ տղաներ էին դարձել, բայց մեծ փոթորիկը նրանց էլ տարաւ:

Սողոմ 1915ի դէպքերի ժամանակ զինուորագրուած էր թրքական բանակում, ծառայում էր Դատուանում: Վանի դէպքերից յետոյ նրան դաւանանութեամբ սպաննել են եւ այդ պատճառով Ախլաթը հարկաւոր եւ իրեն վայել դիմադրութիւն ցոյց չտուեց, որի հետեւանքով շատ քիչ ժողովուրդ ազատուեց:

Սուրիշի Դաւիթ. — Իսկ մենք կոչում էինք «Ծուռ» եւ իրօք ծուռ էր: Վախ, զգուշութիւն ասած բառը չկար նրա բառարանի մէջ: Բնիկ Ալֆանագի էր՝ հաստատուած վան. ծառայել էր կառավարութեան փոստի մէջ, իբրեւ ձիաւոր փոստ փոխադրող: Այստեղ վարժուել էր դիմացկունութեան: Եղել էր զինուոր վագգէնի ժամանակ: Վարդգէսի ժամանակ կառկառի եղիշի հետ եղել էր նրա անբաժան ընկերը եւ պաշտպանը: Լաւ եւ նուիրում յեղափոխական զինուոր էր: Սպաննուեցաւ մի անարժան մահով՝ եղբայրասպան կռուի մէջ:

Սրա մասին ընդարձակ կենսագրական ունիմ գրած «Դրօշակ»ի 1912ի թիւ 2ում:

Ալաբրինչցի (Մուշ) Սէյտո-Պողոսը եւ Վարդանը. — Ես դիտմամբ եմ կանգ առնում Սէյտոյի եւ նման երկու տիպերի վրայ: Թէեւ նրանք իրենց յեղափոխական գործերը կատարել են Մուշում կամ ուրիշ վայրեր, բայց ժամակաւոր կերպով եղել են վանում: Սրանք որոշ տիպի մարդիկ էին: Ունէին ինքնատիպ հոգեբանութիւն: Ես կ'ուզեմ նայի այդ տիպերից երկուսին ցուցադրել:

Սէյտո-Պողոսն ունէր եւ մի անբաժան ընկեր, — Ալաբրինչցի Վարդանը: Զգիտեմ ոնց է եղել, որ սրանք

բաժանուել են: Վարդանը 1903ին Կայծակ Վաղարշակի եւ Թումանի հետ Սասունից եկել էր: Կարծեմ՝ Վաղարշակը բերել էր իբրեւ վստահելի զինուոր ընկեր: Նրան տեսայ եւ ծանօթացայ Ղարսի շրջանում եւ վանում հանդիպեցի Սէյտոյին. նոր հասկացայ, որ մի խնձոր էին՝ երկուսի կիսում:

Ղարսում շատ մօտ էի Վարդանին. նա միշտ տխուր էր, երազուն ու մտածկոտ: Իբրեւ Սասունից եկած հագուազիւտ հիւր, ամէն դիրութիւն տուել էինք. լաւ հագնւում էր, առատ ծախսում, ժողովրդական հիւրասիրութիւն եւ ոգեւորութիւն էր վայելում: Ղարսի լաւ օրերն էին. Վարդանը միշտ տխուր էր: Մի անգամ, երբ Սասունից պատմութիւններ էի անել տալիս, հարցրի թէ ինչո՞ւ տխուր էր:

— Ի՞նչ դիտեմ, պարո՛ն, իմալ քօռցայ, ընդերտանք թորկի իկայ. ե՞րբ պիտի ճամբէք Երկիր:

Խեղճն Վարդան, հիւանդ էր «հայրենիքի վշտով»... Երբ գարունը բացուեց, Վաղարշակի լաւ խմբի հետ նամբեցինք. հերոսական կոչի էին ունեցել սահմանագլխում — Զէյվանի բերդի վրայ, ուր ամէնքն ընկան՝ ե՛ւ Վաղարշակը ե՛ւ Ռուս-Գէորգը, մի հրաշալի, մի գարուն երիտասարդ... Միայն հրաշքով ազատուել էր Վարդանը...

Երբ վիրաւոր վիճակով, բայց ոտքի վրայ դարձաւ Ղարս, 10 օրից յետոյ, անհանաչելի էր դարձել: Հարկ եղաւ յիշեցնել ինձ, որ Ալվարիչցի Վարդանն է...

Նոյնն էր եւ Սէյտօ-Պօղոսը: Դեռ պատանի հասակում Վարդանի հետ եղել է իրենց գիւղի ըմբոստը, ինչպէս մշեցին է ասում. «Հլա կուսակցութիւն չըկէր պարո՛ն, մենք յեղափոխական էնք» — այսինքն՝ դեռ կուսակցութիւն չկար, մենք ըմբոստ էինք ֆիւրտի եւ թուրքի դէմ:

Այնուհետեւ Սէյտօ-Պօղոսը եղել է Մշոյ դաշտի եւ Սասունի բոլոր կոնուներին մասնակից, եւ պատուաւոր, գործօն մասնակից...:

Անդրանիկի հետ եկել էին Վան եւ միտուել մնացել էին.

— Մեռցուցէ՛ք, արտասահման չիմի երթա՛յ. պիտի ճամբէք զիս երկիր...:

Իսկ Երկիր զինուորական ոյժ նամբելը արգիւում էր. Գէորգ-Զավուշը մի խմբով հագիւ էր կարողանում ապրել Մշոյ դաշտում:

Տխուր, վշտահար, թեւաթափ, իբրեւ վանդակի մէջ բանտարկուած արծիւ, նստում էր, ծխում ու Երկիր էր երազում:

— Պարո՛ն, վալլահ, պիլլահ, թալլահ, պիտի թորկես, որ Երկիր երթամ...:

Խեղճը շատ սպասեց, բայց անհնար եղաւ: Ստիպուեցաւ, վերջապէս, անցնիլ Կովկաս: Լաւ ժամանակ էր հասել: Հայ-թրքական ընդհարումներն էին. Դաւալուի շրջանում Սէյտոն հրաշքներ էր գործել միս-մինակ:

Բայց Երկիրը փաշել էր. կարծեմ Կորիւնի հետ մի փոքրիկ խմբով, Կարսի գծով, 1907ին անցել էր Մուշ...

Եւ այնտեղ գոհ գնաց Զաւէնի եւ Զնդոյի հետ Ղասրմ բէկի դաւադրութեան: Նա հայ-ֆրդական եղբայրութեան երեք գոհերից մէկն էր... Հերոսաբար ապրեց, բայց անփառունակ մեռաւ. նամարդները կտրիճին ֆունից էին զարթեցրել եւ գողի պէս, մութի մէջ, զարկել էին...

Զաքարիա Զաւուշ, Իսմայիլ օմրաչին, Սամսոն, Ազատ, Ասորի Սահակ, Խումոշ, Զաֆար, Եւայլն:

Մի ֆանի խօսք էլ պիտի ասել փախստական ինտերնացիոնալի մասին:

Արդէն ասել եմ, որ ամէն ազգ եւ ազինք ներկայացուցիչներ ունէին մեր կազմակերպական, զինուորական շարքերում, այն էլ փախստական:

Սասունցիներն երբ վան էին եկել, նրանց հետ արդէն կային մի ֆանի թուրք զինուորներ՝ Զաֆարիա Զաւուշը, Սամսոնը, Եւայլն: Դրանք միացել էին մերոնց՝ Սասունի ապստամբութեան ժամանակ: Առաջ էլ նման դէպքեր տեղի էին ունեցել: Ի՞նչն էր արդեօք դրդել թուրք զինուորներին, որոնք մեծ մասամբ Պոլսոյ եւ ծովափնայ շրջաններից էին, ուրեմն աւելի կրթուած եւ խելահաս, ֆան բուն Հայաստանի թուրքերը, — յարելու հայ յեղափոխականների կողմը, դա մի բարդ հոգեբանական հանգոյց է ինձ համար, որն լիովին դեռ չեմ հասկացել, բայց պիտի փորձեմ բացատրել...

Որ թուրք ուժերը սուկումներ ունէր ե՛ւ իր՝ բուն

թուրք ժողովրդի համար, այդ անկասկած էր: Որ թուրքերի մէջ դժգոհութիւններ կային, այդ էլ անկասկած էր: Որ այդ դժգոհութիւնը աւելի շատ էր զինուորականութեան մէջ, դրա ապացոյցը տուաւ թուրք յեղափոխութիւնը, որ գուտ զինուորական էր:

Ըմբոստ զինուորները բնականօրէն մտածում էին, որ իրենց ապաստան կարող են տալ միայն հայ յեղափոխականները, որոնք «բախտով» (տղամարդու իմաստով) մարդիկ են, «բէրբախտութիւն» (դաւ) չեն անի: Այն ինչ՝ նրանք բազմաթիւ փաստեր ունէին, որ բիրտների ձեռքն ընկնողը կենդանի չի մնում — կամ սպաննում է, կամ ձեռքակալում եւ յանձնում կառավարութեան:

Ուրեմն, ռեժիմի դէմ ըմբոստանալն էր գլխաւոր դրդապատճառը նրանց փախուստին եւ մեր կողմ՝ յարելուն, իբրեւ կառավարութեան դէմ ըմբոստացածների:

Փախչողների մէջ կային գաղափարական մարդիկ, բայց մեծամասնութիւնը ռեժիմի խստութիւնը չհանդուրժելով՝ անցնում էր մեր կողմը՝ փրկուելու յոյսով:

Մեր ընդունելու պատճառներն էլ պարզ էին. նախ դա մեծ պրոպագանտ էր բանակի մէջ: Դրանց նամակներ էինք գրել տալիս իրենց ընկերներին: Եկողներից իմանում էինք կառավարութեան զինուորական գազտնիքները, պատրաստութիւնները, մտադրութիւնները: Իբրեւ փորձ զինուորներ, որոնք գիտէին թուրք բանակի բոլոր պայմանական նշանները, կռուի ժամանակ շատ էին օգտակար լինում իրենց ցուցմունքներով: Սասունի ապստամբութեան ժամանակ այս դերը յաջողութեամբ կատարեցին:

Կայ եւ ընդունելութեան աւելի իրական պատճառ: Իրենց հետ նրանք բերում էին շատ անգամ մի երկու եւ է՛լ աւելի հրացան: Իսկ կառավարական հրացանը թանկարժէք բան էր մեզ համար, որ ամէն դիրութիւն պատրաստ էինք տալու բերողներին:

Զաւարիա Զաւուշը Սասունից էր եկել, Դատուանում բռնուել էր, Վանի բանտից նորից փախել էր մեզ մօտ: Բաւական կրթուած տղայ էր, գրել, կարդալ լաւ գիտէր: Գործ էինք անում նրան թուրքերի, քրտերի մէջ պրոպագանտ անելու համար:

Ինչպէս միւսները, նա էլ հայերէն սովորել էր ու

խօսում էր ազատօրէն: Վերջը անցաւ Կովկաս: Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ մերոնց հետ էր: Ապա ազատութեան օրերին գնաց իր հայրենիքը՝ Պրուսա:

Թուրք Սամսոնի անունը չգիտեմ ինչ էր: Որովհետեւ ինքն Սամսոնի էր, անունն էլ Սամսոն էին դրել: Արհեստով դերձակ էր: Ամբողջ օրը կար էր անում, զինուորների համար ներմակեղէն էր կարում, կարկատան էր անում եւայլն: Շատ էր սիրում խմել: Դաւիթի խուզարկութեան ժամանակ բռնուեց, մատնութիւններ արաւ, բայց որովհետեւ շատ բան չգիտէր, առանձին վնաս չհասցրեց:

Իսմայիլ Օնրաշին եւ Ազասը. — Վանից էին փախել. երկուսն էլ լաւ կրթուած ու շնորհքով տղաներ էին. այնպիսի կարգապահ ու մաքուր նիստ ու կաց ունէին, որ իրենց հեղինակութեամբ ազդում էին եւ մեր զինուորների վրայ, որոնց ներկայութիւնը փոխադարձաբար կրթում էր նրանց: Մերոնք իրենց լաւ էին պահում թուրքերի առաջ, իսկ նրանք էլ փոխադարձաբար:

Դրանց ամէնքին ուղարկեցինք արտասահման, մի երկու տարուց յետոյ:

Ասորի Մհակը եւ Խումուշը. — Վանի շրջանի ասորի գիւղերիցն էին: Պէտք է խոստովանիլ, որ Վանի շրջանի ասորիները ո՛չ մի տարբերութիւն չունէին հայերից, բացի ընդհանուր ազգային տարբերութիւններից եւ մի քանի բնավորութեան առանձնայատկութիւններից: Նոքա ամէնքն էլ կազմակերպուած էին Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի տակ, մասնակցում էին կուսակցական ձեռնարկներին, կուսակցական տուրք էին տալիս: Ազատութեան ժամանակ մեզ հետ էին ֆուէարկում. կարն՝ նրանք մեր «ժողովուրդն» էին: Ապրիլեան կռիւներին նոքա մեզ հետ էին, հերոսաբար կռուեցին եւ գոհեր տուին:

Ասորի Սհակը մեր զինուոր սուրհանդակ-վազողներից էր: Ծանօթ էր Սարայ-Կոտուլ, Ախոռիկ-Պայազէտ գրծերին: Սուրհանդակութիւն էր անում եւ երկրի մէջ գանազան յանձնարարութիւններ էր կատարում: Ման էր գալիս ազատ, իբրեւ ֆիրտ:

Խումուշը մի երիտասարդ ասորի էր, հազիւ 20-22 տարեկան, գրաւուած էր մեր ֆէտայիների կեանքով: Զինուոր էր Յարութիւնի մօտ: Զիմացայ վերջը ինչ եղաւ:

Քրտերի մասին, որոնք ծառայել են իբրև սուրհանդակ, խօսել եմ առանձին:

Փանոս ժամհարեան.— Ունէինք մի քանի կիսափախըստական ընկերներ, որոնց մասին Թէոսը ասում էր, — «Ջանրմ, ասոնց անկողինները բանտէն տուն բերելու չէ... Միեւնոյն է, վաղը դարձեալ պիտի երթան»... Այդպէս էր եւ Փանոսը, եւ սա կարծես նրա համար նակատագիր էր: Այս նակատագրից նա չկարողացաւ ազատուել նոյնիսկ «Հուրիէթ»ի օրերին:

Արհեստով ոսկերիչ էր, բաւական լաւ վարպետ: Սրա խանութն էլ «Դաշնակցութեան» փոստատունն էր: Թուրք, ֆիւրս սուրհանդակները, գաւառներից եկած նամակները եւ հարցումները, բոլորը դնում էին Փանոսի խանութը: Իրիկունը ծանրաբեռնուած նամակներով (ի հարկէ, ինքը չէր վերցնում, տալիս էր աշակերտներին կամ անկասկածելի մարդկանց) գալիս էր մեզ մօտ, բերելով շուկայի բոլոր նորութիւնները:

Գիշերները միշտ համալետա մեզ հետ պտտում էր զինուած՝ առաւօտը ֆաղաֆ իջնելու պայմանով:

Վերջը, երբ լայն փախստական դարձաւ եւ ընտանիքով ծանրաբեռնուած էր, անցաւ Կովկաս՝ Բագու, ուր աշխատում էր եւ կուսակցութեան շարքերում գործում:

«Հուրիէթ»ին վերադարձաւ երկիր, շատ մեծ եռանդով նորէն մտաւ կուսակցական գործերի մէջ, մի երկու անգամ փախստական եղաւ. հազիւ միջամտութեամբ ազատեցին:

Աստղով մարդ է, կարողանում է իր շուրջն ընկերներ հաւաքել. Թէոսի եւ Ալէսի խմբի տղաներից էր:

1915ի Ապրիլի կռիւներին, Սահակ քէյի շրջանապետ էր, շատ լաւ կառավարեց, բայց աւելի ինքն էր կրտում եւ աշխատում, քան միւսներին էր աշխատեցնում, Ալէսի պէս:

Կարապետ Միրզոյեան.— Փանոսի նման մի տիպ էլ սա էր, սակայն աւելի ֆիչ հեղինակութեամբ ու վաճառքով: Արհեստով երկաթագործ էր: Փախստական էր իմ ժամանակ, գործակատարի դեր ունէր: Տներ էր պատրաստում, խմբերին առաջնորդում էր տնից տուն, կապ էր պահում խմբերի միջեւ եւայլն:

Սրանց ընտանիքը մեծ դեր է կատարել Վանի յեղափոխական պատմութեան մէջ: Սա այն ընտանիքներից է, որ մեծով-փոքրով, տնով-տեղով տրամադրելի էին յեղափոխական գործունէութեան:

Առանձին դեր է կատարել մանաւանդ նրա քոյրը, Համասփիւռ Միրզոյեանը, որ իմ ժամանակ ուսուցչուհի էր ֆաղաֆում եւ այն օրերը միակ յեղափոխական աղջիկն էր: Նրա հետ էր եւ մասամբ Վազգէնի փոքրիկ քոյրը, Օր. Սաթենիկը (նոյնպէս ուսուցչուհի): Համասփիւռի շնորհիւ կանանց շրջանում բաւական պրոպագանտ եղաւ, եւ կամաց կամաց շատ գնահատելի ուժեր ունեցանք նաև կանանց մէջ:

Մանաւանդ 1908ին, «Հուրիէթ»ից մի ֆիչ առաջ, Դաւիթի խուզարկութեան ժամանակ, երբ մեզ բռնեցին եւ ընկերները լեռ ֆաշուեցին, ֆաղաֆում մնացել էին միայն կին գործիչները:

Համասփիւռը Ալեքսանեան երկու քոյրերի հետ, որոնք նոյնպէս շատ գաղափարական եւ յեղափոխական աղջիկներ էին (Աղաւնի եւ Գինաբեր), շարունակում էին յեղափոխական գործը: Նամակներ էին գրում գաւառի ընկերներին, կապ էին պահում խմբերի հետ, թուրքիկներ էին հրատարակում եւայլն, միշտ լինելով տներից դուրս արուելու սպառնալիքի տակ:

Համասփիւռը «Հուրիէթ»ին Պոլիս գնաց, «Դպրոցասէր Տիկնանց Միութեան» վարժապետանոցը: Առկորեց և յետոյ, իբրև ուսուցչուհի, աշխատում էր Պոլսոյ շրջանի դպրոցներում: Ապա 1916ին անցաւ Կովկաս՝ որբանոցում աշխատելու:

Համասփիւռի, Օր. Զարուհի Շալջեանի, Օր. Նալբանդեանի, Տ. Սողոմէ Զրբաշխեանի շնորհիւ էր, որ վաճառում, ազատութեան օրերին, կազմուեց «Վասպուրականի Կանանց Միութիւնը», որ մեծ զարկ տուեց Վանի կանանց զարգացման եւ յառաջդիմութեան գործին եւ միշտ եղաւ գորավիզ մեր կուսակցութեան գործունէութեան, թէեւ միութիւնը մեծ դեր կատարեց եւ Ապրիլեան կռիւներին: Գաղթի ժամանակ երեսնում բացեց Վասպուրականի կարուճեի ու շֆեզ ձեռագործի արհեստանոց, որի աշխատութիւնները տարածուեցին Բագու, Թիֆլիս, Մոսկուա

եւ նոյնիսկ Լոնտոն, իբրեւ նուրբ եւ շնորհփով բանուածֆներ:

Քոթոթ Պօղոս.— Ճիշդ է, թէ կան մարդիկ, որոնք մնում են մարդկանց յիշողութեան մէջ ո՛չ այնքան իրենց գործունէութեան, որքան իրենց մահուան պարագայով: Բայց եւ այնպէս Քոթոթի յեղափոխական գործունէութեան մէջ կան գիծեր, որոնք վանի յեղափոխական գործիչների պատմութիւնը գրոցը երեւի կը կցէ նրան:

Բնիկ վանեցի էր Քոթոթը, արհեստով ոսկերիչ: Դեռ պատանի՝ գրկուել էր ծնողներից: Ունէր միայն մի ամուսնացած քոյր. վաղ ժամանակից նուիրուել էր կազմակերպութեան՝ իր կեանքով, տնով-տեղով: Կոմսը նրա տանը երկար ժամանակ պատսպարուել է, իսկ նրա տան կահ-կարասիքից օգտուում էին մինչեւ վերջին ժամանակը: Ինքը համեստ, լաւ տրամաբանութեամբ, ամէնփա համակրած մարդն էր:

Յեղափոխական կեանքը շուտով ազդեց նրա թոյլ կրծքին վրայ: Ուղարկեցին Կովկաս, ուր ե՛ւ կազդուրուեց ե՛ւ վարժուեց զինագործութեան մէջ:

Կարծեմ 1907ին վերադարձաւ Երկիր. աշխատում էր արհեստանոցի մէջ: Դաւիթի դաւանանութեան ժամանակ տղաների հետ լեռն էր: «**Հուրիէթ**»ին ապրում էր իրեն համար: 1912ին ամուսնացրին մեր Քոթոթին, ինչպէս նաեւ շատերին:

Ինչպէս յայտնի է, 1915ի Ապրիլ 4ին, Քոթոթ Պօղոսը, իրանի վահանը եւ Տէր Մարգարեան Միհրանը գրեցին իշխանի հետ, իբրեւ թիկնապահներ: Գնացին, էլ յետ չեկան: Թշնամին նրանց համար գերեզման էր պատրաստել, շատ ուրիշների հետ մի հորում, կիրնի մէջ... Իսկ իր հերոսներին սիրող մեր ժողովուրդը՝ այդ սրբազան նշխարները իր ուսերի վրայ դրած՝ բերեց ֆաղաֆ, սպանութիւնից 45 օր յետոյ, եւ թաղեց մեծ ցոյցով վանի Արարուց գերեզմանատան «**յեղափոխական պանթէոնի**» մէջ: Այսօր այնտեղ է ննջում մեր խեղճ Քոթոթ Պօղոսը, իշխանի կողքին, Յարութիւնի, Ռուբէնի, Վազգէնի, Միքոյի, Վահանի, Միհրանի եւ ուրիշների հետ: 1915ի Ցունիսին այնտեղ տարան ե՛ւ մեր թանկագին Դաշնակցական Խէչոյին:

Նա էլ մեծ անմահների շարքումն է: Այնտեղ է գրում վան գնացող ամէն մի յեղափոխական ընկեր, առաջին այցելութիւնը տալու «մերոնց»...

Դրախտի Մայրիկը.— Պէտք է յօսուել անպայման այս տան մասին: Նա պէտք է դառնայ «Ազատուած Հայաստանի» ազատագրութեան պանթէոնի թանկագին նիւթերից մէկը:

«Դրախտի» մասին մի ֆանի անգամ ակնարկներ արել եմ. դա մեր գլխաւոր կայանն էր:

«Դրախտը» գտնուում է Դաշնակցութեան միջնաբերդ եղած «**Ղարաղաղ**» թաղում: Նախ ծանօթանանք «Ղարաղաղ»ի հետ:

«Ղարաղաղ»ը, կամ ինչպէս վանեցիքն էին կոչում, «**Փաշի Փողան**»ը, Այգեստանի հարաւ-արեւելեան կողմն ընկած ամենածայրի թաղն է: Արեւմտեան կողմից Արարուց հրապարակի դրացիութեամբ, հիւսիսից՝ Ոսնէպասեց թաղն է, որով մէջքը տուած է ամբողջ Այգեստանին. հարաւից դաշտն է՝ հոշապ-Բաշգալէի խնուղիով եւ Հաջի Բէֆրի մեծ գորանոցով. արեւելից վանի դաշտն է, հանդիպակաց կողմը վարագայ լեռներով. հիւսիս-արեւելեան կողմը՝ ամերիկեան շրջանակը:

Ուրեմն, երեք կողմից նա յենուած է Այգեստանին, չորրորդ կողմից՝ դաշտին ու վարագին:

Հեռու է թէ՛ հոշապ-Բաշգալէ մեծ ֆանապարհից եւ թէ՛ Արնակ-Սարայ փոստային ֆանապարհից. գտնուում է բոլորի մէջտեղը, Այգեստանի ծայրը, դիւրութեամբ ներս-դուրս անելու, աննկատ շարժումներ անելու եւ ապահով պահուելու վայր:

Այսպիսի թաղամասեր, աշխարհագրական իմաստով, շատ կան վան, բայց դրանցից եւ ո՛չ մէկը չունեցաւ յեղափոխութեան մէջ այն դերը, ինչ որ ունեցաւ «Ղարաղաղը»: Այս պիտի բացատրել այդ թաղի ժողովրդի ընկերային կազմով եւ հոգեբանութեամբ:

Մեծ մասամբ համեստ ուայեա, երկրագործ, արհեստաւոր, աշխատաւոր մասի յենարան էր...

Այդ թաղի տները արելի կամ պակաս ֆանակութեամբ ու չափով մեզ հիւրընկալելու դիւրութիւններ են տուել. բայց մի ֆանի տներ եղել են մեր օճախները: Ար-

դէն «Դրախտը» յիշեցի, յիշեմ եւ մի քանի ուրիշները.— օրինակ, Զավուշեանի տունը, որը յեղափոխութեան եւ «Հուրիէթ»ի ժամանակ մանաւանդ մեր լաւ կայանն էր: Զանոյեան Գեորգի տունը, որը «Կախէք» կեղծ անուն էր ստացել իշխանից, լաւ գինի ունենալուն համար: Սա եւս այն տներից մէկն էր, որ իր հաշուով յանախ խմբեր էր ընդունում: Խուս Միքայի տունը, Կորոյեան Մարտիրոսի տունը, որը ունէր մի պառաւ ու կտրին մայր: Անունը դրբել էի Ղարադաղի Կովիտէ հաթուն. եւ իրօք, «Դրախտից» յետոյ, 1905-1906-1907-1908 թուականներուն միակ տունն էր, որ ամէն կարգի նեղութիւն յանձն էր առնում մեզ համար, գործի համար. ամէն օր գիշեր ցերեկ նրա դուռը բաց է եղել:

Կովիտէ հաթունն է նամբու դրել բոլոր խմբերին իր այգիից դէպի դաշտը եւ այնտեղից ներս առել: Այնտեղ կար եւ լաւ գէնֆի պահարան:

Կովիտէ հաթունն ունէր մի լաւ յեղափոխական տըղայ Մարտիրոս անունով: Քեռի էինք ասում, — երկաթագործ-գինագործ էր: Դաւիթի ժամանակ բանտ նստեց: «Հուրիէթ»ին նորից իր տնով մեզ համար պատրաստ էր: Ապրիլեան կռիւներին, լաւ կռուողներից եւ ղեկավարներից մէկն էր:

«Ղարադաղը» ինչպէս ասացի, մեր միջնաբերդն էր: Այդտեղ էր մտնում արտասահմանից եկող սուրհանդակը, — հայ թէ ֆուրտ: Այդտեղ էին կանգ առնում եւ զինաբեր խմբերը: Այդտեղ էին գալիս գաւառի խմբերը, գործիչները եւ սուրհանդակները: Այդտեղից են մեկնել արտասահման եւ գաւառ ունէ՛ն ձեռնարկի գնացող խմբերն ու յեղափոխական գործիչները:

«Ղարադաղ»ը գերեզմանն է շատ դաւաճան դաւադիրների, որոնք մտել են այդտեղ եւ դուրս չեն եկել:

Փոլիս Միթթարը եւ միւսներն այդտեղ սպանուել եւ պահուել են: Ամբողջ թաղը իմացել է, բայց եւ այնպէս գաղտնիքը դուրս չէ եկել:

Ինչպէս ասացի, այս թաղի կեդրոնը «Դրախտ»ն էր, ձինոյեան Միքայի տունը: Տան մեծը մի պառաւ էր, որին «Դրախտի Մայրիկ» էինք ասում. կը լինէր 60-65 տա-

րեկան, գուցէ եւ աւելի. շատ կտրին, աշխատասէր էր եւ անդադրում:

1904ից մինչեւ 1907ի ամառը (եքք բանտարկուեց Մայրիկը եւ «Դրախտը» փակուեց), այդ տունը գիշեր ցերեկ եղել է բաց եւ լիքը մեր տղաներով:

Այդտեղ են եկել բեռներով բոլոր գէնֆերը, ռազմամթերքը եւ յեղափոխական գրականութիւնը: Այդտեղ են իջել վան մտնող բոլոր նորեկները, սուրհանդակները, նամակները: Ժամանակաւոր պահեստները այդ տան մէջն էին, ուր երբեմն մի քանի հարիւր գէնֆ եւ տասնեակ հազարներով փամփուշտներ էինք պահում:

Այդտեղ էր, ինչպէս իր տեղը ասուեց, եւ մեր գինագործական արհեստանոցը: Այդտեղ էին Ալէսն ու Արմենակը ընդունում, մաքրում եւ դասաւորում ռազմամթերքը եւ գէնֆերը:

Կարն՝ մեր բոլոր գործողութիւնների սկիզբը եւ վախճանը լինում էր «Դրախտ»ում:

Պառան ունէր մի որդի՝ Միքայի անունով, որը մեր ընկերակիցն էր, նոյնպէս երկու աղջիկ, — մեծը՝ Օրերանուհին, որը ինձ ընդունեց այնպէս տարօրինակ կերպով, մի շատ կտրին, գործունեայ եւ մեր գործին նուիրուած աղջիկ էր: Մօրը հետ բանտ նետուեց:

«Ղարադաղ»ը իր «Դրախտ»ով, վանի կազմակերպութեան սիրտն էր: Եթէ այդ սիրտը կտրուէր, մեր գլխաւոր յենարաններից մէկը կը խախտուէր եւ գործերը այն թափը չէին ունենար, ինչ որ ունեցան:

Ի հարկէ, թուրք կառավարութիւնը գիտէր այս բոլորը, շնորհիւ մատնիչների «գեկուցումներին». եւ շատ անգամ փորձել է խուզարկութեամբ, յանկարծակի շրջապատելով մի բան գտնել, բայց չի յաջողել, մեծ մասամբ շնորհիւ թագեցիների նարպիկութեան եւ փորձառութեան: Փորձանքը անցնում էր մեր գլխից, գործի գլխից, մանաւանդ թաղի գլխից, անվտանգ:

Չին յեղափոխական աւանդութիւններով հարուստ տուն էր եւ վազգէնեց տունը — Տիգրան Տէրոյեան: Սա վանի առաջին մտաւորական տեղացի գործիչի տունն էր:

Տեղը չէ այստեղ անդրադառնալու վազգէնի դերի եւ նշանակութեան մասին վասպուրականի յեղափոխական

պատմութեան մէջ. մի այլ աշխատութեան գործ է այդ: Նրանց ժամանակը եւ գործը չեն մտնում, տարաբախտաբար, իմ յիշողութիւնների ժամանակաշրջանին մէջ:

Վազգէնեան տունը, թէեւ աչքի ընկած, յայտնի յեղափոխական անցեալ ունեցող տուն էր, բայց եւ այնպէս մեր վստահելի տներից մէկն էր: Մենք յամախ էինք գնում Վազգէնի մայրիկի մօտ, որը ամէնքիս մայրիկն էր: Իր այգիի բոլոր պտուղները հաւաքում, պահում էր մեզ համար եւ «քի մատաղ»ներով, «քի խատնիմ»ներով ուտացրնում: Վազգէնեան այգիի առաջին պտուղները պէտք է փառուէին մեզ համար. առաջին ծիրանը, սալորը, խաղողը, եւայլն, միշտ մայրիկը պիտի ուղարկէր «տղաներաց» համար:

Այն ժամանակը մայրիկը մի աղջիկ ուներ՝ Օր. Սաթենիկ (որը վարժուհի էր ֆաղաֆամիջի մի դպրոցում, չգիտեմ ամսական 50 թէ 60 դուրուշով) եւ մի փոքրիկ տղայ՝ Վարագդատը, դեռ պատանի, 13-15 տարեկան, որը յամախում էր Երամեան դպրոցը. հանդարտ, փափիկ, սիրուն տղայ էր, աչքաբաց. ամէնքս սիրում են գուրգուրում էինք: Նա Ահարոնեանի Վազրիկն էր եւ, ինչ ասել կ'ուզէ, որ թունդ դաշնակցական էր: Նա էր մեր և Երամեան դպրոցի ուսուցիչների միջի կապը: Երբ գնում էինք Վազգէնեան տունը, այնտեղ մեզ այցելութեան պիտի գային Երամեան դպրոցի ուսուցիչները, շատ յամախ, ինքը Երամեանը:

Վազգէնեան տունը մենք ունէինք գէնքի թագստաբան, պահարան: Ի հարկէ այդ պահարաններն լիքն էին 95-96ի թուերին, նրանից առաջ եւ նրանից յետոյ:

Այնուհետեւ եկան շատ փոթորիկներ: Շատ տներ ու մայրիկներ ունեցանք, բայց Վազգէնեան մայրիկը մնաց ամենալաւը, ամենաբարին, իսկ տունը՝ դարձեալ ամէնքիս պարտադիր այցելութեան վայրը:

1908ի Օգոստոսին, երբ ընդհանուր նահատակաց սգահանդէսին պատում էին նահատակուած ֆաղաֆական գործիչների տները, յարգանքի ցոյց անելու, կառավարական նուագախմբով եւ անագին հասարակութեամբ, մեր առաջին այցելած տունը, ի հարկէ, Վազգէնեան տունն էր, Քանտրչուի վրայ, մի խուլ թաղի մէջ: Մի համեստ տնակ

էր, որը միշտ ունեցել է կամ գաղտուկ յեղափոխական այցելութիւններ կամ ոստիկաններով, ժանտարմաների սրկիներով խուզարկութեան եկողներ: Իսկ այն օրը, թուրք գործի, նուագախմբի եւ ամբողջ երիտասարդութեան այցելութիւնն էր:

Դա յեղափոխական առաջին գործունէութեան ապոթեօզն էր: Մայրիկը յուզուած էր, լալիս էր, եւ կոչում. «Հապա ս'ըր է Տիգրանս (Վազգէնը). անոր ինչն՝ չբերիք ձեզ հետ»...

— Մայրիկ, Տիգրանի և բոլոր նահատակուածների արեան չնորհիւ է այս գեղեցիկ յաղթանակի օրը. մը խիթարուիւր սրանով...:

Արտաշէսի Մայրիկեան տունը. — Սա էլ մեր լաւ յեղափոխական տներից մէկն էր: Վազգէսի մայրիկն էր սա, մի մեծ ընտանիք, — 4 որդի, 3 հարս, 4 աղջիկ, ուրեմն 12 հոգի: Որդիները եղել են Վարդգէսի ժամանակ յեղափոխական գործերի մէջ, բանտարկուել են, բանտից փախել, անցել արտասահման, բացի փոքրից՝ Արտաշէսից: Այնտեղ երկուսը մեռել են. մէկը «Հիւրիէթ»ին դարձաւ Վան ու մեռաւ: Արտաշէսն էլ փախստական էր եւ Վարդգէսի բռնուելու ժամանակ հետն էր եղել. երբ տանիքից ցատկել են, Վարդգէսի ոտքը կոտրուել, ուշագնաց է եղել. Արտաշէսը եւ եղիշէն փախել ազատուել են:

Վարդգէսի ժամանակից այս տունը եղել է մեր տընտեսական մասի հայթայթիչն ու ղեկավարողը: Մեր հագուստները սրանք էին պահում, ներմակեղէնները կարում ու լուանում. մեր պահեստի շաքարը, չիրը, բոուածքը եւայլն, բոլորը սրանց տունն էր պատրաստում:

Սրանք էին հոգում բանտի ընկերների, մանաւանդ Վարդգէսի պէտքերը. վերջինս բաւական պահանջկոտ էր եւ դժուարահաւան: Միեւնոյն ժամանակ այս տունը մեր լաւ պատուպարաններից մէկն էր, շատ յամախ էինք գնում սրանց մօտ, ի հարկէ միայն ցերեկները, որովհետեւ աչքի ընկած տուն էր եւ գիշերը վտանգաւոր էր:

Այս տան գլխին շատ պատահարներ են եկել: Բազմաթիւ անգամ խուզարկուել է Վարդգէսի ժամանակ, ինչպէս նաեւ մեր ժամանակ:

Մայրիկը շատ դիմացկուն կին էր, նուիրուած եւ

ագնիւ աղջիկ էր: Աղջիկներին միջնեկը, կարծեմ Աշխէնը, ամուսնացաւ եւ, կարծեմ, ամենադժբախտը եղաւ: Ամէն բան անում էինք, որպէսզի այն դառնութիւններն մէջ մենք մի փոքրիկ միտքարութիւն գգանք: Ամէն խուզարկութիւններն ժամանակ ծեծը անպակաս է եղել. ծեծ են կերել ամէնքը, բայց, մանաւանդ, մայրիկը եւ մեծ աղջիկը, մի այրի, որը տղամարդու պէս մի կին էր:

Վարդգէսի ժամանակ մի հետաքրքրական խուզարկութիւն է եղել. — մատնուած լինելով Վարդգէսի տեղը, ոստիկանները գալիս են խուզարկելու. բարեբախտաբար Վարդգէսը խմբով գնացած է լինում գիշերային պարապմունքի. տունը թողած է լինում միայն Մշոյ Հրայրին (Դժոխք-Արմենակ): Երբ տունը շրջապատում են, մայրիկը մի պահ շուարում է: Հրայրը մարմնով փոքրիկ տղամարդ էր: Մտածում են աղջիկներին եւ հարսներին հաւաքել մի անկասկածելի անկիւն, նրանց ետեւը պահել Հրայրին եւ պատուիրել հարսներին ու աղջիկներին, որ երբ ոստիկան կամ ժանդարմա փորձեն մօտենալ, գոռան, կոչեն, ոչան: Այդպէս էլ անում են: Խուզարկողները ներս են մտնում, դէս ու դէն ընկնում, բան չեն գտնում. ուզում են մօտենալ հարսներին. սրանք էլ նմանը չտեսնուած վայնասուն են գցում. ոստիկանները ետ են փշուում: Պէտք է ասել, որ այն ժամանակ դէպի կանայք որոշ վերապահութիւն կար թուրքերի մէջ:

Աւելի հետաքրքիր է լինում մայրիկի դիրքը: Նա էլ մի ուրիշ տեսակ խաղով է փրկում գէնքի գաղտնի պահարանը: Գաղտնի պահարանը շինուած է աղիւսի պատի մէջ՝ բերանը պատի մէջ բացուած, ամանեղէնի պահարանի յատակն է, պահարանը լեցուն է հողէ ամաններով: Երբ մօտենում են պահարանին, մայրիկը զայրացած՝ կաւէ ամանները գետին է գարկում եւ մեծ աղմուկով կոտորում, պոռալով:

— *Ըչտէ, բան չկայ, կոտրեցէք, ջարդեցէք, ի՞նչ կ'ուզէք, բան չկայ:*

Այս հարպիկ խաղերով ազատուած են եւ Հրայրը եւ մեր գէնքի պահարանը:

Ինչպէս ասացի, այս տունը երեք գոհ է տուել յեղափոխութեան, իսկ ւելի սոսկալի է եղել որդու՝ Ար-

տաշէսի նակատագիրը: Նրան ուղարկել էին արտասահման՝ Կովկաս, աշխատելու եւ տանը օգնելու: 1905ին Բագում, նահանգապետ Նակաշիճէի տեղորոշման ժամանակ, պատահական կերպով ներկայ է եղել եւ մի երկու ուրիշ անմեղների հետ բռնուել է ու դատապարտուել տաժանակիր աշխատանքի: 12 տարի Սիբիրում տանջուելուց յետոյ, յեղափոխութեան ատեն ներման արժանացաւ եւ ազատուելով դարձաւ տուն, որ գտաւ գաղթական վիճակում, Երեւանի մէջ — մօրը, մեծ քրոջը եւ մեծ եղբոր աղջկան:

Գող Մելոն. — Արհեստով պղնձագործ էր, իսկ կոչումով՝ գող: Այդպէս էլ կանչում էինք նրան — «Գող Մելոն»:

Սա էլ մի այլ աշխարհ էր: Այս շրջանի մարդիկն էլ իրենց մասնակցութեան բաժինն են բերել Վանի յեղափոխական շարժմանը: Արժէ, որ խօսենք դրանց ամենատիպար ներկայացուցիչ Գող Մելոյի մասին:

Մելոն «հաշագողի» տիպերից մէկն է, եթէ կ'ուզէք, փոքրիկ Քաւոր Պետրոսը:

Նախ քան յեղափոխական ասպարէզ ընկնելը, անցել է գողութեան բոլոր աստիճաններից: Հիւսիսային Կովկասում խանութ եւ դրամարկղ է կոտրել: Էջմիածնում վանքի պատից կախուած դրամարկղն է կոտրել: Երեւանից ձի է գողացել եւ տարել Ղարս ծախելու, Ղարսում, 1892ի խոլերայի ժամանակ, մեռելներ է շլտել (կողոպտել), յետոյ բռնուել ու բանտից փախել: Կաղզուանում ֆիւրտ աւագակների հետ կռուի է բռնուել, մէկին դագանակով սպաննել ու կողոպտել: Վանում ֆրդերին բեռըւած ծեղերով, բեռներով է ներս փշել: Շուկայից բրինձ, շաքար եւ այլն ամբողջ հակով է գողացել, ուղտի ֆարաւանից: Գիշերը, քնած ժամանակը, թուրք սպայի տնից ամուսնու ծոցի մէջ, կնոջ վրի գարդերն է կտրել: Մզկիթի միջից խալի (գորգ) է հանել... Բայց գէթ այս եւ մի երկու ուրիշ միջադէպ պիտի մանրամասնեն:

Ի հարկէ Մելոն մեռակ չէր. նա ուներ հայ ընկերներ, որոնց, ըստ կարգի, կոչում էինք փոքր գող, կրտսեր գող, եւ այլն: Ուներ մանաւանդ թուրք ընկերներ: Շատ յայտնի էր Շամիրամ թաղեցի Քեամիլը, որը Մելոյի միջոցով ծա-

նօթացաւ մեզ հետ. վերջը ծառայում էր մեր գործին:

Մի անգամ Մելոն այդ Քեամիլի եւ ուրիշների հետ որոշում է գողանալ Շահպաղցի Շէյխի թափփէի խալին: Շէյխի թափփէն, որը, կարծեմ, հորխոռ էր կոչում, բերդի տակն էր, Աւանուց նամբու վրայ:

Մելոն եւ մի թուրք պատի մեծ ծակից, որը բացուած էր օդի մաքրութեան եւ խոնաւութեան դէմ, ներս են մտնում:

Արդէն որոշուած է եղել նախապէս, թէ ո՞ր խալին պիտի թոցնել: Թուրքը սկսում է արարողութիւնը.

— *Սէլամ Ալէքըմ, Ալլահըն եօլը:* (Բարեւ Աստուծոյ տուն):

— *Ալէքըմ Սէլամ, Ալլահըն գուլը:* (Աստուծոյ բարեւ, Աստուծոյ սարուկ):

— *Պիզէ պիր խալը լազըմ, Ալլահըն եօլը:* (Մեզի մի խալի է պէտք, Աստուծոյ տուն):

— *Գալտըր, աիա'ր, Ալլահըն գուլը:* (Վերցուր սար, Աստուծոյ գերին):

Այս ծիսակատարութեամբ խալին դուրս են տանում, բայց ծակի դիմաց է գալիս մի շուն, որը սկսում է հաջել, իսկ շէյխը՝ վերելք նստած՝ կնոջ հետ զրուցում է:

Կինը անհանգիստ շան հաջոցից, ասում է շէյխին.

— *Շէ'յխ, մեր տունը, յանկարծ, Ֆէտայիներ չկոխե՞ն...*

Այս շէյխը Շահպաղցի հայերի հետ մի հողային դատ ունէր, պնդում էր, որ Շահպաղցի չէ, այլ Շէյխ-Բազի է այս գիւղի անունը եւ իր թափփէի պատճառով գիւղի կէսը ու հողերը իրենն են: Այս ձեւով էլ հողերը գրաւել ու նստել էր. 30-40 տարի տէր եղաւ եւ Սահմանադրութեան ժամանակ վէճը վնոուեց յօգուտ հայերի:

Այս պատճառով Շէյխը վախենում էր, որ հայերը կը յարձակուեն տանը վրայ՝ իրեն սպանելու:

Շէյխը կնոջ հանգստացնում է, շանն է բռնում, որ ձայնը կտրէ. շունը ֆաշում է մէկ կողմ, իսկ գողերը՝ խալին առած՝ թռնում են դուրս եւ անյայտանում:

— *Այսպէս նշանաւոր տեղերից գողացուած խալիները գաղտուկ քարաւանով ճամբում էինք վաճառականների միջոցով Դիարբէքիր ծախելու, —* անշացնում էր

իր պատմութեան վերջը Մելոն, որպէսզի մենք աւելորդ հարցումներ չտանք:

Ամենայն զգուշութեամբ լուում էր եկեղեցիներից եւ վանքերից արած գողութիւնների մասին, հաւատացնելով, որ ինքն այդ «մեղքը» չի գործել, բայց տղաները ասում էին, որ վանքերը յանախ կողոպտուել են Մելոյի մասնակցութեամբ:

Աւելի հետաքրքրական է զէնքերի գողութիւնը դատարանից: Սա արդէն յեղափոխական ձեռնարկ է: 1904ից յետոյ, Մելոն եւ ընկերները սկսում են աշխատել յեղափոխական ձեռնարկների մէջ: Զգիտեմ՝ ո՞րտեղ եւ ի՞նչ պարագաների տակ, բաւական զէնքեր են բռնում, որ ըստ օրինի տանում են դատարան, որպէսզի դատից յետոյ ուղարկեն պետական զինանոց:

Մելոյին եւ ընկերներին կարգադրում է դատարանից թոցնել զէնքերը: Այդտեղ մեծ դեր է կատարում թուրք Քեամիլը, որի եղբայրը դատաւոր էր եւ ելեւմուտք ունէր դատարանում. գիտէր զէնքերի տեղը, դռների բանալիների ձեւը եւ այլն: Իսկ Մելոյի տանը ամէն կարգի բանալիներ կային, բայց, — եթէ չլինէին էլ, դրան դարձան կար. մոմով առնում էին դրան վրայից բանալի կաղապարը եւ դուրսը շինել տալիս. փառք Աստուծոյ, վանը լիքն էր լաւ արհեստաւորներով:

Վերջապէս, ամէն պատրաստութեամբ օժտուած՝ Մելոն, Քեամիլը եւ ուրիշները հասնում են դատարան: Մելոն և Քեամիլը ներս են մտնում, իսկ ընկերներին դուրս պահապան դնում:

Դուռը բացում է, Քեամիլը ցոյց է տալիս դողալով ներսի դուռը, որը բաց էր, եւ այնտեղ եղած պահաբանը: Մելոն առանց շտապելու, հրաւիրում է Քեամիլին նստել դատական ատեանի սեղանի մօտը, ինքն էլ նախագահի տեղը:

— *Երկար ու բարակ քննեցինք զէնքերի գործը: Վերջապէս, «բարակ» ըսինք, արդարացուցինք եւ հանեցինք: Քեամիլը ահից մեռնում էր, պողալով, թէ չուտարա, պիտի խայտառակուենք:*

Զէնքերը հանում են եւ բերում մերոնց:

Մելոն եւ իր ընկերները այսպիսի բաների համար,

ի հարկէ, առատ դրամական վարձատրութիւն էին ստանում:

Ամենամեծ ձեռնարկը, զոր արել է Մելոն, վարդգէսը փախցնելու ականի գործն է, որը առաջ էր տարուում նրա ջանքերով, նրա մասնակցութեամբ ու ցուցումնեցրով, որովհետեւ բազմիցս բանտ էր նստել եւ լաւ գիտէր բանտի ծակուծուկերը:

Վարպետներն ու տղաները միշտ նրա տանն էին պահում ցերեկները, որ գիշերները գործի սկսին:

Ինքն էր գնում որսորդական շան պէս չորս կողմը խուզարկելու, որ տեսնի՝ մարդ չկա՞յ: Ապա դուրս էր կանչում տղաներին: Դիտմամբ տուն էր բռնել Հայկավանում, բանտի հանդիպակաց կողմը, իսկոյն գնալու եւ դառնալու համար:

Իրեն պէս մի հայդուկ կին ունէր — Զարուհի, աւելի խաչագող ու տղամարդ, քան ինքը:

Բանտի ականի աշխատանքի կատարման ժամանակի մասին պատմում է հետեւեալ դէպքը.

— Պարոն, գիր մը, Պր. Բժիշկ (Կոմս) Թէոս Աղի հետ լուր էր ճամբած, թէ գիշերը պիտ գնանք, պատրաստութիւն տե՛ս: Թէյ, շաքար, ձեր հացից, Աստուծոյ հացից կար, ամա փէտ չէր գտնուեր սոփայի (վառարան) համալ: Ինչքան դէս ու դէն ընկայ, ճար չկայ. կեցածս տունը բոլոր խարաբա մայրի փայտերը քանդել վառել էինք. մարախէս կը մեռնէի. գիտէի, որ Թէոս Աղէն հէր ու մէր, խատած պիտի քչէր, եթէ օդէն տաք չլինէր: Յանկարծ միտք մը յղացայ գլխուս մէջ: Արարուց ճամբու վերայ թուրքերաց մի սուրբ ծառ կէր. խորհեցի — գործը՝ սուրբ, մարդիկը՝ սուրբ, ծառը՝ սուրբ. երթամ, կտրեմ, բերեմ... Որոշեցի եւ ըրի: Ծառի կէսը չորացեր էր վաղուց: Կտրեցի չոր մասը, որի վրայ կային հազարաւոր փաթաթուած շորի կտորներ: Իրենց ցաւերը կապած էին տաճիկները վրը ծառին: Բերի կտրտեցինք, անուշ վառեցինք, լազաթ տեսանք, խօրօտ տաքցանք, չայ դրինք, կեր եփեցինք, անուշ կերանք:

Ականի գործից յետոյ ինքը եւ մի քանիները փախըստական էին դարձել, ապրում էին կազմակերպութեան հաշուին: Պէտք է ասել, որ ինքը դեռ տանելի էր: Միւս-

ներն ուղղակի կողոպտում էին կազմակերպութիւնը եւ տեղի ու անտեղի սպառնալիքներ անում:

Մելոյին վերջէն յանձնեցինք աւելի պատասխանատու գործ: Նրան, իբրեւ վարպետի, պղինձ ու կլայեկ գրանցինք ու տուինք, որ գնայ այդ պատրուակի տակ Արագան, Խաչան, իբր ամանեղէն կլայեկող, փոխադրական գործը ղեկավարելու համար: Երկար ժամանակ սուսիկբուսիկ այդ գործը վարեց, յանախ անձամբ գնաց վանք ապրանքներ փոխադրելու, գտաւ թուրքեր, որոնց հացի բեռների մէջ փամփուշտ էր բերում, Պօղոս-Պետրոս եղբայրների հետ, ինքն էլ, յանախ, բեռներով ապրանք էր բերում ցորենների մէջ:

1908ին Դաւիթի դաւանանութեան ժամանակ, Կոմսի հետ Մելոն եղել է ջրի տունէլների մէջ պահուելու «գիւտն» անողը:

Նա ինձ հետ բռնուեց եւ բանտն էր:

Մելոյի ամենավերջին եւ, թերեւս, ամենալաւ գործերից մէկն էլ 1914ին, կարծեմ Նոյեմբերին թէ Դեկտեմբերին էր, երբ ուսական արշաւանքը սկսուել էր: Տանիկ կառավարութիւնը լուր էր առել, թէ հայ կամաւորներ կան, առաջարկեց մեզ, որ գրեմք Անդրանիկին, որ յետ կանգնի այդ մտքից: Այդ նամակը տանողը Մելոն էր. տուել էինք մի խեղճ ձի, հեծել էր վրան, նման էր Սանխօ-Պանչոյին:

— Պարոն, հրամանդ կատարելով կ'երթամ: Ամա էս դրուն գլուխս կ'ուտեն էս... տաճիկները, բայց Զարուհիը քեզ թէսլիմ...

Մելոն կամաւորներին հանդիպել էր Բարթուղիմէոսի վանքը: Նրա գնալուց մի քանի օր յետոյ նահանջ էր եղել: Ապրիլին կամաւորների հետ Մելոն էլ յաղթականօրէն վան մտաւ...

Գործիչների ընդհանուր շարքը լրացնելու համար հարկ է ծանօթանալ ե՛ւ այն տիպերի հետ, որոնք նոյնպէս որոշ դեր են կատարել, բայց բախտի բերումնեցով, կամ միշտ զգոյշ ու որոշ վերապահութեամբ գործելով՝ փախըստական չեն դարձել:

Յարութիւն Տ. Թումազեան (Եփրատ). — Իմ վան գնացած ժամանակը սա աչֆի ընկնող գործիչներից մէկն էր: Շատ մօտ էր Կոմսին: Կարծեմ վարդգէսի ժամանակ էլ եղել էր Կ. Կոմստէի անդամ: Արտաֆինով սուսիկ-փուսիկ, շրջահայեաց եւ խիստ զգոյշ մի տիպ էր: Շատ էր սիրում բամբասել ընկերներին, առանձին հակում ունէր իմանալու եւ հազորդելու ներքին այս ու այն նեղ շրջանի մէջ տեղի ունեցած գաղտնի որոշումները:

Յատուկ յանձնարարութիւններ էինք անում այս ու այն գործի համար. մի ժամանակ էլ ծախսարար էր շուկայից գնուելիք ապրանքների:

Մեծ սէր ունէր դէպի կուսակցական պայքարը, աւելի ճիշդ ինտրիզները, թունդ ու եռանդով հետեւում էր արմենականների ֆայերին, նոցա ներքին ժողովների որոշումներին, գործիչների կարծիքներին. ամէն բան խնամֆով նօթ էր անում եւ երեկոները գալիս հազորդում էր մեզ, օրուայ ֆաղաֆական ու հասարակական նորութիւններով համեմելով:

Նշան Սահմէլեան-Թորոս. — Շատ վարպետ եւ լուրջ մի մարդ էր. միշտ իրեն պահել է ջրի վրայ, երբեք չի վտանգուել, թէեւ միշտ եղել է գործի մէջ, — օգնել, օժանդակել եւ գործել: Այնքան զարմանալի է եղել նրա հետապնդումից գերծ մնալը, որ կասկածել են, թէ կապ ունի կառավարութեան հետ:

Սա պահում էր մեր դրամական կապը վաճառականների հետ. նա էր կուսակցութեան կողմից պարտքեր վերցրնում, դրամական գործողութիւններ կատարում:

Դրամ մեծ մասամբ մենք ստանում էինք Կովկասից, Պոլսից (երբ այնտեղ էինք ունենում) եւ Ամերիկայից:

Դրամները գալիս էին այս ու այն վաճառականի անունով, փոխդիր կամ որեւէ դրամատան չէֆով, կամ մեր ընկերներից մէկի անունով: Պայմանադրում էինք իրար հետ, որ որոշ անունով եկածները մերն էին: Ի հարկէ, շահագործումներ եւ ուշացումներ լինում էին. մինչեւ որ նամակներ էինք ստանում: Ուրիշ նար չկար. միակ միջոցը այդ էր:

Նշանի պաշտօնն էր այդ դրամները գանձել. առհասարակ մաս-մաս էին տալիս:

Նշանն էր անում մեծ մասամբ եւ շուկայի գնումները, նա էր դեկավարում եւ արտասահմանի ու միւս նահանգների հետ փոստային-նամակային յարաբերութիւնը. դա էլ դրամների նման գալիս էր վաճառականների հասցէով, որոշ պայմանական անունով:

Այս դիրութիւնները վաճառականները մեզ էին տալիս մեծ մասամբ չհասկանալով, որ մեր նամակները գաղտնի մեղանով գրած բաժին ունին: Մի քանի անգամ, ի հարկէ, բռնուել են եւ բանտ նստել: Այդպիսիներից մէկն էր Թէոսի եղբայրը Ջոջ-Աղան, որը մի նամակի համար երեք տարի նստեց բանտ:

Վաճառականներն ամէն դիրութիւն ունէին նամակային յարաբերութեան, թէ՛ Պոլսից եւ թէ՛, մանաւանդ, արտասահմանից: Խոշոր ծրարներով գալիս էին նրանց հասցէով պանդուխտների նամակները, ինչպէս եւ դրամները. ամէն մի նամակի համար վարձատրութիւն էին ստանում պանդուխտներից: Բայց գլխաւորը դրամն էր, — Պոլսում կամ արտասահմանում, — որը նոյնպէս Պոլիս էին փոխադրում. դրամ ստանալով, ապրանք էին տալիս, գործ կատարում. իսկ խեղճ գիւղացիներին ամիսներով ձգձգում էին, դրամները մաս-մաս տալիս եւ շատ անգամ էլ ուտում՝ սնանկանալով եւ խեղճ գիւղացիների տունը աւերելով: Այս գուռի դրութիւնը Տանկաստանի բոլոր ֆաղաֆներում կար:

Ահա այս նամակային եւ դրամական փոխադրութեան ձեւից էր, որ մենք էլ էինք օգտուում:

Նշանը նամակները հաւաքում էր զանազան վաճառականներից եւ փոստայի պէս տանում ձգում էր ըստ կարգին:

Նշանի ընկերն էր *Կարապետ Շիրաւնեանը*, որը կապ էր պահում Պարսկաստանի հետ եւ մեր նամակային առաֆումները կատարում պարսիկների միջոցով:

Պոսիկ Նշան Եազջեան, Մարտիրոս-Գրթոյեան-Քեռին, (որի մասին խօսեցի վերը) մեծ դեր են կատարել զէնքեր պահելու, գնելու գործի մէջ. նոցա բոլորի տանը համարեա զէնքի գաղտնի պահարաններ կային:

Պնէեան Վահան. — Հին արմենական տղաներից էր, մի լաւ խմբով յարել էր մեզ: Բոլորն էլ լաւ փորձուած ու-

ծեր էին եւ լաւ կոռուզներ: Մեծ մասը, ինչպէս եւ Վահանը, եղել էր 96 թուի կոռուզներից, այն սակաւաթիւ ազատուողներից, որոնք՝ նողոպրելով Բարթուղիմէոսի Զորի Գիւզալ-Տարէի կոտորածից՝ հասել էին Պարսկաստան եւ ապա զինուած յետ դարձել, մի առ ժամանակ յետոյ:

Նրա ընկերներն էին Նալպանտ Նշանը, որը միշտ լաւ գործիչ է եղել եւ մեծ դեր կատարել: Նշանի եղբայր Մկրտիչը, որը լաւ զինուոր էր, սպաննուեց Ապրիլեան կրուուից առաջ Թիմարի կռիւներին: Ռէս Մելիքի Նշանը լաւ կոռուզ եւ խմբապետ էր. Նագուի հաշիկը՝ մի համեստ, բայց կտրին զինուոր, որ սպաննուեց Ապրիլեան կռիւին. Նալպանտ Արիստակէսը եւ Ղաւատ Արշակը Ապրիլեան կռիւների լաւ մարտիկ-խմբապետներից էին: Ֆրանկվաոցի Գարրիէլը Գոզ Մելոյի տիպի մարդ էր եւ Նորտուզի շրջանի ու հոշապի քրտերի մէջի կապը: Լաւ գիտէր բոլոր աշիրէթներից, սուրհանդակութիւն էր անում. մի առժամանակ եղել է եւ Արաղայի գծի վրայ փոխադրութեան գործի ղեկավար. փորձառու, կտրին զինուոր է: Ապրիլեան կռիւներին քաղաքն էր. կամաւորները երբ եկան, ռուսական բանակին նա առաջնորդեց դէպի Ասորեստան-ձուլամերկ:

Այս բոլորի հոգին Պնէի Վահանն էր, արհեստով հիւսն, մի համեստ, հայրենասէր եւ դպրոց տեսած մարդ. սովորել էր Փորթուգալեանի ժամանակ, ունեցել էր ռուսահայ ուսուցիչներ — Փիրումեան եւն.: Դեռ պատանի՝ կարդացել էր Ռաֆֆու վէպերը. խմբի ընկերներից շատերը դպրոցական ընկեր են եղել:

Վահանը գէնք գնող յանձնախմբի նախագահն էր. նա էր, առհասարակ, գէնք գնում: Զէնքը գնում էինք մեծ մասամբ քրտերից. գործակալներ ունէինք, որոնք գնում էին աշիրաթների մէջ, Պարսկաստան, գէնքեր գնում եւ քերում մեզ ծախում. գնում էինք եւ քաղաքացի թուրքերից, զինուորներից եւայլն:

Վահանեց տունը գնուած գէնքերի գլխաւոր պահեստարանն էր:

Վահանն ունէր մի բարի պառաւ մայր եւ մի շատ ազնիւ, հայրենասէր, կտրին ու յեղափոխական քոյր՝ Օր.

Սաթեսիկ: Նրանց տունն ամբողջ յեղափոխական գործը՝ գէնքերի պահելը, խմբերի պատասպարելը, բոլորը կատարում էր Օր. Սաթեսիկը, առանձին աշխույժով, սիրով ու եռանդով:

Մեկ յանախ էինք լինում Վահանեց տունը: Համագլխանալու տեղ էր. գնում էինք լաւ ուտելու. մայրիկը լաւ կերակուրներ էր պատրաստում, մանաւանդ լաւ փաշա: Ուտում էինք եւ 24 ժամ լնում: Տունը հրապարակի վրայ էր, երթեւեկել անկարելի էր, այնպէս որ նրանց տանը մարդ չէինք ընդունում ցերեկները:

Երբեք չեմ մոռանայ նրանց տանը տեղի ունեցած մի փոքրիկ խուճապի պատմութիւնը: Վահանի տանը ապահով լինելով՝ մէկ-մէկ հագուստներս հանում հանգիստ լնում էինք: Վահանը, ընկերները, մանաւանդ Օր. Սաթեսիկն ամբողջ գիշեր պահապան էին կանգնում...

Մի օր, վաղ առաւօտեան, նրանց տանը վարի յարկի սի յուլ սենեակում պառկել էինք ես եւ իշխանը: Յանկարծ, մի ուժեղ պայթում լսեցինք: Մեր տեղից թռչիլն ու հրացանների դիմելը մէկ եղաւ: Վահանը վազեց դէպի մեզ, մենք՝ դէպի դուրս. իսկոյն հագնուեցինք՝ կարծելով, թէ թնդամօթի ձայն է:

Երբ ձայնը չկրկնուեց, Վահանը ուզեց փառոց նայել, թէ ինչ կայ: Օր. Սաթեսիկը վերելից պոռաց. «Դուռը բանալը վտանգաւոր է. յանկարծ ներս կը խուճեն: Սպասեցէ՛ք, ես տանիքից նայեմ, ու թաւ տանիքը եւ ետ դարձաւ իսկոյն, թէ՛ բան չկայ»...

Մնացել էինք շուարած. մայրիկը մէջտեղ չկայ: Օր. Սաթեսիկը յանկարծ «Արա՛ր, մայրիկս», պոռալով՝ վազեց տուն: Գնացինք, տեսանք՝ մայրիկը ուշագնաց ընկել է: Յետոյ գաղտնիքը բացուեց: Նախընթաց օրը այդտեղ մաքրել են. թղթերի մէջ, երեսում է, մի փոքրիկ կրտոր դինամիտ էր մնացել. մայրիկը թղթերի հետ առաւօտուն նետել է թոնիրը հեշտ վառելու համար, եւ դինամիտը պայթել է, ամէնքիս վախեցրել և մայրիկին ուշագնաց արել:

Վահանը մի-բանի անգամ բանտ նստեց, Օր. Սաթեսիկն ու մայրիկը ծեծ կերան: Վահանին կաշառեով ազատել տուինք դատարանում. լաւ աշխատաւոր էր. ազատու-

քեան տարիները, 1910 թէ 1911ին, մեռել էր տիֆից:

Մարիֆեան Օհանէս-Ֆէլզօ.— Յովհաննէսը սրնա-
րան ունէր, Չախկըբանդ, մի բանուկ տեղ, ուր երթեւե-
կուրթին շատ էր լինում: Բողոքական հիւանդանոցը, դե-
ղարանը, դպրոցը եւ մնացած հիւանդանոցները՝ ամերիկե-
եան, գերմանական՝ այդ ուղղութեան վրայ էին:

Ֆէզոյի սրնարանը Այգեստանի մեր լաւ կայարան-
ներից մէկն էր՝ ամենամօտիկը Ղարադաղին եւ ամենահա-
ւատարիմը: Այնտեղ էին կեդրոնանում Վերին Հայոց Ձո-
րի, Արնակի, Սեւանի շրջանի նամակները, սուրհանդակ-
ները եւայլն: Այդտեղ էր ե՛ւ այդ շրջանների լուրերի կեդ-
րոնն ու հաւաքողը, — ինքը՝ Յովհաննէսը: Հետաքրքիրն
այն էր, որ ամերիկացիք էլ, մանաւանդ Տոքթ. Աշրքը,
երբ որեւէ լուր էր լսում, մանաւանդ քաղաքից վերադար-
ձին, հազորդում էր Յովհաննէսին՝ մեզ յայտնելու հա-
մար:

Եթէ տեղեկուրթիւնները սովորական բաներ էին,
Յովհաննէսը լուրերը հազորդում էր նամակով. իսկ եթէ
կարեւոր էին, անձամբ էր գալիս մեզ մօտ: Մի կարնահա-
սակ, եռանդոտ մարդ էր. միշտ մի թաշկինակ գցած ու-
սի վրայ, երեւի, սրնարանի մէջ մատակարարութիւն ա-
նելու համար, եւ միշտ առանց ժակէտի, ժիլէտով ու շապի-
կով, կէս կատակախառն ու կէս լուրջ սկսում էր պատմու-
թիւնը:

Մեզ տեսութեան գալիս մէկ մէկ էլ մեզ համար քե-
րում էր օշարակ, իսկ եթէ աշուն էր լինում, շիրա, իսկ
Թէոսի համար՝ գինի կամ մաստիկա:

Յովհաննէսն անդամ էր ե՛ւ գէնֆ գնող մարմնի. նա
էլ իր քրտերն ունէր. գնում էր Սոգա կամ Շուշանայ, գէն-
ֆերն այնտեղ տեսնում ու գնում էր: Յեղափոխական գոր-
ծի համար մի տարուց աւելի բանտ նստեց. մեր գործի հա-
մեստ օղակներից մէկն էր. մանաւանդ նրա սրնարանը:
1916ի նահանջներից մէկի ժամանակ Յովհաննէսը հիւան-
դացաւ ու մեռաւ:

Մանուէլ Կապուտիկեան.— Սա էլ մի ուրիշ աշխարհ
էր. արհեստով ոսկերիչ, բայց ձգտումներով, շարժումնե-
րով մտաւորական մարդու տպաւորութիւն էր թողնում,
կամ ուզում էր թողնել: Երիտասարդ տղայ էր, այն ժա-

մանակ հազիւ 19-20 տարեկան: Նա մեծ մասամբ կապ էր
պահում դպրոցականների եւ մտաւորականների հետ. լաւ
աշխատում էր, նոր կազմակերպական շրջաններ էր ստեղ-
ծում, մեծ մասամբ կրթութիւն ստացած մարդկանց շըր-
ջանակում: Ինչպէս ասացի, մանաւանդ աշակերտների
մէջ: Այս շարժումը Դաշնակցութեան մէջ նոր էր: Մերոնք
մեծ կարեւորութիւն չէին տուել, մանաւանդ տեղական
մտաւորականութեան. դպրոցները բոլորը արմենականնե-
րի ձեռքն են եղել. դպրոցից դուրս եկողները արմենական-
ներ էին դառնում բնականօրէն: Մանուէլի դերը հէնց դը-
րանումն էր որ աշխատում էր այդ դպրոցական պատանի-
ների մէջ, ինքը գաղափարական եւ նուիրուած տղայ էր.
բաւական գեղեցիկ էլ արտայայտում էր. խօսում էր մա-
քուր պոլսական գրական լեզուով, կարդում էր, հետա-
քրքրում. համարեա ամէն օր աշխատում էր հանդիպել
մեզ եւ նորութիւններ հազորդել ու ստանալ իր պատանի
հետեւորդներին հազորդելու համար:

Ամէն բանից դժգոհ լինելու մի գիծ ունէր. շատ էր
ցաւում, որ կրթութիւն չէր ստացել. յետոյ արհեստը ձը-
գեց եւ գնաց կրթութիւն ստանալու:

Մանուէլը ժողովներ էր գումարում մեծ մասամբ ի-
րենց տանը: Չեմ մտանայ այդ ժողովներից առաջինը:
Մեզ երկար ու բարակ պատցնելով այգիների միջից, շատ
հեռու տեղից տարաւ իրենց տունը (Արարուց կողմն էր).
եղանք վեր. տեսայ, որ ֆուրսու չորս կողմը շարուել էին
12-14, գուցէ եւ աւելի պակաս տարիքով 8-10 պատանի-
ներ: Կարծես թուխսի նուտեր էին, իսկ Մանուէլը՝ թըխ-
սամայր:

Զարմացած մնացի. չգիտէի՝ ինչի՞ց սկսել, ինչն՞ով
վերջացնել: Կարծեմ խօսեցի ընդհանուր զարգացման,
ինքնագարգացման անհրաժեշտութեան մասին: Յետոյ նը-
կատեցի, որ իմ պատանի աշակերտներին չեմ գոհացնում
իմ ծանր, դպրոցական գրոյցներով:

Տեղաց հարցերի տարափը մեծ մասամբ յեղափո-
խական, պատմական ձեռնարկների մասին. անցան կով-
կասահայ գրողներին եւայլն: Ուշադրութիւնս գրաւեց մի
փափիկ, քոթոթ, սիրասուն պատանի, որը կազմել էր
հարցերի մի մեծ ցանկ. հարցնում էր եւ պատասխանները

գրում: Բերել էր ելույական բառերի շարան. երևի *Դրօշակից*, կովկասահայ թերթերից եւ գրքերից էր հանել. այնքան հարցեր եւ բառեր ուրջրեց այդ պատմին, որ ես սկսայ կասկածիլ, որ չլինի թէ սա ինձ փորձութեան եւ ֆնտրութեան է ենթարկում: Այնուհետեւ ամէն հանդիպումին նոյն պատանին հանում էր գրպանի տետրը, նոր հարց ու ու բառերով ինձ ուրակոծում կամ բառակոծում էր: Նա մեր ապագայ Բարունակն էր, Մանուէլը փոքր եղբայրը — Բարունակ Կարուտիկեանը: 10-12 տարի է անցել. ուսուցիչ դարձաւ. այժմ էլ գրող եւ չիրք ունեցող հասարակական գործիչ է (*):

Մանուէլ նոյնպէս եռանդով վարեց գործը մինչեւ *Հուրիէթ*, երբ ինչպէս ասացի, գնացել էր Պոլիս ուսանելու. չիմացայ, թէ Պոլսում ի՞նչ դիրք էր բռնել, բայց հիասթափուած ձեւ ունէր:

**

Մի ֆանի գաւառացի գործիչների տիպ էլ ներկայացրնելով՝ փակեմք առաջին շրջանի, այսինքն՝ 1905ի գործիչների ցանկը. աւելի մանրամասն եւ, նորերի հետ միասին, նորէն հանդիպելու նրանց 1907ի սկիզբները եւ մի վերջին անգամ էլ 1912ին:

Սկզբից ասեմ, որ գաւառացի գործիչներին ես վերջրել եմ այն շրջաններից, որոնց հետ 1905-1906ին անմիջական շփում եմ ունեցել: Որովհետեւ Լեոնապարի շրջանը անջատ էր, այդ պատճառով ես չեմ տայ Շատախի, Մոկսի, Կարկառի, Կարնկանի եւ Գաւառի գործիչների տիպերը: Այն տեղերն էլ շատ գործունեայ եւ աչքառու մարդիկ կային. բայց, որովհետեւ ես նրանց հետ ուշ ծանօթացայ եւ շփուեցի, դրանց մասին պիտի խօսիմ երրորդ շրջանի՝ ազատութեան օրերը եղած գործունէութեան նըկարագրութեան միջոցին (*):

(*) Այժմ համզուցեալ. մեռաւ խոլերայից երեւանի մէջ, 1918ի Օգոստոս 18ին: Իր կեանքի վերջին վարեց *«Աշխատանք»*ի խմբագրի պաշտօնը:

(*) Դժբախտաբար Արամին չվիճակուեց այդ երրորդ շրջանի յիշողութիւնները գրելու, ընթացիկ կեանքը անոր ժամանակ չտուաւ այդ ցանկութիւնն իրագործելու:

Սկսեմք Թիմարի գործիչներից: Արդէն խօսուել է Ուրփացի Հաջի Կարապետի մասին: Նոր բան չեմ աւելացրնելու, մանաւանդ, որ Կոմսի մեկնելուց յետոյ նրան անյարմար գտնեմք պահելու: Շատ աղմուկներ գցելուց յետոյ նա անցաւ Պարսկաստան: Հետաքրքիր էր նրա վերջին հանդիպումը ինձ հետ: Այս անգամ ոտքերը փոխուել էին. ես ֆաղաֆի գործիչ էի, Հաջին՝ գիւղի. նա ծայտուած է գալիս ինձ մօտ տեսնուելու: Կանչել էինք նախապարհ գրցելու:

Այդ օրը «Դրախտում»ն էինք. բազմաթիւ գիւղացիներ պիտի ընդունէի: Բոլորը շարքով նստել էին տանը ու մէկ մէկ ներս էին գալիս «Դրախտ»ի ներսի օդան: Սենեակումն էինք՝ ես, կարծեմ Թէոսը, իսկ միւսներին լաւ չեմ յիշում: Երեք գիւղացի միասին մտան եւ, բարեւ տալով, պատի տակ նստեցին վարի կողմը: Երկուսի խընդրակները լսելուց եւ կարգադրութիւն անելուց յետոյ դիմեցի երրորդին, որ մի կարճահասակ մարդ էր:

— Դուք ո՞վ էք. ձեր անունը ի՞նչ է:

— Ո՞ր անունս կ'ուզէք՝ ծննդեան, անցադրի, յեղափ...:

Թէոսը փրթկացրեց եւ կամացուկ փսփսաց. «Ալիւրի Հաջի Կարապետն է, չե՞ս յիշեր»:

Իրօք չէի յիշում. նրան գիշերն էի տեսել ուրիշ պարագաների տակ, մանաւանդ որ այժմ շորերը փոխել էր եւ «գաւառան արդարութեանն» էլ ձեռքը չէր:

Հաջին՝ գլուխը շարժելով Թէոսի վրայ՝ ասաց.

— Ախ, վանայ քաղքցիք, վանայ քաղքցիք... ձեր խօր գազաթ, ըրիք չըրիք մեր տուն աւրցիք...:

Յետոյ Թէոսը պատմեց, որ այդ նախադասութիւնը Ալիւրի սովորական առածների շարքն անցած խօսք է, որ ունի եւ իր յատուկ պատմութիւնը, որ գուրկ չէ հետաքրքրութիւնից:

Մի անգամ վանի հնչակեանները, 96 թուից առաջ, գնում են Ալիւր գիւղը կազմակերպութիւն անելու. շատերին կազմակերպում են. անունները «դաւթար» են ֆաշում, ինչպէս իրենք են ասում. գալիս են ֆաղաֆ. նախապարհին ձերբակալուում են հանդերձ «դաւթար»ով:

Գրուած անունների տէր գիւղացոց կառավարու-

քիւնը ձեռքակալում է. ձեռքերով ու խայտառակելով, քե-
ւերը կապած, շուկայից անց է կացնում դատարան տա-
նելու համար: Քաղաքացիք՝ անտարբեր դէպի ալիւրցոց
վիշտն ու վիճակը՝ հաւաքում են փողոցներում և անփոյթ
կերպով «սէյր» են անում — դիտում են: Այն ժամանակ
ալիւրցիներից մէկը դառնալով վանեցոց հասցէին ասում
է վերեւի խօսքը:

Վերջապէս, աներածեշտ յարգանքով յայտնեցինք
Հաջիին, որ կ. կումիտէն նրա ներկայութիւնը Թիմարում
գտնում է վտանգաւոր, եւ որովհետեւ ուրիշ տեղ էլ գործ
չկայ, Հաջին պէտք է անցնի արտասահման:

— *Ի՞նչ ընենք. երբ կոմիտէն կը հրամայէ, պիտի
երթանք:*

Եւ գնաց:

Յետոյ իմացայ, որ մեծ գործիչ է եղել էջմիածնի
շրջանում: Այնտեղ սովորել է եւ մեղուարուծութիւն: Ա-
զատութեան առաջին տարին, 1909ին, Հաջուն պատահե-
ցի Մշոյ դաշտը: Առաքելոց վանքում մեղուարուծու-
թեամբ էր պարապում: Ս. Ջաւարեանի ժամանակ անցել
էր Սասուն համայնական մեղուարուծութեամբ զբաղուե-
լու. այնտեղ էլ մնացել եւ գործել էր մինչեւ 1915ի կոտո-
րածը, երբ ահռելի փոթորիկը ամէնքի հետ տարաւ եւ մեր
Հաջուն:

Ալիւրցի Սարգիս եւ Վարդան.— Սրանք երկուսն էլ
բաւական տարիքաւոր գործիչներ էին, նախկին արմենա-
կաններ՝ Փորթուգալեանի ժամանակ: Անդամ են եղել նրա
ակումբին, գործել են երկար ժամանակ, եղել են Պոլիս եւ
ուրիշ վայրեր, կարծեմ Վարդգէսի ժամանակ յարել են
Հ. Յ. Դաշնակցութեան: Մեծ հեղինակութիւն ունէին Ա-
լիւրում եւ Թիմարի բոլոր գիւղերում, իբրեւ խելօք, գա-
ղափարական եւ պարկեշտ մարդիկ:

Սրանք երկար ժամանակ վարել են Թիմարի ենթա-
կումիտէի անդամութեան պաշտօնը, կազմակերպել են ի-
րենց շրջանի գիւղերը, աշխատել են կուսակցութեան հրա-
հանգով լիմ եւ կտուց անապատների տնտեսութեան մէջ,
— բայց ճգնաւորական ռէժիմը թոյլ չի տուել նրանց մեծ
գործ կատարելու:

Ազատութեան օրերին էլ մեծ եռանդով աշխատում

էին. ընտրութիւնների ժամանակ միշտ Դաշնակցութեան
քեկնածուներն էին, միշտ էլ շահում էին եւ կարգապահ
էին կուսակցութեան որոշումների նկատմամբ:

1915ի Ապրիլեան կռիւներին երկար դիմադրել են
ֆրտերին. բազմաթիւ ֆրտեր սպաննելուց յետոյ, հա-
ւատալով իրենց դրացի թուրքերին՝ համաձայնուել են
թոյլ տալ, որ գորքը մտնի գիւղ, ֆրտերին ֆշելու եւ կար-
գը հաստատելու համար: Զօրքը մտել է, եւ, փոխանակ
կարգը հաստատելու, իրենց է կոտորել. այդտեղ էլ գոհ-
ուել են գիւղի բոլոր տղամարդկանց հետ:

Արիստոզում եւ Տիգրան.— Երկուսն էլ հասակակից եւ
կարծեմ դպրոցական ընկերներ էին, երիտասարդ և թունդ
գաղափարական ընկերներ:

Ալիւրի ենթակումիտէի ձախ թեւն էին, բողոքող՝
Վարդանի եւ Սարգսի պահպանողականութեան դէմ: Աւե-
լի եռանդուն մասնակցութիւն ունէին կազմակերպական
գործերում: Շրջում էին ոչ միայն Թիմարի շրջանի գիւ-
ղերը, այլեւ գնում էին մինչեւ Բերկրիի գաւառը, գիւղե-
րի կազմակերպական գործով:

Բաւական կրթութիւն ստացած տղաներ էին. մեծ
գործ են կատարել գիւղերի ուսումնասիրութեան, մարդա-
համարի եւ նման ձեռնարկների մէջ:

1908ին Դաւիթի դաւանանութեամբ բանտն էին եւ
ընդհանուր ներմամբ ազատուեցին: Տիգրանը գնաց Պոլիս,
իսկ Արիստոզումը շարունակում էր գործը: 1913-14ին նա
կազմել էր Թիմարի մարդահամարը, ինչպէս եւ մանրա-
մասն ու ճշգրիտ վիճակագրութիւնը: Դէպքերը վրայ հա-
սան եւ նիւթերը ուրիշ թանկագին նիւթերի հետ վառուե-
ցին «Աշխատանք»ի խմբագրութեան մէջ...

Սառակոնիսցի Շիրին եւ Կոճեցի Դասն.— Շիրինը
չգիտեմ՝ ե՞րբ է յարել Դաշնակցութեան, բայց կարծեմ
Յարութիւնի հասարակական ասպարէզ ֆաշաձ ոյժերիցն
է: Միացեալ ընկերութեան իրենց գիւղում — Խառակոնի-
սում — ունեցած առաջին վարժարանումն է սովորել:
Միացեալի առաջին շրջանը փայլուն աշակերտներ է ունե-
ցել: Բոլոր աչքի ընկնող հասարակական, յեղափոխական
գործիչներն եւ ուսուցիչները մեծ մասամբ դուրս են եկել
Միացեալի դպրոցից:

Շիրինը թեև տարրական կրթութեամբ, բայց խելօք եւ զարմնալի կազմակերպչական կարողութիւն ունեցող տղայ էր: Բնատրութեամբ մեղմ, մի քիչ ազնուական ձեւով, մօտ ֆիւրտ աշիրաթների ազնուականութեան, սիրում էր ֆիւրտ բէյերի նման նաշակով հագնուիլ, լաւ գէնք ու ձի ունենալ:

Մեծ հեղինակութիւն ուներ Արֆակի, Թիմարի եւ Սարայի շրջանի հայ, ֆիւրտ եւ ասորի ժողովուրդների վրայ: Շիրինը այդ շրջանի ժողովրդական հերոսն էր եւ կառավարութեան աչքի փուշը:

Նուանդով կպել էր գործի՝ մոռացած տուն-տեղ: Իրենք ինքն ընտանիք էին, 12-18 հոգի. հասած եղբայրներ ուներ, մի մասը Բագու էին. լաւ դրամ էին աշխատում, տունը մնացածներն էլ լաւ երկրագործներ էին: Մեծ եղբայրը՝ Շիրին նուիրում էր ազգին, իսկ տունը «Դաշնակցութեան խանն» էր. հայ, ֆիւրտ, ասորի, թուրք — ով որ անցներ այդ շրջանով — հիւր պիտի լինէր Շիրինեց տունը:

Մեծ կապեր ունենալով ֆրդերի հետ եւ հեղինակութիւն ունենալով նրանց վրայ՝ լաւ սուրհանդակներ էր գրտել, մանաւանդ Նուրոն ու Մուֆոն, որոնց մեք գետ կը հանդիպինք:

Այդ գծի փոխադրութիւնն ինքն էր ղեկավարում, — կամ աւելի նիշդը — ինքը՝ Արֆակ — խառակոնիս երկու գծերի կեդրոնն էր: Այնտեղ Բերկրիի փոսից սուրհանդակներ էին գալիս Պգտիկ Գիւղ, Գործոթ, Գիւղակ, Քեաքարիկ, Խառակոնիս: Գալիս էր ուղիղ եւ Թաղէի վանքից սուրհանդակ: Խառակոնիս-Ախտոնի-Գուրատէր վանք՝ մեր ամենաբանուկ եւ ամենակարն նամբան էր: Շիրինեց գիւղից 16 ժամում կարելի էր անցնիլ Պարսկաստան: 12 տարի է եւ Շիրինին նանաչում եմ. նա միշտ եղել է հասարակական գործիչների առաջին շարքում, միշտ գործել է անդադրում. ունեցել է բազմաթիւ բարեկամների հետ եւ շատ թշնամիներ. ամէն բան ասել են նրա մասին, բայց նա միշտ դուրս է եկել մաքուր նակատով:

Ապրիլեան կոնիւնտրին իրենց գիւղն էր հաւաքել շրջանի երիտասարդներին. հերոսական դիմադրութիւն է ցոյց տուել Սարայի գայմագամին եւ թնդանօթներին. իր

սեփական տունը, ընտանիքի անդամները ձգած, հիւանդ կնոջ եւ երեխային մոռացած՝ 5000 ժողովրդով հասել է Կղնայ, այնտեղ էլ դիմադրութիւն կազմակերպել, այնտեղից էլ անցել է Աւերակ: Այնտեղ եղել է սարսափելի կռիւ եւ կոտորած, կորցրել է կոնիւնտրի մէջ իր երկու եղբայրներին եւ ժողովուրդը փրկելով հասցրել է ֆաղաֆ:

Քաղաքում խեղճը դեռ շունչ չֆաշած, դեռ եղբայրների արիւնը չցամաքած, տնից լուր չաւած՝ ֆշեցինք նրան նորից Շուշանց, Վարազ-Շուշանց գծի պաշտպանութեան համար: Մի քանի օր լաւ պահեց, բայց Ապրիլ 25ին, գիւղացիների ընդհանուր լիման հետեւանով, թուրքերը տիրեցին Շուշանցին, եւ Շիրինն ու ժողովուրդը ստիպուեցան ապաւինիլ ֆաղաֆ:

Իմ կառավարութեան ժամանակ Շիրինը Արֆակի կառավարիչ էր. կանոնաւոր սկսել էր վերաշինութեան գործը, գիւղացիների համար ալիւր եւ տաւար էր Խաւաֆի ֆրտերից. ֆաղաֆի եւ Ոստանի շրջանի փախստուելների համար 100 չափից աւելի ցորեն նամբեց:

Նահանջի ժամանակ ամենակարեւոր եւ ապահով կերպով նա իր շրջանի ժողովրդին եւ եգիտի ֆրտերին ռեքեց կովկաս:

Կոճեցի Դաւիթ. — Սա բռնակալութեան ժամանակ բնակում էր Խառակոնիս գիւղը, փախել էր ֆրտերի երեսից իր հայրենի գիւղից, ուր ուներ ընդարձակ կալուածք. ազդեցիկ ընտանիքի մարդ էր, բայց կալուածքները ֆրտերը գրաւել եւ իրեն ֆշել էին:

Դաւոն հրապարակ ֆաշեց Շիրինը, Յարութիւնի օրով. լաւ ֆրտախօս էր. ֆրտի պէս էլ հագնում էր, լաւ ֆրտերէն երգեր հիւսում ու երգում. մեր բոլոր տղաների վրայ երգեր էր հիւսած:

Սուրհանդակութիւն էր անում գաւառի մէջ եւ երկար ժամանակ փոխադրութեամբ էր գրադուած ֆրտերի հետ Խառակոնիս-Կարատէր վանքի գծով. մեծ ամբոխավար էր. հրաշալի խօսիլ գիտէր՝ ընտիր առակներով եւ օրինակներով: Ժողովրդական տրիբուն էր:

Խաղաղ ժամանակ, ինչքան կ'ուզէք, առաջ կ'երթար. բայց վտանգի ժամանակ վախկոտ էր եւ գլուխը կորցնում էր:

Շինարարական, ընտրութեան եւ նման գործերի համար ստեղծուած մարդ էր:

Մի քիչ խուլիգանական գիծեր ունէր, բայց լաւ եւ ուժեղ ձեռքի տակ օգտակար էր լինում:

Խորգոմցի Տիգրան եւ *Պետրոս Ուրացոյ*. — Խորգոմ գիւղը գտնուում է Վարի Հայոց Զորի ամենավարը, կայած ուղիղ Վանայ լճին: Սա մեր նաւահանգիստն էր: Վանից Գաւաշ, Գաւաշից Վան եկող գացող բոլոր խմբերն ու փախըստականները նաւով պիտի իջնէին Խորգոմ դէպի Վան գնալու եւ կամ իմաց տային Աղթամար, որ նաւ գայ տրդաներին տանելու:

Նաւ կանչելու առանձին նշաններ ունէինք: Ծովի փը եղած Վարդ-Պատրիկի բլուրից կրակ էինք անում երեք տեղով գիշերը, իսկ ցերեկը նոյն տեղից ձախ կողմ համապատասխան նշան էինք տալիս եւ Աղթամարից դրսի տուն եւ փոխադարձաբար, կամ թէ ուրիշ նշանով հասկացընում էինք, թէ վտանգ կայ եւ նաւը չի կարող մեկնիլ:

Խորգոմի դերը ծանր էր, մանաւանդ, որ մեր բոլոր ռազմամթերքը՝ Լեռնապարի բաժինը, նոյնիսկ Մուշ նամբելիքը պիտի գնար այդ գծով:

Խորգոմի մէջ ունէինք բաւական վստահելի եւ գործունեայ ընկերներ. դրանց գլխաւորը Տիգրանն էր, շրջանի ենթակումիտէի անդամ, բնականից օժտուած, մեծ հասարակական ջիղ ունեցող մարդ էր: Ժողովուրդը շատ սիրում եւ յարգում էր նրան, որովհետեւ անկաշառ եւ անկողմնակալ մարդ էր:

Տիգրանը երկար ժամանակ նուիրուած էր յեղափոխական գործին. իսկ տունն էլ «Դաշնակցութեան խանն» էր: Մոռանալով անձնականը՝ տնտեսապէս սնանկացաւ եւ պարտքի տակ ընկաւ, քանիցս բանտարկուեց նոյնիսկ *Հիւրիէթի* ժամանակ. ազատուելով գնաց Ամերիկա դրամ շահելու եւ իր պարտքերը գոցելու համար:

Տիգրանի ժամանակ, մանաւանդ նրանից յետոյ, յեղափոխական գործերի ղեկավարը եղաւ Խորգոմցի Պետրոսը, որ՝ չգիտեմ ո՛ր տեղից՝ իրեն համար «*Ուրացոյ*» կեղծ անունն էր գտել:

Պարկեշտ ու փորձառու գործիչ էր. յետոյ մենք կը հանդիպինք այս գիւղի երիտասարդներին, որոնք լաւ ու-

ծեր էին: Պետրոսը միշտ եղել է կամուրջ հենքի եւ նորերի միջեւ՝ աւելի յարելով նորերին:

Տարիներ շարունակ գործել է յեղափոխական ասպարէզում, ինչպէս եւ *Հիւրիէթի* ժամանակ մասնակցում էր հասարակական, քաղաքական եւ ընտրական գործերին: Իմ կառավարութեան ժամանակ Ռատանի քաղաքապետն էր, տիպար մաքրութիւն եւ կարգ էր պահում գիւղի մէջ:

Միւս ընկերների հետ հրաշալի կազմակերպել էր այնտեղ ապաստանած փախստականների օգնութեան գործը:

Համեստ, բայց յարատեւ աշխատող գաւառական հասարակական գործիչ էր:

**

Գործիչների այս շարքը, որ ես դրի, չի սպառում ի հարկէ, մեր ունեցած փախստական եւ ոչ-փախստական ընկերների ամբողջութիւնը, այն էլ այն ընկերների, որոնք գործօն մասնակցութիւն են ունեցել 1905ին: Կան բազմաթիւ ընկերներ եւս, որոնց մասին կը յիշուի ապագային, կամ որոնք իրենց գործունէութեամբ աւելի բան չեն ներկայացնում, քան ներկայացուած տիպերը: Օրինակ՝ փախըստականների մէջ մենք ունէինք Գանձակեցի Նիկոլը, Կարնեցի Ռուբէնը, Մանգակերտցի Մուսոն, Շուշանցի Նշանը, որ լաւ եւ կտրին տղայ էր, Կարկառցի Եղիշը, Արմէշցի Սիօ-Անդրոն, որ լաւ վարպետ էր (մեր փամփուշտները նա էր պատրաստում) եւ այլն:

Նոյնը եւ ոչ-փախստականների մէջ:

Այժմ անցնինք կազմակերպական գործին, որովհետեւ, գործի ղեկավարութիւնը, ստեղծումը եւ ընթացք տալը կախուած էր կազմակերպական մարմնի էութիւնից: Նախ ծանօթանանք այդ մարմնին:

Արդէն ըսուած է, որ առաջ ամբողջ Վանի վիլայէթի յեղափոխական գործերի կեդրոնը, ինչպէս եւ ղեկավարը եղած է Հ. Յ. Դաշնակցութեան Վասպուրականի Կ. Կոմիտէն, որ կոչուել է եւ Շամիրամի Կ. Կոմիտէ: Այս կոմիտէութեան սահմաններն աւելի ընդարձակ են եղել քան Վան վիլայէթինը: Բացի Վանի գաւառներից Ալջա-

ւագ, Արնէշ, Բերկրի, Աբաղա, Արնակ, Սարայ, Թիմար, Գաւառ, Բաշկալէ, Խոշար, Նորդուզ, Հայոց-Չորեր, Արուարձաններ, Քաղաք, Շատախ, Մոկս, Գաւաշ, Կարնկան, Կեցան, Պիթլիսի վիլայէթից Վանի Կ. Կոմիտէին եւ պատկանել Կարկառի մի մասը (Վարի Կարկառ), Խիզանը, Սպարկերտը, Շէնիճորը, Մամրսահիր, Ուլը, Գիւզալ-Դարայի մի մասը. երբեմն Ախլաթը, երկար ժամանակ եւ Սդերդը, նոյնպէս Վաստուրականի Կեդր. Կոմիտէի շրջանն էին մտնում:

Ինչպէս իր տեղը բացատրուեց, 1905ին, գործերը բարդանալու պատճառով, յարմար նկատուեց, որ Վասպուրականի Կ. Կոմիտէն երկու Կ. Կոմիտէներու բաժանուի՝ Վասպուրականի եւ Լեռնայարի: Սուջիների մէջ մըտնում էր Վան-Տոսպը, երկրորդին մէջ՝ Լեռնային գաւառները եւ Բիթլիսի գաւառին վերաբերող մասը:

Կ. Կոմիտէի կազմը այսպէս էր. ըստ Դաշնակցութեան ներքին կանոնագրութեան երկրի Կ. Կոմիտէները նշանակովի էին: Այսպէս, Բնդհ. Ժողովի եւ Դաշնակցութեան հորիւրդի կողմից վնասուած որոշ պատասխանատու ձեռնարկների իրագործման համար՝ պատասխանատու մարմին էր նշանակուում, որի անդամների մի մասը, շատ անգամ մեծ մասը, գալիս էր արտասահմանից, ինքր իր կողմից տեղացի ընկերներից ձեռնհասներին միացնում էր իր կազմին եւ գործի ձեռնարկում:

Պատասխանատու մարմնի մէջ սնդամ էին վերցրնում յեղափոխական անցեալ, փորձառութիւն ունեցող ընկերներ, նայելով ձեռնարկի բնոյթին — ռազմական, ապրատմական, տեղոր-ահաբեկչական, ցուցական-դաւադրական:

Զինուորական կոուող ղեկավարը պէտք է փորձըւած տեղորիստ լինէր, ձեռնարկները գլուխ բերելու համար:

Մասնագիտական իսիստ բաժանման սկզբունք, ի հարկէ, գործադրել անկարելի էր. որովհետեւ այդ իմաստով թէ մասնագէտ մարդիկ քիչ կային եւ թէ գործերն այնպէս էին, որ ամէն մի ընկեր ամէն գործով զբաղւում էր: Օրինակ՝ Ս. Զաւարեանը Հ. Յ. Դ. Բնդհ. Ժողովի կողմից որոշուած էր Կիլիկիոյ Պատասխանատու Մար-

մընի անդամ. մարմինը պաշտօն ունէր Կիլիկիոյ մէջ մի ապսուամբական ձեռնարկ կազմակերպել: Ի հարկէ, Նիմէնը ռազմական ոյժ չէր, բայց կազմակերպման, նախապատրաստութեամ համար աշխատում էր: Եւ, եթէ ձեռնարկը ի գլուխ գար, ռազմագէտ ընկերների հետ ուզէր-չուզէր նա էլ պրտի զբաղուէր ռազմական հարցով, ինչպէս ռազմիկները զբաղում էին կազմակերպական եւ պրոպականտի խնդիրներով:

Կոմիտէ ստեղծում է եւ ինքն իրեն: Շատ անգամ երկրի մէջ ընկերներից մէկը, անցնելով շրջան, գործ է ստեղծում, կասաց-կամաց կազմակերպութիւններ է աւաջացնում: Երբ նկատուում էր, թէ ոյժ յեղափոխական կաւակցական ցեղը ներկայացնում են, տուեալ շրջանի մարմինը յայտարարում էր Կ. Կոմիտէ, որին եւ կնիք էր տրւում:

Լինում էր ռ այլ կերպ: Բիւրօն դրսից ուղարկում էր մի գործիչ, ինչպէս, օրինակ, Վան: Վազգէնի սպաննումից յետոյ Վարդգէսը եկաւ. իսկ Վարդգէսի ձերբակալութիւնից յետոյ շուտով գնում են ուրիշները — Վահանն ու Իշխանը եւ գործ ստեղծում. տեղական ուժերին են հաւաքում, մարմին ստեղծում եւ վերոյիշեալ ձեւով վաւերացում Բիւրոյի կազմից:

Այսպէս, ամէն շրջանի յեղափոխական կազմակերպական, կուսակցական, պրոպականտի, դիւսնագիտական եւ այլ քայլերի որոշ ուղղութիւն տուողը լինում է Կ. Կոմիտէն:

Կ. Կոմիտէից յետոյ կան կոմիտէներ եւ ենթակոմիտէներ: Ամբողջ մի շրջանի մարմինների ղեկավարը Կոմիտէն էր, փոքրիկ շրջանների ղեկավարը՝ ենթակոմիտէն. գիւղիներ՝ գործադիր մարմինը, որն ընտրովի էր. խմբիներ՝ խմբապետը: Գործերի ընդհանուր ուղղութիւն տուողը վարի կազմակերպչական շրջաններում խմբապետական կամ ներկայացուցչական Ժողովներն էին:

Վան գնալու միջոցին, այնտեղ կային խմբեր եւ տեղական մարմին, որը համապատասխան էր ենթակոմիտէին: Կ. Կոմիտէի մասին չեմ խօսում, որովհետեւ այդ մասին արդէն պատմել եմ: Քաղաքի խմբերի թիւը 15-20 հազիւ կը լինէր եւ, եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճա-

նում, 100-150 կազմակերպուած անդամներ հազիւ ունէին:

Այս չի նշանակում, թէ 25,000 հայ ազգաբնակչութիւն ունեցող Վանի մէջ մենք 150 հոգի դաշնակցական ունէինք միայն: Ո՛չ, անհատ դաշնակցականների թիւը անհամեմատ աւելի մեծ էր. իսկ համակիրներն աւելի շատ էին: Այդ ժամանակ մի տեսակ վերապահութիւն կար դէպի կազմակերպութիւնը, որովհետեւ յամառ կերպով խօսում էր, որ Դաշնակցութեան շարքերում պրովակատորներ կային, որոնք օրը օրին կառավարութեան լուր էին տալիս կազմակերպական գործերի մասին: Խոհեմները վախեցնում էին, շրջահայեացներն էլ բարւոյ էին սեպում չմասնակցել եւ գործել:

Ի հարկէ, վերոյիշեալ լուրերը վրան բաց բան էին: Որովհետեւ տարիներ շարունակ գործողութիւններ են կատարուել, հազարաւոր զենքեր եւ միլիոնաւոր փամփուշտներ են տեղափոխուել, տասնեակ տեղորներ եւ ձեռնարկներ են արուել, հարիւրաւոր գործիչներ են շարժուել, եւ կառավարութիւնը ոչինչ չէր իմացել, կամ իմացածներն էլ պատահական բաներ են եղել: Մինչեւ որ Դաւիթը բացարձակօրէն շղաւահանեց, կառավարութիւնը էական ոչինչ չգիտէր. որովհետեւ այնքան զգուշութիւն եւ գաղտնապահութիւն կար, որ չէր կարելի բան իմանալ: Ի պատիւ Վանի ժողովրդի պիտի ասել, որ նա, առհասարակ, զանգուածօրէն գաղտնապահ եւ հայրենասէր է: Այս լուրերին հիմք ծառայել էր Վարդգէսի անակնկալ ձեռքակալութիւնը: Մինչեւ վերջերս էլ չկարողացանք նշոյել, թէ ովքեր են եղել մատնողները: Կասկածներ, այն էլ հիմնական փաստերով, Սէրէմնեանի վրայ ունէինք:

Քաղաքի կազմակերպուած ընկերների մեծ մասը պատանի կամ շատ երիտասարդ տարրերն էին: Նրանց վերայ մեծ յոյս չէր կարելի դնել, մանաւանդ դրանցով չէր կարելի գործ կատարել: Բոլոր ընկերները գտնում էին, որ մեզանից դուրս Արմենականներին մօտիկ կամ չէգոյ տարրեր կան, որոնց մեզ հետ ունենալն անհրաժեշտ է՝ ժողովրդական լայն գործունէութիւն վարելու համար:

Այն ժամանակ Դաշնակցութեան մասին կար եւ մի այլ թիւր կարծիք, — այն, թէ նա միայն հայդուկային

կազմակերպութիւն է, մանաւանդ երկրի մէջ: Դաշնակցականը զինուոր պիտի լինի, տեղոր պիտի կատարէ, անպայման փախստական պիտի դառնայ: Այսպիսի թիւր կարծիքների ստեղծման եւ տարածման մէջ մեծ դեր ունէինք հէնց մենք՝ դաշնակցականներս, որովհետեւ իրօք քիչ էինք հոգացել դպրոցներ ստեղծելու, բացի ծովափնեայ վայրերից — Պոլիս, Իզմիր, Տրապիզոն, — այլ միշտ արտայայտուել ենք մեր ռազմական կողմերով:

Վանում էլ այդ մտայնութիւնը կար: Այդտեղ երկու դասակարգ կար մերոնց մէջ՝ «պարոններ» եւ «զինուորներ»: Այդ շերտաւորումը կար եւ երկրի միւս վայրերի կազմակերպութեանց մէջ:

Պարոն ասելով նախ եւ առաջ հասկացում է կրթւած մտաւորական մարդ. բայց պարոն էին կոչում եւ ներքանք, որոնք յեղափոխական որոշ անցեալ, գործունէութիւն, որոշ դիրք էին ստեղծել իրենց համար: Գործը մի տեսակ ազնուականութեան հանգամանք էր տուել մարդկանց: Թուրքահայերը նեղ, տեղական իմաստով, կրթւած մարդուն «էֆէնտի» էին ասում. պարոն բառը վերապահուած էր յեղափոխական, հասարակական, քաղաքական գործիչներին: Ով պարոն է, կը նշանակէ գործի ազնուականութեան ցէնգ ունի:

Բայց, ինչպէս ասացի, Վանում պարոնը գործ է ածում մերոնց նեղ շրջանակում եւ մի քիչ արհամարհական իմաստով: Ով պարոն է, կը նշանակէ լաւ զէնք գործածել, լաւ կռուել եւ լաւ քայլել չգիտէ. եւ վա՛յ այն ընկերներին, որոնք բաւարար չափով այդ երեք յատկութիւնները, ինչպէս եւ առողջութիւն եւ դիմացկունութիւն չունէին: Մարդի տեղ բռնելու, պայմաններին յարմարուելու համար կամաց-կամաց պէտք է կոշտանար, մտաւորականութիւնը կորցնէր, հայիոյել սովորէր, — կարն՝ «զինուոր» դառնար:

Այս գործի մշակումն եւ արտայայտութիւնը բաւական էին, որ տեղական տատանուող, երկչոտ եւ դեռ չկազմակերպուած բնաւորութիւն ունեցող տարրերին մեզնից հեռու պահէին, մանաւանդ վախեցնէին:

Աւելին կար. արմենականները չէին խնայում մեզ որակել ամէն կարգի ածականներով, — որ իբր թէ դաշ-

նակցականները բայտալիստներն են, Ռուսաստանի, Սիբիրի փախստականներ, սերագործներ, ևր պետք չէ ոչ մեր կեանքը խնայեն, ոչ մեր պատիւը եւ ոչ էլ ինչքը...

Ժողովրդի մէջ այսպիսով ստեղծուել էին գաւազան հրէշաւոր առաւելներ մեր մասին: Այս առաւելները տարածուել էին եւ այն պատճառով, ևր մենք հաւուրսկութեան լայն խաւերի հետ չէինք շփուել. սարգիկ սեզանձամբ չէին տեսնուել: Սրան նպաստուել էր եւ մեր գերծողութիւնների արդիւնքը, ոչ առհասարակ հաւարակական պրոպագանդայի տեսակետից այնքան էլ նախանձելի չէր: Օրինակ, ամէն մը տեսար մի քանի անմեղ մայր էր բանտը ձգուել: Ամէն մի ընդհարում պատճառ էր բռնուել բազմաթիւ ձեռքակալումների, սպանութիւնների եւ հրկորգումների եւայլն: Կար, ի հարկէ, մետալի միւս երեսը: Հասարակութեան մէջ իրականութեան չտիպագանցութիւն էլ կար. որ դաշնակցականները մեծ մարդկանց որդիներ են, ազնուական ցեղից. մանաւանդ սեծ կարծիքներ ունէին Ղարաբաղցիների մասին (չգիտեմ՝ ինչի՞ վրայ հիմնուած), հարուստի տղաներ են, լաւ կրթութիւն ունին, անձնագրի են, գաղափարական, կտրիք, ցրտից, սովից չեն վախենայ, եւայլն:

Երկու կարծիքներն էլ իրենց հիմքերն ունէին. ի հարկէ, միջոց էր միջին դարութիւնը: Այս տպաւորութիւններն ունեցող մեզ անձանօք ընտանիքները, երբ մեզ տեսնում էին, հիասթափուում էին, մանաւանդ նկատելով, որ մենք էլ իրենց նման հասարակ քաղաքացու պէս հագնուած եւ գլխերնիս մեծամեծ փափախներ, ոտներնիս երկարավիզ կօշիկներ չկան:

Շատ յանախ այդպիսիների մէջ կանայք, մանաւանդ պառաւ կանայք մեզ ամենալայն լրջութեամբ հարցնում էին.

— Եարար, Պ. Արամ, դու մէր, ջոր, ունի՞ս:

— Չէ, մայրի՛կ, ես երկնքից եմ ընկել:

Յետոյ, երբ կատակը մի կողմ էինք թողնում եւ նըկարագրում էինք մերոնց, մեր տունը, մեր նախկին պաշտօնը, գործերը, սկսում էին լալ եւ աղօթել:

— Ես՛, Տէր Աստուած, դու բարին բերես էս մարդ-

կանց համար, որոնք իրենց տուն ու տեղ, հէր ու մէր թողել եկել են «աղգի» համար:

Ինչպէս վերը նկատեցի, ընկերներով խորհում էինք մի նար գտնել մեզնից հեռու մնացած, մանաւանդ վստահելի եւ յեղափոխական ոգի ունեցող տարրերին մեր կողմը քաշելու: Մանաւանդ, շատ էինք ուզում քաղաքի երիտասարդ, լաւագոյն ուսուցիչներին մեզ հետ ունենալ, նըրանց միջոցով դպրոցների մէջ թարմ ոգի մտցնելու նպատակով:

Իսկ այդպիսի երիտասարդ, պատրաստուած տղաներ կային վանի դպրոցների ուսուցչական խմբերի մէջ: Այդ ժամանակ, մանաւանդ, դրանց շարքում աչքի էին ընկնում երկու երիտասարդ նեմարանականներ — *Համագասպ Բաղէչցեան* եւ *Ղեւոնդ Մելոյեան*. Եւ նրանց շուրջը եղած բաւական թուով տեղական ուսուցիչներ եւ ոչ-ուսուցիչ երիտասարդներ:

Դրանցից, մանաւանդ Համագասպը մեծ ազդեցութիւն ունէր քաղաքում եւ դպրոցներում իր համարակ, յեղափոխական եւ հրաշալի բնաւորութեան համար: Նա յեղափոխական անցեալ ունեցող ընտանիքից էր: Նրա եղբայրը՝ Գարեգին Բաղէչցեանը վանի հին արմենական եւ լաւ յեղափոխականներից էր, Աւետիսեանի ընկերներից, Փորթուգալեանի վարժապետանոցի սաներից. բանտ էր նստած, սոսկալի տանջանքների էր ենթարկուած, նոյն-իսկ խաչելութեան:

Այսպիսի հմայք ունէր Համագասպը. նախ օժտուած էր մեծ առաքինութիւններով: Կրթութիւնը ստացել էր Գէորգեան ձեմարանում, աւարտել էր եւ լսարանական բաժինը. գարգացած տղայ էր, լաւ խօսում էր եւ, մանաւանդ, լաւ գրում էր:

Համագասպը արմենականների պարագլուխն էր, նըրանց հոգին: Անհրաժեշտ էր մեր կողմը գրաւել նրան եւ Մելոյեանին, որը նոյնպէս պատրաստուած տղայ էր, խօսող եւ գրող, ինչպէս նաեւ նրանց հետ կապուած տղաներին:

Կոմսի ժամանակը այդ փորձերը եղել էին. բայց ինչպէս իշխանն էր ասում, փոխանակ մեզ մօտենալու, հեռացել էին: Անհրաժեշտ էր նոր փորձեր անել. արինք եւ

յաջողեցինք, շնորհիւ մեր մի ուրիշ ընկերոջ: 1905ի գարնան վան հասարայժմու *Մշտ Ռուբէնը (Մինաս Տէր Մինասեան)*, որ ձեմարանում եղել է Համագասպի եւ միւսների դասընկերը: Ռուբէնը եղաւ այն կամուրջը, որ Համագասպին եւ ընկերներին կապեց մեզ հետ:

Ռուբէնի հետ ես ծանօթ էի Ղարսից: Նա այդ ժամանակ Մոսկուայից էր եկել. ազատ ունկնդիր էր եղել Լազարեան ձեմարանի Արեւելեան բաժնի մէջ. կարծեմ ուզում էր լեզուաբանութիւն, հնագիտութիւն սովորել: Տանկահայաստանի դէպքերը, Սասունի շարժումները բոլորին տեղահան էին արել. նոյնը եւ Ռուբէնին: Ինչպէս յիշողութիւններս առաջին մասում ասել եմ, Ռուբէնը թունդ «Վան»եան էր, նեմարանից վանեցիների հետ կապուած էր: Բայց Սասունի դէպքերը երբ վրայ հասան, չգիտեմ գլխին ինչ փչեց, որոշեց զինուած խմբերի հետ Սասուն անցնիլ. որովհետեւ Ղարսի գիծերը համարեա գոցուել են փնացել էին, մնացել էր Պարսկաստան-Վան գիծը միայն:

Այդ ժամանակ, 1904ի գարնան, Ընդհանուր ժողովի որոշման համաձայն, Նիկոլ Դումանը պէտք է գնար Սասուն, մտնելու Սասունի Պատասխանատու մարմնի մէջ՝ ապստամբութիւնը կազմակերպելու եւ դեկավարելու համար:

Դէպքերն արդէն վրայ էին հասել, կռիւները Սասունում կարծեմ սկսուած էին, ինչպէս եւ սահմանագրւուիներում, որպէսզի Սասունցիք մինակ չմնան եւ ամբողջ գորքը միայն նրանց վրայ չկեղորոնացնեն: Համարեա յայտնի է որ, խումբը տեղ չի հասնի, բայց որոշումը պէտք է կատարուի: Նիկոլը հարաւում է դաշնակցական լաւագոյն ոյժերին՝ կոուղ, ռագմիկ, մտաւորական, կազմակերպիչ: Այնտեղ էին Դաշնակցական խեչոն, Սարբազ խեչոն, Վանեցի Ատոն, Ամիրեան Թադոսը, մեր Ռուբէնը, Ասատուրը, որ վերջերս Իշխանի բանակի ձիաւոր խումբի հրամանատարն էր, Տոքթ. Զարիբը, Վանի Սարգիսը (Գրիգոր Վարդանեան, Սարգիս Բարսեղեան) եւ համարեա մեր ոյժերի ծաղիկ ներկայացուցիչները:

Խումբը, քիւրտ Մստոյի եւ Աստոյի առաջնորդութեամբ, հասնում է Կոթուր. այն ատեն կռուի են բռնը-

ւում. կռուում են մինչև երեկոյ. սպանում են Վանեցի Ատոն, Շամախեցի Սերոբը, որը դեռ նոր էր Հայաստան գնում. եւ Հայաստանը տեսնելով՝ օդի շիշը գլուխ էր փաշել եւ ասել. — «Մէկը չկայ ասի՝ աղա Սերոբ դու ըշտեղ, Հայաստան ըշտեղ...»:

Խումբը, կռուելով մինչև երեկոյեան, մութ ընկնելուն պէս, փաշում է: Իրար կորցնում են եւ յետ են մնում Նիկոլը, Տոքթ. Զարիբը եւ Թադոսը, երեքն էլ ոտով, վերջինը բոլորի բեռները շալակած: Նիկոլին ոսկրացաւը բռնել էր եւ հիւանդացել: Վերջապէս հասնում են մի կերպ սահմանագլխի պարսիկ զիւղերը: Էշեր են վարձում եւ յաղթականօրէն ետ դառնում, ինչպէս գաւեշտօրէն Դումանն էր ասում: Իսկական խումբը անվտանգ հասնում է Սալմաստ: Այս երթ ու դարձը, սահմանագլխի ցոյցն ու գոհերը սուկալի տպաւորութիւն են թողել Ռուբէնի վրայ եւ հիասթափեցրել:

— *Չեմ կարող ներել Նիկոլի այս քայլը, չնայած, որ պաշտում եմ նրան, իբրեւ կտրիճ եւ քաջ մարդու: Գիտէր, որ պիտի չհասնէինք եւ մեր արածը ցոյց պիտի լիներ. գիտէր, բայց մեզ տարաւ: Սա ի՞նչ գործունէութիւն է...*

Այս էին Ռուբէնի առաջին խօսքերը, երբ ես նրան 1904ի աշնան Ալեքսանդրապոլում պատահեցի, այն ժամանակ, երբ ես պատրաստուում էի Երկիր մեկնիլ: Իսկ նա հիասթափուած ու զգուած դարձել էր Պարսկաստանից:

Սալմաստից մեկնել էր Թադէի Վանքը՝ Երկիր անցնելու մտադրութեամբ: Վանքում մօտից ծանօթացել էր Վանի գործերին: Զգիտեմ՝ ինչ նամակ էր գրել Վան Կոմսին՝ Երկիր գնալու եւ գործելու մասին, պայմաններ առաջարկելով (*): Վերջինի կողմից կարծեմ սառն պատասխան է ստացել: Եւ աւելի հիասթափուած, առանց մի կոպէկ ծախսի դրամի, գիւղացու հագուստներով ծպտուած վանքից ոտով գնացել էր Մակուի վրայով, Թիշմիշթափայով Արախը անցել էր, Ղամարլուով Երեւան հասել. այնտեղ մի մասնաւոր ծանօթից երկաթուղու երրորդ կարգի տոմ-

(*) Այդ պայմաններով կ'առաջարկուի վերջ տալ ցուցական գործողութիւններուն եւ պատրաստել ժողովուրդը ընդհանուր ապստամբութեան համար:

սակի փող էր ձեռք ձգել մինչեւ Ալեքսանդրապոլ կամ աւելի նիշդ 'Ղարս' իրենց տունը հասնելու համար:

Մեր հանդիպումը պատահական եւ յանկարծակի եղաւ: Զարմացայ նրան այդ վիճակով տեսնելու համար: Ընկել էր ոչ միայն հոգեպէս, այլեւ ֆիզիքապէս: Ալեքսանդրապոլում աւելի վատ տպաւորութիւն էր ստացել. գնացել էր նախկին ծանօթների մօտ եւ իմացել, որ շատերը սահմանագլխում հանի, Նէվրուզի եւ Թումանի խմբերի դէպքերի ժամանակ նահատակուել են:

Վերջապէս, հագուստները փոխեցինք, քիչ հանգրստացրինք, սկսեցինք լսել նրա հետաքրքիր պատմութիւնը: Պաշտօնական գեկուցումից յետոյ մենք առանձնացանք եւ մտերմաբար խօսեցինք: Յանդիմանում, հայիտում էր ինձ, որ այս պայմաններով որոշել եմ մեկնել:

— *Ի՞նչու նահատակ պիտի դառնաս սահմանագլխում, կամ ժողովրդի գլխին նոր աղէտ բերես: Այսպէս գործունէութիւն չի լինի. պէտք է ամէն բան նորից սկսել, սկզբից, լուրջ. պէտք է ամէն ինչ դնել ժողովրդական հիմքերի վրայ. եւ այս բաների համար նախ պիտի համոզել տեղական մարմինները, ապա մեկնել Երկիր: Զեռք քաշիր, արի, այստեղ մնա՛:*

— *Որոշուած է, պիտի գնամ: Արի գնանք, ծրագիրներդ միասին իրագործենք...*

— *Այդ վանեցիներն էլ չո խելքից են. նրանց էլ տնտղեցի, խելքս բան չկարեց: Աստուած քեզ հետ, մեր ճանապարհները բաժանուել են...*

Մեր փանապարհները միշտ բաժանուել են Ռուբէնի հետ: Վերջ ի վերջոյ նա գնաց Ղարս, եւ Պարսկաստան: Մի քանի ամիս յետոյ, մէկ էլ տեսանք, յանկարծ, բուսաւ Վանում ուրախ, տրամադրութիւնը բարձր եւ պատրաստ գործելու:

Այս լաւ էր: Նոր ընկերներ ունեցանք, մանաւանդ Ռուբէնը, որ բացի մտաւորական ոյժ լինելուց, ռուսական բանակի սպայ էր. սովորել էր պայթուցիկների գործը, մկրտուել սահմանագլխի կուում, ռազմիկի «ցէնգ» ունէր, վերջապէս, վանեցի նեմարանականների դասընկերն էր եղել. նրա ներկայութիւնը պիտի օգտագործէինք մեր որոշումներն իրագործելու համար:

Արդէն Համագասպի եւ ընկերների հետ շփում ունէինք. Կովկասից նոր ստացուած գրքեր եւ թերթեր միշտ նամբում էինք նրանց, յանախ պատահում էինք իրար, այս կամ այն ծանօթի տունը: Ռուբէնի գալուց առաջ խօսել էինք, որ թողնեն արմենական խարխլած «խրնիթը» եւ գան կենդանի գործի: Առարկում էին, որ իրենք Կոմսի ժամանակ ուզեցել են գործել Դաշնակցութեան դրօշակի տակ, բայց Դաշնակցութիւնը միշտ հեռու է վանել իրենց, տեղական, հասարակական ոյժերին կարեւորութիւն չի տուել, կամ տուել է այնպիսիներին, որոնք խելքից կամ ինքնուրոյնութիւնից զուրկ են, որ այդպիսի վերաբերմունքը, Դաշնակցութեան կողմից կործանիչ բնոյթ պիտ ունենայ տեղական ինքնուրոյն ուժերի առաջացման համար:

Ռուբէնի գալով աւելի մտերմական դարձան մեր յարաբերութիւնները: Թէեւ Ռուբէնը ամենից մօտն էր Արտակ Դարբինեանին (նոյնպէս նեմարանական), բայց նա այն ժամանակ յեղափոխական քաղաքական գործերով չէր զբաղուում, քաշուած՝ իրեն համար վարժապետ էր: Ռուբէնին զգուշացրել էինք, որ նրա հետ այդ ուղղութեամբ խօսիլն աւելորդ է. հարկաւոր էր Համագասպի եւ միւսների հետ խօսել, աւելի նիշդ միայն Համագասպի, որովհետեւ նրանց միակ ոյժը նա էր:

Ռուբէնի ջանքերը, մեր աշխատանքները, վերջապէս, մեզ տուին որոշ ու դրական արդիւնք: Համագասպը եւ ընկերները յարեցան Դաշնակցութեան, միայն մի պայման դնելով, որ գէթ երկուսին՝ Համագասպին ու Մելոյեանին առնենք Կ. Կոմիտէի կազմին մէջ:

Առաջարկը բաւական ծանր էր. վախեցում էինք պատասխանատուութիւնից կուսակցութեան առջեւ: Այս առաջին դէպքն էր կարծեմ, որ ուրիշ կուսակցութեան մարդիկ մտնեն Դաշնակցութեան մէջ եւ ուղղակի տեղ գտնեն պատասխանատու մարմնում:

Իշխանի հետ ընկերներով մի խորհրդակցութիւն արինք եւ հետեւեալ եզրակացութեան եկանք: Ընդունիլ նրանց առաջարկը միայն որոշ վերապահութեամբ (այդ նրանց չասելու պայմանով). միաժամանակ նրանց հեռու պահել զինական ձեռնարկներից, արտասահմանի յարաբե-

րական գործերից, մինչեւ որ մօտիկից անձամբ կը փորձենք:

Այդպէս էլ արինք. փորձը երկար չտեսց, որովհետեւ նախկին ծանօթութիւնը, Համագասպի հրեշտակային բնաւորութիւնը, յեղափոխական խառնուածքը, ամբողջ հոգևով գործին նուիրուիլը, միւսների ջերմ մասնակցութիւնը ընթացիկ աշխատանքներին, բոլոր վերապահութիւնները ջնջեցին, եւ մենք թերեւս առաջին անգամ լինելով վանում՝ ունեցանք տեղացիների է՛ն առաջադէմ, է՛ն ծաղիկ ու գիտակից ոյժերից կազմուած մի կ. Կոմիտէ:

Համագասպի եւ Մելոյեանի գալով՝ կամաց կամաց դէպի մեզ եկան եւ ուրիշ մտաւոր ոյժեր. նախ Վարդան Բալդոշեանը, որ Երամեան դպրոցի ուսուցիչ էր, երիտասարդ եւ եռանդոտ մի տղայ, Արամ Սաֆրաստեանը, որ ուսուցիչ էր եւ հետեւում էր Կեդրոնական դպրոցի դասերին: Կեդրոնական դպրոցի վերջին կարգերի աշակերտների համակրութիւնն ամբողջութեամբ անցաւ մեր կողմը: Այս այն սերունդն էր, որից կազմուեց ապագայ Վանի «Նոր սերունդը»: Յետոյ նրանց խելքերը գլուխնին եկաւ, դարձան Վանի հասարակական գործիչները *Հիւրիէթի* ժամանակ:

Կարծեմ այդ ժամանակն էր, որ մեր կողմն անցան եւ Արմենակ Փոխարեանը, Երամեան դպրոցի լաւ ուսուցիչներից մէկը, Վահրամ Տէր Պօղոսեանը մի քանի ընկերներով, Յարութիւն Հիւսեանը՝ ուսուցիչ Կենտրոնական դպրոցում, Գեորգ Գիտէչեանը, որը նոյնպէս մեծ խմբով միացաւ մեզ:

Համագասպի եւ ընկերների մեր կողմ յարիլը, ի հարկէ, չոչնչացրեց ի սպառ Արմենականութիւնը: Նրա միջից, նիշդ է, գործունեայ, յեղափոխական տարրեր կամաց կամաց մեր կողմ անցան, բայց նա իր գոյութիւնը շարունակեց: Պահպանողական հին աւանդութիւններին կառչածները մնացին արմենականներ ինչպէս եւ նրանց հետ մի չնչին փոքրամասնութիւն եղող երիտասարդ տարրեր: Վերջիններն այդ խմբակցութեան միակ կենդանի տարրն էին:

Արմենականների գոյութիւնը Վանի մէջ իր հետ բերած բոլոր կուսակցական վէճերի, կիրքերի եւ խայտառա-

կութիւնների հետ ունէր եւ իր դրական կողմը: Նա որոշ չափով հաւասարակշռութիւն էր ստեղծում հասարակական գործունէութեան մէջ, որովհետեւ մենք օր աւուր ուժեղանում էինք. նրանց հետ ունեցած պայքարը, նրանց անողոք քննադատութիւնները, թէև իրենց հիմքերի մէջ սըխալ և մեծամասնութեամբ անտեղի, բայց ունէին որոշ իրաւացի եւ արդար կողմեր, որ հրապարակին տիրող ուժեղ կուսակցութիւնը պէտք էր որ ի նկատի ունենար:

Յաւալի էր, որ այն ժամանակ հնարաւոր չէր հասարակութեան պահպանողական տարրերի կողմից առաջ բերել մի աւելի ուժեղ, թէեւ չափաւոր պահանջներով հոսանք:

Արմենականները, որ մեր գործունէութիւնը համարում էին ցուցական, Երկրի շահերից չբխող եւ վնասակար, վերջ ի վերջոյ իրենք էլ կիրարկում էին այդպիսի միջոցներ, ինչ որ մենք:

Օրինակ, նրանք դէմ էին զինուած խումբեր պահելուն, որոնք պատճառ էին դառնում ընդհարման. իրենք էլ պահել են, երբ կարողացել են. օրինակ՝ Սեպուհի ժամանակ:

Դէմ էին բռնի միջոցներով գործ կատարելուն, բայց գիւղերը գնացել են զինուած խումբերով, բռնի կազմակերպութեան համար:

Դէմ էին ցոյցերին եւ կռիւներին, բայց զինուած ընդհարումներ ստեղծեցին դաշնակցական խմբերի հետ Ալիւր, Սոգայ եւ Վարագայ լեռ 1914ին: Յարձակուեցին կառավարութեան փոստի վրայ, որը փոխուեց հասարակական աղէտի:

Մի խօսքով, նրանք Դաշնակցութեան պոչն էին: Դէմ էին դրսեցիների, որպէսզի ազդեցութիւն ունենան եւ գործ կատարեն. իրենք էլ դրսեցի ներկայացուցիչ բերին Սեպուհը՝ Երուանդ Քէօսէեան, Արաքկիրցի:

Որտեղ մենք շարժուէինք, նրանք եւս մեր յետեւից էին շարժում: Գիւղեր գնայինք, նրանք էլ նոյնն էին անում: Գրադարան բանայինք, իրենք էլ իսկոյն կ'ընդօրինակէին: Կուսակցական շէնք պիտի շինէինք, իրենք էլ մեր յետեւից պիտի սկսէին իրենցը, եւայլն:

Բայց երբ գալիս էր գործի ժամանակը, պատասխա-

նատու վայրկեանը, նրանք ամէն դեկավարութիւն եւ պատասխանատուութիւն մեզ էին թողնում՝ իրենց բոլոր ուժերը դնելով մեր տրամադրութեան տակ:

Իսկ երբ այս կամ այն ժամանակ, այս կամ այն պատահարի պատճառով Դաշնակցութեան գործունէութիւնը սահմանափակուում կամ մի առ ժամանակ դադարում էր, արմենականները ի սպառ մեռնում էին:

Նրանց կեանք տուողը մեր գոյութիւնն ու գործունէութիւնն էր, իսկ մեր թուլութիւնը՝ նրանց մահը: Ուրեմն, արմենականների, իմա՝ ռամկավարների շահը պահանջում էր եւ հիմա էլ իրենց իսկ գոյութեան ապահովութեան համար պահանջում է, որ վանում միշտ ուժեղ եւ կազմակերպուած Դաշնակցութիւն լինի: Իսկ մեր շահը պահանջում էր, որ չափաւոր եւ կասկածելի տարրեր մեզ մօտ չգան եւ կեանքի ու հասարակական գործունէութեան մէջ որոշ չափով հաւասարակշռութիւն մտնի:

Այսպիսով կազմակերպութիւնը քաղաքի մէջ աւելի ամուր հիմքեր սկսեց ունենալ, լայն շրջանակներ բացուեցին մեզ համար, յարմարաւոր թափստարաններ ձեռք բերինք, մեզ համար բնակուելու աւելի բազմաթիւ տեղեր ունեցանք, եւ այլն:

Քաղաքի գործերն ընդարձակուելով՝ ստիպուեցանք ստեղծել քաղաքի համար յատուկ տեղական կոմիտէ: Նոր եկած երիտասարդ ուսուցիչները բաւական օգնում էին մեզ գիշերային պարապմունքների մէջ, այնպէս որ շատ խմբեր նրանք էին կազմակերպում:

Քաղաքում մենք ունէինք երեք կարգի խմբեր՝ Ա) *Քաղաքական* խումբ, որի մէջ ընդունուելու համար պահանջում էր վստահելիութիւն, մաքրութիւն եւ գոհաբերութեան ոգի: Բ) Քաղաքական խմբերի գէնքի ընդունակ տարրերից կազմում էին *մարտական* խմբեր ձեռնարկների եւ ինքնապաշտպանութեան համար:

Բայց առհասարակ գուտ մարտական խմբերի գոյութիւնը յարատեւ չէր լինում, գուտ տեղական մի հանգամանքի պատճառով: Վանում խմբերը կազմուած էին իրար շատ մօտ դպրոցում դասընկեր եղած, նոյն թաղեցի, դըրացի, ազգական, կարն՝ իրար հետ մեծացած եւ իրար հաւատ, վստահութիւն ունեցող տարրերից: Դժուար էր լի-

նում խմբի անդամների մի մասին բաժանել, տանել կապել ուրիշ խմբի հետ. չէին վստահում, իրար հետ լաւ չէին վարում, եւ շուտով մարտական խմբերը քայքայուում էին:

Խմբերի անդամների մօտիկութիւնը եւ կապը, ունենալով լաւ կողմեր (օրինակ՝ գաղտնիքներ դուրս չէին գալիս) ունէր և իր չարիքները: Երբ խմբի անդամներից ոեւէ մէկին գործ էինք յանձնում, նա յայտնում էր միւս ընկերներին: Խումբը պահանջում էր, որ իր անդամներին յանձնուելիք գործը իր միջոցով տրուի, ինքը իմանայ եւ այլն: Հետեւանք պարզ էր, գաղտնի յեղափոխական ձեռնարկը, որ պիտի իմանար միայն մի հոգի, տարածուելու էր 6-10 անձերի մէջ:

Խումբերը թուով բազմամարդ չէին, որովհետեւ շարժուել, ժողովել դժուար եւ վտանգաւոր կը լինէր: Յետոյ, ներքին մտերմութեան պայմանը թոյլ չէր տալիս, որովհետեւ սրտակից ընկերների շրջանակը միշտ նեղ էր լինում: Մի քանի տարիների կուսակցական դաստիարակութիւնը, մանաւանդ ազատութեան օրերի ազդեցութիւնը բաւական թուլացրեց խմբերի այս ներքին «մտերիմ» կեանքը, բայց այնուամենայնիւ վանի մէջ դեռ խմբերն ապրում էին:

Կային եւ մի Գ. կարգի, այսպէս կոչուած «*Օժանդակ*» խմբեր: Ամէն մի մայր խումբ ունէր իր օժանդակ խումբը: Օժանդակութիւնը նախապայման էր եւ նախապատրաստութիւն իսկական մայր խմբին մէջ մտնելու համար:

Օժանդակ խմբերի գոյութիւնը բացատրում է նրանով, որ մայր խմբի մէջ ընդունում էին որոշ փորձառութիւն, վստահելիութիւն ներկայացնող, գաղտնապահ եւ 18ից բարձր տարիք ունեցող մարդկանց: Կային երիտասարդ, պատանի տղաներ, որոնք դեռ փորձուած չէին եւ տարիքի որոշ սակ չուէին: Մայր խմբերն իրենց կից կազմակերպում էին դրանց, պատրաստում եւ գործի էին դրնում: Այսպէս որոշ դաստիարակութիւն ստանալուց վերջ աչդ օժանդակ խմբերն էլ դասում էին մայր խումբ:

Քաղաքում խմբերը հաւաքում եւ զբաղում էին ընթերցանութեամբ: Մենք ունէինք մի գաղտնի գրադարան: Կարդալով արտասահմանեան, մեծ մասամբ «*Դրօ-*

շակ»ի հրատարակած գրքերը, թերթերը եւայլն, խօսում էին գործնական հարցերի մասին, զինավարժութիւն էին անում: Փախստական գործիչները գնում էին նոցա մօտ դասախօսութեան եւայլն:

Խմբերը շատ էին սիրում խօսել առհասարակ գործնական հարցերի մասին, մանաւանդ քննադատել գործիչների պարապմունքները, գործելակերպը եւայլն:

Ունենում էին մեծ մասամբ խմբապետական ժողովներ: Երբ խմբերը շատացան, սկսեցին կազմել շրջանային խմբապետական ժողովներ: Խմբապետական ժողովներին ամէն խումբ ուղարկում էր իրեն հետաքրքրող հարցերի ցուցակը: Խօսում էին, վիճում, բացատրում, եթէ կարելու խնդիրներ էին լինում: Վերջին խօսքը մնում էր Կ. Կոմիտէին, որն իր որոշումը, եթէ կարելի էր գրաւոր, եթէ ոչ իր ներկայացուցչի միջոցով էր հաղորդում խմբապետական ժողովին: Խմբերի, խմբապետական ժողովների եւ բոլոր միութիւնների կապը կատարում էր նամակներով: Արդէն ասել եմ, թէ ինչ բարդ մեքենայ էր այդ եւ թէ ինչքան ժամանակ էին կորցնում նամակ գրելու եւ մանաւանդ կարդալու վրայ:

Խմբերը շատ էին սիրում, բացի գիշերային պարապմունքներից, որ նրանց տանէին վարագայ լեռը զինավարժութեան: Ամէն կիրակի համարեա մի քանի խումբ միացած ֆաղափ մեր փախստական զինուորներին՝ գնում էին լեռը զինավարժութեան: Սա թէ՛ գուարնալի գրօսանք էր եւ թէ՛, մանաւանդ, վարժութիւն, — գիշերը ֆայլել, կարգ պահել, առաջապահ-վերջապահի դեր կատարել, լեռը պահապան կանգնել, անփուն մնալ, նշան ձգել սովորել, հրացանները ֆանդել, մաքրել, մասերը միացնել եւայլն, լսել գանազան հրահանգներ, կռիւների պատմութիւններ, իրար հետ կապուել, ծանօթանալ, մտերմանալ եւայլն:

Խումբերն ունէին եւ ուրիշ գործնական պարապմունքներ: Նրանք էին, որ իբրեւ ֆաղափ շրջապատին ծանօթ, փախստական խմբերը, ապրանքներ, սուրհանդակներ եւայլն առաջնորդում էին մինչեւ արուարձանները՝ Շահպաղի, Սդկա, Շուշանց, Կուռուպաշ, Կեմդանանց, մինչեւ անգամ Արտամետ: Երեկոյեան գնում էին

խմբերի հետ, առաւօտեան վաղ վերադառնում էին շուկան իրենց գործին: Այս նամբորդութիւնները, որ միշտ կապուած էին վտանգների, դէպքերի, ընդհարումների հետ, պակաս փորձառութիւն չէին տալիս ֆաղափի խմբերին: Իսկ երթեւեկութիւն ամէն օր կար: Ամէն օր սուրհանդակներ էին գալիս ու գնում:

Խմբերն ունէին իրենց խմբական տուրքը, որի մի քանի տոկոսը ծախսում էին խմբի ներքին կարիքների համար, մի որոշ տոկոսը խմբի զինական-նազմական (զէնք, փամփուշտ, վառօդ եւայլն գնում էին), մի որոշ տոկոս էլ տալիս էին կազմակերպութեան ընդհանուր պէտքերի համար:

Տնտեսական նզնաժամը եւ չֆաւորութիւնը պատճառ էին, որ այդ տուրքերը շատ չնչին տոկոսով էին վճարում, շատ տարիներ 1904-1906ին 20-30 ոսկի. յետոյ կամաց կամաց աւելացաւ մինչեւ 50-60 ոսկի:

Գիւղերում կազմակերպութիւնը բոլորովին ուրիշ պայմանների մէջ էր:

Գիւղերի մէջ նախնական կազմակերպութեան ձեւը եղել է այսպէս. ամէն գիւղում ղեկավարել են մի քանի վստահելի ընկերներ, մեծ մասամբ նրանք, որոնք արտասահման՝ Կովկաս, Բուլկարիա, Ամերիկա են եղել յեղափոխական կազմակերպական շրջաններում, կամ զինուորութիւն են արել մեր խմբերի մէջ: Այդ տեսակէտով մեծ դպրոց է եղել մանաւանդ «Խանասորը»: Համարեա բոլոր նշանաւոր գիւղերում ունէին Խանասորի զինուորներից կամ Նիկոլի, Վարդանի, Վազգէնի հին զինուորներից, որոնք ամէն գիւղի յեղափոխական մնայուն թթխմորն էին. սրանք՝ կամաց կամաց իրենց շրջանակը լայնացնելով՝ ամենամեծ աշխատանքն են կատարել:

Գիւղերում կային եւ լաւ ուսուցիչներ, որոնք նոյնպէս դեր էին կատարում. վերջապէս, կային ֆաղափի հետ կապեր ունեցող աչքաբաց գիւղացիք, որոնք յարած էին Հ. Յ. Դաշնակցութեան:

Սկզբներում, մինչեւ 1896, համարեա այս անհատներն են եղել, որ եթէ յեղափոխական խմբեր կամ գործիչներ են անցել գիւղերից, պատասպարել են կամ իրենց տունը կամ գիւղի լեռը եւ կամ մարագներից մէկը, հայ-

թայթել են նրանց ուտելիք եւ նանապարհ ձգել:

Երկրորդ շրջանը եղել է այն, որ գիւղի լաւագոյն տղաները միանալով գիւղից, նոյնիսկ իրենց ծնողներից գաղտուկ՝ կազմել են յեղափոխական խմբեր, որոնք վարել են գիւղերի յեղափոխական գործերը կամ դիրուքիւն տուել երթեւեկող յեղափոխական խմբերին կամ գործիչներին:

Երրորդ շրջանը, վարդգէսի եւ մանաւանդ Կոմսի ժամանակն էր, որ տեւեց, խորացաւ եւ ծաւալուեց մինչեւ վերջ, այսինքն գանգուածային կազմակերպութեան շրջան, երբ դուրս հանելով արատաւորուած, մութ անցեալ եւ վատ վարք ունեցողներին՝ մնացած լաւ եւ գործունեայ մարդկանց կազմակերպում էին: Այս ամբողջ կազմակերպութիւնը, որ արտայայտուում էր դարձեալ խմբական եղանակով, ունէր իր մէջ ընտրեալ երիտասարդներից կազմուած մարտական յեղափոխական մի կամ մի քանի խումբեր՝ ձեռնարկների եւ յեղափոխական աշխատանքների համար:

Գիւղերը գրեթէ ամբողջութեամբ կազմակերպուած էին. կային խմբեր և խմբապետներ: Խմբապետները ընտրում էին գիւղի համար մի գործադիր մարմին, որը ղեկավարում էր գիւղի ամբողջ գործերը:

Այսպէս կազմակերպուելով՝ բոլոր գիւղերը՝ ամէն շրջանում կամ գաւառակում միանում կազմում էին մի ենթակոմիտէ. 10-15 գիւղ կամ անելին մի ենթակոմիտէութիւն էր դառնում:

Բնորոշ է, որ գիւղերում բոլոր պաշտօնեաներն ու մարմինները ընտրուում էին, մեծ մասամբ երկաստիճան եւ մասամբ էլ եռաստիճան ձեւով:

Գիւղերում կազմակերպութիւնը քաղաքի նման դեր չունէր. գիւղում կազմակերպութիւնն ամէն բան էր:

Նա կուսակցական մարմին էր, որ պաշտօն ունէր գիւղի մէջ կազմակերպութիւնն ուժեղ պահելու եւ գիւղը զինելու: Զինումը կատարուում էր այսպէս. նրանք, որ կարողութիւն ունէին, ստիպողաբար պարտաւորուում էին անհատական զէնք ունենալ. այդպիսիները շատ քիչ էին առաջին շրջանում (1905-6): Իսկ առհասարակ կալոցին, երբ ապրանք կար, պարտադիր հանգանակութիւն էին անում,

ըստ կարողութեան, ամբողջ գիւղի մէջ. հաւաքում էին հացահատիկ, ծախում էին եւ քաղաքում կազմակերպութեան միջոցով զէնք գնում: Այս զէնքերը դառնում էին համայնական եւ գործ էին անում գիւղի երիտասարդ մարտական կարողութիւն ունեցող ուժերը: Քացի զէնքի դրամից կալոցին գիւղում հաւաքում էին եւ կուսակցութեան, Կ. Կոմիտէի համար տուրք, դարձեալ ըստ կարողութեան, ցորեն, իւղ, պանիր, ոչխար եւ այլն, որը տալիս էին զինուորներին իբր կերակուր կամ ծախում էին եւ դրամը տալիս Կ. Կոմիտէին: Առհասարակ եկամուտների մեծ մասը գաւառը — գիւղն էր տալիս:

Գիւղի կազմակերպութիւնը պէտք է հոգար նաեւ երթեւեկող փախստական խմբերի պէտքերը, կերակուր եւ այլն. նրանց պէտք է վալատ տար մինչեւ մօտակայ գիւղը:

Կար եւ մի մեծ կազմակերպական պարտականութիւն. գիւղերի մարմինները պարտաւոր էին ուշի ուշով հետեւիլ իրենց շրջանի քրտական շարժումներին, կառավարութեան քայլերին եւ իսկոյն լուր տալ մօտակայ գիւղերի ենթակոմիտէին եւ, մանաւանդ, լուրն իսկոյն հասցրել քաղաք: Եւ պէտք է արձանագրել, որ գործի այս մասն հրաշալի կերպով կազմակերպուած էր. գիւղացիք այնքան կարգապահութեամբ եւ անձնուիրութեամբ կատարում էին այս գործը, որ ամբողջ նահանգի դէպքերը մեկ օրը օրին անելի շուտ եւ մանրամասն էինք իմանում, քան հեռագիր, ոստիկանութիւն եւ փոստ ունեցող կառավարութիւնը:

«Հիւրիէթ»ի ժամանակ փորձել էինք բազմիցս. լուրերը դէպքերի մասին մի երկու օր անելի շուտ էին հասնում մեզ, քան կառավարութեան, նոյնիսկ հեռագրով. այնպէս որ շատ անգամ կառավարութիւնը մեզնից էր իմանում այլեւայլ դէպքերի մասին:

Այսպէս կոչուած «Յեղափոխական փոստան» գիշեր-ցերեկ լարուած գործում էր. մեծ նամբաների վրայ եղած գիւղերը հերթապահներ էին նշանակում ամէն օր. երբ նամակը գալիս էր, բերողը ստորագրութիւն էր անում, որ այս ինչ օրն, այս ինչ ժամին հասցրել է: Նամակի հետ թուղթ կար. ամէն գիւղում պիտի գրէին, թէ այս

ինչ ժամին ստացանք եւ այս ինչ ժամին նամբեցինք:

Այս սուրհանդակային գործի մէջ մեծ գործ էին կատարում, մանաւանդ, կանայք. նրանց վրայ աւելի քան կասկած կար եւ նրանք աւելի ազատ ժամանակ ունէին ցերեկները երթեւեկելու համար: Նամակները գրում էին մեծ մասամբ ծածկագրով:

Ծածկագրի ձեւը այս էր. վերցնում էինք որեւէ ծանօթ ոտանաւորի մի տուն: Շատ գործածական էր մեզ մօտ «Մեր Հայրենիք»ի «Ամենայն տեղ մահը մի է» տունը: Առաջին գրից դնում էինք 1, 2, եւ այլն, կրկնուողները թողնում էինք: Ապա այբուբէնը շարում էինք, եղած գրերը թուով, լցնում, իսկ չեղած դէպքում՝ վերջին թիւը, ենթադրեմք, եղել է 26, ուրեմն, 27, սկսում էինք պակասները իրար ետեւից լեցնել՝ վերցնելով այբբենական կարգով, առաջին պակասից:

Ծածկագրի բանալիները նախապէս տալիս էինք մարմինների ընկերներին: Շատ անգամ, երբ նանապարհները կասկածելի էին լինում, նամակները գրում էինք լաթի վրայ անջինջ մելան մատիտով եւ կարում հագուստների կամ բեռան մէջ:

Նամակներն ուղարկում էինք նաեւ ձեռնափայտերի միջոցով, փորում եւ մէջը հաստատում: Բայց սրանից զգուշանում էինք, որովհետեւ թուրք գինուորները նանապարհներին իրենց պէտքերի համար խլում էին հայ գիւղացիների ձեռնափայտերը (իրանք կոչ են ասում, որովհետեւ ծայրերը բռնելու տեղերը թաց ժամանակ ծռում են):

Գրում էինք, ի հարկէ, եւ գաղտնի մելանի վրայից՝ յայտնի անմեղ եւ առտնին բաներ: Այս գործ էինք անում արտասահմանի եւ միւս վիլայէթների հետ նամակային յարաբերութիւններ պահելիս: Գաղտնի մելանով գրուած նամակի մէջ, յաճախ, կարելու բաները կամ ամբողջ նամակը գրում էինք ծածկագրով:

Ունէինք եւ պայմանական հեռագիր, նախապէս բառարան էինք շինում եւ նամբում, որից օգտւում էինք ընդհանուր լուրեր հաղորդելու համար: Այս ձեւը մեծ դիւրութեամբ գործ էինք անում «Հիւրիէթ»ի ժամանակ:

Այս նամակատարներից շատերը հայ, թուրք,

ֆիրտ, եգիտի, սպաննուեցին, ձերբակալուեցին եւ երեք տարով բանտ նստեցին:

Նամակները կը լինէին հայ յեղափոխութեան պատմութեան լուսագոյն վաւերագրեր, եթէ պահուէին, որովհետեւ նրանց մէջ օրը օրին արձանագրուած էին դէպքերը, տրամադրութիւններն եւ հոսանքները: Բայց ֆաղափական վտանգալից սպառնալիքի ազդեցութեան տակ նրանք բոլորը ոչնչացւում էին: Ամէն կարելու յեղափոխական նամակ միշտ վերջանում էր այս խօսքով. «*Նուրում է նամակը կարգալուց վերջը ոչնչացնել*»: Եւ ոչնչացած են հայ յեղափոխութեան լուսագոյն էջերին միակ վկաները...:

Ինչպէս ասացի, գիւղի կազմակերպութիւնը սոսկ ընդհանուր կուսակցական մարմին չէր՝ զբաղուած միայն ընդհանուր կազմակերպական-յեղափոխական խնդիրներով. ո՛չ, նա առաւելապէս հասարակական-համայնական նպատակներին ծառայող մի մարմին էր:

Կազմակերպութեան այդ դերը հասկնալու համար անհրաժեշտ է նախ պատկերացնել թէ ի՞նչ էր հայ գիւղի վիճակը, մինչեւ դաշնակցական զանգուածային կազմակերպութիւն ստեղծելը, աւելի նիշդ մինչեւ Դաշնակցութեան ազգային ներքին կառավարութիւն դառնալը:

Գաւառները կարելի էր երկու կարգի բաժանել. —

Ա) Գաւառներ, որոնք ենթակայ են միաժամանակ նախ՝ ֆրտական աւատական իշխանութեան և ապա՝ թուրք կառավարութեան նշումներին եւ կողոպուտին:

Բ) Գաւառներ, որոնք գրեթէ կամ մասամբ ազատուած են ֆրտական աւատական կարգերից եւ ենթակայ են միայն կառավարութեան կարգերին:

Խօսք չի կարող լինել, որ երկու չարից փոքրագոյնը, նոյնիսկ այդ դժոխային կարգերի ժամանակ, դարձեալ միայն կառավարութեան ռէժիմին ենթակայ գաւառների վիճակն էր:

1896ի ընդհանուր կոտորածի հետեւանքով ֆիրտ աւատապետների ազդեցութիւնը է՛լ աւելի ուժեղացել էր: Հէնց այդ չարաբաստիկ թուականին, երբ ամէն պատահական իսլամ ինքնիշխան էր՝ ուզած գուլումը կատարելու հայ գիւղերում, հայ գիւղացիք իրենք կամովին մտնում էին այս եւ այն փոքր ի շատէ ազդեցիկ ազաների ու բէյերի հովանաւորութեան տակ:

Այսպիսով հայ գիւղ չէր մնացել որ մի աղա կամ բէյ չունենար: Նորտուզի աղաների (Գրաւցի) ազդեցութիւնը հասել էր մինչեւ քաղաքի դուռը. Գրաւցիք տուրք են առել նոյնիսկ Կուռուպաշից:

Ոստանի աղաները՝ Հայոց-Չորին տիրելով՝ հասել էին մինչեւ քաղաքի արուարձանները:

Աւելին կար. պատահական բնակիչները, որոնք վարձուած էին հայ գիւղերի կողմից իբրեւ գիւղերի արտերի վրայ պահպանութիւն անող, կամ գիւղի ոչխարը արածեցնող, դառնում էին գիւղի աղա, գիւղի տէր ու տնօրէն: Եւ մէկ էլ տեսար՝ մի երկու տարուց յետոյ «նոր աղայի» ֆէօշիլը, հայ հողի վրայ՝ հայ գիւղի ամենաօդասուն տեղը բարձրացաւ հայ արհեստաւորի ձեռքով շինուած, հայ գիւղացիների գուրարայի աշխատանքով հայթայտուած նիւթերով:

Բայց բաւական չէ ասել, որ մտած էին այս կամ այն աղայի հովանաւորութեան տակ. պէտք է հասկանալ, թէ այդ «հովանաւորութիւնը» որքան թանկ էր նստում հայ գիւղացու վրայ:

Նախ՝ աղան իրապէս, ապա՝ թափուլով իւրացնում էր հայ գիւղերի լաւագոյն հողերը: Այստեղից է ծագել եւ 1896ին սրբագործուել է այն չարաբաստիկ «հողային հարցը», որ այնքան աղմուկ ձգեց «Հիւրիէթ»ի օրերին, եւ այդ մեծ պատմութիւնը պիտի լուծուէր միայն բարեկրօնումներով՝ նանաչելով, որ հողը յետ պիտի տրուի «Հիւկուկի կարար»ի սովորութեամբ նախկին տէրերին. բայց փոխանակ բարեկրօնումներ գործադրելու, թուրք կառավարութիւնը կոտորածներ գործադրեց:

Բիրտերը շատ գաւառներում այնքան առաջ գնացին, որ հողաւորի արին շատ հայերին, նոյնիսկ ֆէցիին իրենց պատմական հայրենիքից, ինչպէս, օրինակ, Վան վիլայէթի հայկական գաւառները՝ Աղբակ, Արնէշ, Նորտուզ, Խոշար, եւայլն վերջին 40-50 տարուայ ընթացքում ֆրտացրին: Մենք արդէն տեսանք, Նորտուզի գիւղացիները փախան Աբաղա:

Նայեցէ՛ք այս թուերին, որ կազմել է Վանի առաջնորդարանը, պաշտօնական, ստոյգ գեկուցումների և տեղն ու տեղը կատարուած ուսումնասիրութիւնների վրայ.—

1895ին Նորտուզ կար 16 հայ գիւղ 280 տուն
1897ի կէսերին այս թիւը իջած է 277 տուն
1899ին 168 տուն

Եւ այսպէս շարունակ իջաւ, մինչեւ որ 1915ին մնացորդները ջարդուեցին ի սպառ:

Բաւական չէր հողի գրաւումը. հայ գիւղացին պիտի ցանէր ֆիւրտ աղայի ոչ միայն նոր գրաւած հողերը, այլեւ նախկին ունեցածները, ոչ միայն պիտի ցանէր, այլև հնձէր, կախէր, մաքրէր եւ ջրաղաց տանէր:

Հայ գիւղացին պէտք էր կապալ տար եւ իր սեփական ունեցածից, գիւղացիական եկամուտի մէկ տասներորդը, շատ անգամ մէկ ութերորդը — ոչխարից, պանրից, իւղից, բրդից, մի խօսքով ամէն եկամտից:

Հայ գիւղացին պիտի տար նաեւ աղայի առտնին տնտեսութիւնը վարելու, ծառայելու համար անհրաժեշտ տղամարդիկ եւ կանայք եւ, ի հարկէ, միշտ ձրիաբար:

Հայ գիւղացին պէտք էր ամէն բայրամի, միւս տօներին, հարսանիքներին, մահուան առթիւ, «ա-իտ», «աչֆ լոյս», «գլուխ ողջ» երթար իւր աղայի մօտ, որը արտայայտում էր մի ոչխարով, մի գլուխ շաֆարով, մի ֆանի մէնիտով. շատ անգամ եւ ոսկիներով: Կարճ՝ հայ գիւղացին ֆիւրտ աղային կթան կովն էր...

Այս բոլոր անուղղակի տուրքերը տալով՝ հայ գիւղացին չէր ազատում թուրք կառավարութեան ուղղակի, օրինական եւ ապօրէն կաշառք տուրքերից:

Աղթամարը իր թեմից պակաս տուրք չէր հաւաքում քան ֆիւրտ աղաները: Այժմեան երիտասարդ վարդապետները պատմում են, որ հէնց իրենց ժամանակ եկել է այդ տուրքը. այդ ոչ միայն արտայայտուել է «գուրարայով», այսինքն՝ գիւղի համայնքը եկել է Աղթամարի կամ միւս վանքերի արտերը ձրիաբար ֆաղելու, այլեւ գիւղերում ամէն կարգի նուիրաբերութիւններ են կատարել «պտղի» անունով, նոյնիսկ «աթար», «ցան» են հաւաքել:

Այս բոլորի վրայ աւելացրէ՛ք եւ ժանդարմաների, հարկահաւաքների (թասիլտար) պատահական առաջարկները, նոյնպէս զինուորների, հայ վաշխառուների, «իշխանների», գիւղի «ռէսերի», գրագիրների, ամէն կարգի տգրուկների սխրագործութիւնները, որպէսզի պատկերը ըստ ամենայնի կատարեալ լինի:

Ի հարկէ, այսպիսի դժոխային ռէժիմի տակ, ժողովուրդը տնտեսապէս փնանում էր, որի պատճառով շատ գիւղեր թողին իրենց հողերը եւ ցրուեցին աշխարհի ամէն կողմեր. գիւղացին այլասերուեց, անբարոյականացաւ, վարժուեց ստրկական կեանքի եւ համակերպութեան:

Ահա համառօտ նկարագիրը այն գիւղական հասարակութիւնների, որոնց մէջ գնաց գործելու Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գիւղական մարմինների միջոցով: Դաշնակցութիւնը ահագին ընկերային յեղաշրջում մտցրեց վասպուրականի գաւառներում:

Քրտերի տիրապետութեան դէմ պայքարներն սկսուել են վարդգէսի ժամանակ. շարունակուել են ու զարգացել՝ հասնելով իրենց գագաթնակէտին 1907-1908ի սկիզբներին, երբ առաջին անգամ փւրտերը Շատախի մէջ զինուած ուժով փորձեցին պահանջել իրենց «կապալները» եւ հանդիպեցին զինուած դիմադրութեան հայերի կողմից:

Պայքարի ձեւերն իւրաքանչիւր վայրի մէջ առանձին էին: Երբ կարողացանք տիրել ժողովրդին, կարգադրուեց, որ այլեւս ձրիաբար ազաների համար չաշխատին. որեւէ կապալ, նուէր եւայլն չտան. սպառնացինք, որ տուղները պատասխանատուութեան պիտի ենթարկուին: Մանաւանդ խստիւ արգիլուեց, որ դատական ներքին վէճերի լուծման համար դիմեն ազայի միջամտութեան: Ի հարկէ, մեր այս բոլոր կարգադրութիւնները տառացի չգործադրուեցին, միաժամանակ ամէն տեղ եւ ամբողջ խտութեամբ:

Ստրկութիւնն այնքան ծանր հետքեր էր թողել մեր ժողովրդի հոգեբանութեան վրայ, որ նոյնիսկ գիւղացիք սկսեցին գաղտուկ «կապալ», «ա-իտ», ձրի ծառայութիւն տալ, այնպէս որ մենք չնկատեմք: Բայց գիւղի երիտասարդութիւնը, որ արդէն ըմբոստացել էր ազայի բռնակալութեան դէմ, դարձաւ մեր յեմարանը՝ ֆանդելու ազաներու բռնակալ ռէժիմը:

Քիչ յետոյ գիւղացիք իրենք գլխի ընկան, որ հնարաւոր է «կապալ» չտալ եւ անպատիժ մնալ, մանաւանդ որ, իբրեւ ապօրինի տուրքի, կառավարութիւնը բոլորովին անտարբեր էր: Ազան բացի հոգային հարցերից, այն էլ այն հողերի մասին, որ կեղծ թափու էր շինել, թէ գնել

է հայերից, ոչինչ չէր կարող անել. կառավարութիւնը չէր կարող միջամտել կամ օժանդակութիւն բերել նրա ապօրէն իրաւունքների պաշտպանութեան համար: Գալով հոգային կամ այլ հարցերի, որոնք յանձնուում էին դատարանին, շատ անգամ մենք էինք շահում, մանաւանդ երբ դիմացինը մեծ կամ ազդեցիկ փւրտ բէյ կամ ազա չէր: Այդպիսի դէպքում դատերը տարիներով ձգձգուում էին:

Աւելին կար. գիւղացու համար սա կեանքի եւ մահու հարց էր: Նա բնագոյրէն զգում էր, որ ինքը տնտեսապէս եւ իրաւապէս պէտք է ազատագրուի ազաներից, որ դա կարող էր տեւական չլինել. ազան վաղը կը գայ եւ բացի իր «իրաւունքներից» կը դաչէ եւ նրա կեանքին և պատուին:

Արդէն մեր զինուած խմբերի պտոյտներն, ընդհարումները այս եւ այն գաւառներում, փրտերին տրուած սարսափները, փէտայինների մասին տարածուած առասպելները, սահմանագլխի կռիւները, մանաւանդ հանասորը, այն հոգեբանութիւնն էին ստեղծել փւրտերի մէջ, թէ հայերի մէջ էլ կամաց-կամաց առաջ է գալիս մի դասարգ, որ իրենց պէս «աշիր» է, կոռուել գիտէ:

Շատ բնորոշ է այդ տեսակէտից Ոզմի փրտական տիրապետութիւնից ազատուելու պատմութիւնը:

Ոզմը ընկած է վան վիլայէթի հարաւային կողմը. պատկանում էր Սղերդի մութասարիֆութեան (Բիթլիսի նահանգ), բայց կազմակերպական տեսակէտով վասպուրականի հետ էր կապուած: Ոզմը 15րդ դարուց սկսած ըմբոստ է եղել, միշտ ռազմիկներ է տուել, ընդամենը 100ի չափ տնից բաղկացած լինելով: Մի ֆանի հարիւր տուն էլ Ոզմցիներ կան ցրուած վասպուրականի գիւղերի մէջ: Ոզմըցիք ունին սեփական լեզու, արհեստով թաղիքագործ են՝ «կատան». ամբողջ շրջաններ պտտում էին իրենց անդի (զգելու գործիք) ուժով:

Բայց եւ այնպէս փւրտերը «կապալ» դրել էին նաեւ Ոզմի վրայ, մանաւանդ Տինիսի եւ Բարաբի ազաները: Ոզմ տուել է հրաշալի զինուորներ: Ոզմը վասպուրականի յեղափոխական Սպարտան է կամ մեր Զէյթունը: Ոզմցի լաթոն, Յովսէփը եւ ուրիշները նշանաւոր խմբապետներ եւ զինուորներ են եղել:

Ինչպէս բոլոր վայրերում, Ոզմն էլ ըմբոստացաւ քրտերի դէմ. մերժեց «կապալ» տալ, եւ ենթարկուել քրտական բռնութիւններին: Այդ, ի հարկէ, նրան էժան չնստեց, շնորհիւ անոր. որ շատ հեռու էր ընկած հայկական գաւառներից, — վեց ժամ հեռու էր Մոկսից եւ 10 ժամ Շատախից. երեւի մի 200 վերստ էլ քաղաքից, միևնազան ընկած էր քրտական ուկրաին մէջ, Քիւրտիստանի սրբտին — Բարվարին — մօտիկ: Բազմաթիւ զինուած ընդհարումներ եղան, Ոզմցոց թալանները տարան: Փոխադարձ սպանութիւններ եղան, մեծ մասամբ քիւրտերի կողմից. կռիւր տեւեց մինչեւ 1910–11ին նոյնիսկ «Հիւրիէթ»ի ժամանակ: Կառավարութիւնը հեռուից դիտողի դեր էր կատարում: Վերջ ի վերջոյ մեր կազմակերպութեան թափած ջանքերի շնորհիւ Ոզմը ազատագրուեց:

Ոզմը ազատագրուեց եւ փորձեց ազատել Բարւարի քրտախօս, հողագուրկ հայութիւնը: Ահա այստեղ առաջ եկան առաջարկութիւններ, որոնք քրտական հոգեբանութեան արտայայտութեան մի նմոյշ են:

Բարւարի ազաները լուր էին ճամբել Ոզմի մեր մարմնին — Լաթոյին, որ այդ շրջանի խմբի կառավարիչն էր:

— *Մենք ձեզ՝ Ոզմցոց՝ աշիրաթ, աղա կը ճանաչենք, միայն դուք մի ըմբոստացնէք մեր դէմ «մեր» հայերին:*

Բնորոշ է, չէ՞, ուրեմն, քիւրտը նանաչում է գէնֆի ուժը. ով կոռուղ է, կտրին է, նա իրաւունք ունի *աղա*, մանաւանդ «*աշիր*» կոչուելու, այսինքն՝ ազնուական դանալու: Այսպէս է եղել միշտ եւ ամէն տեղ. գէնֆն եւ ուժն են մարդկանց ազնուական դարձրել եւ ոչ թէ արիւնը:

Այնուհետեւ քրտերը սկսեցին յանձնիլ Փէտաչիների նանաչել հայերի մէջ մի նոր դասակարգ, որ իրենց կարծիքով հայերի «աշիրն» էր:

Տարիներ տեւող պայքարը, վերջնականապէս մաքրեց Վասպուրականի հայ գաւառները քրտական տիրապետութիւնից՝ սկսելով քաղաքի շրջապատից եւ խորանալով դէպի հարաւ՝ Սոքերդ, դէպի հիւսիս՝ Բաղնոց, դէպի արեւմուտք՝ Բաղէշ, դէպի արեւելք՝ մինչեւ պարսկական սահմանագլուխ: Կար ժամանակ (1906–7ին), երբ հայկա-

կան գաւառների մեծամասնութիւնը ի սպառ ազատագրուել էր քրտական ուժիմից եւ երբ քիւրտ ազան եւ իր խումբները ոչ միայն չէին համարձակուում հայ գիւղը մըտնել տուրք ուզելու, այլեւ սովորական նանապարհորդութեան ընթացքին խուսափում էին անցնել հայ գիւղերից:

Բնորոշ է եւ այն, որ հայ գիւղերից վարակուեցին եւ քիւրտ աշխատաւոր երկրագործ տարրերը. սրանք էլ սկսեցին ըմբոստանալ, մերժել արի աշխատանքները, հողային դատեր սկսեցին քիւրտ ազդեցիկների դէմ եւ, յաճախ, դիմեցին քաղաք մեր կազմակերպութեան, որ մեր ազդեցութեամբ դատարանում հարցերը լուծել տանք յօգուտ իրենց:

Ինչպէս ասացինք, այս պայքարը — քրտական իշխանութիւնը եւ ապօրինի տուրքերը վերացնելը — տեւեց երկար, առիթ եղաւ գիւղերի աւերման, թալանի, բանտարկութեան. վերջ ի վերջոյ սակայն հայ գիւղացին ազատագրուեց քիւրտ ազաների ձեռքից:

Երբ ջնջուեց քիւրտ աղայի ազդեցութիւնը հայ գիւղերից, էլ խօսք չէր կարող լինել եւ հայ վանքերի «պառիկների» մասին. այդ արդէն ինքն իրեն վերացաւ:

Մնաց թուրք պաշտօնեայի, հարկահաւաքի, ժամտարմի եւ այլ մութ տարրերի ձեռքից ժողովուրդը պաշտպանելու հարցը:

Կառավարութիւնը միայն այն ժամանակն էր միջամտում հայ գիւղերի ներքին վէներին, երբ գիւղը չէր կարող ինքը լուծել. այն ժամանակ գիւղ էին գալիս շրջանի միտիւրը, գայմագամը կամ ժամտարմները, գործերը քննում եւ վարչական եղանակով լուծում, ի հարկէ ծեծի, անպայման կաշառֆի, կողմնակալութեան օգնութեամբ, գիւղի ազդեցիկ աղայի ներշնչումների, շրջանի քիւրտ ազաների ինտրիգների համաձայն: Հետեւանքները պարզ էին, — անդադար դատեր, թշնամութիւն եւ փոխադարձատելութիւն, մատնութիւն, իրար ոտքի տակ քանդել, իրար տեղ, արտ վառել, իրար արտը գաղտուկ արածեցրնել, եւայլն:

Թուրք դատարանը կարեւոր գործերը ուղարկում էր աւելի մեծ դատարան, ինչպէս նաեւ քրտական բնոյթ ունեցողները, որ տեւում էին տարիներ, — գնալ գալ. կա-

շառֆ, ժամանակի կորուստ, բանտի մէջ անմեղ տեղը փրտիլ, զանազան մութ մարդկանց միջամտութեան դիմել: Դատարանի շուրջը ստեղծուել էր «Արուկաթ» անունով սեւ միջնորդների մի վոհմակ, որ կեղծ մարկաներ էր շինում, կեղծ միջոցներ պատրաստում եւ զանազան խաղեր սարքում ժողովրդի գլխին:

Այս չարիքները չէզոքացնելու միակ միջոցն էր ստեղծել գիւղերում ժողովրդական տեղական դատարաններ: Այսպէս էլ արուեց: Ամէն գիւղ ունէր գործադիր մարմնին կից իր գիւղական «դատական մարմինը»՝ կազմւած պարկեշտ եւ բարեխիղճ մարդկանցից, որոնք տեղական սովորութիւնների համաձայն հաշտարար ձեւերով, փոխադարձ համաձայնութիւն էին գոյացնում երկու կողմերի միջեւ: Երբ այդ անկարելի էր լինում, վեհ էին կայացնում եւ յանձնում գիւղի գործադիր կոմիտէին. իսկ երբ սա էլ չէր կարողանում իրագործել, դիմում էին շրջանի ենթակոմիտէին, եւ այսպէս դէպի վեր, մինչեւ գործը կը հասնէր Կ. Կոմիտէին:

Շատ քիչ դատական խնդիրներ սակայն հասնում էին մեզ մօտ եւ եկածներն էլ շատ խոշոր էին: Այսպիսով, տեղին վրայ, արիաբար, առանց ժամանակ կորցնելու, դատեր էին տեսնում. պատիժներն էին՝ ծեծ, տուգանք, վնասի հատուցում, գաւառից կամ նահանգից աքսոր:

Գիւղի կազմակերպութիւնն ունէր այլ պարտականութիւններ. նա պէտք է բանար գիւղում դպրոց եւ հոգար նրա գոյութեան յարատեւութիւնը: Եթէ չի կարելի ասել «պարտադիր ուսում», բայց անպայման կարելի է պնդել, որ վասպուրականում եւ Մուշում եղել է «պարտադիր դպրոց» ունենալու սովորութիւն եւ կարգադրութիւն: Փաստեր կան, որ բռնակալութեան ժամանակ գիւղերում աւելի մեծ թուով դպրոցներ են եղել, քան Սահմանադրութեան օրերին:

Պարզ էր. Սուլթան Համիտի բռնակալութեան շնորհիւ, որ արգիլել էր երթելութիւնը, որով չէր կարելի օտար երկիր, Պոլիս գնալ աշխատանքի, գիւղացիք, ինչպէս եւ քաղաքացիք, աւարտում էին դպրոցը եւ մնում իրենց տեղերում, մեծ մասամբ անգործ: Նոքա ուրախութեամբ համաձայնում էին գնալ գիւղ ուսուցչութեան

շատ չնչին ռոնիկով, տարեկան 10-15 չափ հացով, որը այն ժամանակ հազիւ 6-7 օսմանեան ոսկի արժեւար. սա տակաւին բաւարար ռոնիկ էր համարում. կար եւ աւելի պակասաւորը:

Գիւղերն, ինչպէս եւ քաղաքը, լիքն էին երեխաներով 96ի կոտորածից յետոյ. պատմում էին, որ 10 տարում ոչ միայն պակասը լրացել էր, այլ շնորհիւ պանդխտութիւն չլինելուն, գիւղերի հասարակութիւնը էլ աւելի բազմացել էր:

Գիւղական կազմակերպութիւնը պաշտօն ունէր հոգալու նաեւ գիւղի չունեւոր, աղքատ, աշխատաւոր ձեռք չունեցող, որբեւայրի բնտանիքների պէտքերը. դրանց համար *զուբարայուլ* ցանք էին անում, հաւաքում, կամ կալոցին հանգանակութիւն անում:

Գիւղի ինքնապաշտպանութեան, ինչպէս եւ առհասարակ դպրոցի պիտանէի մեծ մասը հայթայթում էր համայնական միջոցներով: Գիւղի եկեղեցու կամ շրջանի վանքի արտերը համայնօրէն ցանում, հաւաքում էին եւ արդիւնքը տալիս դպրոցին կամ գէնքի: Ամէն գիւղում նման համայնական աշխատանքներ միշտ գոյութիւն են ունեցել:

Ժամանակի ընթացքում վերացան գիւղերից գողութիւնը, «գիւղեր» (իրար վնասելու սովորութիւն), ծեծը, թայֆայական կոիւները եւայլն:

Գիւղի կազմակերպութիւնը հսկում էր նաեւ վաշխառութեան վրայ: Թոյլ չէր տալիս օդի վաճառքը, թուղթ խաղալը եւ այլ մոլութիւնները բոլոր գիւղերում:

Աշխատում էր դպրոցին կից պահել գաղտնի գրադարան, լրագիրներ եւայլն: Գիւղերը կամաց կամաց կարգի տակ էին մտնում, և գիւղ մտնողը հանդիպում էր հարցաւոր, քաղաքական-ազգային հարցերով զբաղուող ու հետաքրքրուող անհատների:

Եւ այս բոլորը արուել էր, մեծ մասամբ, տեղական գիւղացի-գաւառացի գործիչների ջանքերով, նրանց միջոցով, նրանց գոհողութեամբ:

Այս ներքին ինքնավարութիւնը, այս ինքնագործունէութիւնը իր բարերար արդիւնքները տուաւ ժամանակի ընթացքում, եւ դրան ենք պարտական վասպուրականի

հերոսական պաշտպանութիւնը, 1915ին, երբ ամէն գաւառ հարիւրաւոր զէնքեր առաւ, տասնեակ հազար փամփուշտ, գործիչներ հասցրեց, ղեկավարներ ստեղծեց եւ ինքն իրեն պաշտպանեց:

Քաղաքումն էլ կազմակերպութիւնը մասամբ զբաղուել է դատական կամ նման հասարակական բնոյթ կրող հարցերով:

Քաղաքում դատերը միշտ կատարուել են միջնորդատեանների միջոցով. երկու կողմից մարդիկ են ընտրուել եւ կազմակերպութեան հսկողութեան տակ որոշել ու տուել դատավճիռ. կազմակերպութիւնը միջամտել է, վճիռները իրագործելու համար, երբ կողմերից մէկը չի համակերպուել:

Առանձնապէս միջամտել ենք այնպիսի դատերի, որոնց մէջ անարդարութիւնն ազազակող փաստերի է հասել, երբ կառավարութիւնը ձգձգել է կամ ձեւական պատճառներով չի ուզեցել ընթացք տալ: Արգիլուած էր ոգելից ըմպելիների շարաշար գործածութիւնը կամ թաղերի մէջ ծախելը եւ թղթախաղը:

Խստիւ հետեւել ենք գողութիւններին, որոնք պատճառ էին դառնում կառավարական պաշտօնեաների մուտքին հայ թաղերում, յանախակի խուզարկութեանց եւ մեր տեղերի վտանգման:

Եղան տարիներ, երբ գողութիւնը ի սպառ չեզոքացուել էր. չնայած տնտեսական խիստ ճգնաժամին, որ առհասարակ գողութիւնները շատացնում է: Բայց եթէ գողութիւն էր լինում, իսկոյն հետքը գտնում եւ հանում էինք:

Արգիլում էինք գողութիւն եւ թուրքերից եւ ֆրտերից: Բազմաթիւ դէպքեր են պատահել, որ թուրքերն ու ֆիրտերը գողութեան համար դիմել են մեզ. գտել ենք ձի, կով, եզ եւ այլն եւ յետ տուել:

1905ի աշնան էր թէ 1906ի ձմեռը, կազմակերպութիւնը այնքան էր ուժեղացել եւ այնքան ազդեցութիւն էր ձեռք բերել ֆաղափում ու շրջաններում, որ մի յայտարարութիւն էր արել «Հրաման» վերադասութեամբ եւ մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ.—

1. Արգիլում է գիշերով թուրքերի մօտ գնալ գալը:

2. Խստիւ արգիլում է խմել եւ թաղերի մէջ օղի ծախել:

3. Արգիլում է թղթախաղը:

4. Խիստ պատասխանատուութեան պիտի ենթարկուին նրանք, որ թուրքերի մօտ հայ կիներ են տանում անբարոյական նպատակներով:

5. Պատասխանատուութեան պիտի ենթարկուին կեղծ դրամ կտրողները: (Վանում շատ տարածուած էր կեղծ դրամ կտրելը, լաւ ոսկերիչ վարպետներն ունէին գործիք, որով ճիշդ կառավարական դրամների որակով արծաթ դրամ էին կտրում, իսկ պղնձից, մանուանդ մէքալիկ 10 փարա, որ ոչ ոք չէր կարող տարբերել սովորականից եւ առհասարակ գործ էր ածում հրապարակում կառավարականի հետ հաւասար չափով: Երբ հրապարակը լեցում էր, նոր ճգնաժամ էր առաջ գալիս եւ յայտարարում էր այսինչ կեղծ դրամները չվերցնել: Տարածողը մեծ մասամբ ազատ դասակարգն էր: Դէպի մանր դրամները Տանկաստանում մեծ սէր կար. որովհետեւ դրանք աւելի արժէքաւոր էին. մեծ դրամը մանրացնելու համար մանրողչէք էին վերցնում. ոսկուն 2-1ժ, մէնիտին 1 դրուշ եւ այլն):

6. Արգիլում է վաշխառուական տոկոսներով դրամի շահագործումը:

Այս թռուցիկը, չգիտեմ իսկապէս, արտասահման կա՞յ թէ ոչ, բայց ժամանակին շատերին զարմանք պատճառեց: Առարկում էին, որ կառավարական իրաւունքներ ենք վերցրել մեզ վրայ. չէին կարող հասկանալ, որ մի անլեզալ կազմակերպութիւն կարող էր դրուած առաջադրանքները գործադրել:

Եւ պէտք է խոստովանիլ, որ առհասարակ նման բոլոր կարգադրութիւններն իրագործուում էին, շնորհիւ մեր ազդեցութեան, և ի գործ դրած ստիպողական միջոցներին: Մի երկու պատիժներ օրինակ էին դառնում, որ ուրիշները զսպուեն մի առժամանակ: Պէտք է ասել, որ այս օրինակներից շատերն, ինչպէս և դատական գործառնութիւնները մնացին եւ «Հիւրիէթ»ի ժամանակ, մանուանդ գա-

ւառներում: Մի ժամանակ առակ էր դարձել եւ ասում էին.
— *Կառավարական դատարանները գործ չունին.
բոլոր դատերը հայերն իրենք իրենց մէջ են տեսնում:*

Քաղաքի խմբերի հետ պարապմունքները կանոնա-
ւորելու համար, ընդունակութիւն ունեցող տղաների շրք-
ջանակ էինք ստեղծել՝ սիստեմատիկ դասախօսութիւննե-
րով եւ այլ միջոցներով նրանցից պրոպականտիստներ եւ
կազմակերպիչներ պատրաստելու համար:

Առանձին ուշադրութիւն էինք դարձրել գրադարա-
նի վրայ. մեր սուրհանդակները եւ ռազմամթերք փոխա-
դրող գաղտնի ֆարաւանները՝ զէնքի փամփուշտի, տինա-
միթի, ռումբի բեռների հետ բերում էին նաեւ արտասահ-
մանեան յեղափոխական թերթեր եւ գիրքեր, որոնք ստաց-
ւում էին Պարսկաստանում փոստայով եւ այնտեղից մեզ
ուղարկւում: Իսկ 1905 եւ 1906ին ռուսական յեղափոխու-
թեան ժամանակ Կովկասի մամուլը եւ նոր հրատարակու-
թիւնները ողողեցին հրապարակը:

Արդէն Կոմսի ժամանակ ունէինք մի փոքրիկ գրա-
դարան, որը կամաց-կամաց ընդարձակուեց եւ դարձաւ
բաւական մեծ:

Գրադարանապետը Տիգրան Միրախորեանն էր, որ
իրենց խմբի հետ հոգում էր գրադարանի մասին: Ի հար-
կէ, գրադարանը յեղափոխական գաղտնի գրադարան էր,
որը պահում էր նոյնքան գաղտնի, որքան եւ զէնքը: Գրա-
դարանի համար էլ ունէինք գաղտնի պահարաններ: Շա-
րաքական մի անգամ որոշ տեղ — առհասարակ փոխում
էինք տեղերը — խմբապետները կամ ներկայացուցիչները
խմբի պահանջած ցուցակները բերում էին (ամէն խումբ
տպուած գրացուցակ ունէր) եւ եղած գիրքերը տանում:
Վանեցիք, ընդհանրապէս շատ ընթերցասէր են եւ ազա-
հութեամբ լսփում են բոլոր գիրքերը, որովհետեւ ազատ
ժամանակ շատ ունին, անգործ են՝ մանաւանդ ձմեռները,
եւ միշտ նստած կարդում են:

Բնորոշ էր եւ այն, որ՝ մեր օրինակից վարակուե-
լով՝ բողոքական շրջանակի երիտասարդ տղաները, որոնք

մեզ հետ շփում ունէին, որոշեցին մի լեզայ գրադարան
կազմակերպել Ամերիկեան միսիոնարական շրջանակի մէջ:

Կարծեմ՝ 1906ին, երբ միսիոնարներից մէկը Կով-
կաս էր գնում, միասին կազմեցինք ցուցակ, ուր նկատի
ունեցայ աւելի օրինական գիրքեր — եւ, փոխանակ Բաֆ-
ֆիի, վերցրինք Շիրվանզադէի, Պոօշեանի, Աղայեանի,
Թումանեանի եւ հրատարակչական ընկերութեան գիրքերը
եւայլն: Խուսափեցինք յեղափոխական գիրքերի անուննե-
րը դնելուց, որպէսզի գրադարանը կարողանար արդարա-
ցընել իր վրայ դրուած յոյսերը. ապրէր, գոյութիւնը յա-
րատելէր եւ ծառայէր իր նպատակին:

Միսիոնարը բերեց այդ գիրքերը. ամերիկեան շրք-
ջանակում դեղարանի վերի յարկում ամերիկեան «Քրիս-
տոնէական երիտասարդական Միութիւնը» — որը միջազ-
գային մեծ միութիւն էր, ունեցաւ իր գրադարանը, որը
երկար ժամանակ պահեց իր գոյութիւնը, իսկ «Հիւրիէ-
թ»ի ժամանակ առանձին գրադարան էր:

Իսկ մեր գաղտնի յեղափոխական գրադարանն ըն-
դարձակուելով՝ ապրեց եւ մեծ դեր կատարեց մինչեւ
1908ի Ապրիլին, երբ Դաւիթի դաւաճանութեան հետեւան-
քով, զէնքերի հետ բռնուեց եւ գրադարանը:

«Հիւրիէթ»ին գրադարանն եւս յետ տրուեց կառա-
վարութիւնից եւ եղաւ հիմքը «Ազատութեան Լոյս» գրա-
դարան-ընթերցարան մեծ հիմնարկութեան, որի մասին կը
խօսինք իր տեղը:

Կոմսի ժամանակ, իբրեւ պրոպականտի միջոց, ու-
նէինք ե՛ւ թերթ. անունը մոռացել եմ: Կարծեմ՝ 10-15 օ-
րինակ տպուեց. փոքրիկ բան էր, 4 երեսնոց, փոքրագիր.
մեծ մասամբ արտասահամանեան ընկերների, ֆաղաֆա-
կան, ազգային լուրերն էին լինում եւ մէկ մէկ առաջնոր-
դողներ տեղական յեղափոխական խնդիրների շուրջ:

Իմ վան հասած միջոցին՝ թերթն արդէն դադարել
էր, աշխատակցող, մանաւանդ խմորատիպով լաւ տպող-
ներ եւ գրողներ չլինելու պատճառով:

Մենք յետոյ կը տեսնենք, որ վանի մէջ նոր թերթեր
էին հրատարակուում, մէկի տեղ մի ֆանիսը, իսկ մինչ
այդ՝ այս եւ այն առիթով թռուցիկներ ենք բաց թողել Կ.
Կոմիտէի կամ տեղական մարմինների մասին, որոնք մեծ

մասամբ եղել են հրահանգներ գործնական հարցերի շուրջ կամ բացատրութիւն այս կամ այն դէպքի առթիւ:

Քիչ չեն եղել նաեւ կառավարութեան խայտառակութիւնները հարուածող եւ մերկացնող թռուցիկներ: Յիշում եմ, որ մեծ տպաւորութիւն թողեց 1906ի Յունիսի 6ին Համագասպի գրած մի թռուցիկը, Վանի հերոսական դիմադրութեան տասնամեակի տարեդարձի առթիւ: Շատ զգածուած եւ յուզիչ ոճով գրուած թռուցիկ էր: «Դրօշակ»-ը տպել էր այդ թռուցիկը Աւետիսեանի, Պետոյի եւ Մարտիկի պատկերներով:

Թռուցիկը նախապէս տպել, պատրաստել էինք 6ի նախընթաց գիշերը, պատուիրել էինք ցրուիչներին, որ Այգեստանի մէջ, այն բոլոր տները, որոնք գոհ էին տուել 96ի կոնիներին, մէկ մէկ օրինակ ձգեն: Միւս օրն արդէն իրենց տուների մէջ գտել էին թռուցիկները:

Այդ օր վարագ էին գնացել մեծ ֆանակութեամբ ուխտաւորներ. այնտեղ էլ ցրուել են թռուցիկներ: Պատմում են, որ ամէնք յուզուել եւ լաց էին եղել...

Առհասարակ մովենտի վերաբերեալ թռուցիկները Համագասպն ու Մելոյեանն էին գրում:

**

Մի ֆանի խօսք էլ 1905-1906ի մեր ֆաղափական իտէալների եւ նրանց իրագործելու միջոցների — տակտիկայի մասին:

Ի հարկէ, կուսակցութեան ազգային-ֆաղափական իտէալներն օրը օրին չեն փոխուում. խօսքը այստեղ պահի մասին է, կամ աւելի ճիշդ որոշ պահում ինչ պլատֆորմ իրագործելու մասին է: Այն ժամանակ այդ խնդիրը մեզ համար պարզ էր, «Հայաստանի անկախութեան» հարց չկար դրուած, այլ Մակեդոնիայի ձեւով բարեկրթութեան հարցն էր: Եւրոպացի ֆեոդալների հովանաւորութեան տակ: Կարն՝ Մալիսեան ծրագրի իրագործումը մի ֆանի սրբագրութիւններով: Եւ պէտք է ասել, մեր յեղափոխական պայքարի երկար եւ դժուարին ֆանապարհին, մենք առժամեայ, նուազագոյն իրագործելի ուրիշ հարց էլ չենք դրել, փոփոխութիւններ միշտ մտցրել ենք միայն տակտիկի մէջ:

Վերոյիշեալ նպատակներին հասնելու համար, իբր միջոց համարում էին զինուած ապստամբութիւնը, ցոյցը, տէռորը եւ դիւանագիտական աշխատանքը:

90ական թուերի փայլուն դէպքերը, 900ական թուականների սկզբի տարիների ձեռնարկները, Սասունի ապստամբութիւնը, Սուլթանի մահափորձը եւայլն, այդ օրերին համարում էին այլեւս անբարար մեր հարցի լուծման համար:

Այդ ձեռնարկների անյաջողութիւնը բացատրում էր նրանով, որ հարկաւոր ոյժը, մեծ մասամբ զինական եւ դրամական, չկար, որպէսզի ձեռնարկը դառնար տեւական եւ ազդեցիկ: Պնդում էին, որ եթէ Սասունի ապստամբութիւնը փոխանակմի երկու շաբաթի, տեւեր մի ֆանի ամիսներ, միջամտութիւնն անխուսափելի կը լինէր:

Աւելին կար. պնդում էին, որ երկրի այս ու այն ծայրում ասուպի պէս երեւցող այդ մասնակի ձեռնարկները փայլում անցնում են: Մի Սասուն, մի Զէյթուն, մի Պոլիս գատ-գատ պիտի չշարժուէին, այլ բոլոր կարեւոր վայրերը պիտի կազմակերպուէին, ոյժ կեդրոնացնէին եւ ստեղծէին մի հսկայ զանգուածային շարժում երկրի մէկ ծայրից միւսը:

Հնարաւորութեան մասին քիչ էր մտածում: Կարծում էին, որ եթէ միջոցներ եւ երկիր մտնելու, ժողովուրդը կազմակերպելու պատրաստ անձնագոհ եւ փորձուած գործիչներ լինէին, գործը կը դիւրանար:

Դրա համար հին գործելակերպի որոշ կէտերը սրբագրում կամ վերագնահատում էին:

Ա) Կազմակերպութիւնից կախուած բոլոր միջոցներով՝ դիմել անկախ, մասնակի ձեռնարկներն ու ժայթքումները վերացնելու.

Բ) Կարեւոր զինուորական ոյժերը, որոնց ներկայութիւնը կարող էր գրգռել կառավարութիւնը եւ վիժման պատճառ դառնալ, նախապատրաստական շրջանին երկրից դուրս հանել.

Գ) Մեծ ֆանակութեամբ զինուած փախստական խմբեր չպահել.

Դ) Զինուած խմբերին փոխարինել զինուած ժողովրդով, որ ամէն զէնքի ընդունակ կազմակերպուած ըն-

գերն իմանալու. հոյնիսկ նանաչելու. ո՞ր այգին, ո՞ւմն է, կամ մեր նանապարհի վրայ ի՞նչ ծառեր կան, որ լաւ միրգ ունին. անուշ խաղողը ո՞ր թփի վրայ է, եւ այլն: Այգիներով անցնելիս տան տէրերը իրենք էին հրամանում կամ ծանօթ այգիների մէջ հէնց մենք էինք պտուղներ եւ ծաղիկներ փառելով անցնում:

Տարիների ընթացքում այգիների մէջ եղած երթեւեկութիւնը ստեղծել էր յատուկ ներքին նանապարհ. որից սկսել էին օգտուել եւ ֆաղաֆացիները: Այս եւ այն կտուի ժամանակ, երթեւեկութիւնը դիրացնելու համար, պատերը ֆաղեղել էին, եւ նեղիկ նանապարհներ շինել: Քաղաֆացիք իրենք էլ գաղտուկ նանապարհների պէտք ունէին, որովհետեւ այս ու այն տուրքից խուսափելու համար դէս ու դէն էին փախչում: Մանաւանդ վանում շատ զարգացած էր ծխախոտի մաքանեցուցութիւնը. մաքանեցուցներն էլ իրենց համար էին երթեւեկութիւն անում, ի հարկէ. օգտուելով մեր ստեղծած դիրութիւններից եւ միջոցներից:

Ինչպէս սաացի. խմբերն ամէն օր ստիպուած էին իրենց տեղերը փոխելու. հետեւերնին կտրցնելու եւ աւելորդ ընկուարումների տեղի չտալու համար: Պէտք է խոստովանիլ, որ շատ քիչ են պատահել վանի յեղափոխական պատմութեան մէջ այսպիսի մասնակի դէպքեր, որոնցից մի ֆանիսը պատահական բնոյթ են ունեցել. եկել են ծխախոտ խուզարկելու կամ տուրք առնելու եւ զինուած խմբի ու դիմադրութեան են հանդիպել:

Այս բոլորը վերագրելու է նախ՝ նրան. որ ժողովրդի համակրութիւնը տղաների կողմն էր, երկրորդը՝ մատնիչներն իսկոյն իմացում էին եւ ահաբեկում, եւ երրորդ, որ ամենանշանաւորն է. Այգեստանի հայկական թաղը ոչ միայն հեռու էր թուրքականից. այլեւ շուկայից, որ ֆաղաֆամէջն է, որտեղ եւ կեդրոնացած էին կառավարական հիմնարկութիւնները: Այգեստանի հայկական մասում համարեա ոստիկաններ չկային, երթեւեկութիւնից եւ աչքից հեռու էր. հետեւերը կարելի էր լաւ թաքցրնել:

Կառավարութեան որոգայթներից ազատուելու համար կազմակերպուած էր հակախոզարկութիւն: Սա խը-

Այդ կարծիքը բացատրում էր երկու եղանակով. նախ՝ ռազմագիտական տեսակէտով լեռը համարում էին կռուելու, ապստամբելու համար մեծ դիրութիւն. սա, կարծեմ, աւանդական գործ է, որ արդարանում է ոչ միայն Զէյթունի եւ Սասունի օրինակներով, այլեւ հեռաւոր եւ մօտաւոր պատմական շարժումներով:

Կար եւ ազգաբնակչութեան գնահատման հարցը: Ամէնքը կարծում էին, որ ֆաղաֆացիք նեղութեան ընդունակ տարրեր չեն, այլ գիւղացիք է, որ այդ դժուարին առաջելութիւնը կարող է կատարել:

Ուրիշ պատճառներ էլ կային, բայց գլխաւորները սրանք էին: Ուստի որոշել էինք, որ մեր ռազմամթերքի մեծ մասը այդ շրջաններին տրամադրենք եւ այդ տեղերը տեղաւորուինք, աշխատինք գաւառի ժողովուրդը զինել իր միջոցներով եւ կարելու ուժերը, մանաւանդ զինուորական կազմակերպական ընդունակութիւններ ունեցողներն ուղարկել Լեռնապար:

Երբ Համազասպը եւ ընկերները յարեցին Դաշնակցութեան եւ դրութիւնը բաւական պարզուեց վանում, Իշխանն ու ընկերները դիմեցին գաւառ: Իշխանի հետ գաւառ մեկնեց եւ Ռուբէնը, իբր գործիչ:

Ռուբէնը մի տարուայ չափ մնաց վասպուրականում, մեծ մասամբ գաւառում: Նա հաստատուել էր Կարկառում, որը մեր ամենապահով բոյնն էր, բայց սուկայի դժուարութիւններով շրջապատուած էր եւ ամբողջ ձըմեռը ձիւնի պատճառով աշխարհից կտրուած էր. սնունդ չէին ստանում, կերակրում էին գարիի կամ կորեկի ալիւրով, շատ անգամ վայրի խնձորով, որ այնտեղ շատ առատ էր:

Ռուբէնը կարն ժամանակում իր ղեկավարելու ընդունակութեամբ, կազմակերպելու շնորհով, ընկերական բնաւորութեամբ կարողացել էր համակրութիւն ստեղծել իր անձի շուրջը, զինուորների եւ տեղական ժողովրդի շընորհիւ:

Ռուբէնն է եղել առաջին անգամ, որ վանի վիլայէթից կազմակերպութեան շրջանը լայնացրել է դէպի Պիթլիսի վիլայէթը, կազմակերպելով Սպարկերտ, Սամբրտանք, Շէնիճոր, Խիզան հայկական գաւառները, որոնք

րնկել էին հեռու, քրտերի մէջ եւ սուկալի վիճակ ունէին: Այնուհետեւ այդ շրջանները կապուեցին Վանի հետ, ազատագրուեցին քրտական գուլումներէց եւ վերջն էլ, պատերազմի ժամանակ, Վանի հետ կապուած լինելով կոտորածից փրկուեցին՝ շնորհիւ մեր կազմակերպական թուօցիկ խմբերի, որոնք, Ոգմեցի Լաթոյի ղեկավարութեան տակ, այդ շրջանի ժողովրդին պաշտպանեցին 12 ամիս, մինչեւ որ կամաւորները հասան եւ փրկեցին ամէնքին, տեղափոխելով Վանի շրջանի ամբողջ ժողովուրդը: Խիզանք, դրժբախտաբար, կոտորուել էր տեղական մի քանի հայ ազաների երեսից, մանաւանդ Շէյխ Սայիտ Ալիի տղային անմիջական կերպով ենթարկուած լինելու պատճառով:

1906ի գարնան մի թիւրքիմացութիւն պատահեց Ռուբէնի եւ Իշխանի միջեւ: Պատահական կերպով Կեցանից Կարկառ գալու ժամանակ Ռուբէնի խումբը սպաննում է մի քէ մի քանի քրտեր: Ճանապարհին պատահելով՝ սպանութիւնն անխուսափելի է լինում: Իշխանը նեղանում է՝ պնդելով, որ նման փայլերը կառավարութեան ուշադրութիւնը պիտի դարձնեն Կարկառի վրայ, որը պէտք է լինի մեր ապագայի գործողութիւնների կեդրոնավայրը եւ որ այժմ նախապատրաստութիւնների ժամադրավայր է...

Կային եւ ուրիշ մանր-մունր թիւրքիմացութեան պատճառներ: Ընդհարումն այնպիսի բնոյթ ստացաւ, որ Ռուբէնը հրաժարուեց Կարկառում շարունակել աշխատանքը եւ եկաւ Բաղաբէն, մեզ մօտ էլ չուզեցնալով որեւէ գործ կատարել՝ որոշեց անցնիլ Մուշ:

Տարիներ յետոյ, երբ եմ մօտից ծանօթացաւ այդ երկու ընկերների ընդունակութիւններին, կազմակերպական-գիտնութեան կարողութիւններին, եկայ այն եզրակացութեան, որ այդ թիւրքիմացութիւնները դժուար կան ներ էին. երկու ոյժեր իրար դէմ էին եկել: Ռուբէնը դեռ նոր էր. չգիտէինք, թէ ի՞նչ ոյժ պիտի դառնար: Նա իր կարողութիւններն ի յայտ բերեց Մուշում: Բայց եւ այնպէս, երեւի, բնագոյրաբար հասկացել էին, մանաւանդ Իշխանը, որ երկու ուժեղ, այն էլ նոյն կարողութիւններն ունեցող տիպեր, նոյն տեղը եւ նոյն գործը իրար հետ չեն կարող վարել. մէկը պիտի տեղի տար միւսին, կամ մէկը բնաւորութեամբ մի քիչ աւելի կակուղ պիտի լինէր. աւե-

լի գիջող, քան միւսը. իսկ երկուսի բնաւորութիւնն էլ խիստ էր, գործի սկզբունքային հարցերում՝ անգիջող:

Ինչպէս ասացի, տեղի տուեց Ռուբէնը: Նկատի ունենալով, որ այդ շրջանում գործը ստեղծել էր Իշխանը եւ ժողովուրդն աւելի կապուած էր նրա հետ, լաւագոյնն էր, որ Ռուբէնը նոր եւ ազատ վայր տեղափոխուէր: Բայց եւ այնպէս չէ կարելի ասել, որ արդարութիւնը Իշխանի կողմն էր: Ամէնքս էլ զգում էինք, որ գրկում ենք մի լաւ գործիչ ընկերից. մանաւանդ ամէնքս գիտակցում էինք, որ համաձայնուելով Ռուբէնի Մուշ գնալուն՝ ստոյգ մահուան ենք նամբում նրան:

Այս կէտը հասկանալու համար, պէտք է մի քիչ նրկարագրել Մշոյ դաշտի այն ժամանակուայ վիճակը եւ կազմակերպութեան կարգ ու կանոնը, որ բոլորովին տարբեր էր Վանի շրջանից:

Մուշը, առհասարակ, յեղափոխական գործունէութեան համար շատ դաժան պայմաններ է ներկայացրել: Այս պէտք է բացատրել մեծ մասամբ նրանով, որ նա չունէր Վանի պայմանները: Մուշ քաղաքը պզտիկ գիւղաքաղաք է, հայերը՝ փոքրաթիւ, թուրքերը՝ բարբարոս:

Մշոյ շրջանի յեղափոխութեան օրրանը հնուց անտի եղել է Սասունը, շնորհիւ իր անմատչելի լեռների, կառավարութիւնից հեռու լինելուն եւ ժողովրդի ըմբոստ ոգուն: Բայց Սասունը յեղափոխական, մանաւանդ մտաւոր կազմակերպական գործունէութեան համար շատ ամուլ հող էր: Այն ժամանակ դպրոց չկար, ժողովուրդը յետամնաց էր, բայց ըմբոստ. այնպէս որ մտաւորական ոյժերն այնտեղ խիստ նեղ դրութեան մէջ են գտնուել, եւ, առհասարակ, Մուշ-Սասունի շրջանը եղել է ռազմական-կազմակերպական շրջան. գուտ մտաւոր պրոպականտի գործունէութիւն շատ թէ քիչ եղել է Մուշ քաղաքում եւ դաշտի գիւղերում ու վանքերի մէջ, ուր դպրոցներ են գոյութիւն ունեցել:

Մշոյ գործիչների բացարձակ մեծամասնութիւնը եղել են մարտական-ռազմական գործին հմուտ եւ ընդունակ մարդիկ: Ուրիշ տիպի անձնաւորութիւններ էլ այստեղ սպրել չէին կարող. թէ մթնոլորտը եւ թէ կեանքի պայմանները հնարաւորութիւն չէին տալիս: Սրա վրայ

պէտք է աւելացնել եւ այն, որ, առհասարակ, թուրք կառավարութիւնը, շնորհիւ Սասունի անառիկութեան եւ իր անյաջող փորձերին հետեւանով, Մշոյ վրայ բացառիկ ուշադրութիւն էր դարձրել, կանոնաւոր զօրք էր պահում այնտեղ: Այդ շրջանի բիւրտ աշիրաթները նոյնպէս ռազմական կարողութիւն եւ պատրաստութիւններ ունէին:

Այս բոլոր արտակարգ պայմանների վրայ աւելացրէք եւ այն, որ Սասունի 1904ի շարժումը վիժել էր. թուրք կառավարութեան հորդաներն ընկել էին Սասունի եւ դաշտի գիւղերը, հնձում էին կազմակերպութեան վերջին մընացորդները, սալսափեցնում ժողովրդին, զանգուածային ձերբակալութիւններ էին անում, զէնքեր ժողովում, գիւղեր հրկիզում, երբ դիսադրութեան էին հանդիպում: Կարն՝ այդ ժամանակ Մշոյ դաշտը դժոխքի էր վերածուած, իսկ յեղափոխական գործիչները դժոխքի մէջ էին: Ժողովուրդը այս բոլորի ազդեցութեան տակ յուսալքուել էր. յեղափոխական գործիչներին և խմբերին ապաստան և սնունդ չէին տալիս շատ վայրերի մէջ: Փախստականները հարիւրներով էին հաշոււում եւ թափառում էին այս եւ այն շրջանները. ամիս չէր անցնում, որ փախստական խմբերի եւ կառավարութեան զօրքերի կամ ոստիկանութեան միջեւ ընդհարումներ չպատահէին:

Շատ անգամ պատահել է, որ յեղափոխական խմբերն ամիսներով ապաստանել են Ս. Կարապետի անտառը, արջի պէս հողի տակ են մտել, օրերով եւ շաբաթներով կորել են, ձմեռները ձիւների տակ են պահուել. կամ լեռներում ֆարայրների մէջ են ապաստանարան գտել, մեծ մասամբ ֆաղցած ու ցրտահար:

Փախստականների մեծ մասը ապաստան էին գրտնում վանքի շրջանում՝ այնտեղ ապրելու կամ այնտեղից արտասահման անցնելու համար: Փախստականներին վան փոխադրող զինուոր գործիչները երբ վան էին հասնում, կարծես թէ դժոխքից արժայութիւն էին փոխում: Ինչպէս իրենք էին ասում, կարծես վանը Թուրքիայի մասը չլինէր, այլ ազատ երկիր:

Ահա այսպիսի դժոխք էր գնում Ռուրէնը: Ընկերներից ոմանք կարծում էին, որ տեղ չի հասնի, նանապարհին կը սպաննուի անխուսափելի ընդհարումների ժամա-

նակ: Ուրիշներս էլ կարծում էինք, որ եթէ նոյնիսկ տեղ հասնի, չի կարող դիմանալ վերոյիշեալ դժոխային պայմաններին: Իսկ յոռետեսները կարծում էին, որ նա չի կարող դեր կատարել զինուորական կոպիտ ուժերի հետ, որ վերջինները կուլ կը տան նրան մի քանի ամսից ռեւէ կռուի ժամանակ: Վերջապէս, ոչ ոք լաւ բան չէր մտածում: Զգիտես՝ ի՞նչ էր մտածում ինքը, բայց գնաց շատ վստահութեամբ եւ կատարեալ գիտակցութեամբ:

Սրանից յետոյ շատ ջուր անցաւ կամուրջի տակից: Ռուրէնը համարեա երեք տարի գործեց դժոխքի մէջ:

Գէորգ Զավուշից յետոյ նա միակն էր, որ անցաւ զինուորական խմբերի գլուխը: Հէնց Գէորգի սպանութեան օրը, Սուլուխի կռուին, Ռուրէնը հերոսական կռիւ մղեց եւ մեծ վարպետութեամբ խումբը կառավարեց ու մնացորդները փրկեց: Այնուհետեւ ունեցաւ է՛լ աւելի սուկալի կռիւներ, յաղթանակեց բոլոր դժուարութիւններին եւ՝ «Հիւրիէթ»ի օրը, թուրք թնդանօթների եւ զօրքերի առաջ անցած՝ իջաւ Մուշ եւ խանդավառութեամբ ընդունուեց:

Ազատութեան չորս տարիները նա ֆաշուեց ժընեւ եւ նուրբուեց գիտութեան, բայց հայրենիքի ահագանգը, ընկերների թախանձանքը, մանաւանդ Զաւարեանի անյաջողութիւնը Մշոյ մէջ եւ նրա ստիպումները, որ Ռուրէնը անպայման անցնի Մուշ, ստիպեցին նրան 1913ին գալու Երկիր:

Երկրորդ անգամ նա Մուշ մտաւ խաղաղարար ձիւթնին ձեռքը: Նա գալիս էր իբրեւ թեմական տեսուչ խաղաղ կուլտուրական գործով, բայց նակատագիրը նրան չէր ստեղծել խաղաղ աշխատանքի համար. բախտը նրան վերապահել էր դժոխային պայմաններ:

Դպրոցական գործը հազիւ մի տարի ու կէս տեւեց: Այս կարն ժամանակում նա համարեա թէ Մշոյ դաշտի բոլոր, ինչպէս եւ Սասունի շատ գիւղերում դպրոցներ բաց արաւ, շէնքեր շինել տուեց, այն էլ մեծ մասամբ տեղական միջոցներով:

Այդպէս էր դրութիւնը, երբ պայթեց համաշխարհային պատերազմը: Ռուրէնն ասում էր, որ բարեմորոգութիւնների հարցը նոր փոթորիկ պիտի բերէր հայ ժողո-

վրդի գլխին: Նա աւելի, քան ուրիշները, ռազմական մեծ պատրաստութիւն էր տեսել:

Պէտք է ասել և այն, որ նա աւելի քան «թրքաւեր» էր իր հայեացքներով եւ գործունէութեամբ. շատ մօտ յարաբերութեան մէջ էր թուրք գործիչների հետ. ամէն բան անում էր, որ հայ-թրքական յարաբերութիւնները նորմալ ընթացք ունենան. բայց երկրի գործիչներից առաջինն էր, որ իրենից անկախ պատմառոններով փախստական դարձաւ:

Այնուհետեւ 1915ի ամառուայ կոտորածների ժամանակ նա կազմակերպեց ու ղեկավարեց Սասունի հերոսական դիմադրութիւնը, որի վախճանն եղաւ այնպէս, ինչպէս միւս վայրերի հերոսական դիմադրութիւնները. կըտըրուած դրսի օգնութիւնից՝ նրանք կռուեցին մինչեւ իրենց ոյժերի վերջին կաթիլը եւ ընկան հերոսաբար:

Ընկերների մեծ մասը նահատակուեց Սասունում, իսկ ինքը մի փոքրիկ խմբով, Վահան Փափագեանի հետ, երկար թափառումներից եւ գերմարդկային տանջանքներ կրելուց յետոյ, կարողացաւ անցնիլ ռուսական սահմանը:

Այս է ահա ուրուագիծը այն սոսկալի գործունէութեան, որ վիճակուեց Ռուբէնին եւ որ վիճակուած չէ մեր յեղափոխական գործիչներից եւ ոչ մէկին: Այդ տեսակէտով ամենահետաքրքիրը, տանջանքներով, դժուարութիւններով և առատ հերոսական դրուագներով ամենահարուստը՝ Մուշ-Սասունի գործունէութիւնն է 1905-1915ին, մի ամբողջ տասնամեակ:

**

Ինչպէս յայտնի է, 1905ի Փետրուարին պայթեց Բագուում առաջին հայ-թուրքական ընդհարումը, որ հըրդեհի պէս բռնկեցրեց եւ ամբողջ Կովկասը:

Յայտնի է եւ այն, որ այդ ընդհարումների ժամանակ Հ. Յ. Դաշնակցութիւնն էր, որ իր կազմակերպուած մեքենայով եւ պատրաստի մարտական-ռազմական ոյժով կարողացաւ դիմադրել թուրքական հորդաներին եւ փրկել կովկասահայ ժողովուրդը:

Եկեղեցական դէպքերից յետոյ, սա երկրորդ գանգուածային շարժումն էր Կովկասում, որ Հ. Յ. Դաշնակ-

ցութեան ստիպեց իր ուժերի և ուշադրութեան առաւելագոյնը կեդրոնացնել Կովկաս: Իսկ, երբ պայթեց ռուսական մեծ յեղափոխութիւնը, Հ. Յ. Դաշնակցութեան, իբրեւ յեղափոխական սոցիալիստական կուսակցութեան վրայ՝ ընկաւ կովկասեան հայ աշխատաւորութեան կազմակերպման, նրա դասակարգային պայքարի, ինչպէս եւ, առհասարակ, քաղաքական-հասարակական կռուին մասնակցելու եւ ղեկավարելու պարտականութիւնը:

Կովկասում կենդանի գործ էր ստեղծուել. կուսակցութեան 15-ամեայ ռազմական-մարտական գործունէութիւնը հասցրել էր մարտիկների մի մեծ բանակ, նոյնը եւ յեղափոխական - քաղաքական գործունէութեան համար պատրաստ մտաւորականութեան մի մեծ պահեստ, որը ամբողջապէս նուիրուեց կովկասեան գործունէութեան:

Այստեղ տեղը չէ Դաշնակցութեան կովկասեան գործունէութեան գնահատականը տալու եւ ոչ էլ իմ նիւթի սահմանների մէջն է մտնում այդ: Ես կ'ուզէի միայն նկարագրել այն անդրադարձումները, ինչ որ ունեցել է կովկասեան այդ գործունէութիւնը երկրի՝ թրքահայ հատուածի գործունէութեան վրայ:

Նախ եւ առաջ նկատեմ, որ հայ-թուրքական ընդհարումները Կովկասում որեւէ ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւն չունեցան օսմանեան թուրքերի եւ ֆուրտերի վրայ: Ուրեմն, այդ ընդհարումները նոր բարդութիւններ եւ անակնկալներ չբերին, բարեբախտաբար, առանց այն էլ աւերուած Հայաստանի հայ-թուրքական փոխ-յարաբերութիւնների մէջ:

Կարծեմ, նոյնն է եղել եւ Պարսկաստանի վերաբերմամբ: Այնտեղ էլ ուրեւ պաղութիւն կամ թշնամական արտայայտութիւն չի նկատուել: Եւ սա մի փառահեղ փաստ է այն ծակ դիւանագէտների դէմ, որոնք ի պահանջել հարկին, իրենց դիմակաւոր գործունէութիւնը ծածկելու համար, միշտ յենուել են իսլամական տարրերի մոլեռանդութեան վրայ, որ, իբր թէ, ժողովուրդը ինքնաբերաբար է կոտորում: Ապագայում մենք կը տեսնենք, որ բոլոր կոտորածներն եւ ընդհարումները եղել են թուրք կառավարութեան կամ նրա վերին խաւերի թելադրութեամբ, մանաւանդ կազմակերպութեամբ եւ ղեկավարութեամբ: Այս

տպաւորութիւնն էր տիրում այն ժամանակ երկրում:

Դալով հայ-թուրքական կովկասեան ընդհարումնե-
րի ազդեցութեան հայ ժողովրդի վրայ՝ պէտէ է նկատել,
որ նա շատ մեծ էր: Հայերի ամէն մի յաջողութիւն կամ
յաղթանակ մեծ ցնծութեամբ էր ընդունում հայ ժողո-
վրդի կողմից: Արտասահմանից եկած լրագիրները լափ-
ում էին ֆայաֆներում եւ գիւղերում, բերնէ բերան հը-
րաշֆներ էին պատում հայ խմբերի գործունէութեան մա-
սին, մանաւանդ որ միշտ նոր եկողները նոր պատմութիւն-
ներ էին բերում իրենց հետ:

Տրամադրութեան բարձրացումը կարելի է բացատ-
րել ազգային եւ հոգեբանական տեսակետով: Այն մեծ բա-
րոյական կայր, որ կար երկրի ժողովրդի եւ կովկասա-
հայ ժողովրդի միջեւ, այն մեծ հետաքրքրութիւնը եւ այն
մեծ գաղափարը, թէ կովկասահայ ժողովուրդն է իր միակ
պաշտպանը, սեւ օրուայ օգնութեան հասնողը, իր վշտա-
կիցն ու օգնականը ամէն գործի մէջ՝ բնական էր, որ սու-
կումով պիտի համակէր թրքահայերին, երբ լսէին, որ
թուրքերը փորձում են կոտորել եւ կովկասահայերին: Ու-
րեմն իրենց համար ոչ մի հանգիստ ապաստանարան էլ
չպիտի մնայ: Ուրեմն Ռուսաստանն էլ կոտորել է տալիս
հայերին: Որովհետեւ թրքահայերը փորձառաբար գի-
տէին, որ առանց կառավարութեան մասնակցութեան կո-
տորած կամ շարժում չի լինի: Եւ սա մեծապէս ազդեց ա-
ռանց այս էլ կոտորածների մէջ մեղսակից նանաչուած
նուս պետութեան դէմ է՛լ արեւի ատելութեան թոյն ամ-
բարելու թրքահայ ժողովրդի մէջ:

Այդ երեւոյթն ուներ իր հոգեբանական կողմը. չէ՞
որ նրանք ատելութեան թոյնով լցուած էին դէպի թուր-
քերը. մանաւանդ իմացել էին, որ յաջողութիւնը հայերի
կողմն էր: Դարերի վրէժն էր ետում թրքահայերի մէջ:

Մեր բոլոր մարտիկները ձգտում էին կովկաս անց-
նիլ ընդհարումներին մասնակցելու համար:

— Պարոն, քառասուն տարի է Ռուսախայերը մեզի
իմտասի (օղնութեան) կու գան. վախտը (ասենք) հասել
է. թո՛ղ ասը երթանք՝ մենք ալ ինոնց օղնինք. անոնք էլ
«Աղգութիւն» են...

Ի հարկէ, որեւէ օգնութիւն կազմակերպելու կամ

ուղարկելու փորձ չի եղել. անհատներ էին, որոնք այս
կամ այն պատրուակով դուրս էին գալիս, եւ յետոյ լսում
էինք, որ մտել են կովկասեան ինֆնապաշտպանութեան
խմբերի մէջ:

Ահա այս էր հայ-թուրքական ընդհարումների ազ-
դեցութիւնը գէթ Վասպուրականի շրջանի վրայ:

Այս ազդեցութիւնը ինչքան որ լաւ հետեւանք ունե-
ցաւ ժողովրդի վրայ, սակայն նոյն ընդհարումները միա-
ժամանակ բացասական ազդեցութիւն ունեցան Երկրի կազ-
մակերպական գործունէութեան վրայ:

Կովկասը ամբողջապէս տարուած լինելով տեղական
գործունէութեամբ, մանաւանդ 1905ին, համարեա երկ-
րորդական տեղ էր տալիս Երկրի գործունէութեան: Այն-
պէս որ աշխատանքի թափը պակասեց 1905ին: Բայց դրա
փոխարէն 1905ի աշունից սկսած, մանաւանդ 1906ին այն-
պիտի ծաւալ եւ բովանդակութիւն ստացաւ, որ այդ 2-3
տարուայ ընթացքում կովկասից Երկիր թափուած ռազ-
մամթերքն ու զէնքը, դրամական միջոցներն ու ֆանակը
գործիչների, մի քանի անգամ արեւի բարձր էին, քան
նախկին 15 տարիներին ամբողջ ուղարկուածները միասին
վերցրած:

Այնպէս որ նրանք, որոնք կասկածում են, թէ կով-
կասեան ընդհարումները կամ Դաշնակցութեան կովկաս-
եան գործունէութիւնը կարող էր խանգարել թրքահայ դա-
տին կամ շարժման, չարաչար սխալում են: Ապագայ
պատմութիւնը ցոյց պիտի տայ, որ, ընդհակառակը, դա
էլ արեւի զարգացրել եւ ուժեղացրել է գործունէութիւնը:
Այնպէս որ այն ժամանակ Դաշնակցութեան դէմ ստեղծ-
ուած շարժումը, որ յետոյ ստացաւ «Միհրանական»
անուն, ոչ մի հիմք եւ կապ չունէր Երկրի հետ, այլ բա-
ցարձակապէս կովկասում թխուած, կովկաս մնացած հայ
մութ ոյժերի եւ ռուս կառավարութեան սադրանքների ար-
դիւնքն էր: Միհրանական շարժման դէմ արտայայտուե-
ցին Երկրի բոլոր մարմիններն ու գործիչները:

Երկրի մարմինների ու գործիչների այս որոշ դիրքն
էր, որ վիեճակաւ ժողովում ստիպեց կովկաս եւ արտա-
սահման ապաստանած մի քանի գործիչներին տեղի տալ,
մի կողմ թողնել անջատական-բաժանման խնդիրները,

համերաշխաբար գործի լծուլի եւ նոր ստեղծուած միջոց-
ները աւելի օգտագործել երկրի գործունէութեան համար:

Թէեւ հայ-քրքական ընդհարումները որեւէ ազդե-
ցութիւն չարին Պարսկաստանի եւ Տանկաստանի ժողո-
վուրդների եւ պետութեանց վրայ, բայց դրա փոխարէն
խոշոր ազդեցութիւն ունեցաւ ռուսական մեծ յեղափոխու-
թիւնը (1905) Պարսկաստանում եւ թէ Թուրքիայում:

Ռուսական յեղափոխութեան ալիքները կովկասից
մտան Ատրպատական, այնտեղ էլ «հող եւ ազատութիւն»
գաղափարները եւ պահանջները օրուայ նշանաբան դար-
ձան. քայքայուեց հին բռնակալութիւնը եւ նրա փոխարէն
ստեղծուեց ժողովրդական կառավարութիւն:

Դրանք պարսկական «Անջումանների» հրաշալի օ-
րերն էին. բոլոր խաները, բռնակալները եւ բէյերը փա-
խել էին երկրից. ժողովուրդը կամաց-կամաց տէր էր
դառնում իր նահատակներին:

Ահա այս «անջումանների» շարժումը, «հողի եւ ա-
զատութեան» գաղափարներն էին, որ արտասահմանից
կամաց-կամաց անցան Թուրքիա, հեղեղեցին սուբոթի Եր-
կիրը եւ ստեղծեցին քրքական ըմբոստութիւններ, Գաս-
թեմունի, Էրզրում, Վան եւայլն, մինչեւ որ Մակեդոնիա-
յի բարեկարգումների սպառնալիքը, Երոպայի վերահըս-
կիչների ներկայութիւնը, Մակեդոնիոյ անջատուելու վը-
տանգը միանգամից ցնցեցին թուրքերին եւ ստեղծեցին
1908ի Յուլիսեան յեղափոխութիւնը:

Թրքական եւ պարսկական յեղափոխութիւնները
պատահականի չեն եւ արդիւնք ռուսականի: Բայց եւ այն-
պէս կարելի է ասել, որ բացարձակապէս Պարսկաստանի
եւ մասնաւորապէս Թուրքիոյ յեղափոխութեան չգարգա-
նալը, այլեւ հակազդեցութեան մէջ ընկնելը, դարձեալ
ռուսական հակազդեցութեան արդիւնքն էր: Եթէ 1905ին
ռուսական յեղափոխութիւնը յաղթանակէր եւ մարմա-
ւորուէր, նա կը պահպանէր եւ պարսկական յեղափոխու-
թիւնը եւ մանաւանդ թուրքականը:

Եւ ո՞վ կարող է հերքել, որ Յարի համար ցանկալի
չէր, որ իր դրացի երկրներում, որոնք աւելի յետադէմ
էին, սահմանադրական կարգեր լինէին:

**

1905ին կազմակերպական գործի մէջ աչֆի ընկնողը
մի քանի նոր շրջանների երեւան գալն է: Արդէն խօսեցինք
որ Յարութիւնը իր վրայ էր վերցրել Արեւիկի շրջանը:

Արեւիկ ասելով, պէտք է հասկանալ բաւական մեծ
շրջան: Սահմանագլխի Ախոռիկ գիւղից, Հազարէն, Բո-
ղագ-Քեսսան, Մանարան, Սարայ. միւս կողմից, արեւել-
քից՝ Աւան, Զարենց, Լիւմ, հիւսիսից՝ մինչեւ Թիմարի
սահմանները, կոն-Փուխեչիկ, նոյնիսկ Գործոթ, Քեաբա-
քիկ. նոյնիսկ Արեւիկից մինչեւ քաղաք բոլոր գիւղերը՝
Սղգա, Շուշանց եւայլն:

Կազմակերպուել էին եւ հոշաբի շրջանի գիւղերը:
Առաջ այնտեղ մեծ ունէիւնք միայն անհատ ընկերներ կամ
փոքրիկ խմբակներ:

Նոյնը պիտի ասել եւ Վանի Լնի հիւսիսային փի
գաւառների՝ Արեւէշի եւ Ալջաւազի մասին: Թէեւ այնտեղ
յատուկ մարդիկ չէինք կարող ուղարկել, մանաւանդ զին-
ուած խմբեր, բայց տեղական ուժերով բաւական կազմա-
կերպութիւն առաջացել էր, եւ բաւական հասարակական
կեանք էր ստեղծուել, մանաւանդ Արեւէշ քաղաքում եւ Ալ-
ջաւազի մեծ գիւղերում:

Միւս կողմից՝ մեր կազմակերպութիւնը լնի հարա-
ւային փիերի ծայրերից հասել էր մինչեւ Գիւզալ Դարէ,
Բիթլիսի մօտ:

Ռազմամթերքի փոխադրութիւնը կրկնապատկուել
էր, մանաւանդ 1905ի աշնանային ամիսներին:

Ստեղծուել էր գէնֆի ահագին շուկայ, որ տեղին
վրայ մեծ հնարաւորութիւն էր տալիս ժողովրդեան հա-
մար գէնֆ ձեռք բերելու:

Մի խօսքով, գործերն օրը օրին ընդարձակուում էին.
եւ եղած կազմակերպական ոյժերը անկարող էին գոհա-
ցում տալու, որովհետեւ վանեցի լեզալ ընկերները չէին
կարողանում զբաղուել գաւառական, փոխադրական լայն
կազմակերպական ներքին աշխատանքներով. մեծ ինք-
նորս նրանց արհեստական կերպով հեռու էինք պահում,
որ չվտանգուէին եւ լեզալութեան առաւելութիւնից չզրը-
կուէին: Նրանք հրապարակի վրայ եղող մեր աչֆերն էին.

եթէ նրանք էլ փախստական դառնային եւ մեզ հետ փակուէին տների անկիւններում, մեր տեսողութեան սահմանն աւելի կը նեղացնէին:

Ուստի ստիպուած էինք դիմել Կովկաս, որ նոր ընկերներ ուղարկէին: Այս ստիպողականութիւնը է՛լ աւելի պարտադիր դարձաւ 1906ի սկիզբը, ձմրանը, երբ ես հիւանդացայ այն աստիճան, որ երեք ամիս անկողին ընկայ եւ անընդունակ դարձայ որեւէ աշխատանքի:

Թէ ինչ սոսկալի պատուհաս է հիւանդութիւնը երկրի փախստական յեղափոխականների համար՝ այդ մասին ես խօսել եմ: Բայց, երբ դժբախտութիւնն ինձ էլ հասաւ, նոր զգացի անոր ծանրութիւնը:

Ես ոսկրացաւով էի հիւանդ: Ունէի բարձր տաճութիւն եւ երկու աչքերս էլ սաստիկ ցաւում էին: Յետոյ, իմացայ, որ աչքացաւս իրիտ է եղել. դրա հետեւանքով ալ աջ աչքս կուրացաւ. իսկ մէկ աչքով ամիսներ շարունակ գրաւոր աշխատանք չէի կարող կատարել:

Աւելի սոսկալի էր ոսկրացաւը, որովհետեւ երբ աչքս չէր բացում, ձեռներս բռնած պտտցնում էին. իսկ երբ սկսեցին ոտներս էլ ցաւիլ, դժոխային կացութիւն ստեղծուեց ո՛չ միայն ինձ, այլեւ ընկերների համար:

Կառավարութիւնն իմացել էր իմ հիւանդ լինելը եւ հետապնդումներն ու խուզարկութիւնները խստացրել դիւրութեամբ ինձ որսալու համար: Ամէն օր առաւօտ եւ երեկոյեան պիտի տեղափոխուէինք մի տնից միւսը, շատ անգամ մի թաղից միւս հեռաւոր թաղը, հետքս կորցնելու համար:

Երեւակայեցէք ընկերների վիճակը: Խեղճ Սողոմ, յանախ, ստիպուած էր լինում շալակել ե՛ւ ինձ, եւ մեր բեռները: Մինակ Սողոմ էր, որ կարող էր ինձ շալակել: Տեղացի միւս ընկերներն ու զինուորները այդ ոյժն ու կարողութիւնը չունէին:

Գիշերները մօտս էին գալիս հերթով Ամերիկեան հիւանդանոցի հիւանդապահ, Ֆելտշեր եւ դեղագործ տղաները, մանաւանդ Վաղարշակ Տէր Յարութիւնեանը, Ստեփանը եւ հիւանդանոցի Արմենակը, որոնք անժամ ամբողջ գիշերները հսկում էին եւ ամէն միջոցի դիմում, որ ցաւերս, մանաւանդ աչքիս ցաւը մի քիչ մեղմէին:

Այս տղաները, բոլորն էլ գործնականով սովորած մարդիկ էին: Ինքը Բժիշկ Աշրքը միսիոնար բժիշկ էր. լաւ վիրաբոյժ էր, բայց ներքին հիւանդութիւններից, մանաւանդ աչքացաւից ոչինչ չէր հասկանում, թէ եւ իբրեւ միսիոնար բժիշկ ամէն բանի ձեռք էր զարնում, մինչեւ անգամ ասամնաբուժութիւն էր անում... Տոբ. Աշրքի անփորձութեան պատճառով էր, որ աչքերիցս մէկը փնացաւ, որովհետեւ չէր հասկանում, որ եղջերաթաղանդի բորբոքման ժամանակ անհրաժեշտ էր *սարուպին* կաթեցնել կսնունդաւորաբար: Այդ բանը ես իրեն յիշեցնում էի, բայց ինքը պնդում էր որ վնասակար է:

Այսպէս հիւանդ, տնից տուն թափառելով ստիպուած էի մեծ մասամբ գործերը ղեկավարել անկողնի մէջ՝ նամակներ եւ հրահանգներ թելադրելով:

Այդ սեւ օրերից չեմ մոռանայ մի սոսկալի օր: Չատկի թէ Բարեկենդանի օրերից մէկն էր. Տիգրանը պատրաստում էր խմբով Թիմար գնալու: Նա էլ զարմաւայի տարօրինակութիւններ ունէր: Մենք բոլորս կարեւորութիւն չէինք տալիս տօներին և Չատկին, բայց զինուորները չէին կարողանում սառնարիւն անցկացնել տօները. չէին սիրում այդպիսի օրեր ճանապարհ կամ գործի գնալ. մընում էին եւ սիրում էին, որ այդ գիշերը բոլորս միասին լինէինք եւ «ուրախանայինք»: Չակերտներով ուրախութիւն եմ ասում, որովհետեւ, երբ բոլորակ հաւաքում էինք, փոխանակ ուրախանալու, տխրում էինք, յիշում էինք մեր տունը, մայրը, հարազատները. որը իր կինն ու երեխաները եւ տխրում: Մեր կեանքի, մանաւանդ ժողովրդական տիպի մարդկանց համար այդպիսի օրերը սուգի օրերի նման էին: Ի հարկէ, կային եւ «արսըղներ», որոնք ուրախանում էին, պարում, երգում եւ այլն: Դրանք մեծ մասամբ տեղացիներն էին: Վանեցիք յայտնի են իրենց ուրախութեամբ եւ ֆէֆերով:

Ահա այսպիսի մի օր, ճիշդ Չատկի գիշերը, Տիգրանը որոշում է մեկնիլ խմբով: Անհրաժեշտ էր տեղային ճանապարհներին ծանօթ մի առաջնորդ: Վիճակն ընկաւ Յանկոյսների թաղեցի մեր լաւ զինուորներից մէկին, Արէս Տանձոյեանին, որը մի տէրորի պատճառով փախստական էր դարձել. շատ կորիճ, ազնիւ և ամէնքի հաւակրութեան արժանացած տղայ էր:

Երբ Տիգրանը կարգադրել էր նրան պատրաստ լինելու, նա մերժել էր: Խնդիրը հասար ինձ: Կանչել տուի Արէսին, մեղմ կերպով համոզեցի, որ գնայ, ընդունելով հանդերձ, որ Տիգրանի արածն անպատեհութիւն է... Խեղճ Արէսը համակերպուեց, բայց բացականէց:

— Պարո՛ն, քո հրամանը պիտի կատարեմ. բայց սիրտս կ'ըսէ, որ այս անգամ ինձ հետ բան մը պիտի ըլլայ...

— Ոչինչ չի լինիր, Արէս ջան, գնա՛:

Խեղճը գնաց եւ իբրօք Սղգա գիւղում առաջին օրը հանգիստ նստած ժամանակ, գիւղացի անփորձ զինուորներից մէկը, բրաունինկ ատրճանակի հետ խաղալիս խփել էր Արէսի փորին եւ ծանրապէս վիրաւորել...

Գժբախտ տղային «նաշի» մէջ դրած բերել են Ամերիկեան հիւանդանոցը: Տոբօրը ասել էր, որ յոյս չկայ. ինքն էլ նախազգացել էր, որ պիտի մեռնի եւ, հիւանդանոց հասնելուն պէս, ասել էր.

— Գնացէք, Պր. Արամին լուր տուէք, որ պիտի մեռնիմ. Թո՛ղ գայ՝ մի վերջին անգամ տեսնուիմք:

Ես այդ օրը Արտաշէսեանց մայրիկի տանն էի, Ջանգիւլեանի տունը: Հիւանդ, օրը ցերեկով ուզեցի գնալ: Մէկ էլ լուր տուին, որ փոխ Ադահը լուր է առել, որ վիրաւոր մարդ են բերել հիւանդանոց. շան պէս հոտոտում է հիւանդանոցի շուրջը: Լուր եմ ուղարկում, որ մինչեւ երեկոյեան համբերի. մութը ընկածին պէս, ինչպէս էլ լինի կը գամ:

Ամբողջ օրը խեղճ տղան տառապում է եւ ճիշդ մութը ընկնելուց երկու ժամ առաջ հոգին փչում է՝ էլ անկարող լինելով սպասել ինձ:

Արէսի մահը սուկալի ազդեց ամէնքիս վրայ: Շատ մահ էինք տեսել. ընկերներից շատերը սպանուել կամ մեռել էին. բայց Արէսի մահը սուկալի էր. խեղճը մարգարէացել էր. տօն օրը սեւ եղաւ ամէնքիս գլխին:

Դեռ նոր էին լուր բերել, որ Արէսը մեռել է. մէկ էլ յանկարծ, քաղաքից սուրհանդակ եկաւ, որ տեղս մատնուած է, պէտք է տեղափոխուեմ եւ զգուշութիւններ ձեռք առնեմ:

Բոլորիս տրամադրութիւնը այնքան վատ էր, որ.

կարծես մենք էլ մահ էինք փնտրում եւ կարծես այդ լուրը փոխանակ տխրեցնելու, ուրախացրեց: «Աւելի լաւ, Թո՛ղ մի օր առաջ վերջանայ»... Ջարմանալի է մարդու, այն էլ փախստականի հոգեբանութիւնը. լուրերը եւ դէպքերը երբ իրար վրայ են հասնում, մարդ աւելի է ամրապնդում...

Այս տրամադրութեան տակ պատրաստում էի փոխադրուել. դեռ կարգին չէր մթնել, արդէն դուրս ելանք, ի հարկէ, այգու դռնից, Թութունջի հաշիկեանց նեղ ջրի նամբից. մի գաւեշտ պատահեց, որը տրամադրութիւնս մի քիչ փոխեց:

Հասել էինք ջրի դրան առաջ. առուն այդտեղ լին էր գոյացրել. մի փոքրիկ անկիւն կար դիմացը. պիտի ցատկէինք նրա վրայ եւ ապա մտնէինք ցածիկ ու նեղ ջրի դռնով Թութունջի հաշիկեանց այգին: Ահա ճիշդ այդ անկիւնը կանգնած տեսանք մի խրոխտ, գլուխը բարձր բռնած մարդ: Առաջից գնում էր Արմենակը: Խնդրեց մարդուն, որ շուտով առաջ անցնի, որպէս զի ես կարողանամ դիրութեամբ անցնիլ. ոտներս ցաւում էին. լաւ չէի կարող ցատկել: Մարդը, որ ըստ սովորութեան զինուած յեղափոխական տեսնելուն պէս իսկոյն պիտի ենթարկուէր եւ հրամանը կատարէր, ոչ միայն կանգնած տեղը մնաց, այլեւ մեզ մի լաւ հայիտյանք տուեց, էլ հէր, էլ մէր. բան չթողեց, որ չասէր.

— Ի՞նչ էք ընկել խալխի այգիները եւ հլա հրամաններ էլ էք արձակում...

Տղաքը հասկացան, որ հարբած է: Բայց ես այնքան էի գայրացած, որ տանել չկարողացայ: Նրա կողմը ցատկեցի ու ապտակ տալս եւ ջրի մէջ գլորուիլը մէկ եղաւ: Բարեբախտաբար, ձեռքի հացը թռաւ թմբի վրայ եւ չկեղտոտուեց: Յետոյ պոռացի վրան, որ, եթէ համարձակուի մէկ անգամ էլ հարբել, շան սատակ պիտի անենք...

Կարգադրեցի, որ Արմենակը հացը վերցնի եւ տայ իր կնոջը, որը մօտի տանն էր, յայտնելով, որ գամ ջրից հանեն մարդուն, որը յամառութեամբ շարունակում էր նստած մնալ ջրի մէջ գոմէշի պէս, առանց ձայն ու ծպտուն հանելու:

Մինչ տղաները կատակներ էին անում, կինը հասաւ եւ ոտներս ընկաւ.

— Աման, Պր. Արամ, սասկեցրէք այս չանը. ամէն-
քիս կը ջարդէ. ս'լ չեմ կրնար ստոր տարտը քաշել. ունե-
ցած չունեցածը կը տայ կը խմի. տղաքս անօթի կը կո-
տորուին. ձեր բախտն եմ ընկել, մի թամբիա արէք...

— Գոյրիկ, սասկ Ենք. եթէ մէկ էլ խմէ, գլուխը
կտրելու ենք:

Մի ժամանակ անցած, երբ նորից այդ թաղն էինք,
նիշդ մայրիկենց տանը, մի օր, յանկարծ, մի կին ներս
մտաւ սենեակ եւ առանց բարեւի նետուեց ոտներս, սկսեց
լալ ու համբուրել: Ես խիստ գայրացայ եւ նստեցրի. չէի
սիրում այդպիսի տեսարաններ, որ սովորել էին կատալել
թուրք եւ ֆիւրսերին:

Սպասում էի, որ մի խնդիր ունի, ուզում է այդ ձե-
ւով ազդել վրաս եւ գործադրել սալ: Յետոյ մայրիկը բա-
ցատրեց, որ այն հարբեցողին կինն է. եկել է շնորհակա-
լութիւն յայտնելու: Մարդը այն օրից մինչեւ այսօր ձգել
է խմելը եւ սկսել է սուն-տեղ կարգի բերել. խմելու հա-
մար ծախուած պղնձեղէնների փոխարէն նորերն է գնել,
մի խօսքով՝ մարդ է դարձել:

Մի ֆիչ ծիծաղեցիմք եւ փառք տուիմք պատահակա-
նութեան, որ խեղճ կնոջն օգտակար եղաւ:

Աչքս եւ ոտքս շարունակում էին ցաւել, մանաւանդ
աչքս, որ ներսկել էր եւ միշտ արիւնով լիքն էր լինում:

Յուսահատուած Տոքթ. ԱշԷրթը՝ Թէոսը կանչել է
տալիս մի պառաւի, որին անուանում էր «Վարդգէսի հօ-
բախոյր»: Այդպէս էինք կանչում եւ նրա տանն էինք ապ-
րում շատ ժամանակ:

«Հօրախոյրը» վանում յայտնի ակնարոյժ էր. Մըս-
րայ շաքար կամ նարաթ էր ձգում աչքը, մանր ազած.
դրանով թէ արիւն էր ֆաշում եւ թէ սպիտակուցը նօսրա-
ցնում:

Յուսահատութիւնից դիմում ենք եւ այդ միջոցին.
չգիտեմ ա՞յդ էր պատճառը թէ ժամանակը հասել էր՝ աչ-
քս սկսեց կամաց կամաց հանգստանալ:

Մնում էր ոտս: Մի օր հազիւ կարողացայ ինձ ձգել
Արամ Բուրնագեանենց տունը, որ մեր լաւ տղաներից մէկն
էր: Արամի հայրը՝ կարապետ աղէն՝ հին յեղափոխական

էր, մեզ հետ լաւ. յանախ էր կանչում մեզ եւ հիւրասիրում
իր հաշուին:

Իրիկունը, երբ տեղ հասանք, ոտքս սկսեց աւելի
ցաւել եւ ինձ անհանգստացնել: Կարապետ աղէն ասաց, որ
լսել է ոտքիս ցաւի մասին եւ ոտքերիս ցաւը մի հասարակ
միջոցով կարելի է բժշկել: Խնդրեցիմք նրան, բայց նրա
առաջարկը այնքան անմեղ բան էր, որ զարմացանք: Ոտ-
քերին, ծնկներին պէտք է կապի «անլուայ բուրդ»: Յատ-
կապէս շեշտում էր «անլուայ», կարծես թէ անլուայու-
թեան մէջ մի շնորհի կար:

Չգիտեմ, ո՞րտեղից ինքն իսկոյն գտաւ բուրդը, իր
ձեռքով կապեց, եւ ես անկողին մտայ: Գիշերը հանգիստ
փնեցի: Երբ զարթնեցի եւ ուզեցի դուրս գնալ, զգուշու-
թեամբ ոտքս շարժեցի. տեսայ, որ բան չկայ. ոտքի կանգ-
նեցի. տեսայ, որ կարող եմ եւ չի ցաւում: Վերջապէս,
շարժուեցի եւ տեսայ, որ լաւ եմ: Այսպիսով գտանք եւ
ոտքիս ցաւի միջոցը: Հարկաւոր էր տաք եւ չոր պահել ոտ-
քերս: Այնուհետեւ երկար ժամանակ ոտքի ցաւ չունեցայ,
համարեա երկու տարի, մինչեւ բանտարկուիլս, ուր երե-
ւան եկաւ նորից:

Այսպէս, օրերը մի կերպ ֆարշ էինք տալիս: Վեր-
ջապէս, լուր առինք, որ Պարսկաստանից մեկնել են եւ շու-
տով վան կը հասնին Սարգիսն ու Մալխասը:

Նաք ընկերների գալը այնքան ուրախացրեց ինձ, որ
որոշեցի նրանց եկած օրը անկողնից ելնել եւ այդպէս ըն-
դունել: Այդպէս էլ եղաւ. ընկերների հասնելն ինձ ոտքի
կանգնեցրեց, եւ մեր ներքին կեանքի մէջ էլ նոր շրջան
բացուեց:

Սարգսի վան գալով՝ գործերը նոր թափ եւ կեանք
ստացան: Բայց նախ քան այդ՝ ծանօթացնեմ մեր կուսակ-
ցութեան այդ չքնաղ ծաղիկներից մէկին, ինչպէս եւ նրա
հետ եկած Մալխասին, որին մենք հանդիպել ենք արդէն
տոյում:

Սարգիս Բարսեղեան (կամ Գրիգոր Վարդանեան,
իսկականը՝ Պօղոս Օտապաշեան). բնիկ Գանձակեցի էր:
Կրթութիւնն ստացել էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում:
Լաւ եւ ընդունակ աշակերտ է եղել: Ինչ որ սիրային ար-
կածի պատճառով ընդհարում է ունեցել իր շատ մօտ ըն-

կերոջ (Ստեփան Ստեփանեան, սպաննուած Զանգեզուրի հայ-քրքական ընդհարումների ժամանակ) հետ, որի վերայ ատրնանակ կրակելու պատճառով դպրոցի Գ. դասարանից հեռանում է եւ փախստական վիճակով անցնում Եւրոպա: Ժընեւում նա հետեւում է համալսարանում պատմութեան եւ հասարակական գիտութեանց: Այնտեղ մօտից ծանօթանում է Դաշնակցութեան ղեկավար շրջանակի հետ:

1901ին, երբ Քրիստափորը պիտի գար Կովկաս նոր գործունէութեան, մանաւանդ դրամական միջոցներ հայ-թայթելու, Սարգիսն էլ հետը միասին գալիս է Բագու:

Այն ժամանակ ղեկցիան անցել էր. Կովկասում ընդհանրապէս եւ Բագուում մասնաւորապէս կազմակերպութիւնը վերստեղծում էր: Բանուորական շրջաններում զանգուածային կազմակերպութիւն էր ստեղծում: Այդ շրջանում Սարգիսը առաջին գործիչներից մէկն էր, որ՝ մի քանի երիտասարդ ընկերների հետ միացած՝ սկսում է կազմակերպել նաւթաշխարհի հայ բանուորութիւնը: Այնտեղ ստեղծում է մի փոքրիկ աշխատաւորական շրջանակ եւ, առաջին անգամ լինելով, սկսում է գաղտնի հայերէն թուղթիկներ հրատարակել յեղափոխական բովանդակութեամբ՝ ուղղուած ռուս կառավարութեան դէմ: Այդ թղթուղթիկներով կոչ է անում բանուորութեան կազմակերպուել իր շահերի պաշտպանութեան համար:

Այդ ժամանակ նաեւ ծայր է տուել սոցիալ-դեմոկրատական պրոպականտը հայ մտաւորականութեան մէջ: Բոգդան-Գնունին՝ հայ առաջին սոցիալ-դեմոկրատ լաւագոյն գործիչներից մէկը, որ նախկին դաշնակցական էր, ամբողջապէս տարուած ինտերնացիոնալով եւ դասակարգային պայքարի հեռանկարով, դուրս է եկել մի փոքրիկ խումբ մտաւորականների հետ, նոյնպէս պայքարելու եւ հայ բանուորութիւնը կազմակերպելու:

Երկու հոսանքները — Դաշնակցութիւնը, որին ազգային-դեմոկրատ անունն էին տալիս, եւ սոցիալ-դեմոկրատները կազմում էին վիճարանական ժողովներ, եւ երկու կողմից զեկուցում-ֆննդատութիւններ էին կատարում:

Պայքարը երկուստեք երկար տեւեց եւ վերջացաւ

նրանով, որ երկու կողմն էլ համոզուեցին, որ մէկը միւսին կլանել չի կարող: Սոցիալ-դեմոկրատական փոքրիկ խմբակը միացաւ Ռուս. Սոց.-Դեմոկրատ մեծ կուսակցութեան. նրանք մեծ ոյժ չկարողացան կազմել: Դաշնակցութիւնը մնաց միակ կազմակերպուած եւ ղեկավար ոյժը հայ իրականութեան մէջ:

Սարգիսը այդ սկզբնական աշխատանքի լաւագոյն հիմնադիրներից ու վարողներից մէկն էր:

1902ին, երբ Դաշնակցութիւնը՝ ազատուած 1896ի կոտորածների մղձաւանջից, մտածում էր երկրի մէջ մեծ թափով գործունէութիւն վերսկսել, կանգնած էր մեծ երկրորդանքի առաջ. ինչպէ՞ս դրամ հայթայթել: Ժողովրդական, կազմակերպական եկամուտները չնչին բան էին: Դրանով նոյնիսկ հնարաւոր չէր ժընեւի «Դրօշակ»ը պահել, կամ մի երկու գործիչների համար ապրուստի միջոցներ հայթայթել:

Կարծեմ այդ թուականին կազմուած Դաշնակցութեան հորիւրդը որոշել էր ահաբեկչական միջոցներով դրամ հանգանակել կազմակերպութեան համար: Քրիստափորին էին յանձնել այդ գործի ղեկավարութիւնը: Այդ ձեռնարկը գլուխ բերելու համար Քրիստափորը իր շուրջն էր հաւաքել Նիկոլ-Դումանին, Սաֆոյին, Գանձակեցի Լեւոնին, Մատթէոսին, Նեվրուզին, Սարգսին, Դաշնակցական հեչոյին, Սեւ Աշոտին, յայտնի Միհրանին, Գիւլխանտանեան Աբրահամին, Մարգար ժամհարեանին եւ շատ ուրիշներին, որոնց, թերեւս, ես չգիտեմ կամ մոռացել եմ:

Գործը տարւում էր Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսի Պատասխանատու Մարմնի «Փոթորիկ» ահաբեկիչ խմբի անունով:

Այդ գործը կազմակերպելու համար մի քանի հազար ռուբլի էր հարկաւոր: Սկզբնական ծախքեր հոգալու համար դրամ հայթայթուած էր Բագուի բանուորական խումբերի անդամավճարներից: Գործը լրիւ կազմակերպելու համար մտածել են առաջին դիմումը կատարել այնպիսի մարդու, որը դիւրութեամբ փակը բաց կ'անի. եւ որը յայտնի էր իր «ազգասիրութեամբ»: Դա ժամհարեանն էր, որ այդ ժամանակ Շուշի էր եկել ամառանոց: Քրիստա-

փորն իր խմբով գնում է Շուշի. հետո է լինում ե՛լ Սարգիսը միեւնոյն գործով:

Սարգսի հետ ես առաջին անգամ ծանօթացել եմ այդտեղ՝ Շուշի: Շքեղ մագերով, պայծառ դէմքով, շատ համակրելի արտաքինով, կարճահասակ մի փայլուն երիտասարդ էր: Խօսում էր հրաշալի, ներշնչւում էր հաւատացեալի ջերմեռանդութեամբ: Առաջին տպաւորութիւնս ա՛յնքան խորն էր եւ այնքա՛ն ընտանի, որ ինձ դիւթեց. ես պատրաստ էի ամէն բան անել նրա համար: Մենք հասակակիցներ էինք, թերեւս նա ինձնից մի կամ երկու տարով մեծ լինէր: Դժբախտաբար, Շուշուայ մեր ծանօթութիւնն ու ընկերութիւնը կարճատեւ եղաւ:

Ժամհարեանի գործը այսպէս էր կազմակերպուած: Որոշուած էր, որ կլուբից գիշերը տուն դառնալու ժամանակ շրջապատեն եւ նեղ փողոցներով տանեն նախապէս որոշուած բնակարանը, իսկ այնտեղից, յատուկ խմբով փոխադրեն Պարսկաստան, եթէ չհամաձայնուէր պահանջուած գումարը, որ, կարծեմ, 20,000 ռուբլի էր, իսկոյն տալ. այնտեղ պիտի պահուէր մինչեւ դրամի ստացուիլը:

Ինչպէս ասացի, դիտմամբ առաջին քայլն ուղղուած էր ժամհարեանին, իբրեւ բարեմիտ մարդու. եւ չնչին գումար էին նշանակել, որ շուտ ստանան:

Այդպէս էլ անում են: Գիշերը, երբ նա ծառայի հետ տուն էր վերադառնում, նանապարհին բռնում են եւ տանում պայմանաւորուած տունը:

Այնտեղ բացատրում են ամէն բան: Խեղճը սոսկալի վախեցնում է. քիչ է մնում ուշագնաց լինի: Ի հարկէ, իսկոյն համաձայնում է որոշուած գումարը վճարել, մուրհակ է տալիս, հակառակ դէպքում իրեն սպաննելու պայմանով. եւ խնդրում է իրեն արձակել միւս օրը վճարելու խոստումով:

Անմիջապէս արձակում են՝ վստահելով նրա ազնիւ խօսքին: Պայմանաւորում են այսպէս. ժամհարեանն ինքը ձի հեծած դրամը պիտի տանի քաղաքից դուրս, «Գեթ» աղբիւրի մօտ, եւ անտառի մէջ յանձնի իրեն սպասող մարդկանց:

Ժամհարեանը հաւանօրէն այդպէս էլ կ'անէր: Բայց մէջ է ընկնում նրա բարեկամներից Յովսէփ քէկ Մելիք

Յովսէփեանը, որը նախկին ոստիկան է եղած, եւ համոզում, որ այդ «սրիկաներին» կոպէկ չպէտք է տալ ու գործը պէտք է յանձնել կառավարութեան:

Միւս օրը պայմանաւորուած տեղը գնում է գաղտնի ոստիկանութիւն, իսկ ժամհարեանի փոխարէն՝ նրա շորերը հագած մի թուրք ոստիկան: Տղաները յանկարծակիի են գալիս. Խեչոն, Նեվրուզը, Լեւոնը եւայլն յաջողում են փախչել, իսկ Սարգիսը մի քանիսի հետ ձերբակալում է: Սարգիսը տարում է բանտ: Տեղացիներին երաշխաւորութեամբ ազատում են, իսկ Սարգսի գործը ընկնում է դատարան:

Քրիստափորն եւ ընկերները հեռանում են Բագու: Խեղճ Սարգիսը մնում է իր նակատագրին: Բագուից մի երկու ամիս յետոյ, օգնութեան է գալիս Քրիստափորը՝ հասցնելով Սարգսին դրամ եւ նամակ, որի մէջ խորհուրդներ է տալիս դատարանում բռնելիք դիրքի մասին:

Դրանից յետոյ Սարգսին փոխադրում են Գանձակի բանտը: Նրանից քիչ ժամանակ անցած, ինչպէս յայտնի է, Մատթէոսը Մոսկուայի եկեղեցու դրան առաջ մեծ ռիսկով դաշունահար է անում ժամհարեանին, ձերբակալում եւ փոխադրում է Շուշի: Սարգսին էլ են ուզում փոխադրել Շուշի, բայց Եւլախ կայարանում, նախապէս կազմակերպուած աշխատանքի շնորհիւ, պահակներն սպանում են եւ Սարգիսը փախչում:

Ճակատագրի գեղեցիկ դասաւորութեամբ Սարգսի փախուստը կազմակերպողը դուրս է գալիս նրա պատանեկան կեանքի թշնամին՝ Ստեփան Ստեփանեանը, որի վերայ ինքն ատրճանակ էր կրակել: Յեղափոխական կեանքը մոռացնել էր տուել ինքն թշնամութիւնը. յետոյ նրանք լաւ ընկերներ դարձան:

Եւլախի փախուստից յետոյ Սարգիսը անցնում է Թարիզ. ամբողջ նանապարհը կտրում է ծպտուած, թուրքի հագուստով: Սահմանագլխին մի թուրքի տան մէջ հիւր է լինում, Թուրքը՝ հրապուրուած նրա գեղեցիկ արտաքինով եւ հրաշալի բնաւորութեամբ՝ յանկարծ որ իմանում է նրա հայ լինելը, բացականչում է.

— *Հախֆ ջի պու կիւզէլ օղլան էրմանի տիր...*
(Ափսո՛ւ, որ այս գեղեցիկ տղամարդը հայ է):

Թարիզում եւ Ատրպատականում Սարգիսը գրադում է պրոպականտի եւ կազմակերպական գործով եւ մեծ տպաւորութիւն է թողնում այս շրջանների վրայ:

1903ին, Բուլգարիայի Ընդհանուր ժողովից յետոյ, երբ որոշում է Սուլթան Համիտի դէմ մահափորձ կազմակերպել և ընտրում է Պատասխանատու Մարմին Քրիստափորի ղեկավարութեամբ, Սարգիսն էլ անցնում է Բուլգարիա մասնակցելու այդ ձեռնարկին: Աշխատում է ձեռնարկի բոլոր նախապատրաստական աշխատանքներին Բուլգարիոյ մէջ, բայց Քրիստափորի անակնկալ մահը Սարգիսն հեռացնում է այդ գործից եւ բերում Կովկաս, 1905ին, երբ արդէն ծայր էին տուել կովկասեան յեղափոխական շարժումը եւ հայ թուրքական ընդհարումները:

Կովկասում Սարգիսը Կումսի եւ միւս ընկերների հետ աշխատում է գլխաւորապէս Երեւանի շրջանում՝ կազմակերպելով Հին Նախիջեւանի ինքնապաշտպանութեան գործը, որ այնքան շփեղ արդիւնքներ տուեց: Եւ ապա, երբ Նիկոլը հեռանում է Երեւանի շրջանից, միւս երիտասարդների հետ կազմում է Երեւանում երիտասարդ ընկերներից Կ. Կումիտէ եւ ստեղծում տեղական յեղափոխական գործունէութիւն:

Կարծեմ այդ գործունէութիւնն երկար չի տեւում. հակադեցութեան թէ այլ պատճառով, Սարգիսը 1906ի գարնանը մեկնում է Ատրպատական՝ վան անցնելու համար:

Մենք տեսանք, որ նա վան հասաւ ամառուայ սկիզբներին: Սարգսին մենք դեռ նորից կը հանդիպեմք. առ այժմ բաւականանաւք սրանով եւ անցնենք նրա հետ եկած ընկերոջ:

Մալխաս (Արտաշէս Յովսէփեան): Սրան արդէն պատահել ենք խոյում: Ինքը Տրապիզոնցի է, կրթութիւնը ստացել է Սանասարեան վարժարանում, ապա՝ Ամերիկա: Տիպիկ ամերիկեան հովեր ունեցող մէկն է: Կարծեմ Ամերիկայումն է յեղափոխականացել վոսմեանի դպրոցի մէջ: Աշխատակցել է «Հայրենիք»ին. 1903ի աշնանը եղել է Ուրմիոյ ներկայացուցիչ, ուր յաջողում է նրան ի կատար ածել կուսակցութեան որոշումը: Որպէս ամերիկացի բժիշկ անցնում է Տանկաստան մինչեւ Շամգերան, բանակցելու

Շէյխ Մահմէտ Սատրգի հետ, (նշանաւոր Շէյխ Իպատուլ-լախի որդին): Կազմակերպութեան կողմից գնացել է եւ Մալանա ատրիների յայտնի իշխան Պէհանի մօտ որոշ նատակով: Ապա եղել է, ինչպէս տեսանք, երկար ժամանակ հոյի եւ վանքի փոխադրական գործի ղեկավար, յետոյ անցել է Կովկաս եւ Սարգսի ու Կումսի հետ աշխատել է Երեւանի շրջանում:

Մալխաս լաւ ձգտումներ ունէր, ուզում էր օգտակար լինել, բայց որովհետեւ տկար էր մարմնով, քիչ օգտակար եղաւ: Նա պատրաստեց վասպուրականի քարտէսը, որ թերի կերպով գործածական էր. լրիւր տարաւ արտասահման աշխատելու, էլ չիմացայ՝ ինչ եղաւ:

Մալխասը մի տարի հազիւ մնաց վանում եւ ստիպուեցաւ հեռանալ 1907ի գարնանը. ապա աշխատեց ու բանտարկուեց Կովկասում: Թրքական Սահմանադրութիւնը յայտարարուելուց յետոյ անցաւ Թուրքիա — Տրապիզոն: Այնտեղ գրադուեց կազմակերպական գործով եւ հրատարակեց «*Պարիս*» թերթը: Վերջը անցաւ Պոլիս. գրադում էր մասնաւոր գործով եւ հետաքրքրում կազմակերպութեան գործերով:

Մալխասն, առհասարակ, կազմակերպական գործերի մէջ սիրով է դեր կատարել. երբ էէֆը տուել՝ մտել է, մէկ էլ խռովել չեզոքացել է:

Գործի նախաձեռնութեան ոգի ունի, բայց կամփոյժն ու համբերութիւնը պակասում էր սկսածը մինչեւ վերջ տանելու համար. ամէն բան սկսում է կիսատ թողնելու պայմանով:

Ինչպէս ասացի, Սարգսի եւ Մալխասի վան գալը նոր գործի եւ աշխատանքի հորիզոններ բաց արաւ վանի կազմակերպութեան մէջ: Լուր տուինք, որ իշխանն էլ լեռներից իջնէ, ժողով անելու համար, որ մեր անելիքները որոշենք:

Իշխանը լսելով Սարգսի գալը՝ վարդանի հետ իջնում է քաղաք: Շուտով գալիս է եւ Տիգրանը: Տեղական ընկերները պատրաստ էին:

Սարգսի գեկուցումից իմացանք հետեւեալը. — Հայթուրքական շարժումը լայն ծաւալ է ստացել Կովկասում. ուսական յեղափոխութիւնն ամէն բան տակն ու վրայ է

արել. Կովկասեան գործունէութեան համար Դաշնակցութեան խորհուրդը հրատարակել է մի առժամեայ նախագիծ. քրֆահայ ընկերների մի փոքրիկ շրջանակում գրծտութիւն կայ կովկասեան գործունէութեան դէմ. Ռուսահայ ընկերների մէջ էլ մի հոսանք կայ, որ ձգտում է կուսակցութեան կովկասեան հատուածը ամբողջապէս անջատել Երկրի գործունէութիւնից. ղեկավար ընկերները դէմ են երկու կողմի շարժմանն էլ եւ ուզում են կուսակցութիւնը պահել իբրեւ մի ամբողջութիւն. մեծ քանակութեամբ ռազմամթերք, զէնք եւ դրամ է հրապարակ դրբուած Երկրի համար, որը շուտով ներս կ'ուղարկուի. շուտով Ընդհանուր ժողով պիտի գումարուի վերոյիշեալ ծանրը խնդիրները լուծելու համար եւ խնդրում է, որ Երկրի կարեւոր ընկերները ներկայ լինին Ընդհանուր ժողովին. պէտք է գրել Մուշ որ Գեորգ Զաւուշը կամ Ռուբէնը գնան ժողովի:

Այս գեկուցումը լսելուց յետոյ որոշում ենք, որ ես եւ Իշխանը ուշ աշնան մեկնինք Կովկաս Ընդհանուր ժողովին մասնակցելու:

Սարգիսն առաջարկում է, որ Կոմսին (Վահան Փափագեանին), իբրեւ կարեւոր եւ փորձուած ոյժի ներս հրբարիրենք, որ ինքն արդէն նրանից խոստում է առել այդ մասին:

Տիգրանի, Իշխանի եւ միւսների համաձայնութիւնն առնելուց յետոյ որոշում ենք կանչել Կոմսին, նկատի ունենալով, որ առհասարակ Երկրից Ընդհանուր ժողովի գնացողները մեծ մասամբ ընկնում են սահմանագլխի կրնիւներին, որ նրանցից շատ քչերին է յաջողում Երկիր վերադառնալ. իսկ ահագին գործը թողնել մինակ նորեկ ընկերոջ վրայ՝ անկարելի էր:

Մինչ այդ, որոշում ենք, որ Սարգիսն Իշխանի հետ անցնի գաւառ Լեռնապարի գործերն ուսումնասիրելու, որպէսզի Իշխանից յետոյ այնտեղի գործերը ղեկավարէ, իսկ միւսները մնալու են քաղաք մինչեւ Կոմսի գալը:

Այսպիսով ձեռնարկում ենք լայն աշխատանքի՝ աշնանը արտասահման մեկնելու համար:

Գ Է Պ Ի Կ Ո Վ Կ Ա Ս

Օրերն անցնում են շուտով. վրայ է գալիս աշունը: Տղաները գաւառից քաղաք են իջնում՝ Սարգիսը, Իշխանը, Վարդանը, Մեսրոպը, Տիգրանը եւ միւսները: Կազմում ենք խորհրդակցութիւն Ընդհանուր ժողովին տրուելիք հրահանգների մասին, մշակում ենք բանաձեւեր, պատրաստում ենք նիւթեր գրաւոր գեկուցումի մասին, որ ես պիտի կազմէի:

Արդէն աշուն է, Հոկտեմբեր: Ձիւնը ներմակացրել է լեռնագագաթները. Տուրտ է. պէտք է շտապել: Մի ամիս էլ, եւ Հայաստանի լեռները անանցանելի կը լինին ձիւնով, իսկ ոտով գնալ ես անկարող եմ իմ անցկացրած հիւանդութեան պատճառով:

Որոշում ենք, որ ես 2-3 ամիս մնամ սահմանագլուխ Թաղէի վանքը, այնտեղ կուտակուած ռազմամթերքը ներս քանքեմ: Իսկ Իշխանը անցնի Կովկաս՝ այնտեղիւնը վանք քանքի:

Կանչում ենք ամենավստահելի եւ լաւ ֆիւրտ սուրհանդակներին՝ Շաւրցի Նուրոյին եւ Միքոյին: Սրանց մասին խօսել եմ: Թէեւ նոր էին գործի անցել, բայց առաջնակարգ վստահութիւն էին վայելում մեզ մօտ. գիտէին վան-Արեակ-Ախոռիկ-Կարատէր-Թաղէի վանք ընդամէնը 22-24 ժամ տեւող քանքան: Զգուշութեան համար մեզ հետ վերցնում ենք սրանց ֆիւրվա Ալէսի եղբօր Մանուկ Պար-

սամեանին եւ Կոնստանտինոսի Գաւիթին. երկուսն էլ անապարհ-
ներին ծանօթ էին:

Ոչ ոք գիտէ մեր մեկնելու մասին. նոյնիսկ սուր-
հանդակներին դեռ չենք ասել: Յայտնի էր միայն այսօր, որ
մի կարեւոր ընկեր պիտի գնայ:

Չէինք յայտնել նոյնիսկ մեր ամենամօտ ընկերնե-
րին՝ Յարութիւնին եւ Սոզոյին, որոնց հետ տարիներ աշ-
խատել էինք, միասին տառապել եւ ուրախացել: Բայց
սրանց վերաբերմամբ ընդհանուր որոշման չեմ ենթարկե-
լու. գնում եմ մնաս բարեւի: Գիտեմ, որ նամբան 90 տո-
կոսով կասկածելի է. ո՞վ գիտէ ինչ կը պատահի. ուզում
եմ «կաց բարեւ» ասել, վերջին հրաժեշտի համբոյրներ
տալ այն բոլոր սիրելի դէմքերին, որոնք մոռացած իրենց
տուն ու տեղ, ընտանիք ու անհատական երջանկութիւն՝
եկել են մեզ հետ ծառայելու գործին...

Անջատու՞մք վատ բան է, այդ էլ լաւ ընկերներից,
մանաւանդ երբ գիտես, որ կարող է պատահել՝ էլ նրան
չտեսնես: Դժբախտութիւն կարող է պատահել ոչ միայն
ինձ, այլեւ Երկիր մնացող ընկերներին. իմս երեք օրուայ
դժուարութիւն է, իսկ նրանցը՝ յարատեւ: Վրայիս հրա-
ցանք, մի քանի գործիքներ եւ դիտակս յիշատակի համար
ցրում եմ տղաներին եւ յուզուած անջատում:

Ձիաներն ու սուրհանդակները պատրաստ են «Գա-
րատաղի» անկիւնը: Կոմիտէի հաթունը Աստուած է կան-
չում «Դու յաջողութիւն տաս»... Քրտերի ներկայութիւ-
նից կռահել է, որ հետո տեղ ենք գնալու:

Մնաք բարեւ եմ ասում ամէնքին՝ Վանին, Այգես-
տանին, «Գարատաղին», «Դրախտին», «Կոմիտէ հաթու-
նին», Վարագին եւ գնում եմ կոտորած սրտով...

Իշխանը երեք, իսկ ես երկու տարի աշխատել ենք,
որոշ գործ ու շրջան ենք ստեղծել, թողնում ենք նոր եկած,
դեռ գործին քիչ ծանօթ ընկերների ձեռքը, իսկ այնտեղ,
անապարհին, ո՞վ գիտէ, ի՞նչ կը պատահի մեզ...

— Ընդհանուր ժողովները Երկրից գնացող պատգա-
մաւորների համար «բէուզուր» — անյաջող են. ձեզ լաւ
պահեցէք...

Այս է վերջին խօսքը մեզ նամբու դնողների:

Մեզ հետ է եւ հառակոնիսի Շիրինը. նա էլ քրտե-

րի մարդն է, բարեկամը. ինքն է հետը բերել, մեզ հետ
պէտք է գայ մինչեւ առաջին կայարանը, որ իրենց գիւղն
է լինելու՝ հառակոնիս:

Սրարշաւ անցնում ենք Շուշանից դաշտով, կտրում
ենք Սոզան, անցնում Շահապաղիի դաշտը եւ կամաց-կա-
մաց իջնում Խոշե-Կատուկ՝ Արնակի երեսը իջնելու հա-
մար:

Ամբողջ անապարհին մարդու չենք հանդիպում:
Դաւիթը երգում է, ուրախանում, գոռում գոչում է, ա-
ղաչում Միքայիլին, որ երգէ, ինձ խնդրում է, որ «հրամա-
յեմ» երգէ: Խնդրում եմ Մանուկին, որ իմ կողմից խնդրէ,
որ երգէ Միքոն: Բանից դուրս է գալիս, որ խեղճի տղան
նոր է մեռել, սգուր է, չի կարող երգել. սիրտը վշտոտ է,
մանաւանդ որ սովորութիւն չէ...

Իջնում ենք դէպի Արնակի լինը. դեռ ասին չհա-
սած՝ տեսնում ենք մի խումբ ձիաւորներ, որ Արնակի կող-
մից գալիս են դէպի մեզ:

Առաջից գնում է Նուրոն. ձիաւորներին նկատելով,
մեզ պատրաստ լինելու նշան է տալիս: Երկրից լաւ գէնք
դուրս չտանելու համար մոսին հրացան չէինք վերցրել.
սուրհանդակների ձեռքը թուրքական Մարթինի հրացան
էր, իմ մօտ մաուզէր ատրճանակ, իսկ իշխանը վերցրել էր
եւ մաուզէր եւ մի քերդան հրացան:

— *Լօ, Լօ, հուն քինա* — լօ՛, լօ՛ ովքե՞ր էք, գոռում
է Նուրոն:

— *Ազ խուլամէ Զհանկիր աղա, եղիտի ամ*. (Ես եզի-
տի Զհանկիր աղայի ծառան եմ):

Նուրոն եզիտիներին ոչ թշնամի մի ցեղի անունով
էլ մեզ է ներկայացնում եւ կանչում.

— *Եթէ լաւ մարդ էք, ճամբայէն ելէք եւ մի հրա-
ցանի մանդիլի չափ ձիաները քշեցէք*:

Մեր դիրքը լաւ էր, մենք բարձր էինք: Կարգադրու-
թիւնն իսկոյն կատարեցին շեղուելով դէպի լինը՝ քշեցին
ձիաները. մենք էլ շեղուեցինք դէպի աջ և գգուշութեամբ
իջնում էինք՝ երկուսին թողնելով վերին դիրքը:

Երկու կողմից մէկ-մէկ բաւական մօտից կող-
կողքի անցնում ենք հոտոտելու համար: Մեր կողմից մօ-
տըկցողը Նուրոն էր: Յետոյ դուրս եկաւ, որ նրանք մեզ

խարել էին. եզրի չէին, այլ թութուն ծախող կուլիներ: Երբ ելան սարի գլուխը, սկսեցին յոխորտալ, թէ մեզ խաբեցին:

Դաւիթի խենթութիւնն այստեղ բռնեց, սկսեց հայհոյել եւ մի երկու հրացան կրակել՝ պոռալով, թէ Փէտոյի ենք. եթէ տղամարդ էք, դարձէք...

Նրանք չվերադարձան, անցան գնացին, որով առաջին հանդիպումը թեթեւ եւ անվնաս անցաւ:

Քիչ վար իջանք լեռի արջ. յանկարծ, իմ ձին դանդաղեց եւ նստել ուզեց. իսկոյն թռայ, ձին ընկաւ կողքի եւ սկսեց արագ արագ շունչ առնել:

Դաւիթն իսկոյն նայեց ձիւն աչքերին եւ թեց.

— *Չար աչք քէտանայ, աչքով են տուել, ձին աչքերից կը տրաքուի:*

Իրօք ձիւն բիրտը լայնացել էին, աչքերն ուռել, հրաշալի ձի էր. ամբողջ նանապարհին խաղում էր. բոլորը նախանձով էին նայում ինձ, մանաւանդ Մանուկը:

— *Մանուկի աչքն է. Ես... աչքերը, — մրթմրթում է Դաւիթը:*

Նուրոն իսկոյն կարգադրում է, որ Դաւիթի ձին նստեմ եւ իսկոյն մեկնինք առաջ: Դաւիթը մնաց ձիւն մօտ:

Այդպէս էլ արինք: Մի քանի ժամից յետոյ Դաւիթը հասաւ գիւղ, հառակոնիս: Զին ոտքի էր կանգնել, բայց խիստ թոյլ էր: Այդ օրուայ նամբան մեր բախտից քիչ էր, ընդամէնը 4 ժամ. մօտ 14 ժամ հանգստանալու ժամանակ կար: Եթէ ձիւն չկազդուրուէր, մէկը պիտի մնար, հաւանօրէն Դաւիթը, որը չէր ուզում:

— *Պարոններիս ես մինակ չեմ թողնի՝ քրտերի հետ երթան. ի՞նչ վստահութիւն...*

Ի միջի այլոց, քրտերն իշխանին չէին նանաչում, մենք էլ անունը չէինք տալիս: Բոլորիս անունները փոխել էինք եւ քրտեր անուններով էինք կանչում. իշխանը «Հուսօ» էր եղել:

Մեզ տեղաւորել էին դպրոցում, որ գիւղի մէջտեղը բլրի վրայ էր. այդտեղ էր և եկեղեցին, կոուելու լաւ դիրք ունէր...

— *Պարոն, աշուղ Գուչակի գերեզմանն էլ դա է, —*

նառում է Դաւիթը եւ արտասանութիւններ է անում Գուչակից:

— *Նրա պէս բանաստեղծ չի եղել. ա՛խ, եթէ ես էլ գրել գիտնայի...*

Մեր Դաւիթն էլ Զափարի տիպն էր: Ամէն նամբորդութեան մի խենթ է հանդիպում մեզ:

Առաւօտեան մեզ տեղափոխում են գիւղի վարի թաղը: Գիշերը գիւղացիք. մանաւանդ Դաւիթը թոյլ շտուինք քնելու իրենց անվերջ գրոյցով, երգով, մանաւանդ անտանելի ծիծելով:

Զիս, բարեբախտաբար, կազդուրուեց: Երեկոյեան դէմ դեռ մութը չկոխած Երբինը մեզ նամբայ է ձգում:

— *Մեր սահմանի վրայ վտանգ չկայ. մեր գիւղից սահմանը մի ժամ կը քաշէ:*

Հրաժեշտ ենք տալիս Երբինին եւ շտապով մեկնում դէպի Սարայի խնուղին: Ճանապարհին, իրաւ, մարդ չըկար. հանգիստ գնում ենք. եզանակը հրաշալի էր. դաշտը ընդարձակ, հեռում միայն սահմանի լեռներն են երեւում:

Դաւիթը անվերջ շաղակրատում է, երգում, խօսում, ստիպում Միքոյին, որ երգէ: Նա էլ ամենայն խորհրդաւորութեամբ եւ յամառութեամբ պահում է իր սուգը: Փոխանակ երգելու Միքոն սկսեց արկածներ պատմել իր կեանքից:

Զարմանալի մարդիկ են քրտերը: Սպանութեան, թալանի, գողութեան մասին այնքան սովորական ձեւով են պատմում, որ կարծես մի հայ արհեստաւոր կամ վաճառական հաշիւ է տալիս այս եւ այն տարուայ եկամուտների մասին:

Եւ անվերջ են այդ արկածները: 16 տարեկանից սկսել է գողութեան. 20 տարեկան գնացել է թալանի, մինչեւ անգամ Պարսկաստան, Աբաղա. 40 տարեկան է, բայց դեռ ախորժակը չի փակուել:

— *Միքօ, հայեր շա՞տ ես թալանել եւ սպանել...*

— *Վալլա, բիլլա, թիլլա. հոգուս մեղք չեմ անի. եւ մեր... չեմ համարձակուի սուտ խօսել: Զեռքս ընկածը չեմ խնայել, բայց երկու տարի է ինչ ձեզ հետ կապ ունինք, հարամ լինի, թէ իմ սուներ թալանէն մի սուել անգամ մտած լինի...*

Այսպէս ապահով առաջանում էին: Կարծեմ անցել էինք Մանտան գիւղի ջրաղացը եւ մօտեցել Մահմատիկի գետաուկին: Մէկ էլ, յանկարծ, տեսանք, որ Սարայի կողմից, մեր աջից, մեզնից մի հրացանի մանգէլ հեռուից, հրացաններ բացուեցին աջից ու ձախից:

Կրակը շուտով ընդարձակուեց արեւի մեծ շրջանի վրայ. գնդակները գալիս էին եւ մեր գլխի վրայով անցնում:

Շուտով սկսեց թնդալ քրտական օգնութեան կոչը — նազարան: Քրտերն երբ կռուի են բռնում, գիւղը գիւղին նազարայի ձայնով օգնութեան է կանչում: Նազարաների ձայները սաստկացան, իսկ կռիւը արեւի տափանում է. չենք հասկանում՝ ո՞ւմ դէմն է, մե՞ք թէ ուրիշի: Նուրոն խնդրում է բշել արագ:

Ձիաները բաց ենք թողնում: Անցնում ենք մի երկու վերստ. դեռ անվերջ կրակ է մեր աջ կողմից:

Նուրոն, յանկարծ, իջաւ ձիուց: Որսորդական շան պէս գետնից սկսեց հոտ փաշել. ականջը դրեց գետնի վրայ եւ երկար լսեց ու ելաւ: Մի քիչ դէմքը պարզուած էր:

— *Թալան է. բարեբախտաբար, մեր հակառակ կողմն են տանում. ձիանները մի քչէք, այստեղ բոլորը թակուրցոց գիւղերն են. կը կարծեն, թէ փախչում ենք. կամաց քչեցէք. Միքօ՛, երգէ՛:*

Ձիանները գալում ենք եւ ֆայլացնում տակտով. հրաշալի լուսին է. Միքոն՝ մոռացած իր սեւ սուգը՝ սկըսեց.

— *Պայանօ՛, պայանօ՛, պայանօ՛...*

Ինչ հրաշալի ու ներդաշնակ ձայն էր, Աստուած իմ: Գաւիթն իրաւունք ունէր ամբողջ ֆանապարհին գահլաս տանելու այս երգի համար:

Միքոն երգում էր հասքավիճի կռուի երգը, որը, կարծեմ, տեղի էր ունեցել 1896ին Սերոբ փաշայի խմբի հետ, Ռուսաստանից համուրի վրայով, հարքավիճով, Ախլաթ անցնելու ժամանակ:

Տների անվերջ շարանով ֆէտայիների գովմն էր անում, սրա եւ նրա գնդակ ձգելն էր գովում միշտ, ի հարկէ, անէծքով շաղախուած:

Ի՞նչ հրաշալի ներդաշնակութիւն էր. հրաշալի գի-

շեր, անդին հեռուն կռիւ, այստեղ՝ ֆէտայիները գնում են բարեկամ քրտերի հետ, եւ այս հրաշալի երգը...

Միքոն այնուհետեւ չլուեց: Մենք անցանք շուտով կռուի կրակի սահմանը եւ մօտեցանք սահմանի լեռներին, որոնք արդէն ներմկել էին ձիւնով:

Ախոռիկի մօտ հանդիպեցինք հովիւների, արեւի միջոց, նրանց շներին. բայց Նուրոյի վարպետութեան հետեւանքով նողոպեցինք: Արդէն ձիւների սահմանումն ենք, իսկ ստ ցուրտ է: Ահա եւ ամենաբարձր գագաթը: Մենք իջնում ենք դէպի Պարսկաստան:

— *Սահմանապահ զինուորներն առհասարակ այստեղերն են նստում, — Նուրոն ցոյց է տալիս մի քարքարոտ տեղ, ուր ինքը նախապէս խուզարկել էր, եւ մեզ կանչում էր:*

Վերջապէս, մենք ազատուած ենք. 12 ժամ է, որ ձիւների վրայ ենք. խեղճ կենդանիները մի բոպէ հանգիստ չեն առել:

Լոյսն արդէն բացուում է. շուտով եւ արեւ կը լինի, որը կը ջերմացնի մեր սառած մարմինները: Իշխանն ու միւսները ոյծ էին տալիս կոնեակին, բայց նրանից էլ բան չէր դուրս գալիս. արեւի էինք սառում:

Քրտերն, ի հարկէ, չէին խմում: Մի բարակ հագուստով, կրծքերին ամբողջապէս բաց, կարծես չէին էլ զգում, թէ ձիւն կայ կամ ձմեռ է:

Արեւը, վերջապէս, բարձրանում է եւ մեզ տափաքնում. տրամադրութիւններս բացում են: Այս անգամ Իշխանն է սկսում երգել հայերէն: Քրտերը բռնում են գաղտնիքը, սկսում են խոնարհութիւններ անել Իշխանի առաջ. ներողութիւն են խնդրում, որ չէին իմացել եւ անհրաժեշտ յարգալից վերաբերմունք չէին ցոյց տուել միմեջու աջմ:

Իշխանը, որպէս ռազմիկ, քրտերի մէջ հեղինակութիւն ունէր:

Մենք արդէն Գարա-Դերէյումն ենք, ապահով վայր: Կամաց կամաց իջնում ենք: Շուտով կը տեսնենք այն նամբան, որ Կարանին միացնում է Խոյի հետ: Բայց մենք, — մանաւանդ ձիւները, յոգնել են, չեն կարող շարունակել. մի յարմար տեղ իջնում ենք: Տղաները վերին գագաթները

դիրք են բռնում. ձիաններին բաց ենք բողնում՝ ոտները կապելով. մի առուի ափին գլխներս վայր դնելն ու քնելը մեկ է լինում:

Զգիտեմ քանի ժամ քնեցի՞նք, բայց երբ վեր կացանք, արեգակը բառական բարձրացել էր: Անօթի էինք: Վանից բերած հալուան, բաղարջը, հաւը եւայլն մէջտեղ ենք բերում կոնեակի հետ եւ սկսում ուտել ու խմել: Դաւիթը սկսում է իր նառերը, հայերէն, թրքերէն, ֆրանսերէն. խօսում է եւ համոզում, Սուլթան Համիտին հայհոյում, ծիծաղելի պատմութիւններ անում:

Դեռ 2-3 ժամ պիտի սպասէինք, որպէսզի ձորի մէջ եղած ֆիւրտ եւ թուրք գիւղերից աննկատ անցնէինք: Թաղէի վանքի կողմը շրջուելու համար, ընդամէնը 4-5 ժամուայ նամբայ կայ. չենք շտապում:

Մութը դեռ չիջած Գարադէրէն թողնում ենք եւ իջնում կարանի-հոյ ֆարաւանի նամբու վրայ: Նախիրները տուն էին վերադառնում: Սահմանի կողմից իջնող մի ձիաւոր խումբ, մեզ նկատելով՝ կարծեց, որ թալանի ենք եկել. խուճապ սկսեց մէջերնին. նախիրներն արագութեամբ ֆշեցին: Մենք սպասում էինք կռուի, բարեբախտաբար, տեղի չունեցաւ: Քշեցի՞նք, բարձրացանք դիմացի լեռները: Արդէն մութն էր:

Դեռ գիշերուայ ժամը 12 չկար, երբ հասանք Վանք: Ամէնքը ծանօթ էին, մանաւանդ Վարդապետը եւ Վանքի ծառայ Թաղէոսը, որը ոտ ու ձեռք ընկաւ:

— Պարոններ, բարով, Աստուծով սաղ սալամաթ դարձաք:

— Թաղէո՛ս, սաղ սալամաթ ենք, մեզ թէյ հասցրու:

— Պարո՛ն, շուտով թէյը կը լինի. ջուր էլ եմ տաքցուցեր, որ լողկնէք եւ աղէկ քնէք. շատ ազիւթ (նեղութիւն) էք քաշել ճամբին...

Վերջապէս, երեւում է եւ Վարդապետը, որ նոր էր մտել անկողին քնելու:

Շուտով այս ֆրանսէա, ինչպէս ասում էր մեր Դաւիթը, երեւցաւ եւ մեր Մարգարէտը, որը Մալխասից յետոյ խոյի կառավարիչն էր:

— Այս ե՞րբ հասաք, ախպար, որ արդէն թէյ ալ կը խմէք:

Փոխադարձ հարց պատասխաններ, նորութիւններ երկրից, դրսից: Ամէնքի տրամադրութիւնը բարձր էր: Կովկասում գործերը լաւ են գնում. Պարսկաստանը չի արձագանգել հայ-թուրքական ընդհարումներին. մերոնք հանգիստ են եւ ազատ գրաւում են փոխադրութեան գործերով: Մարգարէտն ու Վարդապետը պատմում են, որ մեծ ֆանակութեամբ ապրանք է թափուել. ներս նամբելու նար պիտի մտածել:

Յայտնում ենք, թէ վանում որոշել ենք, որ մի երկու ամիս ես պիտի մնամ Վանք, փոխադրութիւնն արագացնելու եւ կազմակերպելու, իսկ Իշխանը Կովկաս պիտի անցնի՝ այնտեղ եղածները Պարսկաստան-Ատրպատական ֆշելու:

Միւս օրն Իշխանը մեկնում է խոյ՝ Ջուլֆայով Կովկաս մեկնելու, իսկ ես մնում եմ Վանք:

Միւս օրը Նուրոյին եւ Միքոյին «խալաթներ» գնելով եւ ռազմամթերք, նամակներ, յեղափոխական գրականութիւն տալով՝ յետ ենք նամբում, որ շուտ գնան տրդաներին լուր տանին, թէ մենք ապահով տեղ ենք հասել:

Ինչպէս իր տեղում իմացանք, աշունը փոխադրութեան ամենալաւ շրջանն էր, գիշերներն՝ երկար, լեռները՝ դատարկ, նամբաներն՝ ապահով:

Երկու ամսում մօտ 100,000 փամփուշտ, ուրիշ ռազմամթերք եւ մի քանի հարիւր հրացան Արաղայի եւ Քարատէրի գծով ներս եմ ուղարկում:

Այդ օրերին անցնում են եւ բազմաթիւ ընկերներ. մեզանից մի քանի օր առաջ Արաղայի գծով անցել էին հարբերդցի կարօն, Ղարաբաղցի Զօհրապը, Բուլգարացի Սարգիսը, Էտիրնեցի Տիրայր-Հայրիկը:

Չորս անբաժան ընկերներ, որոնց հանդիպում ենք մենք երկրորդ անգամ Վան դառնալիս:

Մենք Վանք հասնելուց յետոյ վանում որոշել էին ուղարկել եւ մի տեղացի ընկեր: Կարծեմ Կովկասից են խնդրել, որ երբեք մէկը տեղացի լինի. լեզու ընկերներից ամենալաւն էր նկատել եւ Համազասպին: Մի օր անսպասելի կերպով տեսնեմ Համազասպը մեր սուրհանդակների՝ Նուրոյի եւ Դաւիթի հետ եկաւ:

Համագասպը փչ հիւանդ էր. դեռ իմ վան եղած ժամանակ միշտ գանգատում էր թոքերից. շատ զգայ չէր սպրում եւ ֆրոջ մշտական խնամքն էր, սր պահում էր նրան: Ճանապարհին խիստ մքսել էր եւ յոգնել. թոքերի բորբոքումն անլի էր սաստկացել:

Երբ վանք հասաւ, արդէն թոյլ էր եւ գոյնը թոցըրած. նրան շուտով ուղարկեցի Թարիզ, ուր նրան սպասում էր իր եղբայր Գարեգին Բաղէշցեանը: Թարիզում թոքերի բորբոքումն էլ անլի էր սաստկացել:

Եղբայրը նրան Թիֆլիս բերեց շատ ծանր վիճակով: Բժիշկները, նրան խորհուրդ տուին ուղարկել իտալական Տիրոյ. ես հետս տարայ վիեննա. Ընդհանուր ժողովին չկարողացաւ մասնակցիլ: Յետոյ նրան տեղաւորեցին սանատորիաներից մէկում. այնտեղից եկել էր ժընեւ եւ այնտեղ էլ մեռել խեղճը: Մարմինը վառել էին տուել. անիւնը «Դրօշակ» խմբագրատան մէջ պահում է, մի օր հայրենիք ուղարկելու համար:

Իմ վանք եղած ժամանակ այնտեղ եկան Կովկասից Թէոսը եւ Բուլգարացի Գրիգորը: Առաջինը 1906ի գարնանից անցել էր Կովկաս մի փչ թարմանալու եւ ապրանքների փոխադրութիւնը զարգացնելու:

Պէտք է խոստովանիլ, որ մեծ գործ էր կատարել: Կովկասի բոլոր ծայրերից մեծ քանակութեամբ ապրանքներ էր հաւաքել եւ ուղարկել Ատրպատական երկրի համար: Իսկ Գրիգորը վերջը դարձաւ վանի Դաշնակցութեան կարեւոր եւ հիմնական սիւներից մէկը, որուն եւ միւսներին մեծ կը տեսնենք ապագային:

Թէոսին եւ Բուլգարացի Գրիգորին նամբու դրինք Գարատէրէի գծով, ճիւղով: Շուտով վանք հասաւ եւ մի երիտասարդ, վազգէն անունով: Երկու ընկերներ են եղել՝ վազգէն եւ Զաւէն, որոնք եկել են երկիր անցնելու, բայց Սամսոնը բռնել եւ Սալմաստ է տարել մի տարի կամ մի քանի ամիս փորձառութիւն ձեռք բերելու համար: Եւ լաւ էր արել. դեռ կաթը բերաններին էր, ինչպէս ասում է ժողովուրդը: Զաւէնը մնացել էր Սալմաստ, իսկ վազգէնը եկել էր վան գնալու: Վազգէնին նամբեցի Աբաղայի գրծով ծայտուած, ինչպէս ես էի անցել:

Զեմ մոռացել նրա գնալու առթիւ մի յուզիչ տեսա-

րան, երբ հագուստները հագցրինք, երեսի մագերը խուզեցինք, — վանքը զարգացել էր, մեքենայ էր բերել տրւել, այլեւս ընկերներն ինձ նման տանջանքի չէին ենթարկում. երբ կազմ ու պատրաստ էր, գնաց հայելու մէջ իրեն վերից վար դիտեց, մանաւանդ ուշադիր նայեց կրծքից կախուած մի գոյգ անլորդ գուլպաների եւ մի գոյգ բրդէ ձեռնոցների, որ ցրտի համար նախապատրաստութիւններ էին — հառաչեց եւ ապա՝ տխուր ժպտալով՝ ասաց.

— Ա՛խ, մարդ այս հագուստով մի երեւանի բուլվարը լինէր...

Խեղճ երեխայ, դեռ երեւանի բուլվարի կարօտը չէր անել, դեռ կեանքից բան չէր հասկացել եւ գնում էր դէպի երկիր, գնում էր կամաւոր նահատակութեան...

Մտածում էի, թէ քանի՞ քանիներն սյդպիսի կարօտով մեկնել են այս մեծ նախապարհով, գնացել են, էլ յետ չվերադառնալու պայմանով:

Գնացել են, գնում են եւ պիտի գնան: Այն ժամանակ հայ երիտասարդութիւնը տոգորուած էր մի տեսակ, մեռնելու, զոհաբերուելու ոգով. ամէնքը գնում էին, գրնում էին հաստատ գիտնալով, որ պիտի ընկնեն սահմանազլիսին, բայց գնում էին հէնց մեռնելու...

Քանիներն իմ աչքի առջեւ գնացին Կարսի գծով. դա ընդհանուր «հիւանդութիւն» էր. թող հասարակագէտները, մանաւանդ մեր «նիւթապաշտները» ուրիշ բացատրութիւն տան, բայց մեծ մեր նամբան այդպէս էլ կը շարունակենք:

Այստեղ չեմ կարող չիշել մի փոքրիկ դէպք: 1904ին, երբ Նեվրուզի, Խանի խումբը պատրաստուում էր երկիր գնալ, ժողովրդական մեծ տօն էր Ղարսի շրջանում. ամէնքը մի բանով ուզում էին մասնակցել. մէկը դրամ էր բերում, մի ուրիշը մետաքսէ դրօշ, ծնողն՝ իր որդուն: Մի լաւ աշխատաւոր մարդ ունէինք Ղարսում, որին Թեւանեց Ալէֆ էին ասում. այնտեղ միխանէի խանութ ունէր, կուսակցութեան համար փամփուշտ եւ գէնք էր գնում. աքտորուած էր այդ պատճառով, բայց դարձել էր եւ շարունակում էր նոյն գործը, անլի եռանդով: 1897-1900 թուականներուն «Դրօշակ»ում լոյս տեսած բազմաթիւ գաղտնի վաւերաթղթերը Թեւանեց Ալէֆն էր հանել չըն-

չին կուպէկներով. լաւ մարդ էր եւ անկեղծ հայրենասէր:

Այս թեւանեց Ալէքր շատ էր ցաւում, որ ինքը ծերացել է եւ չի կարող երկիր գնալ, որդի էլ չունի. ունեցածը մի աղջիկ էր: Մի օր մի երիտասարդ գալիս է ուզելու այդ աղջկան. երեկոյեան Ալէքր հարցնում է աղջկան, թէ ի՞նչ կ'ասէ, արդեօք համաձայն է, որ նրան տան այդ տղային: Աղջիկը սառնասիրտ պատասխանում է.

— *Հայրի՛կ, եթէ այդ տղան լաւ մարդ էւ լաւ հայ լինէր, խմբերի հետ Հայաստան կ'երթար. այսպիսի ժամանակ չէր մտածի ամուսնութեան մասին...*

Այս էր ահա այն ժամանակուայ ժողովրդի հոգեբանութիւնը. լաւ երիտասարդն իր մասին, իր ապագայի մասին չպիտի մտածէր, միմիայն «Հայաստան» գնալու մասին պիտի մտածէր...

Բայց խեղճ Վազգէններն ու Զաւէնները գնացին, գնացին էլ չվերադառնալու համար: Սրանց մենք տեսնում ենք դեռ Վանում: Սրանցից Զաւէնը մեծ դեր է կատարած Վանի երիտասարդական շարժման մէջ:

Ուշ աշնանը, վերջապէս, գալիս է Կոմսը երկիր գրնալու համար: Ես նրան էի սպասում: Նրան էլ նամբեցի, ապա Դեկտեմբերի մէջ, երբ արդէն ձիւնը ծածկել էր գետինը, ուղեւորուեցի դէպի Կովկաս...

Այստեղ կը վերջանան Արամի յուշերը՝ կիսաւարտ մնալով եւ չհասնելով պատմական կարեւոր դէպքերու շրջանին, որուն մէջ այնքա՛ն մեծ դեր խաղաց:

ՃՇԴՈՒՄ ՄԸ

Տէր հմբագիր,

«Հայրենիք» Ամսագրի Ծրդ թիւին մէջ ողբացեալ Արամի «Յուշեր»ուն մէջ սպրդած են երեք փոքր սխալներ, զորս հարկաւոր կը նկատեմ շտկել:

Առաջին. Հայ-թրքական ընդհարումներին Սէյդոն Շարուրի շրջանն էր, ոչ թէ Դաւալուի (հանլուխլար):

Երկրորդ. Սէյդոն երկիր մեկնեց Պարսկաստանի (Շախթախտի) գծով եւ ոչ թէ Ղարսի:

Երրորդ. Նա երբ քնած էր իր երկու հաւատարիմ ընկերներով Զաւէնի եւ Զնդոյի հետ (Ղասմ բէկի օդայում), բոլոր գէնքերից մերկացած, թշնամիները ներս են մտնում ու քնած տեղը գլուխնին կտրում, եւ ոչ թէ քնից զարթեցնելուց յետոյ:

Եթէ քնից զարթեցնէին, անոնք անշուշտ պիտի դիմադրէին:

Յարգանքով՝ ՂԱԶԱՐ

Ռուսճուգ, 1923, Յուլիս 26

ԱՐԱՄԻ ՕՐԱԳԻՐԸ

ԾԱՆՕԹ.— Արամի այս յուշերը գրուած են գաղտնազիր, Վանի մէջ, 1905ի ձմեռը եւ գարունը: Ինչպէս կ'երեւի, Արամը սովորութիւն է ունեցեր օրագիր պահելու այդ գաժան պայմաններու տակ. ցաւալի է, որ մեր ձեռքը միայն այս պատատիկներն են անցած, որոնք անգամ մը եւս ի յայտ կը բերեն անոր արտակարգ մեծութիւնն ու համեստութիւնը:

Ազատութիւնը հրաշալի անդունդ է,
որ քաշում է զէպի իրեն...

Վ. Հիւկո

1905ի Փետրուար 12ին մտայ Շամ(*): Այդ օրուանից սկսում է իմ յեղափոխական ակտիւ գործունէութիւնը. իսկ թէ ինչո՞ւ գործունէութեան ասպարէզ ընտրեցի Շամը, այդ մասամբ բացատրելու է վերջին անյաջողութիւններով. Բարձրաւանդակի(**) գործի վիժումը, այդ

(*) Շամ կը կոչուի Վանը, իսկ Վասպուրականի Կեդր. Կոմիտէն ալ կը կոչուէր Շամի Կ. Կոմիտէ:

(**) Բարձրաւանդակի գործ ըսելով կ'ակնարկէ 1904ի Սասունի ապստամբութեան:

շրջանի կարեւոր ընկերների անժամանակ մահը, այնպէս դասաւորեցին իրերի դրութիւնը որ միայն առ այժմ Շամի շրջանում հնարաւոր էր ստեղծել ձեռնարկներ. իսկ որովհետեւ այս շրջանում արդէն ընկերներ կային, վնոեցի Երկրի պայմաններին անձանօք լինելուս համար ընտրել այնպիսի վայր, ուր ինտելիգենտ ընկերներ կան եւ որոնք ընդունակ կը լինին երեւոյթները ընդհանրացնել ու որոշ գործունէութեան ուղի հարթել. մտածեցի սրանց զօրավիգ լինել ու եկայ Շամ: Թէ որքան ճիշդ էին Երկրից դուրս իմ ունեցած տեսական հայեացքները Երկրի պայմանների եւ ընկերների մասին այդ առթիւ գրելը վաղ է... բայց մի բան պարզ է, որ արտասահմանի ընկերները չեն կարողանում հասկանալ Երկրի պայմանները, ընկերների ընդունակութեան չափը եւ ըստ այնմ որոշ դիրք բռնել. առաջի փայլից աչքի է ընկնում մեր պակասութիւններից ամենախոշորը, որը իր կողմից ազդում է մեր գործերի յաջողութեան վրայ, դա ներսի եւ դրսի յարաբերութեան անկանոնութիւնն է: Ներսի ընկերների համար դուրսի ընկերների գործունէութիւնը կատարեալ գաղտնիք է, իսկ դուրսի ընկերների համար ըստ երեւոյթին գոյութիւն չունի Երկրի այժմէութիւն ունեցող գործունէութիւնը, որովհետեւ այդ գործունէութեան մասին գաղափարը չունին... Քաղաքական, տնտեսական եւ կազմակերպական դրութիւններ այնպէս են ձեւակերպուել, որ առանց դրսի յարաբերութեան ու օգնութեան անկարելի է կանոնաւոր, կազմակերպուած քաղաքական կռիւ ունենալ, ուրեմն մընում է կամ կանոնաւոր յարաբերութիւնը, կամ խաչ դնել գործի վրայ. կամ այս կամ այն, երկուսից մէկը, միջին նանապարհ չկայ...

Ժողովուրդի տրամադրութիւնը սպասուածից լաւ է: Արտասահմանում տարածուած բոլոր լուրերը այս ժողովրդի յեղափոխական պայմանների վերաբերմամբ ասէկօտէներ են, այս ժողովուրդը այսպիսի քաղաքական բացառիկ պայմաններում հրաշքի արժանի զոհողութիւններ է անում. մի բան որ աչքի է զարնում, դա կազմակերպող

եւ դեկավարող ուժերի բացակայութիւնն է. երկիրը իր ծոցից մարդիկ չի տալիս, իսկ յեղափոխական շկուայ չի ստեղծում այդ պարապը լրացնելու համար. դրսից էլ եկողները այնքան քիչ են, որ հազիւ կարողանում են գործի գործնական-տեխնիքական մասը դեկավարել. իսկ ժողովուրդը մնում է երեսի վրայ. սրանից յետոյ ինչ պահանջել այս ժողովրդից...

Շամեցիք յեղափոխական ասպարէզում բաւական տարօրինակ դիրք ունին բռնած. մի կողմից ժողովուրդը ինքնաբերաբար զինում է, դրսեցի բնկերներին պաշտպանում է, ինքը տրամադիր է կազմակերպուելու եւ հաւատում է աւելի ճիշդ ըմբռնում է, որ յեղափոխութիւնը իրողութիւն է Տանկաստանում, զգում է որ այս դրութիւնը երկար շարունակուել չէ կարող... բայց այս բոլորի հետ նա շատ խոհեմ է, Դաշնակցութեան գործունէութեան «յախուռն» անունն է տուել եւ խիստ վախենում է ցուցական գործունէութիւնից, որովհետեւ մի անգամ տեսել է օձի թոյնը. այժմ պնդում է, որ թեթեւ ուժերով բան չէ դուրս գալու, հարկաւոր է հսկայական պատրաստութիւն, միայն այդպիսի դրութեամբ հաւատում են յաջողութեան, այլապէս չեզոք են: Եւրոպական միջամտութեան վրայ մեծ հաւատ չունին:

Միւս կողմից էլ յեղափոխական դրօշի տակ առաջ է եկել հացկատակների ահագին պարտիա, շատ յայտնի պատճառներով: Կոտորածի սարսափը, 600 (96ին) երիտասարդներ մի անգամից գերեզման մտնելը, երկար ու բարակ յեղափոխական ընկերական, յեղափոխական ամբողջ գործը տակն ու վրայ արաւ. լաւ սերունդը մեռաւ, իսկ մնացածներից ստեղծուեց մի աւելի քան խոհեմ սերունդ, որ միշտ հեռու պիտի փախչէր գործից: Ովքե՞ր էին մնում յեղափոխական շարքերում՝ բնականաբար նրանք, որոնք ապրելու միջոցներ չունին, արտասահման անցնելու կարողութիւնից զուրկ են, եւ սրանց պատճառով էր, որ անցեալում եւ մասամբ ներկայում յեղափոխական վարկը բաւական ընկած է քաղաքի ազդեցիկ դասակարգի եւ ին-

տելիզեմտ կոչուած մասի մէջ... Սկսում է ներքնապէս մաքրելու օրերը, սրա մէջ է մեր փրկութիւնը, հակառակ պարագայում մեր ներքին կեանքն էլ կը ստեղծէ «Իմա-կաւորներ» ի նման յայտնի գրականութիւն...

Շամեցիք իր ստացած միակողմանի կրթութեամբ, կեանքում ձեռք բերած փորձառութեամբ ստեղծել է իր համար մի ուրոյն փիլիսոփայութիւն, որ ֆննութեան է ենթարկում հասարակական ամէն մի շարժում, եւ առանց այդ բովից անցկացնելու ոչինչ չէ ընդունում:

Երէկ ծանօթացայ անգլիական կոնսիւլին մօտ մարդկանց հետ. շատ տարօրինակ կերպով են նկարագրում առհասարակ եւրոպական ներկայացուցիչներին եւ մասնաւորապէս էլ անգլիական կոնսիւլին: Տեսականապէս մասամբ հասկանալի է, քաղաքակիրթ եւրոպայից հոս եկողները մեծ մասամբ հացկատակներ են. նրանք որոնք եւրոպայի կեանքի կուում անընդունակ են հանդիսանում, մանապարհում են դէպի Տանկաստան...

Սա իրեն շրջապատել է ամենակեղտոտ մարդկանցով, հաւասարապէս իբր թէ ատում է և հայերին և թուրքերին, բայց իրականութիւնն այն է, որ իր տեղեկութիւնների համար աւելի հաւատում է թուրքական քան հայկական ազդիւրներին:

Հայերի մասին նրան գեկուցում տուողները իրեն թուրք գաւազներն են եւ իր շրջանի միակ հայը — իւր սեփական հայ խոհարարը. իբրեւ հայ ժողովուրդի դատի պաշտպան՝ Շամի անգլիական կոնսիւլի առաջ միշտ ներկայանում է այդ հոչակաւոր աշնին: Անձամբ չեմ տեսել, բայց պատմում են, թէ ինչ որ կարող է անել մի աշնի, նա անում է. բայց ծիծաղելիին այդ չէ, այլ այն որ փառաբանած անգլիացի ներկայացուցիչը հայերի մասին գաղափար կազմելու համար բաւականանում է միայն իր աշնով, որի տուած տեղեկութիւններին էլ, մատների արանքով է նայում:

Պաշտօնական թարգմանը մի տանկահպատակ իտալացի է, որ աքտորուած է Պոլսից հոս. ո՛չ անգլերէն գիտէ

եւ ոչ հայերէն, կոնսիւլի եւ թարգմանի միջի անձը եւ իր կողմից թարգմանը հանդիսանում է վերոյիշեալ աշխին, որ գիտէ անգլերէն եւ կոնսիւլի ասածները կը թարգմանէ թարգմանին եւ թարգմանինն էլ կոնսիւլին:

Պատմում են՝ աշխին և թարգմանը փոխադարձ մըրցման մէջ են եւ ամէն մէկը աշխատում է ինքը հեղինակութիւն ունենալու եւ միմեանց նիւթական գեղծումները պարզելով արեւի շատ են զբաղեցնում կոնսիւլին քան հայկական խնդրով:

Իտալացի թարգմանը որեւէ բարոյական նկարագրից զուրկ մարդ է եւ մասնաւորապէս պարապում է մաքսանենգութեամբ:

Այս հոչակաւոր թարգմանը ԾԵի կոտորածի ատեն, այն ժամանակուայ անգլիական կոնսիւլի հետ միացած փառահեղ կերպով դեկավարում էին տանկաց զօրքերին, արեւի շեշտակի նշան բռնելու դէպի յեղափոխականներին:

Պատմում են ականատեսները, որ Դէպֆին երբ տանիկ զօրքերը չէին կարողանում թնդանօթով նշան բռնել, անգլիական կոնսիւլը անձամբ մօտենում է, ձեւերը սովորեցնում և իւր ձեռքով թնդանօթները ուղղում դէպի այն թաղերը եւ տները ուր յեղափոխականներ կային: Այսպէս են պաշտպանում փառաբանած անգլիական ներկայացուցիչները հայերին...

Մնացածներն էլ նոյն կարգի մարդիկ են. ոչ մի հասարակական խնդրով զբաղուելու ոչ խելք ունին, ոչ տրամադրութիւն: Առհասարակ զբաղում են քէֆով եւ եւրոպացի միսիոնարուհիների հետ ժամանակ անցկացնելով... իսկ եւրոպական արտաքին գործոց նախարարները փառահեղ կերպով վկայում են, թէ կոնսիւլների ներկայութիւնը բարեբար ազդեցութիւն է ունենում տանիկ կառավարութեան եւ ժողովուրդի վրայ: *Օ դէմպորա, օ մորի...*

8 Մարտ

Մի գիշեր, բաւական վատ եղանակով, կարծեմ Բարեկենդանի ազիզ օրերից մէկն էր, բեռնաւորուած հրացաններով եւ փամփուշտներով գնում էինք հեռու թաղե-

րից մէկը. հասարակ տեղափոխութիւն էր. պատահական կերպով անցայ ամերիկեան որբանոցի առաջից և յանկարծ լսեցի եւրոպական մի երգի ձայն, զոր երգում էին մի խումբ հաւանօրէն կանայք, դաշնամուրի ներդաշնակութեամբ. յատկապէս տեղս մեխուեցի եւ մի քանի վայրկեան ականջ էի դնում: Երգի ելեւէջները մէջս ծնեցրին տխուր, տխուր մտքեր. մտածում էի, որ այս եւրոպացիները յանուն գթութեան եւ մարդասիրութեան եկել են մեր Երկիրը ու մեր թշուառութեան վրայ մի պուրժուական երջանկութիւն հիմնել, եւ դրանով իրենց մարդկայնական պարտականութիւնը կատարած են համարում, իսկ որբանոցից մի քանի քայլ անդին հազարաւոր գիւղեր ու քաղաքի թաղեր մերկ ու անօթի հեկեկում են, նրանք էլ թշուառութեան երգն են մըմնջում... Բայց ինչո՞ւ մեր թշուառութիւնների վրայ եւրոպացիների իրենց համար հիմնած երջանկութիւնը մենք մարդասիրութիւն ենք համարում... մտքերի գուգորդութիւնը հեռու հեռու տարաւ ինձ: Վերջը խորին համոզմունքով բացականչեցի, — երանի թէ այս ծով դժբախտութեան վայրում այս մի հատիկ ովասիսն էլ չլինէր, ովասիս, որ խաբուսիկ եւ օդային է: Կարծես եւրոպական երգի մեղեդիները դիտանան էին համատարած վշտի երգի ալիքների մէջ...

Ա՛խ, երանի այն օրին, երբ որբանոցները եւ նման պուրժուական հիմնարկութիւնները կը դադարին ովասիս լինելուց, եւ այս դժբախտ երկրի ժողովուրդները կը կարողանան իրենց մշակութային հանճարով եւ տնտեսական արդար վաստակով ստեղծել ամբողջ երկրի համար, բոլոր հասարակութիւնների եւ ժողովուրդների համար մի արեւի ալյաւէր եւ հիմնական ձգտումներով ովասիս...

11 Մարտ

Տանիկ կամաւորը. — վերջերս — Բարձրաւանդակի ապստամբութեան նախընթաց օրերում — սկսուել է մի հոսանք թուրք զօրքերի մէջ դէպի հայ չէթաները. պատմաւորները իրենց բոլոր կողմերով տալ՝ առայժմ անկարելի է, որովհետեւ երեւոյթը դեռ նոր է եւ չուսումնասիրուած,

բայց յամենայն դէպս փաստ են հետեւեալ իրողութիւնները:

Տանիկ կառավարութիւնը չէ կարողանում կանոնաւոր կերպով սնուցանել եւ հագցնել իւր գօրֆերին. բնականաբար զինուորները դժգոհ են այդ դրութիւնից. թուրք կեանքը դեռ այնքան անկանոն է, որ չէ կարողանում այդ դժգոհութիւնը կազմակերպել եւ յեղափոխական գոյն տալ, իսկ իբրեւ անհատ դաշազներ այդ դժգոհները չեն կարող ապրել կամ իրենց ձայնը լսեցնել տալ (գուտ անհատական մոթիւններով), միւս կողմից էլ, մեծ մասամբ Եւրոպական Թուրքիայում, տարածուած է ժէօն Թուրքիայի ազանդականութիւնը (մի տեսակ՝ սահմանադրական ձգտումներով կազմակերպուելու տրամադրութիւն ունեցող տարրեր են), որը դժգոհ է ներկայ ղեկավարից. սրանցից շատերին Եւրոպական Թուրքիայից ափսոսել են Հայաստան, իբրեւ զինուոր կամ իբրեւ պաշտօնեայ անորոշ ժամանակով կառավարութեան ծառայելու համար, ամենախայտառակ պայմանների տակ: Ահա այս տրամադրութիւններով վարակուած մարդիկ տեսնում են իրենց դիմաց այլ շրջաններ — այլ խմբեր, որոնք նոյնպէս դժգոհ են տիրապետող ղեկավարից, բայց որոնք աւելի լայն յարմարութիւն ունին իրենց բողոքները յայտնելու այդ կառավարութիւնից, եւ ոչ թէ իրենց պէս խեղճ ու ազգատ են ապրում, այլ իրենցից էլ տասնապատիկ լաւ են ապրում, կարողանում են կառավարութեան երկիրը ներշնչել եւ այդ բոլորի հետ, ամէն ժողովուրդներից էլ գովում են իբրեւ ֆաջեր, իբրեւ ֆէտայիներ. պակաս նշանակութիւն չունէ վերջին երեւոյթը. առհասարակ յեղափոխական կռիւները ասպետական գոյն են կրում եւ շատ շատերի փանտագիան են գրգռում եւ հերոսանալու տրամադրութեամբ վարակում:

Կայ եւ այլ պատճառ. կարծես առհասարակ թուրք եւ մանաւանդ ֆիւրտ ցեղերը անպայման հաւատում են մեր կռուի յաղթանակին, եւ իբրեւ սպագայ իրաւատէրի — մեզ — իրենց օգնութիւնը և համակրանքն են արտայայտում: Բարձր շրջաններում կազմուել է այդպիսի տրամադրութիւն թէ՛ հայերի եւ թէ՛ օտարների մէջ, եւ առաջիկայ կռուից անպայման որեւէ բան էին սպասում, — բայց

ափսոս որ այդ յոյսերը չարդարացան, մի քանի պատճառներով որոնց մասին գրելը այստեղ տեղը չէ...

Ահա խոշոր գծերով այն պատճառները որ թուրք զինուորներին մղում է դէպի հայդուկային կեանք...

Ես տեսայ այդ զինուորներից մէկին, Սամսոնին, որ մասնակցել է Բարձրի ապստամբութեան, (ապստամբութիւնից մի քանի ամիս առաջ ներկայացել է իւր հրացանով Անդրանիկին և զինուորագրուել: Վերջին ամիսները երբ առաջարկել են իւր հայ ընկերներին հետ գնալ Պարսկաստան մերժել է եւ դրական կերպով գրել. — Ես ձեզանից եւ երկրից չեմ հեռանայ կամաւոր, եթէ իմ մէջ մի գէշութիւն էք տեսել զարկէք, եթէ ոչ պահէք ձեզ մօտ: Այժմ միացել է XX-ի(*) չէթայի հետ. պարզ զինուոր է, թէեւ եղել է օնքաշի: Թէ իր բնաւորութեամբ, թէ մաքրութեամբ եւ թէ ֆաջութեամբ միշտ լաւ տպաւորութիւն է թողնում ընկեր զինուորների վրայ, որոնք փոխադարձաբար սիրում են նրան, առհասարակ բոլորը դէպի նրան յարգանքով են վարուում իբրեւ գաղափարի մարդու: Ինքը եղել է ժէօն-Թուրք, — ափսոսուել է Դուրան, 12 տարի ծառայել իբրեւ զինուոր (այժմ էլ ապրում է իւր տարագով), իւրացրել է մեր շրջանի բոլոր սովորութիւնները, անցեալ օրերը երբ գործով պիտի մի տեղ գնար ընկերական կերպով մօտեցաւ բոլորիս և համբուրեց իբրեւ իւր մօտ մարդկանց:

Ճիշդն ասաց ինձ յուզեց այդ հրաժեշտը, մարդ մի տեսակ խորհրդաւորութեան մէջ է ընկնում, երբ տեսնում է՝ ծով անտարբերութեամբ եւ փանատիկոսութեամբ տոգորուած ժողովրդի միջից, այդպիսի տիպեր են դուրս գալիս. բնականաբար սկսում եւ հաւատալ գաղափարի գերազոյն Աստուծու: Ա՛խ, երբ պէտք է նա, վերջնական յաղթանակ տանի:

X-ը(*) Երկրից հեռացաւ. երբ ինքս ինձ հարցնում եմ ինչո՞ւ, չեմ կարողանում ոչ մի բանաւոր պատճառ գտնել. պատճառները գուտ անձնական են. մենք առաջար-

(*) Իշխանին կ'ակնարկուի:

(*) X-ը. ինչպէս կ'երևի այդ ժամանակուայ Շամի կեղծ. Կոմիտէի պատասխանատու զործիչներէն մէկն է եղած:

կում էինք որ պիտի ընկերակցական գործ սկսենք. իսկ ինքր շարունակում էր իւր դիկտատորութիւնը: Ախր եթէ հմուտ դիկտատոր լինէր ոչ ոք չէր ցատեր, բայց այդ էլ չկար: Վերջապէս այդ մարդէն ես բան չհասկցայ, կարծես երկիրը նրա համար մի լաւ կահաւորուած, սալոնական յարմարութիւններով հիւրանոց էր, իսկ ինքը հիւր. եկաւ մի տարի վայելեց ու անցաւ գնաց. բայց յամենայն դէպս անմահացաւ եւ կ'արժես թէ շատ էր ձգտում այդ կոչման:

Գիսակը(**) սկիզբում համաձայն էր նրա հեռանալուն, բայց վերջը փոշմանեց եւ դիմեց մեզ բացատրութիւն տալու. ես նամակ էի գրել ու բացատրել որ ոչ մի պատճառ չկայ, զուտ անձնական համակրանքի կամ հակակրանքի խնդիր է... Նամակիս իբրեւ պատասխան գրել էր.—

«Սիրելի Արամ, չեմ ուզեր ծանրանալ այլեւս ի՜նչուի հարցի վրայ, եւ առ այժմ աւելորդ վիճարանութիւնների դուռ բանալ, եւ արդարութիւն ալ չէ, քանի որ ինքը հոս չէ եւ չի էլ կարող իր վրայ բուռելիք մեղադրանքներու պատասխան տալ. խնդրը ներկայումս (ինչպէս կ'ըսէք) կացութիւնը դարձանելու մէջ է:

Նախ երբեք չեմ կասկածիր որ ի՜նչու դրամական ղեղծում ըրած լինի, ինչպէս անշուշտ դուք ալ կը հաւատաք, բայց թէ կարողութենէ վեր ծախսեր եղած են, այդ կարելի է. բայց ինչ որ ալ լինի՝ պարտք կայ, սեղիս համար ծանր եւ սպանալից, որու անմիջական դարձան մը մտածել եւ գործադրել անհրաժեշտ է: Պատիկի կարծիքով պէտք է՝

Ա.— Խնայողութիւն ընել եւ չձեռնարկել այնպիսի գործ, որ մեր պիտածէն չի ներքեր...

Բ.— Զէնքի համար առնուած դրամներու փոխարէն անպատճառ մի կարգադրութիւն ընել եւ դո՛հացում տալ. ամենամեծ վարկաբեկումը այդ է:

Գ.— Կանոնաւոր հաշուապահութիւն եւ առանց կամիտէի հաւանութեան եւ սրտման ոչ մի կողմէ չձախսել...

(**) Գիսակը, վարդգէս Արքեպիսկոսն է, որ այդ ժամանակ կը գտնուէր Վանայ բանտում եւ անդամ էր Ծածի Կ. Կամիսէին:

Դ.— Պարտքի համար գրել Բիւրօներուն, եւ ես կը մտածեմ անձամբ դիմել նաեւ Ամերիկայի Կոմիտէին եւ անոր անմիջական աջակցութիւնը պահանջել... եւ

Ե.— Եթէ դուք կ'ուզէք կանոնաւոր մի գործ տեսնել՝ գլոյշ կեցէք ուրեմն դիկտատորական ձգտումներէ...

Ի՜նչու հեռացած օրերը դուժած էր էլլէնի մահը, ինչպէս նաեւ մի կասկած յայտնած էր՝ թէ վախ կայ, որ դաշնակցական ուժեր երկուքի կը բաժնուին: Կը խնդրէի այս երկուքի մասին ալ մանրամասն գրէք:

Համբույրներով — ՖէՏԱՅ»

ԴՆ. 7 Ապրիլ 905

Զարմանալի է տանկահայ ժողովուրդը. հալածուած ամէն կողմից, կեղեքուած բոլորից, ամէն բան սպասում է յեղափոխականներից. նոյնիսկ դէպքեր են պատահում, որ առաջարկութիւններ են լինում, մեղադրել կառավարութեան առաջ, այս եւ այն պաշտօնեայի լրբութիւնների առաջին առնելու: Մանաւանդ զարմանալին այն է, որ յեղափոխականների վրայ նայում են իբրեւ աստուածային ուժով շրջապատուած մարդկանց վրայ եւ իբրեւ ամենագէտ հրաշագործների... առհասարակ այն կարծիքն են, որ ով յեղափոխական դրօշի տակ է մտնում, իսկոյն ներշնչում է ամենակարող ուժով:

Յեղափոխական գործիչի հոգեբանութիւնը եւ հոգեբանական պարագաները շատ բացառիկ են, այնքան բացառիկ, որ մարդ երբ տրամաբանօրէն վեր է լուծում այդ հոգեբանութիւնը միայն մի շատ յոռի եզրակացութեան կը հասնէ... Երկրի ամէն կողմից, ժողովուրդի բոլոր խաւերից, բոլոր ցաւերը ներկայացնող գերագոյն ատեանը յեղափոխութիւնն է. կառավարութիւնը վաղուց է լաւ լինելուց հեռացել. միւս բոլոր ազգային լեզու հիմնարկութիւնները մէկ-մէկ գործիքներ են կառավարութեան ձեռ-

քր. մնում է միակ զգայուն եւ շուտով արձագանգ տուող հիմնարկութիւնը — յեղափոխութիւնը — եւ ահա նրա առաջ բացում է ժողովրդական դարտ ու վէրքերի ամբողջ տեղատարափը: Օրուայ մէջ հարիւրից աւելի իրար հակառակ զգացմունքներ առաջ բերող լուր էֆ լսում: Ահա կը գայ արտասահմանեան փոստան, մեր երջանկութեան միակ աղբիւրը, բոլորս ուրախ ենք: Ա՛խ, երանի թէ այդ փոստան ամսական գոնէ երկու անգամ գար. գոնէ երջանկութիւն առաջ բերող զգացմունքներ շատ կը լինէին. իսկ դրանից դուրս բոլոր բօթեր են. կոտորած, թալան, բռնակալութիւն, խուզարկութիւն, մատնութիւն, պաշտօնեաների լրբութիւններ, դպրոցական պատուհասներ, ֆահաւնայական խնդիրներ, զանազան ազաներէ լրբութիւններ ու վաշխառութիւններ: Ցաւեր, ցաւեր ու անվերջ ցաւեր. եւ այս բոլորի դարմանողը դու պիտի լինիս քու սովորական մարդկային խելով ու կարողութեամբ:

Վերջերս, փառք Աստուծոյ, սկսում է ժողովրդական տրամադրութիւն եւ շատ խնդիրներ ինքն իրենց լուծուելու նանապարհի վրայ են... երբ կառավարութիւնը թուլանում է, մենք ենք մեր կամքը թելադրում, իսկ երբ մենք ենք թուլանում, կառավարութիւնը փառահեղ կերպով սկսում է իր շահատակութիւնները... Վերջերս տեղիս ազդեցիկները առանց մեր կոնդրոլի ոչ մի ֆայլ չեն աւնում եւ միշտ պատրաստ են մեր խորհուրդներին լսելու... Ա՛խ եթէ լինէր մի խելօք ու հմուտ մարդ որքան գեղեցիկ կերպով կը դասաւորուէին մեր գործերը, բայց ի՞նչ կարող են անել մեզ պէս սովորական ուժերը՝ բացի եօլայ տանելուց... եօլայ տանիլ. սա էլ մի կողմից իւր տափակութեամբ մեզ նեղում է...

✱

Լինում է բոլոր երբ մենք զմեզ ամենաերջանիկն ենք համարում, հասարակական բոլոր դասակարգի գործիչներից. դա արդէն գաղափարի յաղթանակի բոլորներն են, երբ ամբողջապէս տարուած գաղափարով, մարդ իրեն մեծ է զգում և բարձր բոլոր բուրժուական հասկացողութիւններից. երբ մարդ ապրում է ու գործում գաղափարի համար

եւ զգում է ամենանորմալ հոգեբանութեամբ, որ եթէ ժամանակից առաջ էլ մեռնի հոգ չէ. վերջապէս սա նիշդ նման է այն դրութեան երբ մարդ կարդում է փանտաստիկ գոյներով նկարագրուած մի վէպ, ապրում ու տանջում է հերոսի հետ եւ կ'ուզէ գոնէ մի օր, մի ժամ, մի բոլոր ապրիլ հերոսի կեանքով... Մենք հեռու լինելով գրքերի, նոյնիսկ կեանքի հերոսներից, բայց միշտ զգում ենք որ մենք ապրում ենք գաղափարով եւ գործում ենք միմիայն գաղափարի համար. մեզ համար ուրիշ դրդիչ պատճառներ չկան. ահա այդ ժամանակն է որ մենք թեւ առած կը թռչենք եօթներորդ երկինք եւ կը զգանք որ մենք երջանիկների երջանիկն ենք. երջանկութիւն որ պատճառում է ոչ մի երեսայի գեղեցիկ ժպիտը կամ մի կնոջ գուրգուրանքը, այլ մի ամբողջ տառապուած ժողովրդի վերածնութեան կարելիութեան իտէալը... Օ՛հ, այդ բոլորները մենք չենք փոխի եւ ոչ մի բուրժուական-սալոնական յարմարութիւններով շքապատուած կեանքի հետ. կեանք որ միշտ իւր երջանկութեան իրական լինելու մասին կասկածացնել է տալիս...

Այլ է մետալի միւս երեսը. մեզ համար ամենադառն բոլորները թերեւս մարդկութեան կեանքի ու պատմութեան ամենադառն բոլորները լինին, բոլորներ, երբ մի ամբողջ ֆաղափակիր ժողովուրդ գոհ է գնում մի կոպիտ ուժի, բոլորներ՝ երբ ամենագեղեցիկ իտէալներ ոտի տակ են տալիս, բոլորներ երբ քո ամենահաւատարիմ ընկերն է քեզ դաւաճանում, բոլոր երբ քո ամենագեղեցիկ ծրագիրներն են ջուրը ընկնում, սա մեր դժոխային բոլորներից ամենադժոխայինն է... Սա էլ այն բոլորն է երբ մարդ հոգու ամբողջ թելերով կ'ուզէ մեռնիլ, երբ մահը մետալի միւս երեսի երջանկութիւնն է, բայց այդպիսի բոլորներում էլ այդ անիծած մահն է մեզնից խուսափում...

Երանի նրանց ովքեր կարող են այս հակառակ ծայրերի երջանկութիւնները լիւրի վայելել...

✱

Երէկ լուր առանք որ մօտակայ Բերդակ գիւղում քրտերը մի հայի սպանել են ֆարով. կառավարութիւնը — ինչ ասել կ'ուզէ — տէրը չեղաւ...

Այսօր էլ լուր առանք որ Ապաղայի դաշտում քրտերը սպաննել են երկու գաղթական հայի որ հայրենիք — տուն կը վերադառնային. երրորդ ընկերը նողոպրել փախել է. բայց նա էլ ֆաղափի մօտ տանիկ պաշտօնեայից այնքան է ծեծուել որ մեռել է... մահ, մահ, ամէն կողմ մասնակի կտորած, բայց մեր աչերը բթացել են. մենք էլ չենք յուզում... յուզուիմք էլ ինչ պիտի լինի... ո՞վ է լսողը... բայց այս բոլորի հետ էլի երկիրը չեմ փոխի դրսի կեանքի հետ եւ ոչ մի բոպէ գլուխս չէ գալիս դուրս գնալը... Մնաս բարով բուրժուական կեանք...

**

Մի ինքնատիպ ինքնապաշտպանութեան գէնք: Անցեալ օրը խմբապետական ժողովում ծեծուում էր այն հարցը, թէ ինչպէս զինել խմբերը. երկար ու բարակ բացատրութիւններից յետոյ, երբ շեշտուում էր որ ներկայ տնտեսական պարագաներում դժուարութիւններ կան զինուելու, խմբապետներից մէկը առաջարկեց մի ինքնատիպ գէնք. — Մենք վնուել ենք մեր ամէն մի անդամի համար պատրաստել մէկ-մէկ լաւ փայտ իբրեւ ինքնապաշտպանութեան գէնքեր, բայց որպէսզի մեր ձեռնարկը յաջող լինի, կռուի ժամանակ յաղթանակ տանինք, մեր թաղն էլ պաշտպանած լինինք, մտածել ենք այսպիսի մի միջոց, — փողոցների կողմը գտնուող կտուրների վրայ դիգել մոխիր, և երբ թուրք ամբոխը, կամ գօրքը կը յարձակուին թաղերի մէջ տները կողոպտելու, մեզնից մի մասը կտուրների մոխիրը կը թափէ ամբոխի վրայ, նրանց աչքերը կը մթացընէ, իսկ միւս մասն էլ փայտերով կը յարձակուի նրանց վրայ եւ գէնքերը ձեռքերից կ'առնի... այդպիսով մենք կը տաքրբրական ինքնապաշտպանութեան առաւելութիւնները...

Ճիշդ որ կարիքը հնարագէտ է դարձնում մարդկանց:

**

Անցեալ օրը, հեռու գիւղերի մէկից (ֆրտախառն) ուր մենք կազմակերպութիւն չունենք, մի կին, որի ամուսինը 96ի դէպքին սպաննուել է նոյն գիւղի ֆրտերից, մեզ ուղարկել է 400 դրշ. դրամ, որ իւր համար մի գէնք գնենք, որպէսզի առիթը ներկայացած ժամանակ նա էլ լուծէ իր վրէժը... Ամէն մի տանկաստանցի կնամարդ թշնամու հետ մաքրելու հաշիւ ունի:

Պատահած են դէպքեր, որ վրէժ լուծելու եւ զինուելու համար ծայրայեղ միջոցների են դիմում. օրինակ՝ ֆաղափում կեանքի գնով թուրքի տուն մտնել գէնք գողանալ, իսկ գիւղում՝ պատահած ոստիկանին գարկել, դիակը ծածկել, իսկ գէնքը իւրացնել: Անցեալները մի այդպիսի դէպք պատահեց, որը բացուեց եւ երեւի շատ թանգ կը նստի այդ գիւղի վրայ. շատերը բռնուել են. չենք կարողանում զսպել այս ժողովուրդի նման կողմերը...

(Վերջ Արամի Յուշերուն)

ԱՐԱՄԻ ՄԵԿ ՆԱՄԱԿԸ ՎԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

1918, Մարտ 6
Երեւան

Վանի ընկերներին.

Սիրելի՛ք: Ձեզանից բազմաթիւ նամակներ եմ ստացել եւ ոչ մէկին կարծեմ հնարաւոր չեղաւ պատասխանել: Լրագիրներից կ'իմանանք վերջին անցուդարձը: Ես ուզում եմ միայն ստեղծուած կացութեան մասին մի քանի գործնական թելադրութիւններ անել ձեզ:

1.— Լրագիրներից եւ նամակներից կը տեսնէք, որ կովկասը ահաբեկուած եւ խուճապի է մատնուած. սրա պատճառը փնտռելու էք ոչ թէ թշնամու գերազանց ուժերի մէջ, այլ մեր ներքին կացութեան. զօրքը անբարոյականացել է. տուն փախչելու փսիխոզը հասել է ծայրայեղութեան. սրա դէմ վերջերս միջոցների դիմեցինք՝ կիրարկելով մահուան պատիժը, եւ աջ-ձախ սկսել ենք զարնել. առաջին տպաւորութիւնը լաւ է: Այս լուսածուրփիւնը մեծապէս ազդեց նակատների վրայ. հրաման են տուել ետ փաշուել. երեւի, նոյնը կ'անեն եւ ձեզ:

Քաջ ծանօթ լինելով թուրքերի վիճակին՝ կարծում եմ, որ դուք այժմ ինձանից լաւ գիտէք այդ. պէտք է տեղի չտալ, գէթ պաշտպանել Ալաշկերտ-Վան հողամասը թիկունքը լաւ ամրացնելու պայմանով:

Այժմ, մեղաւորներ որոնելու ետեւից չընկնեմք. այսօր միայն իմացէք, որ այստեղ մի չնչին փոքրամասնութիւն դարձեալ հերոսական նիգեր է անում, որ ոեւէ կերպով նոր ուժեր հասցնեմք նակատ: Ես անձամբ հաւատացած եմ, որ այդ մեզ կը յաջողի, միայն թէ դուք դիմացէք:

2.— Վանի պրիզադային ձեռք հրահանգին համաձայն թոյլ չտուի, որ շատ մարդ վերցնի. մօտ 1500 գէնք եւ 4000 կոմպլէկտ հագուստ ունենք պատրաստ ձեզ համար: Ես կարող եմ հասցնել մինչեւ Իգդիր. աշխատեցէք այնտեղ բեռներով ոեւէ կերպ ներս փաշել:

Ալաշկերտի Ղարաֆիլիսէն փամփուշտ կայ մոսիւնի, աշխատեցէք այնտեղից էլ օգտուել: Այնտեղ մօտ մէկ միլիոն պատրաստի փամփուշտ կայ ձեզ համար:

Խիստ եղէք դասալիքների եւ դաւաճանների վերաբերմամբ:

Վանի պրիզադայի պետը մի լաւ մարդ եւ հրաշալի ու փորձառու պոլկովնիկ է, ներկայացուած է զօրավարութեան, կամ դէպքերի պատճառով չի ստացել. շատ պիտի սիրէք, հոգով հայ է եւ տղամարդ. ինքն էլ զարաբազի է իսկական տիպով(*): Շուտով կը պատրաստենք եւ թընդանօթ-ածիգներ. արդէն հեռագիրներ ունենք, որ սպանեցնեն գալիս, այնպէս որ դրանց հետ ռուսահայեր կը դնենք եւ կ'ուղարկենք անմիջապէս ձեզ:

3.— Իմ կարծիքով ե. պոլկի աւելորդ գէնքեր եւ ինչքեր ձեզ թողնելով, վերցնելով և լաւ սպաներին՝ միւսներին պիտի թողնել, որ ռադ լինին. այդպէս էլ ես պիտի աշխատեմ այստեղ:

4.— Դրամի համար ամէն կերպ աշխատեցինք, որ մի գումար հասցնեմք. այդտեղից փոխիցա փաշեցէք՝ հոս վնարենք ընտանիքներին:

5.— Շուտով ներկայացրէք ձեռք գիւնուորների ընտանիքների անդամների թիւը գիւնուորների անունների հետ, որ ամսականներ կապենք. երեւի գիտէք, որ տունը

(*) Խոսքը Դանիէլ բէշ ֆիլիստինի մասին է:

մնացող մարդագլուխ, մեծ ու փոքր, ապառ կամ հա-
րուստ ստանալու է ամսական 20) րուբլի:

6.— Սուրհանդակներ հանեցէ՛ք մինչեւ Երեւան. ու-
րիշ կերպ լուր առնել կամ տալ անհնարին է:

7.— Կովկասը մեծ նզնաժամ է ապրում. հայ-քուր-
ֆական ո՛չ թէ ընդհարում, այլ պատերազմ է սկսուել.
Վրաստանը մեզ էլ, իրեն էլ խայտառակեց. սկզբից հա-
կառակելով զինուորագրման՝ հիմա խուճապով սկսել են
զինուոր հաւաքել:

Նահանգ նահանգի հետ կապ չունի. մի ամիս է Թիֆ-
լիսից լրագիր կամ փոստա չենք ստանում:

Բազում եւ Շուշու կողմերը դրութիւնը ծանր է.
դեռ ընդհարումներ չկան, բայց օրէ օր սպասում են. մե-
րոնք լաւ կազմակերպուած են:

Պոլկեր կան Շուշի, Գանձակ, Նուխի, Բազու եւն.:

Եւրոպական բեմից լուր չունենք: Անգլիացիք, ըստ
երեւոյթին, Երուսաղէմի կողմերը յաղթանակներ են տա-
րել:

Գերմանացիք, ըստ լուրերի, գրաւել է Օդէսա,
Կիւիվ, Խարկով, Մոսկուա, Պետրոգրադ եւայլն:

Հիւսիսային Կովկասից հաց չենք ստանում. գորքը
պահում ենք ազգային միջոցներով: Երեւան ֆաղաֆը տը-
ւել է մէկ միլիոն րուբլի: Հացի գինը խալվարը (30 փութ)
1500 րուբլի է. սկսել են բրինձի եւ ցորենի խառն հաց քը-
լսել գորքի եւ ժողովրդի համար:

Թալան, գողութիւն եւ սպանութիւններ աջ ու ձախ
լեցուած են:

Եկողները աւելի լաւ են պատմում ձեր շրջանի մա-
սին, այնպէս որ մենք նախանձում ենք ձեզ:

Լեւոնին ասացէ՛ք, որ 500 րուբլին ուղարկել եմ:

Շատ եւ շատ բարեւներով

ԱՐԱՄ

Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՐԱՄԸ ԿԱՐՍԻ ՄԷՋ

Մեծիկին հետ գիշերը խուլ անկիւններով մտանք տուն մը, որ կարծես հարսնետուն էր: Փողոցի մէջ պահապաններու նման մարդիկ էին կանգնած, դուռը ցոյց կու տային: Կեղծ հարսնիք էր, բայց, իրօք, ժողովատեղին էր, ուր հաւաքուած էին 200է աւելի կիներ եւ այրեր: Նուազածուները իրենց սանթուռով, ճիւղնուռով, դաֆ ու զուռնայով նստած էին այնտեղ, բայց չէին նուազեր: Բոլորը ակնածանքով կը նայէին ցաւոտ աչքերով մարդուն:

Այդտեղ հասկցայ որ ցաւոտ աչքերով մարդուն անունը Սերգէյ է եւ որ ան այդտեղ հաւաքուածներուն մէջ ամէնէն սիրելին, ամէնէն յարգուածն էր: Բայց այժմ ան ցերեկուայ խոժոռ մարդը չէր. ընդհակառակը, ամէնուն հետ կը խօսէր, կը կատակէր եւ որուն որ խօսք մը ըսէր՝ ան կը հալուէր, կ'երջանկանար կարծես, որ կ'արժանանար անոր ուշադրութեան:

Սերգէյը սկսաւ ճառ մը Տաճկահայ Դատի մասին: Միտքերը այնքան էլ խորը չէին երեւար, կրկնուած խօսքեր էին: Բայց ան կը խօսէր այնպիսի շեշտով, այնպիսի ոգի կը դնէր իր կոշտ խօսքերուն մէջ, որ կը հմայէր բոլորն ալ: Ես ազդուեցայ իր խօսքերէն: Բայց երբ սկսաւ վիճարանութիւնը եւ քիչ մը ժամանակ անցաւ, ես շատ մտքերուն հետ համաձայն չէի, սակայն չհամարձակեցայ հակաճառել:

Եղաւ վիճակախաղ, հանգանակութիւն: Յակորը կը զեկավարէր քանի մը տիկիներու հետ:

Ահա այդ ժամանակ էր, որ ինձ մօտեցաւ Սերգէյը եւ հարցուց, թէ ի՞նչ է կարծիքս իր արձարձած հարցերու մասին: Բացատրեցի իմ մտքերը, որ հակառակն էին իր ըսածին: Ան տարօրինակ եւ ոչ-յեղափոխական գտաւ իմ կարծիքը եւ իր ըսածը այնպիսի

հաւատքով ու անկեղծութեամբ պաշտպանեց, որ չէի կրնար չյար-
զել թէկուզ սխալ համարէի իր մտքերը:

Չգիտեմ Սերգէյը ի՞նչ գտաւ իմ մէջ, բայց այդ օրուրն էր—
լորովին տարրեր վերաբերմունք ունեցաւ ինձ հանդէպ: Մենք ա-
ւելի մտերմացանք իրարու հետ, եւ մեր մտերմութիւնը քանի զնաց՝
աւելի խորացաւ, մինչեւ անոր մահը:

Այդ ցաւոտ աչքերով եւ խոժոռ դէմքով մարդը Կարսի Սեր-
գէյն էր, որ հետապային եղաւ Վանի Արամը, որուն թուրքերը Փաշա
տիտղոսը տուին: Ան յետոյ դարձաւ Երեւանի դիկտատոր Արամը,
որ, առանց տեսնելու Հայաստանի Հանրապետութեան անկումը, յա-
ւիտենապէս բաժնուեցաւ այս աշխարհէն:

Սերգէյին վրայ նայելով՝ կը հասկնայի թէ ի՞նչ կը նշանակէ՝
«Հաւատք քո կեցուցանէ գեղ»: Կը հասկնայի թէ որքա՞ն թոյլ եւ
խախուտ է բանականութիւնը՝ հաւատքին առջեւ...

«Հայ յեղափոխականի մը յիշատակները»

Ա. հատոր, էջ 35-37

ՔԱՐՄԱՂԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Մեր տանն ենք: Միծաղով դուռը կը բացուի եւ համբոյրի ու
աղմուկի տակ, ինքնաեռի շուրջ կը տեղաւորուինք: Չեզ ի՞նչ ըսեմ,
քանի որ ամէնքդ ալ մայր, քոյր եւ եղբայր ունեցած էք եւ իմ ա-
սածէն աւելի լաւ կը զգաք հանդիպումի եւ բաժանման պահերը:
Բաժանման ուրուականը կար, որ քիչ մը կը թթուեցնէր քաղցրու-
թիւնը եւ անոր կու տար «մայխոջ» (թթուաչ) համ մը, աւելի ցան-
կալի, աւելի ըմպելի:

Մայրս ըսաւ ինձ.

— Մընիկս(*), ե՞րբ կ'երթաս:

Ուսերս թօթուեցի, որմէ հասկցաւ որ ես ալ չգիտեմ: Ես ու
ան լուռ էինք ու թէյը խմելով էինք զրաղուած: Բայց ամենէն շատ
ազդեկողը Սերգէյն էր իր քրքջան ծիծաղով ու կատակներով:

— Քա՛, արլա, վստահ եղի՛ր որ առանց հիւրերի եկած եմք:
Բազմիքի մէջ թողեցինք, եկանք: Դուռը փակեցէ՛ք եկող գնացողի

(*) Մընիկ — Միմասի, սր Ռուբէնի մկրտութեամ անունն է, կրճատուած
եւ փաղաքական ձեւն է: (Ա. Խ.)

առջեւ, փափուկ անկողինը փոեցէ՛ք եւ ներմակ սաւանով ծածկեցէ՛ք,
մեմք անուշ անուշ պիտի քնենք: Պիտի ելնանք, ուտենք եւ նորէն քն-
ենք, մինչեւ որ հանգստանալէն յոգնինք:

— Ծատ լաւ, Սերգէյ ջան. դու մէկ էն ասա, ձեր վրայի հիւ-
րերը քանի՞ օտք ունէին, երկու՞ս, քէ աւելին, — եւ մայրս ու Սեր-
գէյը սկսան իրար վրայ խնդալ:

Երեք ցերեկ, երեք զիշեր աշխարհէն կտրուեցանք, քնացանք,
ելանք, կերանք, խմեցինք եւ նորէն քնացանք: Երբորդ օրը, դէմ
դիմաց պառկած, մեր աչքերը առաստաղին սեւեռեցինք, ինչ որ ար-
դէն նշան էր որ՝ յոգնութիւննիս անցած է: Տարօրինակ մեքենայ է
մարդ արարածը. երբ ազատ է ընթացիկ կեանքի հոգէն, երբ յոգ-
նած չէ եւ եռանդով լցուած, կ'ուզէ անպայման պարպուիլ աշխա-
տանքով կամ մարմնական շարժումներով: Իսկ եթէ ատոնք չկան,
ան իր համար աշխատանք կը ստեղծէ՝ սպառուելու, զրաղուելու: Ե-
րեւակայութիւնը միտքը կը սրէ եւ ընթացիկ կեանքին չվերաբե-
րող հարցերը առաջ կը քէ: Անպայման կ'ուզէ թափանցել իր դի-
մացինի հոգին ու հասկնալ թէ՛ ի՞նչ կ'անցնի կը դառնայ անոր մէջ:

Սերգէյի աչքերը անթարթ կը նայէին մէկ կէտի: Երբեմն յօն-
քերը կը կիտէր: Ես չէի խանգարեր զինք: Միտքս կը թափառէր Սեր-
գէյի եւ անոր Ծուշիի ընկերներուն շուրջը, որոնցմէ ոմանք արդէն
վերջնականապէս բաժնուած էին Սերգէյէն: Եւ ես կը մտածէի որ
մնացածներն ալ շուտով պիտի բաժնուէին անկէ, եւ գուցէ ինքն ալ
բաժնուէր ինձմէ, իր ընկերներուն ոչնչ: Արդէն նահատակութեան
պսակը կը տեսնէի անոր գլխուն եւ կը ցաւէի ու կը նախանձէի: Ծու-
շիի Սերգէյի խմբակը, որմէ շատեր տեսած իսկ չէի, իմ գլխուս մէջ
կը չըջէր եւ անոր բնազաւառը ինձ մարտիրոսաց քաղաք կը թուար:

— Տղայ, խո՛ւլ ես, — կը կանչէր ինձ Սերգէյը, — խելիդ
ն՛ւր է, ինչո՞ւ չես պատասխաներ: Ճիշդն ասա, ի՞նչ կը մտածես:
Ճիշդն ասա, կ'ուզեմ ստուգել, ենթադրութիւնս մի՞շտ է:

Նայեցայ Սերգէյին որ անկողնոյ մէջ նստած էր: Սեւ յօնքե-
րուն տակ աչքերը աղաչական դարձուցած եւ մատներովը ծնօտի
տակը բռնած՝ «մեան էօլում (քեզ մատաղ), մտքիդ ասա», կը խըն-
դէր ինձմէ:

Միծաղա բռնեց:

— Ի՞նչ Մարիամ Աստուածածինի կերպարանք ես առած: Հա-
ւատա՛, դատարկ-դատարկ բաների վրայ կը մտածէի, քու եւ քու էշ
զարաբազցիներու: Կը մտածէի քէ ե՞րբ պիտի կարողանամ տեսնել
ձեր քաղաքը:

— Զարմանալի է, — շիտկուեցաւ Սերգէյը բացականչելով, —
ես գիտէի որ դրանց մասին կը մտածէիր: Ուրեմն, դու որ մտածես,
ես կարող եմ գուշակել: Զգուշացի՛ր: Ի՞նչ եզրակացութեան եկար:

— Եթէ լրջութեամբ կ'ուզես խօսիլ, կ'ըսեմ. եթէ ոչ՝ թո՛ղ
իմծի մնայ:

*Սերգէյը կ'ուզէր լրջութեամբ խօսիլ եւ, որովհետեւ մինչեւ
այդ օրը իմ եւ անոր տեսակէտները մէկ յայտարարի չէին եկած,
եւ որովհետեւ նոյն տարակարծութիւնները ունեցայ ե՛ւ Զամախանի
հետ տասնեակ տարիներ յետոյ, պիտի վերջիչեմ այդ պարապ ժա-
մու խօսակցութիւնը:*

Ես սկսեցի բացատրել իմ «պիտերը»: Ան կը լսէր լրջօրէն:

— Անշուշտ քարմաղով ոսպ կամ ցորեն մազած ես կամ դի-
տած, ըսի ես: Այն որ փոշի է եւ մանր հատիկ, տակէն կը քափի-
դրանք անպէտք մասերն են: Մազի մէջ՝ երկու շերտ կը կազմուի-
մէկը՝ թեթեւ, որ կազմուած է մանր հատիկներէ, որոնք կ'ելլեն ու
կը ծածկեն մակերեսը, իսկ միւսը՝ կազմուած ծանր ու լիքը հատիկ-
ներէ, որոնք առաջին խաւի տակն են: Միւս կողմէ՝ քանի որ մազը
իր շուրջն ալ կը դարձնենք, մազի մէջ եղած բոլոր հատիկները, թէ՛
մակերեսինը, թէ՛ տակինը, կը դասաւորուին՝ ըստ իրենց մեծու-
թեան եւ ծանրութեան, մազի շառաւիղներու ծայրերուն եւ մազի
եզերքները: Համաձայն ես:

— Այո՛, եթէ այլ հանգամանքներ նկատի չառնենք, — պա-
տասխանեց Սերգէյը:

— Եթէ ուզիք է ըսածս, այդ պարագային դժուար չէ նշոյլ
թէ ո՞ւր են իսկական հայերը, որո՞նց հետ արժէ գործ ունենալ եւ
որո՞նց համար արժէ կեանք գոհել:

*Սերգէյը ապշահար կը լսէր. ես հանգստացրի զայն, շարու-
նակելով.*

— Ըսենք թէ Հայաստանը կլոր է եւ քարմաղի նման է: Անոր
կենտրոնը համարենք Մանազկերտը, իսկ եզրերը՝ Սիւնիքը, Գու-
գարքը, Վասպուրականը եւ Ծոփքը, այսինքն՝ մեր հին չորս բոլշ-
խութիւնները եւ կամ Տարսուս եւ փոքր կովկաս շրջանները: Մազի
առանցքը կ'անցնի Մանազկերտով, քարմաղը վեր-վար կ'ընէ Մասի-
սի բարձրութեամբ: Քարմաղի հորիզոնական շառաւիղները կը յան-
գին՝ մէկը Շուշի, միւսը՝ Սպեր, միւսը՝ Բաշկալա, միւսը՝ հար-
բերդ, եւ այս չորս շառաւիղները ձախէն աջ կը դառնան, ջրազացի
ֆարէն արագ:

Այժմ այդ մազի մէջ լցրու, փոխանակ ոսպի, հինգ միլիոն հայ



Իշխան, Շահպազ, Արամ

Եւ դարձրու արագ: Փոշին, անպէտքը մաղուելէն վերջ, մնացածն-
ը կը դասաւորուին իրենց ծանրութեան, հիւթեղութեան համաձայն:
Այսինքն՝ փունը, դատարկը, թեթեւը, անհիւթը, փոքրը, մարդկա-
յին տարրի վախկոտը, անխելքը, նախաձեռնութիւն, համարձակու-
թիւն չունեցողը եւայլն կը հաւաքուին կենտրոնի շուրջը: Եւ, ընդ-
հակառակը, լիքը, ծանրը, յանդուգնը, քաջը, նախաձեռնողը, այ-
սինքն՝ իսկական հայերը կը հաւաքուին եւ կը դասաւորուին շառա-
ւիղներուն վրայ, ըստ իրենց ծանրութեան: Արդ՝ այս բնական երե-
ւոյթէն եւ կ'եզրակացնեն:

ա) Շուշին շառաւիղի ծայրին կը գտնուի եւ ստոր համար է
որ ան միւս շառաւիղներու հետ միասին իր մէջ կը խտացնէ Հայաս-
տանի եւ հայութեան ամենաօգտակար, ամենամօծեղ, ամենավնաս-
կան մշակութային թէ ֆիզիքական տարերքը: Եւ եւ կ'եզրակացնեն,
որ առանց ծայրագաւառներու՝ ոչ հայութիւն եւ ոչ ալ Հայաստան
կը ստեղծուի: Այդ կ'ապացուցանէ քու, Թումանի, Դումանի եւ Վար-
դանի ուժգնութիւնը:

բ) Շառաւիղի ծայրէն երբ կենտրոն կու գաս, Հայաստանի
կենտրոնական մասը կամ բռնուած է Քօէն Հիւսէյին փաշայի էլերով
(ցեղախումբ), կամ դատարկ է եւ կամ բռնուած է կրաւորական, ան-
մշակ ցանցառ հայերով, որոնց պէտք է փրկել ծայրագաւառներով:
Այլապէս նրանք կորած են:

գ) Կը զարմանամ քու եւ Թումանի վրայ, որ կը ձգտիք, Մե-
նակի նման, ձեր անձը գոհել կենտրոնական Հայաստանի համար:
Այդ՝ ջուր ծեծելու եւ պնդացնելու համարժէք է: Եւ կը գերադա-
սեն փոքրիկ Նիկոլի, Վարդանի, Դումանի նամբան եւ կը գերադա-
սեն իմ կարելիքն անել Վասպուրականի, քան էրզրում-Տարօնի հա-
մար: Ե՛կ, դու քու նամբան փոխիր:

*Սերգէյը ինձի կը նայէր եւ չէր պատասխաներ. քիթը կը փո-
րէր եւ կը մուտար ոռւս առակ մը՝ «Սլըիշալ գլոն, դա նէ գնայեշ
գդէ օն (Ձայնը լսեր ես, բայց չես գիտեր ո՞ւր է ան)»:*

— Դէ, պատասխանի՛ր կամ համաձայնիր, — *ըսի ես, վերջա-
ցընելով խօսքս:*

— Սպասէ, մի շտապիր, յիմարութիւնը արմատէն հանելն ա-
ւելի դժուար է քան մի վանք շինելը:

Սերգէյը սկսաւ հանդիսաւոր կերպով.

— Քանի որ քու հրաշալի քարմաղի օրինակով կ'ուզես գիտա-
կանօրէն հիմնաւորել Հայաստանի, հայութեան բովանդակութիւնը
եւ մեր անելիքները, եւ ալ քարմաղով սկսեմ: Արդէն քարմաղ խօս-

բը ցոյց կու տայ որ այդ գործիքը ստեղծուած է անմատուցները բաժանելու համար գուտ հատիկներէն: Եւ ըսածիդ համաձայն, քարմազի մէջ ընկածները չորս տեսակի կը բաժնուին: Դրան ես համաձայն եմ: Դու ալ համաձայն ես ինձ, որ ընդհանրապէս չկայ միատեսակ, միացեղ տարր:

Համաձայնեցի:

— Դու Հայաստանը դարձուցիր մի հսկայ քարմազ եւ քարմազի մէջ հինգ միլիոն հայ լցրիր: Մի քիչ փչացուր, որովհետեւ այդ հինգ միլիոնն ալ ունի իր աղբը, որ երբ քարմազդ աջ ու ձախ շարժես, տակէն պիտի թափի: Թափուածը այն է, որ հայ անունն ունի, բայց ինքը ոչինչ է, այլասերուած, որդունքը ընկած, առանց սերունդի եւ աւանդութեան, այլանդակուած, փռիւցած մաս մը: Այդ թափուածը քու հաշուից հանէ, ոչ թիւ եւ ոչ որակ համարէ, գետինը պարարտացման նիւթ սեպէ:

Երբ ձախ ու աջ կը շարժես ան, քու ոսկը բարակ, թեթեւ մի շերտով ծածկուած է: Մեր մամիկները այդ շերտը կը հանեն եւ, իրենց մատները փոցիս դարձնելով, մէկ կողմ կը դնեն: Քարմազը վեր ու վար, աջ ու ձախ այնքան կը շարժեն, որ ոսպի մէջ չկարողանան թագնուիլ այդ թեթեւ մասերը: Մէկ կողմ կը դնեն, մինչեւ որ նըրանք չփանան: Յետոյ կու տան խոզերուն եւ էշերուն, որովհետեւ անոնք ոսպ չեն, այլ ոսպի ծղոտը, յարդը. կամ այլ բոյսեր, որ ոսպի հատիկի հետ կապ չունին: Այդպիսով քարմազի մէջ եղածը նորէն կը թեթեւնայ, բայց ոսպի ֆանակը չի թեթեւնայ եւ որակը կը բարձրանայ:

Դու այս հասարակ մաքրագործումէն եզրակացութիւններ կը հանես, որոնք անհիմն են: Կ'ըսես թէ Հայաստանի կեդրոնական մասը կամ պարապ է եւ կամ Քէօն Հիւսէյիկի էլերով բռնուած, որ ճըշմարտանման է, բայց նշմարիտ չէ, որովհետեւ այդ էլերուն տակը իբր ուշա հայեր կան նշուած: Ճիշդ է, այդ աւելորդ եւ օտար ոյժերը մեծ ծաւալ կը բռնեն Հայաստանի մազին մէջ, բայց երբ մենք մեր մամիկներուն նման, այդ յարդը, ծղոտը ընտրենք եւ մէկ կողմ դնենք, Հայաստանի քարմազի տակը կը մնայ գուտ հայութիւնը, որ կենտրոնի յատակն է բռնած:

Զնաշխարհիկ է քու եզրակացութիւնը: Երբ տակէն-վրայէն ամբողջ գիրիւը հանուած է, քաղաքի մէջ երեսութապէս կը մնայ մաքուր ոսպը: Այժմ մազը արագ կը դարձնես իր առանցքին շուրջը եւ իրաւացի կերպով կը նկատես որ ոսպը կը դասաւորուի շառաւիղներուն վրայ. լեցունները, մեծերը, ծանրերը՝ քարմազի պատերուն

մօտերքը, շառաւիղներու ծայրերուն, իսկ փոքրերը, թեթեւները՝ քարմազի կենտրոնը: Եւ դուն կը գտնես որ հայութեան ոյժը, ոգին, միտքը եւ բոլոր լաւ յատկութիւնները պէտք է որոնել Հայաստանը շրջապատող չորս բղէշխութեանց մէջ: Որով, ուրեմն, Հայաստանի կենտրոնը ոչինչ է, իսկ ծայրագաւառները՝ ամէն ինչ: Իբր ապացոյց կը բերես Շուշին եւ ինձ ալ մէջը: Շնորհակալ եմ, բայց ես լիներով այդ շառաւիղի ծայրէն, կրնամ տեսնել քու թիրիմացութիւնը:

Արդ՝ մեծ ու մանր ոսպին մէջ զանազան քարեր կան, երբեմն ալ սիւսեռի եւ ուրիշ այլ ծանր հատիկներ: Եթէ ուտես, ատամներդ կը փշրես: Որպէսզի ուտելիք ոսպ դառնայ, հատիկ հատիկ պէտք է ընտրել, աւելորդները, քարը եւ այլն մէկդի նետել: Մէկ բան ալ նըկատի առ, որ անոնց կաշին հաստ է, նուրբ չէ մնացածներու նման: Գերադասելի է ուտել փոքր ոսպերը, իսկ մեծերը ցանֆի համար գործածել:

Ուրեմն, քու գիտական հիմնաւորումը վրաս գրէ: Իմ եզրակացութիւնը տարբեր է: Կ'ընդունիմ որ ծայրագաւառներու մէջ կը պատահին ուժեղ անհատականութիւններ, նուիրուած հայեր, ֆաջեր, մանաւանդ նախաձեռնողներ: Բայց ատկէ եզրակացնել որ ծայրագաւառներու մէջ պէտք է որոնել հայութեան ոյժը, ամբողջացումը, փրկութիւնը՝ պատրանք է:

Սերգէյը իմ տեսութեանց հիմքը խախտած էր, բայց անոր պատերը դեռ չէր փլուցցած: Ես չուտրած էի եւ դարձացած: Հարցուցի թէ իր բաժն ի՞նչ էր: Ան բացատրեց.

— Դու իրաւացի ես, երբ կ'որոնես ուժեղ անհատականութիւնները ծայրագաւառներուն մէջ: Ես պիտի աւելցնէի նաեւ արտասահմանը: Այդ կը հաստատէ քու «կենտրոնախոյս» օրէնքի տեսութիւնը: Ռուսիոյ մէջ եւ մակները(*) փառասիրութիւն եւ փոռուած մեծութիւն տուին կայսրութեան իրենց արկածախնդրութեամբ: Բայց ուրիշ ի՞նչ տուին անոր: Մենք ալ ունեցած ենք մեր եւ մակները մեր արկածախնդիրները, ինչպէս Զմշկիկը եւ քաղմաքի հայ կայսրներ: Բայց, ասա տեսնեմ, անոնք բացի վնասէն, բացի սին փառասիրութենէն Հայաստանին եւ հայութեան ի՞նչ տուին: Այս կենտրոնախոյս ոյժերը, ինձմէ լաւ գիտես, բացի վնասէն եւ կորուստէն, օգուտ չեն բերած:

Գտնեմ մեր ծայրագաւառներուն, բղէշխութիւններուն, որոնց-

(*) Եւ մակը՝ Սիբիրը նուաճող եւ Ռուսիոյ կցող կոզակ պետը: (Ա. Ռ.)

մով հիացած ես: Անանցմէ մէկը գտնէ՝ Ղարաբաղը, ես լաւ կը գնահատեմ, քանի որ անոր գաւազն է: Քու աչքը եւ ականջը լցուած են գինեբալկներու, իշխաններու, մելիքներու պատմութիւններով: Դու շլացած ես Բագուի միլիոնատէրերու, մտաւորականներու, յայտնի ռուսքու աւտրոստրալականներու եւ կամ Դուստրալիաներու, Վարդաններու անձնագրի եւ հայրենասէր հրապոյրներով: Եւ ատկէ տը պատուաւ՝ եզրակացուցած ես որ հայութեան ծաղիկը, ոյժը, միտքը եւ քաղաքը կը գտնուի Ղարաբաղի մէջ եւ ան ու անոր նման ծայրագաւազները պէտք է լինին մեր նպատակն ու ելակետը: Այդ եզրակացութեանէն աւելի մեծ ու վնասակար սխալ չի կարող լինել: Ահա քէ ինչն'ը:

Հայաստանի ծայրագաւազներու մէջ խտացած են հայութեան լաւ եւ վատը՝ իրարու խառնուած: Հայութիւնն ալ ունի եսասիրութիւն, սնտախոտութիւն, ոխակալութիւն, նեղութիւն, չափազանցուած մեծամտութիւն, քովաւանութիւն, անմիտ յամառութիւն, արկածախնդրութիւն, հաւաքականութեան բացասում, աւանդութեանց մերժում, օտարամտութիւն, ինքնիշխանութիւն, ո՛ր մէկն ըսեմ: Աստուծոյ արեւի մեծ կը ծանրացնեն անհատը: Եւ, որովհետեւ ծանր են աստուծոյ արեւը, քու կենսական խոյս տեսութեամբ կը համախոսուին քու արեւի եզրակներուն: Այժմ կ'ըսես քէ այդ եզրակներուն վրայ համախոսուած են նոյնպէս Դուստանի նմանները, առաքիւնութեամբ, անձնագրիութեամբ, անշահախնդրութեամբ, քաղաքներ, հայրենապիտանութեամբ եւ այլ լաւ յատկութիւններով օժտուածները: Ճիշդ է: Բայց ի՞նչ արժէք ունի այդ, երբ ան խառնուած է բացասականի հետ: Հասկացիր. երբ դրականը եւ բացասականը կը խառնես, գերօ կը ստանաս: Յորեքի արտի մէջ որ առուայտ ցանես, հունձի չես ստանայ: Եւ ատոր համար ալ բնաւ յոյս մի՛ ունենար որ Ղարաբաղով կամ այլ ծայրամասով դու Հայաստան կ'ազատես: Ընդհակառակը, եթէ Հայաստան չլինի, այդ ծայրագաւազները կորած են, այնտեղ հայ չպիտի մնայ: Հայաստան լինի, այդ ծայրագաւազները, եթէ գլխացաւանք չդառնան, կը մնան կցուած իբր անհանգիստ սահմանապահներ՝ ռուս կողմներու նման: Ատոր համար ալ դու կը սխալուես, երբ կը ձգտես երթալ Ղարաբաղ կամ Վասպուրական, եւ մեծ մեծ միշտ, որ կը ձգտինք դէպի Բարձր Հայք եւ Տարօն:

Երբ Սերգէյը այս տեսակէտներն ունէր, ինչպէ՞ս պատահեցաւ որ ան յետագային դարձաւ Վանի Արամ: Ինչպէ՞ս պատահեցաւ որ ես ալ դարձայ Տարօնի Ռուբէնը: Ատոր պատասխանը ես ալ չունիմ Արամին նման: Այդ գուցէ պատահմունք էր, բայց գուցէ ե՛ւ տար-

բեր բան մը, ենթադրեալութիւն մը, որ թէեւ մեզ կը ղեկավարէ, բայց ինքը չկայ:

Սերգէյի հասկացողութեամբ՝ մեր հայրենիքը նման է ընկոյզի մը որ կը բողկանայ միջուկէ մը, կեղեւէ մը եւ կեղեւի պաշտպան կանաչ կաշիէ մը: Միջուկը կ'ընկնի Արաքսի, Կուրի, Եփրատի եւ Արածանի վերին ակունքներուն վրայ, — այսինքն Շիրակը, Կարսը, Բարձր Հայքը, Տարօնը: Կեղեւը կ'ընկնի նոյն դետերու միջին հոսանքներու վրայ, աւելացրած ձորոխի հոսանքը: Կաշին կ'ընկնի նոյն դետերու ստորին հոսանքներուն վրայ, աւելացրած Վանայ Ծովի հովիտը եւ Տիգրիսի հովիտներուն աղբիւրները:

Եւ Սերգէյը կ'եզրակացնէր. —
— Կորիզը որ լինի, ան ինքը կեղեւը կը ստեղծէ: Կեղեւը, որ ստեղծուեցաւ, ան իր կաշին կը ստեղծէ: Եթէ կեղեւ ու կաշի ունենան, բայց կորիզը չունենան, ընկոյզը փուռ է: Ուրեմն, մեր առաջին նպատակը պէտք է լինի ազատագրել Հայաստանի կորիզը:
Ահա այս է մեր տարակարծութեանց պատճառը, — կ'աւելցընէ Սերգէյը:

Հայութիւնը նոյնպէս երեք տեսակ է, մէկը միւսը լրացնող, բայց տարբեր բնոյթով: Հայ անունը կու տանք ու կ'երթանք, անոր համար կ'աշխատինք, բայց գայն ոչ կը գնահատենք եւ ոչ ալ գիտենք, քէ ո՞ւր է: Ամէն հայ, որ այդ անունը կը կրէ, հօ լրիւ հայ չէ: Հայաստանէն դուրս եղած հայերը, ո՛ր գաղութներուն մէջ ալ որ կ'ապրին — Ղարաբ, Մոզդուզ, Արմաւիր, Ստաւրպոլ, Ռոստով ու Նար Նախիջեւան, մինչեւ հարկով եւ հեռուները, չես գիտեր քէ ի՞նչ են, հա՞յ են քէ չէրքէզ, ո՞ւր են քէ կողակ. կարծես սալորի վրայ պատուաստուած ծիրանի պտուղ լինին: Երեսին, քիսին կը նայես՝ հայ է. լեզուին կը նայես, հոգին կը դիտես՝ ռուս է: Երեսմն ալ հակառակը կը պատահի. երեսին կը նայես՝ ռուս է իր ցախի մագերով եւ վեր ցցուած քթով. ներքը կը նայես, լեզուն կը լսես՝ հայ է: Ջորի մըն է ան, որ իր տարբեր ծնողները կը յիշեցնէ եւ այնքան հայ է, որքան Հայաստանի եւ անոր բուն հայութեան հովը կը փչէ. առանց այդ հովին եւ շունչին ան հայ չէ:

Երբ կը մտնենաւ Հայաստանին, ան ընկոյզի նման շրջապատուած է հաստ եւ ամուր կեղեւով: Այդ ամուր կեղեւը քու չորս քոկէ-խութիւններն են, որ կը շրջապատեն բուն Հայաստանը եւ հայութիւնը: Այդ կեղեւը, որուն մէջն է քու մտասերեռումը՝ Վասպուրականը եւ քու սիրած Ղարաբաղը, անհրաժեշտ մասն է Հայաստանին եւ հայութեան, բայց իր առանձին կենսունակութիւնը չունի. ան

կեանք ունի, քանի փակած է իր կորիզին: Անոր կեանքը կախուած է այն մագնանման երակներէն. որ կորիզը կապած է իրեն. ատենց միջոցով ան կը աճուի եւ կեանք կը ստանայ: Կտրէ՛ այդ երակները, ան կը մեռնի եւ կը բաժնուի հայութենէն, վառելիք փայտ կը դառնայ, իսկ իր միջուկը անպաշտպան կը մնայ:

Ապացո՞յց կ'ուզես, մեր Շուշին բերեմ, որ արդէն այլասերման նամբու վրայ է: Շնորհիւ այն բանին, որ հազարդակցութեան նամբաները Հայաստանի հետ նուագած են եւ ուժեղացուած են Բագուի եւ Ռուսիոյ հետ եղած նամբաները. շնորհիւ այն բանին, որ տնտեսական եւ մշակութային կապերը երկրի կորիզի հետ պակասած են, իսկ Ռուսիոյ հետ ուժեղացած վարչական միտումնաւոր բաժանման միջոցով, այդ շրջանի հայութիւնը այժմ երեք բաժին է եղած. երկու բաժինը հայութեան շահերուն դէմ է եւ մէկ բաժինը միայն Հայաստանի ու հայութեան օգտին կ'աշխատի: Ստեղծուած է արդէն դասակարգ մը, որ Հայաստանի մէջ չկայ: Անոր կենտրոնը Բագուն եւ Ռուսիան է, իսկ նանկերը եւ տրկմագերը՝ Ղարաբաղը: Այդ դասը դրամատէրերն են, որոնք ծագումով հայ են, բայց միջագայինն եւ ռուսական առաջապահներն են: Անոնք յաւակնութիւն ունին հայութիւնը ղեկավարելու, բայց հայութիւնը կը համարեն պատուանդան միայն ռուսական յարկի տակ կենդանական կեանք մը քարշ տալու համար: Այդ դասը դարձած է չարիք մը հայութեան ամբողջացման համար. ան խայծ մըն է եղած հարեւաններուն համար. ան կարթ մըն է դարձած ռուսի ձեռին՝ հայութիւնը որսալու: Ան մեր քշնամին է՝ հայութեան անունը շալակած:

Մտաւորական դասը նոյն չարիքն է դարձած, ինչ որ առաջինը: Իմ ընկերներէն չե՞ն միթէ Ծատուրեանը, Նարիմանը, Ղազարը, Մուսեանը (սոց. դեմոկրատներ), որոնք իրենց եռանդով, ոյժով, պատրաստութեամբ գուցէ աւելի արժէքաւոր են: Բայց անոնք ծառայ են ռուսական հզօրութեան եւ գործիք՝ հայութեան անոր մէջ ձուլման, թէկուզ խօսքով անոնք ատոր դէմ լինին եւ չուզեցան: Երբ նոյնիսկ Անանունները եւ Բաշխիները մտասեւեռում ունին, որ *հասարակաշարու* է ազգային գաղափարը եւ որ միջագայնացումը պէտք է լինի մեր նպատակը, մի՞թէ այդպիսիները չեն նպաստեր հայութեան կապերը ջլաժելուն եւ ռուս ջրագացին ջուր աւելցնելուն: Անոնք թէկուզ փոշմանին, բայց իրենց վնասը տուած կը լինին:

Կը մնայ երրորդ բաժինը՝ ինձպէսներէն եւ գիւղացիներէն կազմուած, որուն կապերը հայ կեանքին հետ դեռ չեն չորցած: Ա-

նոնց օգուտը որքա՞ն կը լինի, երբ անոնք միայն մէկ երրորդը կը ներկայացնեն:

Այս մատնանշումներն ըրի, որպէսզի ըստ այնմ արժէքաւորես մեր ծայրագաւառները եւ ըմբռնես, թէ կարեւորը անոնք չեն, այլ միայն ու միմիայն Հայաստանի միջուկը, առանց որուն բոլոր հայութիւնը դատապարտուած է ոչնչացման: Եթէ այդ կորիզը մեռնի, մեռած են ամէնքը: Ատոր համար ես իմ կեանքը կ'ուզեմ տալ Հայաստանի միջուկին:

«Հայ յեղափոխականի մը յիշատակները»

Ա. Հատոր, էջ 183-193

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ 1906Ի ՌԱՅՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Երբ ես եւ Իշխանը այսպէս կը փակէինք մեր հաշիւները Շամի եւ Լեոնապարի ղեկավարներու առջեւ (), ներկայ էին եւ նոր եկած ընկերները՝ Սարգիսն ու Մալխասը, որոնք զարմացած՝ կը լսէին մեր անախորժ խօսակցութիւնները, գործի բնոյթէն անտեղեակ: Մինչ տեղի ընկերները լուռ կը լսէին մեր բզբտուքը, Սարգիսը մէջ ընկաւ, եւ, դառնալով Արամին, ըսաւ.*

— Ես չեմ հասկանար թէ ի՞նչ կը կատարուի: Ան իր էշը կը բռնէ, միւսը՝ իրը: Մե՞նք ինչացու եմք: Այս բոլոր հարցերը այլ կերպ չէ՞ր կարելի դնել եւ փակել:

Ան կ'ուզէր դեռ շարունակել, երբ Արամը ընդմիջեց.

— Ընկեր Սարգիս, ձեզ բացատրեմ: Կարծեմ ինք ամիս անց է որ երկու շրջաններու՝ Շամի եւ Լեոնապարի Կ. Կոմիտէները իրարու չեն հանդիպած: Այսպիսի լրիւ հաւաքում առաջին անգամն է ինն ամսուան ընթացքին: Աւելի յաճախակի թէ՛ վտանգաւոր է, թէ՛ անհրճաբար: Ուրեմն, նախ՝ իյար պետք է լսել: Երկրորդ՝ Իշխանն ու Ռուբէնը, որ նոյն մարմնի մէջն են, հազիւ թէ այդ ժամանակամիջոցին մէջ մէկ կամ երկու անգամ իրարու հանդիպած են: Անոնց շրջանը կեդրոն չունի. մէկը՝ Շատախի, Մոկսի լեռներուն մէջ է, իսկ միւսը՝ Կարկառ, Շնիճոք եւ այլ լեռներ կը չափչփէ: Այստեղ հանդիպած են իրարու, թո՛ղ իրենց տոպրակները դատարկեն: Ատիկա վատ չէ: Երրորդ՝ ես չեմ կարծեր որ Իշխանը իր քայլերու, ըրած եւ չըրածի մասին կարծիք առած լինի Ռուբէնին: Այդ համագոր կը

(*) Շամի կողմէ կը մասնակցէին այս Ռայոնական ժողովին (Յունիս 1906) Արամը, Տիգրանը, Համագաստ Բաղդշեքանը, Ղեւոնդ Մելոյեանը, Թէոսը, Գեորգ Գիտակեանը: Ժողովի արձանագրութիւնը տրուած է այս հատորի վերջաւորութեամբ, իբրեւ յաւելում:

դառնար ոչինչ չընելուն: Նոյնպէս Ռուբէնը չէր կրնար կարծիքներ հաւաքել Իշխանէն: Այնպէս չէ՞, Իշխան: Ուրեմն, իւրաքանչիւրը իր էշը բռնելու հարց չկայ, այլ կայ ինքնավստահութեան եւ նախաձեռնութեան հարց, որուն լուր կամ վատ լինելը մենք պիտի որոշենք: Զորրորդ՝ Իշխանը եւ Ռուբէնը վէճը լուծեցին իրենց մէկուսին Լեոնապարէն հեռանալու առաջադրութեամբ: Այդ իրենց անձնական կարծիքն է, որուն հակառակ որոշում տալու իրաւունքը մեզ վերապահուած է: Ուստի կ'առաջարկեմ. — ա) Այս հարցի վերջնական լուծումը յետաձգել ժողովին վերջը, մինչեւ մանրամասնութեանց ծանօթանալը. բ) Անցնիլ այժմ «Գիտան-Գեալմազ»ի հարցին:

Տեղէն վեր թռաւ Սարգիսը.

— So, այս ի՞նչ տարօրինակ հարցեր ունիք. «Գիտան-Գեալմազ»ը ո՞րն է:

Եւ սկսեց ծիծաղել: Արամ ըսաւ.

— Այժմ կը հասկնաս թէ Գիտան-Գեալմազ (Գնացողը յետ չի գայ) ո՞վ է: Համագաստ, կարդա՛ Գեորգ Զավուշի մամակները:

Երանի թէ այդ նամակները Հ. Յ. Գ. արխիւի մէջ պահուած լինէին, մանաւանդ որ Վասպուրականի նամակները միշտ հնարաւորութիւն կար ճամբելու ժրնել: Անոնք գրուած էին պարզ, անսեթեւեթ լեզուով: Կարծեմ նամակներէն մէկն ալ ուղղուած էր Իշխանին, որուն Գէորգը ծանօթ էր Աղթամարի կողմէն:

Գէորգ Զավուշ կը նկարագրէր Խարսի կողմը եւ իր ազատումը, անտանելի հալածանքները եւ ժողովուրդի ծանր կացութիւնը: Կ'ըսէր թէ կտրուած է դրսի աշխարհէն: Եւ կը վերջացնէր մօտաւորապէս այսպէս. —

— Իմ հոգս չէ, այսօր կամ վաղը ես պիտի սպաննուիմ: Պարզ է ինձ համար որ իմ վերջը եկած է. թէեւ, եթէ ուզեմ ամէնուրեք պէս լքել ժողովուրդը եւ հեռանալ, ես ալ իբր հերոս երկար, շատ երկար տարիներ կրնամ ապրիլ: Ես յուսահատ եմ ամէնքէն, բացի ձեզմէ: Իմ յոյսանքն է որ անպայման մէկը ձեզմէ մամբէք այս Երկիրը: Այդ ընկերը կամ կը հասնի իմ ողջութեանը կամ չի հասնի, այդ միեւնոյնն է: Ճամբեցէ՛ք մէկը, որ այս ժողովուրդին գլուխն անցնի:

Գէորգ Զավուշի այս նամակը բոլորիս գլխուն պաղ ջուր լեցուց: Ոչ ոք չէր խօսեր, կարծես ժողովը մեռելտուն դարձաւ:

Արամը ոտքի ելաւ եւ ըսաւ Սարգիսին.

— Այս է Գիտան-Գեալմազը: Եւ ապա աւելցուց. — Այսպէս չի կարելի թողնել Տարօնի, Սասնոյ աշխարհները: Ռուբէնը գիտէ

դեռ կարսէն որ ես ինձ մատաղ եմ խոստացած այդ աշխարհներուն, իսկ ինքն իրեն՝ վասպուրականին: Արդ՝ ժամը եկած է մեր խոստումները կատարելու: Ես կ'երթամ «Գիտան-Գեալմագ»: Ես հասաւելորդ եմ: Դուք բաւական էք այս երկիրներու համար:

Ըսաւ ու տեղը նստաւ:

Իշխանը ելաւ իր տեղէն.

— Ձեր ուխտէն առաջ, ես ուխտ էի ըրած անցնիլ Սասուն եւ, Բասենի կոխը ինձ վկայ որ Գէորգի միակ ծանօթը ես եմ: Ուրեմն, ես կ'երթամ անոր մօտ, եթէ յարմար կը դատէք:

Ըսաւ ու նստաւ:

Մալխասը ոտքի ելաւ.

— Ես նոր եմ եկած եւ այստեղ անպէտք եմ: Եկած եմ Սասուն անցնելու համար: Իսկ եթէ ձեր հին ուխտերը առաջ կը բռնէք, Ռուբէնը վկայ որ ես ալ իմ ուխտն եմ ըրած երթալու Սասուն:

Սարգիսը ելաւ ոտքի.

— Ճանրմ, ե՞ս հոս ինչացու եմ: Ձեզի Պարսկաստանէն փախուշտ հայթայթո՞ղ: Ոչ, ես կ'երթամ այդ Գիտան-Գեալմագը: Ինձի վստահէք, — *ըսաւ եւ տեղը նստաւ:*

Տիգրանը իր տեղէն ելաւ.

— Թէ որ դուք զիս «մէջ զինուորաց» չէք հաշուեր, իմ թեկնածութիւնը ես կը դնեմ Սասուն գնալու համար, — *ըսաւ եւ իր տեղը նստաւ:*

Ես լուռ էի, թէեւ կը նկատէի որ կ'ուզէին որ ես ալ բան մը ըսեմ: Արամը իր թաւ յօնքերու տակէն ինձի կը նայէր եւ, չկրնալով իրեն զսպել, դարձաւ ինձի.

— So, ի՞նչ ուրեք ես, ոգնի ես դարձեր եւ պապանձուեր: Դուք ալ բան մը ըսէ, բու կարծիքդ լսեմ:

Անոր դատան դէմքին վրայ երեւցած անուշ ժպտը մարեց բարկութիւնս:

— Լաւ, — սկսեցի ես, — նախ՝ ըսեմ որ դու հարցը սխալ դրիր: Երբ կ'ըսես թէ Գիտան-Գեալմագ ո՞վ կ'երթայ, այստեղ եղողները բոլորն ալ թեկնածու կը դառնան: Մահն ու կեանքը մէկ մեթափիկ չարժէ բոլորիս համար: Հարցը պէտք է դնէիր, թէ ո՞վ կըրնայ օգտակար լինել իր գնալովը կամ հոս մնալովը: Այսպէս մտեցնալով հարցին՝ կը գտնեմ, որ նախ եւ առաջ՝ դու եւ Մալխասը թեկնածու չէք կրնար լինել: Դու, մանաւանդ, գիշերները քէտ ես, ոտքիդ տակը չես տեսներ: Մալխասին ալ նայեցէք թէ՛ ի՞նչպէս կը փայլէ. կարծես ջազցի փար կապուած է յետեւը, ծալապատիկ իսկ

նստիլ չի կրնար: Հոն հիւանդանոց չէ: Դուք բեռ պիտի լինէք Գէորգի համար: Իշխանն ալ յոյս իր թեկնածութիւնը վերցնէ մէջտեղէն: Ան ամէն ինչով յարմար է եւ կրնայ փոխարինել Գէորգը, բայց ան մէկն է որ կ'ամբաստանէ զիս, թէ Տարօնին կապուելու համար՝ ես ձգտած եմ Բիքլիսի շրջաններուն արգելքը վերցնելու: Ուրեմն, անարժէք են իրեն համար այդ շրջանները: Ուրեմն, ան անպէտք է Տարօնի եւ Սասունի համար: Ան թո՛ղ մնայ այստեղ, քանի որ ինքնաբար է: Կը մնան Սարգիսն ու Տիգրանը: Անոնց բան չունիմ ըսելիք. կրնան լինել թեկնածու: Բայց ձեզ մէկ բան ըսեմ, պարծանք չհամարէք՝ անոնցմէ յարմարը ես եմ այդ շրջանին համար:

Երբ վերջացուցի, Համադասպը կանչեց.

— Բայց դու չըսիր թէ դու քեզ թեկնածու կը համարե՞ս հոն գնալու համար:

— Ինչո՞ւ չէ, բայց երկու պայմանով...

— Ա՛յ, տնաշէնի տղայ, խօսքդ լրիւ ըրէ, բան հասկնամ: Ի՞նչ են երկու պայմաններդ, — *հարցուց Սարգիսը:*

— Սարգիս, լրիւ խօսքը ըսի, բայց դու չհասկցար: Առաջին պայմանն այն է, որ կամ պիտի ընդունէք իշխանի ամբաստանութիւնները իմ դէմ եւ կամ պիտի գտնէք որ ըրածս գործերը անհրաժեշտ էին եւ լաւ: Երկրորդ պայմանն այն է, որ իշխանը միմակ չպիտի ձգէք Լեռնապարի մէջ: Ձիս փոխարինողը՝ Սարգիս, դո՛ւ, կամ «մէջ զինուորաց»ը (Տիգրանը) պէտք է լինի իշխանի կողքին եւ միասին պէտք է շարունակէք գործը՝ տաշելու, մաղելու համար Բիքլիսի արեւելեան, հարաւային կողմը, որպէսզի ես ապահով լինիմ որ նամբայ կը բացուի իմ յետեւը՝ Վանէն-Տարօն: Ասեմ որ չեղան, ես չկամ ո՛չ վասպուրականի եւ ո՛չ ալ Տարօնի համար:

Իմ մէջ ապրումներ կային զորս հաղիւ կը զսպէի. անոնք ծայրայեղ էին ու վճռական. եւ այդ պատճառով ալ իմ առաջադրութիւնները կոպիտ եւ խայթող էին եւ մասնաւորապէս վիրաւորական էին Իշխանի ինքնասիրութեան համար: Ան եւս ջղայնութենէն անկապ բացազանչութիւններ կ'ընէր: Լարուած մթնոլորտը պայթման վտանգի տակ էր, երբ մէջ ինկաւ բարի եւ խաղաղ Համադասպը, երկու կապոյտ ծովի պէս իր խոշոր աչքերով: Ան դարձաւ Արամին, որ կը վարէր ժողովը, եւ ըսաւ.

— Ես կ'առաջարկեմ ժողովը փակել: Արդէն ամէն ինչ պարզ է: Ես այնպէս կը հասկնամ Ռուբէնի առաջարկներէն, որ Տարօն գնալու թեկնածութիւնը դնելուն գուզընթաց պէտք է վճռուի վասպուրականի եւ Տարօնի կապի խնդիրը եւ, ինչ որ էական է, պէտք է

նախապէս քննուիմ իշխանի ամբաստանութիւնները Ռուբէնի դէմ: Այդ պահանջը սրամաքանական գտնելով՝ կ'առաջարկեմ հարցը լուծել իշխանի եւ Ռուբէնի բացակայութեամբ:

Արամի մոայլ դէմքին վրայ կարծես լոյս ծաղկեցաւ: Ժպտալով՝ ան յայտարարեց.

— Ժողովը փակուած է: Մենք անցնինք միւս սենեակը: Թո՛ղ այս երկու արջերը այստեղ մնան:

Անոնք գնացին. իշխանը ջուլայ մը ծուխ բաց թողուց բերանէն եւ, հատ ինկած աչքը ինծի ուղղելով, կանչեց ետեւներէն.

— Արջը ես չեմ, այլ ան, որուն պատճառով զիս ւր արջ շինեցիք:

Ան կը ծխէր իրար ետեւէ: Ես դեռ ծխել չէի սովորեր. մէջքս դարձուցի անոր եւ սուտ ջուլն ձեւացայ: Անցած մէկ ժամը մէկ դար դարձաւ: Միւս սենեակի մէջ ընկերներու որոշումէն կախուած էր ապագաս, զուցէ ե՛ւ կեանքս:

Դուռը բացուեցաւ, վերջապէս, եւ երդուեալ դատաւորներու նման մէկ մէկ ներս եկան ընկերներս: Դէմքերուն կը նայէի՝ բան մը գուշակելու համար, բայց բան չհասկցայ: Անոնք որոնց հետ անձնական ծանօթութիւն չունէի նախապէս, գոհունակ կ'երեւէին, բան մը յաջողուցածներու արտայայտութիւն ունէին, իսկ անոնք որոնց հետ մանկական եւ կամ անցեալի գործերով մտերմութիւն ունէի, մտահոգ եւ տխուր դէմքեր ունէին: Այս վերջիններուն մէջ էին Արամը, Սարգիսը եւ Համազասպը:

Արամը, դառնալով ինձ ու իշխանին, յայտնեց.

— Մենք հետեւեալը որոշեցինք հազարդել ձեզ առ ի գիտութիւն.

«1. Որիզայ խաչոյի համար Ռուբէնի ըրած ներումը չեղեալ կը համարենք: Բայց չեղեալ կը համարենք նոյնպէս անոր վերաբերմամբ եղած ահաբեկման որոշումը, մինչեւ տեղի վրայ նոր քննութիւն լինելը»:

Իշխանը, կէս յաղթական, կէս պարտուած, ինձ կը նայէր: Ես լուռ կը մնայի, բայց մտքիս մէջ ըսի. «Միտալ էք, պէտք էր ներել»:

«2. Սպարկերտ, Շնիճոր, Կեցան գաւառներու կազմակերպութիւնը անհրաժեշտութիւն դարձած էր եւ պէտք է քանալ միւս գաւառներն ալ ձեռք բերել եւ հասնիլ մինչեւ Բիթլիս»:

Ես լռեցի, բայց մտքիս մէջ ըսի. «Այս մէկը լաւ է»: Իշխանը չհամբերեց եւ կանչեց. «Մուկը ծակը չի կրնար մտնել, ցախաւելն ալ պոչին կապեցին»:

«3. Որ Կեցանի մէջ դէպք մը պատահած է, որ կրնար ուշադրութեան առարկայ դառնալ պետութեան կողմէ, եւ որ երեք հոգի սպաննուած էին քննամիներէն, ատոնք անխուսափելի էին: Դէպքեր չեն լինի՝ միայն եթէ մենք այս երկիրներէն հեռանանք»:

Ես ուրախ էի, բայց ցոյց չտուի: Իշխանի երեսը թթուեցաւ:

«4. Քանի որ Ռուբէնը չ'ուզեր մնալ Լեռնապարի մէջ, ան կըրնայ մնալ վան: Կամ եթէ իր թեկնածութիւնը կը դնէ Տարօն գնալու համար, այդ մենք յարմար կը գտնենք»:

Միտալ էր, որ կ'ուզէի թողնել Լեռնապարը: Աւելի շուտ զիս կ'ուզէին հեռացնել Լեռնապարէն: Բայց այդ մասին լռեցի: Երբ ամէնքը լուռ՝ մեր պատասխանին կը սպասէին՝ ես խօսք ուղեցի եւ ըսի.

— Ես ձեր եզրակացութեանց համաձայն եմ եւ վաղը կը մեկնիմ Տարօն: Միայն գնալէս առաջ կ'ուզէի գիտնալ թէ ինձմէ յետոյ Լեռնապար ո՞վ պիտի երթայ:

Սարգիսն էր, որ հարցումիս պատասխան տուաւ.

— Արդէն հոն կը լինին իշխանը եւ Շահպազը: Լրացման համար իմ թեկնածութիւնը կը դնեմ: Իսկ եթէ իմս առարկելի լինի, Տիգրամը կամ Արամը կ'երթան քեզ փոխարինելու: Քեզ քեզ պահիր, քեզ կտրուած չեմք թողնի:

Երկու փշոտ հարցերը լուծուած էին: Միւս հարցերը զիս չէին հետաքրքրեր: Աչքս ինկաւ Արամի վրայ, որ շատ տխուր կ'երեւար: Ըստ սովորութեան՝ տխուր վայրկեանին ան դետին կը նայէր: Աչքս ինկաւ Համազասպի գեղեցիկ աչքերուն, որոնք կը նայէին ինձ տխուր, մտածկոտ. ան կը կարծէր թէ ես մեռնելու կ'երթամ, առանց գիտնալու որ ինքը պիտի մեռնէր շուտով, եւ այդ օրը վերջին օրն եղաւ մեր իրար հետ լինելուն:

Ընկերներս կը կարծէին թէ ես դժգոհ եմ տրուած որոշումներէն: Անոնք զիս չէին հասկնար: Միայն կամակորուժիւնն էր որ զիս կը դրդէր անպատճառ մնալ Լեռնապար, իսկ Դուրան գնալը՝ միակ ելքն էր ինծի համար. ես Շամ հանգիստ սրտով պիտի չմնայի, որովհետեւ ընկերներս իշխանին գերադասութիւն տալով, անոր խօսքերով կը շարժէին: Դուրանը, ճիշդ է, շատ դժուար տեղ էր, եւ հոն դաջողները հազիւ քանի՛ մը ամիս կ'ապրէին, բայց ան տեսակ մը հերոսական երկիր էր՝ իր անցեալով, եւ ես շատ ուրախ էի որ հոն

պիտի երթամ: Բայց ես դժգոհ էի ընկերներէս՝ որոնք, իմ կարծիքով, շատ անարդար կերպով զիս վիրաւորած էին: Ուստի, երեկոյեան, սուրհանդակներ առած, առանց նոյնիսկ նամակներ, յանձնարարականներ կամ դրամ պահանջելու, քաղաքէն կ'ուզէի դուրս գալ: Արամը զիս բռնեց Դրախտի մէջ, ուրկէ պիտի մեկնէի, եւ խնդրեց, յանուն մեր հին ընկերութեան՝ զոնէ մէկ օր եւս սպասել: Ան այնքան յուզուած էր, որ կ'ուզէր լաց լինել: Ես քարացեր էի եւ թէեւ մնացի չոր, բայց յօժարեցայ սպասել մինչեւ որ նամակները գրեն:

Միւս երեկոյեան՝ ամէն ինչ պատրաստ էր: Արամը ինձ տուաւ 50 ոսկի եւ նամակները: Ան հոգացեր էր իմ ճամբու մասին եւ որոշում կայացուցած էր նաեւ որ Իշխանը պիտի զիս ճամբու դնէ մինչեւ Կարճկան եւ այնտեղէն մարդ պիտի տայ՝ զիս Դուրան հասցնելու համար: Բոլոր ընկերները եկած են զիս ճամբու գցելու: Կը տեսնեմ որ տառապանք կայ անոնց հոգիին մէջ: Անոնք կը զգային որ զիս կ'ուզարկեն տեղ մը, ուր զացողներէն ոչ մէկը ողջ կը մնայ, եւ մեր տեսութիւնը վերջինը կը համարէին: Թերեւս կը զգային նաեւ որ անարդար եղան: Ես որոշած եմ, սակայն, վրէժ առնել անոնցմէ. տեսնելով հանդերձ անոնց զգայնութիւնը (չէ՞ որ իմ մանկութեան ընկերներն են...), ես կը վարուիմ հետերնին ինչպէս անծանօթներու հետ, եւ թռչելով ձիուս վրայ, մնաս բարով իսկ չեմ ըսեր: Արամը կը բռնէ սանձը եւ կը դիմէ ինձի:

— Արջի տղայ, գոնէ ձեռքդ տուր մնաս բարեւի, վերջին անգամ համբուրուենք, արջի տղայ, արջ (ան զիս միշտ այդպէս կ'անուանէր):

Բայց ես, զղալով որ թէ ան, թէ Սարդիսը եւ թէ Համազասպը քիչ կը մնայ որ լաց լինեն, կը գոռամ անոնց վրայ:

— Եուն շան որդիներ, ուրախ եմ որ կը հեռանամ դէպի Դուրան, ուր չկան հին ընկերներ:

Այսպէս կտրուեցաւ իմ կապը Վասպուրականի եւ իմ լաւ ընկերներուս հետ: Ի հարկէ ծանր էր նաեւ իմ հոգեկան վիճակը, հայհոյանքներն սրտիցս չէին բխեր եւ այժմս, ճանապարհին, այնքա՞ն կը զղջայի...: Գոնէ Սարգիսին, Արամին, Համազասպին ձեռք տայի... Բայց ուշ էր արդէն: Մէկ կողմէ, կը մտածէի, լաւ եղաւ որ ես ալ առի իմ վրէժս զանոնք տանջելով: Պարզ էր ինձի համար, որ անոնք շան նման կը սիրէին զիս, թէեւ իրաւունք տուին Իշխանին:

«Հայ յեղափոխականի մը յիշատակները»

Բ. հատոր, էջ 386-394

Ռ Ո Ւ Բ Է Ն

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Աչքերս բացի, արեւը սենեակը լցրած էր. անկիւնում քաշուած Արամ ու Իշխան կը շշնջէին. անոնց նայուածքը լուրջ եւ, ինչպէս միշտ, յօնքերը կիտած: Ես տեղս նստայ:

— Ուշ է, հագիր, գործի պիտի ելնել, կ'ըսէր Արամը:

— Ի՞նչ գործ, ես գործի չեմ եկած, դուք ձեր գործին գնացէք, պատասխանեցի:

— Աս ի՞նչ օյն է, վեր ելիր տեսնենք, ինչո՞ւ ես եկած, այս պոչն ալ ետեւէդ կախած (ակնարկը Վէհրբին էր). մի քիչ լուրջ եղիր եւ մի բան ասա:

— Ես անելիք չունիմ, վերջացուցի անելիքս: Ասելիք չունիմ, ասելիքներս ուշացած են. բայց լսելիք ու տեսնելիք բաներ ունիմ, ամոր ալ ժամանակը կու գայ:

— Թարս պատասխան կու տաս, ելի մէկ տեղէդ, տես ի՞նչ կ'ասենք քեզ:

Ելայ, հաւնուեցայ, լուացուեցայ եւ կաթն ու թէյը իմ առջ նստայ անոնց կողքին: Արամ, ձեռքը առած թղթի կտոր մը, օրուայ ծրագիրը կարդալ սկսաւ:

— Տեսնուիլ Կուսակալին, Վէհրբին եւ կարեւոր թուրք մարդկանց հետ:

— Տեսնուիլ հոս եկած Բիրոյի անդամներու եւ կարեւոր ընկերներու հետ:

— Տեսնուիլ Կեդրոնական Կոմիտէի հետ եւ գեկուցում տալ:

— Ներկայացուցիչներու հետ ժողով ընել եւ գեկուցանել Տարօնի կացութեան մասին: Այս նկատի առնելով, մտքիդ մէջ որո՞նա խօսելիքդ, ընելիքդ, կ'աւելցնէր Արամ:

— Կը մայիմ, որ հաւատք տեղն է մնացած, ըսի Արամին, առաջուայ նման հաշիւ կ'ընես որ մկան շեռն ալ քաղաքքին օգուտ է,

Եւ ինձումը կ'ուզես պատերը սուադել: Ես հոս եկայ յատուկ նպատակով, այդ ըսածներդ ինձ չեն վերաբերիր, այլ ձեզի: Կը խնդրեմ՝ ինձ իմ գործերէն չշեղել:

— Որո՞նք են քու նպատակները, Հարցուցին:

— Իմ առաջին նպատակն էր Սարգիսը տեսնել: Ան մեծ գործի վրայ էր, մարգարիտ էր գտած ազրի մէջ եւ չկորցնելու համար այդ գա՛նձը, առանց տեսնելու զիս եւ Սք. Կարապետի ժողովը, թողեց եւ անցաւ Նանիի հետ էրգրում:

Յետոյ եկայ տեսնեմ, դուք ի՞նչ կը մտածէք: Յատկապէս յանձին իշխանի՝ Լեւոնապարը: Դէսից, դէնից իշխանը խօսեցաւ եւ հասկըցայ որ ան ալ ինձի պէս շուար մնացած է: Ես շուար, ան շուար, այլեւս իրար տեսնելիք չկայ. այս գործս պրծած է:

Երրորդ իմ նպատակը Բաշ Կովսէր Մէհմէտ էֆէնտին տեսնել է: Ես տեսայ գայն բազմութեան մէջ, բայց չխօսեցայ. կը խընդրեմ, անորմէ ժամադրութիւն առնել, ուր որ ինքը կ'ուզէ: Ես անոր փոխայցելութեան պարտք ունիմ, թէեւ տարիներ են անցած: Այս այցելութիւնը թող այսօր լինի, առանձին, թող հասարակաց սեփականութիւն չլինի:

Ատկից յետոյ կ'ուզէի որ Արամն ալ առանձին ինձ հետ ժամադրուէր. ես հարցումներ ունիմ:


Վազը Մուշ նամակ պիտի գրեմ եւ քանի որ երկուսդ ալ այստեղ էք, իմ պաշտօնական յանձնարարութիւնն ալ կատարեմ եւ այդ գործն ալ վերջացնեմ: Այդ՝ զէնքերու հարցն է: Չկարողացաք, թէ չուզեցիք, տարբեր հարց է. այդ մի կողմ դնենք, բայց փաստ է, որ Դուրան-Քարաբաւանդակի անուան զինամթերքներու պաշարը, որ կը ստանայիք, ձեր մօտ պահեցիք եւ մեզի չհամարեցիք: Բանը բանէն անցած է. ինձ չխրախուսեցիք եւ պահանջներս անկատար թողիք: Բայց այժմ, ձեր նամբած Գարմէն, ձեր վրայով Դուրան անցնող գործիչները, ինչպէս Սեպուհ, Մարգպետ, Մուրատ եւ մանաւանդ Տարօնի մեծն ու պզտիկը ձեր դէմ լեցուած են եւ իրենց զինական բաժինը կ'ուզեն: Ես ալ պահանջող եմ: Երբ անոնց ըսի, թէ ինչո՞ւ ձեզ հետ զէնքերը չբերիք, անոնք պատասխանեցին, որ «մեզի չեն տար վանեցիք, քու մօտիկներն են, զնա եւ նամբիր»: Արդ՝ այս խնդիրը պարզէք: Ես պիտի գրեմ, ինչ որ պատասխան տաք:

Ես ինձ կը զգայի պարտապահանջի վիճակին մէջ եւ անոնք իմ առաջ կոտոր ընկած վաճառական. ստոնութիւն մը պատեց մեզ. լռութիւնը խանգարողը եղաւ իշխան.

— Դու գիտես, թէ ինչ դժուարութեամբ Լեւոնապարի բաժինը



Արամ



1.- Խմբակաւտ Յարութիւն, 2.- Արամ,

3.- Վանայ իշխան, 4.- Մոզո

ես պակած եմ Շամի բերանէն եւ այն ալ չնչին մէկ մասը. իմ ձեռը բան չկայ :

— Գիտեմ, գիտեմ, որ դու ալ գրկուած ես իբրեւ Շամի փոքր եղբայրը. գիտեմ որ դու չես մեզ գրկողը եւ դրա համար կը մտածէինք օգնութեան գալ Լեռնապարին, բայց մեր զէնքերը չախմախումու էին, որոնց դու կարիքը չունէիր : Բու ըսածին պէս ալ կը գրեմ :

Այս իմ հեզնանքին վաստակեցի Իշխանի խորամանկ ժպիտը. Արամ յօնքերը կհտեց .

— Կրիք Դուրան— Բարձրաւանդակ որ իրենց բաժին զինաւէրքերքը, փոխադրութեան անհնարինութեան պատճառով, Արամը կամովին եւ դաւաճանութեամբ տուած է կառավարութեան. անկէ պիտի պահանջել : Հանգստացա՞ք... Անոր ձայնը կտրուած ջութակի թելի նման խզուեցաւ :

— Արամ, ես քու ըսածին պէս չեմ կրնար գրել, որովհետեւ դու սուտ կը խօսիս : Բայց ըսածիդ մէջ մի կարեւոր բան կայ : Կառավարութիւնը այս կամ այն կերպով յաջողած է մեր պահեստները գրաւել եւ քեզ ալ հետը միասին բանտ տանիլ : Անկասկած է որ այդ բռնուած պահեստները առանց քու նախաձեռնութեան չպիտի լեցուէին : Արդ, երբ քեզ բանտէն կը հանեն, քեզ Սահմանադրութեան հերոս կը համարեն, երբ բոլորի մօտ ի պատուի ես եւ մանաւանդ կառավարութեան մօտ, ուրեմն, եթէ այդ բոլորը կեղծիք եւ սուտ չեն, պէտք է որ այդ բռնուած պահեստները կառավարութիւնը քեզի վերադարձնէ. այսպէս, դու կ'ազատուիս իմ ձեռէն, Տարօնի բաժինը ինձ տալով : Եւ կամ, եթէ կառավարութիւնը չուզէ բաժնուիլ հին ռէժիմի ձեռք բերած աւարէն, քեզ նորէն բանտ պիտի առաջնորդէ, իսկ ես ու Իշխանն ալ կը քաշուինք Լեռնապար եւ անոր պահած ուժերը կը սպառենք, մինչեւ քեզ ազատեն :

Արամ զարմացական կը նայէր եւ զիս խենթի տեղ կը դնէր, բայց ես կը շարունակէի, անոր զարմանքը աւելցնելով :

— Ա՞յս էր մեր նպատակը, որի համար այսքան շարժարուեստանք : Հին ռէժիմին գոնէ գիտէինք՝ ո՞րն է չարիքը, ո՞րը բարիքը եւ հանգիստ կը մեռնէինք : Սահմանադրութիւն եղաւ, բարիքն ու չարիք իրար խառնուան եւ քալանջ եղաւ. ո՛չ բարիքն է յայտնի, ոչ չարիքը. շունք՝ գաւազանն առած հովիւ է դառած. հովիւը գաւազան ձգած՝ շուն է դառած : Ահա քեզ մի նմոյշ, որ հետո եմ բերած, — ամենաառաջին յեղափոխական զինուորականը կը համարուի եւ Սահմանադրութիւնը բերողը. խոտը իր բերանն է՝ զիս էջ կը համարէ. ելանք ճանապարհ, փոխանակ առաջարկելու՝ գնանք Խըվնէր,

Խասըմ բէյին պատիժը տալու, կ'ըսէ՝ զնանք այդ մարդու հետ լեզու գտնելու... Չգնացի, ան գնաց եւ մեր գլխին նոր փորձանքներ ծրագրեց: Կ'անցնիմք հայկական անհամեմատ կիրք եւ բարգաւաճ շրջաններով, մեր Վէհիբի աչքերը կը ծակեն. կը մտնենք Լեռնապար, ուր կարգ ու կանոն է դրած Իշխան, նախանձէն կ'ըսէ. «Կեցցես դու, կը տեսնես որ իշխանութեան մէջ իշխանութիւն կայ հոս»: Կը խօսիս վարչական ապակեդրոնացման մասին, կ'ըսէ՝ այդ դէմ է Սահմանադրութեան սկզբունքին, այդ դէմ է Հասարակութեան սկզբունքին. Հայերդ մշակուած էք, կը ստեղծէք ձեր շրջաններու մէջ Զուլցերիա մը, իսկ քրտերը մէկ մէկ «դարապէշութիւն» միջին չափանիշ պիտի գտնել: Կը խօսիս միւս հիմնական սկզբունքներու մասին, ան այլ բացատրութիւններով մեր ուզածին, փնտռածին հակառակն է որ կը փաստէ, բէեւ անոնց հետ համամիտ է: Ասիկա ի՞նչու յեղափոխականն է, ու ի՞նչ Սահմանադրութիւն է. ես կը գերադասեմ կոտան Այա բէյը, Ազամաթ բէյը քան այս կեղծ ու պատիւր Վէհիբը: Գիտենք որ անոնք աղբ են, չարիք են, այս ալ նոյնն է, բայց մեզոք օժուած: Խաբկանքի մէջ ենք: Այս բոլորը կ'ըսեմ անոր համար, որ եկած է լաւ առիթը՝ պատռելու կեղծիքի ֆողը, Սահմանադրութեան ինչ լինելը հասկանալու: Իշխանի խօսածներէն ես հասկացայ, որ ան եւս ինձ նման մթութեան մէջ է: Արդ, երբ քեզ բանտէն կը հանեն եւ կը յայտարարեն ամէնքին, որ շնորհիւ քեզ եւ քեզպէսներուն է որ հին ռէժիմը տապալուած է, դու զինաթափ չպիտի մնաս եւ քու հաւաքած զէնքերը քեզ պիտի վերադարձուին, Սահմանադրութեան իսկ պաշտպանութեան համար: Եթէ Սահմանադրական կառավարութիւնը վստահի եւ վերադարձնէ, լաւ. եթէ չվերադարձնէ, ուրեմն անվստահելի է եւ մենք ալ տարբերութիւն չպիտի դնենք հին եւ նոր ռէժիմներու միջեւ: Եթէ համաձայն ես, ել, ես ալ քեզի հետ քու կուսակալիդ, քու Վէհիբիդ այցելութեան գնանք եւ այս պահանջն ալ դնենք: Եթէ համաձայն չես, ես անոնց ոչ այցելութիւն տուողն եմ եւ ոչ ալ մնաս բարով ըսողը: Իմ գործս լմնցած է:

Այս խօսքերս յանկարծակիի էին բերած իմ ընկերներս. Իշխանը մատնեցը կը կրծէր, Արամը իր թաւ յոնքերը կախած Իշխանի կարծիքը կ'ուղէր նախ լսել, բայց ան կը լռէր. ի վերջոյ Արամ հարցուց.

— Այս մտքերը այստե՞ղ մտածեցիր, թէ առաջուց ունէիր: Այդ առաջարկդ զինամթերքի ազատման համար է, թէ այլ բանի համար:

— Արդէն քեզ ըսի, որ զինամթերքի ազատման հարցը մի ա-

ռիթ է. ի հարկէ առիթը ոչ պատճառ եւ ոչ նպատակ է: Նպատակս գիտէք, ձեզ Մուշէն գրած եմ. միակ պատասխանը այն եղաւ, որ Սարգիսը եկաւ Նաճիի հետ Մուշ եւ չեկաւ Սր. Կարապետ. երեւի չուզեց ինքզինքն արատաւորել հակադրութեան հետ գործ ունենալով: Կրկին ձեզ կը հարցնեմ, թէ ի՞նչ է ձեր մտածումը Սր. Կարապետի մեր եզրակացութեանց մասին:

Արամ պատասխանեց.

— Թէեւ ես այլ կարծիք ունիմ, բայց այն տպաւորութիւնը ձգած է, որ համապետական յեղափոխութենէն հիասթափ, նեղ ազգային գծի վրայ կանգնելու ձգտում ունիմ. որ գերագնահատելով հայութեան կարողութիւնը, անոր առանձնակի շահերը կ'ուզէք ապահովել. որ կ'անտեսէք այս յեղափոխութեան ընձեռնած առաւելութիւնները եւայլն: Սրանք չեն կարելորը, կարելորն է գիտնալ թէ դուք, երբ կը գտնէք որ այս եղանակը՝ յեղափոխութիւն չէ եւ պէտք է խորացնել, շարունակել մինչեւ որ Ապակեդրոնացման սկզբունքը իրագործուի, գտնէ, այդ ուղղութեամբ, ի՞նչ ֆայլեր առած էք եւ պիտի առնէք:

Արամ կը շեղէր իմ դրած հարցէն, բայց պէտք էր որ պատասխանէի:

— Ըստ իս, համապետական յեղափոխութիւն դեռ չկայ, եղանակը պետական յեղաշրջում է, որ թուլցուցած է հին ռէժիմը եւ ինքն ալ դեռ եւս չէ արմատացած. այս վիճակը խիստ նպաստաւոր է համապետական յեղափոխութեան զարգանալուն, կամ հին կարգերը վերականգնելուն: Լինի հին կամ նոր ռէժիմ, մեր նպատակներու մէջ չէ ընկած ցարդ պարլամենթական միջոցներով ապահովել մեր եւ պետութեան շահերը: Ինձ համար բնաւ հետաքրքիր չէ՝ Հասանն է թէ Հիւսէինը պետութեան ղեկավարը: Մենք զէնք վերցուցինք, կրուսեցանք յանուն անոր, որ իւրաքանչիւր Օսմանեան ժողովուրդ, անկախ իր թուէն, որակէն, իր տան մէջ ազատ լինի, իր տան մէջ իրաւունք ունենայ իր ապահովութեան, տնտեսութեան եւ վարչութեան մասին մտածելու, գործելու: Ազատ այս ժողովուրդներին ներդաշնակութեան մէջ է խաղաղութեան հաւաստիքը. ան կախուած չպիտի լինի միայն բարեխնամ կառավարութեան, այլ իւրաքանչիւրի կամէն: Այս բոլորը ուրեմն մտնա՞նք: Հին ռէժիմին ինձ հետ աշխատողները ինձ պէս կը մտածեն, անոնք ամէն ֆայլ պատրաստ են ընելու, յոգնած չեն, դէմ են «Սահմանադրական ժամանակներու» գործադուլին եւ աննպատակ ոգեւորութեանց: Բայց եկուր տես՝ շատեր մեր շարքերէն՝ կը մտածեն. «Մեր ի՞նչ գործն է համապետ-

տական յեղափոխութիւնը, բոլոր ազգերու, կրօններու ազատութիւնը, ամէն մէկը թող իր գլուխի մասին մտածէ»։ կամ՝ «Հեզ լինինք, եղածէն օգտուինք, մինչեւ տեսնենք ո՞ր կ'երթայ այս յեղափոխութիւնը»։ Այդպիսի կը շատնան, մենք կը թուանանք եւ դրա համար գործնական ոչինչ չենք ըրած։ ընելիք ալ չպիտի լինի, եթէ դուք չնախաձեռնէք։ Եթէ կ'ուզես, այլեւս վերադարձ չունիմ Տարօնի աշխարհ, թէ որ այստեղ ալ «Սահմանադրութեան երիշով» կ'երթան։

Իշխանն ըսաւ .

— Այստեղ ամէնքն ալ «Սահմանադրութեան երիշով» կ'երթան։ Երկնէն խնձոր է ընկել։ այժմս բոլորի հետաքրքրութեան առարկան է՝ ինչպէ՞ս պարլամենթ ընկնիլ, ի՞նչ պաշտօն կամ դիրք ստեղծել եւ ուրիշ ոչինչ։

— Կը չափազանցես, Իշխան, միջամտեց Արամը, դու, օրինակ, այդ հաշուի մէջ չես, ո՛չ ալ ջուտ Լեռնապարը, ոչ ալ այստեղի երիտասարդութիւնը, որ կ'երթայ նոյնիսկ ընկերային յեղափոխութեան գծով, եթէ մոռոզ լինի։ Բայց անհերքելի է որ զանգուածը այնքան յոգնած, տառապած է, որ երկնքի բարիք կը համարէ այս ընդմիջումը եւ անոր խանգարողն է իւր թշնամին։ անհերքելի է, որ մեր հին շարքերը, ազգեցիկներն ալ դադար կ'ուզեն առնել։ անհերքելի է եւ այն, որ Ռուբէնի ասածներուն, թէկուզ նշմարտութիւն ալ լինին, ոչ ոք չպիտի հետելի։ Ձէնքերը պահանջելը ոչ ոք չպիտի արդարացնէ։ Ես կը դառնամ էշ նահատակ, դուք կը դառնաք լեռան սլազակ, եթէ ստոր համար քայլեր առնելու լինիք։ Նայիր, ստոգիր։

— Ձեր ասածէն յետոյ ստուգելու բան չունիմ։ միայն ինձ վերջնական ըսէք, մեր բաժին զինամթերքէն ի՞նչքան պիտի տաք եւ ե՞րբ տուածը մամբու կրնանք հանել։ Այս հարցը մի կերպ պիտի լուծել։ ան կը թունաւորէ երկու շրջանները իրարու հանդէպ։

— Համամիտ եմ քեզ հետ, *կ'ըսէր Արամ*, որ այդ թոյնը պիտի չեզոքացնել, բայց ի՞նչ ընենք։ զինամթերքի մնացածները այնքան չնչին են, որ ոչ այստեղի, ոչ այնտեղի համար սպեղանի կը լինին։ Արամ դարձաւ Իշխանին. «Լեռնապարէն մի բան կրնա՞ս կտրել. այստեղէն ալ մի բան միացնենք եւ բողոքներ կտրենք»։

Անոնք մօտաւոր հաշիւներ կ'ընէին իրենց ունեցած գէնքերու, որոնք վիրակապ իսկ չէին կրնար լինել։ Կը մտածէի՝ կտրել այդ վիրակապէն եւ ճամբել Դուրան-Բարձրաւանդակին, երեք շրջաններն ալ պիտի մնան առանց մի փաթթոցի։ Ինձ համար թանկագին եւ սիրելի էին Լեռնապարը և Վանը՝ նոյնքան որքան Տարօնի երկիրը, ուս-

տի առաջարկեցի ճշդիլ եւ հաստատել Դուրան-Բարձրաւանդակ ճամբը։

— Թող Բիրոն որոշէ եւ ինչ կ'ուզէ թող ընէ։ Եթէ համամիտ էք, այդ անը ունեցածներու եւ պարտքի հաշիւը ինձ տուէք, ես իբր պահանջատէր անոնց ներկայացնեմ։

Այսպէս ալ ըրին։ Յայտնեցի, որ ես այլեւս հոս գործ չունիմ եւ հեռանալու մասին կրնամ մտածել։ Ղուք զնացէք ձեր գործին, ես ալ իմ գործին։

*«Հայ յեղափոխականի մը յիշատակները»
Ե. հատոր, էջ 232-239*

Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Է Ն Ա Ռ Ա Ջ

Արամ դեռ չէր քնացած, խոնջայի վրայ իր ունեցածը պատ-
րաստած իմ վերադարձին կը սպասէր. երբ տեսայ զայն, չկրցի ինք-
զինքս զսպել, վիզն ինկած կը համբուրէի. «Եա, եա, եա, բաօ բաօ,
— կ'ընէր, այս ի՞նչ է եկած վրադ, առաջ այդ չունէիր»:

Արամ նստաւ ուտելու: Ես մինչեւ կոկորդոս լեցուած էի, ան
կ'ուտէր ախորժակով տեսակ մը պանիր, որուն երեք մասը բանճար
էր, մէկ մասը պանիր, խիստ համեղ եւ խնայողական. գինին դըր-
ուած էր, բայց չէր խմեր, կարծելով որ աչքին վնաս է:

- Այդ շունը ո՞վ է, որ առաջին այցդ անոր կու տաս:
- Այնպիսի շուն մըն է, որ արժանի չէ հայութեան, այլ ար-
ժանի է քրոնթեան: Արամ բան չհասկցաւ:

— Եզովրոսի նման մի խօսիր, ինչո՞ւ անոր հետ տեսնուեցար:

— Իմ ձեռագիրներս, ըսի որ բռնուած են: Գնացի Մէհմէտ
էֆէնտիէն խնդրելու, որ ետ տայ: Համաձայնեցաւ: Այս կ'ըսեմ քե-
զի իբր գաղտնիք:

Արամ աչքերը ինձ ուղղեց.

- Բերանդ կը չորնա՞ր որ արխիւը պահանջէիր:
- Այդ մարդ, իմ ի՞նչ գործն է ա'րխիւը. դուք ձեր տակը մոռ-
տէք, ես եկած եմ մաքրելու:

— Ուրեմն ամէն մէկը իր մասին մտածելու է, հա՞:

— Այո, ես այդ ձեզմէ սորվեցայ. իշխանի խօսքով զիս սիր-
կին կ'ընէք, ինձ խոստումներով նամբու կը դնէք. երեք տարի եղաւ,
իմ էէֆը հարցուցի՞՞ք, գիտցա՞ք իմ վիճակը, ինձ օգնութեան եկա՞ք:

Արամի զէմքը խղճալի երեխայի կերպարանք առաւ:

— Իրաւունք ունիս, իրաւունք. բայց դու հաւատա, հաւատա
որ ամէն անգամ մտածած եմ, տանջուած, ամէն անգամին ալ բան
չեմ կրցած ընել. որքա՞ն անխիղճ ես, գոմշի էն ունիս. ես կը կար-
ծէի, քէ ամէն ինչ մոռցած ես:

— Մոռնալը իշուն վայել է, պատասխանեցի:

Արամ այնքան ընկճուած, այնքան տառապած կերպարանք էր
առած, որ ես մէկ կողմէ կը զղջայի ըրած չարութեանս համար. ա-
նոր կ'ուղէի ըսել. «Սուտ կ'ընեմ, էու հանդէպ էն պահել չեմ կըր-
նար»: Ըսի.

— Քեզի մի աչքի լոյս տամ. արխիւները միայն դուն կրնաս
ազատել՝ իմ մարդը անկարող է այդ ընելու, բայց կրնայ դիւրացը-
նել, եթէ դու լրջօրէն եւ առանձին տեսնես կուսակալը եւ վճռական
պահանջ դնես վերադարձելու մասին:

— Ուրեմն դու խօսած ես այդ մասին: Այլեւս ինչո՞ւ այս դա-
տարկաբանութիւնները. ինչո՞ւ կ'ուզես զիս չարչարել:

— Որ քեզ խածնելով իմ սիրտը հանգստանայ:

Ան քաշեց վզէս եւ իմ թուշը այնպէս սեղմեց ատամներուն
մէջ, որ քիչ մնաց պոկէր: «Խածնեմ, որ սիրտս հանգստանայ, խած-
նեմ՝ իմ սիրտ հանգստի», կ'ըսէր եւ կ'ուրախանար, որ ատամնե-
րուն հետքերը կը մնային թուշիս վրայ:

— Անպայման խօսած ես նաեւ զինամթերքի մասին, գոնէ Տա-
րօնի բաժնին մասին:

— Ես կը կարծեմ, որ տեղական իշխանութիւնը խոչընդոտ չի
լինիր եթէ Իքթիհատի կեդրոնը հրաման տայ կուսակալին:

Արամի աչքերը կը փայլէին ուրախութենէն.

— Ատիկա յաջողութեան կէսէն աւելին է: Անպայման պիտի
փորձել ետ առնել մեր գոյքերը(*):

Արամ կը շարունակէր իր հարցումները.

— Եօթը ժամուան մէջ միայն ա՞յդ խօսեցաք, ուրիշ ի՞նչ խօ-
սեցաք:

— Մնացածը զուգակութիւն էր, արսանք, փարսանք, դէս ու
դէն:

Յետոյ քնացանք, բայց իմ գլխու մէջ իրար փաթթուած եւ
կծիկ եղած կը կրկնուէին նախադասութիւնները՝ «Հայութիւնը ար-
ժանի չէ Արամին, հայութիւնը արժանի չէ այս շահերը»:

«Հայ յեղափոխականի մը յիշատակները»
Ե. Հատոր, էջ 264-265

(*) Որքան զիտեմ, իմ հետանալէն վերջ, վանի արխիւները մէկ մասո՞վ
քէ ամբողջութեամբ, ետ ստացուեցան, իսկ ռազմանիւթերը մնացին պետական
պահեստներուն մէջ: Երկու օր չանցած պաշտօնեայ մը ծրար մը բերաւ, վրան գըր-
ուած էր՝ «Ռուբէն փաշայա մախուս սըր» (Ռուբէն փաշային կը պատկանի):
Ծոռահն մեօ 18 տետրակներս էին:

ԱՐԱՄ ԽՈՅԻ ՄԷՋ

Հոկտեմբերի վերջերն էր: Օր մը Նախավկայի վանահայրը վանքէն եկեր էր, գործի մասին խորհրդակցելու:

Պանասորի արչաւանքի պատրաստութեան ժամանակ, այդ վանքը շատ մեծ դիւրութիւններ էր ընձեռած փոխադրութեան գործին: Կարօն ու Մածուն Ուէջօն այդ շրջանի յայտնի գործիչներն էին: Ռուսական ափէն, քէլէկներով Արաքսի վրայով ռազմամթերք կ'անցընէին պարսկական ափը՝ գիշերով, իսկ անկէ ալ կը փոխադրէին Սալմաստ կամ Պոյ:

Բայց Պանասորի արչաւանքէն վերջ, այդ գիծը երեսի վրայ էր մնացեր տարիներ: Երեւանի մեր ընկերները այդ ժամանակները նորէն մարդ էին ուղարկած Հին Ջուղա՝ գիծը բանալու: Իսկ վարդապետն ալ եկեր էր ինձ մօտ այդ մասին խօսելու:

Վարդապետի հետ առանձնացած իմ սենեակս կը խօսէինք, երբ Յակոբը ներս մտաւ յայտնելով, որ Կովկասէն նորեկ երիտասարդ մը եկեր է, ու կ'ուզէ զիս տեսնել անպատճառ: Դուրս ելայ բակը: Միջահասակ, նիհարակազմ երիտասարդ մը, ձեռքը փաթաթած ճերմակ կտաւով, բարձրավիզ կօշիկներ հագին, ներկայացաւ ինձ, ու նամակ մը յանձնեց:

Երիտասարդը Արամն էր, հետագային այն բացառիկ կեդրոնական գէմքը, որ մեր վերջին 10-15 տարիներու ամենացայտուն, հոյակապ ղեկավար ուժը եղաւ: Բայց եւ այնպէս, այն օրերուն ան Արամ փաշա չէր, այլ պարզ նոր սկսնակ մը, մեր սերունդի մէկ համեստ ներկայացուցիչը, որ ինքզինքը նուիրեր էր Գործին:

Նամակը բժ. Տէր Դաւթեանն էր գրած, աւելի քան լակոնական, ճիշդ այնպէս, ինչպէս կը խօսի: Նամակին միտքը այս էր. — «Գրաբերս մեր լաւ տղաներից է. վաճ է անցնելու: Աշխատիր շուտով քանապարհել»:

— Ու Աստու թարին: So տնախանդներ, ինձ ուղարկեցիք միայն վեց ամիսով Պարսկաստան, որ քիչ մը փորձառութիւն ձեռք բերեմ ու յետոյ անցնիմ Երկիր: Ահա տարին վաղուց անցաւ, ու ոչ ոք չի գար տեղս բռնելու, որ ես ալ իմ կարգին Երկիր անցնիմ: Եւ սակայն մարդ կ'ուղարկէք «մեր լաւ տղաներից», որ շուտով Երկիր քանդեմ, մինչդեռ իմ անքիւ ցամակներուս պատասխան իսկ չէք տար:

Ներսս կուտակուած մաղձը թափեցի Արամի գլխուն, եւ Բիւրոյին ալ, բժիշկին ալ տուի՝ զորս դու պատուիրեցեր:

Ուեղճ Արամը շճած մնացեր էր, առանց հասկնալու իմ կատաղութեան բուն պատճառը:

Ձինքը տարի միւս սենեակը տղոց քով, իսկ ես մտայ վարդապետին մօտ մեր ընդհատած խօսակցութիւնը շարունակելու:

Արամը իր Յուշերուն մէջ այդ դէպքը բաւական զուեշտական կերպով կը պատմէ եւ կը շեշտէ, որ նոյնիսկ սենեակս չեմ տարած զինքը, այլ ձգեմ եմ զինուորներուն մէջ:

Նախ ըսեմ, որ Արամը իր «Յուշեր»ը գրած է, երբ Արամ փաշա էր եղած եւ հասկնալի հոգեբանական փոփոխութեան մը ենթարկուած: Եւ երկրորդ՝ մեր տան մէջ զինուորի կամ ինձ յատուկ սենեակ չկար, ամէն սենեակ ամէնքին համար էր: Բայց երբ կարեւոր բան մը լինէր խորհրդակցելու, այն սենեակը կը քաշուէինք, ուր իմ անկողինս էր, ու բնական է, որ զինուորները մեզ չէին խանդարեր:

Ինքը կ'ըսէ արդէն, որ ես միւս սենեակի մէջ Նախավկայի վարդապետին հետ տեսակցութիւն ունէի: Նոր մարդ մ'էր ինքը. ճիշդ է, որ Բիւրոյէն նամակ ունէր, բայց այդ պատճառ մը չէր, որ ես անմիջապէս ամէն բան բանայի անոր առջեւ, մանաւանդ որ հազիւ երկու խօսք փոխանակեր էի իր հետ: Եւ վերջապէս ի՞նչ կը նշանակէր «լաւ տղայ», մենք բոլորս ալ առանց բացառութեան «չատլաւ տղաներ» էինք, քանի որ նոյն գործին էինք լծուեր՝ այնքան անձնուրաց կերպով:

Վերջէն Փայլակի հետ ներս եկան, երբ վարդապետը գնաց: Փայլակը, որ ծանօթ էր Արամին Բագուէն, հանգամանօրէն ծանօթացուց մեզ իրարու: Երբ բաւական մը խօսեցանք, Արամը ուժեղ տպաւորութիւն ըրաւ վրաս: Եւ ոչ միայն անմիջապէս ուղարկեցի զինքը Մենաւոր, այլ Փայլակն ալ հետը գրի, որպէսզի որքան հնար է հեշտացնէ եւ արագացնէ Արամի Երկիր անցնելը, թէեւ մեծապէս կը կասկածէի որ յաջողի, քանի որ ժամանակը անցած էր:

Արամը երբ իր «Յուշեր»ը կը գրէր, օր մը միասին կառք վեր-
ցուցինք ու դնացինք Ղուբարուղլի, ուր իր նշանածը կը մնար: Հոն
«Յուշեր»ը տուաւ, որ կարդամ, ու եթէ բան մը պակաս է ձգեր, յի-
շեցնեմ իրեն:

Իմ մասին գրածը որ կարդացի, ըսի, թէ անարդար է, թէ ես
իր դէմ անձնական ոչինչ ունէի, թէ ես իմ կարդին կ'ուզէի Երկիր
անցնիլ, ու չէի հանդուժեր, որ ես մնամ Պոյ եւ ուրիշներ պան ու
անմիջապէս անցնին Երկիր:

Միջանկեալ բռնեմ այստեղ, որ Արամը, իր «Յուշեր»ուն մէջ,
երբ Սարգիսի ու իմ մասին կը խօսի, տեղ մը կ'ըսէ. —

«Մալխասը, առհասարակ կազմակերպական գործերի մէջ սի-
րողի դեր է կատարել, երբ քէֆը տուել է՝ մտել է, մէկ էլ խոռվել
չեզոքացել է»:

Չեմ գիտեր ինչո՞ւ «Հայրենիք»ի մէջ Արամի այս կարծիքը
փոփոխութեան էր ենթարկուած, ու «սիրողը» դարձած էր «սիրով
դեր է կատարած»: Վրիպա՞կ է այս թէ ինքնասիրութեանս համար
եղած, չեմ գիտեր: Սակայն, Արամը ամբողջովին իրաւացի է իր
յայտնած կարծիքին մէջ, երբ կ'ըսէ, թէ Մալխասը յեղափոխական
սիրող է:

Այս մասին ես աւելի ընդարձակ կը խօսիմ իմ վերջաբանին
մէջ: Լաւ է մարդ այնպէս դուրս գայ, ինչպէս որ կայ, եւ ոչ թէ
ինչպէս կ'ուզեն ուրիշներ:

«Ապրումներ», հրատարակութիւն «Համազգային»ի
էջ 304-306

Մ Ա Լ Խ Ա Ս

Վ Ա Ն Ի Մ Է Ջ

Վերջապէս օր մը եկաւ, երբ իմ ալ կարգս հասաւ Երկիր մըտ-
նելու. ես ալ պիտի երթայի «Հայաստանի կիւրուլթույի»ի ճամբա-
յով: Սքանչելի Սարգսին հետ Մենաւորէն ճամբայ ելանք, չալկած
մեր համեստ բեռները եւ վարդապետի ու ընկերներու սաղ սալամաթ
տեղ հասնելու բարեմաղթութիւնները:

Վան-Այդեստան հասանք Յունիս Դի առտուն, երբ արշալոյսը
կը բացուէր: Միայն Արամը գտանք հոն, որ ծանր հիւանդութենէ նոր
ոտքի ելած էր, բայց մեր գալը, կարծես «Լօխման Հէքիմի» ամե-
նարոյժ հապերու ազդեցութիւնը դործեց վրան: Մէկ-երկու օրէն
ոտքի ելաւ բոլորովին քաջաոգջ վիճակի մէջ:

Նախքան մեր Վան հասնիլը, Արամը իմացուցած էր Շամի
(Վան) եւ Լեռնապարի ընկերներուն մեր մօտաւոր գալուստը ու հրա-
հանգած բոլորին Յունիսի 23ին իջնել Այդեստան: Ընկերներէն ու-
մանց ծանօթ էի, Վարդան-Շահպազը, Տիգրանը, Յարութիւնը, Մես-
րոպը գիտէի Պարսկաստանէն, որոնք իմ շրջանին մեկնած էին Եր-
կիր. անծանօթներ էին՝ Իշխանը, Ռուբէնը, Սալմանն ու Վաթանը:
Վերջին երկուքը, Համադասպ Բաղէչցեան եւ Ղեւոնդ Մելոյեան(*),
տեղացիներ էին, ճեմարանաւարտ արժէքաւոր երիտասարդներ, ու-
րոնց մասին խօսած եմ «Ճամբուս Վրայ» գրքիս Բ. հատորին մէջ:

Ճամբու յոգնութենէ կազդուրուած, մեր հասնելէն երեք-չորս
օր վերջ խումբ մը հայդուկներով Արամը մեզ տարաւ Վարազայ լե-
ռը: Դեռ շատ կանուխ էր ամարանոցաւորներու համար Վարազայ
Վանքը բարձրանալու, մեր բախտէն ուխտաւորներ ալ չկային: Հայ-
դուկները թողուցինք Վերին Վարազ, մենք երեքով Սողոյի հետ Ի-
ջանք վանքը: Նոյն երեկոյեան Հայոց Ձորի Տիգրանը, Արճակու շրջ-
ջանէն ալ Յարութիւնը, իրենց խումբերով հասան վանք:

Ամէն ինչ ինձ համար նորութիւն է, պատմական վանքը, Վա-
րազայ լեռան բարձր գագաթները, Աստղկան բերդը, Կորթկան Բա-

(*) Կրկնութիւններէ խուսափելու համար, ըսեմ որ, այս գրութեան մէջ
գտնուող բոլոր բնկերներու մասին, երկարօրէն գրած եմ «Ճամբուս Վրայ» գրքի
Բ. հատորին մէջ:

րը, Կարկուտ Խաչէն պարզուած հոյակապ համայնապատկերը: Այս բոլորը շատ լաւ, բայց անտէր մնալիք փամփոշտակալի կաշիները ուսերս կը ցաւցնեն, հրացանն ալ շատ ծանր կու գայ, թէև չորս-հինգ կանգուն երկարութեամբ դօտի մը պլլեր եմ մէջքիս, բայց նորէն բան դուրս չի գար, կողոսկորներս սաստիկ կը ցաւին: Հայաստանն ազատելը բաւական ծանր պիտի չէ եղեր... Այդ օրերուն, ամերիկացի աղջիկներու նախանձը շարժելու աստիճան վրաս աւելորդ բառուտ մը միս չունէի, կարճ խօսքով՝ քաջ 118 բառուտը չէր անցներ, այդ կէտին վրայ ալ մնաց երկար տարիներ:

Երկու օր կատարեալ արձակուրդ մը անցնելէ վերջ, վերադարձանք Այգեստան: Յարութիւնը իր խմբով գնաց իր շրջանը, իսկ Տիգրանը անցաւ Հայոց Ձոր, ուր քանի մը գիւղեր պտտելէ վերջ Յունիս 23ին պիտի վերադառնար, ինչպէս նախօրօք որոշուած էր:

Մինչև ընկերներու հաւաքուիլը, մօտ երկու շաբաթ Արամի մօտ մնալով, քիչէն շատէն ծանօթացանք կազմակերպութեան բարդ մեքենականութեան, որ յատուկ էր Այգեստանի պահանջներուն:

Առաջին եկողը եղաւ Տիգրանը: Խումբը ձգած Ղարատաղ (Փաշի փողան), ինք մեր մօտը եկաւ: Չորսով, Արամը, Սարգիսը, Տիգրանը եւ ես, խորհրդակցութիւն մը ունեցանք մասնաւորաբար Երկիր կանչուելիք թեկնածուներու մասին: Այդ խորհրդակցութեան ընթացքին Իշխանի եւ Ռուբէնի հարց մըն ալ երեւան եկաւ, որու վրայէն թեթեւ անցաւ Արամը: Ծիտակը, այդ կցկտուր խօսակցութենէն ես բան չհասկցայ: Օր մըն ալ Արամն ու Սարգիսը առանձնացան, ես ու Տիգրանը առանձին մնացինք երկու զինուորներով:

Երկուքով փակուած սենեակին մէջ, որու վարագոյրներն իսկ չէինք կրնար շարժել, կողք կողքի երկնցած՝ անցած օրերէն զրուցեցինք, երբ երկուքս ալ Պարսկաստանի գործիչներ էինք: Տիգրանը վերջիչեց Թաւրիզ, Պապոնց տան մէջ գլխուն խաղացած խաղս: Ատկէ տարի մը առաջ, գիշեր մը Կոստին ու ընկերը անկողին մտած, երբ մենք կ'ուզէինք քնել, իրարու հետ կը վիճէին իրենց ընտրելիք կեղծ անուններու վրայ. ալ համբերութիւնս հատաւ, ելայ տեղէս ու կուժ մը ջրով մկրտեցի ու իրենց կեղծ անունները դրի, Ուխտաւոր եւ Ծաւրօ: Թաւրից եկող-դացող ընկերները գիտէին այդ պատմութիւնը: Օր մըն ալ Յարութիւնը, որ իր իսկական անունն էր, հարցուց թէ ի՞նչ յարմար կեղծանուն մը կրնայի գտնել իրեն համար: Այդ պահուն Յարութիւնը գետին նստած ցածիկ սեղանի մը վրայ նամակ կը գրէր: Ես ալ մկրտող քահանայի մը արժանապատուութեամբ բարձրանալով տեղէս, ամբողջ կուժ մը ջուր թափեցի գլուխն

ի վար մկրտելով ու անուանակոչելով զայն Տիգրան: Այսպէս կարծեմ մեր եկեղեցական պատմութեան մէջ եզակի երեւոյթ մըն է: Մեր Տէր Յիսուս Քրիստոս ալ հեղու խոնարհ կանգնեցաւ Յովհաննէս Մկրտիչի առջև, որ ան Յորդանանի ջրով մկրտէ զինք: Կարծեմ երբեք լսուած չէ թէ՛ Յիսուս փայտ մը վերցնելով հալածեց Յովհաննէս Մկրտիչը, վրան քիչ մը ջուր լեցնելուն համար: Սակայն մեր ապերախ Տիգրանը, փոխանակ ծնկաչոք ձեռքս համբուրելու, ինչպէս եկեղեցական օրէնքը կը պահանջէ, փայտ մը վերցնելով ինկաւ ետեւէս. ես ալ շանթահարուած այս երախտամոռութեան ցնցող փաստէն, տնէն դուրս փախայ եւ գիշերեցի ընկերոջս մօտ: Բայց եւ այնպէս Յարութիւնի անունը մնաց Տիգրան:

Տիգրանի հետ խօսքէ խօսք անցնելով, հասանք Նիկոլի խումբի պատմութեանը, ի միջի այլոց յիշեցինք Մինասը: Կարելի՞ է երեւակայել իմ զարմանքս, երբ յայտնի եղաւ, որ Լեոնապարի Ռուբէնը, իմ գիտցած Մինասն էր, ան ողնիի նման պատեանը քաշուած ճգնաւորը, ուրբաթախօս համբը, ամպամած դէմքով զինուորը, անհաղորդական ընկերը: Ուրեմն, շան տղան դեռ «Հայաստանի կիրուլթի»-ին չէր գնացած ու քանի մը օրէն կրկին պիտի հանդիպէի անոր:

Ինչպէս վերն ըսի, Սարգիսն ու Արամը ամբողջ ցերեկը մօտաւոր տան մը մէջ առանձնացած էին. երեկոյեան մթով եկան: Մշտաժրպիտ Սարգիսը, որու բարձրագորգոտ ծիծաղի արձագանգը Այգեստանէն մինչև Վերին Վարագ կրնար հասնիլ, մտածկոտ դէմք մը ունէր: Մէկ կողմ տարաւ զիս ու երկար քարոզով մը արդուկեց գլուխս: Նախքան մեր Վան հասնիլը, որոշած էինք չորս ամիս մենք զմեզ զրկել քուէ տալու իրաւունքէն, մինչև որ քիչ թէ շատ ծանօթանայինք Երկրի պայմաններուն ու պործերու ընթացքին հետ: Այդ որոշումը չեղեալ պիտի համարէինք, քանի որ շատ կարեւոր հարցեր կային, դատական լուրջ խնդիր մըն ալ քննուելիք. ասոնցմէ զատ կար եւ այն պարագան, որ աշնան Արամն ու Իշխանը պիտի մեկնէին Ընդհ. Ժողովին մասնակցելու, որով մենք երկուքս պիտի մնայինք Այգեստան: Անշուշտ կար Տիգրանը, բայց ան իր շրջանն ունէր բազմաթիւ գիւղերով, ու շատ քիչ ժամանակ՝ Այգեստան գալու: Ինչ խօսք, որ Սայմանն ու Վաթանն ալ կային, բայց այդ երկու ընկերները, որ տեղացիներ էին, ուսուցիչներ, ամէն տուն չէին կրնար մեզ տեսնելու գալ. մենք ալ շատ զգուշաւոր էինք, որ չվտանգենք զանոնք:

«Ապրումներ», Հրատրիթն. «Համազգային»
էջ 393-396

ԱՐԱՄԻ ԵՐԿԻՐ ԳԱԼԸ ԵՒ ՅԵՏԱԳԱՅ ԴԵՊՔԵՐԸ

Կազմակերպութեան ծաւալման հետ, մեծ չափերով աճած էին նաեւ քարոզչական, յեղափոխական-դաստիարակչական եւ, մանաւանդ, ռազմական կրթութեան պահանջները: Կարող նոր մտաւորական եւ զինուորական ուժերու կարիքը զգալի էր: Մենաւոր եկած եւ զանազան պատճառներով Երկիր չմտած, յարմար ընկերներէ շատերը վերադարձած էին Կովկաս:

Մէկը, որ յամառօրէն կառչած մնաց Երկիր մտնելու որոշման, Արամն էր: Հակառակ անակնկալ խոչընդոտներու, որ հարկադրեց անոր մօտ տարի մը մնալ Սալմաստ, Պոյ եւ Մենաւոր (վանքը), եւ որ նպաստեց մօտէն ծանօթանալու փոխադրական մեր այդ կարեւոր գծին, այնուամենայնիւ, ան ծպտուած ձեւով մտաւ Երկիր, 1904ի աշնան:

Գրկարաց ընդունեցի զինքը: Առաջին իսկ տեսակցութեանս՝ զգացի որ եկողը լուրջ, խելահաս եւ կարող ուժ մըն էր: Թանկադին ընկեր մը կրնար լինել ինձ համար, որովհետեւ տարիներով Բազուի, Կարսի եւ Սալմաստ-Պոյի սահմանամերձ շրջաններուն մէջ գործիչի հանգամանքով չըլած՝ մօտէն ծանօթացած եւ փորձառութիւն ձեռք բերած էր: Մեծ արժանիք էր այդ, որ կը դիւրացնէր նաեւ մեր իրար հասկացողութիւնը:

Ինչ որ, սակայն, առաջին իսկ օրէն զգացի, անոր քիչ մը վերապահ եւ զոյշ վերաբերմունքն էր ինձի հանդէպ: Վերագրեցի անոր, որ նախապէս անծանօթ էինք միմեանց. ես կը ջանայի սրտբաց ջերմութեամբ վերաբերիլ իրեն. պատմեցի մեր կեանքը, գործունէութիւնը, ծրագիրները եւ տուի լայն ծանօթութիւններ կազմակերպական խնդիրներու մասին, իսկ աւելի ուսումնասիրելու համար տրամադրեցի մեր հին եւ նոր արխիւները:

Իրմէ հասկնալով, որ Իշխանի դպրոցական ընկերն է եղած,

անմիջապէս սուրհանդակ զրկեցի Իշխանին՝ հաղորդելու համար Արամի գալը: Միեւնոյն ատեն, առանց սար-ձոր իյնալու, յայտնեցի, թէ դժգոհ էի Իշխանի կասկածամիտ եւ բուռն բնաւորութենէն: Տիգրանի բնաւորութեան մասին եւս ցաւով եւ բոլորովին առարկայական ձեւով տուի քանի մը գծեր՝ զրական թէ բացասական իմաստով, աւելցնելով, որ ան Երկրի մարդ չէ. իր տեղը չէ այս կեանքը, որ մենք կը վարենք, յայտնեցի անոր թէ՛ Տիգրանը տեսակ մը ինքնաչեղոքացման մէջ է մտեր. ես դժգոհ չեմ անոր այդ դիրքէն. ամէն վայրկեան չեմ կրնար քովս ունենալ անխօս, դիմադժերու նեարդային շարժումներով միայն արտայայտուող մէկը: Նեղսիրտ դարձնող մեր բանտարկեալ կեանքը արդէն բաւական էր մեզի: Անշուշտ պիտի հանդիպէր իրեն. իբր նոր մարդ, եւ չէզոք մէկը, Արամը կրնար թերեւս մեղմել Իշխանի այդ վերաբերմունքը եւ թելադրէր Տիգրանին քիչ մը դաւառները ելնել, ժողովրդի հետ շփումներ ունենալ, նպաստել մեր քարոզչական գործին եւ, վերջապէս, ճանչնալ Երկիրը: Կալանաւորի մեր արգելափակ կեանքը անոր համար չէր: Տիգրանը, դժբախտաբար, առողջ ալ չէր. երբեմն անտանելի ցաւեր կ'ունենար աղիքներու մէջ. կարծեմ կոյր աղիքէն էր:

Մեծ յոյսեր ունէի, որ Արամը պիտի յաջողէր մեր ընկերական մթնոլորտը շնչելի դարձնել. խիստ կարեւոր էր, մանաւանդ, վերացընել Իշխանի եւ իմ տարակարծութիւնները եւ ցրել փոխադարձ թիւր կարծիքները:

Այսպէս կամ այնպէս, մեծ մխիթարութիւն էր ինձ համար ունենալ քովս կարող եւ հաւասար ընկեր մը, որուն հետ բաժնէի իմ խոհերը, ներքին հոգեկան տառապանքս, պատասխանատուութիւնը եւ մտածումները, որուն հետ դիւրին լինէր խորհրդակցիլ եւ գործակցիլ:

Մեր քարոզչական դործունէութիւնը մեծ թափ ստացաւ: Կանոնաւորեցինք խումբերու մեր այցը, դասախօսութիւնները. յատուկ քաղաքական-յեղափոխական դասընթացք մը ստեղծեցինք երիտասարդ եւ պատրաստուած ընկերներու համար, որոնք գաւառ պիտի երթային կամ խումբերու մէջ քարոզչական առաքելութեամբ պիտի շրջէին: Արտասահմանէն քաղաքական, յեղափոխական եւ ընկերվարական զրականութեան ներմուծումը աւելի մեծ ծաւալ ստացաւ: Այն ատեն Կովկասի մէջ սկսած էր հրատարակուիլ «Յառաջի գրադարան» անունով ընկերվարական մատենաշար մը, որ առատութեամբ Երկրի ամէն կողմ կը տարածուէր:

Անհրաժեշտ էր, սակայն, Վասպուրականի Կեդր. Կոմիտէի

լրիւ նիստ մը ունենալ: Իշխանը բացակայ էր. թէեւ նիստեր կ'ունե-
նայինք պարբերաբար, բայց ընդհանուր եւ կարեւոր հարցերէ դուրս,
տեղական եւ ընթացիկ խնդիրներ միայն կը քննուէին: Կազմակեր-
պական ընդհանուր գործունէութեան, աշխատանքի բաժանման եւ
յառաջիկայ ձեռնարկներու մասին խորհրդակցութիւնները յետաձը-
գեցինք՝ սպասելով Իշխանին: Մինչ այդ, Արամը յանձն առաւ ծանո-
թանալ եւ շփումներ եւ տեսակցութիւններ ունենալ կրթական եւ ազ-
գային հիմնարկութիւններու հետ՝ ջանալով մեր հսկողութեան եւ
ազդեցութեան տակ պահել զանոնք: Այս նպատակի իրագործման
համար «պուրժուական» մեր խումբը յարմար դործոն մըն էր, որուն
մօտեցաւ Արամը եւ կարծ միջոցի մէջ, խումբը եռանդով արդիւնա-
ւորեց ազգային եւ կրթական շատ կարեւոր այդ ասպարէզը:

Արամի հետ ջանքեր դործ դրինք նաեւ ընդհանուր լեզու գրո-
նելու եւ գործակցութեան հնարաւորութիւն ստեղծելու Հնչակեան-
ներու եւ, մանաւանդ, Արմենականներու հետ: Ենորհիւ անոնց մո-
լեռանդ-պահպանողական տարրերուն եւ, պէտք է խոստովանիլ,
նաեւ մեր քանի մը անխոհեմ կամ տգէտ գործիչներուն, մանաւանդ
1-2 գաւառներու մէջ, ժողովրդական խոնարհ տարրերէ թշնամական
բանակներ էին ստեղծուեր. գաղափարական պայքար չէր այդ, այլ
զոհհիւ, անսանձ հակամարտութիւն՝ նուաճելու համար այս կամ
այն գիւղը...: Արմենական եւ Հնչակեան կուսակցութիւններու մէջ
աւելի շեշտուած էր նման «գործունէութիւն», որովհետեւ զուրկ էին
նախ կարող եւ պատրաստուած ղեկավարութենէ, իսկ, գլխաւորա-
պէս, իրենց շարքերը մարզուած չէին կուսակցական կարգապահու-
թեան:

Ընդարձակեցինք նաեւ մեր հանդիպումներու ցանցը «չեզոք»
հայ շրջաններու հետ: Արամը ընդունակ էր լաւ տպաւորելու դիմա-
ցիւնին, համակրութիւն ստեղծելու եւ հետզհետէ մօտիկցնելու մեր
«աշխարհին»:

Ան կը վարէր նաեւ արտասահմանեան կապի գործը՝ թղթակ-
ցութիւններ «Դրօշակ»ին եւ նամակագրութիւն Բիրօններու հետ: Ինձ
վիճակուած էին ներքին կազմակերպման, ռազմամթերքի ստացման,
դասաւորման եւ դաւադրական գործերը: Երկար ատեն դադրեցու-
ցի տեսակցութիւններս դուրսի մարդոց հետ:

Կազմակերպական եւ գինական նախապատրաստութիւնները կը
յառաջանային, կը գինուէին թափով նաեւ շրջանները, բայց ի՞նչ էր,
վերջ ի վերջոյ, ատոր իմաստը, ի՞նչ նպատակի պիտի ուղղէինք այդ
կազմակերպուած ուժերը: Որովհետեւ մեր բոլոր պատրաստութիւն-

ները հրաժառ նիւթեր էին, որոնք փոքրիկ պատճառներէն իսկ կըր-
նային ահաւոր հրդեհ առաջացնել, կամ թերեւս, ժամանակէն ա-
ռաջ, մեկ մղէին նորէն մասնակի լեռնային ասպտամբութիւններու,
որմէ, անձնապէս կը վախնայի եւ դէմ էի: Իսկ ասորիները, քիւր-
տերը եւ ազատական թուրք տարրը դեռ շատ յետամնաց էին մեզի
գործակցելու համար. ուրեմն դարձեալ մինակ պիտի մնայինք...:

Ժամանակը եկած էր մեր ուղեգիծը եւ նպատակը ճշդելու, որ-
պէսզի ըստ այնմ դասաւորէինք մեր աշխատանքները:

Այս հրատապ եւ կենսական խնդիրներն էին, որ կը տանջէին
մեր ուղեղները: Պէտք էր գիտնայինք կուսակցական վերին եւ դե-
րապոյն մարմիններու կարծիքը, որոշումները եւ անոնց օժանդակու-
թեան չափը եւ հնարաւորութիւնները հասկնայինք:

Կը յուսայի թէ Արամը այս մասին առիթներ ունեցած էր մօ-
տէն տեղեկանալու կամ հրահանդներ ստանալու:

Իշխանը լեռներէն իջաւ իր խումբով: Անոր հետ էր նաեւ Շահ-
պաղ Վարդանը: Կեղը. Կոմիտէի ժողովին մէջ, ուր կը մասնակցէին
Իշխանը, Արամը, Վարդանը, Տիգրանը, Թէոսը, Ալէսը, Արմենակը,
Արամը տուաւ ընդարձակ ղեկուցում:

Սոֆիայի Ընդհ. Ժողովի ընթացքին, Սասունի եւ Տարօնի
դէպքերը ճշող մթնոլորտ էին ստեղծած: Ընդհ. Ժողովը ամէն մի-
ջոցներ ձեռք առած էր զանազան դիմերէն Երկրի գործիչները իրենց
տեղերը վերադարձնելու եւ ուժ տալու ռազմամթերքի եւ զինուած
խումբերու առաքման: Կուսակցութիւնը զօրացած էր ամէն տեղ:
Ձէնքի եւ ռազմամթերքի գնման ընդարձակ շուկայ էր ստեղծուած,
եւ զէնքերը պարբերաբար կը կեղրոնացուէին Երկրի սահմանամերձ
կայաններուն մէջ: Ռուս կառավարութիւնը, սակայն, խիստ թշնա-
մական դիրք բռնած էր դէպի Դաշնակցութիւնը. թուրքերու հետ
դադարի համաձայնութիւն ունէր՝ երկու պետութիւններու սահման-
ներու աշարուրջ պահպանութեան մասին: Ռուսները կը կասկածէին,
որ Դաշնակցութիւնը կը գործակցէր ռուս հակապետական կուսակ-
ցութիւններուն: Թուրքերը խոստացած են եղեր ռուսներուն տալ Սեւ
ծովի ափերով դէպի Սամսոն երկարելիք երկաթուղային մենաշնոր-
հը...:

Երկրին մէջ մեր կուսակցութիւնը անաղմուկ պիտի ջանար գի-
նել ժողովուրդը, պիտի կազմակերպէր մարտական ուժերը, վարժե-
ցնէր, պատրաստէր ղեկավարութիւն, ամրացնէր՝ ռազմական կա-
յաններ գառնալու յարմարութիւններ ունեցող վայրերը: Միւս կող-
մէ՝ ամէն ջանք ի գործ պիտի դնէր նախ՝ Երկրի հակաթուրք քրիս-

տոննայ ժողովուրդը կապելու մեղի եւ զուգընթաց՝ քիւրտ, թուրք դժգոհ եւ բանիմաց տարրերու պործակցութիւնը ապահովելու: Արամը յայտնեց նաեւ, որ Պոլսոյ եւ Փարիզի մէջ բանակցութիւններ կը կատարուէին երիտասարդ թուրքերու եւ, մասնաւորապէս, իշխան Սապահետտինի հետ՝ թուրքիոյ յեղափոխական տարրերէ կոնգրէ մը զուժարելու, ուր քիւրտերը, Պէտրիսաններէն Ապտուլրահման պէյի հետ նոյնպէս ներկայացուցիչ պիտի ունենային. ասոր նպատակն էր՝ ա) տապալել Սուլթանը, բ) յեղափոխական միջցեղային կազմակերպութիւն ստեղծել եւ ներդաշնակել անոնց պործակցութիւնը, գ) պրոպականտ մղել եւ պատրաստուիլ ընդհանուր ապստամբութեան: Դուրան-Բարձրաւանդակի եւ Շամի Կ. Կոմիտէները միասին, Երկրի Պատասխանատու Մարմնի դեր պիտի կատարէին՝ լայն իրաւասութիւններով:

Արամի զեկուցման համաձայն, թուրքերը արտասահմանի մէջ ունէին արդէն երկու զօրեղ կուսակցութիւններ յանձին ապակեղրոնական Սապահետտինի եւ կեդրոնացման կողմնակից Ահմէտ Ռիզայի՝ երկուքն ալ իրենց մամուլով:

Այս բոլորէն կը հետեւէր, ուրեմն, որ մենք Երկրի մէջ պիտի պատրաստուէինք թուրքիոյ այլատարր ցեղերու հետ, ընդհանուր ապրտամբութեան: Լեւոնավայրերը պիտի ծառայէին իբր գիմադրական կեդրոններ:

Ահա, մօտաւորապէս այն ուղեցոյցը, որ կը թելադրուէր մեզի կուսակցութեան գերագոյն մարմիններէն:

Անձնապէս իմ սրտին շատ մօտ էր այդ ծրագիրը: Իմ բովանդակ փափաքն էր եղած լուռ ու մունջ պատրաստուիլ, խուսափիլ ընդհարումներէ, զինել ժողովուրդը, զբաւել քիւրտերու, ասորիներու եւ թուրքերու ազատամիտ եւ դժգոհ տարրերը, մօտէն հետեւիլ զինուորական եւ վարչական կառավարական պործունէութեան, շօշափել անոր թոյլ կողմերը, օգտագործել անոնք, եւ ըստ այնմ նախապատրաստել սպաղայ ըմբոստացման յարմարագոյն յատակագիրը:

Երկրի պործիչներէն իշխանը յոռետես էր այդ ծրագրի յաջողութեան համար. վստահութիւն չունէր քիւրտերու եւ թուրքերու վրայ. ասորիները շահագրգռուած էին միայն իրենց լեռնային անկիւնով, ուր յարաբերական ազատութիւն ունէին, իսկ Երկրի հայութիւնը միաժամանակ ոտքի հանել անկարելի էր. Երկրի աշխարհագրական, տնտեսական եւ քաղաքական պայմանները անկարելի կը դարձնէին նման րադձանք: Պէտք էր ապստամբական հնոցներու վե-

րածել լեռնային մասերը եւ, ի հարկին, բռնկեցնել՝ զբաւելով եւրոպական պետութիւններու ուշադրութիւնը եւ միջամտութիւնը: Քաղաքներու ժողովուրդը մեղկ էր, ըստ իրեն. քաղաքները խախուտ յեղափոխութիւններ էին: Արամը, թէեւ նորեկ, ինձ պէս կը մտածէր. նոյնն էր նաեւ տեղացի բոլոր ընկերներու տեսակէտը, իսկ Վարդանը եւ Տիգրանը կը բաժնէին իշխանի կարծիքը:

Ի՞նչ կը խորհէր մեր ժողովուրդը, ինչպէ՞ս կ'ըմբռնէին մեր շարքերը Երկրի մեր կազմակերպութեան եւ պատրաստութեան նպատակները. ժողովուրդի աշխատաւոր խաւերը՝ գեղացիութիւնը, արհեստաւորութիւնը եւ մանր առեւտրականները՝ անսահման հաւատ ունէին եւ մոլեռանդ բաղձանք՝ պատրաստուիլ ապստամբութեան՝ ձեռք բերելու համար բացարձակ անկախութիւն. բայց թերահաւատ էին Երկրի այլատարր ազգերու աջակցութեան հաւանականութեան մասին. շատերը մեծ յոյս կը տածէին Ռուսաստանի կամ Անգլիոյ վերաբերմամբ: Իսկ մեր երիտասարդութիւնը օր առաջ կ'ուզէր զգարնել-զարնուիլ՝ եւ կը հաւատար, թէ կարելի է խորտակել տիրող վարչաձեւը ժողովրդային ընդհանուր ապստամբութեամբ:

Ինչպէս վերը յիշած եմ արդէն, մեր գուրգուրանքն ու քաջալերութիւնը նուիրած էինք մտաւորական երիտասարդութեան եւ, մանաւանդ, զպրոցական հասուն պատանեկութեան:

Արամը եռանդով նուիրուեցաւ այդ աշխատանքին: Երիտասարդութիւնը սիրեց, կապուեցաւ անոր: Քարոզչական գործին մեծ դարկ տուինք: Արտասահմանէն ներմուծուող յեղափոխական գրականութիւնը եւ պարբերականները հեղեղեցին Երկիրը. անոնցմէ բաժին կը հանէինք նաեւ Տարօնին եւ Հեռաւոր Հիւսիսային եւ Հարաւային գաւառներուն:

Քարոզչական այս գործունէութեան հետ, կովկասեան ընկերային շարժումներու մէջէն եկած Արամը մտցուց նոր ոգի եւս, զբաւելչ նորոյթ մը, որ շատ յետոյ արդիւնաւորուեցաւ... դրականին հետ նաեւ ժամանակավրէպ «նոր սերնդական» կոչուած շարժումով մը:

Ինքնավստահ, յանդուգն, յեղափոխական եւ եռանդոտ սերունդ մը պատրաստելու մտահոգութեամբ, կովկասէն բերած գաղափարներով, Արամը կը կարծէր, որ այժմէն պարտաւոր ենք ազգային քաղաքական խոչալին հետ մեր ծրագրային գաղափարաբանութեան հիմնական մասերուն ծանօթացնել, նոր սերունդին պատուատել նաեւ ընկերվարական դաղափարներ, դասակարգային անհաւասարութեան շարիքը, պայքար պահպանողականութեան դէմ,

դէմ, հինը վերցնել, ստեղծել նորը, կեանքի պայմանադրական կաշկանդիչ շղթաները փշրել, անսահման ազատութիւն եւայլն, եւայլն:

Արամը Բագու էր եղած, գործօն մասնակցութիւն էր ունեցած արհեստակցական կազմակերպութիւններու, դասակարգային պայքարներու եւ ընկերավարական երիտասարդական միութիւններու մէջ:

Ես, որ երկու տարի առաջ թողած էի Կովկասը, այն ալ շատ քիչ օրեր միայն հոն ապրելով, բոլորովին անյարիւր կը դտնէի նման քարոզչութիւն Երկրի մէջ, ուր քաղաքական ծանր ուժերու նոյն ուժգնութեամբ ծանրացած էր բոլորի վրայ, ուր ոչ գործարանատէր, որ կապիտալիստ գոյութիւն ունէր, ուր տարրական քաղաքական եւ քաղաքացիական պատուութենէ զուրկ էին բոլորը: Այդ էր պատճառը, որ մեր նոր եւ անպատրաստ սերունդը իր շուրջը դրամատիրական կարգեր եւ «չահապործող» դասակարգեր չգտնելով, թափով ինկաւ մեր աւանդութիւններու, նահապետական կենցաղի եւ դաստիարակութեան «բարեփոխման» ապարդիւն ճիգերու մէջ: Երիտասարդական խառնուածքին եւ եռանդին յարմար գործ էր...

Իշխանն եւս դրաւուած էր, աւելի վերապահօրէն, նման քարոզչութեամբ. անոր երանգը քիչ մը տարբեր էր Արամէն. ան աւելի փիլիսոփայական-պատմական վերլուծական մեթոտով կը մօտենար ընկերավարութեան, որ բարդ եւ անմարսելի գաղափար էր եւ որուն համար գիտական բաւարար պաշարով օժտուած չէինք, դժբախտաբար:

Դիտելով եւ հետեւելով այս նորամոյժ յեղափոխական դաստիարակութեան եւ զգալով, որ մեր շարքային երիտասարդութիւնը կրնայ շեղիլ իր գլխաւոր նպատակներէն՝ յեղափոխական պայքարէն, իմ ուժերս եւ աշխատանքս աւելի ու աւելի կեդրոնացուցի անվթար պահելու մեր քաղաքական-յեղափոխական ուղղութիւնը եւ կազմակերպութիւնը: Շուրջս հաւաքուած էին հին մարտական երիտասարդութիւնը եւ «պահպանողական» մտաւորականութիւնը: Մեր տարակարծութիւնը եւ երկու ուղղութեամբ գործունէութիւնը այսպէս ծայր տուաւ: Սկիզբը Արամն ու Իշխանը եւ ես, ամէն կերպ կը ջանայինք ներդաշնակօրէն եւ զուգընթաց տանիլ այս քարոզչութիւնը, առանց զգալի ընելու կամ մէկը միւսէն գերադասելու, բայց եւ այնպէս, այնուամենայնիւ, ստեղծուեցաւ երկուութիւն մը մեր աշխատանքին մէջ: Մեր շրջապատը, մտաւորապէս եւ հոգեպէս անպատրաստ ըմբռնելու բուն իմաստը մեր մէջ առաջ եկած լոկ տեսական տարակարծութեան, թիւր ըմբռնումով վերագրեց անձնականի եւ ժանիքները սրեց իմ կամ Արամի եւ Իշխանի դէմ...: Հակառակ եր-

կուստեք թափած մեր ջանքերուն, այս խուլ դժգոհութիւնը աւելի խորացաւ եւ վերածուեցաւ մարդկային անպիտան կիրքի: Այս կիրքը մեր մէջ եւս բոյն դրաւ, երբ Իշխանը, իրեն յատուկ բորբոք զայրոյթով, Շամի Կ. Կոմիտէի դէմ ունեցած բողոքն ու պանդտները յայտնեց:

Իշխանի կարծիքով Վանը կը կլանէր ամբողջութեամբ արտասահմանէն եկած ռազմամթերքը եւ նիւթական օդնութիւնը, մինչդեռ Լեոնապարը իրաւունք ունէր կէսը ստանալու: Ի հարկէ, ինքն եւս, երբ ստացուած մթերքի եւ դրամի հաշիւները իր առջեւ դրուեցան, զգաց իր գանդատի անհետեւութիւնը, բայց կը շարունակէր պնդել: Վերջապէս, այս գանդատներու բուն հիմքը այն էր, որ Իշխանը այլեւս չէր հանդուրժեր Շամի Կեդր. Կոմիտէի մաս կազմել, անկէ ղեկավարուիլ եւ կը պահանջէր անջատել Լեոնապարը իր անկախ Կ. Կոմիտէից: Սկզբունքով ոչինչ ունէի ատոր դէմ. արդէն փաստօրէն ալ այդպէս էր: Ըսինք, որ շարունակէ իր անկախ գործունէութիւնը եւ իր կապերը արտասահմանի հետ, բայց պաշտօնապէս անկախ Կ. Կոմիտէ կրնայ դառնալ եւ կնիք ունենալ միայն Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողովի որոշմամբ:

Այսպէս «լուծուեցան» հարցերը, առանց թեթեւեցնելու ծանր մթնոլորտը: Մեր նիստերը անտանելիօրէն փոթորկալի էին:

Արամը իրեն յատուկ տակտով երբեմն կ'ուզէր միջամտել, ինչպէս կ'ըսեն, ե՛ւ նախն ե՛ւ միւսին պարնելով. զգոյշ էր իր կարծիքներուն մէջ, ճիշդ ի գործ կը դնէր «կողմ» չդառնալու...: Կ. Կոմիտէի տեղացի հին ընկերները լուռ էին եւ չափազանց ճնշուած. միայն Շահպազ Վարդանն էր, որ իրապէս չէր ըմբռներ մեր վճճերու իմաստը եւ կը տառապէր. ի զուր փորձեց մեղմել կրքերը, սղջմատութեան հրաւիրել, բայց ընկճուեցաւ ու քանի մը զինուորներու հետ Ս. Գրիգոր վանքը քաշուեցաւ:

«Իմ յուշերը»
Ա. Հատոր, էջ 350-360

ԱՐԱՄԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Միև օրը եկաւ Արամը, իմ ճանաչած Սարգիս Յովհաննիսեանը: Վրան՝ թեթեւ ամառնային վերարկու էր, գլխին՝ Փէս: Մուգ ակնոցներով սքօղուած էին իր սեւ աչքերը: Բարի հայրական, լայն ժպիտ ունէր: Հանդիպեց ինձ որպէս նախկին ընկեր եւ անմիջապէս, իր սիրալիբ վերաբերմունքով վանեց պաշտօնական ձեւականութիւնները:

Մեր բաժանումից յետոյ, նա շատ էր փոխուել ու բարձրացել: Հոգով ու սրտով անձնատուր էր եղել Հ. Յ. Դաշնակցութեան, Բազում եւ Կարսում կանգնած էր եղել պատասխանատու աշխատանքների գլուխ, ապա Վանում դարձել էր կարեւոր եւ կենտրոնական դէմքերից մէկը: Իսկ նրա՝ Դաւոյի դաւաճանութեան ու մատնութեան հետեւանքով բանտ ընկնելը, այնտեղ թուրքական անդուլտանջանքների ժամանակ յեղափոխականին վայել, մահն ու բռնութիւնը արհամարհող իր կեցուածքը, Սահմանադրութեան հետեւանքով իր հրաշալի ազատութիւնը մի անգամից բարձրացրել էին նրան ժողովրդի աչքին: Մի քանի ժամուան մէջ ստոյգ մահից ու կախաղանից Արամը փրկուել էր եւ դարձել հասարակութեան պաշտելին՝ «Արամ փաշան», հայ յեղափոխութեան պարծանքը, ազգային հպարտութիւնը եւ հերոսը:

Բանտը չափազանց վատ էր ազդել նրա առողջութեան, մանաւանդ տկար աչքերի վրայ: Բայց այս երկաթէ մարդը կարծես ամաչում էր իր առողջութեան մասին մտածելուց եւ ազգի ցաւերը շալակած՝ իր անձն ու հանգիստը մոռանում էր ի սպաս:

Հարցրեց շտապ ու գլխաւոր գծերով ընկերներից ու դործից, Շուշուց ու ծանօթներից: (Նախորդ տարին ես եղել էի Շուշում): Լսեց խանդաղատանքով ու ժպիտով: Զգում էր, որ խօսել դժուարանում եմ, մանրամասնութիւնները թողեց ապագային: Հետաքրք-

ըրրուեց նիւթական վիճակովս: Ասացի, որ զրամ ունեմ: Հետաքրքրուեց տան տէրերիս վերաբերմունքով եւ իմացաւ, որ դո՛հ եմ:

— Սրանց մեծ եղբայրը հնչակեան է. մեր փոխարէն քեզից վրէժ չլուծի, — կատակեց:

— Եթէ չասէիր, չէի կասկածի անգամ նրա դաշնակցական շլիկելը: Վերաբերմունքը շատ սրտագին է, — պատասխանեցի:

Եւ Արամը զո՛հ հեռացաւ՝ խոստանալով ուրիշ աւելի յարմար տեղ գտնել պառկելու համար:

Երկու օր յետոյ, հակառակ Լեւոնի թախանձանքին՝ մնալ իրենց մօտ, չուզեցի աւելի նեղութիւն պատճառել այս հիւրասէր ընտանիքին եւ փոխադրուեցի մշեցի Մանուկի տունը, մի փոքրիկ վճարի փոխարէն: Այստեղ աւելի հանդիստ էի:

Մի քանի օրից յետոյ, վերջապէս, ոտքի վրայ էի եւ կազդուրուած: Մի քանի անգամ մօտս եկաւ Արամը՝ առողջութեամբս հետաքրքրուելու: Յանձնարարական նամակին արդէն ծանօթ էր: Ուղեցի իմանալ թէ ի՞նչ աշխատանք պիտի տան ինձ: Յայտնեց, որ կուսակցական դործով զբաղուողների մեծ կարիք կայ. պէտք կայ նաեւ ուսուցիչների:

Դեռ եւս տանից դուրս գալ չէի կարողանում ու կիսահագուած պառկած էի: Ինձ այցելութեան եկաւ Երամեան դպրոցի տեսուչ՝ Համբարձում Երամեանը, Արմենակ Փոխարեանի հետ: Տարիքոտ, ցանցառ մօրուքով մի բարձրահասակ մարդ էր: Հանդիսաւոր բարեւեց. «Բարեւ ձեզ, Պր. Եփրեմ»:

Անակնկալ էր. Արամից բացի, բոլորն ինձ ճանաչում էին որպէս Վարդան: Երամեանը ո՞րտեղից էր իմացել բուն անունս: Շատ ցաւեցի, երբ հասկացայ, որ այս մարդը երկու աչքով կոյր է եւ շարժւում է առաջնորդի միջոցով:

Երամեանը նստեց կողքիս ծալապատիկ եւ սկսեց իր կէս պաշտօնական եւ կէս մտերմական հարցերն ու զրոյցը: Ոտքի ընթացքում պարզուում է, որ նա եկել էր ինձ իր դպրոցում դասեր առաջարկելու:

Ուշիմ եւ վաճառականի առողջ հոտառութիւն ունեցող, դործնական մարդ էր: Միև դպրոցներն սկսել էին ճեմարանաւարտ ուսուցիչներ հրաւիրել եւ ուսումնական կեանքը թարմացնել: Ինչ խօսք, որ նոր ուսուցիչները հասարակութեան մէջ համակրութեամբ եւ սիրով էին ընդունւում, եւ ահա Երամեանը եւս փորձ էր անում ուրիշներից ետ շմնալ եւ ինձ կապել իր դպրոցի հետ:

Թէեւ առաջարկն անսպասելի էր, բայց պատասխանս պարզ էր:

Ես Վան չէի եկել ուսուցչական պաշտօնի համար միայն, այլ գլխաւորապէս կուսակցական աշխատանքի: Սակայն, անյարմար համարեցի անձանօթ մարդուն բացատրել այդ, այլ ասացի, թէ ես Վանի մէջ կովկասից ծանօթ, մեծ եւ փորձուած մի ընկեր ունեմ՝ Արամը, նրա հետ կը խորհրդակցեմ եւ իրեն կը պատասխանեմ: Փորձուած Երամեանը իսկոյն բմբոնեց խնդիրը. «Այո՛, հասկանալի է. կովկասէն հոս ձեզի բերել տաւոյր զուտ ուսուցչական պաշտօնը չէ: Սպասեմք Պր. Արամի կարգադրութեան», եւ սովորական սուրճն ընդունելով՝ Երամեանը մեկնեց:

Մի երկու օր յետոյ, Արամի խորհրդով, ես եւ ինքը փոխադրուեցաւ ինչ տուինք Երամեանին իր դպրոցում: Ընդունեց մեզ իր տեսչարանում: Մանրամասնութիւնները լաւ չեմ յիշում, իրր թէ պայմանները մեզ չէին բաւարարում, ներողութիւն խնդրեցի մերժման համար եւ դուրս եկանք:

**

Իշխանը դեռ եւս Լեոնապարումն էր — շուտով պիտի գար: Արամը խորհուրդ տուեց սպասել նրան:

Մանուկ աղայի տանը, ուր ես ապրում էի, ինձանից առաջ հիւանդ պառկած է եղել մեր ընկերներից մէկից Յարութիւնը: Մանր հիւանդ՝ նրան փոխադրում են հիւանդանոց եւ այնտեղ էլ մեռնում է: Յարութիւնը սիրուած յեղափոխական գործիչ էր Վանի մէջ, եւ ահա Սահմանադրութիւնից յետոյ առաջին ազատ յուղարկաւորութիւնն է:

Ամբողջ Վանը ոտքի վրայ էր. ներկայ էին բոլոր Մարմինների անդամները, ընկերները եւ հոծ ժողովուրդ: Դամբանական խօսողներ, ոտանաւոր յորինողներ Յարութիւնի համար, որքան ուղես: Իւրաքանչիւրը ցանկանում էր իր զգացած վիշտն ու կսկիծը հասարակութեան հետ բաժանել: Արամն իսկոյն մի յանձնաժողով կազմեց եւ ինձ խնդրեց մէջը լինել ու կրճատել եռանդուն դամբանախօսների թիւը, թէ չէ երկար ժամեր ժողովուրդը պիտի սպասէր գերեզմանատանը: Պօսեցին նաեւ մեծ ընկերները՝ Յարութիւնի յեղափոխական չարքաչ դէմքը վեր հանելով:

Հուրիւէքի, Սահմանադրութեան, ազատութեան, հոգեկան արբեցման, կատարեալ շացումի մէջ էր Վանը: Հայ քաղաքական կուսակցութիւնները դուրս էին եկել գետնի երես, աշխատում էին ազատ ու լեզալ եւ երէկ նրանց հալածող ու հազար ու մի դիւալին

միջոցներով ոչնչացումը հետապնդող կառավարութիւնը ոչ միայն հանդուրժում էր նրանց, այլ՛եւ պատիւ էր համարում նրանց հետ կապ ունենալ եւ բարեկամ լինել:

Յեղափոխական առաջնորդները դուրս էին եկել բանտերից եւ տեղաւորուած էին ժողովուրդի մէջ, որպէս նրա առաջնորդներն ու ղեկավարները, նրա հարազատ շահերի պաշտպանները:

Յնձում էր Վանը, մանաւանդ հայութիւնը, եւ ապագայի վախը չկար մարդոց սրտերում: Սակայն, մի խոր վէրք էր մնացել անիծեալ Դաւոյի տնաքանդ եւ ամօթալի դաւաճանութեան հետեւանքով: Բոլորը դուրս էին, որ այդ աղէտը պէտք չէ լինէր եւ որոնում էին բաւարարութիւն, բացատրութիւն: Կուսակցական խիղճը վերդովուած էր: Ինչո՞ւ եղաւ եւ ո՞վ էր յանցաւորը:

Լուրջ ու խղճամիտ մարդիկ վստահում էին ու հաւատում պաշտօնական հաղորդագրութեան եւ սպասում էին հեղինակաւոր Մարմնի կողմից աւելի լայն մանրամասնութեանց եւ բացատրութիւնների: Իսկ ամբօրը թեթեւ սրտով փսփսում էր, բամբասում եւ անմեղ մեղաւորներ ստեղծում:

Այդ գործը քննելու եւ Վանի շրջանի կուսակցական-հասարակական աշխատանքներն աւելի ուժեղացնելու համար, եկել էին Բիւրոյի երկու անդամները՝ Ա. Վառմեանը եւ Բ. Տէր Դաւթեանը: Վերճինս չէր երեւում հրապարակում, ընդունում էր աչքի հիւանդներ եւ շատերին ձրի դեղ էր բաժանում՝ արժանանալով Վառմեանի ընկերական կատակներին:

Վառմեանը թուրք խորհրդարանի անդամ էր, պաշտօնական մարդ: Պաշ-Փողանի վրայ ունէր բնակարան: Կապ էր պահում նահանգապետի, դինուորական հրամանատարի, կառավարական այլ հիմնարկների եւ թուրք կուսակցական շրջանակների հետ: Գիտէր ֆրանսերէն, անգլերէն եւ ռուսերէն. արտաքուստ կոկիկ էր, բարեկիրթ, պաշտօնական ձեւականութիւններին ծանօթ ու կենցաղագէտ: Ճարպիկ էր եւ հնարամիտ: Լաւ ճանաչում էր թուրքերին, գիտէր իրենց հասկանալի ձեւերով, արեւելեան մարդու հոգեբանութեամբ վարուել հետները: Առանց Արամի քայլ չէր առնում: Պորհրդակցում էին, աշխատանքը բաշխում եւ ապա գործադրում:

Արամը թուրք եւ հայ հասարակութեան սիրելին էր: Թուրքերը պատիւ էին համարում նրա հետ ծանօթանալը. պաշտօնական մարդիկ ու շարժումները եւ յատուկ յարգանքով էին վերաբերում նրան, իսկ հայութեան համար Արամն արդէն հայր, խրատատու եւ մեծ ընկեր էր: Յաճախ պառկած էր, գոնէ օրական մէկ-երկու ժամ:

Դեռ հիւանդ էր եւ հանդստի պէտք ունէր: Բայց հանգիստ չէին թողնում:

Թէկուզ իրենց դատի, բողոքի կամ դիմումի պատասխանը ստացած լինէին ամենահեղինակաւոր Մարմնից, բայց դարձեալ չէին բաւարարուում: Վերջին խօսքը Արամինն էր: Գալիս էին ու դուռը թակում: Իսկ Արամը հիւանդ թէ առողջ, քնած թէ արթուն, կուշտ թէ քաղցած մերժել չէր կարող:

— Հը՛, դո՞ւ ես, Կարապետ, ահա՛ տեսնեմ ի՞նչ կայ, — եւ լսում էր համբերութեամբ ու մտերմարար:

Կարծես ամէնքին էլ հարազատ էր ու սրտակից: Ճանաչում էր, պարագաները լաւ գիտէր եւ կարճ ու կտրուկ պատասխանում էր, բաւարարում եւ զո՛հ ճամբու դնում: Պատասխանը, դրական թէ բացասական զոհացնում էր մարդոց: Ժողովուրդի հետ վարուելու ձեւը Արամը լաւ գիտէր: Նա իրօք ժողովրդի բարեկամն էր, նրան լաւ ցանկացողը, նրա թերութիւններն ու դրական կողմերը ճանաչողը: Նա սիրասուն հայր էր, մեծ եղբայր եւ անկաշառ, անկողմնակալ ու արդար դատաւոր: Նրա համոզեցուցիչ խօսքից յետոյ էլ ուրիշի չէին դիմում:

— Էզայ մօտ Արամ փաշիմ... Գեօ ըսաւ...

Եւ լաւ գիտէին, ինչ որ ըսաւ՝ էլ չէր փոխուում, հաշտուում էին իրենց կացութեան հետ եւ հեռանում գոհացած:

Առանց ծեփծեփումների, առանց անբնական ու շինծու արհեստականութեան, ժողովրդի մարդն էր նա:

Ցերեկ էր: Արամը անցնում էր Վանի գովաստուն փողոցներով: Յոգնած էր, տուն էր գնում: Վանեցի փողքիկ շարածինները ճանաչում էին նրան: Իրար թեւից քաշելով արագ, քիթ ու մոռութիւնները լուացած ու մաքրած՝ շարում էին դռների առաջ եւ կարգապահ զինուորների նման խոնարհ բարեւում նրան: Բարեւում էին ձախ ձեռքը կրծքին, աջը հանդիսաւորապէս տանում կրծքին, ապա շրթունքներին ու ճակատին, միաժամանակ գլուխը խորը խոնարհելով: Արամը գոհ էր: Սիրալիք նայում էր նրանց եւ ուշադրութեամբ ինքն էլ էր բարեւում՝ կատակելով մէկի կամ միւսի հետ: Շատերին ճանաչում էր հօր ու մօր եւ իրենց իսկ անուններով: Մեծերին պատուիրում էր, որ փողքերին բարեւել սորվեցնեն, մաքուր պահեն:



Վերջապէս, Լեռնապարից (Հայոց Զոր, Գաւաշ, Կարճկան, Շատախ, Մոկս եւ Կարկառ) քաղաք իջաւ Իշխանը, մեր Երեւանի Ա-

շակերտական Միութեան Նիկոլ Պողոսեան կամ Միքայէլեանը:

Մօրուքը աւելի երկարացրած, դէմքը ջղուտ ու կտրուկ արտայայտութեամբ, շարժուձեւով արագ ու հրամայական, մի լեռնային ըմբոստ ուրի էր նա: Նման էր լայն պարտէզում արձակած վայրի եղնիկի: Իրեն վնասող չկար, ազատ էր, սակայն զու՛ւմ էր մի անվրատահութիւն դէպի շրջապատը: Դեռ լեռն էր խօսում նրա բոցոտ հայեացքների մէջ, դեռ վտանգն էր արտայայտուում նրա թրթռացող մկանների ծալքերում:

Հանդիպեցինք որպէս հին ծանօթներ եւ ընկերներ: Երկու բառով ծանօթացաւ կացութեան եւ արագ վճռեց.

— Լաւ ես արեւ, որ չես կապուել ֆազաֆի հետ: Եկողը տեղադրում է ֆազաֆում եւ զաւառը մնում է դատարկ: Քեզ համար շատ լաւ աշխատանք կայ: Կ'երթաս Լեռնապար — Ազքամար եւ կը փոխարինես ինձ, որպէս կուսակցական պատասխանատու ընկեր եւ դպրոցների քեմական տեսուչ: Ահագին շրջան է, լեռնցի լաւ ժողովրդով եւ աշխատող չկայ: Գոհ պիտի մնաս:

Ապա նկարագրեց ինձ սպասող կեանքն ու աշխատանքը: Գրաւիչ էր, հետաքրքրական, բայց չափազանց պատասխանատու. չէ՞ որ այդ օրերին ես դեռ հաղիւ 23-24 տարեկան մի անփորձ երիտասարդ էի:

Միւս օրն առաջարկեց քաղաք գնալ: Գնացինք կառքով: Առաջին անգամ էի տեսնում Վանի քաղաքամէջը: Երբ հասանք եւ պիտի իջնէինք կառքից, Իշխանը փոխուեց. նա կառքից ոչ թէ վայր իջաւ, այլ ցատկեց եւ սկսեց արագ քայլել՝ ինձ էլ հրամայելով, որ հետեւիմ իրեն:

Թուրք ու քրիստի սարսափ ազդող լեռների Իշխանն էր ցած իջել: Սրանք նրան չպէտք է տեսնէին սովորական մարդու շարժուձեւերով ու կենցաղով: Մի սովորոյթ, տարիներ տեւող կեանքի մի եղանակ, որ նրան բոլորովին այլ մարդ էր դարձրել: Թշուառ թուրքերը միամիտ իրենց գործին էին գնում, բայց այս ձեւերը իրենց վերայ էին կենտրոնացնում ամբոխի ուշադրութիւնը, եւ նրանք սկզբում էին զարհուրած փսփսալ ու նայել «Իշխան», «Իշխան»:

Իշխանը չէր հաւատում ոչ թուրքին, ոչ Սասմանադրութեան: «Շան հետ բարեկամացիր, փայտը ձեռքիցդ վայր մի դնիր» կրկնում էր նա եւ, իրօք, ամէն մի վայրկեան սլատրաստ էր ու զգաստ:

Մուռումուռ փողոցներով արագ հասանք մի տուն: Դուռը թակեց: Բացուեց: Ներս մտանք: Աղթամարի վանքի հիւրատուն Վահան Ալեքսանեանի տունն էր: Երկաթագործ արհեստաւոր էր, երբեմն նո-

բողոքում էր եւ գէնքեր: Ունէր մայր, քոյրեր եւ եղբայր: Իշխանն այստեղ իր տան պէս էր զրում իրեն. ընդունեցին սրտաբաց, ուրախ եւ մտերմութեամբ:

Երբ վերադարձանք, Արամին էլ յայտնեցինք մեր սրտումը՝ իմ Աղթամար գնալու մասին: Համաձայնեց եւ ասաց ուրախ.

— Լաւ կը լինի: Սա (Իշխանը) մի քիչ փաղափում կը մնայ, կը հանգստանայ: Շատ է «վայրենացել», — այս փաղաքշական բառը արտասանեց կատակով ու ժպտով:

**

Մի փոքր առաջ երթալով՝ պատմեմ մի այլ դրուագ մեր ուրիշ, լեռներում տարիներ ապրած ու դործած ընկերոջ մասին որպէսզի Արամի դործածած «փաղաքշական» խօսքը աւելի բացատրուի:

1909ի ամառն էր: Լրացել էր Օսմանեան Սահմանադրութեան մէկ տարին, եւ ահա հայ ու թուրք, կառավարութիւն ու կուսակցութիւններ շքեղ ձեւերով սօժում էին Սահմանադրութեան տարեդարձը:

Դաշնակցութիւնը արդէն հիմք էր դրել գրադարան-ընթերցարանի մէջ, նրա սրահում խմբուած էին հիւրեր ու հասարակութիւն:

Այդ օրը Վան էր եկել Սասունի Ռուբէնը (Ռուբէն փաշան): Շտապեցի նրան տեսնել: Սրահում ներկայ էր եւ մի տաճիկ զինուորական, որի հետ Ռուբէնը դէմ դիմաց կռուել էր Սասունի կռիւների ժամանակ: Զինուորականը այժմ սիրալիբ հարցումներ էր անում իր վաղեմի հակառակորդին՝ Ռուբէնին: Բայց սա ջղայնացած էր, կարճ պատասխաններ էր տալիս հիւրի հարցերին եւ, մի տեսակ օձիքը ազատելուց յետոյ, ինձ աչքով արեց եւ դուրս գնաց սրահից: Հետեւեցի: Իսկոյն մի կառք կանչեց եւ առաջարկեց քաղաք գնալ:

— Ուզում եմ մի քիչ խօսել, այստեղ մեզ կը խանգարեն, — ըսաւ:

Հասանք քաղաք եւ մտանք մի ճաշարան: Շատ մարդ չկար: Նստանք մի առանձին սենեակում: Եւ Ռուբէնը, ըստ իր սովորութեան, մի ծխախոտր միւսից վառելով, անյազ ծխում էր եւ հարցերի տեղատարափով ծածկում ինձ: Նախ՝ ձեմարանից, ձեմարանական ընկերներից, ապա՝ կուսակցական կեանքի ու ընկերների մասին: Մտքից միտք էր ցատկում, վերյիշում էր ու հարցնում եւ յուզումը պատում էր նրա առնական գեղեցիկ դէմքը: Եւ յետոյ, յետոյ

միանգամայն անսպասելի ինձ համար, նրա աչքերը թացացան: Ես չփոթուած էի, ամաչում էի, անելիքս ու ասելիքս չէի կարողանում որոշել: Ինձ այդ դրութիւնից հանեց ինքը՝ Ռուբէնը՝ բացատրելով իր հոգեկան յուզուած վիճակը:

— Մի՛ գարմանայ, ես էլ եմ կովկասցի եւ նեմարանական: Ես էլ գիտեմ թէ ի՛նչ ասել է փաղափարքութիւն ու հանգիստ կեանք: Եւ քեզից հարցրած այդ բազմաթիւ ծանօթներս ու դասընկերներս յիշեցրին ինձ այդ անցեալը: Բազդատեցի ես այդ անցեալն ու կեանքը այն օրերի հետ, որ ես ապրեցի այս վերջին տարիներին Սասունի լեռների բարձունքներում ու հովիտներում: Խորապէս զգացի թէ որքա՛ն կոպտացել եւ վայրենացել եմ ես: Ես մոռացել եմ մարդոց հետ փաղափարի, բարեկիրք խօսելու ձեւերը, ես գիտեմ միայն հրամայել եւ կարգադրել: Յանցաւոր չեմ: Այդպէս էր թելադրում Սասունցու յեղափոխական խիստ եւ անողորմ կեանքը: Ես կանոնաւոր խօսելն անգամ մոռացել եմ: Պէտք է լինես դաժան ու կոշտ՝ մարդոց վրայ ազդելու, մարդոց ղեկավարելու համար: Պէտք է լինես իրենց նման եւ նոյնիսկ աւելի դաժան: Հակառակ պարագային՝ կորած ես ե՛լ դու, ե՛լ գործիչ յաջողութիւնը: Հիմա քեզ հետ խօսելով զգացի թէ որքա՛ն եմ փոխուել եւ զգացուեցի:

Տարիներ յետոյ երբ լուսկեաց Ռուբէնը լեզու առաւ եւ խօսեց այս ամսագրի էջերում, պատմեց հայ յեղափոխութեան պատմութեան ամենահետաքրքրական, ամենագրաւիչ դրուագները անառիկ Սասունի ազատասէր բարձունքներում ու անտառներում հայ հայդուկի կրած շարքաշ ու անտանելի տուայտանքները, հերոսական արարքների կողքին մարդկային հոգու անխուսափելի թուլութիւնը, ընկերական ջերմ ու գուրգուրոտ սիրոյ կողքին անձնական քէնն ու եսասիրութիւնը, նոր միայն լրացաւ ու պարզարանուեց ինձ համար Ռուբէնի, Իշխանի եւ նրանց նման բազմաթիւ հայդուկների կրած հոգեկան տառապանքն ու ողբերգութիւնը:

**

Միւս օրը Արամը ինձ տարաւ ընկերների հետ ճաշելու: Գաւառից հաւաքուել զին դանազան ընկերներ: Այնտեղ էր երկարահասակ խմբապետ Նիկոլ Օղաբաշեանը, Ալեքսանդրապոլցի Մուրոն, Կողբեցի Տիգրանը եւ այլն: Սահմանադրութեան պատճառով մերոնք մի տեսակ հաշուեյարդարի մէջ էին:

Մտանք մի խանութի նման շէնք: Մէջտեղում սեղանի վրայ դրուած էր մեծ չամաղի ամանը, մօտը հացը եւ ոտքի վրայ կանդ-

նած ուտում էին՝ Կոմսը, Իշխանը, Նիկոլը, Մուղոն և ուրիշներ: Միծաղելով մեզ էլ շտապեցրին մասնակցել, թէ չէ՝ քաղցած կը մընայինք: Արամն էլ հացը խոթեց ընդհանուրի ամանը և արորժակով կերաւ:

Ես քաշուում էի: Կոմսը հանեց մի լաւ պատառ միս և առաջարկեց ինձ:

Կատակը, պատանները իրար ձեռքից իլելը աւելի համով էին դարձնում այս քրիստոնէական սիրոյ աղապը, որ մի փոքր ձեւափոխուած յիշեցնում էր քրիստոնէաների առաջին օրերի կենցաղը: Մեծ ու փոքր, բոլորն էլ ընկերներ էին, միմեանց հետ սիրով ու բարեկամութեամբ զօդուած:

Միւս օրը Արամը, Իշխանը և Վոսմեանը եկան Մանուկ աղայի տունը: Սա Պոլսում խոհարար էր եղել. պատրաստել էր Իշխանի զինուորներից մէկի զարկած նապաստակը՝ փորը բրինձ լցնելով: Համով ճաշ էր, համեմուտ Վոսմեանի զուարթ ու կայտառ զրոյցով ու կատակներով:

Այդ օրերին Շամի Կ. Կոմիտէի մէջ աշխատում էր Գրիգոր Ուլուկթեանը — Սէյրադը: Տեղական երիտասարդ ընկերներից էր, եռանդուն և ոգեւորուած: Ինձ պատմեց Վանայ յեղափոխական կեանքի գաղտնի աշխատանքի ձեւերն ու առանձնաշատկութիւնները, «գործակատար» կոչուած ընկերների գերն ու աշխատանքը և այդ կապակցութեամբ Դաւոյի դաւաճանութեան պարագաներն ու բուն դէպքը: Տոյց տուեց թուրքական թաղի սահմանում գտնուող մարքեաղի (ոստիկանատուն) մօտ այն բարտի յաղթ ծառը, որի կատարից որոշուած էր եղել ումբ նետել այդ տան վրայ, որովհետեւ Դաւոն այնտեղ էր ապաստանած: Բայց Տաճատը կանխել էր և վանեցիների պատիւը փրկել:

Սէյրադը խօսում էր շատ ոգեւորուած և նոր-սերնդական թարմ շարժման մասին ու զովարանում: Յայտնեց, որ Աղթամարի միջնակարգ դպրոցի 3 ուսուցիչները իր նոր-սերնդական ընկերներն են: Յոյս յայտնեց, որ ևս իրրեւ Կովկասից եկած և երիտասարդ, իր ընկերների հետ կը լինեն: Մի խօսքով՝ «կաղմակերպեց» ինձ: Վատ բան չէի տեսնում, համաձայն էի. երիտասարդութիւնը ամէն տեղ արժանի է քաջալերանքի և դնահատութեան:

Մի գեղեցիկ օր էլ Արամը տարաւ ինձ Տաճատենց տունը՝ ծընողների հետ ծանօթացնելու: Ինքը Վանում չէր, ուղարկուած էր Պոլիս սովորելու և Վանի թուրք ամբոխի աչքից հեռու լինելու համար:

Մի համեստ տուն էր, որ դարձել էր մեր ընկերների համար ուխտատեղի: Մայրը բոլորին ընդունում էր իր որդու պէս, հետները մտերմօրէն զրուցում և ուրախ էր ու հպարտ, որ իր Տաճատը «խայռւ անուր բարձր պահեց, շուրջ Դաւոն սատկեցուց»: Արամը շարաթը մէկ այստեղ էր և իր խնամքի տակ էր առել ծերունիներին:

Արամի հետ այցելեցինք նաև Տէրոյեան Վազգէնի տունը, մի այլ յեղափոխական օջախ: Մանօթացայ քրոջը՝ Օր. Չարուհու հետ, որ նոր էր աղատուել բանտից և Վանի յեղափոխական առաջին աղջիկներից էր: Հարազատ, ընկերական մթնոլորտ էր և մտերիմ յարաբերութիւններ:

Շամզգինանի քիւրտ չէխը, Վանայ նահանգի արևելեան սահմանի վրայ, Պարսկաստանին կից, շատ աղքեցիկ էր, տիրում էր ընդարձակ շրջանի: Ինչպէս ասորի Մար-Շիմոնին, նոյնպէս և սրան կուսակցութիւնն ուզում էր գրաւել, բարեկամանալ, մեր ժողովրդի բարեկամ դարձնել և յարաբերական աշխատանքների համար օգտագործել, իսկ ընդհանուր վտանգի ժամանակ, զոնէ չեզոքացնել:

Այդ օրերին նրա ազգեցիկ քարտուղարը Պոլսից Վան էր եկել և գնում էր չէխի մօտ: Մերոնք նրան մի հայ հարուստի մօտ ընթրիքի էին հրաւիրել և երեկոյեան պիտի տեսնուէին: Այնտեղ էին Վոսմեանը, Արամը, Կոմսը և Իշխանը: Ինձ ևս տարին՝ անուանելով կովկասահայ թերթի թղթակից:

Ոստում էին երկար, զանազան խնդիրների շուրջ: Մեր հարցը պարզեցին նրան, հերքեցին տարածուած սխալ, ամբոխային կարծիքները աղաչյին թշնամութեան մասին և առաջարկեցին փոխադարձ բարեկամութիւն ու աջակցութիւն: Քարտուղարը ցոյց էր տալիս իրեն շատ ուրախ, համաձայն էր մերոնց հետ և խոստացաւ չէխին հաղորդել մերոնց ասածներն ու առաջարկները. յոյս ունէր, որ դրական պատասխան լինէր:

Այդ գիշեր Արամի և Իշխանի հետ այդ տանը պառկեցինք մի սենեակում. երկար ժամանակ հարցեր էին տալիս Երեւանի, Շուշու, Թիֆլիզի կեանքի, ընկերների, ծանօթների մասին և չէին կշտանում:

«Լեոնապարը 1908-9ին»

«Հայրենիք» ամս., 33րդ տարի, Նոյ. 1955

ԱՐԱՄԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՎԱՆԷՆ

Այդ ամառ Պարսկաստանից Վան եկաւ նաեւ Ռոստոմը: Առաջին անգամ էի հանդիպում նրան: Ես տեղեկութիւն չունէի թէ ի՞նչ դիրք ու շնորհքի տէր էր նա: Բայց նրա շուրջն սկսուած եռուղեւոր, ընկերների յարզանքն ու գուրգուրալից վերաբերմունքը բացին եւ իմ աչքերը:

Նրա հետ էր միակ թիկնապահը՝ Ջումշուզը: Բերել էր հետը նաեւ Ուրմիայի շրջանի ասորիների հետ դործակցած եւ անջումանական շարժման կողմնակից ու պայքարին մասնակցած Փարամազ խանին եւ իր կնոջը:

Անջումանականութիւնը ձախողման մէջ էր եւ շարժումը համարեա թէ դադարում էր, եւ ահա պարտուած Փարամազը ապաւինել էր Ռոստոմին: Շնորհիւ Ռոստոմի վերաբերմունքին դէպի այս մարդը, Փարամազը արժանացաւ լաւ ընդունելութեան եւ վերաբերմունքի մերոնց կողմից:

Գալուց մի երկու օր յետոյ, Ջումշուզը պատահամբ արժանացաւ Իշխանի ձիու աքացիին, ոտքը վիրաւորեց եւ ստիպուած էր երկար անկողնին ծառայել:

Ռոստոմը իջել էր Իշխանի մօտ: Արամը համարեա թէ անբաժան էր նրանից: Ինձ համար հետաքրքիր նորութիւն էր: Բազմաթիւ իմ կարգի եւ ինձնից հասակով ընկերներ Արամի մօտ իրենց համարում էին փոքր, անփորձ եւ պէտք ունէին Արամին, որպէս մեծ ընկերոջ եւ բարոյական խնամատարի: Այժմ տեսնում էի, թէ ինչ որ էր մեզ համար Արամը, նոյնն էր Արամի համար Ռոստոմը: Բացի ընկերական պարզ սիրուց ու յարգից, կար նաեւ մի որդիական, կրտսերի խանդաղատանք դէպի այս մեծ ընկերը:

Ներկայ եղայ նրանց մի խօսակցութեան, մտերմօրէն, անկեղծ. ասես թէ հայր ու որդի էին խօսողները:



Վաղարշ Արամի և Ջումշուզի անկողնի վրայ

Վանի հասարակական մթնոլորտը իր լաւ կողմերի հետ ունէր ե՛ւ յոռի դժեր: Դաւոյի դաւաճանութեան հետ կապուած փսփսուքներ, գաղտասուքներ եւ անմաքուր պայքարը, փոքրիկ մարդոց նախանձն ու չարակամութիւնը եւ մութ ուժերի խլրտումը ստեղծել էին անցանկալի մթնոլորտ: Իմացել էի այդ բոլորի մասին, սակայն կարծում էի, որ սովորական երեւոյթ էր եւ ժամանակի հետ կ'անցնէր. ո՞ր չկային նման երեւոյթներ: Այսպէս էր տրամադրուած ե՛ւ Արամը այդ ցաւոտ հարցի մասին եւ յուզուած էր: Այժմ կար մէկը, որի առջև այս երկաթէ մարդը կարող էր իր հոգին, ներքին աշխարհը լրիւ դրսեւորել: Ռոստոմը լսում էր նրան հայրական ժպիտով, խրատում էր ուշադրութիւն չդարձնել այդ բոլորի վրայ եւ աշխատել. «Աշխատանքը ամէն ինչ կը մոռացնի»:

Արամը, առարկելով իր խախտուած առողջութիւնը, խնդրում էր իրեն թոյլ տալ Վանից, գոնէ ժամանակաւորապէս, հեռանալու եւ բժշկուելու, հանդստանալու: Ասում էր, որ Վանում իրեն հանդիստ չպիտի թողնեն:

Ռոստոմը կարծում էր, որ նրա հեռանալը պիտի վնասէր շրջանին եւ ուզում էր, որ Արամը տեղում հանդստանայ ու բժշկուի:

Սակայն, իրօք, Արամի համար Վանում մնալը եւ հանգստանալը անհնարին էր: Մահուան անկողնում էլ նրան ժողովուրդը հանդիստ չէր տայ. նա Վանեցու համար մի անհրաժեշտութիւն էր դարձել:

Արամը աւելի յուզուեց: Երեւի, շատ բան ասել չէր ուզում: Դժուար էր անհատականը շատ առաջ քշել հասարակական խնդիրներում, եւ սկսեց նրա ձայնը դողալ, կերկերալ, որպէս մի զաւակի ձայն իր հարազատ հօր ներկայութեան:

«Ռոստոմ, ես ասում եմ, որ պէտք է հեռանամ մի քանի ժամանակ հանգստանալու: Յոգնա՞ծ եմ այս բոլորից, շա՛տ յոգնած»...

Ռոստոմը դուրդուրանքով մօտեցաւ նրան, ձեռքը դրեց ուսին եւ թաւ ձայնով ասաց.

«Լաւ, գնանք միասին կարին: Այնտեղից էլ կը տեսնենք, թէ ուր յարմար կը լինի»:

Եւ խօսակցութիւնը փոխուեց: Արամը Ռոստոմի հետ դնաց: Կարծեմ մի տարի նա դուրսը մնաց՝ Սեւ ծովի ափին, եւ... Վանեցիք նրան յետ կանչեցին: Չար լեզուները պատանձուեցին եւ ժողովրդի մարդը եկաւ՝ իր սիրելի ու աշխատած շրջանում՝ Ապրիլեան հերոսամարտը կերտելու, մի քանի տարի յետոյ:

Վարադայ ուխտի օրերն էին: Արամը եւ Իշխանը առաջարկեցին Ռոստոմին Վարազ պնալ: Համաձայնեց: Ես էլ էի մասնակցում: Տեղական ընկերներից մէկն էլ մեզ հետ էր եւ հեծել էր Ռոստոմի Պարսկաստանից հետը բերած ձիերից մէկը: Իշխանը խօսք բաց արեց այդ ձիու մասին եւ իրրեւ լաւ ձի ճանաչող սկսեց կատակով հասկացնել, որ Ռոստոմին խարել էին, այս ձին այդքան չէր արժեր: Ռոստոմը ժպտաց միայն եւ խնդրեց ձին նստող ընկերոջ քշել ձին, որ Իշխանը տեսնի նրա լաւ քայլքը: Ընկերը դանդաղեց. ձին չէր շարժում: Ռոստոմը բարկացած ցած իջաւ իր ձիուց, ընկերոջ հեծած ձին նստեց եւ սկսեց քշել: Իրօք, ձին քայլքը արագացրեց եւ հրաշալի սահուն ու արագ պնաց (եօրդայ): Նոյն արագութեամբ Ռոստոմը վերադարձաւ, կրկին իր ձին հեծաւ եւ այժմ միայն Իշխանին պատասխանեց.

«Դէ ասա հիմա, այս ձին այդ գինը արժէ՞, թէ ոչ: Մեմակ դո՞ւ ես ձի նանաչում. տեսար, որ լաւն է»:

Մի շարաթ Վանում մնալուց յետոյ, Ռոստոմը եւ Արամը ճանապարհուեցին Կարին: Գնացին Վանայ լճի հարաւային եզրով՝ Կարճկանով: Լուր էր տրուած, որ Մուրադը (Ուրանցցի) հանդիպի նրանց ճանապարհին եւ ուղեկցի մինչեւ Մշոյ սահմանը: Յետոյ իմացուեց, որ յայտնի աւազակ Միր-Մհէն եկել էր նրանց ճամբան կտրելու, բայց արդէն անցած էին եղել եւ ազատուել վտանգից:

«Լեռնապարը 1908-1909ին»
«Հայրենիք» ամսագիր, 34րդ տարի, Փետր. 1956

ՀՄ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա Ր Ա Մ

(ԴԻՄԱԳԻԾ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

Համաշխարհային պատերազմի ընթացքին, ազգերու ահաւոր դուպարին ընդմէջէն, Հայկական Բարձրաւանդակին վրայ, երկու խոշոր եւ ներքօր կէտեր բոցավառեցան հայ դիմադրական կրակով ու լուսապսակուեցան յաղթութեամբ:

Երկու կէտեր՝ մէկը նախկին Թրքահայաստանի, միւսը երէկուայ Ռուսահայաստանի մէջ: Երկուքն ալ կեդրոնացուցած իրենց մէջ հայ ժողովուրդի ազատագրական տենչանքը, յեղափոխական կորովը, առնականութեան ջիղը եւ ապրելու անխորտակելի կամքը, ցցուեցան, իրրեւ անխոցելի պատնէչներ, բռնակալութեան թաթին դէմ, ջարդի ու կոտորածի վոհմակներուն հանդիման, պայքարեցան աննահանջ կամքով, դիմադրեցին գերբնական ուժով եւ իրարու միացան, ճեղքելով սահմանները բռնարար՝ գիրկընդխառնուեցան եղբայրօրէն, արիւնով եւ սուրով բացին ճանապարհը՝ կազմելու համար մէկ, անկախ, ազատ եւ միացեալ Հայաստան:

Այդ երկու կէտերն եղան Վանն ու Երեւանը...

Եւ ով ծանօթ է այդ երկու կեդրոնավայրերու պայքարի եւ դիմադրութեան հոյակապ պատմութեան, ով տեղեակ է անոնց կազմակերպչական անձնուրաց աշխատանքներուն, անիկա չի կրնար չյիշել այս օրերը այն անունը, որ առյաւէտ կապուած պիտի մնայ Հայկական Բարձրաւանդակի այդ երկու ջահակիր կէտերուն:

Արամ...

Անիկա եղաւ կեդրոնական անձը թէ՛ Վանայ եւ թէ՛ Երեւանի դիմադրական պայքարին: Անոր մէջ համախմբուեցան մեր ցեղի լաւագոյն յատկութիւնները մարտի եւ արեան օրերուն. անով ներշնչուեցան բոլորը, անոր շուրջը բոլորուեցան ամէնքը. անկէ ստացան ողի, ողեւորութիւն, շունչ, կենդանութիւն, կորով և ոյժ: Անի-

կա տուաւ ամէնուն հաւատք՝ կոտի եւ զխմայրութեան, յոյս՝ յաղթանակի եւ ադատութեան, յամառութիւն՝ ապրելու եւ շմեռնելու:

Երկու կեղրոնական կէտերը զիրար միացնող ու անոնց վրայ ծաղող աղատութեան լոյսովը լուսաճաճանչ անունն է Արամը:

Ու ընաւ պատահականութեան արդիւնք չէ այս պարազան: Գիպուածով չէ որ Արամ իրրեւ յեղափոխական գործիչ ինկաւ Վան, եղաւ ողին ապրիլեան կռիւներուն, ու ապա նոյնպէս զիպուածի հետեանք չէ որ անիկա զտնուեցաւ Երեւան ու դարձաւ Երեւանեան պոլսքարի կեղրոնական առանցքը:

Արամի մեծ եւ ընդարձակ ժողովրդասիրութիւնը, անոր գաղափարականութեան եւ անձնագործութեան յայնածիր հորիզոնները ուրիշ տեղ չէին կրնար սնանիլ եւ ընդլայնիլ քան այն վայրը, ուր հայութիւնն էր կեղրոնացած իր քաղաքական եւ հասարակական ապրումներովը յղի: Վասպուրականը Թրքահայաստանի մէջ, իսկ Երեւանը Ռուսահայաստանի՝ այն վայրերն էին, ուր հայ ժողովուրդը պիտի կարողանար իր գերազոյն ճիւղերը լարել, չլքուիլ բարբարոս բռունցքներուն առջեւ, ոտքի ելլել իբրեւ ուժեղօրէն կազմակերպուած բանակ: Եւ Արամը իրրեւ կազմակերպական գերազանց տաղանդով օժտուած գործիչ՝ բնագործէն, իր ներքին անբասիր թելադրանքներովը քուեցաւ դէպի հայութեան սիրտը ու ընտրեց իր գործունէութեան վայր նախ Վանն ու ապա Երեւանը: Հայկական իրականութեան մէջ, մանաւանդ, վերջին շրջանին, շատ քիչ գործիչներ կրցան այնքան յաջողութեամբ ու յաղթանակով տանիլ մինչեւ վերջը իրենց վրայ դրուած առաքելութիւնը, որքան Արամ: Շատեր մեր գործիչներէն, շատ շատեր մեր յեղափոխական սերունդէն ինկան ճամբու սկիզբին կամ կէս ճանապարհին, չկրցան վայելել յաղթանակը՝ մահուան սարսափներն ու տաժանքները ապրելէ ետք: Արամը տասն անգամ մահուան դնաց, կախաղանին մօտեցաւ ու տասն անգամին ալ վերադարձաւ, ինչպէս զինքը ծնող ժողովուրդը, ու վերջին պատմութեան մէջ ամենարախաւոսրը եղաւ եւ իրրեւ այդպիսին ամենալուսաւոր դէմքերէն մէկը՝ անհետանալով հայ երկնակամարի զէնիթին հասնելէ ետք:

**

Անցեալի ամենաքաղցր յիշողութիւններս կապուած են անխղճ լիօրէն Արամի անուան հետ: Առաջին անգամ տեսայ զինքը եւ ճանչցայ 1905ի վերջերը Վանի մէջ: Հայկազնեան կեղրոնական Վարժա-

րանի բարձրագոյն դասարանի աշակերտ էի. դասընկերներուս հետ բռնկած էինք ըմբոստութեան սրբազան կրակով տիրող բոլոր կարգերուն դէմ՝ պետական-բռնապետական, ընկերային-տնտեսական, ընտանեկան-գաղտնական բոլորը անխտիր մեր ցասումին առարկայ էին: Ու յեղափոխական գրականութեան եւ պրոպագանդի ազդեցութեան տակ առաջին ըմբոստութեան դրօշը պարզեցինք դպրոցական կարգուսարքին դէմ, յայտարարեցինք դասադուլ եւ դպրոցական կեանքը կանգնեցուցինք մէկ շարժումով: Զուր անցան բոլոր ջանքերը մեզ հնազանդութեան բերելու, եւ միայն յեղափոխական Արամի միջամտութիւնը կրցաւ վերջ դնել մեր դասադուլին: Արամ լուր տուաւ մեզ թէ ցանկութիւն ունի տեսնուելու ըմբոստներուս հետ: Գիշեր մը հաւաքուած մեր դասընկերներէն Բրուտեան Արահամենց(*) տունը սրտատրոփ Արամին կը սպասէինք, երբ ներս մտաւ ան երկու թիկնեղ զինուորներու հետ: Հրճուանքի անհուն սարսուռ մը զգացի, որովհետեւ առաջին անգամն էր որ կը տեսնէի հայ յեղափոխականը, սպառազինուած հայուկներու հետ: Արամը ոգեչունչ եւ գեղեցիկ ճառով մը փառարանեց մեր ըմբոստութիւնը, գնահատեց ընդվզումի այն կրակը սրբազան, որմէ ծնած են բոլոր յեղափոխականները, եւ որմէ կը ծաղին բոլոր արշալոյսները: Ղարաբաղի անպաճոյճ բարբառով, այն օրը, Արամը մկրտեց մեր մէջ հայ յեղափոխութիւնը եւ անկէ վերջ անիկա Սարգիսի հետ, եղաւ վարպետ եւ ուսուցիչ Վասպուրականի նոր սերունդին:

**

Ժողովրդական զանդուածները, իրենց թափանցելի եւ անթափանց բոլոր խաւերովը կը պարզուէին Արամի մտքին ու հոգիին առջեւ պարզ եւ անծիր հորիզոնի մը պէս, ուր կը սաւառնէր Արամը ինքնամոռ երազանքով մը եւ կամ փոթորկայոյց ծովի մը ալքերուն նման, որոնց կը յանձնէր ինքզինքը անվեհեր անձնագործութեամբ՝ նաւելու համար դէպի փարոսը հեռակայ: Ժողովուրդի հետ, առանց վերջինիս ինք եւս զոյուցիւն ունենալ չէր կրնար եւ առանց անոր ցաւերն ապրելու իր սեփականը չէր կրնար զգալ: Ինք չունէր սեփական չափը՝ իր եսին ու իր անձին համար միայն, ինչպէս մարդիկ կ'ունենան մարդկայնօրէն, այլ ժողովուրդի չափովն էր որ կը չափէր

(*) Ա. Բրուտեան վերջէն դարձաւ Վասպուրականի Հնչակեաններու ղեկավար եւ սպանուեցաւ վանի ապրիլեան կռիւներու ատեն բուրժուական բանտին մէջ:

իր անձնական մտահոգութիւններն ու պարումները: Սրտակից ընկեր բոլորին համար, ամենապարզ զեղջուկէն սկսեալ մինչև զպրոցական պատանին, մահուան չեմքին կանգնած ծեր ու պառակէն սկսեալ մինչև նորածին մանուկը: Ամէնքն անհրաժեշտ տարրեր էին ժողովուրդին եւ հետեւաբար ամէնքն ալ մօտիկ Արամի անպարազիծ հոգիին: Ու բոլորը Արամին կը դիմէին անկէ խորհուրդ ստանալու: Գեղջուկը հեռաւոր զիւղերէն քաղաք կու գար Արամի կարծիքը հարցնելու՝ իր գործին, առեւտրականը Արամին կը դիմէր իր ձեռնարկին համար: Ու Արամը ամէնուն կու տար իր խորհուրդը, ամէնքը կը լսէր անձանձրոյթ եւ սրտովին, կը թափանցէր վարպետօրէն ամէնու տուներուն խորքը՝ իրրեւ ընկեր, իրրեւ յեղափոխական, իրրեւ ժողովրդասէր եւ իրրեւ մարդասէր: Քիւրտն ու թուրքը, եթէ անիրաւուած էին ու ճնշուած, նոյնքան անվերապահօրէն կրնային Արամին մօտենալ, որքան հայ զիւղացին կամ իր մօտիկ բարեկամը:

Անգամ մը, 1915ին, երբ Վանի Սօսենց փողոցէն Արամն ու ես կ'երթայինք «Աշխատանքի Տուն», մեզի մօտեցաւ երիտասարդ մը եւ խնդրեց Արամին հետ խօսիլ առանձին: «Ի՞նչ կայ, հարցուց Արամ, գաղտնի պահելու պէտք չկայ, ըսէ՛»: Երիտասարդը ամաչկոտ կերպով մօտեցաւ եւ ըսաւ կամացուկ. — «Պր. Արամ, ես կ'ուզեմ ամուսնանալ, ի՞նչ խորհուրդ կու տաս, այս խառնակ ժամանակներուն նրպատակայարմա՞ր է ամուսնանալս թէ ոչ»:

— «Գնա՛, ախմա՛խ, պատասխանեց Արամ խնդուքը պահելով, ես տէրտէ՞ր եմ որ ինձի կը հարցնես, գնա՛ Տ. Զաքարիան, Տ. Ներսիսիան հարցուր, ես ի՞նչ գործ ունիմ ամուսնանալուդ հետ, կ'ուզես ամուսնացիր, կ'ուզես յաւիտեմապէս կա՛ց ամուրի»:

— «Ո՛չ, Պր. Արամ, ես քո խորհուրդին պէտք ունիմ, կը խընդրեմ որ չմերժես»:

Ու Արամ խորհուրդ տուաւ երիտասարդին, որ շնորհակալութիւն յայտնելով հեռացաւ իրմէ:

Արամը միայնակ գտնել դժուար էր. անիկա՛ ըլլար փողոցէն անցած պահուն, ըլլար իր տունը սեղանին շուրջ, թէյի կամ ճաշի նստած, ըլլար նոյնիսկ մահճակալին մէջ պառկած, միշտ կը շրջապատուէր ժողովուրդով: Յաճախ կը տեսնէիր զինքը, որ գլուխը առջեւ ծռած, դանդաղօրէն կը քալէ զիւղացիներու խումբ մը ետեւն ունենալով: Իւրաքանչիւրը իր գործին համար կը հարցնէ, ու Արամ, առանց ետեւ նայելու, կը պատասխանէր իւրաքանչիւրին ալ, որոնք գոհ սրտով կը կտրուին խումբէն, կը մնան ետեւ ու կը հեռանան մէկիկ մէկիկ, մինչ Արամ կը շարունակէ առաջանալ եւ իր դէմ ել-

լողներով լեցնել մեկնողներուն տեղը: Եթէ պատահէր որ Արամը միայնակ մնար, ինքն էր, որ կը սկսէր ժողովուրդ փնտռել եւ կեցնել առաջին հանդիպողը՝ այս կամ այն, մասնաւոր կամ ընդհանուր խնդրի մասին հրահանոյ տալու կամ տեղեկութիւն ստանալու համար: Եւ դարձեալ եթէ պատահէր որ մարդու ալ չհանդիպէր, կը մտնէր առաջին հանդիպած տունը, որովհետեւ տուն չկար, մարդ չկար, նոյնիսկ ծեր եւ մանուկ, որ Արամին ծանօթ ըլլար: Անիկա կը հետաքրքրուէր ամենաաննշան բաներով եւ ամենաաննշան դէպքերով. ո՛վ որու քենին է, ո՛վ որու հետ ամուսնացաւ, ո՛վ ինչ յարաբերութեան մէջ է իր այնինչ ազգականին կամ բարեկամին հետ: Ու այդ աննշան մանրամասնութիւնները Արամին համար ժողովուրդին խորքը թափանցելու եւ զայն լիովին ըմբռնելու համար մէյ մէկ ազդակներ կը հանդիսանային:

Ու այսպէս մեծէն մինչեւ փոքր, կուսակալէն մինչեւ յետին զիւղացին, մանրէն մինչեւ ընդհանուրը, մասնաւոր ամուսնական հարցէն մինչեւ հասարակական-պետական մեծ խնդիրներ, ամէն բան Արամի մտաշխարհին մէջ իր համապատասխան տեղը կը դրաւէր:

— Նայի՛ր Արամի գլուխին, ըսաւ օր մը ինձի Վրամեանը, անիկա իմ միակ չափն է, ծանրացոյցը. եթէ կը տեսնես որ Արամը կու գայ դանդաղօրէն, գլուխը առջեւ հակած, կը նշանակէ մեծ հարցերով ծանրաբեռնուած է ան եւ կը դժուարացայ զանոնք լուծել, իսկ եթէ գլուխը բարձր բռնած՝ կը քալէ սովորական քայլերով, ըսել է թէ մեծ հարցերը լուծուեր են եւ Արամը ուրախ է ու գոհ:

**

1914ին, երբ բռնկեց եւրոպական պատերազմը, Թուրքիան ալ ցնցուեցաւ եւ անմիջապէս ընդհանուր զորակոչի հրաման տուաւ: Զէնքի տակ կոչուեցան մինչեւ 45 տարեկանները. բայց որովհետեւ չկար կանոնաւոր արձանագրութիւն այդ տարիքներուն, այդ պատճառով ալ բոլորը պարտաւոր էին անձամբ երթալ եւ արձանագրուել: Այս հրամանը Վանի հայ ժողովուրդի մէջ առաջ բերաւ մեծ խուճապ եւ ընդդիմութիւն: Տրուած պայմանաժամը անցաւ, բայց ոչ ոք չզնայ եւ չարձանագրուեցաւ. ոչ միայն հայերու համար ստեղծուեցաւ անեղանելի կացութիւն, այլեւ կառավարութեան համար, որուն գլուխը կը գտնուէր Թահսին պէյ, մէկը որ լաւ յարաբերութիւն պահպանած էր հայ յեղափոխական ղործիչներու հետ

մասնաւորապէս եւ հայ ժողովուրդի հետ ընդհանրապէս: Կացութիւնը երթալով կը բարդանար եւ ջղայնութիւնը երկուստեք՝ թէ կառավարութեան կողմէ, որ չլիտէր ինչպէս պարտադրէր իր հրամանը, եւ թէ հայ ժողովուրդի կողմէ, որ չէր կրնար հաշտուիլ հրամանին հետ, օրը օրին կը լարուէր: Արամը, որ այն ատեն դաւաճան էր դացեր շրջադաշտեան՝ երկու կողմին համար ալ կացութեան միակ բանալին կը համարուէր: Թէ՛ կառավարութիւնը եւ թէ՛ ժողովուրդը անհամբեր Արամի դալուն կը սպասէին: Վերջապէս Արամը, մեր հեռագիրներուն վրայ, քաղաք եկաւ: Ատտուն կանուխ իր քով փութացի եւ դտայ զինքը անկողնոյ մէջ. երկարօրէն պատմեցի անցուդարձերը եւ վերջը հարցուցի թէ ի՞նչ պէտք է ընել:

— Ի՞նչ պէտք է ընել, կրկնեց ան մտայոյց:

Յաջորդ օրը արդէն անցած էր ջղայնութիւնը ժողովուրդի մէջէն ու Արամը թաղէ թաղ նաղարան ու զուռնան ետեւը ձգած զինուորացուները կը հաւաքէր: Անիկա պատրաստեց 70 հոգիէ բաղկացեալ ցուցակ մը՝ մեր կուսակցական աչքի ընկնող ընկերներու անուններէն, կառավարութեան յանձնեց եւ ստիպեց ընկերները, որ ամենէն առաջ իրենք երթան մտնեն պիտուորական շարքերուն մէջ, որպէսզի օրինակ դառնան ժողովուրդին:

Այս կերպով անցաւ Վասպուրականի վրայէն առաջին ճգնաժամը, բացառապէս Արամի շնորհիւ:

«Վէմ», Բ. տարի, թիւ 1 (1938)

1919, Երեւան

ՕՆՆԻԿ ՄԻԹԱՐԵԱՆ

ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

(Հատուածներ)

Ա.

Ատտուն ժամը 10ին (4 Ապրիլ) կուսակալ ձէվտէթ փաշան հեռաձայնով կը յանձնարարէ Սաչ փողոցի ոստիկանութեան, իր քով հրաւիրել Վոսմեանը: Նոյն ժամուն նման յանձնարարական մը կ'ուղղէ Արարքի ոստիկանատուն՝ հրաւիրելով Արամը(*):

Վոսմեան, սովորականին պէս սիրայօժար՝ կ'ընդունի հրաւերը: Սովորականին պէս քովը գտնուած կարեւոր թուղթեր, նամակներ եւ հաշիւներ, ինչպէս նաեւ 30 օսմ. ոսկին, գրոցը կը դնէ եւ սառնօրէն կը մեկնի կուսակալին քով: Մեկնելէն առաջ չի մոռնար երկտողով մը զգուշացնել Արամը, թէ ինք կանչուեցաւ կուսակալէն, հետեւաբար, եթէ Արամն ալ հրաւիրուի, անզգուշութիւնը չունենայ գալու: Արամն ու Վոսմեան նախապէս պայմանաւորուած էին, միաժամանակ չձերբակալուելու եւ զոնէ մէկն ու մէկը ազատելու համար, երբեք միասին չներկայանալ կուսակալին: Բայց այդ պայմանը յաճախ դժուարութեամբ կը յարգուէր երկուստեք, մանաւանդ Արամի կողմէ, որ ջղային հետաքրքրութեամբ կը հետեւէր բոլոր դէպքերուն եւ առհասարակ անզոյճ էր դէպի իր սեփական կեանքը: Արամի բնաւորութեան այդ դիժը նկատելով, ինչպէս նաեւ կանխազգալով իր ընդմիջտ հեռացումը՝ Վոսմեան գրեց այդ երկտողը, որ Արամի կեանքի եւ Վանի ինքնապաշտպանութեան համար ճակատադրական նշանակութիւն ունեցաւ:

Վոսմեանի քաղաք մեկնելէն ետք, Արարքի ոստիկանութիւնը, կուսակալի հրահանգին համաձայն, հապճեպով կը փնտոէ Արամը, որ տուն չէր գտնուեր այդ պահուն: Սովորականին պէս Արամ եկած

(*) Վոսմեան կը բնակէր Խաչ փողոցի շրջանը, իսկ Արամ՝ Արարք:

էր «Աշխատանք»ի խմբադրատուն, ուրիշ պիտի երթար Վոսմեանի քով՝ օրուայ կացութիւնը քննելու: Ոստիկանները իրենց յոգնաջան փնտնատուքին մէջ, վերջապէս կը գտնեն Արամը եւ կը յայտնեն, թէ «կուսակալ ձեկտէք» փաշան կարեւոր եւ անյետաձգելի գործի մը համար պէտք ունի իրեն»:

Արամ կը համաձայնի անմիջապէս իսկ մեկնել, երբ նոյն պահուն կը ստանայ Վոսմեանի դրած նախադգուշական երկտողը, որով իր մեկնումը յետաձգելով, ետ կը ճամբէ ոստիկանները՝ անձկանօք սպասելով Վոսմեանի վերադարձին:

Վոսմեան, սակայն, սովորականէն աւելի կ'ուշանայ: Արամ կ'երթայ Վոսմեանի ապրած հարեւան մէկ տան հանդատանալու, երբ հոն կրկին ոստիկաններ կու գան զինք թախանձագին հրաւիրելու ձեկտէթ փաշայի մօտ, շատ կարեւոր խորհրդակցութեան մը համար...

Առանց այն ալ ջղային ու անհանդիստ՝ Արամ կառք կը նստի մեկնելու եւ, հազիւ քանի մը քայլ առած՝ հապճեպ սուրացող հայ կառապան մը կը փաթթուի Արամի ոտքերուն զրեթէ պոռալով՝

— Ո՛ւր, պարոն Արամ, ի սէ՛ր Աստուծոյ... Իշխանն սպաննած են Շատախի քամրուն վրայ և Վոսմեանն ալ ձերբակալած են... ո՛ւր կ'երթաք, մի՛ երթաք, ի սէ՛ր Աստուծոյ...

Արամ կ'ուշաբերի... այդինքնով կ'առաջանայ դէպի հայկական թաղերը, «Աշխատանք»ի խմբադրատունը եւ այդպիսով, գրեթէ հրաշքով, կ'ազատի ձեկտէթ փաշայի լարած ստոր որոգայթէն:

«Հայրենիք» ամս., Բ. տարի, թիւ 8, Յնս. 1924

Բ.

1915 Ապրիլ 5ի կիրակի առաւօտ Վանի հայ քաղաքական-հասարակական կուսակցութիւններու ներկայացուցչական խորհրդակցական ժողովը՝ քննութեան առնելով Վանի հայութեան համար ստեղծուած բացառիկ ծանր կացութիւնը եւ գնահատելով կատարուած ու ժամ առ ժամ դարգացող դէպքերը, որոնք այլեւս ոչ մէկ կասկած կը թողնէին, թէ թուրք կառավարութիւնը որոշած է բնաջնջել Վանի հայութիւնը անխնայօրէն, կը վճռէ կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանութիւն՝ ընտրելով «Վանի Հայ Ինքնապաշտպանութեան Զինուորական Մարմին», եւ անոր տրամադրելով

կուսակցութիւններու նիւթական եւ բարոյական բոլոր միջոցները:

Փոխադարձ համաձայնութեամբ Զինուորական Մարմնի պաշտօնական անդամներ կ'ընտրուին 1. Գրիգոր Պուլղարացի(*) (ղաշնակցական), 2. Կայծակ Առաքել (ղաշնակցական), եւ 3. Արմենակ Եկարեան (ուսկավար): Երեքն ալ յեղափոխական զինուորական հարուստ անցեալով, փորձ, յարգուած եւ քաջարի ռազմիկներ:

Զինուորական Մարմինն իբրեւ օժանդակ կը կազմուին յարակից մարմիններ եւս — Տեղեկատու Դիւան եւ Զինարաշխ Մարմին: Տեղեկատու Դիւանին երեք անդամները միաժամանակ անմիջական քարտուղարներն են՝ Զինուորական Մարմնին. — 1) Հմայեակ Մանուկեան (ղաշնակցական, «Աշխատանք»ի երիտասարդ խմբագիր), 2) Յովհաննէս Մխիթարեան (ղաշնակցական, տողերուս գրողը) եւ 3) Արմենակ Փողահարեան (ղաշնակցական, ուսուցիչ):

«Տեղեկատու Դիւան»ի գործնական աշխատանքներուն կ'օժանդակէն պաշտօնապէս նաեւ՝ Վարդան Պապիկեան (ուսկավար, վաճառականական տան քարտուղար, վերջը Թիֆլիսի մէջ հրտարակուող «Վան-Տոսպ» թերթի խմբագիրներէն: Նահատակուած 1918ի Իգտիր-Մարմաստի կռիւներուն մէջ), Արփիար Սաֆրաստեան (ղաշնակցական, ուսուցիչ), Հրանդ Գալիկեան (հնչակեան, փաստաբան) եւ Կարապետ Աջէմ Խաչոյեան (ուսկավար, ուսուցիչ, մեռած Վանի մեծ նահանջէն ետք):

Զինարաշխ Մարմնի անդամներ կ'ընտրուին՝ 1. Դաւիթ Փափագեան (ղաշնակցական, պետական պաշտօնեայ), 2. Վ. Տէր Պողոսեան (ղաշնակցական, վաճառական), 3. Կարապետ Պէյլէրեան (ղաշնակցական, արհեստաւոր) եւ 4. Գարրիէլ Ամէրճեան (ուսկավար, արհեստաւոր):

Զինուորական Մարմնի եւ անոր յարակից օրգաններու, ինչպէս նաեւ Վանի հերոսամարտի ամբողջ ծանրութիւնը եւ բարոյական ղեկավարութիւնը սակայն բնականօրէն, կ'իյնայ Արամին, որ այդ օրերուն, մասնաւորապէս Իշխանի եւ Վոսմեանի կորուստէն ետք, կը մնայ միակ ապաւէնն ու ընտրեալ առաջնորդը Վասպուրականի սլաքարող հայութեան:

«Հայրենիք» ամս., Բ. տարի, թիւ 9, Յլս. 1924

(*) Գր. Պուլղարացու, Կայծակ Առաքելի, Վոսմեանի, Արամի, Իշխանի եւ առհասարակ Վանի հերոսամարտի մէջ խոշոր դեր ստանձնողներու մասին առանձին տեղ է յատկացուած՝ այս աշխատութեան յետագայ էջերում մէջ:

Ապրիլ 7ի գիշերը.— Իրիկնամուտին, կէս ժամու չափ, հայ-
 Թրքական բոլոր դիրքերու վրայ, յանկարծօրէն, կը թաղաւորէ մե-
 ռելային լուծիւն մը: Թնդանօթի ոչ մէկ հարուած, ոչ մէկ հրացա-
 նաձողութիւն: Կարմիր հրգեհ մը կը ծաւալի միայն խաչ-Փողոցէն Ս.
 Յակոբ, անյոյս բոցերը՝ հայ անպաշտպան տուններու: Հեռուէն, շատ
 խորէն, կը լսուի խուլ որոտ մը, պարզ է, որ քաղաքամէջի բուռ մը
 հայութիւնը տակաւին կը մարտնչի: Կասկածողներ կան, թէ թուր-
 քերը Այդեւտանը ընկճելէ յուսահատ՝ իրենց բովանդակ կարողու-
 թիւնը պիտի թափեն մեկուսացած Քաղաքամէջի ափ մը հայութեան
 վրայ: Արամ, սակայն, չարագուշակ կը համարէ այս խորհրդաւոր
 լուծիւնը եւ անմիջապէս կը հրահանգէ բոլոր դիրքերուն ամբողջ
 գիշերը պատրաստ եւ անքուն հսկել՝ առաջն առնելու համար ամէն
 տեսակ դաւադրութեան: Կը հրահանգէ նաև լաւադոյն ուժերով ամ-
 րացնել ամենէն կարեւոր ճակատը՝ Սահակ պէյի դիրքը: Ինք կը մը-
 նայ ամբողջ գիշերը Զինուորական Մարմնի շէնքը եւ անձամբ կը
 հսկէ ու կը վարէ բոլոր գործերը:

Արամի նախագագումը անտեղի չէր: Կէս ժամեայ խորհրդա-
 ւոր լուծիւնը կը խզուի յանկարծ եւ ահեղասաստ կայծակի որոտի
 ուժգնութեամբ բոլոր դիրքերու վրայ կը լսուի ուղղակի դժոխային
 աղմուկ մը: Անհնարին է պատկերացնել այդ դժոխային աղմուկի
 ամբողջ կատաղութիւնը: Մարդկային լսելիքը ուղղակի խլութեան կը
 դատապարտուէր եւ ամէն մարդ անգիտակցօրէն կը փակէր իր աչքն ու
 ականջը՝ այդ անսովոր, մարդկային կեանքին մէջ թերևս մէկ անգամ
 միայն լսուող շնաղայլային վժվժոցին դիմաց: Պահ մը կը թուէր,
 թէ այդ բոլորը պարզ մտապատրանք է, թէ քիչ առաջուայ լուծիւնն
 է նորէն, թէ սխալ է, ոչ մէկ աղմուկ կայ. բայց ահա ծառերու խշր-
 տուքը՝ հրացանի զնդակներու տակ, լուսամուտներու ապակիներու
 անընդհատ դղրդոցը, կայծակնային փայլը կամ օդին մէջ գիկզակ եւ
 ալետատան հրթիռները եւ վերջապէս այս արի մարդիկ, որոնք ամ-
 բողջ օրը այնքան քաջաբար կուռեցան եւ որ ահա այս անդնդային
 որոտին մէջ դալկացան ջղային անընդհատ կծկումներով...

- Պարզ ահաբեկում է, կ'ըսէ Պուլղարացին:
- Վստա՞հ ես Սահակ պէյի դիրքին վրայ. կը հարցնէ Արամ:
- Փանոսն (ժամկոչեան) այնտեղ է, ոչինչ չի պատահելու,
 կը պատասխանէ Գրիգոր:
- Զերթա՞նք:

- Ո՞ւր:
- Սահակ պէյ:
- Զեմ կարծեր որ որեւէ վտանգ պատահի: Սպասեմք, տես-
 նեմք:

Լուծիւն: Մինչդեռ դժոխային աղմուկը աւելի ու աւելի կը
 կատարի դուրսը: Բայց ահա տարօրինակ աղմուկ մը, ծանօթ, շա՛տ
 ծանօթ երդի մը ձայն, կարծես երգուած թնդանօթի փողերով:

«Ամենա՛յն տեղ, մահը մի է...»

- Ի՞նչ աղմուկ է:
- Ներս կը մտնէ սուրհանդակը: Սահակ պէյի դիրքի սուրհան-
 դակը:

— Ի՞նչ կայ, տղա՛յ, կը ձայնեն միաժամանակ Արամն ու
 Պուլղարացին:

— Ոչինչ, Պր. Արամ, Փանոս եւ ընկերները կը բարեւեն: Մեր
 քանդուած դիրքերը արդէն վերաշինած ենք: Տղաները «Մեր Հայ-
 րենիք» կ'երգեն եւ ձեր քէֆը կը հարցնեն:

- Քանի՞ գոհ ունիք:
- Ոչ մէկ գոհ: Թուրքերը կ'ուզեն վախցնել, բայց ի՞նչ վախ-
 ցող պտուղներ ենք... Հրամայուած է քար ձգել միայն՝ գնդակի փո-
 յարէն: Մենք թուրքերու պէս էշ չենք: Ընդհանուր քրքիջ մը կը
 բարձրանայ եւ լաւատես, խանդավառ տրամադրութիւն մը կը հա-
 մակէ ամէնքը...(*):

«Հայրենիք» ամս., Բ. տարի, թիւ 11 (Սեպտ. 1924)

Բայց առաջին աղտանչանը կը պատկանէր Սով արքային, եւ
 Այդեւտանի հայութիւնն ու ինքնապաշտպանութեան ղեկավարները
 պարտաւորուեցան դիմադրելու այդ նոր, աւելի ահարկու եւ աւելի
 անպարտոյն թշնամուն...

Եւ, ինչպէս միշտ, այս գերադոյն պայքարի հոգին նորէն Ա-
 րամն էր: Առանց տատանուելու եւ մէկ վայրկեան իսկ յուսահատու-
 լու, ան՝ իր հոգը ձեռքով կաղմակերպեց պայքարը սովի եւ անոր

(*) Իմ յուշատետրէս՝ 1915, Ապրիլ 8: (Օ. Մ.)

հետեւանքով ստեղծուած անխուսափելի լքումին դէմ: Ամենէն առաջ Արծալի վաղթականութեան մէկ խոշոր մասը — հիւանդներ, երախաներ, կիներ եւ ծերեր — անմիջապէս իսկ բաշխուեցան Այգեստանի համեմատարար ունեւոր տուներու վրայ: Ստեղծուեցան վաղթականական խոշոր ապաստանարաններ Սանդխտեան Օրիորդաց զսրոցի եւ Բարեսիրական ընկերութեան Մանկապարտէզի ընդարձակ շէնքերուն մէջ: Բոլոր զինուած զիւղացիները զինաթափուեցան եւ տակաւին իրենց հոգեկան հաւասարակչութիւնը չկորսնցուցած, նորեկներուն յանձնեցին իրենց ղէնքերը, որոնք Արամի յատուկ կարգադրութեամբ երկու օր ետք, Ապրիլ 14ին, զրկուեցան Շուշանցի ու Վարաչի բարձունքները պահպանելու, ղեկավար ունենալով Խառակոնիսցի Շիրինը: Զինուած զիւղացիներէն շատ փոքրիկ մաս մը միայն բաշխուեցան Այգեստանի դիրքերուն վրայ, իսկ անզէններէն շատ խոշոր մաս մը, մեծ մասամբ առողջ եւ երիտասարդ անձինք, բաժնուեցան առանձին խումբերու՝ երկու ամրաշէն զուամրտակներ, որոնց այնչա՛փ պէտք ունէին Այգեստանի ամէն օր կործանուող եւ նորոգուող դիրքերն ու խրամները:

«Հայրենիք» ամս., Գ. տարի, Թիւ 1 (Նոյ. 1924)

Ե.

ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՄՈՒՏՔԸ

Մայիս 5ի երեկոյեան, Վանի ծովին վրայ հուրհուրացող արեւի վերջալուսային ճառագայթներուն տակ, առաջին անգամ Վան կը մտնէր հայ կամաւորական հեծելազունը մը, առաջնորդութեամբ Դաշնակցական Խէչոյի(*) եւ ուսուցիչ Օզոլի: Այդ առաջա-

(*) Դաշնակցական Խէչոյի հայկական ազատամարտի ամենէն շքեղ հերոսներէն մէկն է: Անոր յեղափոխական կեանքի պատմութիւնը հարուստ է բազմաթիւ հերոսական դրուագներով: Վանի ազգայնաբանական շարք մը առաջ Դատուանի վրայ ուղղուած գրոհի մը մէջ սպաննուեցաւ Խէչոյ: Անոր դիակը պահ մը մնաց թշմամու ձեռքը, բայց ի վերջոյ հայ տասնեակ մը կամաւորներու խոյանքով փրկուեցաւ: Խէչոյի դիակը Այգեստան բերուեցաւ եւ զինուորական շքեղ պատուով քաղուեցաւ Արարի գերեզմանատան, Վանի հիմ ու նոր հերոսներու՝ Վազգէմի, Արմենակամ Սեպուհի, Յարութիւնի, Ռաֆայելի, Իշխանի, Վահանի, Գոթաթի, Միհրանի կողքին:

պահ հեծելազունդի մէջ էին նաեւ Աշոտ Մելիք Մուսեան(*) եւ Դալի Դազար(**):

Կամաւորական հեծելազունդի շղթան կը ձգուէր Շահպաղի սպիտակ բլրակներուն վրայ եւ տակաւ կը մօտենար Այգեստանի դուռներուն, մինչդեռ, առջին, Վանի պատմական Ակորիի քարերուն տակ, աղատութեան, յաղթութեան եւ երջանկութեան սարսուռներով դողահար Վանի ամբողջ հայ ժողովուրդը սրտատրոփ կը սպասէր իր հարազատներու առաջին հանդիպումին, պրկախառնումին եւ համբարոյրին: Հսկայական տարածութեան մը վրայ շար ի շար կանգնած էին Վանի հերոսամարտը կերտող հազարեակ մը մարտիկները, մաուզէր ատրճանակներով եւ հրացաններով զինուած:

Այդ մարտիկներու մէջ էին զիւղացիներ, բանուորներ, արհեստաւորներ, առեւտրականներ, ուսանողներ, աշակերտներ, մտաւորականներ: Անոնց թիկունքը հեղեղուած էր, տառացիօրէն, Վանի ամբողջ ժողովուրդը, կին ու աղջիկ, ծեր ու մանուկ, բնիկ թէ վաղթական:

Մարտիկներու եւ ամբոխի առջեւ, իր ժողովուրդը կարմիր ծովերէ առաջնորդող Մովսէսի մարզարէական ղէմքով՝ կանգնած էր Արամը, շրջապատուած Զինուորական Մարմնի անդամներով եւ շրջանապատներով: Հոն էր նաեւ խոնարհ ու անաղմուկ, ինչպէս միշտ, Պուլղարացի Գրիգորը իր ինքնատիպ թնդանօթով: Վարժապետանոցի աշակերտութիւնը, Այգեստանի ինքնապաշտպանութեան բոլոր յաղթանակներն աւետող իր Փանֆառով, բոլորուած էր թնդանօթի շուրջը:

Հեծելազունըը աւելի ու աւելի կը մօտենար եւ ահա անաղմուկ Գրիգորը յանկարծ կ'աղմկէր Այգեստանի դաշտերն ու ծործոր-

(*) Աշոտ Մելիք Մուսեան՝ հայ յեղափոխական մտաւորական մը: Խոշոր դեր կատարեց Գողթանի եւ Զանգեզուրի ազատագրական եւ ինքնապաշտպան կռիւներուն մէջ: Հայաստանի խորհրդայնացումէն ետք, ակամատես իր սիրելի ժողովուրդի ահաւոր տառապանքին, ինքնապաշտպան վերջ տուաւ իր քանակագին կեանքին, Զանգեզուրի մէջ:

(**) Դալի Դազար՝ հայ մարտական կազմակերպութեան ամենէն ազմուցանող ղեմաբերէն մէկը: Մէկը հայ ժողովուրդի ներքին թէ արտաքին դահիճներու փայլուն եւ յանդուգն ահաբեկիչներէն: Իր ամբողջ կեանքը գոհաբերութեան վերածած, Դալի Դազար կռուած է վերջին շրջանի մեր բոլոր ազգական դիրքերուն վրայ: Քանիցս ծանրօրէն վիրաւորուած, նորէն ռոֆի ելած է սակայն եւ նորէն կռուի դաշտը նետուած: Վերջին անգամ, հերոսական խոյանքի մը մէջ անկալաբարազի օրհասական կռիւներուն մէջ գոհուեցաւ:

ները իր թնդանօթի ևրեք հարուածներով: Ի պատիւ կամաւորական հեծելազունդին էր, որ կ'որոտար այս անգամ Գրիգորի թնդանօթը: Յուզումնասարսուռ շեշտերով կը նուազէր նաեւ Փանֆառը՝ «Մեր Հայրենիք»ը... , թերեւս ևրեք այնքան հարադատօրէն, չբեղօրէն իրական եղած չէր Նալբանդեանի հոյակապ ևրազը, որքան Մայիս Ծին, Վանի մէջ:

«...Մեր հայրենիք շղթաներով
Այսփան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած»...

Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան սահմաններուն վրայ, Կովկասի եւ Վասպուրականի մէջ, հայ ժողովուրդի կորիւնները իրենց արեան հեղեղումով 1915 թուի Մայիս Ծին, կը կերտէին հայ ժողովուրդի եւ հայ երկրի առաջին իրական ազատութիւնը...

Կամաւորական հեծելազունդը քանի մը հարիւր քայլի վրայ էր արդէն, երբ վաթսուն հազարի հասնող ամբոխը լիաթոք կեցցէ՛ կը դռար... Հեծելազունդը իր հերթին, հիացիկ ու բերկրանքէ զինով, կը փոխադարձէր իր ողջոյնները հերոսական Վանին եւ վանեցիին:

Ու անկէ ետք համբոյրներն ու աղօթքներն էին, երգերն ու ծաղիկներն էին, որ կը թռչէին բոլոր շրթունքներէ՛, բոլոր սիրտերէն... Ծաղիկները, Վանի մայիսեան սքանչելի, կարմի՛ր ու սպիտակ ծաղիկները, որոնք ոչ մէկ երկինքի տակ այնքան առատ են, որքան Այգեստանի մէջ, կը պճնէին ամբողջ ճանապարհը, կը պսակէին հայ կամաւորներու ճակատները...

Յաղթական թափօրը կը շարժուէր դէպի Այգեստանի հայկական թաղերը եւ ամբողջ ճանապարհի վրայ, ծաղիկներու ու կանաչներու կողքին, հայ կամաւորները կը դիմաւորէին նաեւ թշնամու թողած դիրքերու, զօրանոցներու եւ բռնութեան որջերու հրեղէն բոցն ու ծուխը...

Մայիս Ծին, ուշ գիշերը, Վան կը մտնէր նաեւ հայ կամաւորական դունդերու ամենէն խիղախ ղեկավարը, Դրօն՝ իր առիւծներով: Դեռ լուսարայ չեղած, Այգեստանի այս ու այն դիժերէն ներս կը խուժեն կամաւորական այլ հեծեալ եւ հետեւակ դունդեր: Վան



Արամ

կը մտնէր նաեւ ուսական բանակի հրամանատար զօրավար Նիկոլայե: Կամաւորական գունդի պետերը եւ ուս բանակի սպաները թիւթիւնճեանի տան մէջ կը հիւրասիրուէին ընթրիքով: Իսկ վանեցի իւշաքսնչիւր ընտանիքի երազը կը լինէր իր ծածքին տակ հիւրասիրել հայ կամաւոր մը...

Մայիս 6ին Վան մտնող ուսական բանակին եւս հայ ժողովուրդը կ'ընդառաջէր խանդավառ ցոյցերով եւ ողջոյններով: Վանի միջնաբերդէն ողջոյնի աղաղակներ կ'որոտային թրքական թնդանօթները, խոկ Խաչ-Փողոցի լայն հրապարակին վրայ ծաղիկներ կը սըրձէին հայ մատղաշ աղջիկները եւ աղօթքներ կը հիւսէին վանեցի բռնիկ ու դաղթական մամիկները...

Պատմական արժէք ունեցող գեկոյցով մը զօրավար Նիկոլայեւ հետեւեալը կը հեռագրէր ուս զօրաբանակի հրամանատարին.

«Շնորհիւ զինուած հայ ժողովուրդի եւ ղեկավարութեամբ ուսահպատակ Արամի, Վանը մէկ ամիս պաշտպանուեցաւ եւ երեք օր առաջ միայն հայերը գերակշռեցին ու թուրքերը սկսան նահանջել: Քաղաքը այրուած է. ազատ են մնացեր քանի մը հայաբնակ քաղեր եւ ուսական հիւպատոսատունը: Քաղաքին մօտեցած պահուն թուրքերէն գրաւած վեց քնդանօթներով տեղի ունեցաւ ողջոյնի քնդանօթաձգութիւն: Հայերը յանձնեցին ինձ բերդի բանալիները: Ժողովուրդը եւ Վանի պաշտպանները եպիսկոպոսի եւ հոգեւորականութեան առաջնորդութեամբ կազմակերպեցին հանդիսաւոր ցոյցեր: Ժողովուրդը եւ քաղաքի պաշտպանները շփոթ կազմած կ'ազաղակէին կեցցէներ եւ ծաղիկներ կը սփռէին»...

Այսպէս, ուս բանակը կը մտնէր Վան երեք օր յետոյ միայն, երբ թշնամին հալածուած էր Այգեստանի եւ քաղաքի զրոհներուն տակ եւ երբ վանեցին կատարելապէս տէրն ու տնօրէնն էր իր ճակատադրին: Թրքական թնդանօթներու ուժերը փոխարէն ուս բանակը ողջոյններ եւ ծաղիկներ միայն կ'ընդունէր: Արիւնարբու եւ դարաւոր թշնամու փոխարէն ուս բանակն ու իր հրամանատարութիւնը կը տեսնէին շինարար, ստեղծագործող ու բարեկամ հայ ժողովուրդը՝ աղատութեան անդուսպ ծարաւով...

Ուզէր թէ չուզէր, ղէթ առաջին հերթին, Վանի կառավարութիւնը պիտի վստահանար հայերուն: Այդպէս ալ եղաւ: Մայիս 7ին

փոխանակուեցան հետեւեալ երեք պաշտօնական հեռագիրները, որով Արամ կը նշանակուէր Վանի ժամանակաւոր կառավարիչ:

Զօրավար Նիկողայեւի հեռագրին պատասխանելով ուստի գորարանակի շտապը կը հեռագրէր:—

«Կորպուսի շտապից՝

Գեներալ Նիկոլայեւին

Հեռագիր թիւ 5452

«Համաձայն ձեր նշանակումին, կը հաստատեմ Արամը Վանի ժամանակաւոր նահանգապետի պաշտօնին, անոր յանձնելով Վանի շրջակայքի կառավարութիւնը: Ան կազմելու է վարչութիւն միմիայն հայերէն եւ յեմուելու է հայ երկրապահներու վրայ: Հիւպարտոս նշանակելու առթիւ հեռագրեցի բանակի հրամանատարին եւ Թարիզի հիւպատոսին, որպէսզի ուղարկէ ժամանակաւոր ներկայացուցիչ»:

ԳԵՆԵՐԱԼ ՕԳԱՆՈՎՍԿԻՑ

Նոյն զօրավար Օզանովսկի թիւ 1709 հեռագրով կը գրէր Վան, զօրավար Նիկողայեւին:—

«Հրամանատարը հաստատեց Արամի նշանակումը Վանի համար, միայն այն պայմանով, որ ան լիովին ենթարկուի զինուորական իշխանութեանը, այն է երկրապահ զօրքի գլխաւորին, որ յետոյ պիտի նշանակուի: Արամի միջոցով պիտի կատարուին զինուորական իշխանութեան բոլոր կարգադրութիւնները»:

ԳԵՆԵՐԱԼ ՕԳԱՆՈՎՍԿԻՑ

Իսկ զօրախումբի կառավարիչ գեներալ-մայոր Նիկողայեւ թիւ 24 հրամանով կը հաղորդէր Պայազէտի զօրաբանակին, թէ

«Կովկասի զօրաբանակի հրամանատարը Արամը նշանակեց Վանի ժամանակաւոր նահանգապետ, այն պայմանով, որ ան ենթարկուի զինուորական իշխանութեան, այսինքն՝ բերդապահ զօրքի գլխաւորին եւ որ զինուորական իշխանութեան բոլոր կարգադրութիւնները կատարուին Արամի միջոցով»:

Զօրախումբի կառավարիչ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԻՍՅՕՐ ՆԻԿՈՂԱՅԵՎ

Ռուս բանակի հրամանատարութիւնը Վանի կառավարութիւնը կը յանձնէր Վանի հերոսամարտը դարբնող վանեցուն եւ անոր մեծ առաջնորդ Արամին: Թէ Արամ եւ թէ վանեցին, շարունակելով մէկ ձեռքով զէնքին փարել, միւս ձեռքով կը լծուէին ինքնուրոյն, ստեղծալործ ու ազատ կեանքի մը հիմնաւորման:

Մայիս 8ին, իբրեւ Վանի շրջանի կառավարիչ Արամը ժողովուրդին կ'ուղղէր հետեւեալ կոչը, որ իր ոճով եւ բովանդակութեամբ կը մնայ իբրեւ թանկագին փաստաթուղթ մը:

Ահա այդ կոչը:—

«Հայ ժողովուրդին,

«Քաղաքացիներ՝,

«Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ եւ իրաւակարգ կը բանայ մեր քաղաքի եւ գաւառի իրաւագուրկ ժողովուրդին համար: Դարերու ստրկութեան եւ քաղաքական մեղումներու վախճանն է, որ մեզ կ'ապրիմք այս օրերուն. հայ ժողովուրդի շինարար եւ ստեղծագործ ոգիի ծնունդն է, որ մեզ կը տօնենք այժմ:

«Ռուս զօրքերու հրամանատարը, գեներալ Նիկոլայեւ, գնահատելով վասպուրականի հայ ժողովուրդի հերոսական ջանքերը՝ բուրբ կառավարութիւնը անգոր դարձնելու իր ազգասպան քաղաքականութեան մէջ եւ հաւանելով հայ ժողովուրդի մշակութային ճշգրտումները, բարեհասնեցաւ 7 Մայիս, 1915, թիւ 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի եւ շրջանի կառավարիչ եւ կազմակերպել նոր գործը իր բոլոր նիւթերով:

«Այսօր արդէն կազմակերպուեցան ոստիկանական, դատական, գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքապետական եւ այլ վարչութիւններ:

«Ասով կը յայտարարեմ ամբողջ ժողովուրդին, որ նոր կառավարութիւնը կազմակերպուած ըլլալով, անհրաժեշտ է բոլոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախումբերուն, քաղաքի եւ շրջակայքի մէջ բնականօրէն վիճակ ստեղծելու համար:

«Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանաբան պիտի ունենայ — համախմբուիլ ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի եւ շրջանի մէջ, արժանի լինելու համար քաղաք դարձնելու մզուած պայքարին մէջ ինկած հերոսներու յոյսերուն եւ յիշատակին ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի մշա-

կոյրի պաշտօնի գիտակցութիւնը Փոքր Ասիոյ այս ծայրագաւառին մէջ:

«Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցութեամբ էր, որ հայ ժողովուրդի եւ իմ հանդէպ ցոյց տուաւ այդ մեծ վստահութիւնը:

«Քաղաքացիներ, ձեզ կը մնայ մեր այդ յաւակնութեանց եւ յոյսերուն ընդառաջ գացող յաղթական բանակի եւ գեներալի վստահութիւնը բացարձակապէս արդարացնել եւ աւելի լաւագոյնիմ արժանի եւ պատրաստ գտնուիլ»:

Վանի շրջանի կառավարիչ
ԱՐԱՄ

1915, Մայիս 8, Վան-Այդեստան

Այս աշխատութեան սահմաններէն դուրս է տալ պատկերը Վանի առաջին կառավարութեան եւ այն փայլուն ստեղծագործական կորովին ու եռանդին, զոր ցուցաբերեցին Արամն ու վանեցին այդ պատմական օրերուն:

Եթէ Վանի ինքնապաշտպանութիւնը հայ ժողովուրդի մարտական ընդունակութիւններու անհերքելի ապացոյցը եղաւ, Վանի կառավարութիւնն ալ անոր ստեղծագործական-պետական կեանքի առաջին արժանաւոր վկայականը մնաց: Թէ հերոսամարտի եւ թէ պետական շինարարութեան մէջ վանեցին եկաւ ապացուցանելու, որ հայը կատարելապէս արժանի է ազատ ու անկասի կեանքի:

Ստանձնելով Վանի կառավարիչի պաշտօնը, իր կազմակերպչական հոյակապ տաղանդով, ընդամէնը մէկ քանի օրերու մէջ, Արամ կրցաւ ոչինչէն, քառսէն ու աւերածութենէն, բառին իրական ու լայն առումով, ժողովրդական-վերաշինական կառավարութիւն մը ստեղծել, ստեղծագործական աշխատանքի լծել վանեցին, գաւառացի թէ կովկասահայ բոլոր կենսունակ ուժերը եւ օրէ օր, ժամէ ժամ ամրապնդել կառավարութեան հիմերը եւ դարձնել զայն ոչ միայն Վանի, այլեւ համայն հայ ժողովրդի առաջին պետական կեանքի յենակը:

Հակառակ իր կարճատեւ, ընդամէնը 70օրեայ գոյութեան, Արամի կառավարութիւնը, իր ստեղծագործական-կազմակերպչական թափով նոյնպէս պատմական աննախընթաց երեւոյթ մըն է մեր պատմութեան մէջ, ինչպէս որ պատմական շքեղ էջ մըն է Վանի հերոսամարտը:

Առաջին իսկ օրերուն կալմուկացի կառավարական հետեւեալ հիմնարկութիւնները.—

1. Նահանգային վարչութիւն, որ Վասպուրականի զլխաւոր գործադիր մարմինն էր.— Նահանգապետի վարչութեան կազմը հետեւեալն էր.—

Արամ՝ նահանգապետ. Սիրական Տիգրանեան՝ փոխ-նահանգապետ. Պարոյր Լեւոնեան՝ նահանգապետի օգնական. Արշակ Դարբինեան (ուսմկավար) ղիւանապետ. Կարապետ Աճէմեան (ուսմկավար), Հաշուակալ. Տիգրան Թէրլէմէղեան (անկուսակցական), գանձապահ. Յովհաննէս Միթարեան՝ քարտուղար (*):

2. Տնտեսական Մարմին, որ Վասպուրականի տնտեսական եւ եկամտային գործերու եւ խնդիրներու վարիչն էր.— Կազմը՝

Գէորգ Ճիտէչեան՝ նախագահ, Արմենակ Մարգսեան (անկուսակցական), վերաքննիչ, Յարութիւն Շալճեան (անկուսակցական), գանձապահ, Յակոբ Տէր Յակոբեան՝ Հաշուակալ, Գալուստ Թորգոմեան՝ ատենապետ, Կարապետ Զաքարեան՝ քարտուղար, Վարդան Դարբինեան (անկուսակցական), գործավար:

3. Քաղաքական վարչութիւն, որ քաղաքային խորհուրդի մը բոլոր իրաւասութիւններն ու պարտականութիւններն ունէր.— Կազմը.—

Պետրոս Մոզեան (անկուսակցական), քաղաքապետ. անդամներ՝ Արմենակ Վուվանիկեան, Վահրամ Տէր Պօղոսեան, Մկրտիչ Հիւսեան (անկուսակցական) եւ Վահան Մարութեան (անկուսակցական). Լեւոն Բուլղարացի՝ երկրաչափ, Լեւոն Գրիգորեան՝ առողջապահական քննիչ, Ղարիբջան Տէրտէրեան՝ գանձապահ, Գալուստ Բարեջանեան՝ ճարտարապետ, Տիգրան Յովհաննէսեան՝ քարտուղար:

4. Կրթական Տեսչութիւն, որ կը վարէր նահանգի կրթական գործը.—

Կազմը.—

Միքայէլ Մինասեան՝ կրթական տեսուչ, Եղիազար Ռչտունի եւ Մարտիրոս Նալբանտեան՝ անդամներ: Երեքն ալ անկուսակցականներ:

5. Երկրագործական Մարմին, որ պաշտօն ունէր զարգացնելու երկրագործութիւնը, հայթայթելու երկրագործական նորագոյն գործիքներ եւ երկրագործ դասին մէջ փոխառութեան գործը կազմակերպելու:

(*) Այն անունները, որոնց կուսակցական հանգամանքը նշանակուած չէ, պէտք է հասկնալ որ դաշնակցականներ են: (Օ. Մ.)

Կազմը.—

Պաշտուր Զենորեան՝ տեսուչ, Արշաիր Աւետարեան՝ օգնական: Երկուքն ալ անկուսակցական:

6. Առողջապահական Մարմին, որ պարտականութիւն ունէր հսկելու նահանգի սողողջատահան պայմաններու եւ քաղաքի մաքրութեան վրայ:

Կազմը.—

Բժ. Արտաշէս Բարալեան՝ նախագահ. անդամներ՝ Մամբրէ Մկրեան, Յակոբ Ծաղոյեան (անկուսակցականներ):

7. Առեւտրական Մարմին, որ պարտաւոր էր զարկ տալու արդիւնաբերական ձեռնարկութիւններուն, զարգացնելու վաճառականութիւնը եւ լուծելու առեւտրական դանդաղ խնդիրներ.—

Կազմը.—

Համադասպ Տէր Պօղոսեան՝ նախագահ. անդամներ՝ Աւետիս Երամեան, Յովհ. Շահպաղեան, Մկրտիչ Հիւսեան, Ղովհ. Փիրումեան (անկուսակցական վաճառականներ):

8. Ոստիկանական Տեսչութիւն, յատկապէս քաղաքի համար.—

Կազմը.—

Դաւիթ Փափաղեան՝ ոստիկանապետ, Ղեւոնդ Պանճեան օգնական, Պետրոս Գրիգորեան՝ օգնական ուսակցական բաժնի (վերջին երկուքը անկուսակցական): Ոստիկանական տեսչութիւնը իր տրամադրութեան տակ ունէր հինգ շրջանապետներ, իրենց մէկական օգնականներով եւ քարտուղարներով, 60 հետեւակ եւ 12 հեծեալ ոստիկաններով:

9. Դատական. ա) Հաշտարար դատարան՝ Ռուբէն Շատուրեան՝ դատաւոր (անկուսակցական), մէկ քարտուղար եւ մէկ գործավար. բ) Հարցաքննիչ դատաւոր՝ Պօղոս Զիտեան (անկուսակցական). գ) Երջանային Դատարան՝ Աղարէկ Համբարեան՝ նախագահ (անկուսակցական). Եղիշէ Բաղունի (անկուսակցական), անդամ, Արսէն Հացադործեան՝ ղիւանապետ, Պաշտուր Գէորգեան՝ քարտուղար եւ երկու գործավարներ. դ) Ընդհանուր դատախազութիւն՝ Հրանդ Գալիկեան (հնչակեան), ընդհանուր դատախազ. ե) Գործադիր՝ (դատարանի որոշումները գործադրող), Դերջան Սինանեան (անկուսակցական) եւ քարտուղար մը. զ) Ընդհանուր քննիչ՝ Կարապետ Այճեան (անկուսակցական) եւ քարտուղար մը:

Այս բոլոր հիմնարկութիւններու նախագահները, Արամի նախագահութեան տակ կը կազմէին յատուկ մարմին մը նահանգային

խորհուրդ անունով, որ կը կարգաւորէր նահանգի հողային, կրթական, ոստիկանական, սահմաններու ապահովութեան, հարկային եւ այլ խնդիրները: Այդ մարմինը օրէնսդրական էր եւ կը տնօրինէր նահանգային բոլոր ընդհանուր խնդիրները:

Արագօրէն կազմակերպուեցան նաեւ մերձակայ եւ հեռուոր դաւառները, ուր զնոց հաստատուելու վան թափուած զաղթականութիւնը եւ ուր հայ մարտիկն ու յեղափոխական գործիչը ազատագրական պայքարին զուգընթաց կը լծուէին պետական շինարարութեան գործին: Այսպէս, օրինակ, արագօրէն կազմակերպուեցան հետեւեալ դաւառները, իրրեւ առանձին դաւառապետութիւններ, հետեւեալ դաւառապետներով.—

1. Շատախ — Սամուէլ Մեսրոպեան,
2. Գաւաշ — Ղեւոն Շաղոյեան,
3. Արճէշ — Նշան Ժամադործեան,
4. Ալճաւազ — Փանոս Մարութեան (անկուսակցական),
5. Հայոց Զոր — Նալբանտ Նշան,
6. Բերկրի — Գաղիկ Թոխմախեան (անկուսակցական),
7. Արտամէտ — Յովհաննէս Արտամերտեան,
8. Շահպաղի — Արէլ Աղաւեսեան,
9. Ալիւր (Թիմար) — Յարութիւն Հիւսեան,
10. Ծանիկ (Թիմար) — Արզար Սէմէրճեան (անկուսակց.),
11. Արճակ — Երին Յակոբեան,
12. Պօշակ — Արմենակ Տէր Պօղոսեան (ուսակցական),
13. Մոկս — Գրիգոր Նահապետեան,
14. Նորտուզ — Պետրոս ԿՖէնտի (անկուսակցական):

Իւրաքանչիւր դաւառապետութիւն ունէր իր շրջանային տընտեսական, դատական, քաղաքապետական եւ ոստիկանական մարմինները: Երջանային վարչութեան կից կազմուած էր առանձին փոքրիկ հիմնարկութիւն մը — գաւառային վարչութիւն անունով, որ կը վարէր դաւառապետութիւններու գործը: Գաւառական վարչութիւններու հետ միաժամանակ կազմակերպուեցաւ դաւառական ոստիկանութիւնը: Ամբողջ ոստիկանութեան թիւը կը հասնէր 360ի, 40 տասնապետներով: Ոստիկանութեան կէս մասը հեծեալ էր:

Կառավարութիւնը կազմեց իր ելեւմուտքի նախահաշիւը, որը 8 ամսուայ համար (1 Մայիս 1915—31 Դեկտեմբեր 1915) 178,340 ըրուպի էր: Եկամուտի խոշոր մասը պիտի հայթայթուէր կալուածային, դատական, զորոյմարթի, քաղաքապետական եւ այլ տուրքերէ եւ, մանաւանդ, լքուած կալուածներու եւ ցանքերու ար-

դիւնքներէն: Մօտաւորապէս նոյնքան զուժար նախատեսուեցան պաշտօնէութեան ոռծիկներու, ոստիկանական, քաղաքապետական, առողջապահական, խնամատարական, վերաշինական եւ այլ ծախսերու համար: Ոստիկանը, փոխանակ իր առանձին համազգեստը ունենալու, թեւին կը կրէր սպիտակ լայն ժապաւէն մը, վրան կարմիր տառերով ոստիկան գրուած:

Մինչ կառավարութիւնը օրէ օր կ'ուժեղանար եւ ընդհանուր հեղինակութիւն եւ վստահութիւն ձեռք կը բերէր, Կովկասէն եւ նոյնիսկ հեռաւոր Ռուսաստանի հայ դաղութներէն Արամի եւ կառավարութեան անունով կը ստացուէին խոշոր նուիրատուութիւններ: Կովկասեան բոլոր ազգային հասարակական կաղմակերպութիւնները իրենց յոյսի աստղը կը համարէին Վանն ու Վանի մանուկ կառավարութիւնը: Տակաւ կը փրթէր յորձանքը կամաւորական գունդերու եւ մէկ երկու շարքներուն մէջ Վան կը հասնէին Դրոյնէն զատ Վարդան, Քեռի, Համազասպ, Սեպուհ... Քիչ մը ուշ, բայց Վան կը մտնէր Անդրանիկը, որուն ի պատիւ Արամ եւ վանեցիներ չքեղ թէյյասեղան մը կաղմակերպեցին Այգեստանի գեղեցիկ այգիներէն մէկուն մէջ:

Օրեր ետք Վան կը մտնէր նաեւ Վասպուրականի եւ հայութեան ընդհանուր թշնամին Դիլմանի տակ ջարդուփշուր ընող մեծ եւ ծեր ռազմիկը — զօրավար Նազարբէկեան: Այցելելով եւ ծանօթանալով Արամին, ան երջանկութենէ խոնաւած աչքերով թոթովեց. «Տեսնելով ձեզ, ձեր երկիրը եւ ձեր ժողովուրդը, ես հպարտ եմ որ հայ եմ»...

Վան կը լեցուէր մանաւանդ կովկասահայ լաւազոյն մտաւորականութիւնը: Լուռ ու անաղմուկ Վան կը մտնէր Դաշնակցութեան հոյակապ գլուխը — Ռոստոմը: Կու դային նաեւ անոր արժանաւոր ընկերներն ու դործակիցները, որոնք ապագային Անկախ Հայաստանի մեծագոյն զործիչները պիտի լինէին — Համօ Օհանջանեան, Սիմոն Վրացեան, Աղբալեան, Սարգիս Արարատեան, բժ. Բաբալեան, Յակոբ Տէր Յակոբեան եւ այլն:

Մտաւորական այդ ընտանիքին մէջ էր նաեւ Վանի երկրորդ Արամը — Կոստի Համբարձումեան, որը այլեւս ընդմիշտ չկրցաւ բաժնուիլ իր սիրելի Վանէն եւ վանեցիէն: 1917 թուի Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներուն Քիֆլիսի մէջ գումարուած Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան Ռայոնական ժողովին մէջ Կոստի թեկնածութիւնը դրուած էր իրբեւ համառուսական Սահմանադիր ժողովի պատգամաւորի: Մինչ ուրիշ թեկնածուներու շուրջ բազմաթիւ առարկու-

թիւններ կային, Կոստի շուրջ, ընդհակառակը լիակատար համաձայնութիւն կը տիրէր: Ամենէն անհաշտներն անգամ գիտէին, որ Կոստին Սահմանադիր ժողովին մէջ բարձր կը պահէ յեղափոխական Դաշնակցութեան անունն ու դրօշակը: Բայց, յանկարծ, որոտալից ձայն մը յեղաշրջեց բոլոր տրամադրութիւնները: Արամի ձայնն էր այդ. Արամ դէմ էր Կոստին Սահմանադիր ժողով զրկելուն:

«Չգիտեմ ե՞րբ պիտի գումարուի եւ կը գումարուի՞» արդեօք ձեր Սահմանադիր ժողովը, բայց այնտեղ Վասպուրականը կայ եւ վասպուրականը չի բողբոլ, որ դուք Կոստին բաժնէք իրմէ: Կոստին Վասպուրականինն է: Այս ժողովի պարտքն է Կոստին գոհաբերել Վասպուրականին»...

Ինչպէս միշտ, Արամ կը խօսէր ահարկու անկեղծութեամբ մը եւ յուզումով մը: Եւ այդ անկեղծութեան առաջին արձագանգն ինքն Կոստին տուաւ, համեստ ու լռիկ կանպնելով եւ յայտարարելով.

«Ես պատրաստ եմ լսելու Արամի եւ Վասպուրականի կոչը. ես Վասպուրական կ'երթամ»...

Քանի մը օր ետք այլեւս Կոստին չերեւաց ժողովին մէջ: Կոստին անդարձ մեկնած էր Վասպուրական, ուր մնաց մինչեւ 1918ի աղէտաւոր դարունը... մնաց երկար, մինչեւ իրար ետեւէ կը լըքուէին ու թշնամուն կը տրուէին Երզնկա, Կարին, Խնուս, Ալաշկերտ, Բայազետ, նոյնիսկ Սարիղամիշ, նոյնիսկ Իգտիբի բարձունքները:

Կոստին վանեցու հետ մնաց այնքա՛ն երկար, մինչեւ որ նախապատերազմեան բոլոր շրջանները դրաւուեցան թուրքերու կողմէ, մինչեւ որ թրքական զրոհները ծեծեցին երկրորդ անգամ պաշարուած Վանի դուռները, երբ Կոստին, Լեւոնի եւ Պուլղարացիի հետ հարկադրուած եղաւ թանկազին սուանդի պէս իր թեւերուն տակ կրծկել Վանի տասնեակ հազարաւոր հայութիւնը եւ նահանջէ նահանջ ու կռիւէ կռիւ փոխադրել մինչեւ հեռաւոր Պարսկաստանի խորքերը, աւելի, աւելի ազահով անկիւններ, ուր թուրքի գիշատիչ սուրբ անգոր էր այլեւս թափանցելու... Կոստին եղաւ մէկը Վանի եւ Սարմաստի տասնեակ հազարաւոր հայութեան իրական փրկիչներէն: Ան հասցուց այդ հակայական բազմութիւնը մինչեւ վերջին կայանը, ուր այլեւս անգլիական բանակն էր եւ, եղերական վայրկեանի մը մէջ, Սային Կալայի մօտ, երբ արդէն կը կարծէր, թէ կը սեղմէ բարեկամ անգլիացի սպայի ձեռքը, իր գեղեցիկ դէմքին ընդունեց անգլիացի սպայի տարադով ծպտուած թուրք ոճրագործի մը սուրի մահացու հարուածը... Արամի ահաւոր ուխտը կատարուեցաւ եւ Կոստին զոհուեցաւ Վասպուրականին...

Վան կու գային ոչ միայն յեղափոխական եւ մարտական դործիչներ, այլեւ ամէն զասի մտաւորականներ, ի շարս որոնց մեր նորագոյն ամենէն մեծ բանաստեղծը՝ Յովհաննէս Թումանեան, որու գրիչը այս անդամ Աղթամարը պիտի երգէր նոր եռանդով եւ հայ ժողովուրդի ըմբոստացումը՝ նոր շեշտերով...

Բայց աւելի փառահեղ ու կենսունակ էր, այդ օրերուն, վանեցին ինքը: Դարերու մոխիրներէն յարութիւն առած փիւնիկը կ'երդէր իր սրբազան արեւադալը: Սոսկ բանաստեղծական արտայայտութիւն մը չէ աս, այլ ճշգրիտ իրողութիւն: Աղատադրուած դարերու ստրկական շղթաներէն, պարտութեան մատնած իր պատմական թըշնամին, ձեռքը մեկնած կովկասի իր հարազատներուն, ճեղքած եւ միացուցած կովկասը Հայաստանէն բաժնող քաղաքական-աշխարհագրական սահմանագիծը, լեցուած խորը հաւատքով եւ վստահութեամբ դէպի իր աւելի լուսաւոր ապագան, վանեցին, բառիս ամենալայն առումով, նուիրուած էր հոգեւոր-քաղաքակրթական, ստեղծագործ, ազատ ու ինքնուրոյն կեանքի մը հիմնաւորման:

Վանի մտաւորականութեան եւ երիտասարդութեան խոշոր տոկոսը լծուած էր, ամենէն առաջ, կառավարութեան շինարարական աշխատանքներուն: Անոր ներդոր աջակցութիւնը, հետու կը պահէր զայն անխուսափելի թերութիւններէ, առանձնայատուկ շեշտ մը կու տար անոր իբրեւ ռամկավար կառավարութեան մը եւ կ'ապահովէր անոր հեղինակութիւնը ժողովրդական լայն զանգուածներուն մէջ:

Մշակութային լայն եւ նոր շարժում մը կը սկսէր Վանի հասարակական կեանքին մէջ: Ընդամէնը քանի մը շարժումն ընթացքին կը սկսէին հրատարակուիլ մէկէ աւելի թերթեր: «Աշխատանք»ը դարձաւ կեդրոնական օրկանը ոչ միայն Վասպուրականի Հ. Յ. Դաշակցութեան, այլեւ Վասպուրականի ամբողջ հայութեան: Ան նոյնիսկ կը սկսէր քննադատել կառավարութեան մէկ քանի փոքրիկ թերութիւնները, ձաղկել վանեցու մէկ քանի բացասական գիծերը եւ առհասարակ, հանդէս բերել լայն, համահայկական ու ռամկավարական ձգտումներ:

Ներկայացումներ, նուագահանդէսներ, երեկոյթներ անպակաս եղան: Հասարակական ժողովները, զրական-քաղաքական հարցերու շուրջ դասախօսութիւնները ամէնօրեայ զրադումներէն մէկն էին Վանի երիտասարդութեան: Տեղի ունեցան մէկ քանի սրտառուչ հանդիպում-թէյնասեղաններ ի պատիւ կամաւորական գունդերու, ի պատիւ Ռոստոմի, ի պատիւ Թումանեանի: Վանի ծաղիկ երիտասարդութիւնը անձամբ կը հաղորդուէր Ռոստոմներու եւ Թումանեան-

ներու շունչով եւ Ռոստոմներն ու Թումանեանները, յանձին վերածնունդ Վանի, կը ճաշակէին ազատ հայրենիքի իրենց հոյակապ երազը...

Հերոսամարտէն առաջ եւ հերոսամարտի ընթացքին պայութիւն ունեցող բոլոր ազգային կամ հասարակական խմբակցութիւնները շարունակեցին իրենց աշխատանքները: Կազմուեցան աւելի նոր հիմնարկութիւններ, որոնցմէ աչքի ընկաւ Որբախնամ Մարմինը, որ «Աշխատանք»ի շուրջ հաւաքուած երիտասարդներու ղեկավարութեամբ սկսաւ քաղաքի եւ դաւառի որբերու հաւաքումին, կեդրոնացումին եւ դաստիարակման:

Առաջիկայ դպրոցական տարեշրջանի համար կազմուեցան յատուկ ծրագիրներ: Որոշուած էր դպրոցական խիտ ցանցերով պատել զիւղ եւ քաղաք: Ծրագրուեցան կովկասահայ նոր ուժեր հրաւիրել եւ Վասպուրականի կրթական դործը ղենել նոր եւ աւելի լայն հիմերու վրայ:

Տասնեակ հազարաւոր դաղթականութեան տեղաւորման եւ խնամատարութեան հոյսը իր վրայ վերցուցած էր մանուկ կառավարութիւնը: Բառիս բուն իմաստով, մէկ քանի ամսուան ընթացքին, դաղթական-հողագործի մէկը չէր մնար բովանդակ Վասպուրականի մէջ:

Տնտեսական-շինարարական-արդիւնաբերական կեանքը մասնաւոր ուժգնութեամբ մը առաջ կը տարուէր: Այս մարզին մէջ կառավարութեան բնական աջակիցը ինքը — վանեցին էր իր ինքնատիպ տաղանդով եւ անվիճելի ընդունակութիւններով: Վանի շուկան հըրդեհուած ու մոխրակոյտի վերածուած էր եւ ահա վանեցին մէկ քանի շարժումն ընթացքին ստիպուած էր հսկայական քաղաքի եւ բանակի առեւտրական կարիքները հոգայ: Տուները կը քանդուէին, փողոցները կը յարդարուէին, պատերը կը ծակծկուէին եւ մէկ քանի օրերու, մէկ քանի ժամու մէջ Այգեստանի գլխաւոր փողոցներու եւ թաղերու անկիւնները նոր խանութներ, նոր արհեստանոցներ, նոր շուկաներ կը շինուէին. սրճարաններ, ճաշարաններ, հիւրանոցներ, ժողովրդական ժամադրավայրեր, որոնք առաջ մեծ մասամբ Քաղաքի մէջ էին, հիմա վանեցու արագ եւ ճարտար շարժումներով, կարծես մոգական գաւազանի հարուածով Այգեստան կը փոխադրուէին եւ հայկական թաղերու մէջ կը կառուցուէին: Վանեցի տաղանդաւոր արհեստաւորը, համեստ ու խոնարհ, կ'անցնէր իր դազգեախին եւ իր քաղաքակրթական տուրքը կու տար վերածնունդ Վասպուրականին:

Անօրինակ եռուղևի մէջ էին վանեցի հռչակաւոր մանր առեւ-

տրրականը եւ խոշոր վաճառականը: Անոնք կ'օլտադործէին բոլոր միջոցները, բոլոր նիւթերը, այսպէս կամ այնպէս բաւարարելու զիւրի, քաղաքի եւ բանակի կենսական պահանջները: Անոնք կ'ուզէին հարստանալ, ճիշդ է, բայց եւ հարկադրուած էին ամիսներու քայքայումը փոխարինել նոր տնտեսութեամբ: Արդէն իսկ առեւտրական տուներ եւ ընկերութիւններ կը կազմուէին Վանէն Կովկաս եւ Պարսկաստան արտածման ու ներածման ձեռնարկութիւններու համար:

Հայ գիւղացին ձեռք կ'առնէր մանուղը՝ հնձելու սեփական եւ լքուած արտերը, կը վազէր արօրին եւ գութանին, վաղուայ հացը հանելու համար: Հայ գիւղացին կը շինէր, կը նորոգէր իր քանդուած օջախը, կ'աջակցէր նոր կառավարութեան, հսկայական գիրութիւններ կու տար ոռոս բանակին, կը կապէր իր հազարաւոր վէրքերը եւ ստեղծագործական խաղաղ աշխատանքի լոյսին տակ կը պահէր իր կնճոռոտ ճակատը... Հայ գիւղացին փոխադարձաբար օգնութեան կը փութար հարազատ կառավարութիւնը, տրամադրելով անոր իր ամենէն ընտիր զաւակները իրրեւ կառավարիչներ, կը ծրարէր հայ գիւղը սոռոգել, նոր մեթոտով երկրաւործական գործիքներ հասցնել եւ, վերջապէս, հայ գիւղը ունենալ իրեն իրրեւ հզօր յենարան:

Թէ կառավարութիւնը եւ թէ վանեցին առանձնապէս մտահոգուած էին թշնամու լքած բազմաթիւ շէնքերով, արտերով, այգիներով: Բոլոր այդ լքուած կալուածները յայտարարուեցան կառավարութեան սեփականութիւն եւ վարձու տրուեցան զիւրի եւ քաղաքի ժողովուրդին: Կառավարութիւնը հսկայական եկամուտներ կը ստանար եւ գիւղացին ու քաղաքացին, իրենց սեփական կալուածներու նման դուրգուրագին կը պահէին եւ կը խնամէին զանոնք:

Որոշ սահմաններու վրայ եւ աւելի խուլ գաւառներու մէջ դեռ վերջնականապէս անհետացած չէր թրքական եւ քրտական վտանգը: Կառավարութիւնն ու ժողովուրդը ձեռք ձեռքի, սեփական ուստիկանութեանէն դատ, զինուած ուժեր կը տրամադրէին թէ կամաւորական դունդերուն եւ թէ ոռոս բանակին:

Այս բոլոր ստեղծագործական ճիգերու, վերածնութեան նոր շրջանի եւ հայկական առաջին փոքրիկ կառավարութեան ոգին ու յենարանը, ինչպէս միշտ, Հ. Յ. Դաշնակցութիւնն էր, իր կեդրոնական եւ դաւառական մարմիններով, իր լայն կազմակերպուած զանգուածներով, իր անձնուրաց հարիւրաւոր գործիչներով եւ իր արժանաւոր ղեկավար Արամով:

Ահա ընդհանուր գիծերով պատկերը Վասպուրականի 70օրեայ

կառավարութեան եւ իր պատմական վայրկեանին: Վայրկեան մը, որ հակառակ իր եղբրական վախճանին, մեր նորագոյն պատմութեան ամենէն շքեղ մէկ էջն է, լի անսահման կարելիութիւններով եւ անվիճելի ապացոյցներով՝ թէ Հայաստանի պատմական մէկ որորանի — Վասպուրականի մէջ, հայ ցեղի մէկ հատուածը կրցաւ խորտակել իր թշնամին, տիրանալ իր երկրին, ազատութիւն խլել հզօր ոռոս բանակէն եւ ընդունակ ու արժանի լինել ազատ ու անկախ կեանքի...

«Հայրենիք» ամս., Գ. տարի, թիւ 7, Մայիս 1925

Զ.

Եւ այս բոլոր յայտնի ու անյայտ հերոսներու, հազարեակ մը մարտիկներու, մարտական ու ստեղծագործական բոլոր կազմակերպութիւններու, Վանի ամբողջ ժողովուրդի դիմադրական օրհասական անհեղ պայքարի ոգին ու ղեկավարը Արամը եղաւ. Արամ իր բարոյական շունչով, իր անվիճելի հեղինակութեամբ, իր քաղաքական — յեղափոխական — հասարակական հարուստ անցեալով, իր կազմակերպչական ինքնատիպ տաղանդով, իր հոյակապ կամքով, մարդկային հոգիները դիւթելու, ղեկավարելու բացառիկ հոգեկան ուժով, իր կանխատես հոգով, իր ամէնօրեայ, ամէն ժամեայ լարուած ուղեղով եւ սրտով, Արամ՝ իրրեւ անզուգական մէկ ղեկավարը Հ. Յ. Դաշնակցութեան՝ Վանի հերոսամարտի յաղթական դարբինը եղաւ եւ մնաց արժանաւոր Մեծ Զաւակը ոչ միայն Վասպուրականի, այլեւ բովանդակ հայութեան...

Արամի ղեկավարութեան տակ էր եւ Հ. Յ. Դաշնակցութեան տանեակ տարիներու յեղափոխական կռուի դաստիարակութեամբ սնուելով էր, որ Վանի հայութիւնը կերտեց իր ապրիլեան դիւթական հերոսամարտը: Եւ եթէ քաջութեան եւ հերոսութեան ստորոգելին զոհարելութիւնն է, խիղախութիւնը, ճարպիկութիւնը եւ կամաւոր ու գիտակից յանձնառութիւնն է մահուան՝ յանուն ընդհանուրի եւ զաղափարի — ապա կարելի է առանց չափազանցութեան յանցանքի մէջ խրելու անկեղծօրէն յայտարարել, թէ վանեցին իր հասարականութեան եւ ամբողջութեան մէջ հերոս էր պատմական այդ երեսուն օրերուն: Աւելին, վանեցին հայ ցեղի ստեղծագործական, դիմադրական եւ ուղիղական ոգիի իրական մարմնացումն էր:

Վկայ՝ իր հերոսամարտը իր յաղթական վախճանով եւ հայկական առաջին սպասութեամբ, որ ստրկական դարերու եւ իր ժամանակի մէկ միլիոն նահատակներու եւ ամայացած Հայաստանի սպաւոր Փոնին վրայ կը կենայ իբրեւ սրբազան Ներշնչարան՝ ներկայ եւ դալոց սերունդներուն համար...

«Վանի ինքնադաշտպանութիւնը»
«Հայրենիք» ամս., Յունիս 1924—Մայիս 1925

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ (ԿՈՄՍ)

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԽՈՐՀՈՒՐԴ

Երկիրը աւերակ, անապատի վերածուած էր: Բաղմահազար փախստական հայութիւն լեցուած էր Կովկաս: Մեր ներքին գաւառներու նորածին մտաւորականութիւնը մտամոլոր, մայր հողէն ու բոյներէն հալածական թռչուններու պէս՝ քաղաքէ-քաղաք թափառեցաւ, յոգնած-պարտասած՝ հանդէսը փափաք ունէր. զբաղում կը փնտռէին, մոռնալ կ'ուզէին հայրենիքէն վտարուածի վիշտը: Կ'ուզէին բանի մը կապուիլ, նպատակ մը որոնել: Միւս կողմէ ռուս բանակը մխրճուած էր թրքահայկական գաւառներէն շատերու մէջ, ուր դեռ կային բեկորներ մեր ժողովուրդէն եւ մեծաքանակ եւ ցանուցիւր որբեր...: Պէտք էր համախումբ օժանդակութիւն ընծայել, ամբակուռ կազմակերպութիւն մը ստեղծել եւ օգնութեան հասնիլ անոնց... վերջապէս, տէր դառնալ հողմաւար այդ ժողովուրդին:

Այս նպատակով էր, որ 1916 Ապրիլին, Արամի, ռամկավարներէն՝ Արտ. Գարրինեանի եւ հնչակեաններէն՝ Միրզախանեանի հետ երկար խորհրդակցութիւններէ վերջ, որոշեցինք Համազումար մը հրաւիրել Արեւմտահայ մտաւորականներէ եւ հանրային այլ գործիչներէ՝ ոչ մէկ խտրութիւն դնելով կուսակցական այլ դաւանանքներու մէջ:

Կենսական էր նախ՝ ճշդել փախստական ժողովուրդին քանակը եւ վայրերը, ուր ժամանակաւորապէս տեղաւորուած էին. յուսակազրել օգտակար ուժերը, ճշդել կարիքները ո՛չ միայն սնունդի, այլեւ կրթական, տնտեսական, առողջապահական եւ Կովկասի մէջ՝ անոնց իրաւական կացութեան. վերջապէս, ռուս կառավարութեան հետ բանակցութիւններ վարել՝ փախստականներու տեղաւորման եւ յարակից խնդիրներու համար: Այսպէսով գումարուելիք համազումար

մարի օրակարգը կազմուած էր: Ներկայացուցիչներ պիտի գային բոլոր շրջաններէն:

Համազումարը որոշուեցաւ հրաւիրել Երեւանի մէջ. նախաձեռնող նոյն անձերը Երեւան մեկնեցան նախապատրաստական աշխատանքներու համար:

Երեւանի առաջնորդ (ապագայ Կաթողիկոս) Խորէն Արք. Մուրաթեկեանէն խնդրուեցաւ Առաջնորդարանի շրջափակին մէջ գըտնըող դպրոցին սրահը մեղի տրամադրել իբրեւ ժողովատեղի: Առաջնորդը սիրով համաձայնեցաւ:

Մայիս մէկին Համազումարի հանդիսաւոր բացումը կատարուեցաւ: Գէորդ Ե. Կաթողիկոսը, իբր ներկայացուցիչ, զրկած էր Գէորդ եպօ. Չէօրէքճեան (յետագային՝ Կաթողիկոս) և Խորէն արքեպիկոպոսը: 80 պատգամաւորներէն 15ը եկած էին բուն իսկ Երկրէն, 27 Կոստանտնուպոլիսէն, 14 զանազան ընկերութիւններէն, 3 մամուլէն, խորհրդակցական ձայնով՝ 11 հոգի և 6 հրաւիրեալներ:

Պուռն բազմութեան ներկայութեան երեւցաւ Անդրանիկը. ժողովուրդէն շատերը հրճուանքով շրջապատեցին զայն և կային նոյն իսկ, որ իր քղանցքներն ու թեւերը կը համբուրէին...:

Շանթը և Արամը նախադաս ընտրուեցան, իսկ Անդրանիկը, իբրեւ պատուոյ նախադաս՝ կատարեց ժողովի բացումը կարճ, բայց ջերմ խօսքերով: Ապա Արամը, շատ գեղեցիկ ճառով մը, ողջունեց պատգամաւորները և վեր հանեց Համազումարի կենսական նշանակութիւնը: Ոգեւորութիւնը անսահման էր խուռնեցած ունկնդիրներու մէջ:

Ժողովը տասը օր տեւեց: Միաձայն քուէարկուեցաւ բանաձեւ մը, որուն հիմնական կէտերը հետեւեալներն էին: Ա.— Թրքահայ ժողովուրդի Փիղիբական պահպանութիւնը: Բ.— Հայրենիքի վերաջինտութիւնը: Գ.— Նոր սերունդի կրթական, Փիղիբական և քաղաքացիական դաստիարակութիւնը: Այս հիմնական նպատակներուն հասնելու համար ընդունուեցան հետեւեալ էական միջոցները: 1.— Տեղական կազմակերպութիւններ ստեղծել Երկրի և Ռուսաստանի մէջ, ուր ապաստան գտած էին փախստականներ: 2.— Իրականացում արեւելահայ և արեւմտահայ զանգուածներու սերտ զործակցութեան: 3.— Օգնութեան դործի և նիւթական միջոցներու կեդրոնացում մէկ մարմնի մէջ:

Այս նպատակներու իրագործումին զործօններն էին Թրքահայ համազումարը և անկէ ըխող կեդրոնական խորհուրդը. վեր-

ջինս պիտի բաղկանար 15 անդամներէ և 10 փոխանդամներէ:

Խորհուրդին պիտի օժանդակէին հետեւեալ յանձնախումբերը՝ կրթական, որբախնամ, առողջապահական, պարենաւորման, իրաւական օշնութեան, աշխատանքի և տեղեկատուութեան: Համազումարը ընտրեց նաև վերստուղիչ — կամ վերահսկիչ — մարմին մը 5 հոգիէ բաղկացած:

Միաձայնութեամբ, Արեւմտահայ Խորհուրդի անդամներ ընտրուեցան՝ Անդրանիկը, խմբապետներ՝ Սեպուհը և Սմբատը, հնչակեաններէն՝ Հրանդ Գալիկեանը և Ժիրայր Միրզախանեանը, ռամկավարներէն՝ Արտակ Դարբինեանը, Աւետիս Թէրզիպաշեանը և Վարդան Պապիկեանը, Դաշնակցութենէն՝ Հմ. Մանուկեանը, Լ. Շանթը, Տոքթ. Պոնարարդեանը, Կարօ Սասունին և Վահան Փափազեանը. սոց. դեմոկրատներէն՝ Գուրգէն Հայկունին, չեզոք՝ Յակոբ Տէր Զաքարեանը և Զապէլ Եսայեանը, որ այն ատեն նոյնպէս դաշնակցական կը համարէր ինքզինքը:

Վերստուղիչ Յանձնախումբ՝ Սերովբէ Կիւլպէնկեան, Արշակ Սաֆրաստեան և Եզնիկ Քաջունի:

Համազումարի ցրուելէն վերջ, Արեւմտահայ Խորհուրդը իր մէջէն ընտրեց հինգ անձերէ բաղկացած զործադիր մարմին մը — «Պիւր» — որ պարտականութիւն ունէր վարելու և զործադրելու արեւմտահայութեան վերաբերող թէ՛ համազումարի և թէ՛ Խորհուրդի որոշումները: Գործադիր այդ մարմնի իբր անդամ ընտրուեցան Վ. Փափազեան՝ նախադաս (դաշնակցական), Աւ. Թէրզիպաշեանը՝ փոխ նախադաս (ռամկավար), անդամներ՝ Արտաշէս Դարբինեան (ռամկավար), Կ. Սասունի (դաշնակցական), Տէր Զաքարեան (ռամկավար) և Հ. Գալիկեան (հնչակեան):

Արեւմտահայ զործադիր մարմինը հետզհետէ մասնաճիւղեր կազմեց թէ՛ Թրքահայաստանի զբաւուած վայրերու և թէ՛ Կովկասի և Հիւս. Կովկասի զանազան վայրերու մէջ: Այսպէս տարածուած՝ հետզհետէ իր ձևը ամփոփեց բովանդակ Թրքահայութեան հանրային ղեկավարութիւնը և դարձաւ տեսակ մը Ժամանակաւոր կառավարութիւն, ըստ ամենայնի վայելելով նաև կովկասահայ զանազան ընկերութիւններու և միութիւններու սրտադին օժանդակութիւնը, ինչպէս՝ Կովկ. Բարեկործական և Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւններու, Մոսկուայի Կոմիտէի, Եղբայրական Օգնութեան, Նպաստամատոյց Մարմնի և այլն:

Ինչ որ անկեղծ ցաւով նկատեցի, և այդ առթիւ արտայայտեցի իմ ցասումը՝ նեղմիտ մտայնութիւնն էր արեւմտահայ համա-

գումարի որոշ հոսանքներու եւ քանի մը ազդեցիկ անձերու — Արամին չուղեցին ընտրել, որովհետեւ ծագումով թրքահայ չէր...: Մարդ մը, որ իր զիտակցական տարիքէն նուիրուեցաւ թրքահայ դատին եւ յեղափոխական թափով ու մոլեռանդօրէն՝ նետուեցաւ անոր ազատագրական գործին, կրեց անհուն հոգեկան եւ Ֆիզիքական տառապանք այդ ժողովուրդին համար. բայց... ծագումով իրենցմէ չհամարուեցաւ — անհեթեթ եւ անարդար էր:

«Իմ յուշերը», Բ. հատոր, էջ 438-441

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ՅԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵՆ

Երեւանի Ազգ. Խորհուրդը, որ կազմուած էր Թիֆլիսի Հայոց Ազգ. Խորհրդի ձեւով՝ կուսակցութիւնների ներկայացուցիչներից, իր գոյութեան սկզբի շրջանում, անգոյն եւ անջիղ մի մարմին էր, որ գնում էր դէպքերի հոսանքի յետեւից: Ինքնուրոյն նախաձեռնութիւնից զուրկ՝ շարժում էր Թիֆլիսից եկած հրահանգներով: Նրա մէջ մտնում էին թեմական առաջնորդ Խորէն եպս.ը, Մ. Մուսինեանը (անկախ), Գր. Տէր-Պաշտորեանը (ժող.), Դ. Զուբեանը (ս.-յ.), բժ. Գր. Տէր-Յակոբեանը (ս.-յ.), Մ. Յարութիւնեանը (դաշնակցական), Ա. Աստուածատրեանը (դաշնակցական), Թ. Նիկողոսեանը (դաշնակցական) եւ այլն:

Երեւանի Ազգ. Խորհուրդը կեանք ստացաւ միայն 1917ի Դեկտեմբերի վերջերին, երբ Թիֆլիսից եկաւ Հայ Ազգ. Խորհրդի լիազոր ներկայացուցիչ Արամը: Ազգ. Խորհրդի առաջին իսկ նիստում նա տուեց ընդարձակ զեկուցում ընդհանուր քաղաքական դրութեան ու Թիֆլիսում տիրող մտայնութեան մասին եւ յայտարարեց, որ ո՛չ մի տեղից չկայ եւ ո՛չ մի յոյս. պէտք է լարել սեփական ուժերը՝ ապահովելու համար ճակատն ու թիկունքը: Եւ առաջարկեց անմիջապէս վերակազմել Ազգ. Խորհուրդը, ընտրել փոքրակազմ ու դիւրաշարժ մի մարմին՝ տալով նրան արտակարգ իրաւունք գործելու Ազգային Խորհրդի գծած սկզբունքների սահմանում:

Ազգ. Խորհուրդը միաձայնութեամբ ընդունեց Արամի առաջարկը եւ ընտրեց Ազգ. Խորհրդի իրաւունքներով մի մարմին՝ Յատուկ կոմիտէ՝ տալով նրան երեք ամսով գործելու կատարեալ ազատութիւն: Երեք ամսից յետոյ նա զեկուցում էր ներկայացնելու Ազգ. Խորհրդին, եւ վերջինս, ի հարկին, կարող էր երկարաձգել նրա լիա-

գորութիւնները կամ լուծել: Յատուկ կոմիտէի մէջ ընտրուեցին Երեւանում մեծ յարգանք վայելող հասարակական գործիչ Մկրտիչ Մուսինեանը, որ այն ժամանակ ո՛չ մի կուսակցութեան չէր պատկանում եւ միայն 1919 թուին մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, Արշալոյս Աստուածատրեանը, Սահակ Թորոսեանը, իբրեւ նահանգական կոմիտար, Հ. Զինւ. Միութեան ներկայացուցիչը եւ Արամը ի պաշտօնէ: Յատուկ կոմիտէի նախագահ ընտրուեց Մ. Մուսինեանը, քարտուղարի պաշտօնով հրաւիրուեց Սարգ. Օհանջանեանը: Յատուկ կոմիտէն դարձաւ Երեւանի փաստական իշխանութիւնը:

Յատուկ կոմիտէի, ինչպէս եւ նրա հետ համերաշխ գործող զինուորական կոմիտար Դրոյի ու Երեւանի նահանգի հայկական զորքերի ընդհանուր հրամանատար զօր. Սիլիկեանի գլխաւոր մտահոյսովիւնը ռազմաճակատի ամրացումն ու թիկունքի անդորրութեան պահպանումն էր: Այդ նպատակով, հէնց առաջին նիստում, Յատուկ կոմիտէն որոշեց զէնքի տակ առնել մինչեւ 28 տարեկան բոլոր զինապարտներին: Այդ իմաստով Արամը զրեց մի կոչ, որ եղաւ Յատուկ կոմիտէի № 1 կոչը: Նրա մէջ բացատրուեց էր կացութեան լրջութիւնը եւ, յանուն Ազգ. Խորհրդի, հրաւէր ուղղուեց զինապարտներին՝ երեք օրուայ պաշարով ներկայանալ տեղական զինուորական կենտրոնները: Ժողովուրդը արտակարգ վստահութեամբ արձապանու տուեց իրեն ուղղուած կոչին, եւ, հակառակ ծննդեան սոսնձերին, ամէնքը շտապեցին ներկայանալ իշխանութեան:

«Հայաստանի Հանրապետութիւն, էջ 120-121

ՄԱՍԻՍԻ ՆՈՎԱՆՈՒ ՆԵՐՔԵՒ...

Եւ խռովութիւններն ու բռնութիւնները չուշացան: Այստեղ ու այնտեղ սկսան կատարուել յարձակումներ պետական պահեստների եւ մասնաւոր խանութների ու հացի փուռերի վրայ: Դրութիւնը դառնում էր սպառնական: Անհրաժեշտ էր ուժեղ եւ արագ գործող, վճռական ու միակամ իշխանութիւն: Այդ իշխանութիւնը Արարատեան դաշտը ունեցաւ յանձին Արամին:

Այս պահանջի դիտակցութեամբ, Երեւանի ազգաբնակչութիւնն ու զինուորականութիւնը, կրղրումի անկման լուրի տպաւորութեան տակ, մի բազմամարդ ժողովում որոշեցին Արամին յայտարարել դիկտատոր եւ ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել նրա ձեռքը: «Մեր Հայրենիք» երգելով հաղարաւոր բազմութիւնը շարժուեց դէպի Արամի բնակարանը եւ յուզիչ հանդիսաւորութեամբ հռչակեց նրան դիկտատոր: Վրայ հասան քաղաքի զօրամասերը եւ երգուեցին հնազանդ լինել նորընտիր դիկտատորին: Այդ քայլին իր անվերապահ հաւանութիւնը տուեց եւ Ազգ. Խորհուրդը: Այսպիսով, Մարտի առաջին օրերից սկսած՝ Երեւանի բովանդակ իշխանութեան մարմնացումը դարձաւ Արամը, որ իր զարմանալի նրբամտութեան ու տակտի շնորհիւ կարողացաւ շողկապել շրջանի բոլոր գործօն տարրերը, աշխատանքի լծել ամենքին: Զեռք-ձեռքի տուած Դրոյի, զօր. Սիլիկեանի ու Փիլրումեանի, նահանգական կոմիտար Ս. Թորոսեանի, քաղաքական կուսակցութիւնների եւ կոռաւարական ու հասարակական մարմինների հետ՝ նա երեւան բերեց արտակարգ եռանդ եւ, ամենատազնապալի վայրկեանին, ձեռնհասութեամբ վարեց Արարատեան դաշտի հայ ժողովրդի ճակատադիրը:

Ըստ ձեւի, Արամի դիկտատոր նշանակուելուց յետոյ էլ իշխանութիւնը մնաց Ազգ. Խորհրդի ձեռքին: Յատուկ կոմիտէի փոխարէն այժմ գործում էր առանձին մի մարմին, որի անդամները

կոչում էին վարիչներ: Այս մարմինը փաստորէն Արարատեան դաշտի կառավարութիւնն էր, որի նախագահն ու զինուորական գործերի վարիչը Արամն էր, ներքին գործոց վարիչը՝ Սահակ Թորոսեանը, պարենաւորմանը՝ Մկ. Մուսինեանը, ելեւտականը՝ Յովհ. Մելիքեանը, ինքնապաշտպանութեանը՝ Արշ. Աստուածատրեանը: Քիչ վերջը, մարմնի կազմի մէջ մտան նոր անձեր՝ Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Կամսարականը, բժ. Յ. Տէր-Միքայէլեանը (Օվին) եւ այլն. եղան եւ ուրիշ փոփոխութիւններ: Դրոն, իբրեւ զինուորական կոմիսար, մարտական ուժերի ուժին էր եւ զինուորական ծրագիրների գործադրողը՝ համախորհուրդ Արամի հետ: Այս մարմինը մնաց իշխանութեան գլուխ մինչեւ Հայաստանի Պորհրդի ու կառավարութեան ժամանումը Թիֆլիսից:

Երեւանի կառավարութեան, ի վերջոյ յաջողուեց, բանալ ռազմագիտական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, մաքրել խռովութիւնների բոյն ծառայող մահմետական վայրերը եւ որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ շրջաններում: Նա միջոցներ ձեռք առաւ դասալքութեան եւ աւազակութիւնների դէմ: Նրա տրամադրութեան տակ կային 10-12,000 մարզուած ու բաւական կարգապահ զինուորներ: Դրամական դրութիւնը կարգաւորելու համար պարտադիր տուրք դրեց ժողովրդի վրայ, որը տալիս էր անտրրտունջ, անդամ սիրով: Երբեք, գուցէ, հայ կեանքում իշխանութիւնն ու հասարակութիւնը այնպիսի համերաշխ միութիւն չէին կազմել, քան 1918 թուի գարնան եւ ամառուայ պատմական ամիսներին, Արարատեան դաշտում, Մասիսի հովանու ներքեւ:

«Հայաստանի Հանրապետութիւն», էջ 136-137

ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԱՐԱՄԻ ԿԵԱՆՔԻՑ

1918ի ամրան վերջի ծանր ու խռովայոյզ օրերն էին:

Արդէն ընկած էր Ալեքսանդրապոլը, վերջացած էին Ղարաքիլիսէի, Բաշ-Աբարանի ու Սարդարապատի կռիւները, Ազգային Պորհրդի կողմից Հայաստանը, առանց Հայաստանի գիտութեան, Թիֆլիզից հռչակուած էր անկախ եւ Արարատեան փոքրիկ Հայաստանը, Արամի հզօր ու արթուն հսկողութեան տակ, ապրում էր իր անստոյգ ճակատագրի մոայլ օրերը:

Մի բացառիկ երկիր էր այդ, օղակաձեւ շղթայով շրջապատուած իր չորս կողմերից, զուրկ արտաքին աշխարհի հետ կապուելու, նրան լուր տալու եւ այնտեղից լուր առնելու գրեթէ բոլոր հնարաւորութիւններից:

Մի երկիր, որի արտաքին գործերի վարիչը կրում էր այդ կոչումը միմիայն նրա համար, որովհետեւ մեր օրերին դժուար է երեւակայել մի կառավարութիւն, ուր այդ կոչումը չկայ:

Երեւանի ռազիօ-կայանը երբեմն երկու խօսք էր հաղորդում իրեն չլսող արտաքին աշխարհին, առանց գիտնալու, թէ ո՞վ եւ ինչպէ՞ս լսեց իրեն:

Ահա ամէնը:

Օղակուած ու շղթայուած թուրք զօրքերով ու թաթար ազգաբնակիւթեամբ, Հայաստանն ապրում էր ինքն իրեն համար, ապրում էր իր խոհերի ու տառապանքների հետ, մատնուած գալիք օրհասի ահաւոր սարսափներին:

Այդ օրերին Հայաստանի ժողովրդի միակ յոյսը, նրա միակ ապաւէնն ու հզօր նեցուկը Արամն էր:

Ազգընտիր վարիչը հայ ժողովրդի, որ յօժարակամ, անքուէ ու անաղձուկ բարձրացել էր Հայկական Գողգոթայի կատարը:

Բոլորի հայեացքը դէպի այն տունն էր ուղղուած, ուր օր ու գիշեր տքնում էր Արամը, փրկութեան ելք փնտռելով հայկական ահաւոր դժոխքից:

Դաշնակիցները յաղթանակի մասին ղեռնա լուր չկար :

Օրը օրին մարում էին այդ յաղթանակի շուրջ հրատուած դրեթէ բոլոր յոյսերը :

Գերմանացիք իշխում էին Վրաստանում , իսկ հայկական հողերի վրայ կայմ ու պատրաստ վիճակի մէջ , տեղաւորուած էին Թուրքիոյ յաղթական զորամասերը :

Կուռ խաւարի ու խեղդող մթութեան մէջ , Նաթաշխարհի թեքակողոց ճառագայթում էր միայն մի թոյլ ու տկար շող , հերոսական Բագուս , ուր Դաշնակցութեան հօր շունչի տակ անձնազոհ մարտիկների մի քաջարի բանակ յուսահատ փորձ էր անում ճեղքել թաթարական ծովը եւ օպնութեան հասնել մարտող Հայաստանին :

Ահա այս օրերին Ալեքսանդրապոլից որոշում է այցի դնալ Հայաստան՝ Կովկասեան ճակատի թրքական զօրքերի դերադոյն հրամանատարը , յաղթական Պալիլ փաշան , Արամի հմայքին ու կարողութեանը լաւատեղեակ թուրք զօրավարը :

Նրան ընկերանալու եւ միաժամանակ առաջին այցը տալու համար Հայաստանին , որոշում են Թիֆլիզից Երեւան մեկնել նաեւ Գերմանիոյ ներկայացուցիչը՝ Փոն Կրեսս եւ Աւստրիականը՝ Փանկէլտէյն :

Այս երեքին ուղեկցելու համար Թիֆլիզից Երեւան պիտի գընար նաեւ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը Վրաստանում՝ ընկեր Արչակ Զամալեան :

Գնացքը կանգ պիտի առնէր Ալեքսանդրապոլում , ուր գտնուում էր Պալիլը , եւ մէկ օր մնալուց յետոյ , յաղթական երկիրների այս երեք ներկայացուցիչները պիտի մեկնէին դէպի Հայաստանի դիկտատորի՝ Արամի ոստանը՝ Երեւան :

Այս առաջին դնացքն է , որ արտաքին աշխարհից Հայաստանն օղակող շղթան պիտի պատռէր եւ մտնէր Երկիր :

Զամալեանի ջանքերով այս դնացքի մէջ տեղ ենք գտնում նաեւ ես ու Գէորդ Ղազարեանը , որ Թիֆլիզից գնում էինք Երեւան , կուսակցական որոշ ժողովի մասնակցելու համար :

Վերջապէս պայմանադրած օրը եկաւ , դնացքը շարժուեց ու մի քանի ժամից նա արդէն կանգնած էր այն հողերի վրայ , որոնց պահպանները... թուրք ասկերներն էին :

Սահմանադրութիւն պատահած որոշ անախորժութիւնից յետոյ դնացքը , մի քանի ժամ վերջ , մտաւ , վերջապէս , հայկական այն հողամասը , որ գտնուում էր թրքական տիրապետութեան տակ , եւ մեր ճամբորդութեան երկրորդ առաւօտը մենք արդէն Ալեքսանդրապոլ

էինք , ուր տեղաւորուած էր Պալիլ փաշան իր սպայակոյտով մէկտեղ :

Կայարանը մաքուր էր , քաղաքը լուռ , դերեզմանատան նման խաղաղ ու անկենդան , հատ ու կենտ մարդիկ , ստուերներից սարսափած , զուշաւորութեամբ շարժուած էին այն ընդարձակ տարածութեան վրայ , որ փռուած էր կայարանի շուրս կողմը :

Բոլոր նշաններից պարզ էր , որ այստեղ իշխողը — թուրքն է :

Հոն Կրեսսին եւ Փանկէլտէյնին դիմաւորելու համար կայարան էին եկել բարձրաստիճան զինուորականներ՝ երաժշտախումբով ու մօտ երկու վաշտ մաքուր հագնուած ու լաւ զինուած ասկերներով :

Գնացքը կանգ առաւ եւ նուազախումբը սկսեց իր զինուորական նուազը :

Սակայն Փոն Կրեսսն ու Փանկէլտէյնը , սահմանադրութիւն պատահած անախորժութեան պատճառով , դուրս շեկան գնացքից եւ հրաժարուեցին դնալ այն ճաշին , որ ի պատիւ իրենց քաղաքին մէջ պատրաստել էր Պալիլը :

Այս խաղաղ դիւանագիտական ցոյցի լուրը տարին քաղաք՝ Պալիլին . փաշան անմիջապէս յատուկ զինուորականների միջոցով պատահած անախորժութեան համար ներողութիւն խնդրեց երկու զինակից պետութիւնների ներկայացուցիչներից , խոստացաւ յանցաւորներին պատժել եւ այս դոհացումը տրուելուց յետոյ միայն՝ Փոն Կրեսսն ու Փանկէլտէյնը մեկնեցին քաղաք :

Նրանց ընկերացաւ նաեւ Զամալեանը :

Այդ օրը գիշերեցինք կայարանում՝ դնացքի մէջ՝ եւ հետեւեալ առաւօտը վայրաշարժը յաղթական Պալիլին առնելով՝ շարժուեց դէպի Երեւան :

Պալիլի այցի մասին Երեւանում , ի հարկէ , գիտէին :

Արամը գիտէր եւ այն , որ գերմանական ներկայացուցչութիւնից անպաշտօն ձեւով փափաք է յայտնուել , որ լաւ կը լինի , եթէ Արամը , յանուն իր ժողովրդի փրկութեան , ինքն անձամբ կայարան դալ Պալիլին դիմաւորելու(*) :

Այդ օրերին Գերմանիան Թուրքիոյ վրայ այլեւս նախկին ագրեսիւթիւնը չունէր . բախտը կամացուկ երես էր դարձնում նրանից

(*) Յետագայում միայն , Գերմանիոյ պարտութիւնից եւ գերմանական արտաքին գործօց նախարարութեան մի շարք վաւերագրերի հրատարակութիւնից յետոյ պարզուեց . թէ դիւանագետների աշխարհում ինչ բացառիկ ազնուութեամ տէր մարդ է եղել Փոն Կրեսսը :

եւ կարծես սկսում ժպտալ օսմանեան պետութեան, եւ այդ պատճառով Ֆոն Կրեսսը դտնում էր, որ թրքական գաղանութիւնները եթէ կարելի է մեղմել ու կանխել, ապա այդ հնարաւոր է անել մի միայն յաղթական զօրավարի գութը հայցելով, նրան ապաւինելով եւ նրա՝ սիրտը սիրաշահելով:

Վերջապէս գնացքը հասաւ Ուլուխանլու, որտեղից սկսում էր Հայաստանի Հանրապետութեան սահմանը: Աննչան տարածութեամբ բաժանուած էին մեր եւ թրքական ռազմազօծերը, որոնք բռնուած էին համապատասխան զօրքերով:

Ուլուխանլուից մինչեւ Երեւան ձգուած տարածութիւնը ընդամէնը եօթը քիլոմետր էր. այդքան էր նաեւ Հայաստանի երկաթուղագծերի ամբողջ տարածութիւնը:

Երբ հասանք Ուլուխանլու, կայարանում, հակառակ մեր սպասածի, չկար այն պատրաստութիւնը, ինչ անհրաժեշտ էր: Ասացին, որ սպասել են հիւրերին նախորդ ամբողջ օրը եւ լուր չառնելով այլեւս՝ մեկնել են քաղաք:

Երեւանից հեռախօսով խնդրեցին, որ գնացքը մի երկու ժամով պահուի Ուլուխանլու, որպէսզի կարողանան քաղաքի կայարանը զարդարել եւ պատշաճ պատրաստութիւնները տեսնել:

Երեւանում յանկարծակիի էին եկել՝ գնացքի ժամանման լուրը առնելով:

Մէկ դաժան դուրսդիպութեամբ ճիշդ այն նոյն ժամին Ուլուխանլու է հասնում եւ այն առաջին գնացքը, որ Շիրակի դաշտից դէպի Էրզրում քշուած հայ երիտասարդների անդրանիկ կարաւանն էր բերում Կարսից Երեւան:

Տարագրուածների թիւը, ըստ վիճակագրական ստոյգ տուեալների (անուանական ձեւով կազմած, գիւղէ գիւղ շրջելով), մօտ 13 հազար մի քանի հարիւր էր, կոտորուել էին ամէնքը եւ «կենդանի» մնացել մի քանի հարիւր հոգի միայն, որոնց ահա վերադարձնում էին Հայաստան, «հաւատարիմ» մնալով այդ ժամանակ Գոլիս գրանդու մեր պատուիրակներին իրենց տուած խոստման:

Այս դերիները — կենդանի դիակների մի սոսկալի բազմութիւն, մերկ ու բոկոտն, այլանդակուած ու փքած մարմիններով եւ սարսափահար աչքերով — փոռուած էին գետին:

Նրանցից մի քանի հոգի, մի քանի վայրկեանի մէջ հէնց մեր աչքերի առջեւ մեռան:

Մեռել էին շատերը նաեւ վերադարձի, «փրկութեան» ճանապարհին, Էրզրումից մինչեւ Ուլուխանլու:

Անսխալ կարելի է ասել, որ մեռան նրանք ամէնքն էլ, մի քանի օրով շուտ կամ ուշ միմեանցից:

Յետագայում, սարսափներն անցնելուց յետոյ, այլեւս հնարաւոր չեղաւ նրանցից դէթ մէկին հանդիպելու:

Մարդկային լեզուն, խօսքն ու գրիչը դեռ այդպիսի ցնցող պատկերներ տալու կատարելութեան, դժբախտաբար, չեն հասել:

Նրանց Երեւանում, կարծեմ, լուսանկարեցին, այդ ահաւոր պատկերից դէթ որեւէ թոյլ հետք սլահելու համար, սակայն անկասկած է, որ նրանցից եւ ոչ ոք կենդանի մնաց:

Այդ դժբախտները լծուել էին դաժան աշխատանքների Էրզրումում ու քաղաքի մերձակայ վայրերում, ստանալով շարքալկան երկու բաժակ ջուր եւ հում սիսեռից կերակուր:

Տանջանքների մէջ կոտորուել էին ամէնքը, մօտ 13 հազարը, եւ վերադարձել այս մէկ խումբը, այդքան ահաւոր վիճակում:

Յուզիչ էին մեռնողներից յատկապէս մէկի վերջին խօսքերը:

Մօտ քառասուն տարեկան հասակ ունեցող մի մարդ էր, գրեթէ անզգայ վիճակի մէջ փոռուած գետին: Մօտեցանք իրեն: Աչքերը յանկարծ բաց արաւ ու տեսաւ իր կողքին կանգնած Գէորգ Ղազարեանին (Հ. Օհանջանեանի դահլիճի լուսաւորութեան նախարար): Ճանաչեց իսկոյն:

— Վա՛յ, Գէորգ Ղազարեա՛ն... Փա՛նք քեզ Աստուած, իմ հոգի վրայ մեռայ, — հազիւ լսելի ձայնով ասաց եւ հոգին աւանդեց: Ո՞վ էր արդեօք, որտեղի՞ց, ի՞նչ զգաց, Ղազարեանին տեսնելով, — այլեւս մնաց անյայտ:

Վերադարձանք գնացք, որի շարժուելու ժամանակն արդէն հասել էր: Տեղաւորուեցինք ու մօտ քսան վայրկեանից արդէն Երեւան էինք:

Վայրաշարժը դեռ իր վերջին հեւքը չարձակած, զինուորական երաժշտախումբը սկսեց նուագել: Կայարանի մայթի վրայ, քիչ ներս քաշուած, կանգնած էր զօրավար Սիլիկեանը՝ իր ետեւն ունենալով շքախումբն ու պատուոյ պահակը: Էլ աւելի աջ՝ տեղաւորուած էր նուագախումբը: Դէպի ձախ, քիչ աւելի առաջ ցցուած, կանգնած էր քաղաքի պարէտը՝ դերասան Շահխաթունին: Աւելի ձախ, բոլորովին առանձնացած վիճակի մէջ, արձանի պէս ցցուած ու թուրը բռնած կեցած էր պատուոյ պահակի պետը՝ զեկուցող սպան: Այդ ամբողջ խմբից բոլորովին առանձնացած ու առաջ եկած, շքախմբի ճիշդ կենտրոնում, փառահեղ կեցուածքով ու սեւ հագուստի մէջ, թուխ ակնոցները աչքերին, թիկնեղ մարմնի վրայ գլուխը քիչ դէպի

վար թեքած, կանդնած էր մէկը: Արամն էր այդ: Հայ ազատագրա-
կան պայքարի կատարի վաղը:

Ինձ ամենէն շատ յուզողն այն էր, թէ ինչպէ՞ս պիտի հանդի-
պեն իրար այս երկու սխերիմ ախոյեանները, որոնցից մէկը, իր
յաղթ կամքին ու կուռ հաւատքին ապուինած, ոչինչ չխնայեց հա-
յութեան երազը կերտելու, իսկ միւսը ամէն ինչ արաւ՝ այդ երազը
խորտակելու համար: Ամէնքի համար էլ այս նշանաւոր հանդիպման
էական վայրկեանը այդ էր, ի հարկէ: Այս գիտէին անշուշտ նաեւ
Ֆան կրեանն ու Ֆանիկէլտէյնը:

Եւ ահա, երբ գնացքը կանգ առաւ, Արամը իր հայեացքը նե-
տեց դէպի աջ ու դէպի ձախ եւ գնացքի առաջ ձգուած ծայրի վա-
ղոնուած նշմարեց Խալիլի դէմքը: Վճռական շարժումով նա իր քայլ-
ուածքը դէպի այն կողմ ուղղեց: Խալիլը նկատելով Արամին, դիւ-
րաշարժ երիտասարդի նման անմիջապէս ցատկեց վաղոնից, ընդա-
ռա՞յ եկաւ նրան եւ երկուսն էլ ժպտադէմ, ջերմօրէն ու բարեկամա-
բար իրար ձեռքեր թօթուեցին եւ... համարուեցին:

Ես իմ արցունքներն այլեւս անկարող էի զսպել, քաշուեցի
գնացքի պատուհանից դէպի ներս եւ իջայ այն ժամանակ, երբ ըն-
դունելութիւնը վերջացած եւ չքախումբն ամբողջութեամբ մեկնած
էր քաղաք:

Իջանք կայարան:

Մեր մի քանի կտոր իրերը դրինք եզներ լծած սայլի վրայ, ու
ոտքով մեկնեցինք քաղաք:

Մարդկայնօրէն անհնար էր այս սարսափի երկրում պահել հա-
ւասարակչութիւնն ու շցնցուել:

Հայաստանն ապրում էր իր ահաւոր սովի օրերը, երբ մար-
դիկ սկսել էին արդէն դիակներ յօշոտել:

Պատերի առաջ ցցուած էին անկենդան ստուերները սովահար-
ների: Նրանք մարում էին առանց մուրալու: Գիտէին, որ անիմաստ
է հաց խնդրել: Ուժ էլ չունէին խնդրելու: Մարում էին անարտունջ,
անձայն ու անաղմուկ:

Նոյն օրը երեկոյեան հանդիպեցինք Արամին:

— Այո՛, այս ժողովրդի փրկութեան համար համարուեցինք
միմչել իսկ հալիլին, — հառաչանքով ասաց Արամը:

Սակայն այդ հսկայի դէմքի վրայ դժուար չէր կարգաւ, որ
նա պատրաստ է ոչ միայն նման համբոյրի, այլեւ ամէն զոհողու-
թեան՝ միայն թէ փրկուած լինեն ի՛ր ժողովուրդն եւ ի՛ր հայրե-
նիքը:

Քաղաք ժամանելուց Խալիլն անմիջապէս ցանկութիւն է յայտ-
նում այցի դնալ հայկական զօրքերի վերագոյն հրամանատարին՝
Նազար փաշային:

Արամը յայտնում է, որ Նազարբէկեանն իրեն՝ Խալիլին՝ քիչ
վերջը այցի պիտի դայ, ուստի կարող է փաշան շանհանգստանալ եւ
իր բնակարանի մէջ սպասել իր վաղեմի ախոյեանին:

Խալիլը վճռականապէս մերժում է այս առաջարկը, յայտնե-
լով, որ վայել է իրեն՝ Խալիլին՝ առաջին այցը տալ տարիքով իրե-
նից մեծ եւ աստիճանով իրենից բարձր զօրականին՝ Նազարբէկ-
եանին:

Արամի ուղեկցութեամբ ու նշանակուած ժամին Խալիլը գնում
է հայկական պարտուած ու ջարդուած հրամանատարի բնակարանը:

Նազարբէկեանն ընդունում է Խալիլին իր համեստ բնակարա-
նում եւ զինուորական պարզ տարազի մէջ, կրծքին կախած ունեւա-
լով միայն Գէորգեան Սպիտակ Խաչը՝ ուսական բանակի մէջ ըն-
դունուած զինուորական առաջին չքանչանը, որով վարձատրում են
բանակի բացառիկ հերոսները:

Քաջալերելու համար պարտուած զօրավարին եւ զգաստու-
թեան բերելու համար յաղթական Խալիլին, Արամը ոտքի վրայ դեռ
դրոյցի բռնուած Նազարբէկեանի կրծքի խաչը բռնում է եւ դիմելով
Խալիլին, հարցնում.

— Իսկ գիտե՞ս, թէ ինչո՞ւ տրուած է այս խաչը:

— Ո՛չ, — պատասխանում է Խալիլը:

— Ուրեմն գիտցիր, որ այս խաչը տրուած է Դիլմանի տակ
քեզ փառաւորապէս փախուստի մատնելու համար, — ժպտալով ա-
ւելացնում է Արամը:

Եւ իսկապէս. Դիլմանի ջարդը ուսական զօրքերի հերոսական
գործերից մէկն էր, որի հեղինակը հայկական զօրքերի պարտուած
հրամանատարն էր:

— Ուրեմն մի գեղեցիկ պատմութիւն էլ ես ամեմ, լսեցե՛ք, —
ասում է Խալիլը:

— Իմ պարտութեան պատճառը աւելի շատ իմ կօշիկներն են,
քան որեւէ ուրիշ բան:

Ինձ հետ կռուող գործը գիտէ, — սկսում է իր պատմութիւնը
թուրք փաշան, — որ հալիլն իրեն հետ միշտ մի քանի գոյգ կօշիկ
պիտի ունենայ եւ այն էլ՝ ո՛չ սովորական զինուորական կօշիկ: Դիլ-
մանի ջարդի օրը ես շատ լաւ ճաշ ունէի պատրաստած, մի քանի տե-
սակ փիլաւ եւ իմ սիրած խորտիկները:

կօշիկներս համած հանգստանում էի եւ սպասում մաշի, երբ յանկարծ խուճապ ընկաւ իմ սպայակոյտի մէջ: Միանգամայն անըստապասելի էր ուսական զօրքերի յարձակումը, մանաւանդ՝ մեր շըրջապատուած լինելը: Վայրկեանապէս խուճապն այնպիսի կերպարանք առաւ, որ ես, իմ սպաների ստիպման տակ, հարկադրուած եղայ իսկոյն ոտքի ելնել, ձի առնել եւ փախուստի մամբան բռնել: Իսկ որ ամէնից հետաքրքրականն է, ժամանակ չունեցայ ո՛չ կօշիկ հագնելու եւ ո՛չ էլ կօշիկներս առնելու:

Այս լուրը հասաւ նահանջող զօրքին:

— Փանի որ խալիլն առանց կօշիկի է փախչում, ուրեմն մեր վիճակը յուսահատական է, — եզրակացնում է զօրքս եւ խուճապահար նահանջում:

Պատմում է Պալիլը, կուշտ-կուշտ ծիծաղում եւ նորից թօթուում պարտուած հայ հրամանատարին ձեռքը:

Արամը այս երկարախօսութիւնը պատմում էր, հազիւ իր ցաւը զսպելով:

Նա տառապում էր այն յաւելեալ տառապանքով, որ ունէր հայ պարտուած հրամանատարը, իբրեւ զինուորական:

Նա կարծես քիչ էր համարում այն նահատակութիւնը, որ իրեն բաժին էր ընկել իբրեւ օղակուած ու շղթայուած, լռելեայն մահուան դատապարտուած Հայաստանի զժրախտ վարիչի:

Նա մինչեւ իսկ այդ ահաւոր օրերին կարողանում էր տեսնել իրեն շրջապատողների անձնական վշտերը, կարողանում էր ծիծաղել նրանց ծիծաղով եւ լաց լինել նրանց արցունքներով:

Չգնահատուած-հսկայ:

Մի հոյակապ, հմայիչ, հզօր ու կախարդող դէմք, որ եկաւ ու գնաց, պայծառ ու փայլուն ասուպի նման:

Մի յաղթ ու կուռ կամք, որ գերեզման իջաւ, առանց իր կարողութեան թեւերը լայնօրէն տարածելու:

Ափսո՛ս Արամը:

Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԻ

ԽԱԼԻԼ ՓԱՇԱՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Ա Ր Ա Մ Ի Հ Ե Տ

Գերման զինուորական եւ քաղաքական ներկայացուցիչը այցելեց Երեւան իր սպայակոյտի հետ, որ կազմուած էր 20 զինուորականներից:

Հարկաւ, նրանց ընդո-նեցինք շատ քաղաքավարի կերպով, բայց ոչ բոլորովին զրկաբաց, որովհետեւ համաշխարհային պատերազմը դեռ չէր վերջացել:

Արամն էր գլխաւոր կառավարիչը Հայաստանի, եւ բոլոր կարողութիւնները նրա կողմից էին լինում:

Գերման զօրավարը յայտնեց Արամին, որ Պալիլ փաշան, տաճկական զօրքի այդ շրջանի հրամանատարը, շատ մեծ ցանկութիւն ունէր զալու Երեւան՝ տեսնելու համար իր բարեկամ Արամին, բայց վախենում էր, որ կտրող էր մերժում ստանալ: Արամը պատասխանեց, որ, ընդհակառակն, ուրախութեամբ պիտի ընդունէր նրան: Գերման զինուորականը շատ ուրախացաւ:

Ընթրիքի ժամանակ նա յայտնեց Արամին, որ թոյլ տար իրեն անմիջապէս հեռագրելու Պալիլին: Եւ աւելցոյց, թէ մեծ ցանկութիւն ունէր տեսնելու մեր երկրի հնութիւնները, եւ, ամենագլխաւորը, ընդունելութեան արժանանալու Վեհափառ Կաթողիկոսի կողմից:

Անմիջապէս հեռագիրը ուղարկուեց Պալիլ փաշային:

Երբ գերմանացիները պիտի գնային իրենց յատկացուած սենեակները հանդստանալու, զօրավարը հրամայեց իր սպաներին, առաւօտեան ժամը Տին, ներկայ դռնուիլ քաղաքապետարանի սրահում: Ինձ վրայ շատ լաւ տղաւորութիւն թողեց, երբ անմիջապէս բոլոր սպաները զինուորական շարժումի նման հանեցին իրենց ժամացոյցները եւ լարեցին ճիշդ միեւնոյն ժամին:

Ես ճանապարհ գրի գերմանացիներին իրենց բնակարանը:

Արամը խնդրեց ինձնից, որ ես նրան այցելեմ անմիջապէս:

Այդպէս ալ արի: Նա ինձ հարց տուեց.

— Ինչքան գործ ունես Երեւանում:

— Ունեմ երկու գունդ հետեւակ, երկու գունդ ըստիբ հեծելազորք, որոնց սպաները կրթուած են յայտնի ուսանողական շարքերի մէջ, եւ երեք մարտկոց, որոնք կազմում են 12 թնդանօթ:

— Գու լաւ դերասան ես: Կարող ես մի լաւ ներկայացում տալ գերմանացիներին եւ մանաւանդ հալիլին: Հասկացա՞ր: Նրանց պէտք է ցոյց տանք, որ Սարտարապատի զինադադարը դեռ չէ վերջացել, թէ մենք ուժ ունենք: — Եւ շարունակեց ժպտելով. — Հիմա հերթը հալիլինն է: Ես նրա հետ մօտիկ բարեկամ եմ եղել վաճառի մէջ, որք նա վալի էր, իսկ ես՝ դաշնակցական գերծիչ: Հուրիէթի տարին էր այդ: հալիլ շատ կը սիրէ օգին: Նկատի ունեցիր: Պէտք է նրան փոխելու ընդունելութիւն ցոյց տալ:

— Հանգիստ կաց, Արամ, ամէն բան կարգի կը դնեմ:

— Ուրեմն՝ վաղը հեռագրի պատասխանը որ ստանաս, անմիջապէս իմաց կու տաս ինձ: Բարի գիշեր, Արշալիր:

— Բարի գիշեր, Արամ ջան:

Ես շտապում էի, քանի որ շատ գործեր ունէի կատարելիք: Անմիջապէս պնացի պաշտօնատունն եւ հերթական սպային հրամայեցի որ հեռագրի անի զնդի զնդապետներին, որպէսզի անմիջապէս հաւաքուեն այստեղ կարեւոր ժողովի համար:

Յետոյ, զբաղուեցի Պալիլի ընդունելութեան գործով: Եղիազարեանները չէնքը յատկացրի Պալիլ փաշային եւ նոյնպէս հրահանգ տուի իմ զնդի հրամանատար Յակոբեանին, որպէսզի լաւագոյն վաշտերից մի առանձին մասնաւոր ջոկատ կազմի, փողահարներին պատրաստէ որ կարողանան նուազել տաճկական քայլերը, հայկական քայլերը յետոյ: Վստահ էի, որ Պալիլ փաշան ցանկութիւն պիտի յայտնէր ներկայանալու սպարապետ Նազարբէկեանին, որ ապրում էր մի առանձին փոքրիկ սենեակում:

Անմիջապէս հրաւիրեցի ինձ մօտ Եղիազարեանին, որ ունէր զեղեցիկ յարկարաժին Ազատութիւն փողոցի վրայ եւ խնդրեցի, որ ոչ թէ բանապատուած ձեւով, այլ թոյլատրէ, որ այստեղ բնակի երկու օրուայ համար զօրավար Նազարբէկեանը՝ ցոյց տալու համար թուրք փաշային թէ նա ապրում է ներկայանալի չէնքում: Ուրախութեամբ համաձայնուեց:

Յակոբեանին հրամայեցի նուազ պահակ պահել Եղիազարեանի

այդ բնակարանի առջեւ եւ չէնքի վրայ բարձրացնել Սպայակոյտի դրօշակը:

Դրանից յետոյ, պնացի սպարապետի մօտ եւ մեծ ճիւղ թափեցի՝ նրան համոզելու համար, որ փոխադրուի երկու օրով այդ նոր չէնքը:

Սպարապետին թողած՝ վերադարձայ իմ պաշտօնատունը, որտեղ կար Ալեքսանդրապոլից հեռագիր: Բանից դուրս էր գալիս, որ Պալիլ փաշան Ալեքսանդրապոլ էր: Մեր հեռագրին պատասխանում է, թէ մեկնում է դէպի Երեւան եւ ժամը 11ին կը լինի Երեւանում:

Անմիջապէս հեռախօսեցի Արամին: Մի քանի հայ հրամանատարներ որոնց կանչել էի ժողովի, վախեցել էին թէ՛ մի վատ բան էր պատահել: Բայց երբ լսեցին իմ բացատրութիւնը, հանդստացան: Հրամայեցի հաւաքուեն բոլորն էլ Ազատութեան հրապարակի վրայ:

Այնտեղից կ'անցնեն դերման սպայակոյտի բնակած չէնքի առաջից՝ նուազելով թմրուկ, փող եւայլն, շրջապատեն քաղաքապետարանը, ինչպէս թատրոնի ակումբը՝ խումբը ստուարաթիւ ցոյց տալու համար:

Այդ յաջողուեց հիանալի կերպով: Գերման զօրավարը հիացել էր հայ զինուորիների քայլուածքի և կանոնաւորութեան վրայ: Թարգմանի միջոցով յայտնեց ինձ.

— Mein lieber kommandant, շնորհաւորում եմ ձեզ այսպէս հիանալի խումբ կազմած լինելուդ համար. իսկ ո՞ւր էք ուղարկում նրանց:

— Զօրավար, — ասացի, — պատերազմը դեռ չէ վերջացել: Ուրեմն, կարող էք հասկանալ թէ ո՞ւր ենք ուղում նրանց ուղարկել: — Ո՞վ է առաջին գնդի հրամանատարը: Հիանալի կեցուածք ունի:

— Գնդապետ Զատինեանն է, զօրավար: Նա կուտել է ձեզ դէմ եւ կուրծքին ունի Սուրբ Գէորգի շխանչանք:

Յետոյ նա խնդրեց, որ իր տրամադրութեան տակ զնեմ երկու սպայ զերմաներէն զիտցող, որոնք կարողանան ցոյց տալ Երեւանի շրջակայքը եւ հին վանքերը:

Այդ առաջարկը ինձ թիւր չեկաւ չեկաւ: Բայց ի՞նչ կարող էի անել:

— Ուրախութեամբ, զօրավար, — ասացի, — բայց նախ՝ ձեզ պէտք է յայտնեմ, որ հալիլ փաշան հասնում է Երեւան ժամը 11ին, — և ցոյց տուի հեռագիրը:

Զօրավարը պատասխանեց.

— Աւելի լաւ է մեր շրջագայութիւնը յետաձգել եւ ժամը 12ին հաւաքուեմք իմ դահլիճում:

Տեսայ, որ ամէն բան լաւ էր գնում: Հանդստացայ մի քիչ: Բայց մտածում էի թէ ԽՆՀԿՆ կարելի էր հետևել Պալիլի եւ գերման զօրավարի մտերիմ խօսակցութեան: Անմիջապէս դնացի իմ պաշտօնատունը եւ խնդրեցի էսքտիկեարեանից որ հանի զինուորականի զգեստը, հագնի սիվիլ եւ գնայ գերման զօրավարի բնակարանը, ինչպէս մէտր տ'օտէլ՝ այնպէս ձեւացնելով որ հասկանում է Ֆրանսերէն եւ ռուսերէն, բայց չզիտէ գերմաներէն:

Ժողովուրդը արդէն իմացել էր Պալիլ փաշայի գալու մասին, եւ բոլորն բազմութիւն էր հաւաքուել Արտվեան սրբոցայի երկու կողմը: Այդտեղից, երբ իմ ինքնաշարժը անցնում էր, մի քանի տեղ կանգ առի եւ խնդրեցի, որ տղեղ ցոյցեր չանեն:

— Պատերազմը դեռ չէ վերջացած, ասացի, եւ մեք մեզ պէտք է ցայց տանք հանգիստ եւ ժպտադէմ:

Յետոյ դնացի Արամի մօտ, որ սպասում էր ինձ: Ժամը 10ն էր արդէն: Գնացինք կայարան:

Մուտքի մօտ արդէն կանգնած էին հարիւրի չափ ձիաւորներ, եւ շատ մեծ թիւով քաղաքացիներ:

Երբ մենք անցնում էինք քաղաքացիների մօտից, Արամը ասաց.

— Հանգիստ եղէք եւ ձեզ լաւ պահեցէք:

Յանկարծ իմ աչքին զարկեցին մեզանից ոչ հեռու կանգնած Երեւանի թուրքերից երեք յայտնի դէմքեր, որոնք ունէին բռնած աղ ու հացի ափսէն: Ուրեմն, նրանք էլ սպասում էին Պալիլին եւ պիտի ընդունէին աղ ու հացով:

Ես բարկացած՝ ասացի Արամին.

— Դրանք իրաւունք չունեն այդպէս ընդունելու հայիլին: Պէտք է բանտարկել նրանց:

Արամը չթողեց՝ ասելով.

— Զգոյշ կա՛ց:

Այդ ատեն երեւաց զնացքը, որի վրայ կային հայկական եւ թրքական դրօշակներ: Երբ զնացքը կանգ առաւ, վազոնից դուրս թռաւ մի գեղեցիկ տղամարդ, մի քիչ տարեց, բայց երիտասարդի նման, եւ երիտասարդի շարժումով, եւ տեսնելով Արամին, սկսաւ կոշել.

— Վա՛յ Արամ ջան, ես վրում Արամ...

Այդ վայրկեանին պատուի վաշտին հրաման տուեց վաշտապետը.

— Հանդա՛րտ, պատուի ա՛ն, — եւ սկսեցին նուազել «Մեր Հայրենիք»ը:

Պալիլ անմիջապէս ուղիղ կանգնեց եւ ձեռքը տարաւ գլխին՝ զինուորական բարեւոյ: Բոլոր սպաները նոյնը ըրին՝ նրան հետեւելով:

Յետոյ, նուազուեց տաճկական քայլերդը:

Երբ նուազը դադրեց, Արամը եւ Պալիլը իրար ողջագուրեցին եւ նոյն վայրկեանին Պալիլը մօտեցաւ այն երեք թուրքերին, որոնք եկած էին աղ ու հաց ներկայացնելու իրեն: Սոսկալի բարկացած՝ ասաց.

— Թուրք էք, բայց Երեւանցի էք, ուրեմն, պէտք է հպատակուէք Երեւանի իշխանութեան, բայց ոչ ինձ: Կորսուեցէ՛ք:

Արամը կամաց՝ ասաց ինձ.

— Տեսա՞ր, աւելի լաւ չեղա՞ւ, որ չբանտարկեցիր նրանց:

Պալիլ, կայարանից դուրս գալով, մտաւ իրեն համար պատրաստուած ինքնաշարժը: Կողքին նստեց Արամը: Իսկ ես իմ ինքնաշարժով գնում էի առաջից:

Պալիլ փաշայի առաջին խօսքը եղաւ որ փափաքում է ներկայանալ Սպարապետ Նազարբէկեանին եւ մատուցանել իր յարգանքը այդ մեծ զինուորականին:

Արամը յայտնեց իր հաճութիւնը եւ անմիջապէս հեռաձայնեց Սպարապետին:

Կէս ժամից յետոյ, Պալիլ փոխեց իր հագուստը, հագաւ զինուորականի իր համազգեստը, եւ մենք նրան առաջնորդեցինք Սպարապետի նոր բնակարանը: Ուղեկիցներն էին Արամը եւ բարձրաստիճան սպաներ: Ես էլ՝ նրանց հետ:

Տան առաջ կանգնած էին արդէն երկու պատուաւոր պահակներ, որոնք զինուորական պատուով բարեկեցին հիւրին՝ հրացանները շարժելով, այնպէս որ Պալիլը նրանց վրայ հիացաւ եւ ասաց. «Պապօ»:

Ներս մտանք դահլիճ: Այնտեղ Սպարապետը իր հսկայ հասակով, յենուած աթոռին, դարմանալի գրաւիչ դէմքով կանգնում էր: Պալիլ նայեց նրան, երկու քայլ առաջ եկաւ եւ, ձեռքը գլխին տանելով եւ զինուորական բարեւ տալով, ասաց.

— Զերդ Բարձր Գերագանցութիւն, երջանիկ եմ, որ ընդունում էք ինձ այսպէս: Երջանիկ եմ, որ այսօր սեղմում եմ ձեռքը ինձ յաղթողին (Դիւմանի ճակատամարտ):

Նազարբէկեանը Երախայի պէս ամաչելով՝ հազիւ կարողացաւ ասել:

— Նստեցէ՛ք զօրավար: Մի խնդիր ունիմ Ձեզանից: Դիմանի քակատամարտի ժամանակ, լուսաբացին, դուք սկսեցիք ցախանջել: Ես հրաման տուի զօրքերիս հետեւել ձեզ, իսկ հեծելագործին եւ Անդրանիկին հրամայեցի, որ կտրեն քանապարհը եւ կարողանան գերի բռնել հրամանատարը եւ սպայակոյտը: Բայց ես զարմացայ, որ, հակառակ որ նրանք անմիջապէս հետեւեցին ձեզ, ձեր հետքը կարելի չեղաւ գտնել: Այդ ի՞նչ հոկայաւան ցախանջ էիք արել, որ անկարելի եղաւ ձեր ետեւից հասնել:

Սպարապետի այդ խօսքերը թարգմանելու ժամանակ Պալիլի ղէմքը աւելի պայծառացաւ, եւ նա ասաց.

— Ձերդ գերագանցութիւն, կայ մի քրքական առած, որ ասում է. «Գաչնափտա պիր իյիտլիք տիր»: Այնպէս որ, գոնէ փայլելու ժամանակ այդ իյիտլիքը ցոյց տուի: Երկրորդ անգամ կը յայտնեմ իմ գոհունակութիւնը ձեզ եւ կը խնդրեմ ձեզ քոյլ տալ ինձ յաղթողի ձեռքը սեղմելու: Գիտէ՛ք՝ ինչպէս կ'անուանեն Ձեզ մեր տանկական բանակում: Ձեզ կ'անուանեն «Տէմիր փաշա» (Երկաթէ փաշա):

Նազարբէկեանը խնդաց եւ ասաց.

— Շատ քաղաքավարի էք: Փոքրիկ ուզում Ձեր ասածին, որի մէջ մի պակաս կայ: Պէտք է ասել «Քէօք Տէմիր փաշա»:

Բոլոր ներկաները շփին կարող զսպել իրենց ծիծաղը:

Այս խօսակցութիւնից յետոյ, եղան մի քանի բողոքներ խօսակցութիւններ ոչ քաղաքական կամ զինուորական հողի վրայ, այլ պարզապէս հարց տալու համար Պալիլին թէ՛ ի՞նչ տպաւորութիւն դործեց իր վրայ Երեւանը: Բնական է Պալիլ պատասխանեց. «Շատ լաւ»:

Նրանից յետոյ, Պալիլը եւ շքախումբը հեռացան Նազարբէկեանից:

Վերադարձանք իրենց յատկացուած շէնքը: Դրան առջեւ կանգնած էր սպաներից մէկը, տուեց ինձ հեռագիր, ստացուած էջմիածնից: Այդ՝ պատասխանն էր Արամին եւ իմ հեռագրին Պալիլ փաշայի եւ զերման զօրավարի Կաթողիկոսի մօտ ընդունելութեան մասին: Վեհափառը համաձայն էր ընդունել յաջորդ օր, ժամը 11ին, եւ հրաւիրում էր մնալու ցերեկուան ճաշին:

Ներկայացրի հեռագիրը Արամին, որ իմ մօտս էր: Ուրախութեամբ համաձայնուեց եւ յայտնեց Պալիլին, ինչպէս գերման զօ-

րավարին եւ աւստրիական զօրքի ներկայացուցիչ՝ պարոն Ֆէօլըն-թալին:

Արամը եւ մի քանի գործիչներ նախարարներին հետ մասնաւոր խօսակցութիւն էին ունենում, իսկ մենք զնայինք, մեր զինուորական պատերը եւ պարտականութիւնը վերջացուցած նկատելով:

Ամբողջ օրը ես զրադուած էի խստօրէն հետեւելով, որ ոչ մի կերպ որեւէ պրոպագանդա չլինի: Այդ պիշերները բոլորովին անքուն էի: Կ'ընդունէի հերթական սպաների զեկուցումները եւ հրամաններ կ'արձակէի:

Հիմա, երբ ժամանակը անցած է, կարելի է արտայայտուիլ այդ մասին:

Ես ունէի զինուոր տեղեկատուներ, որոնց մէջ էին երկու եղբայր Ստոն եւ Արմէնը, յայտնի զուրնածիներ: Քէյֆերի ժամանակ նրանք աւելի շատ լուր էին հաւաքում քան զինուորական բիւրոյում: Կարմիր շապիկ նիկոլը եւ նրա շորս ընկերները եւս մաս կաղմում էին այդ տեղեկատուների խմբին:

Ջարմանալին այն էր, որ նրանց մէջ կար նաեւ մի թուրք Ջաֆար անուևով, որ ինձ տալիս էր մասնաւոր տեղեկութիւններ, եւ ես նրան աւելի էի հաւատում:

Այդ Ջաֆարը իմ կնոջ ծնողքների հետ կապուած էր եւ նրանց ամենասիրելի մարդն էր եղել իր հաւատարմութեամբ ու մաքրութեամբ: Իր հայրն ու մեծ հայրն էլ եղել էին Մելիք Սահակեանների մօտ ծառայութեան մէջ եւ շատ հաւատարմօրէն գործել:

Այդ պիշեր մեր բոլոր տեղեկատուները գործում էին ամբողջ քաղաքում:

Յաջորդ օր, ժամը 10ին, մեկնեցինք էջմիածին: Մեր շքերթին մաս էին կաղմում Արամը, գնդապետ Վէքիլեանը, Պալիլ փաշան իր թիկնապահի հետ, որ աւստրիական զինուոր էր, զերման զօրավարն իր երկու սպաների հետ եւ աւստրիական ներկայացուցիչ Ֆէօլըն-թալը:

Հասանք եւ էջմիածին 11ից քառորդ պակաս: Վեհարանի առջեւ կանգնած էին կաթողիկոսի շաթիրները, որոնք փոխարինում էին զինուորական պատուոյ պահակներին:

Առաջին ընդունողը եղաւ Տիրայր Սրբազանը: Բարձրացանք Վեհափառի մօտ: Փառահեղ ղէմքով նստած էր բազմաթոռի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նախապէս մօտեցաւ եւ ներկայացաւ զերման զօրավարը եւ ըսաւ.

— Վեհափառ Տէր, ես անչափ երջանիկ եմ այսօր, որ տեսնում եմ Ձեզ, ինչպէս քրիստոնէական բոլոր եկեղեցիների հօրը, վասնզի Ձեր ժողովրդի եկեղեցին ամենահինն է աշխարհի վրայ:

Նրան հետեւեց Պալիլը:

Ես նայում էի կաթողիկոսի դէմքին եւ զարմանում էի, թէ ի՞նչպէս նրա աչքի բարձր հայեացքը փոխուեց եւ արտայայտեց դառնութիւն եւ բարկութիւն:

Ձեմ յիշում թէ ի՞նչ խօսքերով Պալիլը արտայայտուեց:

Կաթողիկոսը խնդրեց մնալ ճաշի, իսկ մինչև ճաշը, եթէ հիւրերը կ'ուզեն, կարող են այցելել Տաճարը եւ թանգարանը:

Երբ այցելեցին լճի ափը, լճի շորս կողմի ծառերի տակ, կային անազին թուով հայ դաղթականներ: Նրանց տեսքը սարսափելի էր: Նրանք ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում մեր վրայ: Հայկական աստիւր եւ ամօթխածութիւնը դառնապէս երեւում էին նրանց հպարտ դէմքի վրայ, արհամարհանքի խոր զգացումով: Խոստովանում եմ, որ այդպիսի դէմքեր ուրիշ տեղ բնաւ չեմ տեսել:

Վերադարձանք վեհարան: Ճաշասենեակի մէջ սեղանապետը հրաւիրեց իւրաքանչիւրը գրաւել իր տեղը:

Կաթողիկոսը նստած էր ճակատին: Նրա աջ թեւի վրայ տեղ գրաւեց գերման զօրավարը, նրա մօտ ակտրիսական զօրքերի ներկայացուցիչը. ձախ կողմը՝ Պալիլը եւ նրա կողքին՝ Արամը: Մնացածների տեղերը չեմ յիշում:

Տիրայր Սրբազանը, որ կաթողիկոսի դիւանապետն էր եւ իմանում էր զանազան եւրոպական լեզուներ՝ անդլերէն, գերմաներէն, ֆրանսերէն եւ ռուսերէն, վարում էր խօսակցութիւնը:

Ճաշը շատ լաւ անցաւ, եւ Պալիլն ու գերման զօրավարը հիացած էին ափսէների եւ սեղանի սպասեղէնի վրայ: Դրանց վրայ դրոշմուած էր Ս. Էջմիածինի նկարը եւ քովը գրուած. «Նորին կայսերական մեծութիւն Նիկոլայ Բ. ից ընծայ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին»:

Կաթողիկոսը հարց տուեց. «Կը հաւանէ՞ք այս սպասներին»: Զօրավարը ասաց. «Այո՛ շատ»: Կաթողիկոսը շարունակեց ասելով. «Ըստ ամենաբնական՝ ամէն մի քաղաք ուր կաթողիկոսի ընտրութեան առթիւ, երբ հոս այցելում էր Պետերբուրգից, նրան ընծայում էր մի կառք չորս ձիով, սպասեղէն եւ ուրիշ զանազան ընծաներ»:

Պալիլը ուշադրութեամբ լսում էր: Կաթողիկոսը շարունակելով հարց տուեց Պալիլին.

— Ինչպէ՞ս Ձեզ դուր եկաւ Էջմիածնի շրջակայքը, մանաւանդ

լինի տեսարանը: Տեսա՞ք անթիւ հայ գաղթականներին, որոնք ձեր քաղաքացիներն են եղել: Շնորհակալ եմ, որ գոնէ այսքանն էլ մնացել է:

Տիրայր Սրբազանը դժգոհ էր: Այդպիսի բան կարելի՞ էր ասել հիւրին: Կաթողիկոսը նկատեց եւ հայերէն խիստ շեշտով ասաց.

— Թարգմանէ այն, ինչ որ ես ասում եմ:

Երբ թարգմանուեցաւ, Պալիլ շատ յուզուած էր: Որպէս զի փոխէր խօսակցութիւնը, նա ասաց.

— Ձեր կենացն եմ խմում, Վեհափառ Տէր, հրաշալի գինի է:

— Դեռ անելի լար կայ, — պատասխանեց կաթողիկոսը. — երբ ժամանակը գայ, Տիրայր կը հրաւիրէ ձեզ այդ միւս գինիից խմել:

Խօսակցութիւնը դարձաւ եւ նկատական եւ սովորական նիւթերի շուրջ:

Սպասաւորներ բերին էջմիածնի պտուղներից դեղձ, ծիրան, եւայլն, ինչպէս եւ անուշեղէն, նրանց հետ միասին նաեւ շիշեր փոշիների մէջ, որոնք պարունակում էին սպիտակ դինի: Տիրայր Սրբազանը ասաց.

— Քիչ առաջ Վեհափառ կաթողիկոսի ասածը այն է, որ 35 տարուայ հնութիւն ունի, պահուած էջմիածնի մառաններում:

Երկար չեմ կանգնի ճաշի վրայ: Գերման զօրավարը յայտնեց շատ քաղաքավար կերպով իր շնորհակալութիւնը եւ զգացումները, որմէ վերջ Պալիլ նոյնպէս՝ աւելացնելով.

— Աստուած տայ, որ հայ ժողովուրդը վերականգնի, որովհետեւ ձեր ժողովուրդը ես մօտիկից եմ մանաջում, իբրեւ շինարար եւ աշխատաւոր տարր:

Վերադարձանք Երեւան:

**

Պալիլ փաշան, իր առաջին այցելութիւնից քիչ յետոյ, գաղտնի եւ թուազրեալ հեռագիր էր ուղարկել: Հեռագիրը կարդացնել տուի եւ դուրս եկաւ, որ նա ուզում է երկրորդ անգամ եւս այցելել Արամին Երեւանում, բայց անյայտ տեղում եւ բողոքովին գաղտնի՝ ասելով կարեւոր յայտնութիւն ունի ասելու Արամին:

Հեռագիրը հաղորդեցի Արամին: Նա շատ զարմացաւ եւ խորհուրդ հարցրեց ոչ թէ ընդունելութեան մասին, որի համար նա

տուաւ անմիջապէս իր համաձայնութիւնը, այլ այն մասին թէ ո՞ւր տեղի ունենար այդ տեսակցութիւնը եւ ի՞նչպէս:

Ես խորհուրդ տուի կազմակերպել այդ տեսակցութիւնը Երեւանից քիչ հեռու, գիշերը ժամը երկուսին:

Արամը համաձայնուեց եւ ես հեռադրեցի իսկոյն թուազրեալ եղանակով Պալիլին՝ յիշելով նշանակուած տեղը:

Պալիլ իր ինքնաշարժով եկաւ Երեւանի կայարանից կէս ժամ հեռու մի ամայի կայան: Ոչ ոք կար այնտեղ, բացի Արամից եւ ինձանից:

Երբ Պալիլ վար իջաւ իր ինքնաշարժից, առաջնորդեցինք նրան իմ ինքնաշարժը որ մօտ էր իր կառքին:

Պալիլ յուզուած եւ ջղադրգիւ երեւոյթ մը ունէր: Հակառակ ատոր նորից համբուրեց Արամին եւ ասաց.

— Ինձ մի մեծ ծառայութիւն մատուցիր:

Արամը հարց տուեց անմիջապէս, թէ բանը ինչո՞ւմն էր:

Պալիլ մի մի սիկարէթ հանեց եւ տուեց Արամին ու ինձ: Մենք ասացինք թէ չենք ծխում, վախենալով թէ մի գուցէ թոյն պարուհակող ծխիկներ էին դրանք: Բայց Պալիլը ինք ծխեց նոյն տուփից: Դեռ չէր խօսում եւ մտառանջ էր երեւում:

Արամը դարձեալ հարց տուեց.

— Բարեկամ խալիլ, բանը ինչո՞ւմն է. շատ մտառանջ ես երեւում:

— Ոչինչ, հիմա կ'ասեմ, Արամ ջան: Լուրերը մեզ համար շատ վատ են: Անգլիացիք հայերի հետ մեծ հարուած են տուել թրքական բանակին Արարայի մէջ: Թուրք բանակը ջախջախուեց, խառնիմադանն խուժանի պէս ցիր ու ցան է եղել: Անգլիացիք հետեւում են մեզ եւ մաքրագործում թուրք ուժերը: Պուլկարիա հաշտութիւն է խնդրել: Մենք էլ հաշտութիւն ենք խնդրելու: Ուրիշ ելք չկայ, քանի որ դաշնակից բանակներն էլ Ամերիկայից եկած ահագին նոր քարմ մեծաթիւ ուժով յարձակել են Հիմտենպուրկեան գծին վրայ, մեղքել են այն եւ գերմանացիներին մեծ հարուած են տուել: Որոնք եւս յուսահատ վիճակի են մատնուել: Շատ ուշ չի լինի, նա էլ գիւնաթափ կը լինի: Յագթութիւնը ձերն է: Մենք որոշել ենք այս ցակատից բոլորովին հեռանալ եւ էրզրում փախուել: Մեր փախուելուց յետոյ, դուք կարող էք գրաւել բոլոր մեր թողած վայրերը: Թերեւս էրզրումը եւս ստիպուենք թողնելու ձեզ: Այս գաղտնիքները ձեզ եմ տալիս, իբրեւ ձեր հին բարեկամը:

Ես զարմանում էի, որ մի թուրք ա՛յնքան սրտաց կերպով

մեզ դեռ անյայտ դէպքերի մասին այդպիսի կարեւոր տեղեկութիւններ էր տալիս: Թէեւ մի կողմից՝ ուրախանում էի, որ, վերջապէս, հասնելու էինք մեր սուրբ նպատակին, բայց չէի կարող բացատրել ինձ թէ ինչո՞ւ մի թուրք պիտի յայտնէր մեզ այդ բոլորը:

Արամը լսում էր իր պաղարիւնը պահելով եւ սպասում էր վերջաւորութեան:

Պալիլ ասաց, վերջապէս.

— Արամ ջան, ասացի, որ մենք պէտք է փախչենք: Եւ այդ միշտ է: Բայց մի բան մեզ, մանաւանդ ինձ անձնապէս մտահոգում է: Դա այն է, որ վախենում եմ, թէ մեր փախուստի ժամանակ հայերը մեր կոնակից մեզ սպանեն:

— Հայերը փախչող զինուորին կոնակից չեն սպանի, — պատահանեց Արամը:

Ես ուրախացայ, որ Արամը այդ հպարտ եւ ազնիւ պատասխանը տուաւ:

— Արամ ջան, եթէ ամենքը ֆեզ պէս լինէին, այդ քանակով միշտ կը լինէր: Բայց ի՞նչ էք ուզում... Այնքան բան է պատահել, որ հայերը կարող են շփոթել լաւ վատի հետ: Ես եղել եմ միշտ ձեր բարեկամը: Դու գիտես այդ:

— Այո՛, գիտեմ:

— Բայց կարող են ինձ էլ ուրիշների պէս նկատել եւ սպանել: Ես խնդրում եմ ֆեզանից մի բան:

— Ի՞նչ: Պատրաստ եմ կատարելու, եթէ ինձանից կախում է:

— Պիտի խնդրէի ֆեզանից, որ ինձ երկու-երեք հայ տայիր, որ ինձ առանձնապէս առաջնորդէին մինչեւ էրզրում եւ ասէին. «Մա մեր բարեկամն է, պէտք չէ նրան ձեռք տալ»:

Ես մտածում էի, թէ ի՞նչքան վատ պէտք է լինի մի զօրավար, որ միայն ինք անձնապէս սպահով փախչելու մասին խորհի՝ թողնելով վտանգի ենթակայ իր ամբողջ զինուորները: Բայց տեսնում էի, որ Արամը չէր նկատում այդ կէտը եւ ուզում էր օգտակար լինել ամէն կերպով իր բարեկամին: Մի վայրկեան լուռ մնաց յետոյ ասաց.

— Խալիլ ջան, դարձեալ ֆեզ կրկնում եմ: Հայը չի խփի կրկնակից, մանաւանդ փախչողի ետեւից: Բայց մի խօսք ասացիր, որ ինձ մտածել է տալիս: Այնքան շատ գուլում գործում է, որ մի սրտցաւ հայ կարող է իր վրէժը առնել ֆեզանից, առանց նայելու թէ ո՞վ է, լա՛ւն էս թէ վատը: Այդ մասին իրաւունք ունիս: Ես չեմ կարող երաշխաւորել, որ ոչինչ չի պատահի: Իսկ ֆեզ առանձին ա-

ուաջնորդելու երեք զինուոր քեզ առաջնորդ տալու խնդիրը...

Արամ մի քիչ եւս մտածեց այդտեղ՝ գետին նայելով եւ ինձ նայելով: Ապա շարունակեց.

— Դու, Խալիլ, ինձ մի խնդիր ներկայացրիր, կարելու յայտնութիւններ անելուց յետոյ: Ես էլ քեզ յայտնութիւն անեմ եւ մի խնդրանք ներկայացնեմ իբրեւ հին բարեկամի: Եթէ ընդունիս, այդ ժամանակ ես էլ քեզ խնդրանքի կատարման խոստում կը տամ:

Ես զարմացայ այդ սակարկութեան վրայ:

Պալիլ աչերը բացեց եւ Արամին նայեց մի քիչ յուսալից, մի քիչ միտքարուած.

— Ասացիր, Արամ քե՛ «եթէ ինձանից կախուած է սիրով կ'անեմ»: Ես էլ նոյնը կ'ասեմ: Եթէ ինձանից մի բան կայ կատարելիք սիրով կ'անեմ քեզ համար: Ասա քեզ խնդրանքը:

— Խալիլ, մեզ ամէն բանէ աւելի փամփուշտն է որ կը պակսի:

Այս յայտնութեան վրայ Արամի ղէմքի վրայ սեւեռեցի ակնարկս: Ասել կ'ուզէի. «Դա ի՞նչ անհեռատեսութիւն է որ այսպէս յայտնութիւն ես անում»: Բայց նա, առանց ինձ նայելու, շարունակեց.

— Սարգսրապատի ֆակտամարտի մէջ, եթէ դուք 5-6 ժամ եւս դիմանայիք, մենք պարտուած էինք, որովհետեւ բնաւ փամփուշտ չէր մնացած:

Ուզում էի դիտողութիւն անել, բայց արդէն ուշ էր: Արամը հասկացաւ, որ ղեկուցում էի, բայց դարձեալ շարունակեց.

— Գիտեմ, որ դուք կարծում անագին թիւով փամփուշտ ունե՛ք: Այդ փամփուշտները ամբողջապէս իմ ցոյց տուած տեղը մեզ կը յանձնէք: Ստանալուց յետոյ, ես էլ երկու-երեք հաւատարիմ պահակներ կը տամ քեզ, որ քեզ առաջնորդեմ մինչեւ էրզրում՝ ողջ առողջ:

Եւ յաղթանակ տարած լինելու երեւոյթով՝ Արամ ինձ նայեց հպարտութեամբ:

Պալիլ պատասխանեց.

— Կարսից այդ փամփուշտները ի՞նչպէս կարող եմ ձեզ յանձնել, քանի որ Կարսի զինուորական հրամանատարն է Քէօր Հիւսէին փաշան, հայերի ամենամեծ թշնամին:

— Կարելին արա, Խալիլ, հեռացնել տուր ժամ առաջ Հիւսէին փաշային, մի ուրիշ վայր: Թո՛ղ առաջին գործող այդ լինի: Դրանից յետոյ ամբողջ փամփուշտի մթերքը մեզ յանձնէ իմ նշանակած վայրում, եւ ես դրանք ստանալուց յետոյ, անմիջապէս քեզ չորս հա-

ւատարիմ եւ քաջ զինուոր կը տամ, որ քեզ ողջ առողջ առաջնորդեմ էրզրում:

— Ըստ, կը կատարեմ այդ — ասաց Պալիլը եւ, դարձեալ ողջագուրութեամբ Արամի հետ, նստաւ իր ինքնաշարժը ու սրացաւ դէպի թրքական սասմանը:

Արամի հետ մի քիչ վիճարանեցի այդ մասին, Պալիլի մեկնելուց յետոյ: Բայց Արամը չէր ուզում լսել որեւէ դիտողութիւն. նա ինչ որ վճռել էր՝ անում էր, լաւ լինէր կամ ոչ: Ես իմ դիրքով չէի կարող նրան հակառակել, բնականաբար:

Յաջորդ օրը իմացանք, որ Քէօր Հիւսէին փաշան փոխադրուած էր արդէն ուրիշ տեղ: Նոյն օրն իսկ մենք ստացանք մի քանի սնտուկ փամփուշտ:

Արամը ասաց.

— Տեսա՞ր:

Ես դեռ կասկածամտ էի մնում, որովհետեւ ոչ թէ այս չորս սնտուկ փամփուշտը, այլ ամբողջը եւ բոլոր ռազմաթերթը մեզ պէտք է մնար, եթէ պիտի կատարուէր Պալիլի խոստումը:

Երկրորդ օրն էլ եկան բուսականին սնտուկներ և խնդրանք՝ Արամին յիշեցնող իր խոստումը: Արամը նոյն օրն իսկ հրահանգ տուեց իր չորս քաջ զինուորներին՝ պաշտօն յանձնելով նրանց, Պալիլ փաշային ողջ առողջ էրզրում հասցնելու:

ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ՆԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՒ
ՄԱՀԱՓՈՐՁ ԱՐԱՄ ՓԱՇԱՅԻ ԴԷՄ

1918ի Մայիսի կեսերին էր: Լուր էինք ստացել թէ թուրքերը խղել են կնքուած զինադադարի պայմանագիրը: Բայց այդ մասին որեւէ պաշտօնական հաղորդադրութիւն չկար: Նրանք առանց որեւէ նախազուշացման սկսել էին յառաջանալ դէպի Ալիսի եւ Անիի ճակատը:

Այդ յառաջիազացումի մասին իմացայ զօր. Սիլիկեանից հեռախօսով: Առաւօտեան ժամը հինգն էր. զօրավարը շատ մտահոգ էր եւ ընկճուած ձայնով էր խօսում:

— Թուրքերը յառաջանում են դէպի Սարդարաբադ — Քարխուն քաղաքից: Ալեքսանդրապոլից, Անիից եւ Աղինից կտրուած ենք: Զուսնիմ որեւէ պահեստի զինուոր՝ թշնամուն դիմադրելու համար: Կարելի՞ն արե՛ք անմիջապէս ինձ հասցնելու Ձեր տրամադրութեան տակ եղած պահեստի զինուորները, ինչպէս նաեւ պաշար, փամփուշտ, ռազմամթերք եւայլն: Յայտնեցէք Արամ փաշային գաղտնապէս թէ՛ պիտի աշխատիմ նահանջել դէպի Քարխունի քաղաքները եւ ամրանալ Թոզ-Թէփէլէրի վրայ: Գուք ամրացրէք Երեւանը: Տեղի մի տաք շփոթութեան եւ իրարանցումի: Հեռագրել եմ միեւնոյն ժամանակ Արամ փաշային ծածկագիր, որ համոզէ կաթոզիկոսին թողնել էջմիածինը եւ երթալ իր ամրանոցը:

— Լսում եմ, Գեներալ, կարելի՞ն եւ անկարելի՞ն կ'անեմ Ձեր հրամանները անմիջապէս կատարելու: Կաթոզիկոսի տեղափոխութեան մասին Արամ փաշային պէտք եղածը կ'ասեմ եւ, ինչ որ կարող եմ ուզարկել, իբրեւ զինուորական պահեստի ուժ, ռազմամթերք եւայլն, կ'ուզարկեմ շուտով:

Զօրավարը շատ յուզուած՝ ասաց խեղդուած ձայնով.

— Աստուած ձեզ հետ լինի, հայրենիքը չի մոռնայ ձեր կատարածը:

Այս հեռախօսի հաղորդագրութեամբ ես ապրեցի կեանքիս ա-

մենազօրախտ օրերը: Այդ բոլորէն կինս եկաւ կոմէնդատուրա: Գիտէի թէ նա քաջ էր: Պատմեցի նրան՝ ինչ որ զօրավարը ինձ հեռախօսեց եւ ասացի որ շուտով դուրս եմ ելնելու՝ պահանջուած զինուորներն եւ ռազմամթերքը անմիջապէս ռազմաճակատ հասցնելու համար:

Մի քանի ժամից յետոյ, տրամադրելի վաշտերը ճանապարհ դրեցի եւ նրանց հետ պէտք եղած ռազմատաշարը ուղարկեցի:

Այստեղ պէտք է աւելացնեմ, որ Արամը այդ օրերին աներեւակայելի եռանդ էր ցոյց տալիս բանակի կազմակերպման եւ ինքնապաշտպանութեան համար՝ ուղարկելով ամէն կողմ երիտասարդ ուժեր պրոպագանդ անելու թէ հայ ժողովրդի համար ստեղծուած է «լինել թէ չլինելու հարցը»: Գիշերները նա չէր քնում, մինչեւ առաւօտեան ժամի Յը ստալի վրայ էր: Ամէն հարցի մէջ մտնում էր, որպէսզի ամէն ինչ իր կարողադրութեամբ լինէր: Յոյս էր տալիս բոլորին, եւ նրա այդ ընթացքը ապահովութիւն էր ներշնչում ժողովրդին:

Ընդհանրապէս ես տուն էի վերադառնում առաւօտեան ժամը Յին: Տիկին Արամը ասում էր ինձ.

— Աշօ ցան, երբ որ Արամը առաւօտեան ժամը Յին ինքնաշարժի ձայնը լսում է, ասում է. «Աշոն գնաց մնելու, ուրեմն՝ ամէն ինչ կարգին է»:

Մի օր, առաւօտեան ժամը 1ին, Արամը մտաւ կոմէնդատուրայի դրասենեակը: Այդ ինձ դուր չեկաւ: Նա ինձ հարց տուեց.

— Ինքնաշարժդ այստե՞ղ է: Կարո՞ղ ես ինձ հետ կայարան գնալ:

— Ի հարկէ, — ասացի, — ուր որ ուզես, միշտ քեզ հետ եմ: Ընդհանրապէս, խօսելիս, նրա ժպտը միշտ երեսին էր լինում: Այս անգամ դէմքը դառն էր: Երբ ինքնաշարժի մէջ էինք Արամը ասաց.

— Գործերը վատ են, Արշալիր:

— Մի վայրկեան...

Ես շփէրին հրամայեցի փակել պատուհանը՝ ասելով թէ հարուխ ունիմ: Բայց իմ միտքն էր, որ շփէրը չլսէր մեր խօսակցութիւնը: Արամը շարունակեց.

— Երկրորդ օրն է որ չեմ կարողանում Ալեքսանդրապոլի հետ հեռաձայնով հաղորդակցութիւն ունենալ: Պարզ է, որ գիծը կտրուած է: Փորձեմք այժմ խօսիլ Աղինի եւ Անիի կայարանների հետ: Այնտեղից էլ՝ ոչ մի պատասխան: Վերջապէս, հագիւ կարո-

դայանք խօսել Արաքս կայսրանի հետ: Երբ Արաքս կայսրանի պետը իմացաւ թէ խօսողները ուղբեր են, աւաց:

— Թերեւս վերջին անգամն է, որ խօսում եմ ձեզ հետ: 15 վայրկեան սրտնից առաջ ես խօսում էի Ադրիանի կայսրանի հետ: Ադրիանը ինձ յայտարարեց թէ՛ տանիկները, առանց որեւէ նայսազգուշացման, ումբակոծել են Ալեքսանդրապոլը, որը ընկել է արդէն նըրանց ձեռքը: Նրանք մտել են քաղաք: Սպարապետը իր շտաբով, ինչպէս ե՛լ ուրիշ կազմակերպութիւններ հազիւ են ժամանակ ունեցել հեռանալու Ջաջուտ-Վարափիլիսայի ուղղութեամբ: Նրկար չեմ խօսում, որովհետեւ արդէն մօտենում են: Կտրում եմ տէլեֆոնը: Աստուած Ձեզ հետ:

Արամի ղէմքը չայլայլուեց, բայց երեւի իմ ղէմքը փոխուել էր, որ նա ինձ աւաց:

— Ի՞նչ է պատահել: Ձգերդ մի կողմ: Գէպի գործ եւ աշխատանք: Ցաղթադը մենք ենք լինելու:

Վերադարձանք կոմենդատուրա: Քաղաքում ամէն ինչ հանդիստ էր: Միայն հերթապահ սպան ինձ յայտնեց, որ Թոթմարազուլի մօտ, Երեւանին կից, նշմարել են մի քանի տեղական ձիաւոր թուրքեր, որոնք աշխատել են անցնել տանիկների կողմը: Այս ձիաւորներին չորսը բանտարկուած են, իսկ մէկը փախել է:

Այդ փախչողին ես ճանաչում էի: Նա վաղուց էր արդէն իրենցոյց տալիս որպէս չափազանց թրջամոլ: Իսկ այդ չորսին, որ արդէն կոմենդատուրայի բանտումն էին, հրահայեցի բերել վերեւ իմ դրասնեակը: Գունատուած եւ այլայլուած թուրքերին աւացի ժըպտալով:

— Խոստացել էիք ինձ օգնել հրդեհի ժամանակ: Փա՛նք Աստուծոյ, հրդեհը վերջացաւ: Այժմ էլ որոշել էք օգնել տանիկներին: Ի՞նչ անել ձեզ հետ: Գնդակահարե՞լ անմիջապէս, թէ ուղարկել բանտ: Գնդակահարել չեմ կարող. իմ համոզմունքներին դէմ է սա: Բայց բանտ կը նստէք: Հեռացե՛ք:

Ենթասպան տարաւ նրանց եւ յանձնեց բանտապետին: Հրաման տուի հետները կոպիտ չվարուել:

Մի քանի վայրկեանից յետոյ, եկաւ ինձ. Մալխասեանը եւ յայտնեց, որ քաղաքից դուրս տանող ջուրի խողովակները վնասուած են, եւ որ հարկաւոր են վեց հողի նորոգելու համար:

Դա մեր տեղի թաթարների գործն էր: Հարցրի թէ՛ արդեօք կարո՞ղ էին թունաւորել ջուրը:

— Ձեմ կարծում, — աւաց Մալխասեանը, — որովհետեւ ջրի

մնշումը շատ ուժեղ է: Բայց եւ այնպէս, առ այժմ կարող ենք ամբարներին պահեստի ջուրը գործածել քաղաքացիների համար՝ սպասելով մի քանի օր: Ջրի համար մի ուրիշ գաղափար եւս ունիմ, այն է՝ գտնել 200-300 էլ եւ տիկերի միջոցով տեղափոխել ջուրը զինուորների համար:

— Ես կը գտնեմ էշեր, — աւացի:

Յանկարծ յիշեցի, որ փաստարան Ենզիրարեանը, յիսուն տարեկան մի մարդ, յաճախ գալիս էր եւ խնդրում Արամին, որ հայրենիքի ծառայութեան համար էլ մի աշխատանք տրուի: Արամն ասում էր՝ «լաւ, լաւ», բայց միշտ մոռանում էր: Ի՞նչ աշխատանք կարող էր անել Ենզիրարեանը: Մալխասեանին խնդրեցի սպասել ինձ մօտ մինչեւ բանուորների գալը, եւ այդ ժամանակամիջոցում հեռախօսեցի Ենզիրարեանին, որ անմիջապէս գալ կոմենդատուրա:

Չանցա՛ւ 15 վայրկեան, եւ հերթապահը յայտնեց, թէ Ենզիրարեանը եկել է:

Նա ներս մտաւ յուզուած եւ գոհ ժպիտով:

— Պր. Ենզիրարեան, — աւացի, — մեր ջուրը վտանգուած է: Ձեզ կը պատմեմ յետոյ մանրամասնութիւնները: Անմիջապէս ասեմ, որ պէտք է գտնել 200 էլ մեզ համար:

— Երեւանում է՞ջն է պակաս. 200 էլ կը գտնեմ, 400 էլ:

— Ուրեմն, դուք այդ գործով զբաղուեցէ՛ք:

— Բայց մի վաւերաթուղթ եմ ուզում, որ կարողանամ այդ պաշտօնագրով զինուորական գրաստան ենթարկել էշերը:

— Այդ թուղթը կը տամ, ի հարկէ:

Յանձնարարեցի քարտուղար սպային, որ անմիջապէս պատրաստի այդ թուղթը հետեւեալ բովանդակութեամբ.—

« Պր. Ենզիրարեանը այս հրամանագրի հիման վրայ նշանակուած է էշերի կոմիսար: Առաջարկում եմ գոհացում տալ նրան»:

Տեսայ, որ Մալխասեանը չէր կարող պահել իր ծիծաղը: Ենզիրարեանը աւաց:

— Մի բիշ անյարմար է այդպիսի գրութիւն: Բայց ոչինչ, հայրենիքի համար կ'ընդունիմ նաեւ էշերի կոմիսար դառնալ:

Սեղմեցի նրա ձեռքը եւ աւացի՝ «Գէպի աշխատանք»:

24 ժամից յետոյ 600 էլ կանգնած էին Մալխասեանի տրամադրութեան տակ, կայսրանում:

Ժողովուրդը մեծ մասամբ իր ժամանակը անց էր կացնում

հրապարակի վրայ, և զա կարող էր առիթ առնել գտնադան պրովո-
կացիաների: Հրաման տուի, որ աշգիւրուած է տնից դուրս գալ ժա-
մը Յից յետոյ, բացի բժիշկներից և աշխատակորներէրց, որոնք
պէտք է ունենային մասնաւոր արտօնագիր:

Իմ խեղճ մայրս շատ էր սիրում թուղթ խաղալ: Հատուցում
էին տիկ. Չանըմեանի մօտ, կոմենդատուրայից ոչ հետեւ, ժամը
5ին, այնպէս որ ժամը 8ին վերջացնում էին: Մի երեկոյ այնպէս էր
եղել, որ խօսքի էին բռնուել, և խաղը շարունակուել էր մինչև ժա-
մը 9ը: Երբ մայրս պատրաստուել էր մեկնելու, նրան զգուշացրել
էին, թէ շատ վտանգաւոր է այդ ժամին դուրս ելնելը և թէ պա-
հակները կարող էին շճանաչել նրան: Նա պատասխանել էր եթէ իր-
բւե կոմենդանտի մօր՝ իրեն վնաս չնն տայ:

Ճանապարհին կոմենդատուրայի սպաններից մէկը տնսել էր
նրան և Խնդրել, որ ընկերակցէր իրեն մինչև կոմենդատուրա: Այդ
միջոցին յանկարծ տեսել էին ինձ ինքնաշարժով: Իսկոյն եւեթ մայրս
ճանաչել էր ինձ: Բայց ես չէի տեսել: Մտեցայ, և տեսնեմ, որ
մայրս էր: Հարց տուի ամենայն պողարիմով:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ իրաւունքով տնից դուրս էք եկել:
Փամը 9ը անց է արդէն:

Նախ՝ սոսային խիստ նկատողութիւն արի, որ իրաւունք չու-
նէր ընկերակցելու մօրս, որովհետեւ կոմենդանտի կամ որեւէ մէկի
մայրը, կինը, ով էլ որ լինէր, օրէնքի առջեւ տարրեր չէ միւս քա-
ղաքացիներից:

— Իսկ Ձեզ տիկին, առաջարկում եմ անմիջապէս գնալ կամեն-
դատուրա եւ բանտարկութեան ենթարկուել մինչեւ առաւօտ:

Մայրս ապշած նայեց ինձ, ծիծաղեց և ասաց.

— Գժուե՞լ ես:

— Խելքս տեղն է, տիկին: Առաջարկում եմ հետեւիլ ինձ:

Հերթապահին յանձնեցի մօրս և ասացի, որ իմ սենեակը տը-
րամադրէ նրան և չթողնի դուրս ելլել: Առաւօտուն կանուխ ուղար-
կեցի տուն:

Գաղաքացիները արդէն իմացել էին այդ դէպքի մասին և շատ
զոհ ժպիտով բարեւում էին ինձ այդ առաւօտ:

Երանից յետոյ, դնացի կոմենդատուրա և հրամայեցի որ բո-
լոր զինուորները հաւաքուեն անմիջապէս մեծ բակի մէջ: Այնտեղ
էին զինուորական դպրոցը, երկու ջոկատ զարբաղցիներ, և հա-
րիւր կամուր վանեցիներ: Երբ առաջացայ նրանց մօտ, օրուան
հերթապահ սպան ձայն տուեց.

— Հանդարտ, պատուի առ:

Ես, իմ սովորութեան համաձայն և հակառակ մտահողու-
թեանս, ուրախ ժպիտով ասացի.

— Բարեւ բալէւս:

Նրանք պատասխանեցին.

— Բարեւ, հագար բարի, Պր. հրամանատար:

Եւ նրանց բացատրեցի ճակատի դրութիւնը ասելով թէ՛ կամ
պէտք է յաղթել և կամ մեր հայրենիքը, մեր եկեղեցին, մեր ժո-
ղովուրդը բնաջինջ պիտի լինեն, որովհետեւ մեր դարաւոր անդուծ
խնամին որոշել է մեզ ամբողջապէս բնաջնջել և, անցնելով մեր
զիակները և մեր այբաժ տները վրայով, միանայ իր մահճետական
եղբայրներին՝ նրանց հետ մահճետական-թուրանական մեծ կայս-
րութիւն ստեղծելու համար: «Ինք պատրաստ էք կուռել հայրե-
նիքի համար եւ բացուած դռները փակել նրանց առաջ: Եթէ ոչ, բո-
լորս պէտք է սչնչանանք: Ձեր յաւաջխաղացումը նուիրական պէտք
է լինի»: Յիշեցի այն հերոսական անձերը, որոնց մասին յաճախ
պատմել էի արդէն՝ Դաւիթ Բէկ, Ջօրսոյար Կաղարեւ, Եւայլն, նոյն-
պէս և՛ խօսեցի նրանց կատարած գործերի մասին: «Ղարաբաղի եւ
Վանի դրօշակը բարձր բռնեցէք: Եթէ ձեր մէջ կան այնպիսիներ, ա-
րանք վախենում են, բո՛ւր ինձ ասեն անկեղծ կերպով: Ես նրանց այս-
տեղ կը բողոքեմ եւ կ'ուղարկեմ կանանց մօտ, նրանց հետ հաց թը-
խելու»:

Ամէնքը միասին ուրախ և հպարտ գոչեցին.

— Կեցցէ՛ Հայաստան:

Կրկին բարեւեցի նրանց և հետոցայ: Գնդապետ Յակոբեանին
ասացի, որ պատրաստ է պաշար՝ ժամը 10ին մեկնելու համար:

Այդ բոլորին պահակներից մէկը լուր տուեց, թէ ինժ. Մալխասեանը
եկել է և ասաց թէ կէս ժամից պատրաստ կը լինեն: Մի անգամ ևս
«քաջութիւն» ասացի զինուորներին և գնացի Արամի
մօտ: Նրան դտայ լաւ տրամադրութեան մէջ և իմ կատարածների
մասին լուր տուի: Նա ինձ հարց տուեց.

— Վստա՞հ ես քո զինուորների վրայ:

— Այնպէս, ինչպէս իմ վրայ, — պատասխանեցի:

Ինձ համբուրելով ասաց.

— Ապրիս, Աշօ ջան: Բայց ի՞նչ ես մտածում ուզամաքերփի
մասին:

— Ունիմ 200.000 փամփուշտ, — պատասխանեցի, — եւ դեռ
կարող եմ գտնել բնակիչների մօտ:

Արամն ասաց թէ ինքը ունի 100.000 փամփուշտ, որը պէտք է աւելացնել իմ ունեցածի վրայ: «Այժմ, — ասաց, — գնամք էջմիածին»:

Երբ Երեւանի փողոցներից էինք անցնում, տեսնում էինք, որ ժողովուրդը ամբողջապէս հրապարակ էր ելած: Ամէն կողմ լիքն էր: Բոլորը շատ յուզուած, մտահոգ երեւոյթ ունէին:

Կոմենդատուրայի առջեւ մի պահ կանգ առանք՝ իմաց տալու թէ մի ժամուայ համար բացակայելու էի՝ էջմիածին գնալու համար:

Իմ հաւատարիմ սպաններից մէկը՝ Մուշեղը նստեց շոֆէրի մօտ, եւ գնացինք: Մի կողմ թողինք Ձանգիի կամուրջը, կտրեցինք Երեւանի պարտէզները, մօտեցանք Իւջ-Թէփէլէրին (երեք բլուրներ) որոնք ես արդէն ամբարցրել էի Երեւանի պաշտպանութեան համար):

Արամը դիտելով այդ բլուրները ասաց.

— Արամ մեր վերջին ամբոցներն են: Բայց քաջայոյս եմ, որ մինչեւ այդտեղ քշնամի չպիտի հասնի: Սակայն, անհրաժեշտ եմ նկատում, որ դու նրանց պէտք էր արած կերպով ամբարցնես:

— Մի՛ մտահոգուիր, — ասացի, — ինժ. Մալխասեանը եւ կապիտան Աւագեանը հսկում են պաշտպանութեան համար եղած աշխատանքների վրայ: 1500ից աւելի այր եւ կին, առանց դասակարգի խտրութեան, միասին աշխատում են այնտեղ:

Անցան Իւջ-Թէփէլէրը եւ Խորաքարը: Տեսայ որ Արամը աւելի մտատանջ էր երեւում: Նա ասաց.

— Վստահ եմ, որ Կաթողիկոսը մեզ պիտի օգնի:

Ինքնաշարժը աւելի արագութեամբ ընթանում էր դէպի էջմիածին: Ամէն անգամ, որ գալիս էի Ս. Հռիփսիմէի վանքի առջեւ, հիանում էի նրա ճարտարապետական գեղեցկութեան վրայ: Արամին խնդրեցի, որ մի բոլոք կանգ առնենք, եւ վազեցի դէպի վանք:

Այնտեղ գտնուող վանականը նայեց ինձ զարմացած: Ես ասացի.

— Ուզում եմ տեսնել Ձաւէն եպիսկոպոսին:

— Երէկ գնաց էջմիածին, — պատասխանեց:

Արամը ինձ հարց տուեց թէ՛ ինչո՞ւ էի ուզում տեսնել Ձաւէն Սրբազանին:

— Ես քննաչում եմ Ձաւէն Սրբազանին Բագուից, երբ նա այնտեղի թեմակալն էր: Նա ամէնփից շատ յարգուած էր: Ես եւս նրան յարգում եմ մանաւանդ նրա հայրեմասիրութեան համար, — պատասխանեցի:

Շարունակեցինք մեր ճանապարհը: Ինքնաշարժը մտնում էր Վաղարշապատ: Ժողովուրդը տխուր դէմքով բարեւում էր մեզ: Արամն ասաց թէ՛ Երեւանի կանայք իրաւունք ունին տխուր լինելու, երբ չեն տեսնում զո ժպիտը:

Կառքը կանգնեց էջմիածնի Տրդատ Թագաւորի Մեծ դրան եւ Սինոդին յատկացուած յարկարաժնին մէջտեղ: Մտանք Ս. էջմիածնի Տաճարի բակը: Այնտեղ տեսանք Տիրայր արքեպիսկոպոսին, որ Կաթողիկոսի առաջին դիւանապետն էր: Նրան յայտնեցի թէ՛ պէտք է տեսնէինք Կաթողիկոսին անմիջապէս:

Այնտեղ էր նաև Ձաւէն եպիսկոպոսը, որը մեզ տեսնելով՝ սթապուտեց կասկածելով որ դրութիւնը վատացել էր:

Կաթողիկոսը մեզ ընդունեց անմիջապէս: Մենք անցանք իր առանձնասենեակը: Նախ՝ մեզ օրհնեց, ապա հարց տուեց.

— Ի՞նչ է նշանակում ձեր այցելութիւնը այս ժամին: Մի որեւէ վտաճիկ կայ:

Արամը պատասխանեց.

— Ամէն ինչ կարգին է, վեհափառ: Մենք եկանք Ձեզ մօտ խնդրելու, որ եթէ կարելի է Բիւրական մեկնէք:

Նա իր աչքերը սեւեռեց մեզ վրայ եւ ասաց.

— Կաթողիկոսը արձակուրդի կը գնայ Յուսիսին, ու Լուսաւորչի տօնից յետոյ: Այդ օրը ինքը կը կատարէ Ս. Պատարագը: Ուրեմն, վիճակը ծանր է: Ո՛չ, տղերքս, Հայոց Կաթողիկոսը նահանջող չէ:

Եւ, դառնալով Տիրայր արքեպիսկոպոսին, հրամայեց զարկել բոլոր եկեղեցիներէ՝ զանգերը: Մի քանի վայրկեանից յետոյ, բոլոր զանգերը սկսեցին զօղանջել: Կաթողիկոսը դուրս ելաւ իր անձնական յարկարաժնից՝ Ս. Տաճար իջնելու համար: Ձանգերի մէջ լսուած էին հին հայկական շարականները եւ լալագին աղօթքը Հայաստանի ազատութեան համար: Լսուած էին նաև Ս. Գայեանէի եւ Ս. Շողակաթի եկեղեցիների զանգերը:

Ես հիանում էի վանքի կարգապահութեան վրայ: Ամենակարճ ժամանակամիջոցում բոլոր եպիսկոպոսները, քահանաները եւ զանազան վանականները, իրենց կրօնական զգեստները հագած, եկեղեցի էին մտնում: Ճեմարանի աշակերտները արդէն այնտեղ էին Կաթողիկոսի ժամանումից առաջ՝ «Հրաշափառ»ը երգելու համար:

Կաթողիկոսը մտաւ Տաճար: Իր բարձր հասակը մի առանձին տպաւորութիւն էր թողնում: Նրա ետեւից ամբողջ խումբը յառաջանում էր: Տաճար մտնելուց առաջ, 12 սարկաւազներ խնկարկում էին մասնաւոր համաչափութեամբ:

Արամը եւ Լս մասնք Ս. Տաճար բոլորից յետոյ :

Կաթողիկոսը ծնրադրեց Ս. Կալքի առջեւ : Այդ միջոցին էջմիածնի եւ շրջակայքի բոլոր Եկեղեցիների գանդերը զօղանջում էին մահասարսուռ գանդով : Բոլոր ժողովուրդը հաւաքուած էր Մայր Տաճարի մէջ եւ շուրջը : Կաթողիկոսը աղօթում էր ծնկաչոք : Նրա հետ միասին աղօթում էին բոլոր կրօնատրոնները եւ ժողովուրդը : Պարզ երևում էր որ հայոց Վեհափառը ազերսում էր Աստուծոյ, աւաուտածային հրաշքի համար : Երբեմն արտասուքը կաթում էր նրա աչքերից, բայց միշտ նա պահում էր պաղարիւնը :

Յետոյ, նա իր մօտ կանչեց Գարեգին արքեպիսկոպոսին (ապաղայ Կիլիկիոյ Կաթողիկոսին) ու Չաւէն արքեպիսկոպոսին եւ հրահայեց նրանց .

— Գնացէ՛ք, ասացէ՛ք, որ Կաթողիկոսը այս սուրբ վայրից պիտի չհեռանայ : Ինչ որ իրեն աւելոյ է տրուած իր հայրերից, նա պարտուար է պաշտպանել, եթէ նոյնիսկ հարկաւոր լինի ընկնել այս Սուրբ Տաճարի մէջ : Եթէ հայ ժողովուրդը, հայ զինուորը չեն կարող պաշտպանել աստուածատուր եւ Միածնի էջմով կրկնապէս սքրբացած այս սուրբ վայրը, ինքը առանձինն կը մնայ՝ նրան պաշտպանելու համար : Գնացէ՛ք, ասացէ՛ք, որ այդ հրամայեց Վեհափառը եպիսկոպոսներին :

Յետոյ գառնալով ժողովուրդին՝ Կաթողիկոսը ասաց .

— Ինձ առաջարկում են բողոքել Ս. էջմիածինը եւ գնալ հանգրտտանալ Բիւրականում : Ես մերժեցի :

Վերջապէս, մեզ գառնալով, ասաց .

— Ասացէ՛ք հայ բանակին թէ՛ ես տեղիցս չեմ շարժուում : Ես չեմ բողոքում Ս. էջմիածինը : Եթէ մեր զինուորները նրան չեն կարողանում պաշտպանել եւ բուրքերը մտնելու են Ս. էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Ս. Իջման սրբավայրում :

Յետոյ ծնրադրեց, համբուրեց Ս. Իջման վայրը եւ շատ տըխուր արտայայտութեամբ ասաց .

— Տէր, օգնէ իմ գաւակներին, որ յաղթեն Քջնամուն :

Ապա կրկին դարձաւ ժողովուրդին եւ ասաց .

— Ինչպէս Մեծն Վարդան Քրիստոսի անունով յաղթեց հեթանոսներին Տղմուտի ափին եւ ընկաւ հերոսաբար, նոյնպէս ե՛ւ այժմ պէտք է յաղթենք : Այդ սուրբ պատերազմին մէջ Ղեւոնդ երէցը գնում էր իր խաչով կռուողների առաջից : Այդ օրուայ յիշատակութիւնը մեզ համար մեծ տոն է :

Այդ պահուն Գարեգին եւ Չաւէն արքեպիսկոպոսները յառա-

ջապան բազմութեան միջից եւ ծնրադրեցին Կաթողիկոսի առջեւ :

— Վեհափառ Տէր, — ասացին նրանք, — մեզ քոյլ առէք գնալու հայ բանակի գլուխը, ինչպէս Ղեւոնդ երէցը :

Կաթողիկոսը նրանց օրհնեց եւ ասաց .

— Գնացէ՛ք, ասացէ՛ք զինուորներին, որ նրանք պատասխանատու են բոլոր հայերի կեանքի համար : Մենք ոչ ոք չունենք մեր կողքին, բացի Քրիստոսից, որը մեր միակ ուժն է եւ մեզ օրհնում է :

Մ՛ յնքան յուզիչ եւ մեծաւարանչ էր այս պատկերը, որ Արամը եւ Լս հաղի էինը կարողանում զսպել մեր արտասուքը :

Վեհափառը զրանից յետոյ դուրս ելաւ Ս. Տաճարից, եւ մենք նրան ընկերացանք մինչեւ իր յարկարածինը : Նա մեզ կրկին օրհնեց, եւ մենք դուրս ելանք :

Մեզ սպասում էին Գարեգին եւ Չաւէն արքեպիսկոպոսները : Խնդրեցի Արամ փառային թոյլ տալ զնայու էջմիածինի տապառանք եւ անմիջապէս տպել տալ Կաթողիկոսի խօսքերը, որպէսզի Գարեգին եւ Չաւէն արքեպիսկոպոսները այդ զրութիւնը տանեն իրենց հետ ճակատ :

Հրաժեշտ առինք Երկու սրբազաններից եւ վերադարձանք Երեւան : Ամբողջ ճանապարհին յուզմունքից լուռ էինք : Երբ Չանդիի մօտ էինք, Արամն ասաց .

— Դու կրօնական զգացմունքներ ունես, ես՝ ոչ : Բայց վստահ եմ, որ Կաթողիկոսի խօսքերը օրհնուորների սրտից են խօսելու :

Դրանից յետոյ, ես թողի Արամին եւ զնացի Կոմենդատուրա : Այնտեղից դիմեցի բանակի ընդհ. հրամանատարութեան մասնաւոր դժով եւ խնդրեցի, որ լուր տան զօր. Սիլիկեանին Կաթողիկոսի մօտ մեր ունեցած այցելութեան ու նրա պատասխանի մասին եւ որ զինուորներ եւ ռազմամթերք արդէն ճանապարհ են հանուած եւ երկկոյտան կը հասնեն : Զօր. Սիլիկեանը շատ պո՛հ էր մնացած այդ ամէնքից եւ ասած էր, որ վստահ է, թէ Կաթողիկոսի խօսքերը մեծապէս պիտի ազդեն կռուողների վրայ՝ նրանց քաջութիւն ներշնչելով :

Մի շարք անմիջական աշխատանքներ կատարելուց յետոյ պահանջ զգացի մի քիչ հանդատանայու բնակարանումս : Սակայն շատ շուտով Կոմենդատուրայից տրուած մի շատ ուժեղ զանդահարութիւն զարթնեցրեց ինձ :

Գնդապետ Չատիկեանն էր, որ շտապ կանչում էր ինձ Կոմենդատուրա : Նա արդէն ուղարկել էր կառքը իմ ետեւից :

Կոմենդատուրայում իմացայ, որ Արամ փառայի դէմ մահա-

փորձ են պատրաստում: Հրամայեցի կանչել իմ տեղեկատուներին՝ Գրիշային եւ Կարոյին: Պատասխանեցին թէ նրանք արդէն եկած են: Հրամայեցի նրանց, որ պահակ դնեն դրան մօտ, որ ոչ ոք չկարողանայ մօտենալ: Հարցրի նրանց թէ ի՞նչ կար: Պատասխանեցին.

— Տեղեկութիւն ունենք, որ Նորքի մէջ Թոփալ Յակոբը հաւաքել է մի խումբ մարդիկ եւ նրանց գրգռում է Արամ փաշայի եւ Երեւանի հրամանատարին դէմ՝ ասելով թէ Արամը եւ Շահխաթունին թուրքերից գնուած են եւ ուզում են պատերազմը շարունակել թուրքերին ի նպաստ:

— Ո՞վ է այդ Թոփալ Յակոբը: Ի՞նչ են խօսում նրա մասին Նորքի մէջ:

— Դա մի դասալիք գիւնուոր է եւ այդ պատճառով արդէն ձերբակալուել է մի անգամ:

— Կարո՞ղ էք գտնել կառապան վանոյին:

Շուտով բերին նրան կոմենդատուրա: Երբ մտաւ իմ սենեակը, ես նրան չճանաչեցի իսկոյն, որովհետեւ բեխեր ունէր կպցրած եւ բոլորովին փոխուել էր:

— Ի՞նչ գիտես Թոփալ Յակոբի մասին:

— Այսօր Թոփալ Յակոբը, մի քանի հարիւր հոգի հաւաքած, գալիս է քանդուել կամեմդատուրան եւ ձերբակալելու բոլոր վարիչներին: Երեւում է, որ բաւական դրամ է ձեռք ձգել, բայց յայտնի չէ թէ ո՞րտեղից: Նա թուզք է խաղում. սոսկալի ամբարտաւան է դառել:

Պատուիրեցի հսկել նրա վրայ, բայց դեռ չձերբակալել, իսկ երբ մօտենայ Երեւանին, ինձ իմաց տալ:

Այս խօսքերիս վրայ երեք տեղեկատուներս մեկնեցին:

Չինուորական կայանից կանչել տուի գնդացիներին հրամանատար Գէորգեանին: Մինչ այդ, ամէն ինչ պատմեցի գնդապետ Չատիկեանին: Նա թէեւ ինձ կանչել էր տեղեկատուների պահանջի վերայ, բայց ինքն էլ դեռ չէր իմանում թէ բանը ինչո՞ւմն էր: Նրան հրամայեցի իր հետ առնել երկու ընտրուած սպայ եւ նրանց հետ թաքնուել Ազգային Պորհուրդի շէնքում:

Եկաւ Գէորգեանը: Ես միշտ գոհ էի՝ տեսնելով այդ կարգապահ լաւ սպային: Բանի էութիւնը բացատրելուց յետոյ, հրամայեցի նրան, որ իր գնդացիներին խմբի հետ գնայ Ազգային Պորհուրդ, ուր պէտք է լինի Չատիկեանը իր մարդկանց հետ:

— Երբ տեսնէք, որ ամբոխը յառաջանում է դէպի Ազգային Խորհուրդ, կը պահանջէք յետ փաշուել եւ ցրուել: Եթէ չհպատակ-

ուեն, կը ձերբակալէք առաջնորդներին: Երբ տեսնէք պատշգամից իմ սպիտակ քաշկիմակը, այն ժամանակ միայն կը կրակէք:

Գէորգեանը մեկնեց՝ իմ հրամանները առնելով:

Քիչ յետոյ գնացի Ազգային Պորհուրդ, ուր նախագահը, Պորէն Սրբազան, խորհրդակցում էր Արամի, Իսահակեանի եւ ուրիշների հետ: Ամէն ինչ յայտնեցի նրանց մահափորձի մասին:

Արամը յայտնեց, թէ Թոփալ Յակոբը վտարուած է Դաշնակցութիւնից, դասալքութեան եւ զանազան գողութիւնների պատճառաւ: Նա հրամայեց, որ ձերբակալւած նրան եւ գնդակահարել տամ: Պորէն Սրբազանը ասաց, թէ մինչեւ օրս մենք արիւն չենք թափել մեր կռուողների շարքերի մէջ եւ թէ լաւ է մի ուրիշ միջոց խորհել: Ազգային Պորհուրդի անդամ Իսահակեանը պատասխանեց դժգոհութեամբ.

— Գիտե՞ք, Սրբազան Հայր, թէ այդ Թոփալ Յակոբը ի՞նչ վատ դեր է խաղում: Նա լուրեր է տարածում, թէ Արամը ամուսնացել է մի թուրք կնոջ հետ, թէ թուրքերից փող է ստացել եւ այլն: Գիտնալով, որ Արամը երէկ միայն լիազօր լինելու պատասխանատուութիւնը վերցրեց, շտապում է վերջ տալ նրա կեանքին:

Այդ խորհրդակցութիւնների ժամանակ ամբոխի միջից լուում էին ձայներ.

— Կորչի՛ Արամ փաշան, կորչի հրամանատարը:

Արամը շատ հանդարտ էր մնում: Նա կանչեց իր պահակին եւ հրամայեց, որ մնայ Ազգային Պորհուրդի դրան առջեւ՝ ամբոխի կոչերը չլսել ձեւացնելով:

Ես գնացի պատշգամբ, որի երկաթեայ շրջապատը դեռ չինուած չէր: Ազգային Պորհուրդի շէնքը, որ վնասուած էր պատերազմի սկիզբին, դեռ չէր նորոգուած պէտք եղած կերպով: Հայեացք ձգեցի շրջապատի վրայ եւ տեսայ հազարապետ Գէորգեանին, որ օգտուելով շէնքի չնորոգուած վիճակից՝ կարողացել էր լաւ թաղցնել իր խումբը: Փողոցից նրանք չէին երեւում, բայց ես նրանց տեսնում էի վերեւից: Տեսայ նոյնպէս Չատիկեանին, որը կատարում էր իր պարտականութիւնը:

Վերադարձայ Ազգային Պորհուրդի սրահը: Արամն ասում էր.

— Այս միջոցին, երբ Սարգարաքաղի մէջ հայոց համար կեանքի եւ մահուան հարց է դրուած, ուր հայ արիւնը հոսում է, անթոյլատրելի է, որ մի դասալիք այդպիսի խայտառակութիւններ անի: Ես սպառնալիքից չեմ վախեցնում: Բայց երբ հայ ժողովրդի նակատագրի մասին է հարցը, ես պահանջում եմ անեմախիստ պատիժը:

Բոլորը նրան ծափահարեցին: Այդ միջոցին պատասխանեցին սահմանափակ զորքերի մի շատ անհավանական ժողովուրդ: Արամն ինձ նույնը: Ես ժողովուրդ պատասխանեցի թէ՛՝ դրանք իմ մարդիկն էին: Գնացի սահմանների մասը և տեսայ, որ Զատիկեանը և Պետրովը ձերբակալել էին Թոփալ Յակոբի մարդկանցից մի քանիսին և նրանց նետով էին սպառնում: Ես ձերբակալեցի իրենց: Զատիկեանը ասում էր, թէ նրանք իրենց այդ յոսի վարձուներով անշարժ կարող են մնասել հայրենիքին և թէ զնդակահարությունից պաշտուելու միջոցը ճակատ դնալն է:

Բառեան՝ մեծ էր ձերբակալուածների թիւը: Նրանք լայիս էին և զղջում՝ ասելով թէ խարուած էին: Զատիկեանը ասում էր, թէ նրանք իրենց այդ յոսի վարձուներով անշարժ կարող են մնասել հայրենիքին և թէ զնդակահարությունից պաշտուելու միջոցը ճակատ դնալն է:

Այդ պահին ներս մտաւ փաստարան ենդիրարեանը զողողալով և ասաց թէ զուրսը կուում են: Ես նրան հանդարտ կերպով պատասխանեցի:

— Մեր մարդիկը առաջուանից արդէն պէտք եղած դիրքերը գրաւել են և անկարելի է, որ ամբոխը կարողանայ յառաջանալ մինչեւ Ազգային հորհուրդի դուռը: Արամ համակրանքով և ժպտալով ինձ նայեց:

Ազմուկը աւելի սաստկացաւ: Արամը ուզում էր պատշգամ ելնել և խօսել ամբոխին: Նրան թոյլ չտուին: Ես նրան խորհուրդ տուի դեռ չերեւալ և ասացի որ Պր. Իսահակեանը պատշգամ ելնէ և յայտնէ, որ Թոփալ Յակոբը դաւաճանի մէկն է և ազգը ներկու չէ նրան երբեք: Բայց երբ նա պատշգամ ելաւ, ամբոխը իր ազմուկով փորձեց արդիւնել նրան խօսելու:

Թոփալ Յակոբը ասում էր թէ բոլոր կուսակցութիւնները դաւաճաններ են և պահանջում էր, որ Արամը և Շահխաթունին յանձնուէին:

Այդ միջոցին Խորէն Սրբազանը երեսաց պատշգամին վրայ: Նրան տեսնելով՝ ամբոխը մի վայրկեան լռեց, բայց անմիջապէս սկիզբ տուց իր զայրուածութեամբ, թէ՛ «Մենք կրօնաւորների պէտք չունենք»: Կրկնում էին. — «Յանձնեցէ՛ք մեզ անմիջապէս Արամին, նրան պիտի կախենք»:

Ես յետ քչեցի Սրբազանին և իր տեղն անցայ:

Ամբոխը սկսաւ գոռալ:

— Վար իջիր, քու մորքը պիտի քերքենք:

— Շան որդիք, անմիջապէս բոլորդ էլ գնացէ՛ք նախապէս: Երբ դուք մի հայի արիւն թափէք, ձեզանից ոչ մէկը այստեղից ողջ չի վերադառնալ: Բացէ՛ք ձեր աչքերը և տեսէ՛ք, որ գնդացիներով շար-

ջապատուած էք:

Ամբոխը այդ խօսքերի վրայ լռեց, բայց Թոփալ Յակոբը զարթոնալ խօսեց, ասելով, թէ սուտ են այդ բոլորը, և թէ ամբողջ բանակը իր կողքին է: Ամբոխը նորից քաջալերուեց և սկսեց շարունակել իր ազմուկը:

Ես ստուգեցի նկատեցի, որ Արամը իմ կողքին էր: Նա ստուգուեցի ունէր քիթը բռնել մի լուրջ խնդրի ժամանակ: Իր այդ ժեստը անհետաց յետոյ, նա սկսեց խօսել: Միեւնոյն ժամանակ նկատեցի, որ Արամի պահակը Թոփալ Յակոբի կողքին էր: Արամը ասաց.

— Ձերբակալեցէ՛ք անմիջապէս այդ դաւաճան Թոփալ Յակոբին, որ արդէն զինուորական դատաւիճ է: Իսկ դուք բոլորդ պէտք է գնաք զինուորական կետոն՝ անմիջապէս նախապէս ուղարկուելու համար: Դուք ինքներդ ձերբակալեցէ՛ք ձեր պետին:

Թոփալ Յակոբը պատասխանեց.

— Դու ինքդ գնա նախապէս: Կամենդանսը ուզում է մեզ սարքափեցնել գնդացիների մասին խօսելով: Բայց ես ունեմ մաուզերներ: Ձեզ հինգ վայրկեան եմ տալիս, որպէսզի յանձնուէք: Թէ ոչ՝ զիտեմ իմ անելիքը: Դուք բոլորդ էլ քուրբերին էք ծախուած:

Արամը պաղարիւնով ասաց.

— Հի՞նգ վայրկեան միայն:

Ամբոխը պատասխանեց.

— Այո՛, հինգ վայրկեան միայն:

Արամը շատ հանդարտ կերպով և բոլորովին իր անձին տէր՝ նշան տուեց իր անձնական պահակին.

— Գեորգ, անմիջապէս:

Եւ մի րոպէս Գեորգը հանեց հրազներ իր թեւից և զարկեց Թոփալ Յակոբին, որը դեռին ընկաւ մեռած:

Բոլոր ամբոխաւորները զոչեցին.

— Կեցցէ՛ Արամ փաշան:

Նրանք ուղեցին ցրուել, բայց Զատիկեանը իր ամբողջ խմբով անմիջապէս պաշարեց նրանց և փոխադրեց զինուորական կեդրոնը:

Ես սրահ մտայ և, մտենալով Խորէն Սրբազանին, յարգալիք կերպով ասացի, թէ ապստամբութիւնը վերջացած է, չնորհիւ Արամի պաղարիւնութեան և հանդարտութեան, թէ բոլոր խումբը շարժապատուած էր նախապէս զինուորներով և թէ նրանք բոլորը տարուած են զինուորական կեդրոնը:

Արամը մտենալով զրկեց ինձ և ասաց Խորէն Սրբազանին, թէ ապստամբութիւնը վերջացաւ մեր հրամանատար Շահխաթունիի նախօրօք ձեռք առած միջոցների շնորհիւ:

ՅՈՒՇԵՐ ԱՆԿԱՒՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԷՆ

1913էն 1920, Հայ ժողովուրդին համար այնքան ճակատագրական նշանակութիւն ունեցող այդ տարիներուն, Ռուբէն իր այնքա՛ն սիրած ընկերոջ՝ Արամ Մանուկեանի հետ պատմութիւն են կերտած, հրաշքի համազօր գործեր են տեսած, ու անհրաժեշտ կերպով, աւելի իրազեկներ պէտք է մանրամասնութեամբ պատմեն՝ ի՛նչ որ կապուած է այդ հսկաներու կեանքին եւ գործին հետ:

Ուրեմն, մօտաւորապէս տարի մը վերջ է որ Ռուբէնը կը գրտնենք Երեւանի մէջ: Թիֆլիզէն Հայաստանի անդրանիկ դահլիճին եւ Ազգային Խորհուրդին հետ հասած էր ազատ Հայաստանի մայրաքաղաքը: Այս մէկ տարուան շրջանին, Արամ Արարատեան դաշտին մէջ իր ընկերներով, իսկ Ռուբէն Թիֆլիզի մէջ ազգային եւ կուսակցական մարմիններուն հետ, իրենց կարելին ըրած էին այս արդիւնքին հասնելու համար:

1918, Օգոստոսի վերջին օրն էր, երբ Ալազեազէն, Փեթարայ Մանուկին, Չոլոյին, Մօրուք Կարապետին հետ ճամբայ կ'իյնանք՝ վայրկեան առաջ հանդիպելու համար Ռուբէնին:

Երեւանի անշուք իր բնակարանին մէջ, Ռուբէն կ'ընդունի մեզ սրտազեղումով մը: Ուրիշ հիւրեր ալ կան իր մօտ: Անոնց մեկնելէն վերջ կը բոլորուինք սեղանին շուրջ: Պէտք էր նախ մենք խօսէինք, դիտէինք Ռուբէնին բնաւորութիւնը. անիկա կը սիրէր ալիւրի տոպրակներու նման թօթուել դիմացիները ու անկից վերջ միայն խօսիլ:

Տարի մը առաջ, Խնուսի բերդին մէջ մեզի տուած հրահանգներն ու պատուէրները մասամբ միայն յաջողած էինք զործադրել: Այս պարագան կը յայտնենք իրեն: Մեղադրանք չունի Ռուբէն ասոր համար, գիտէ մեր անցուցած փոթորիկները ու յաջողութիւն մը կը նկատէ որ այդ իրարանցումներուն մէջ կրցած ենք ժողովուրդին մէկ մասը տեղաւորել Ալազեազի լանջերուն վրայ: Կը յայտնենք իրեն որ

Արամին օժանդակութիւնը ունեցած ենք պայանական այդ հողերը վերադրաւելու համար: Սակայն դեռ հարիւր հազարաւոր դաղթականութիւն կայ անտուն եւ անպատասպար: Սովն ու հիւանդութիւնը աւեր կը զործեն՝ մեր նորահաստատ պետութեան մէջ: Այդ բոլորին մօտէն իրազեկ է Ռուբէն, այդ է արդէն զինք մտահոգողը: Պէտք էր տեղաւորել այդ ժողովուրդը իր պայանական հողերուն վրայ, ու տեղաւորել որքան կարելի էր շուտ: Իւրաքանչիւր անցնող վայրկեան բազմաթիւ կեանքեր կ'արժէր, ու յետոյ ժամանակը դժուար թէ ուրիշ առիթներ հայթայթէր նման աշխատանքի մը համար:

Ռուբէն այդ օր մեր առջեւ դրաւ գործունէութեան ամբողջ ծրագիր մը. աւելի լայնն ու ընդարձակը՝ ինչ որ պարզած էր Խնուսի մէջ: Սեղանին վրայ փռած էր իր նշանաւոր քարտէզը, որուն վերայ յետին մանրամասնութեամբ նշանակուած էին Հայաստանի գիւղերն ու քաղաքները՝ իրենց ունեցած բնակչութեան տեսակներովն ու այլազանութեամբը: Ընդհանրապէս քիչ խօսող Ռուբէնը, այդ օր բացատրութիւններ կու տար մեզ մեր վիճակին ու իր ծրագիրներուն մասին: — Հայաստան ունեցանք, կ'ըսէր Ռուբէն, սակայն ատիկա առայժմ տկար ու ապրելու հնարաւորութիւններէ զրկուած մանուկի մը կը նմանի: Անիկա կ'ըսէր որ — սովն ու հիւանդութիւնները զիս չեն մտահոգեր, կառավարութիւնը շուտով կը յաջողի ատոնց առջեւ առնել. մեր ժողովուրդն ալ սակաւակեր է եւ կրնայ քար ծամել, քարէն հաց հանել. ի՛նչ որ մտահոգիչ է ապագայի համար, ատիկա Հայաստանի բնակչութեան ներկայ դիմագիծն է, արուեստական կերպով ստեղծուած: Ապա ցոյց կու տար քարտէսին վերայ շրջաններ, որտեղ թուրքն ու թաթարը եկած տեղաւորուած էին, բռնադրաւելով Հայ գիւղացիութեան հողերն ու ինչքերը: Այս անարդարութիւնը պէտք էր վերջ գտնէր, Հայուն երկիրը, Հայուն հողը պէտք էր իր ժողովուրդի զաւակներուն սեփականութիւնը դառնար. դաղթականութիւնը պէտք էր տեղաւորուէր անոնց վրայ, որպէսզի իրաւունք ունենայինք ըսելու որ երկիր ունինք, ու աւելի վստահութեամբ նայելու ապագային վրայ:

Մօտաւորապէս ասոնք էին Ռուբէնի խօսքերը այդ օր: Սակայն մենք գործնական հրահանգներու կը սպասէինք. դիտէինք որ Ռուբէն խօսքերով զոհացող չէր: Ու ահա անիկա կրկին նայեցաւ իր քարտէսին վրայ: Տեսանք որ մատը շրջան կ'ընէ՝ ձղնի ձորի, Միքարտէսին վրայ: Տեսանք որ մատը շրջան կ'ընէ՝ ձղնի ձորի, Միքարտէսին վրայ: Ռուբէն նայուածքը բարձրացուց եւ մենք հասկցանք թէ անիկա ի՛նչ ըսել կ'ուզէր: Փեթարցի Մանուկի ձեռքը ուժով մը

իջու Չորոյի ուսին: Մանուկը բռն զուգէր որ հասկցած էն ու կարելի է մեկնիլ այլեւ: Ռուբէն նկատեց այդ ու կրկին խօսիլ սկսաւ: — Գէտք է, բա՛ւ Ռուբէն, հարիւր նազարատը մեր գաղթականութիւնը սողաւորն այդ շրջաններուն մէջ, սակայն առանց ազմուկի: Կառավարութիւնը ժամանակ չուեր այդ գործերով զբաղելու, եւ իրաւունք ունի: Բացի այդ, այժմ օրինաւոր իշխանութիւն ունինք, Ազգային Խորհուրդը շուտով կը վերածուի հարիւրարանի: Խօսքի սիրահարները, ինչպէս ամէն տեղ, մեր երկրին մէջ ալ շատ պիտի ըլլան: Ունինք նաեւ աջեր, ձախեր, այս բոլորին խօսելու նիւթ պէտք չէ տալ: Աւելի ճիշդը իրենց խօսածը պէտք է առնուած ըլլայ օղէն: Ձեր աշխատանքին մէջ հաշտուտու պիտի ըլլաք ինձի: Վստահ եղէք, տեղեակ կ'ըլլայ նաեւ կուսակցութիւնը: Եթէ գործի ընթացքին աջէն ու ձախէն խաղաղութիւնը ըլլան, համբերող եղէք, — չեմ գիտեր, չտեսայ, — որն այս յօգտութիւնս յանկարգը ձեր ազնուներուն օրրէք: Գիտեմ որ այնպէս է, սակայն սգաւտ եմ, մեր երկրին մէջն ենք ըսելով, բիրիւսցութիւններու մէջ չըլլանք, այս է կարեւորը: Աւերորդ է խօսիլ գաղտնապահութեան մասին: Ամենէն փոստիկի եւ քաղ տղանք պիտի գատէք: Գիշերը կ'ըստնէին մեզ ժամանակին, հիմա ալ քիչերն են որ կ'ըմբռնեն մեզ: այս կէտն ալ մի առնա՛ք: Զէնք եւ փամփուշտ, ի՛նչ որ պակաս՝ ուղղակի իմ կարգադրութեամբ պիտի ստանաք: Եւ ի՛նչ որ կարեւոր է, արագ պիտի շարժիք, պատերազմը մեր է վերջացած, բշտմին կորսնցուցած է իր հաւատարակըսութիւնը, մեր վերջերը կը միտն տակաւին: Բնական է եւ մարդկային՝ մեր ժողովուրդը նստեցնել իր հողերուն վրայ: Ասիկա այսպէս է այսօր, սակայն վաղը կրնայ այսպէս չըլլալ: Ձեր գործին մօտէն պիտի հետեւիմ: Այժմ յայտնեցէք ինձի թէ ի՛նչ տեսակ փամփուշտներու պէտք ունիք: Հնարաւոր է նաեւ ձեր տրամադրութեան տակ զնդացիներն դնել...

Գիշերը ուշ տուն մեկնեցանք Ռուբէնի բնակարանէն: Առաւօտ կանուխ ստացանք անհրաժեշտ ռազմամթերքը եւ տեղաւորեցինք կառքերու մէջ ու ճամբայ ինկանք զէպի Բաշ Գեառնի: Քանաքեռի վրայ պետութեան զինուորներ կեցուցին մեզ. կ'ուզէին ընդդիմանալ փամփուշտներու փոխադրութեան: Բարեբախտաբար Ռուբէն նախատեսած էր այդ արգելքը ու մեզ յանձնած էր Արամ Մանուկեանի կողմէ ստորադրուած արտօնագիր մը:

Տեղ հասնելուն հաւաքեցինք մեր ուժերը, վերակազմեցինք մեր զունդը, որ 250 հոգիէ կը բաղկանար ու ձեռնարկեցինք մշակուած ծրարի գործադրութեան: Մեր այս զունդը, որուն մէջ հին

Ֆիլասոյիներէն բացի նաեւ զային նորահաս նրիտասարդներ, լաւապէս մտաբերած էր տարբերակաւ կոխանչու հատար: Անկախութեան հռչակումէն վերջ սենք ալ հետեւած էինք Անդրանիկին ու ժողովուրդի մէկ մասը մեր հետ վերցուցած՝ ճամբայ ինկած էինք զէպի Գարսիաստան՝ անգլիական ուժերուն միանալու համար: Սակայն Նախընկեանի առջեւէն, մեր զորամասն ու ժողովուրդը կը դառնանք եւ ու կը մտնենք Զանգեզուր: Այնտեղ բախումներ ունեցած էինք ջրբանջու եւ թուրքերու հետ: Թշնամին կը սաքրագործուի: Այդ օրերուն նրամ Մանուկեանէն նստակ կը ստանանք. մեզ կը հրահանուէր ժողովուրդը միասին տաւած անցնիլ Բաշ Գեառնի: Այնտեղ նա՛ Անդուտի եւ Վաղուտի շրջաններուն մէջ բուն կոխներ ունեցած էինք: Թշնամին պարտուելէ ու հետանալէ վերջ, ժողովուրդը տեղաւորած էինք այնտեղ:

Ահաւասիկ այսպիսի կոխներու մէջ մարդուած գունդ մը ունէինք մեր տրամադրութեան տակ: Մեր առաջին գործը եղաւ մաքրել Գարալագեազի շրջանը եւ սոսա մը ժողովուրդ տեղաւորել այնտեղ: Անկից վերջ մեզ կը մնար անցնիլ ծրարուած մեծ գործողութիւններուն: Առաջին ասթիւ պէտք էր ձղնի ձորը մաքրել թշնամիներէն: Թուրք, թաթար եւ քիւրտ աւազակներ, թրքական չափուներու գըլխաւորութեամբ, անկախ Հայաստանի սրտին վրայ ինքզինքնին կը նկատէին սէր եւ տիրական, նստած էին հայ զիւղացիի հողերուն վրայ, երբ անդին կը կոտորուէր մեր ժողովուրդը՝ արեւին եւ անձրեւին տակ:

«Հայ Յեղափոխականի մը յիշատակները»
է. հատոր, էջ 108-112

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԷՄԸ

1910ին, Թուրքիոյ սահմանադրական ազատութեան օրերուն, Պոլիսը տակաւին կը շարունակէր ոպելորուիլ բանախօսութեանց անընդհատ ցուցադրութիւններով:

Հայկական նահանգներէն ուսանողներու խումուն բազմութիւն Պոլսոյ կեանքը կ'ալեկոծէր: Ազատագրական շարժումներու բովէն անցած, կամ խորապէս տպաւորուած, անոնք ազատ խօսքի եւ ազատ վարձունքի դրօշակիրները կը հանդիսանային ազնուական հովերէ տարուած այս միջավայրին մէջ:

«Ազատամարտ»ի լրատուութենէն գիտէինք, որ Ա. Ահարոնեան եւ Արամ Մանուկեան պիտի խօսին Սկիւտարի թատրոնին մէջ: Ուսանողները անխուսափելիօրէն հոն էին, սրահը եւ դուրսը խուռներամ բազմութիւն մը կը լսէր Ահարոնեանի ա'յնքան առինքնող ճառը: Պօսքի, մտքի, ձայնի հզօրութեամբ եւ բանաստեղծական երաժշտութեամբ իսկական հռետորութեան ըմբռնումը կը պարտադրէր ունկնդիրներուն:

Ու ահա բեմ կու գար Երկրի գործիչներէն մէկը՝ Արամը: Կայտառ, թիկնեղ, առիծի գլուխով մը գմբէթաւորուած: Կը խօսէր մարտական ոճով, գործի եւ գործելու թափ կար անոր խօսքերուն մէջ: Ահարոնեանի թրթուուն եւ երաժշտական ճառը վայելողներէն շատերը, եթէ չհիասթափեցան Արամի ճառէն, դայն գործնական յաւելում մը նկատեցին: Բայց ուսանողութիւնը, որ գործի եւ նոր հորիզոններու կարօտն ունէր, սիրեց Արամի ճառը, իր յեղափոխական թափով:

Բանախօսութենէն ետք, Վարդգէս Սէրէնիլիւեանը զիս ծանօթացուց Արամին: Վանեցի ուսանողներուն հետ ես ալ Արամը շրջապատողներուն մէջն էի: Լուռ կը հետեւէի այն զուրգուրանքներուն, որ Արամը կը շտալէր վանեցի իր Երիտասարդ գործակիցներուն:

Վարդգէս, որ Արամի կողքին էր, թեւէս քաշեց, ու դարձաւ Արամին:

— Ձեր վամը հասկցանք, ծանօթացիր այս Սասունցի լեռնակամ հովիւին, որ հիմա ուսանող է:

— Էդ ի՞նչ լաւ երեւոյթ է, Սասունից գոմէ մի ժայռի կտոր ընկել է ձեր ազնուական քաղաքը:

Արամը մտերմական էր: Մեր պատահական հանդիպումներուն այնպէս կը վարուէր եւ զրոյցի կը բռնուէր, որ կարծես տարիներու գործակից ըլլայինք:

Արամ եւ Սարգիս Բարսեղեան (Վանի Սարգիսը) Սեւ Մովու ափերը մեկնեցան իբրեւ հայ դպրոցներու տնօրէններ, Սամսոն, Օրտու, Սինոպ: Անոնց հետ կրթական աշխատանքի լծուած էին Վահան Մինախորեանը, Բարունակ Կապուտիկեանը եւ ուրիշներ: Ամառը միայն, արձակուրդներուն, առիթ կ'ունենայի կարճ հանդիպումներ ունենալ Արամին հետ, երբ Պոլիս կու գար գործով կամ արձակուրդով:

Այս սահմաններուն մէջն էր մեր ծանօթութիւնը, երբ պայթեցաւ Պալքանեան պատերազմը:

1912ին, Արամ կը մեկնէր դէպի Վան, իբրեւ պատասխանատու գործիչ: Փոթորկալի օրեր էին: Հայ ժողովուրդը կը ձգտէր հայկական նահանգները ինքնավար եւ կիսանկախ շրջան դարձնելու: Մեծ պետութիւններու տրամադրութիւնը այդ կողմը հակած էր: Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ ազգային մարմինները միակամ եղան այս խնդրին մէջ: Հետեւանքները ծանօթ են պատմութեան հետեւողներուն: 1913ին. կ'որոշուէր ինքնավարութիւն տալ հայկական նահանգներուն եւ, 1914ին, հայկական նահանգները երկու շրջանի կը բաժնուէին, լիազօր նահանգապետ ունենալով Հոֆը եւ Վեստենենկը:

1912ի Հոկտեմբերին, Ս. Չաւարեանի առաջարկով եւ Բիւրոյի որոշմամբ ես կը մեկնէի Տարօն, իբրեւ գործիչ Դուրան-Բարձրաւանդակի շրջանին: Վասպուրականի եւ Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէները յաճախ յարաբերութեան մէջ կ'ըլլային: Այդ երկու շրջանները սահմանակից էին եւ մեր ազատագրական շարժումներուն ամենէն ուշադրաւ կեդրոնները հանդիսացած էին: Բացի Կ. Կոմիտէի թղթակցութիւններէն, որ ես կը վարէի իբրեւ քարտուղար, քանի մը նամակներ փոխանակեցինք Արամին հետ, որուն խորհուրդները անհրաժեշտ էին եւ գործնական: Դժբախտաբար այդ թուղթերը այժմ չկան, բայց կրնամ ըսել, թէ Արամի տուած խորհուրդներն ու գործնական թելադրանքները ինծի շատ օգտակար եղան:

1913ի Օդոստոսի վերջերուն, կը վերադառնայի Պոլիս (Ռոստոմի հաւանութեամբ), իրաւարանական համալսարանէն վկայական ստանալու համար: Դէպի Տրապիզոն ճամբորդութեան ընթացքին՝ կը հանդիպէի Ռուբէնին, որուն հետ թղթակցութեան մէջ էի: Ան ժընեւէն կը վերադառնար Տարօն, իբրեւ պատասխանատու գործիչ: Բարերգի լեռներուն վրայ անձնապէս կը ծանօթանայինք: Այս պատահական հանդիպումները կը հիմնաւորէին այն գործակցութիւնը, որ պիտի ունենայի Արամի եւ Ռուբէնի հետ:

... 1915ի դարնան, կոտորածի սպառնալիքը հրեհէի բռնած էր վասպուրականն ու Տարօնի աշխարհը: Հայ մարտիկները լեռները կը բարձրանային, ինքնապաշտպանութեան յոյսերով, աչքերը յառած ուսական բանակի եւ կամաւորական զուգերու երեւման:

Վռամեանէն երկտող մը կը հասնէր Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյին, յայտնելու, թէ դանակը ոսկորին հասած էր եւ եթէ երկու շարաթէն կամաւորները չմտնեն Վան, կոտորածները իրենց վախճանին կը հասնին: Ուշացումը թուրքերու գործին կու գար:

Ու սուրը Վանի հայութեան կոկորդին իջնելու վայրկեանին, Վանի Այդեատանն ու քաղաքամասը մէկ մարդու պէս գէնքի կը փարէին եւ Արամի ղեկավարութեամբ, աննման հերոսական արարքներով, կը դիմադրէին թրքական բանակին, ոստիկանական վաշտերուն եւ արիւնարբու խուժանին: Ամիս մը, Ապրիլէն մինչեւ Մայիս 5ը, բազմաթիւ զոհեր խլելով եւ զոհեր տալով՝ Վանի հերոսամարտը յաղթանակով կը պսակուէր:

Արամ, որ 1905ին կը մտնէր Վան իբրեւ անձնուրաց գործիչ, կը գործէր մեծ խանդավառութեամբ ու իր շուրջը կը համախմբէր Վանի նուիրեալներն ու երիտասարդ սերունդը. գործակից ունէր Իշխանը, Վ. Փափաղեանը, Սարգիս Բարսեղեանը, աւելի վերջը՝ Ռուբէնն ու Մալխասը: Ու ճակատագիրը պիտի ուզէր որ 1915ին, տասը տարի այդ շրջանին նուիրուելէն ետքը, ինքը մնար Վանի հերոսամարտի ղեկավարը, ու առաջին կորիզը դնէր ազատ Հայաստանի մը: Վռամեանն ու Իշխանը աստատմութենէն մէկ օր առաջ տարած էին եւ ճանապարհին խողխողած: Վ. Փափաղեան Մուշ կը գտնուէր Ռուբէնի հետ, աւելի արիւնալի պայմաններու մէջ, իսկ Սարգիս Բարսեղեան զոհ կ'երթար Ապրիլեան Եղեռնին...

**

Վանը գրաւուած էր: Խանդավառ օրեր էին: Ամբողջ հայ ժողովուրդը շարժման մէջ էր: Ազատագրական շարժումը առինքնած

էր բոլորը: Ու խուժում կար դէպի Հայաստանի ա'յն վայրերը, որոնք ինքնապաշտպանութեան դրօշը պարզած էին՝ ազատութիւն կամ մահ նշանաբանով:

Մեր առջեւ կը բացուէր գործելու լայն հորիզոն մը: Բասեն արդէն կազմակերպուած շրջան մըն էր: Հոն նոր վարչութիւն մը կը ստեղծէինք եւ գործերը կը յանձնէինք անոր, ու մենք կը մեկնէինք Երեւան, հոն որոշելու մեր բռնելիք ուղին: Երեւան հասնելուն պէս՝ հանդիպում մը կ'ունենայինք Ռոստոմի հետ եւ կը զեկուցէինք մեր կատարած գործերու մասին:

Ռոստոմ, որ յաջորդ օրը ճամբայ պիտի ելլէր դէպի Վան, կարգադրեց որ վարչութեան անդամները իրեն ընկերանան: Պիթլիսի, Տարօնի եւ Սասունի ազատագրման հրատապ խնդիրը բոլորին մտահոգութեան առարկան էր: Մարտական ուժերը պիտի շարժէին Վանէն, Մալազկերտէն եւ Ախլաթէն՝ դէպի Մշոյ դաշտը:

Վանի յաղթանակին տասներորդ օրը, Ռոստոմի հետ մենք կը մտնէինք Վան: Դիմաւորող երիտասարդները մեզ կ'առաջնորդէին ուղղակի Արամի պաշտօնատեղին, Հայաստանի առաջին նահանգապետը, ազատ կորիզը ապագայ յոյսերուն: Արամ կ'ողջագուրուէր մեզի հետ, բացարտութեամբ, պարզութեամբ, ինչպէս պիտի ընէր խմբական ժողովի մը մէջ: Իր նկարագրի յատկանիւններն էին պարզութիւն, յստակատեսութիւն եւ գործի ընթացքին՝ վճռականութիւն: Այդ պահուն խոնարհ պարզութիւն մը կը ճառագայթէր անոր դէմքէն: Նշմարեցի որ անոր նայուածքը միշտ Ռոստոմի վրայ է: Ռոստոմ զուրգուրանքի ժպիտը դէմքին, լուռ, անշարժ, կարծես թէ կը շոյէր Արամը: Հպարտ էր կուսակցութեան հիմնադիրը, իր ձեռնասուններու յաղթանակով:

Արամ դարձաւ Ռոստոմին.

— Ռոստոմ ցա՛ն, եթէ մեր կուսակցական աւանդութիւններին անպատշաճ կը նկատես նահանգապետութիւն ստանձնելու, կը հրաժարիմ եւ իմ տեղը պաշտօնատար մի մարդ կը նարեմք...

— Ի՞նչ ես ասում, Արա՛մ, դու չե՞ս գգում որ Հայաստանի պետութեան հիմքն ես դնում: Նահանգապետ, նախարար եւ նախագահ բնական պիտի թուին պետական կազմին մէջ:

Ռոստոմ բացուած էր մտերիմ գրոյցի: Մենք ուզեցինք զանոնք առանձին թողուլ ու ոտքի ելանք. կ'ուզէինք «Աշխատանքի Տուն» երթալ:

Արամ մեզ ծանօթացուց վարչական խորհուրդի անդամներուն հետ: Հոն էին դաշնակցական վարչականներուն հետ հնչակեան եւ

ոամկավար գործիչները, որոնց ծանօթ էի Պոլսոյ ուսանողական օրերէն: Արամ երկու երիտասարդներու յանձնեց մեզ եւ աւելցուց:

— «Աշխատանքի Տուն»ը տարէ՛ք ընկերները, լաւ հիւրասիրեցէք եւ տեղաւորեցէք: Հոն համախմբուած են մեր երիտասարդները: Կա՛րօ, քո ընկերները հոն կը գտնես, այս ընկերներին ծանօթացուր նրանց:

«Աշխատանքի Տուն»ը երիտասարդական եռուզեռի մէջ էր: Բոլորն ալ գործի լծուած էին՝ նոր հայրենիքը կերտելու: Հոն ես հանդիպեցայ Հմայեակ Մանուկեանին, Մնացական Կորկոտեանին, Վէսպերին, Օննիկ Մխիթարեանին եւ շատ մը այլ մտաւորականներու, որոնք զէնքը ձեռին՝ մասնակցած էին արիւնալի կռիւներուն:

«Աշխատանք» թերթը սկսած էր լոյս տեսնել Հմայեակ Մանուկեանի եւ Օննիկ Մխիթարեանի խմբագրութեամբ: Դասախօսութիւններ եւ զեկուցումներ ամէնօրեայ դարձած էին:

Երեկոյեան, հոն եկան Արամ եւ Ռոստոմը, շրջապատը աւելի լալանցաւ: Ու այդ պահերուն, ես նշմարեցի Արամի գուրգուրոտ վարարմունքը դէպի այն աշխատաւոր մարտիկները, որոնք մասնակցած էին կռիւներուն:

Մեր վարչական մարմինը սեղան մը դրաւած՝ իրարու քով ամփոփուած էինք, ու հրճուանքով կը դիտէինք այս բազմութիւնը, որ հպարտանքով լեցուած էր ազատագրական այս ճամբու մէջ: Արամը խումբեր, հին ընկերներ գրկած, թեւերը ինկած՝ մեր սեղանին կը մօտեցնէր:

— Ահա, տղա՛ք, մեր թէւսը, Գրիգոր Պուլկարացին, Տաճատը, Փանոսը...

Ու բոլորն ալ, հակառակ իրենց հերոսական արարքներուն, համեստ էին, ու իրենց աչքերուն մէջ կը կարդացուէր պաշտամունքի զգացումը, որ ունէին Արամի հանդէպ: Իսկ Արամը, յաղթանակի դափնիով, իր շրջապատին ճակատները կը զարդարէր:

Մենք քանի մը օր, այսպէս, վայելեցինք ազատագրուած Վանը, միշտ շրջապատուած երիտասարդ ընկերներով, կամաւորական գունդերու ղեկավարներով: Ամէն օր, մենք կ'ըլլայինք Ռոստոմի եւ Արամի մօտ, ու կացութեան տեղեակ կ'ըլլայինք:

Երեկոյ մը, Ռոստոմ մեզ առաւ եւ տարաւ Արամին մօտ: Ռոստոմ եւ Արամ Հ. Յ. Դաշնակցութեան Հայաստանի Բիւրոյի անդամ էին եւ կուսակցական խնդիրները իրենք կը կարգադրէին: Այդ ժողովին՝ Արամի եւ Ռոստոմի հետ միայն մեր խմբակն էր, որ կը մասնակցէր: Ռոստոմը յայտնեց, թէ անհրաժեշտ է որ անմիջապէս մեկ-

նինք Մալազկերտ, երկու հիմնական սարտականութեամբ:

Ա.) Քննութեան առնել Տիգրան Դեւոյեանի խնդիրը, որ սխալ զեկուցումներ հաղորդած է ուսւ հրամանատարութեան,

Բ.) Ամէն ջանք թափել, որ ուսւ զօրքերը շարժին դէպի Մշոյ դաշտը, իրենց գործողութիւնները համաձայնեցնեն մեր կամաւորական գունդերու յառաջխաղացման, որ Վանի ծովակի հարաւէն կ'առաջանար դէպի Դատվան եւ Պիթլիս: Այդ արշաւանքին կը մասնակցէին Դրոյի, Քեռիի, Համագասպի, Անդրանիկի եւ Վարդանի գունդերը:

Մենք յաջորդ օրն իսկ ճամբայ ելանք, կտրեցինք Բերկրիի, Արճեշի ճամբաները Վանի ծովակի հիւսիսային եզերքներէն, եւ երրորդ օրը հասանք Մալազկերտ: Մեզի կ'ընկերանային հինգ թիկնապահ քաջ կամաւորներ:

Այդ գործերու մասին չեմ ուզեր ծաւալիլ այս սիւնակներուն մէջ: Այդ հարցերու շուրջ մանրամասն գրած եմ «Արեւմտեան Հայաստանը Առաջին աշխարհամարտին» (1914-1918) գրքիս մէջ:

Միայն կրնամ վկայել, որ կամաւորական գունդերը թշնամին ջախջախեցին եւ հասան Դատվան ու Ախլաթ: Խմբապետ Խեչոն նահատակուեցաւ հերոսական մարտի ընթացքին: Ռուսական բանակները արդէն հասած էին Պուլանուխի Կոր գիւղաքաղաքը: Պուլանուխի եւ Մալազկերտի շրջաններէն ազատուած էր երեսունչորս հազար ժողովուրդ: Մենք, ամէն օր, քայլ մը առաջ կ'երթայինք եւ կը յուսայինք իջնել Մշոյ դաշտը, որ մեր դիրքերէն միայն 30 քիլոմետր հեռաւորութեան վրայ կը գտնուէր:

Վահան Փափաղեանէն եւ Ռուբէնէն ծածկագիր նամակ հասաւ մեզի՝ քրտախօս Խաչոյի ձեռամբ: Մուշ եւ դաշտը ծանր օրեր կ'ապրէին: Սասուն փարած էր զէնքին եւ տաժանելի պայմաններու մէջ կը կռուէր իր գոյութեան համար: Ու ահա, ուսական բանակներու նահանջը կը սկսէր՝ զլիսապոտոյտ արագութեամբ, ու Տարօնը եւ Սասունը կը մնային արեան ծովին մէջ...

Յուլիս 14ին, նահանջի առաջին օրն իսկ կը սկսէին Մշոյ դաշտի եւ Մուշ քաղաքի կոտորածներն ու տեղահանութիւնները:

Վասպուրականի, Մալազկերտի, Պուլանուխի եւ նոյնիսկ Ալաշկերտի մէկ մասի գաղթը անպատմելի աղէտ մը եղաւ այդ օրերուն: Մեր վարչութիւնը մնաց Մալազկերտէն շարժուող ժողովուրդին հետ եւ մենք բռնեցինք Ալաշկերտի ճամբան, հասնելու համար Արարատեան դաշտը:

Հազիւ հասած էինք Իգտիր, հոն գտանք Ռոստոմն ու Արմէն

Գարոն, որոնք մեզի թելադրեցին անմիջապէս մեկնել դէպի Բերկրի: Անոնք ըսին, թէ մենք Դրոն եւ իր գունդը պիտի գտնենք Արաղայի դաշտը, տեղահան ժողովուրդի թիկունքը պաշտպանելու:

**

Մենք Բունեցինք Մասիս-Պայազիտ-Արաղայի ճամբան: Պայազիտէն անդին հանդիպեցանք Անդրանիկին, Սմբատին, Վարդանին եւ անոնց ետեւէն Արամին եւ իր հետեւորդներուն: Զինուորականներուն համար յառաջ երթալ եւ նահանջելը դարձած էր սովորական երեւոյթ, մինչդեռ Արամին համար ազատագրուած Վասպուրականի կորուստը յուղարկաւորութիւն մըն էր: Տրտմութիւն եւ մտահոգութիւն կար անոր դէմքին:

Բարեւեցինք: Պահ մը կեցաւ.

— Դրոյի մօտ կ'երթաք:

Երբ հաստատական պատասխան տուինք, աւելցուց.

— Գոնէ տասնեակ մը կայ, որ դէպի Վան կ'երթայ օգնութեան: Թէրեւ լքուած ու որբացած երեխաները փրկէք ձեր ամբարաններուն վրայ: Բարեւեցէ՛ք Դրոյին...

Ու մենք եղանք Դրոյի հետ: Անցնող երկու շաբաթներու ընթացքին, Արաղայէն մինչեւ Պայազիտ, մենք գետակներու եզերքներէն հաւաքած էինք 200է աւելի լքուած մանուկներ եւ փոխադրած օգնութեան կայանները:

Վանի նահանջը տխրութեամբ կը լեցնէր ամբողջ հայութեան սիրտը...

Մէկ ամիս անց, ոռոսական զորքերը Վանն ու Մալազկերտը կը վերադարձնին առանց կռուի... բայց հայկական այդ շրջաններուն մէջ հայ ժողովուրդը չէր մնացած: Կային զինուորներ եւ զինուած տղամարդիկ: Ընտանեկան ծուխը հազիւ կը բարձրանար քանի մը անկիւններէ:

**

1916ի գարունը նոր յոյսերու եւ խանդավառութեան հորիզոն մը կը բանայ: Փետրուարին կը սկսի ընդհանուր յարձակողականը, որուն կը մասնակցին հայ կամաւորական գունդերը վճռական դերով: Ու մէկ ամսուան ընթացքին՝ Անդրանիկ եւ Համազասպ կը մտնեն Պիթիս, Դրոյի գունդը կ'իջնէր Մշոյ դաշտ եւ գործակցելով

գնդապետ Սիլիկեանին եւ Սամարյեանին, մենք կը բարձրանայինք Սասուն: Էրզրումը, Երզնկան եւ Տրապիզոնը զբաւուած էին: Վանը վերադարձուած էր եւ ժողովուրդի հոսանքը կը յորդէր դէպի Խնուս-Մուշ, Վան, Մալազկերտ եւ Ալաշկերտ: Վերածնող Հայաստանի յոյսը խանդավառութեամբ կը լեցնէր սիրտերը:

Ու ահա, Արեւմտահայոց առաջին համագումարի հրաւերը, իրարու քով բերելու դաղթականական կեանքը տնօրինող մտաւորականները, հրամանատարները, գործիչները, քաղաքական լայն գործունէութեան համար:

1917ի Մայիս 6ին, երբ տեղի կ'ունենար Ա. Համագումարը Երեւանի մէջ, Արեւմտահայ դաղթականներուն թիւը 300·000ի կը հասնէր:

Արեւմտահայ Ա. Համագումարը տեղի կ'ունենար Երեւանի Առաջնորդարանի ընդարձակ սրահին մէջ: Ժողովը կը բացուէր Արամի, Անդրանիկի եւ Վահան Փափաղեանի նախագահութեամբ: Նախաձեռնողը իրենք էին, եւ ժողովը միաձայնութեամբ երեքն ալ նախագահ ընտրեց: Պատգամաւորներ եկած էին Վանէն, Մուշէն, Սասունէն, Խնուսէն, Բասենէն, Էրզրում-Երզնկայէն, Ալաշկերտէն, շրջաններ՝ որոնք մասամբ վերարնակուած էին, եւ Կովկասի զանազան գաղթականներէն: Գաղթականներէն եկող պատգամաւորները մեծամասնութիւն էին: Երկրի գործիչներէն շատերը չէին կրնար իրենց գործերը լքել եւ Երեւան գալ:

Արամ ողին էր այդ Համագումարին, իր ամբողջ կեանքը անցուցած էր Արեւմտահայաստան եւ բնական կը նկատուէր անոր արեւմտահայութիւնը:

Արամ իր առաջադրութիւններուն մէջ գործնական էր եւ հեռատես: Վիճարանութիւններու ընթացքին՝ համադրող եւ հաշտեցրնող: Իսկ ծայրայեղ պարագաներուն՝ սաստող:

Արեւմտահայ Համագումարը բացուեցաւ Մայիս 6ին եւ վերջացաւ Մայիս 16ին: Չայն ունեցող պատգամաւորները 64 էին, որոնցմէ 41ը դաշնակցական, իսկ ուսմիակար, հնչակեան եւ բոլշեւիկները միասին ունէին 23 ձայն: Խորհուրդը ընտրելու շուրջ անհամաձայնութիւններ ծագեցան: Ոմանք կ'ուզէին ժողովը պայթեցնել: Որոշումները, առանց գործադիր մարմնի մը, մեռել տառ պիտի մնային: Մինչդեռ արեւմտահայ կեանքը կը մտնէր նոր փուլի մը մէջ: Ինքնավարութիւն մը պիտի ունենար եւ կրնար հասնիլ հայկական պետութեան մը կազմութեան: Փաստօրէն Երկիրը մեր ձեռքն էր: Կար փոքրամասնութիւն մը, որ այս հիմնական պարագաները

նկատի չէր առնել: Արամ շատ մեծ ճիգ թափեց ի մի բերելու այս ուժերը: Վանի պարսպան բոլորին պարզեց: Մեր հաւաքական կամքի նշանակութիւնը շեշտեց եւ կրցաւ, Դաշնակցութեան ղեկավարութեամբ, եզրակացութեան մը բերել մասնաւորաբար հնչակեանները եւ ռամկավարները: Որով՝ խորհուրդի անդամ ընտրուեցան դաշնակցական 8 անդամներ՝ 41 ձայնի ուժով եւ հակառակորդները, իրենց 23 ձայնով՝ ունեցան 7 անդամ:

**

Ռուսական յեղափոխութիւնը կը պայթէր 1917ի Փետրուարին: Կովկասի հայութեան կեանքը կը մտնէր նոր եւ փոթորկալի փուլի մը մէջ: Նոյն ետուն կեանքը ճակատներուն վրայ: Կուսակցութիւնները հրապարակ կու գային, ազատ գործունէութեան. խանդավառ կեանք մը կը փոթորկէր ամբողջ Ռուսաստանի, նոյնպէս Կովկասի բեմերուն վրայ:

...Գալիք օրերու ճակատագրական գործերուն վճռական ուղղութիւն տալու համար, Հ. Յ. Դաշնակցութեան Հայաստանի եւ Արեւելեան Բիւրօները հրաւիրած էին ռայոնական լայն ժողով, որուն կը մասնակցէին Երկրի, Կովկասի եւ Ռուսաստանի Կ. Կոմիտէներու ներկայացուցիչները:

Այդ ժողովին կը մասնակցէին Վանի, Դուրան-Բարձրաւանդակի, Ալաշկերտի, Բասենի, Էրզրումի Կ. Կոմիտէները՝ 24 պատգամաւորներով: Ձայնի իրաւունքով ժողովին ներկայ էին 75 պատգամաւորներ: Նկատի ունենալով, որ այդ օրերուն Դաշնակցութեան Ընդհանուր Ժողով գումարելու հնարաւորութիւն չկար, ռայոնական ժողովը լրացուցիչ ընտրութեամբ՝ Արեւելեան Բիւրօյի անդամ ընտրեց Կորիւն Ղազարեանն ու Ս. Վրացեանը: Հայաստանի Բիւրօյի անդամներէն շատերը նահատակուած էին: Անոնց փոխարէն ընտրուեցան Վանէն՝ Հմայեակ Մանուկեան, Էրզրումէն՝ Ամատունին եւ Դուրան-Բարձրաւանդակէն՝ տողերս գրողը:

Արամ եւ Ռուբէն ժողովի ընթացքին իրապաշտ վերլուծումներով ճակատներու դրութիւնը ճշմարտամային կը նկատէին, եւ կը թելադրէին, որ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք Երկրի մարտական ուժերու կազմակերպութեան վրայ, նկատի ունենալով որ յեղափոխական տիրող մթնոլորտին մէջ ռուսական զօրքի քայքայումը անխուսափելի էր: Կովկասի ղեկավար մեր ընկերներէն շատերը ոգեւորուած էին ծաւալած յեղափոխութեամբ եւ երկրի աշխատանքները

բերկրորդական կը նկատէին: Երկու ամիս անցած, փաստերը եւկան ապացուցանելու, որ Արամն ու Ռուբէնը իրաւունք ունէին՝ Արեւմտեան Հայաստանի պաշտպանութեան խնդիրը առաջնակարգ նշկատելու:

Արամի հրուէրով Հայաստանի Բիւրօն առաջին նիստը ունեցաւ եւ կատարեց աշխատանքի բաժանում: Նիւուս-Մուշ վերադարձըս ամիսով մը ստիպուեցայ յետաձգել եւ Արամի պնդումով՝ ստանձնեցի Բիւրօյի քարտուղարի պարտականութիւնը: (Հ. Յ. Դ. Բիւրօյի քարտուղարութիւնը չլիւթէր բոլշեւիկեան քարտուղարի հետ, որ տիրական դէմքն է իրենց բիւրօյին: Մերը երիտասարդ գործիչի մը պարզ աշխատանքն էր, որ իմ ուսերուս կը դրուէր):

Հայաստանի եւ Արեւելեան Բիւրօներու նիստերը շատ յաճախ կ'ըլլային հաւաքականօրէն: Այդ ժողովներու ընթացքին կրցայ հաստատել, թէ որքան գործնական դէմք էր Արամը: Գիտէր ձեւակերպել եւ կարծի կապել խնդիրները: Ու ժողովներէն ետքը, մշտարթուն կը հետապնդէր գիտնալու, թէ որոշումները գործադրուած են, տեսակցութիւնները տեղի ունեցած են եւ ի՞նչ արդիւնքով, նամակները գրուած եւ հասցէներուն ղրկուած են թէ ոչ:

Այդ օրերուն, հերթապահը (որ նախագահը կը նշանակէր) եւ քարտուղարը (որ նիստերը կ'արձանագրէր եւ նամակներուն ընթացք կու տար) բացառիկ իրաւունքներ չունէին: Ռոստոմը, Արամը եւ Ռուբէնը կը գործէին, կը թելադրէին եւ պարտականութիւններ կը ստանձնէին՝ ինչ որ անհրաժեշտ էր:

Ռոստոմի դէմքի արտայայտութիւններէն գիտէինք, թէ գործերու ընթացքը լա՞ւ է, թէ՛ վատ: Ռուբէն միշտ կնճռոտ խնդիր մը ունէր լուծելիք: Իսկ Արամը ամէն բանի կը խառնուէր: Իր նկարագրի յատկանիշն էր՝ որոշումներու գործադրութիւն, եւ արդիւնքի հաստատում: Միշտ իրապաշտ: Անհատական ուժեղ նկարագիր, որուն միացած էր հաւաքական ղեկավարութեան անշեղ ուղեգիծը:

Բժիշկ Զաւրիեւի դիմումներուն ընդառաջելով՝ Կերենսկիի կառավարութիւնը զբաւեալ հայկական նահանգները կը յայտարարէր ինքնավար առանձին շրջան մը՝ Ռուսաստանի հովանիին տակ:

Երբ մենք զբաղուած էինք այդ շրջաններու կազմակերպութեան գործերով, կը պայթէր Հոկտեմբեր-Նոյեմբերեան Բոլշեւիկեան յեղաշրջումն ու քաղաքացիական կռիւները: Այս կացութեան բերումով՝ ճակատներու պաշտպանութեան խնդիրը կը դառնար հրամայական:

1917ի Դեկտեմբերին, Բիւրօյի որոշումով, ես ճամբայ կ'ըլլէի

դէպի Խնուս-Մուշ, ուր վարչութիւնները եւ զօրամասերը իմ իրաւասութեան ենթակայ էին: Կովկասեան հրամանատարութեան սպայակոյտէն լիազօրութիւն ունէի զինուորական գործերուն հսկելու եւ ընթացք տալու: Միեւնոյն ժամանակ նոր սկսուած նահանգապետութեան իրաւունքները ինծի յանձնուած էին, իբրեւ նահանգապետի օգնական, իսկ նահանգապետը կը մնար... Թիֆլիս:

Անդրանիկ կը պատրաստուէր մեկնիլ Էրզրում իր զօրամասերով: Կոստի Համբարձումեանը՝ նոյն լիազօրութիւններով՝ կը մեկնէր դէպի Վան:

Ազգային Խորհուրդի եւ Հ. Յ. Դ. երկու Բիւրօներու որոշումով՝ Արամը ճամբայ կ'ըլլէր դէպի Երեւան, Հայաստանի անվթար սիրտը:

**

Ի՞նչ անցաւ-դարձաւ 1918 Յունուարէն մինչեւ Մարդարապատի օրերը, չեմ կրնար նկարագրել այս համառօտ յուշագրութեան մէջ: Ատոնց մանրամասնութիւնը զրի առնուած է մեր քաղաքական գրականութեան մէջ: Կը բաւականանամ քանի մը դրուագներ, կապուած Արամին հետ, վերջիչելով այստեղ:

1918ի Ապրիլին, Մուշի, Խնուսի, Ալաշկերտի, Պուլանուխ-Մալազկերտի ժողովուրդն ու զինական ուժերը ողողած էին Մուրմալուն եւ Երեւանեան դաշտը: Չորս ամիսներու անընդհատ կռիւններէն ետք, մենք նահանջած էինք դէպի Արարատեան աշխարհը: Ու մանք Վանէն դէպի Պարսկաստան: Իսկ Անդրանիկ դէպի Կարս-Ախալքալաք:

«Աւետեաց երկիրը» կը մնար հրդեհներու ծուխին մէջ:

Ու ահա, մենք Մարդարապատի անապատային դաշտին մէջն ենք, Արազէն անդին, ու Արազէն այս կողմ հարիւր հազարէ աւելի բազմութիւն, զինուած, բաց երկնքին տակ, տեղ կ'որոնէ, ԱՊՐԻՂ կ'ուզէ: Ու ամէն օր, աջէն ու ձախէն թաթարական ըմբօստ գիւղերու զնդակներուն ենթակայ:

Կեանքի հարկադրանքը ալիք տուած, հեղեղ դարձաւ ու հեղեղեց Արագածի, Էջմիածնի եւ Աշտարակի շրջանները: Արիւնոտեցաւ, արիւնեց եւ տեղաւորուեցաւ այդ շրջաններուն մէջ:

Փոշեթաթար՝ ես կը հասնէի Երեւան եւ կը ներկայանայի Ազգային Խորհուրդին, մեր կացութեան մասին զեկուցելու: Հոն էր Ա-

րամը, իբրեւ լիազօր, հոն էր Դրօն, իբրեւ զինական ուժերու հրամանատար: Կարճ էր իմ զեկուցումը:

— Տեղահան ժողովուրդը, բաց երկնքին տակ, զօրամասեր եւ ժողովրդական բանակ, առանց կայանի, ու ամէն օր կռիւ՝ շրջապատի քաթարներուն հետ:

Կարկուտ տեղաց իմ գլխուն, զեկուցումը երբ վերջացուցի:

Մահակ Թորոսեան եւ քանի մը այլ ընկերներ, որոնք Ազգային Խորհուրդի անդամ էին, իմ վրաս յարձակեցան բուռն քննադատութեամբ:

— Այս ի՞նչ կողոպուտ ու քալան, այս ի՞նչ մարդասպանութիւն է, մեք ընկերվարականներ ենք, այս արարքներուն վերջ պիտի տրուի:

Չարմացած կը նայէի Ազգային Խորհուրդի անդամներուն զայրացած դէմքին:

— Բայց, ընկերներ, Էջմիածնի եւ Աշտարակի շրջաններուն մէջ մեր զինուորներէն յիսուկէ աւելի գոհեր խլած են քաթարները, իսկ Թալիհի ապստամբները 19 սասուցիներու արիւնը քափած են անոր պարիսպներուն վրայ...

Մտիկ ընողի դէմք չունէին իմ ունկնդիրները: Ես ալ զայրացած էի: Նայեցայ Արամին:

Արամ եւ Դրոն ոտքի ելան: Արամը ակնարկով հասկցուց, որ իրենց հետեւիմ: Դուրսի սրահին մէջ ձեռքը ուսիս տարաւ:

— Դուք հանդարտօրէն գացէք, եւ ձեր գործը շարունակեցէք: Կարեւորութիւն մի տաք ըսուածներուն: Կացութիւնը չեմ ըմբռներ: Արամի եւ Դրոյի հաւաստիքները զիս հանդարտեցուցին:

Երկրորդ հանդիպումին, երբ ես զեկուցումով եղայ Արամին մօտ, ան ինծի յայտնեց, թէ Թիֆլիսէն հեռագրած են որ Վանի եւ Տարօնի արեւմտահայ պատգամաւորները Թիֆլիս հասնին, բացառիկ խորհրդաժողովին: Իրեն ալ հեռագիր կար, որ քանի մը օրով Թիֆլիս անցնի եւ Ազգային Խորհուրդին մասնակցի, ներկայ ճգնաժամին շուրջ խորհրդակցելու համար:

Արամ յայտնեց, որ ինքը չի կրնար Երեւանէն բացակայիլ: Բայց պնդեց, որ մենք անմիջապէս մեկնինք Թիֆլիս:

— Երկու օր կը մնաք հոն, ձեր կարծիքները կը յայտնէք եւ կը վերադառնաք ձեր գործերուն գլուխը:

Մենք ճամբայ ելանք Մայիս 10ին: Հազիւ հասած էինք Թիֆլիս եւ Խորհուրդին առաջին նիստին կը բերէինք մեր մասնակցութիւնը, երբ Ալեքսանդրապոլը կ'իյնար եւ Մայիս 14ին ճանապարհ-

ները կը փակուէին: Մենք կը մնայինք Լոռիի ձորերուն մէջ: Ճանապարհները փակուած էին ու Ղարաքիլիսէի եւ Սարգարապատի ճակատադրական կռիւներու առաջին փուլը սկսած էր:

Արամ կը մնար Երեւան: Կամքերը կը համախմբէր, ամուր ժայռի պէս աններ, բոլոր գործերը կը վարէր եւ ոգի կը ներշնչէր բոլորին:

Վանի ազատամարտը, իր անցեալի փորձառութիւնները այդ ուժը անոր կու տային՝ կեանքի եւ մահուան այս փուլը ղիմագրաւելու:

Ու բախտը, պատմական հրամայականներով, պիտի ժպտէր Արամին, Հայաստանի ազատութեան եւ անկախութեան հիմնաքարը ղնելու, եւ ազատ հայրենիք մը կտակելու հայ ազգին:

Արամը փաստօրէն կը դառնար նորաստեղծ անկախ Հայաստանի ամբողջական կառավարութիւնը, Մայիս 28էն մինչեւ Յունիսի վերջերը, երբ Քաջազնունին իր կառավարութեան անդամներուն հետ կը ժամանէր Երեւան: Մեր պատգամաւորութիւնը Յունիսի առաջին օրերուն Լոռիէն կ'անցնէր Դիլիջան եւ Յուլիսին կը հասնէր Երեւան: Մեզի հետ էին Բարունակ Կապուտիկեան, Վ. Բէմոյեան, Մ. Դարմանեան, Դանիէլ Վարդապետ, Արշակ Մանուկեան եւ Ա. Աճէմեան:

Պետական կեանքն ու կուսակցական ղեկավարութիւնը կ'ընթանային զուգահեռ գծի վրայ: Ազգային Խորհուրդը նիստեր կ'ունենար, Հայաստանի Փառլամէնտի ղիմագիծը կրելով:

Մինչեւ 1918ի Նոյեմբերի Համաշխարհային Պատերազմի զինադադարը՝ մեր կեանքը կ'ընթանար լարուած կամքերով, աչալուրջ եւ արթուն՝ թրջական վտանգին դէմ: Անցնող այդ վեց ամիսներուն, Հ. Յ. Դ. Բիւրօն ամէնօրեայ մտահոգութիւններուն ընդառաջեց եւ Փարիզի պատուիրակութիւնը կազմեց Ա. Ահարոնեանի նախագահութեամբ: Արամ ներքին եւ արտաքին բոլոր գործերուն մղում տուող դէմքն էր եւ իր թելադրանքները նկատի կ'առնուէին ղեկավար ընկերներու կողմէ:

Զինադադարը քաղաքական լայն հորիզոն մը կը բանար մեր առջեւ: Արտասահմանի հայութիւնը ուղղութեան պէտք ունէր եւ վճռական դեր մը կրնար կատարել հայ քաղաքականութեան ի նըստ:

Բիւրոյի որոշումով ես եւ Ամատունին, Նոյեմբերի վերջերուն, ճամբայ ելանք դէպի Պոլիս:

Մենք Պաթումի ճամբուն վրայ էինք, երբ Յունուարի վերջերը, կը մեռնէին Ռոստոմը եւ Արամը:

Այս երկու երախտաշատ ղեկավար ընկերները, կարծես թէ Հայաստանի կերտումով, իրենց հին ուխտը կատարած, միասին կը մեկնէին այս աշխարհէն, անչափելի բաց մը թողելով ընկերներու սրտին մէջ:

Արամ Վանի մէջ կորիզը կազմեց Հայաստանի, իսկ Երեւանի մէջ՝ կառուցուած շէնքը յանձնեց իր ժողովուրդին:

Պատմութիւնը ճակատագրական երեւոյթներ ունի: Պատմութեան մէջ անմահ են անոնք, որ այդ ճակատագիրը գիտեն վարել:

Արամը այդ անմահներէն էր:

Ա Ր Ա Մ

Այս օրերուն, երբ ես կը գրեմ այս տողերը, կը լրանայ Արամի եղբերական մահուան չորսամեակը (*). Իսկ մինչեւ իմ այս գրութիւնը հասնի «Հայրեմիտ»ին, կը լրանայ նաեւ Վասպուրականի գոյամարտի ութնամեակը, — գոյամարտ մը, որ Արամի յեղափոխական անմահ ստեղծագործութիւնը եղաւ եւ հայութեան արիւնոտ պատմութեան ամենէն հոյակապ ու պայծառ մէկ դրուագը: Ասոր համար ահա, երախտապարտ աշակերտի իմ պարտքս կը համարեմ, երկու խօսքով եւ իմ թոյլ ուժերով, բնորոշել իմ Մեծ Ուսուցիչի եւ Հայութեան Մեծ Զաւակի անձն ու գործը, իր ընդհանուր գիծերով:

Ասկէ չորս տարի առաջ, 1919ի Յունուարի 29ին, աւելի քան տասը հազար սգաւորներ, աննախընթաց եւ տրտմաշուք թափօր կաղմած, Արամի անշունչ դիակը ուսամբարձ կը տանէին դէպի Երեւանի դերեղմանատունը: Մահուան թափօրը կանգ առաւ երկու նուիրական հիմնարկութիւններու՝ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայաստանի Ռորհրդարանի շէնքերու առջեւ, որովհետեւ Արամը Դաշնակցութեան ոգին էր եւ Անկախ Հայաստանի հիմնադիրը:

Դժուարին է պատկերացնել Հայութեան եւ Դաշնակցութեան այդ հոյակապ զաւակի անձն ու գործը, որովհետեւ բառերը անզօր են, վերյիշումները անձնական ու անցողական, իսկ թուագրումները անհնարին, որովհետեւ անհնարին է թուագրել 20 տարուայ կեանք մը, որ բառիս իսկական առումով այդ 20 տարուայ իւրաքանչիւր օրը

(*) Ոգբացեալ Օձ. Միւիթարեան այս յօդուածը ստորագրած է «Հայրեմիտ» ամսագրի 1923 Յունիսի համարին մէջ:

եւ օրուայ իւրաքանչիւր ժամը ստեղծագործեր է՝ ստեղծագործելով քաղաքական-յեղափոխական-հասարակական լայն մարզերուն մէջ:

Կը մնայ միայն տալ ընդհանուր գիծերը Արամի անձնական նկարագրին, Արամի գործին եւ Արամի պատմական առաքելութեանը, — առաքելութիւն մը, որ մեր կուսակցութեան եւ ժողովուրդի ուրիշ հզօր զաւակներէն ոչ ոքի վիճակուեցաւ, եթէ ոչ նորէն իրեն, Արամին:

Արամը Դաշնակցութեան զաւակն էր, անշուշտ, ամենէն առաջ: Դաշնակցութեան իտէալներով լուսաւորուած, Դաշնակցութեան յայտարարած յեղափոխական-ազատագրական կռուի դրօշակով զինուած եւ Դաշնակցութեան յեղափոխական ոգին լրիւ ընդգրկած: Բայց Արամը յաճախ կը հաղնէր հայ ժողովուրդի արիւնոտ ծիրանին եւ դաշնակցականը անոր մէջ կը վերածուէր անցեալ, ներկայ եւ ապագայ դարերու հայ հարագատ ու համայնապարփակ տիպարին: Այդ ժամանակ ահա Արամը իր գործովն ու նկարագրովը աւելի կ'ընդարձակէր, աւելի կը խորացնէր եւ աւելի կը շքեղացնէր իր մէջ ապրող դաշնակցականը եւ կը դառնար ոչ թէ սովորական անհատ դաշնակցական, ինչպէս մենք բոլորս ենք, այլ ռզի՝ Դաշնակցութեան ոգին: Այնպէս որ Արամը եթէ իր գործովն ու նկարագրովը Դաշնակցութեան զաւակն էր, զաւակն էր ու սեփականութիւնը նաեւ հայ դարաւոր ժողովուրդին, ճիշդ այնպէս, ինչպէս Դաշնակցութիւնը, իրրեւ բարոյական հսկայ ուժ մը, ամենէն առաջ հայութեան զաւակն է եւ անոր անվիճելի սեփականութիւնը: Այստեղ է ահա, որ Արամը, թէեւ Դաշնակցութեան հոյակապ հիմնադիրներ Քրիստափօրէն, Զաւարեանէն եւ Ռոստոմէն յետոյ եկած, բայց կը գտնուէր անոնց անհաս բարձրութեան աստիճաններուն վրայ եւ, ըստ իս, արդէն հաւասարած էր անոնց: Ասկէ ետք կարելի է եզրակացնել, թէ ի՞նչ էր Արամը Դաշնակցութեան մէջ եւ Դաշնակցութեան համար:

Արամը ծնաւ հայ լեռնաշխարհին մէջ եւ իբրեւ այդ լեռներու ոգին, անոր բովանդակ շունչովը, առնական կորովովն ու հպարտութեամբը դօտեպիինդ, իջաւ այդ իսկ լեռներուն մէջ ծուարած հայ հիւղակները, իրրեւ լոյսի եւ ազատութեան սերմնացան: Տակաւին խարտեաչ պատանի՝ գրկեց պայքարի դրօշակը. հզօր, անհաւասար ու իր բարոյական արժէքին մէջ միշտ յաղթական պայքար մը, որ իրմէ առաջ սկսուած էր արդէն եւ որ ինք տարաւ մինչեւ սպիտակ կատար-

ները, ստեղծելով վերջապէս Ազատ ու Անկախ Հայրենիք մը եւ կերտելով Հայ Անդրանիկ Հանրապետութիւն մը:

Կարծես ճակատագրորէն սահմանուած էր, որ Արամը, քսաներորդ դարու առաջին քառորդին, ղեկավարէ մեր պատմութիւնը, անձամբ: Հերոսական, զանազան եւ բազմաղէմ դրուագներով այդ պատմութիւնը, իր բոլոր գեղեցիկ մանրամասնութիւններուն մէջ, երեք հիմնական հանգոյց դրաւ մեր ժողովուրդի առջեւ, եւ Արամը լուծեց այդ երեք հանգոյցները իր անձնական եւ անմիջական ղեկավարութեամբ:

Առաջին անգամ, 1902-1903ին, ռուսական բռնութիւնը փորձեց յափշտակել հայ ազգային դարաւոր արժէքները եւ մեր ժողովուրդի հոգեւոր ստեղծագործութեան գանձերը, եւ Արամը, դեռ պատանի, առաջինը եղաւ, որ ըմբոստացման դրօշակը պարզեց ռուսացման եւ ռուսական վտանգին դէմ: Եւ ըմբոստացման այդ դրօշակի բարձրացումը առաջին գիտակցական ճիշդ եղաւ հայ ժողովուրդի կողմէ ռուսական վիթխարի նուաճողականութեանը դէմ, — ճիշտ մը, որ այսօր արդէն հզօր ազդակի եւ կռուի շեփորի է փոխուեր:

Երկրորդ անգամ, 1915ին, Թրքական ոճրագար բռնութիւնը փորձեց խախտել մեր ցեղի դարաւոր գոյութիւնը, կոտորելով մեզ միլիոններով եւ միլիոն վերջին արու ժառանգը: Այդ համատարած անգորութեան մէջ Արամը եղաւ առաջինը, որ դարբնեց Վասպուրականի Ապրիլեան դիւթական գոյամարտը եւ փրկելով հայութեան ռազմական պատիւը, առաջին անգամ հայ հողի վրայ խարսխեց հայ ցեղի անկախութեան յաղթական նշանատախտակը:

Երրորդ անգամ, 1918ին, երբ նորէն դրուած էր մեր ցեղի գոյութեան հարցականը եւ կը բաւէր 24 ժամ, կամ ռումբի շեշտակի հարուած մը, կամ յուսալքման թոյնի կաթիլ մը, որպէսզի մեր ցեղը իրօ՛ք սրբուէր աշխարհի եւ պատմութեան երեսէն, Արամը եղաւ առաջինը եւ միակը, որ հուշակուեցաւ դիկտատոր եւ յուսալքուած ամբոխները, իր հոգու սրբազան կրակով առաջնորդելով դէպի կենաց եւ մահու կռիւը, ոչ միայն փշրեց անագորոյն Վտանգին թեւերը Սարգարապատի մարտադաշտին վրայ, այլեւ ստիպեց, որ նոյն թշնամին գլխարկ հանէ մարտնչող եւ ապրիլ գիտցող ժողովուրդի մը առջեւ եւ ճանչնայ անոր ազատ ու անկախ ապրելու գերագոյն իրաւունքը:

Այդ նուիրական 24 ժամուան մէջ էր ահա, որ Արամը ստեղծեց մեր նոր Պատմութիւնը, որ այլեւս միայն յեղափոխութեանը կամ յեղափոխական կուսակցութեան մը չէ, այլ մեր ամբողջ ժողո-

վուրդին եւ մեր ժողովուրդի ազատ ու անկախ պետականութեան դաղափարին:

Անշուշտ այդ դերադոյն հարցականները մեր ցեղի եւ Արամի առջեւ պատմութիւնն էր դրած. պատմութիւնն էր, որ դասաւորած էր դէպքերը, եւ պատմութիւնն էր, որ Արամին կը դաշնակցէր եւ, մանաւանդ, Հայութեան եւ Դաշնակցութեան կենսունակ ուժերն էին, որ զօրավիյ էին Արամին: Բայց այդ բոլորով հանդերձ եւ այդ բոլորին մէջ Արամն էր որ դիկտատոր էր, Արամն էր որ կը ղեկավարէր եւ հայութիւնն ու Դաշնակցութիւնը Արամին էին որ կը վստահէին իրենց բախտն ու ճակատագիրը:

Այսպիսով, Արամը, իրաւամբ, մեր ազգային յեղափոխական ազատագրութեան պատմութեան մէջ չի մնար սոսկ անհատ, այլ Հերոս ու Հանճար, իր բոլոր հզօր ստորոգելիներով: Որովհետեւ Արամը, օժտուած ի վերուստ, ամբողջ ժողովուրդի մը համար ստեղծեց նոր պատմութիւն եւ կենսաբի կոչեց ու իրականացուց մեր հայրենիքի աւերակներուն վրայ 500 տարիներէ ի վեր թափառական ու անհանգիստ Երազը: Արամը կրցաւ առարկայացնել ահա այդ Մեծ Երազը եւ այդ մեծ առարկայացումին մէջ է, որ կը մեծնայ Արամը եւ կը դերազանցէ իր եւ իրմէ ետք եկող ժամանակներու բոլոր մեծութիւնները, քանի որ, ամէն բանէ առաջ, Արամը կերտեց Ազատ եւ Անկախ Հայաստանը:

Արամի անձնական նկարագիրը շատ բարդ է, շատ խորը եւ շատ բազմաբովանդակ, որպէսզի կարելի ըլլար ուրուագծել, այն ալ իմ համեստ ուժերով եւ այսպէս հապճեպ:

Բազմազան էին Արամի հոգիի տարրերը, բայց հոն ամենէն տիրապետողը սրբազան կիրքն էր, — կիրք մը վերածուած հզօր կամքի մը՝ անվերջ պայքարով եւ անվերջ ստեղծագործութեամբ: Կամք մը, որ իր տիրական ուժին տակ կը պահէր ամբոխներու բազմութիւններ եւ կազմակերպուած հաւաքականութիւններ, միշտ դառնալով անոնց հարադատ ու պատկերաւոր արտայայտութիւնը եւ միշտ մնալով անոնց վարիչն ու պատասխանատուն:

Արամի կիրքը կարելի է համեմատել դինամիտի հետ, որ իւրաքանչիւր փոքրիկ շիմամբ կարող է պայթել եւ զորդացնել ամբողջ շրջապատը եւ համեմատել էլեկտրական կոճակի մը հետ, որ թեթեւապէս սեղմուելով կարող է լուսաւորել անվերջ տարածութիւններ:

Այդ կիրքը եւս, անշուշտ, անիկա ժառանգած էր իր ցեղէն եւ կուսակցութենէն, բայց ոչ ոք այնքան առատօրէն ու արժանաբար ժառանգած էր, որքան Արամը եւ ոչ ոք այնքան փարթամ ու ճոխ զիտէր բաշխել իր շրջապատին, որքան կրկին Արամը:

Կազմակերպչական տաղանդը զայն միշտ բարձր ու բացառիկ կը պահէր մեր իրականութեան մէջ: Կազմակերպչական տաղանդ մը, որ միշտ ինքնատիպ էր, հրապուրիչ ու ստեղծագործող եւ որ հրապարակ կու գար ամենահասարակ աշխատանքներու մէջ. օրինակ, թաղականական ընտրական պայքարէ մը, մինչեւ ամենապատասխանատուն, օրինակ՝ ամբողջ ցեղի մը պաշտպանութեանը մէջ:

Արամը այդպիսով գիտէր ստեղծել սերունդներ, գիտէր մարդկանց հրամայել, որպէսզի երթան մեռնին եւ գիտէր մարդկանց խընդրել, որպէսզի այլեւս չսպաննեն:

Արամի կազմակերպչական ուժը այնքան տիրական էր, որ ոչ ոք կարող էր ընդդիմանալ: Երբ անիկա կը խնդրէր, կարծես կը հրամայէր, երբ անիկա կը բանաձեւէր, կարծես անյեղլի օրէնքներ կը պէտքէր, երբ անիկա որեւէ բան կը ծրագրէր, կարծես ոչ թէ ծրագրէր էր այդ այլեւս, այլ արդէն վաղուց գործադրուած իրողութիւն:

Աշխատանքի բաժանման գաղափարը Արամի մօտ գոյութիւն չունէր. ուր որ լինէր այլեւս նա էր: Ուրիշ մարմնի նախագահը, քարտուղարը, գանձապահը եւ շրջաբերականներ պտտցնողը ինքն էր: Արամը կա՛յ, եւ բաւական կը համարուէր, որ մարդիկ եւ գործիչներ հանգիստ եւ ապահով նստէին: Եւ այդպէս՝ բոլոր պատասխանատու աշխատանքներու թէ երկրորդական ձեռնարկներու մէջ, սկսած դպրոցական մանրիկ խնդիրներէն մինչեւ ցեղի գոյութեան հարցապահներ:

Երբ Արամը հազիւ 25 տարու երիտասարդ, Վան եկաւ եւ իր գլուխը դնահատուած էր օսմանեան կառավարութեան կողմէ, յեղափոխական ստորերկրեայ այդ ծանր վիճակին մէջ անգամ կրցաւ փաստօրէն, ինքնավար Հայաստան մը ստեղծել, փակել տալով օսմ. դատարանի դուռները եւ ինքը անձամբ դատաւոր հանդիսանալով հայ ու քիւրտ ամենափոքր կամ ամենամեծ վէճերու համար: Իսկ Սահմանադրական համեմատաբար ազատ օրերուն, Արամը կրցաւ հարիւրաւոր գիւղական դպրոցներ կառուցանել եւ վարել Վասպուրականի հայութեան քաղաքական, աղղային, հասարակական բոլոր պատասխանատու աշխատանքները:

Ոչ մէկ գործ անոր համար երկրորդական չէր եւ անիկա ամէն գործին ժամանակ կը գտնէր հասնելու: Անիկա գիտէր, օրինակ, մո-

մը ձեռքին, տիրացուի մը հետ, եկեղեցիի մը մէջ, ծխական դպրոցի մը համար պլուակ պտտցնել եւ նոյն օրը, իրիկուան, դէնքի տակ կանչել ամբողջ ժողովուրդ մը եւ ապստամբեցնել Օսմ. Պետութեան դէմ:

Երբ անիկա ներքին գործերու նախարար էր, իր նախարարական դասենակը, կարելի է ըսել, իր զբաղմունք էր, որովհետեւ նա միշտ կը շտապէր ամէն գործի անձամբ հասնիլ եւ ամէն գործ դրականապէս լուծել եւ, իրօք, նա միշտ կը հասնէր ամէն գործի եւ միշտ դրականապէս կը լուծէր ամէն գործ:

Արամի օգնութիւնը ամէնուն կը հասնէր անխտիր, բարեկամի, ընկերոջ թէ թշնամու: Կը յիշեմ, անիկա երեք անգամ իր կեանքը վտանդի տակ դրաւ, որպէսզի թրքական բանտէն ազատէ հնչակեան գործիչներ, որոնք իրենց բանտարկուելէն քանի մը ամիս առաջ չէին քաշուած Արամի կեանքին դէմ դաւ նիւթիլ: Այնքան հայրական էր ան ու բոլորանուէր, որ յաճախ մարդիկ կու գային անոր մօտ ոչ թէ խնդրելու, այլ հրամայելու եւ անիկա այնքան բարութեամբ եւ համեստօրէն պատրաստ էր այդ յետին զիւղացու եւ յետին զինուորի հրամանները կատարելու:

Անսահմանօրէն անկեղծ էր դէպի բարեկամն ու դէպի թշնամին: Անկեղծութիւնը Արամի յաղթութեանց ու պարտութեանց պատճառն ու հետեւանքն էր միաժամանակ:

Հաւատքի անհուն բոցերով էր, որ կը լուսաւորէր իր գործը եւ իր ժողովուրդի ապագան:

Այդ անկեղծութեան ու հաւատքի հետ նաեւ այնքան միամիտ էր, որ յաճախ կը հասնէր մանկականութեան:

Բարութիւնը Արամի հոգիի ամենամեծ անկիւնաքարն էր եւ այդ բարութեամբ անիկա ընդունակ էր իր գեղեցիկ եւ հոյակապ գլուխը դնելու ամէն տեսակ վտանդի տակ՝ ամենապարզ եւ առօրեայ արժէքի համար:

Իրբեւ իր ցեղի ի վերուստ օժտուած զաւակ, Արամը իր կանխատես հոգիի աչքերով գիտէր տեսնել եւ կարողալ ապագան եւ գիտէր մանաւանդ պատրաստուիլ այդ ապագայի համար, որ միշտ փոթորիտ էր եւ եղբրական: Թէ՛ 1902ի, թէ՛ 1915ի եւ թէ՛ 1918ի անագորոյն վտանգներու վերջումը եւ թէ՛ այդ թուականներու ամենահրդոյ պայքարներու կազմակերպութիւնը կը պարտինք Արամի կանխատես, մարդաբէական հոգիին եւ անոր Մովսիսեան դերին, երբ անիկա իրօք առաջնորդեց մեր ցեղը բոլոր Կարմիր Մովսիսէն...

Եւ յետոյ, Արամի ողբերգութեան սրբազան կրակը, որ հաւասարաբար ի յայտ կու գար անոր իւրաքանչիւր գործի եւ մանաւանդ խօսքի մէջ:

Անիկա պատրաստուած հոետոր չէր, բայց երբ կը խօսէր, չէր լսուեր այլեւ ոչ մէկ առարկութիւն: Այդ խօսքի մէջ անկեղծութեան, հաւատքի եւ տրամարանութեան այնպիսի որակ եւ քանակ կար, որով նա կարող էր կատարած ամբոխները զսպել եւ յուսալըբուած բազմութիւնները կատղեցնել:

Նա կարող էր մարդկանց խաչել ցանկացող կատարած ամբոխի կիրքերը մտրակելով խաղաղեցնել, իսկ դասալիք գինուորներու բազմութիւնները, որոնք իրենց տրեխներու եւ գլխարկներու հոգսերով յուսաբեկուած փախած էին կռուէն, Արամի դիւթական խօսքի կախարդումով այս անգամ դօտեպինդ՝ ինքզինքնին հայհոյելով ետ կը վերադառնային դէպի արիւնի մարտերը, այս անգամ չինայելով իրենց կեանքը...

Ոգեւորութեան ու հուսաւքի այդ սրբազան կրակը կարծես Արամի հոգիի մէջ դրուած էր մեր հեթանոսական անցեալէն եւ անոր ոգեւորութեան բազմաթիւ դէպքերուն զինք ուշադիր դիտողը կարծես կեցած էր մեր հին աստուածներէն մէկն ու մէկի առջեւ...

Արամի հանդէպ սովորական տրամադրութիւններ ու միջակ համակրութիւններ չկային: Կամ կը պաշտէին եւ կամ կ'ուզէին սպաննել զայն: Ատիկա թերեւս անոր մեծութեան ամենամեծ ստորոգելին է: Միւս կողմէ՝ Արամի բախտի անիւը, ինչպէս մեր ժողովուրդին ու կուսակցութեանը, շարունակ շուտ կու գար, կ'իյնար ու կը բարձրանար: Անիկա մերթ կը բարձրանար իր փառքի եօթներորդ երկինքը եւ մերթ կը դահաւիթէր ցած, մինչեւ անյատակ անդունդները... Երբ անիկա հազիւ 25 տարու երիտասարդ էր, թուրք ու քիւրտ ժողովուրդը Փաշա կը կանչէր զայն, որովհետեւ իրօք ան փաշա էր, այսինքն՝ ամենամեծ մարդը ամբողջ Վասպուրականի մէջ:

Արամը յեղափոխական ստորերկրեայ կեանքին մէջ ամբողջ Վասպուրականում գրեթէ աստուածացուած մարդն էր, բայց օր մըն ալ անոր մաղերէն բռնած ջրհորէն դուրս քաշեցին եւ դանակոծելով, հայհոյելով ու թքնելով մինչեւ թրքական բանտը տարին, ուր կը սպասուէր անոր կախաղանի դժխեմ ձողի բարձրացումը, բայց քանի մը ամիսներ ետք, նոյն թքնողներն ու հայհոյողները, հազարներով կու գային համբուրելու անոր ձեռքերը...

Իր բովանդակ մեծութիւնը կը պարտադրէ խուսափիլ բառերէ ու ածականներէ՝ զինք բնորոշելու համար: Իր ծանօթներէն, ընկերներէն ու երկրպագողներէն ոչ ոք կարող է ուրուագծել անոր անըսպառ գործը, որ իր մահէն ետք տակաւին կը շարունակուի. վերլու-

ծել անոր խորունկ հոգին, որ դեռ կենդանի ու անքննելի կը մնայ եւ մարմնաւորել անոր հրաշագեղ անհատականութիւնը, որ միշտ կը զատորոշուի սովորականէն, մասնաւորէն ու մահկանացուէն: Վասնզի մինչդեռ ամէն մեծնող մարդու ետեւէն, առաւել կամ նուազ չափով, կը թափուին արցունքներ, կը լսուին փսսոսանքի խօսքեր ու կ'արտասանուին մեծ կամ պղտիկ բառեր, բայց Արամը կը պարտադրէ մեզ ոչ մէկ անգամ չհաշտուիլ իր մահուան հետ, վասնզի անիկա սովորական անհատէն վեր՝ մերն էր, մեր ցեղի ոգին, եւ ոչ ոք կարող է հաշտուիլ իր սեփական ոգու կորուստին հետ:

Չորս տարի է անցած իր եղերական մահէն եւ որքան սակայն կոյր ու ճակատագրական ժամանակը երկարի, որքան բաժնէ ու աւելի հեռացնէ զայն մեզմէ, այնքան աւելի Արամը կը մերձենայ մեր հոգիներուն, այնքան աւելի Արամը կը մեծնայ ու մեր սէրը դէպի իր զօրեղ անհատականութիւնն ու աստուածային գործը կը ծաւալի, կը խորունկնայ ու կը վերածուի երկիւղած պաշտամունքի:

Այսօր կրօնական երկիւղածութեամբ մը կ'արտասանուի իր անունը, վասնզի անիկա մեր օրերու Մովսէսը եղաւ, որ առաջնորդեց մեզ բոլորս Կարմիր Մովերէն եւ Երեւանի Ազգային Խորհրդարանի վրայ կախեց մեր ցեղի Անկախութեան եւ Ազատութեան նուիրական նշանատախտակը: Եւ, հիմա, երբ իր նիւթեղէն գոյութիւնը կը քայքայուի Երեւանի խոնաւ գերեզմանատան մէջ եւ կը տարբալուծուի ու կը միախառնուի Մեծ Բնութեան, իր Ոգին կենդանի կը մնայ սակայն, կը թեւածէ հայ երկինքին տակ ու հայ երկրի վրայ, կ'իշխէ մեր հոգիներուն եւ նորէն ու նորէն կ'առաջնորդէ մեզ դէպի իր եւ մեր միակ պաշտելին՝ Հայ ժողովուրդը...

Ես հազիւ կրցայ տալ Արամի հոգիի եւ գործի քանի մը մանրամասնութիւնները: Բայց, ամէն պարագայի տակ, Արամը տուաւ այն ամենանուիրական արժէքը, որ մեր Յեղը երբեւիցէ երազած է եւ որ մէկը երբեւիցէ կարող էր տալ: Արամը տուած է մեզ մեր Անկախութիւնը արդէն առարկայացած, արդէն փաստ, արդէն արձանացած մեր Յեղի պատմութեան մէջ եւ սեփականութիւնը իւրաքանչիւր հարազատ հայի կամ դաշնակցականի:

Կրկին ու կրկին կը խոնարհենք մեր գլուխը այդ սրբազան արժէքի՝ Անկախ Հայաստանի եւ անոր մեծ հիմնադիր՝ Արամի առջեւ...

(Վ Ե Ր Զ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Հ. Յ. Դ. Բիւրոյի խօսքը	3
Այս հատորը	7
Ա. ԱՐԱՄԸ — Ա. Աստուածատրեան	11
Արամ Մանուկեան («Յուշապատում Հ. Յ. Դաշ- նակցութեան»)	146
Բ. ԱՐԱՄԻ ՅՈՒՇԵՐԸ	151
Արամի մէկ նամակը վանի ընկերներուն	392
Գ. ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ	
Արամը կարսի մէջ — Ռուբէն	397
Վասպուրականի 1906ի ուսումնական ժողովը — Ռուբէն	408
Սահմանադրութիւն — Ռուբէն	415
Բաժանումէն առաջ — Ռուբէն	422
Արամ խոյի մէջ — Մալխաս	424
Վանի մէջ — Մալխաս	427
Արամի երկիր գալը եւ յետագայ դէպքերը — Վ. Փափազեան (Կոմս)	430

	Էջ
Արամը Սահմանադրութեան շրջանին — Ե. Սարգսեան	438
Արամի մեկնումը վանէն — Ե. Սարգսեան	448
Արամ, — դիմագիծ եւ յիշողութիւններ — Հմ. Մանուկեան	451
Վանի ինքնապաշտպանութիւնը — Օն. Մխի- թարեան	457
Արեւմտահայ Համագումար և Արեւելահայ Խոր- հուրդ — Վ. Փափազեան (Կոմս)	479
Երեւանի Ազգ. Խորհուրդը եւ Յատուկ Կոմիտէն — Ս. Վրացեան	483
Մասիսի հովանու ներքեւ... — Ս. Վրացեան	485
Արամի կեանքից — Վ. Նաւասարդեան	487
Խալիլ փաշայի հանդիպումները Արամի հետ — Ա. Շահխաթունի	495
Սարդարապատի հերոսամարտը եւ մահափորձը Արամ Փաշայի դէմ — Ա. Շահխաթունի	508
Յուշեր անկախութեան շրջանէն — Սասունցի Մուշեղ (Աւետիսեան)	522
Հայաստանի Հանրապետութեան վէմը — Կ. Սասունի	526
Արամ — Օն. Մխիթարեան	540

ԱՐԱՄԸ

Մահուան յիսնամեակին առթիւ

Հանձնուած է տպագրութեան 30.05. 1991.

Չափսը՝ 70X100 1/16, Թուղթ N°1

Տպագրութեան եղանակը՝ «Օֆսեթ».

Հրատարակչական 30 մամուլ:

Տպագրական՝ 35,5 մամուլ=46,15 պայմ. մամուլի:

Տպաքանակ՝ 5000, Պատուէր՝ 33,

Գինը՝ պայմանագրային.

«Միքայէլ Վարանդեան» հրատարակչութիւն,
Երեւան, Շոպրոնի փ. թիւ 21:

«Միքայէլ Վարանդեան» հ/պ փոքր ձեռնարկութիւն
Երեւան, Շոպրոնի փ. թիւ 21: